21277

33
У-69

33
Մ-69
JAN 2010
5 FEB 2007
3 ր.

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

Ֆ. ՄԻԽԱԼԵՎՍԿԻ

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒՍԽՈՐՀԻ ԳԻՏԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼ Ե ԻԲՐԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ԽՈՐՀԿՈՒՍԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

5022

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ. 1928.

28 JUN 2013

21277

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм. ССР

6124-70

№ 725 Գրառեպվար № 704 (բ) Տիրաժ 5000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Այս գիրքը գրված է Համկ(բ)կ կկ-ի պրոպագանդի յենթաբաժնի մեթոդական հանձնաժողովի ցուցումների համաձայն՝ ուղեցույց կիրառելով այն ծրագրերը, որ մշակել է խորհրդապրոցների վերջին համագումարը (1926 թ. սեպտեմբեր)։

Ինձ աշխատակցել է Ի. Ի. Միխալևսկայան, իբրև գրքիս յերկրորդ հեղինակ։

Մի քանի գլուխների վերջում իբրև փորձ ավել ենք խնդիրներ։

Նյութեր հավաքելում մեզ աջակցել են ընկ. Յոլսոնն, Սվերդլովսկի համալսարանի անտեսագիտական կաբինետը և ուրիշները։

Գիրքը նկարազարդել է նկարիչ Ա. Վ. Լոժկինը։

Ֆ. Միխալեվսկի

1927 թ. սեպտեմբերի 22-ին,
Մ ո ս կ վ ա

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ.

Այս գլխի նպատակն է՝ պարզել, թե **ինչ է հեղափոխությունը և ինչի՞ համար է հարկավոր այն:** *Սրա համար*

ա. պարզաբանում ենք,

1) թե ինչ բան են արտադրությունն, արտադրության միջոցներն, արտադրողական ուժերն, արտադրական հարաբերությունները և մասնավորապես շահագործման հարաբերությունները.

2) թե ինչպես Հոկտեմբերյան հեղափոխությունը մեզանում փոփոխեց արտադրական հարաբերությունները.

3) թե ովքոնք են ԽՍՀՄ ու կապիտալիզմի երկրների արտադրական հարաբերությունների հիմնական տարբերությունները.

բ. գնում ենք այն հարցը,

թե ինչու կապիտալիստական արտադրական հարաբերությունները խարխլվում, կործանվում են:

§ 1. ՄԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Ռուսաստանի բանվոր դասակարգն ու գյուղացիությունը 1917 թվականի հոկտեմբերին քաղաքական իշխանությունն իրենց ձեռքը վերցրին ու այս ոգտագործեցին այն նպատակով, որ վերջ տան իրենց շահագործողների—կապիտալիստների ու հողատերերի—տնտեսական տիրապետությանը:

Ի՞նչն եր կազմում այս տնտեսական տիրապետության էությունը:

Այն, որ կապիտալիստներին էլին պատկանում բոլոր ֆաբրիկաները, գործարաններն ու հանքարանները, որ կապիտալիստների ու բուրժուական-կալվածատիրական կառավարության ձեռքում էլին երկաթուղիներն ու շոգենավային գծերը, որ կալ-

վածատերերին ու բուրժուական-կալվածատիրական կառավարությանն էր պատկանում ամբողջ հողի $^3/_5$ մասը։

1905 թվականին կատարված հաշվարկության համաձայն, Յեվրոպական Ռուսաստանում (Լեհաստանն ու Ֆինլանդիան չհաշված) յեղած 395 միլիոն դեսիատին հողից

1) դանձարանին, ցարի ընտանիքին, յեկեղեցուն, վանք. ու այլ հիմնարկներին պատկանում էր 154 մլ. դես.

2) ազնվականներին, վաճառականներին և այլն՝ 77 » »

3) գյուղացիներին՝ . . . . . 164 » »

Գյուղացիական հողի մի նշանավոր մասը հեղափոխությունից առաջ կուլակների ձեռքումն էր։ Մի մասն էլ գրավ էր դրված «գյուղացիական» բանկում։

Հասկանալի չէ, որ առաջ էլ, ինչպես և հիմա, ֆաբրիկաներում, գործարաններում, հանքարաններում ու տրանսպորտում աշխատում էին բանվորներն ու ծառայողները, իսկ հողը մշակում էին գյուղացիք։ Բայց այլ բան էր այն աշխատանքը, որը միայն խեղճ ու կրակ ապրուստ էր տալիս, ու ջոկ բան էր այն, յերբ մյուսները սեր ու անօրինություն էին անում այս աշխատանքի գլխին և սրանից կորզում բոլոր ոգուտները։ Աշխատանքի գլխին սեր ու անօրինություն էին անում և նրանց բոլոր ոգուտները քաղում էին կապիտալիստներն ու կալվածատերերը։

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

Յերբ մեկն աշխատում է՝ լոկ իր ապրուստի միջոցներ ստանալով, իսկ նրա աշխատանքի ամբողջ ոգուտը քաղում է ուրիշը,— այսպիսի հանրային հարաբերությունները շահագործման հարաբերություններ են։

Այսպիսով, ուրեմն, մեր հեղափոխության անհետաձգելի պահանջումն առաջին հերթին այն է, որ այս հեղափոխությունը վերջ տվեց աշխատավորների շահագործմանը կապիտալիստների ու կալվածատերերի կողմից։

Իսկ վերն է հատկապես շահագործման հարաբերությունների արմատը։ Վերն է գլխավոր պատճառն այն բանի, որ դասակարգերից վոմանք կարող են սիստեմատիկաբար հարկադրել մյուս դասակարգերին, որ սրանք աշխատեն իրենց համար։

Շահագործման հարաբերությունների մասին պարզ պատկերացում կազմելու համար հարկավոր է նախ հասկանալ, թե ինչ բան են արտադրական հարաբերությունները ընդհանրապես։ Իսկ սրա համար անհրաժեշտ է պարզաբանել այն, թե ինչ բան են արտադրությունն, արտադրության միջոցները ու արտադրական ուժերը։

§ 2. ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ, ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐ.

Իսկապես ասած՝ ամեն մի մարդ, վոր զբաղվում է արտադրությամբ, շատ լավ է հասկանում, թե ինչ բան է արտադրությունը։ Նրան այս բացատրել՝ միևնույն է թե ձկանը բացատրել, թե ինչ է ջուրը։

Մեր խոսքն այն մասին է միայն, վոր պարզաբանենք, թե արտադրությունն ինչ նշանակություն ունի մարդկային հասարակության համար։

Մարդկային հասարակությունը բնության մի մասն է։ Բայց իր գոյությունը պահպանելու համար նա պետք է իրեն հակադրի բնությանը, կամ բնության դեմ։ Հասարակությունը պետք է բնությունը հարմարեցնի իր պահանջներին ու կարիքներին։ Մարդիկ չեն կարող անվել այն նյութերով, վոր բնությունը նրանց մատուցում է պատրաստի։ Ուտելիք ունենալու համար հասարակությունը պետք է վարի, ցանի, տափանի, հնձի, կալսի և այլն։ Նույն նպատակով նա պետք է անասուններ պահի, ու բազմացնի, կաթնեղեն ու մսեղեն արտյունքներ պատրաստի և այլն։ Հագուստ առնելու համար պետք է վուշ, բամբակ մշակի, վոչխար բուժի։ Մատյած մանրանը (ВОЛОКНО) պետք է բարդ մշակման յենթարկի մանածագործարաններում։ Հասարակությունը, վորպեսզի հնարավորություն ունենա վերադրելու այն ամենն, ինչ անհրաժեշտ է, պետք է յերկաթուղիներ կառուցի, նավահանգիստներ անց կացնի և այլն։

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ։

Հասարակության կողմից բնության դեմ մղվող այս կռիվը, բնությունը մշակման յենթարկելն ու հասարակության կարիքներին հարմարեցնելն է հենց, վոր արտադրություն է կոչվում։

Սակայն մարդկային հասարակությունը չի կարող արտադրել սոսկ ձեռքերով ու դատարկ տարածության մեջ։ Արտադրության համար ամենից առաջ բազիս է հարկավոր։ Այսպիսի բազիս է առաջին հերթին յերկիրը։ Այնուհետև հարկավոր է մշակման առարկա։ Մշակման այսպիսի առարկա չէ ապացպանի համար հացահատիկը, մանողի համար՝ մանրանը և այլն[1]։ Վերջապես արտադրության համար հարկավոր են գործիքներ (ինստրումենտներ ու մեքենաներ), շենքեր, ոժանդակ նյութեղիններ (վառելիք, քսելու յուղ և այլն)։

[1] Յերկիրը հագուստի համար էլ բազիս է և էլ մշակման առարկա։

վածատերերին ու բուրժուական-կալվածատիրական կառավարությանն էր պատկանում ամբողջ հողի $^3/_5$ մասը։

1905 թվականին կատարված հաշվարկությամբ համաձայն, Եվրոպական Ռուսաստանում (Լենաստանն ու Ֆինլանդիան չհաշված) լեռած 395 միլիոն դեսիատին հողից

1) պանձարանին, ցարի ընտանիքին, եկեղեցուն, վանք. ու այլ հիմնարկներին պատկանում էր 154 միլ. դես.

2) ազնվականներին, վաճառականներին և այլն՝ 77 » »

3) գյուղացիներին՝ . . . . . 164 » »

Գյուղացիական հողի մի նշանավոր մասը հեղափոխությունից առաջ կուլակների ձեռքումն էր։ Մի մասն էլ գրավ էր դրված «գյուղացիական» բանկում։

Հասկանալի չէ, որ առաջ էլ, ինչպես և հիմա, ֆաբրիկաներում, գործարաններում, հանքարաններում ու տրանսպորտում աշխատում էին բանվորներն ու ծառայողները, իսկ հողը մշակում էին գյուղացիք։ Բայց այլ բան էր այն աշխատանքը, որը միայն խեղճ ու կրակ ապրուստ էր տալիս, ու ջոկ բան էր այն, երբ մյուսները սեր ու անօրինություն էին անում այս աշխատանքի գլխին և սրանից կորզում բոլոր ոգուտները։ Աշխատանքի գլխին սեր ու անօրինություն էին անում և նրանց բոլոր ոգուտները քաղում էին կապիտալիստներն ու կալվածատերերը։

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

Յերբ մեկն աշխատում է՝ լոկ իր ապրուստի միջոցներ ստանալով, իսկ նրա աշխատանքի ամբողջ ոգուտը քաղում է ուրիշը,— այսպիսի հանրային հարաբերությունները շահագործման հարաբերություններ են։

Այսպիսով, ուրեմն, մեր հեղափոխության անհետաձգելի խնդիրն առաջին հերթին այն է, որ այս հեղափոխությունը վերջ տվեց աշխատավորների շահագործմանը կապիտալիստների ու կալվածատերերի կողմից։

Իսկ վերն է հատկապես շահագործման հարաբերությունների արմատը։ Վերն է գլխավոր պատճառն այն բանի, որ դասակարգերից վոմանք կարող են սիստեմատիկաբար հարկադրել մյուս դասակարգերին, որ սրանք աշխատանք իրենց համար։

Շահագործման հարաբերությունների մասին պարզ գաղափար կազմելու համար հարկավոր է նախ հասկանալ, թե ինչ բան են արտադրական հարաբերությունները ընդհանրապես։ Իսկ սրա համար անհրաժեշտ է պարզաբանել այն, թե ինչ բան են արտադրությունը, արտադրության միջոցները ու արտադրական ուժերը։

§ 2. ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ, ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐ.

Իսկապես ասած՝ ամեն մի մարդ, որը զբաղվում է արտադրությամբ, շատ լավ և հասկանում, թե ինչ բան և արտադրությունը։ Նրան այս բացատրել՝ միևնույն է թե ձկանը բացատրել, թե ինչ է ջուրը։

Մեր խոսքն այն մասին է միայն, որ պարզաբանենք, թե արտադրությունն ինչ նշանակություն ունի մարդկային հասարակության համար։

Մարդկային հասարակությունը բնության մի մասն է։ Բայց իր գոյությունը պահպանելու համար նա պետք է իրեն հակադրի բնությանը, կռվի բնության դեմ։ Հասարակությունը պետք է բնությունը հարմարեցնի իր պահանջներին ու կարիքներին։ Մարդիկ չեն կարող ապրել այն նյութերով, որ բնությունը նրանց մատուցում է պատրաստի։ Ուտելիք ունենալու համար հասարակությունը պետք է վարի, ցանի, տափանի, հնձի, կալսի և այլն։ Նույն նպատակով նա պետք է անասուններ պահի, ու բազմացնի, կաթնեղեն ու մսեղեն արդյունքներ պատրաստի և այլն։ Հագուստ ստանալու համար պետք է վուշ, բամբակ մշակի, վոչխար բուծի։ Ստացած մանածը (ВОЛОКНО) պետք է բարդ մշակման ենթարկի մանածագործարաններում։ Հասարակությունը, վորպեսզի հնարավորություն ունենա վերադրելու այն ամենն, ինչ անհրաժեշտ է, պետք է տերևամուղիներ կառուցի, խճուղիներ անց կացնի և այլն։

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ։

Հասարակության կողմից բնության դեմ մղվող այս կռիվը, բնությունը մշակման ենթարկելն ու հասարակության կարիքներին հարմարեցնելն է ահա, որ արտադրություն է կոչվում։

Սակայն մարդկային հասարակությունը չի կարող արտադրել սոսկ ձեռքերով ու պատարկ տարածության մեջ։ Արտադրության համար ամենից առաջ բազիս և հարկավոր։ Այսպիսի բազիս է առաջին հերթին երկիրը։ Այնուհետև հարկավոր է մշակման առարկա։ Մշակման այսպիսի առարկա չի ապացպանի համար հացահատիկը, մանողի համար՝ մանոնը և այլն[1]։ Վերջապես արտադրության համար հարկավոր են գործիքներ (ինստրումենտներ ու մեքենաներ), շենքեր, ժամանակ նյութեղեններ (վառելիք, քսելու յուղ և այլն)։

[1] Ցերկիրը հողագործի համար թե բազիս է և թե մշակման առարկա։

վածատերերին ու բուրժուական-կալվածատիրական կառավարության եր պատկանում ամբողջ հողի $^{3}/_{5}$ մասը։

1905 թվականին կատարված հաշվառման համաձայն, Յեվրոպական Ռուսաստանում (Լեհաստանն ու Ֆինլանդիան չհաշված) յեղած 395 միլիոն դեսյատին հողից

1) գանձարանին, ցարի ընտանիքին, յեկեղեցուն, վանք. ու այլ հիմնարկներին պատկանում եր 154 մլ. դես.

2) ազնվականներին, վաճառականներին և այլն՝ 77 » »

3) գյուղացիներին՝ . . . . . . 164 » »

Գյուղացիական հողի մի նշանավոր մասը հեղափոխությունից առաջ կուլակների ձեռքումն եր։ Մի մասն ել գրավ եր դրված «գյուղացիական» բանկում։

Հասկանալի չե, վոր առաջ ել, ինչպես և հիմա, ֆաբրիկաներում, գործարաններում, հանքարաններում ու տրանսպորտում աշխատում եյին բանվորներն ու ծառայողները, իսկ հողը մշակում եյին գյուղացիք։ Բայց այլ բան եր այն աշխատանքը, վորը միայն խեղճ ու կրակ ապրուստ եր հասցնում, ու ջոկ բան եր այն, յերբ մյուսները տեր ու տնորինություն եյին անում այս աշխատանքի գլխին և սրանից կորզում բոլոր օգուտները։ Աշխատանքի գլխին տեր ու տնորինություն եյին անում և նրանց բոլոր օգուտները քաղում եյին կապիտալիստներն ու կալվածատերերը։

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

Յերբ մեկն աշխատում է՝ լոկ իր ապրուստի միջոցներ ստանալով, իսկ նրա աշխատանքի ամբողջ օգուտը քաղում է ուրիշն,— այսպիսի հանրային հարաբերությունները շահագործման հարաբերություններ են։

Այսպիսով, ուրեմն, մեր հեղափոխության տնտեսական բովանդակությունն առաջին հերթին այն ե, վոր այս հեղափոխությունը վերջ տվեց աշխատավորների շահագործմանը կապիտալիստների ու կալվածատերերի կողմից։

Իսկ վո՞րն ե հապա շահագործման հարաբերությունների արմատը։ Վո՞րն ե գլխավոր պատճառն այն բանի, վոր դասակարգերից վոմանք կարող են սիստեմաբար հարկադրել մյուս դասակարգերին, վոր սրանք աշխատեն իրենց համար։

Շահագործման հարաբերությունների մասին պարզ գաղափար կազմելու համար հարկավոր ե նախ հասկանալ, թե ինչ բան են արտադրական հարաբերություններն ընդհանրապես։ Իսկ սրա համար անհրաժեշտ ե պարզաբանել այն, թե ինչ բան են արտադրությունն, արտադրության միջոցներն ու արտադրական ուժերը։

§ 2. ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ, ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐ.

Իսկապես ասած՝ ամեն մի մարդ, վոր զբաղվում ե արտադրությամբ, շատ լավ ե հասկանում, թե ինչ բան ե արտադրությունը։ Նրան այս բացատրել՝ միևնույն ե թե ձկանը բացատրել, թե ինչ ե ջուրը։

Մեր խոսքն այն մասին ե միայն, վոր պարզաբանենք, թե արտադրությունն ինչ նշանակություն ունի մարդկային հասարակության համար։

Մարդկային հասարակությունը բնության մի մասն ե։ Բայց իր գոյությունը պահպանելու համար նա պետք ե իրեն հակադրի բնությանը, կռվի բնության դեմ։ Հասարակությունը պետք ե բնությունը հարմարեցնի իր պահանջներին ու կարիքներին։ Մարդիկ չեն կարող սնվել այն նյութերով, վոր բնությունը նրանց մատուցում ե պատրաստի։ Ուտելիք ունենալու համար հասարակությունը պետք ե վարե, ցանե, տափանե, հնձե, կալսե և այլն։ Նույն նպատակով նա պետք ե անասուններ պահե, ու բազմացնե, կաթնեղեն ու մսեղեն արդյունքներ պատրաստե և այլն։ Հագուստ ստանալու համար պետք ե վուշ, բամբակ մշակե, վոչխար բուծե։ Ստացած մանոնը (ВОЛОКНО) պետք ե բարդ մշակման յենթարկե մանածագործարաններում։ Հասարակությունը, վորպեսզի հնարավորություն ունենա փոխադրելու այն ամենն, ինչ անհրաժեշտ ե, պետք ե յերկաթուղիներ կառուցե, խճուղիներ անց կացնե և այլն։

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ։

Հասարակության կողմից բնության դեմ մղվող այս կռիվը, բնությունը մշակման յենթարկելն ու հասարակության կարիքներին հարմարեցնելն է ահա, վոր արտադրություն է կոչվում:

Սակայն մարդկային հասարակությունը չի կարող արտադրել սոսկ ձեռքերով ու դատարկ տարածության մեջ։ Արտադրության համար ամենից առաջ բազիս ե հարկավոր։ Այսպիսի **բազիս է առաջին հերթին յերկիրը։** Այնուհետև **հարկավոր է մշակման առարկա։** Մշակման այսպիսի առարկա չե ազացպանի համար հացահատիկը, մանողի համար՝ մանոնը և այլն[1]։ Վերջապես արտադրության համար հարկավոր են գործիքներ (ինստրումենտներ ու մեքենաներ), շենքեր, ոժանդակ նյութեղեններ (վառելիք, քսելու յուղ և այլն)։

[1] Յերկիրը հողագործի համար թե բազիս ե և թե մշակման առարկա։

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

Այս բոլորը—հողը, արտադրական շենքերը, մեքենաները, գործիքները, մշակմամբ առարկաները ու ոժանդակ նյութերը եվ հենց, վոր արտադրության միջոցներ են կոչվում: Մշակմամբ այն առարկաները, վորոնք նախորոք արդեն անցել են արտադրության միջով, կոչվում են հումք (сырье)։ *Այսպիսի հումք և, որինակ, դարբնի համար պողպատը, մանողի համար՝ մանրոնը, ջուլհակի համար՝ մանածը, վորովհետև թե պողպատը և թե մանրոնն ու մանածը, վոչ թե պատրաստի կան բնության մեջ, այլ ստացվում են արտադրական պրոցեսի հետևանքով։*

Բայց քարածխային հանքատարհի (шахта) *համար չի կարելի հումք համարել ածխի այն պաշարը, վորը գտնվում է յերկրի խորքերում, քանի վոր արտադրության պրոցեսը դեռ չե կպել այս ածխին։*

Հանրային արտադրությունը պետք է ընթանա յերկու զբաղավոր ուղղությամբ.

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՒ ՍՊԱՌՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ։

ա) Հասարակությունը պետք է արտադրե արտադրության միջոցներ—գործիքներ, մեքենաներ, գործարանային շենքեր, հումք, ոժանդակ նյութեղեններ ու բ) սրանց միջոցով արտադրե սպառման միջոցներ։ Յեթե արդի հասարակությունից խլեն արտադրության այն բոլոր միջոցները, վորոնք արտադրված են, յեթե, որինակ, չքանան բոլոր ֆաբրիկաները ու գործարանները հումքի ու վառելիքի իրենց պաշարով, յեթե վերանան բոլոր անասուններն ու գյուղատնտեսական բոլոր գործիքները և այլն, այն ժամանակ հասարակությունն իր արդի կերպարանքով կոչնչանար։ Կդիմանային և կապրեին այնքան մարդիկ միայն, վորքան մարդիկ վոր կարող եին անվել վայրի հատիկներ ու պտուղներ հավաքելով և տարրական աղեղների գործադրությամբ վորս անելով (այս աղեղները կրկին կլինեին արտադրության այնպիսի միջոցներ, վորոնք մինչև նրանցից ոգտվելը նույնպես մարդկանց ձեռքով են արտադրած)։

Բայց ինչպես արտադրությունն անհնարին և առանց արտադրության միջոցների, ճիշտ նույն կերպ էլ այն անկարելի է առանց բանվորական ուժի։ Յեթե բոլոր մարդկանց խելքին փչեր այնպես ապրել, ինչպես ապրում են կապիտալիստները, հողատերերը և այլն, այսինքն յեթե մարդիկ ապրելին առանց մասը մաաին կպցնելու, այն ժամանակ արտադրության միջոցների կա-

րիք չեր լինի։ Յեթե արտադրության միջոցները վոչնչանային, միայն մի րոպե մարդիկ գոյության հնարավորությունն կունենային։ Իսկ յեթե բանվորական ուժը չոգտագործվեր, բոլոր մարդիկ անխուսափելի կմեռնեին սովից։

ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ։

Այսպիսով, ուրեմն, արտադրության համար միակերպ անհրաժեշտ են ինչպես արտադրության միջոցները, այնպես և արտադրության միջոցներին հարմարեցված բանվորական ուժը։

Հասարակության տրամադրության տակ գտնվող արտադրության միջոցները ու սրանց հարմարեցված բանվորական ուժը միասին կազմում են հասարակության արտադրողական ուժերը։

Հասարակության արտադրողական ուժերը յերբեք միևնույն բարձրության վրա կանգնած չեն մնում յերկար ժամանակ։ Վորոշ դեպքերում նրանք զարգանում են, ուրիշ դեպքերում՝ յետ-յետ են գնում։ Այսպես, որինակ, իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմի ժամանակ մեզանում արտադրողական ուժերը հետադիմեցին թե վորակապես ու թե քանակապես։ Իսկ քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո արտադրողական ուժերի զարգացումը մեզանում արագորեն առաջադիմում է։

§ 3. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

«Իրենց կյանքի հանրային արտադրության պրոցեսում մարդիկ միմյանց հետ վորոշ անհրաժեշտ, իրենց կամքից անկախ հարաբերությունների մեջ են մտնում—արտադրական հարաբերությունների մեջ, վորոնք համապատասխանում են նրանց նյութական արտադրողական ուժերի զարգացման վորոշ աստիճաններին։

(Մարքս)

Ինչպես տեսանք, արտադրության միջոցներն ու բանվորական ուժն անքակտելի միությունն են կազմում։ Բանվորական ուժը չի կարելի անջատել աշխատավորներից, արտադրողներից։ Իսկ յեթե այս այսպես է, ապա, բնականաբար, արտադրության միջոցներն էլ պետք է վոր արտադրողներից անջատված չլինեն։

Տեխնիկապես այս հենց այսպես էլ է։ Ջուլհակի հաստոցը (станок) *չի կարելի անջատել ջուլհակից։ Ջատեցեք ջուլհակին հաստոցից, և վերջինս անոգուտ կդառնա։ Բաժանեցեք գութանը վար անողից, և գութանը կկորցնի իր ամբողջ նշանակությունը։*

Բանի նկատի ունենք միայն տեխնիկան, արտադրողների ու արտադրության միջոցների կապն անքակտելի է։ Ո՞վ և աշխատում

հաստոցի վրա։—Ջուլհակը։ Ո՞վ է աշխատում գութանով։—Վաթ անողը։ Բայց փորձենք հարցն ուրիշ կերպ դնել։ Ո՞վ է տիրությունն անում հաստոցին։ Ո՞վ է քաղում հաստոցի վրա կատարվող աշխատանքի ամբողջ ոգուտը։ Այս դեպքում արդեն պատասխանը փոխվում է։ Հաստոցը կարող է ջուլհակին պատկանել, բայց այն կարող է լինել նաև այն գործարանատիրոջ սեփականությունը, որի գործարանում ջուլհակն աշխատում է։ Այս վերջին դեպքում հաստոցից ստացվող ամբողջ ոգուտն արդեն քաղում է ոչ թե ջուլհակն, այլ գործարանատերը, որը ջուլհակին միայն այնքան վարձ է տալիս, ինչքան անհրաժեշտ է նրա բանվորական ուժը վերարտադրելու համար։ Գութանը կարող է հողագործին պատկանել, բայց այն կարող է պատկանել նաև մի տարկատիրոջ, որը, բացի գութանից, անասնաման տեր ու տիրականն է բուն իսկ հողագործի։

Մի խոսքով՝ արտադրության ու արտադրության միջոցների վերաբերմամբ առած՝ հասարակության կազմակերպությունը կարող է տարբեր լինել։ Արտադրության միջոցները կարող են լինել արտադրողների հավաքական անօրինության տակ (նախնադարյան կոմմունիզմ, սոցիալիզմ), արտադրության միջոցները կարող են լինել արտադրողների անհատական անօրինության տակ (պարզ փոխանակային հասարակություն), թե արտադրության միջոցները և թե արտադրողները կարող են լինել շահագործողների հատուկ դասակարգի անօրինության տակ (տարկություն, ֆեոդալիզմ, ճորտատիրություն), կամ թե արտադրողներն ազատ են, բայց արտադրության միջոցները շահագործողների դասակարգի անօրինության տակ են լինում (կապիտալիզմ)։

Նախնադարյան կոմմունիզմը, տոհմային հասարակությունը, տարկությունը, Ֆեոդալիզմը, ճորտատիրությունը, պարզ փոխանակային հարաբերությունները, կապիտալիզմը, սոցիալիզմը,—այս բոլորն արտադրական հարաբերությունների տարբեր ձևեր են։

Արտադրական հարաբերությունների այս ձևերից մի կողմից միայն նախնադարյան կոմմունիզմն ու մյուս կողմից սոցիալիզմը զերծ են շահագործումից։ Արտադրական հարաբերությունների մյուս բոլոր ձևերը, որ թվեցինք վերևում, հիմնված են շահագործման վրա[1]։

[1] *Պարզ փոխանակային հասարակությունն էլ, իր զուտ կերպարանքով առած, պետք է զերծ լինի շահագործումից։ Բայց նախ որ պարզ փոխանակային հարաբերությունները ոչ մի տեղ գերիշխող վիճակի չեն հասել և պահպանել են լոկ իբրև կցորդ՝ արտադրական հարաբերությունների մյուս ձևերին*

Մեր այս ասածներից հետո դժվար չի արդեն պատասխանել այն հարցին, թե ովքեր և շահագործման արմատը։

Շահագործման արմատը այն պարագայումն է, որ արտադրության միջոցների տնօրինությունը արտադրողների ձեռքում չէ լեվ որ արտադրողական ուժերը, որոնց ամբողջ հասարակության կյանքի աղբյուրը են կազմում, գտնվում են հասարակության առանձին անդամների տնօրինության տակ միայն, հասարակության հենց այն անդամների, ովքեր իրենց վոչինչ չեն արտադրում։

Հարկավոր է նկատել, որ տարկատիրական հասարակությունը միմիայն տորուկներից ու տարկատերերից չեր կազմված։ Կապիտալիստական հասարակությունը մենմենակ բանվորներից ու կապիտալիստներից չէ կազմված։ Այդ հասարակության տնտեսական կառուցվածքը, որտեղ կան շահագործվողներ ու շահագործողներ, չի կարող բոլորովին միատեսակ լինել։ **Հասարակության տնտեսական կառուցվածքը բնորոշվում է նրանով, թե նրանում արտադրական հարաբերությունների որ ձեվն է այսպես ասած գերիշխող դեր կատարում։**

Այն բոլոր տարրերը, որոնք մնացել են մյուս ձևերից, այս գերիշխող ձևի նկատմամբ տորադաս դեր են կատարում։ Որինակի համար վերցնենք գյուղացիությունը կապիտալիստական չերկրում, թեկուզ հենց մեր 80 միլիոնանոց գյուղացիությունը նախքան հեղափոխությունը։ «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» իր գրքում վ. Ի. Լենինը ցույց տվեց, թե ինչպես այս գյուղացիական մասան ընդգրկված ու ջանցված եր կապիտալիստական շահագործման թևերով։

Հենց նույն այս վիճակում էլին գտնվում տնայնագործները։ Արտադրական հարաբերությունների գերիշխող ձևն իր պահանջներին է համապատասխանում հին ձևերի մնացորդները, որպեսզի այնուհետև այս մնացորդները միաժամանակ թե ոգտագործե և թե խորտակե։

խանված (կապիտալիզմին, ֆեոդալիզմին, նույնիսկ տարկությանը)։ Ցերկրորդ, ինչպես հետո կտեսնենք, փոխանակային հարաբերությունների անխուսափելի հետևանքը լինում է բանվորական ուժի ապրանք դառնալն ու հետևաբար նաև շահագործումը։

§ 4. Ի՞ՆՉ Է ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Է ՀԱՐԿԱՎՈՐ ԱՅՆ.

Մեր հեղափոխության վորոշիչ ու վճռական հիմնական ակն այն եր, վոր պրոլետարիատի ու գյուղացիության իշխանությունը—խորհրդային իշխանությունը—կապիտալիստներից ու հողատերերից խլեց արտադրության միջոցները։ Վերջիններս աշխատավորների կոլլեկտիվ սեփականություն դարձան։ Սրա հետ միաժամանակ խորհրդային իշխանությունն ստանձնեց արդյունաբերության ու տրանսպորտի կառավարումն, իսկ հողը հանձնեց գյուղացիներին՝ աշխատավորական ոգտագործման համար։

Այսպիսով մեր հեղափոխությունը մեզանում առաջ տիրապետող արտադրական հարաբերությունների հերթափոխն եր (смена)։ **Կապիտալիզմից ու Ֆեոդալիզմի մնացորդներից փոխարինելու յեկավ սոցիալիզմի շինարարությունը։**

Մեր հեղափոխությունը համաշխարհային պրոլետարական հեղափոխության սկիզբն է։ *Կապիտալիզմը մյուս յերկրներում էլ կորստի չի մատնված։ Այնտեղ էլ կապիտալիզմին փոխարինելու չի գալիս սոցիալիզմը։*

Հապա ինչն է պատճառը, վոր կապիտալիզմը վերջնական պարտություն կրեց մեզանում, և ինչո՞ւ նրա կորուստը մոտ է համաշխարհային մասշտաբով։

Այս հարցի պատասխանը մենք կարող կլինենք ստանալ այն ժամանակ միայն, յերբ կուսումնասիրենք կապիտալիստական արտադրական հարաբերությունների ներքին մեխանիզմն ու այս մեխանիզմի հակասությունները։

Այս կողմից էլ հենց մոտենում է կապիտալիզմին մարքսիստական քաղաքատնտեսությունը։

ՈՒՐՑՈՒԱԿԱՆ ՈՒ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.

Մինչդեռ բուրժուական քաղաքատնտեսությունը կապիտալիստական հասարակությունների վրա նայում է իբրև մի ինչ-վոր հավիտենական ու անփոփոխ բանի վրա, մարքսիստական քաղաքատնտեսությունը մերկացնում է հիշյալ հարաբերությունների անցողիկ բնույթը։

Կապիտալիզմը պատմական արագընթաց պրոցես է։ Նույն ժամանակամիջոցը, վորն ընկած է XVII դարում կատարված առաջին բուրժուական հեղափոխության ու մեր կարգի սոցիալիստական հեղափոխության միջև, ապագա պատմագիրներին շատ կարճատև կթվա։

Այն 260 տարվա ընթացքում, վոր Անգլիայի բուրժուական հեղափոխության սկիզբը բաժանում է մեր հեղափոխության սկզբից, արդյունաբերական կապիտալիզմն իվիճակի յեղավ վոչ միայն փթթելու, այլ և թառամելու։ Բազաքատնտեսությունն ուսումնասիրում է հենց այս պրոցեսը, վոր սկզբում յերևան է յեկել Յեվրոպայի արևմտյան ծայրամասում և այնքան կարճ ժամանակվա մեջ կերպարանափոխել է ամբողջ աշխարհը։

Բայց քաղաքատնտեսությունը մերկացնում է վոչ միայն կապիտալիզմի գոյության գաղտնիքն, այլ և պարզում է նրա ինքնոչնչացման գաղտնիքը։ Մարդկանց շահագործումը մարդկանց կողմից վերանում է վոչ այն պատճառով, վոր կապիտալիստների ամոթը գալիս է, վոր իրենք-կերակրվում են բանվորների քրտնքով ու արյունով, այլ այն պատճառով, վոր կապիտալիզմն ինքն իր մեջ է պարունակում իր սեփական կործանման նախադրյալները։

ՉԻ ԿԱՐԵԼԻ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՎՈՉՆՉԱՑՆԵԼ ՈՒ ՓՈԽԱՆԱԿԱՑԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՂՊԱՆԵԼ։

Մանր-բուրժուական սոցիալիստները (Ռուենը, Պրուդոնը) կարծում եյին, թե կարելի չե կապիտալիզմը վոչնչացնել, պահպանելով հասարակության փոխանակային կերպավածքը (уклад)։ Նրանք կարծում եյին, վոր յեթե ամեն կերպ ոժանդակություն տրվի մանր արտադրողին, յեթե վերջնից համար ապահովվի անտոկոս վարկն ու նրա արդյունքների «արդար» փոխանակությունն այն արդյունքների հետ, վոր հարկավոր են նրան,—ապա կապիտալիստական շահագործմանը վերջ տրված կլինի։

Մարքսը ցույց տվեց, վոր դատարկ ցնորք է այս։ **Փոխադարձական հարաբերությունները իրենց զարգացման վորոշ աստիճանի վրա անխուսափելիորեն պետք է փոխարկվեն կապիտալիստական հարաբերությունների։**

Մանր արտադրողը, վորն արտադրության միջոցներ ունի, իր աշխատանքի արդյունքը շուկա չի տանում։ Այն արտադրողը, վորը չունի արտադրության միջոցներ, կամ վորի ապրանքը պահանջող չի լինում, պետք է իր բանվորական ուժը շուկա հանի՝ այն ծախելու նպատակով։ Բանվորական ուժը վաճառողը դառնում է բանվոր, գնողը՝ կապիտալիստ։

Պատմության անիվը յետ դարձնել չի կարելի։ **Կապիտալիզմը հաղթահարել կարող է արտադրական հարաբերություն-**

ների վոչ թե այն ձևը, վորը նրա համեմատությամբ ցած է, այլ այն ձևը, վորը ավելի բարձր է, այն է՝ սոցիալիզմը:

Վորովհետև կապիտալիզմի հիմքը փոխանակային հարաբերություններն են, այս պատճառով Մարքսը կապիտալիզմի եությունը մերկացնելուց առաջ պետք է յերևան հաներ փոխանակության, ապրանքի, արժեքի ու փողի եությունը:

Ընդհանրապես՝ փոխանակային տնտեսության ու մասնավորապես՝ կապիտալիստական տնտեսության առանձնահատկությունը կազմում է նրա տարերայնությունը: Այս ձևի տնտեսությունն ամբողջությամբ առած՝ կառավարվում է վոչ թե վորևե մեկի գիտակցական կամքով, այլ տարերային օրենքներով: *Այս օրենքների վրա խարսխվելով՝ կապիտալիզմը ծագումն է առել և փարթամ ծաղկել: Այս օրենքների վրա հիմնված՝ կապիտալիզմը կործանվում է մեր աչքի առջև:* Այս օրենքների հետազոտությունն է հենց մեր քաղաքատնտեսության առարկան:

Դիալեկտիկական մատերիալիզմը մատնանշում է, թե հակասություններն են ամեն մի շարժման հիմքը. քաղաքատնտեսությունն ուսումնասիրում է հակասությունների ծագումն ու ներգործությունը հանրային ամենահակասական պայմաններում, այսինքն կապիտալիզմի պայմաններում: Ապրանքը, արժեքը, աշխատավարձը,—այս բոլորը տեղն ու տեղը հակասություններ են: Կապիտալիստի շահույթը, հողատիրոջ ռենտան այս հակասությունների պտուղ են և նոր հակասությունների աղբյուր:

Սկսնակը չպետք է կանգ առնի այն պատճառով, վոր ինքը չի հասկանում, թե ինչ հակասություններ կարող են պարունակված լինել առաջին հայացքից այնքան պարզ թվացող իրերի մեջ, ինչպիսիք են ապրանքը, շահույթը, աշխատավարձը:

Սրանց եությունը յերևան հանելու համար Մարքսի հանճարն էր պետք: Բուրժուական տնտեսագետները մինչև հիմա յել չեն տեսնում այս հակասությունները: Ավելի ճիշտն ասած՝ սրանք յերես են շուռ տալիս այս հակասություններից, վորովհետև ընդունել, թե կապիտալիզմն ամբողջովին հակասական է, նշանակում է ընդունել, թե նրան կործանումն է սպասում:

Ընդհանուր առմամբ, մեր քաղաքատնտեսությունը կարելի յե բնորոշել իբրև գիտություն այն օրենքների մասին, վորոնք ընդհանրապես փոխանակային հասարակության գոյության ու զարգացման յեվ մասնավորապես կապիտալիզմի գոյության ու զարգացման հիմքն են կազմում յեվ վորոնք զարգացման վորոշ աստիճանի վրա այն հետևանքին են հասցնում, վոր կապիտալիզմը կործանվում է, յեվ նրան փոխարինում է արտադրական հարաբերությունների բարձրագույն ձևը – սոցիալիզմը:

Կապիտալիզմի գերեզմանափորն ու սոցիալիզմի շինարարը բանվոր դասակարգն է: Կուրորեն գործած չլինելու համար բանվոր դասակարգը պետք է իմանա, թե վորոնք են կապիտալիզմի գոյության հիմքերն ու նրա կործանման պատճառները:

Այս պատճառով մարքսիստական քաղաքատնտեսությունն այն հիմնական առարկաներից մեկն է, վոր պրոլետարիատը պետք է իմանա:

ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾ.

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ.

ՊԱՐԶ ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Այս գլխի նպատակն է՝ պարզել, թե ինչու կապիտալիստական հարաբերություններն ըմբռնելու համար անհրաժեշտ է քննել պարզ ապրանքային հարաբերությունները: Սրա համար պարզաբանում ենք, թե փոխանակությունը, շուկան ու գներն ինչ դեր են կատարում կապիտալիզմի ժամանակ:

§ 5. ԳՆԵՐԻ ԴԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Շահագործումը կապիտալիզմից առաջ էլ կար: Ստրկատերը շահագործում էր ստրկին, կալվածատերը՝ ճորտ գյուղացուն: Բայց այնտեղ շահագործման մեխանիզմը շատ պարզ էր: Ստրկատերը մտրակ ուներ, կալվածատերը՝ ճիպոտներ: Իսկ կապիտալիստը **սովորական ժամանակ** վոչ մտրակ ունի ձեռքին, վոչ ճիպոտներ: Նա բանվորին ուժով չի պահում իր մոտ աշխատանքի (մենք ասում ենք **սովորական** ժամանակ, վորովհետև կապիտալիստներն ուղղակի և վոչ մի բանով չքողված բռնություն կիրառում են այն ժամանակ, յերբ բանելուց հրաժարվում է վոչ թե մի բանվոր, այլ բանվորական մասսան): Կապիտալիստը բանվորին հանդիպում է **շուկայում**, վորտեղ նրանք իբրև թե իրար դեմ կանգնած են վորպես ազատ ու հավասար մարդիկ և առուծախով են զբաղվում:

ԱՌՈՒԾԱԽ ՅԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ.

Կապիտալիզմի պայմաններում առուծախը տնտեսական կյանքի հիմքն է: Կապիտալիստը բանվորի աշխատանքի արդյունքին տիրանում է միայն նրանով, վոր **գնում** է նրա բանվորական ուժը: Բանվորը բանվոր է այն չափով միայն, վոր **ծախում է** իր բանվորական ուժը: **Յեվ այս առուծախի մեխանիզմն այնպես է, վոր ինչքան էլ շարունակվի այս առուծախը, բանվորն առաջվա նման մնում է բանվորական ուժը ծախող, իսկ կապիտալիստն ավելի ու ավելի շատացնում է իր կապիտալները:**

ԳՆԵՐԸ.

Կապիտալիստական հարաբերությունների մեխանիզմի բանալին գտնելու համար անհրաժեշտ է հասկանալ առուծախի էությունը:

Առուծախի համար վճռական նշանակություն ունի գինը: Լավ մահուդը, սպիտակ հացը, կարագը բանվորին յետ են հրում վոչ թե իրենց տեսքով: Նրանք նրան հեռու յեն հրում իրենց **գներով:** Կապիտալիստը կապիտալիստ է դառնում միայն այն պատճառով, վոր նրա գրպանը պատում է վճարելու գինն այն շենքերի, մեքենաների, հումքի ու բանվորական ուժի, վոր նա հարկ է ունենում գնելու: Թող հիշյալների գինը կրկնապատկվի. այս դեպքում կապիտալիստը պետք է կրկնապատիկ ավելի կապիտալ ունենա: Շահույթ ու վնասը դարձյալ **գներից** կախում ունեն: Յերբ կապիտալիստը ծախում է, որինակ, չիթը 25 կոպեկով արշինը, նա կարող է հինգ կոպեկ շահույթ ստանալ: Բայց անա չթի գինն ընկավ մինչև 15 կոպեկ, նա արդեն արշինին 5 կոպեկ վնաս է անում:

Բանվորի կյանքը կախված է նրա ծախած բանվորական ուժի **գնից** ու նրա գնած հացի, հագուստի, փայտի ու այլ ապրանքների **գնից:** Ծախողների ու գնողների միջև գնի շուրջն անընդհատ կռիվ է մղվում: Առաջիններն աշխատում են, վորքան կարելի յե, շատ ուռցնել գինն, իսկ յերկրորդները, վորքան կարելի յե, շատ իջեցնել:

Բայց յեթե գների մակարդակից է կախված մեծությունն այն բանի, վոր ամեն մեկը կարող է վերցնել շուկայից ու շուկա հասցնել, ապա իր հերթին ինչով է վորոշվում գների մակարդակը:

§ 6. ԳՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՍԽԱԼ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

ՊԱՀԱՆՋԻ ՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.

Հարցը շատ պարզ է թվում առաջին հայացքից: Յեթե ծախողներն աշխատում են գները բարձրացնել, վորքան կարելի յե, իսկ գնողները ձգտում են իջեցնել, վորքան հնարավոր է, ապա նշանակում է, վոր գների մակարդակը կախում ունի գնողների ու ծախողների ուժերի փոխհարաբերությունից կամ, վոր միևնույնն է, առաջարկի ու պահանջի փոխհարաբերությունից:

Гос. Библиотека ... Арм. ССР

Բայց եթե մենք ուշադրությամբ դիտենք այն, ինչ կատարվում է շուկայում, կհամոզվենք, որ այս այդպես չէ։ Ճիշտ է, գնողների դեմ մղած կռվում ծախողներն աշխատում են գներն ուռցնել, որքան կարելի է, սրա փոխարեն այն կռիվը, որ մղում են ծախողներն իրար դեմ, սրանց հարկադրում է, որքան կարելի է, գներն ավելի ու ավելի իջեցնել։

Բայց բանն այն է, որ ծախողները կարող են գներն իջեցնել միայն մի որոշ աստիճան: Եթե չթի արշինի ինքնարժեքը 15 կոպեկ է, և եթե մրցող գործարանները սիստեմաբար չիթը ծախեն 14 կոպեկով, նրանց վերջն այն կլինի, որ տնով տնավեր կլինեն։ Եվ ոչ միայն ինքնարժեքից ցած, այլ ինքնարժեքով էլ, առանց որևէ շահույթի երկար ժամանակ ծախել նրանք չեն կարող։ Դեռ չխոսելով այն մասին, որ կապիտալիստը սիրում է լավ ուտել, նա պետք է կուտակե, պետք է իր կապիտալը մեծացնե։ Առանց շահույթ ստանալու ոչ այս կարելի չէ անել ու ոչ էլ մյուսը։ Նշանակում է՝ ինքնարժեքն, արտադրության ծախքերն են հենց, որ ծախողին թելադրում են գնի պայմանները։

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՔԵՐԸ։

Սակայն ասել, թե գները արտադրության ծախքերով են որոշվում, նշանակում է դեռ ոչինչ չասել։ Ի՞նչ բան են արտադրության ծախքերը։ Դարձյալ գներ են։ Չթի արտադրության ծախքերի մեջ մտնում են մանվածքի գինը, մեքենայի գինն, ածխի գինը, բանվորական ուժի գինը։ Մանվածքի գնի մեջ մտնում են կրկին բամբակի գինը, մեքենաների, ածխի, բանվորական ուժի գինը և այլն։ Գներն արտադրության ծախքերով բացատրել՝ նշանակում է և գները հենց գներով բացատրել։

ԳՆԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։

Այո, մեզ կասեն, թե՝ գները բացատրվում են գներով։ Այսօրվա գները երեկվա գներով։ Մեկելորվա գներով, այն մյուս օրվա գներով և այլն։ Ֆաբրիկանտն այսօրվա չթի գինը սահմանելիս հիմք է դարձնում այն գները, որ նա վճարել է, երբ գնել է այն բոլորն, ինչ անհրաժեշտ է արտադրության համար—մեքենաներ մանվածք, բանվորական ուժ և այլն (իհարկե, որոշ շահույթ վրան գալով)։ Մեքենաշեն գործարանը մեքենաների գների հիմքն է դարձնում այն գները, որ նա իր հերթին վճարել է երկաթի, ածխի, բանվորական ձեռքերի համար և այլն։

Այս այդպես չէ։ Այո, մանածագործարանի տերը պետք է

չթի գնի հիմք դարձնի մանվածքի գինը, **բայց ոչ թե երեկ այլ այսօրվա գինը:** Երբ էժանանում է մանվածքն, էժանանում է ոչ միայն այն չիթը, որ պատրաստվում է արտադրվելու, այլ այն չիթը, որ արդեն պատրաստված է։ **Գները վերջնական հաշվում տանել հասցնել արտադրության ծախքերին՝ նշանակում է գների այսօրվա մակարդակը բացատրել գների այսօրվա մակարդակով։** Այս միևնույն է, թե մարդի մահը բացատրել նրանով, որ նա մեռել է, կամ բույսի աճումը բացատրել նրանով, որ այն աճում է։

ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ԳՆԵՐԸ։

Ուսումնասիրելով գների շարժումը՝ մենք տեսնում ենք, որ գների անկման ամենից նկատելի ու ամենից խիստ ազդող պատճառը տեխնիկայի առաջադիմությունն է։

Միևնույն կողպեքը, որ ձեռքով պատրաստելիս արժե 1 ռուբլի կամ 1 ռ. 50 կ., շտապով պատրաստելու դեպքում արժե 20 կոպեկ։ Շտապով պատրաստած բահն արժե 25 կոպեկ, այնինչ առաջ, երբ ձեռքով էին պատրաստում դարբնոցում, 70 կոպեկից պակաս չարժեր։ Միևնույն մեխերը, որոնք ձեռքով պատրաստելիս արժեյին փութը 12 ռուբլի, գլանելու եղանակը մտցնելուց հետո արժեն 2 ռ. 40 կոպեկ փութը։

Մանելու մեքենա մտցնելու շնորհիվ Անգլիայում բամբակե № 40 մանվածքի 1 ֆնտի գինը 1784 թվականի 131 պենսից ընկավ մինչև $11\frac{1}{4}$ պենս 1823 թվականին։

Բեսսեմերի եղանակը պողպատի գինը ուղիղ չորս անգամ էժանացրեց (տոննը 600 ռուբլու փոխարեն՝ 150 ռուբլի)։ Ալյումինը, որն սկզբում արծաթից թանգ էր գնահատվում, միքանի տասնյակ անգամ էժանացավ այն բանից հետո, երբ նրա արտադրության տեխնիկան բարելավվեց։

Ի՞նչ բան է տեխնիկայի բարելավումը։ Ամենից առաջ մեծանում է աշխատանքի արտադրողականությունը, քչանում է աշխատանքի այն քանակը, որ հարկ է լինում գործադրել արդյունքի մեկ միավոր արտադրելու համար։

Կարի գործարանում կարած վերնազգեստի մեջ ավելի քիչ աշխատանք է պարունակվում, քան միևնույն վերնազգեստում, որ դերձակը կարել է պատվերով։ Մեկ ֆունտ ալյումինի արտադրությունն այժմ միքանի տասնյակ անգամ ավելի քիչ աշխատանք է պահանջում, քան 60 տարի առաջ։

Այստեղ արդեն մոտենում ենք այն հարցի պատասխանին, թե ինչով են պայմանավորվում գները։ **Արդյոք ապրանքի գինը կախված չէ այն աշխատանքից, որ գործադրվում է նրա արտադրության վրա։**

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ (калькуляция)։

Բայց խնդիրն այսպես լուծել՝ նշանակում է անչափ շատ լուծել այն։ Բուրժուական ընտեսագետը ձեզ կասի, թե՝ այո, վորչափով վոր աշխատավարձը մտնում է ապրանքի գնի մեջ, այն չափով էլ աշխատանքի քիչ գործադրվելը կպակասեցնի նաև գինը։ Բայց,—կասե նա ձեզ,—ապրանք արտադրելու համար, բացի բանվորական ուժից, կապիտալ ու հող էլ է հարկավոր։ Կապիտալիստն ստանում է շահույթ, հողատերը՝ ռենտա, պետությունը՝ հարկ։ Թե շահույթն ու ռենտան և թե հարկը վորպես թե մտնում են ապրանքի գնի մեջ, իբրև սրա բաղադրիչ մասեր։

Այսպիսով, ուրեմն, **կապիտալիստական գնարկությունը մթագնում է հարցը։ Ուստի չեվ սկզբում մենք մի կողմ կթողնենք կապիտալիստական պայմանները չեվ շուկայի հիմնական որենքի հարցն ուսումնասիրելու համար պարզ փոխանակային հասարակության վրա կանգ կառնենք։**

§ 7. ՊԱՐԶ ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Կապիտալիստական տնտեսությունը հիմնված է առուծախի վրա։ Առուծախը փոխանակություն ձևն է (փողը փոխանակում են ապրանքի հետ, ապրանքը՝ փողի)։ Հետևաբար **կապիտալիստական տնտեսությունն անպայման փոխանակային տնտեսություն է։ Բայց հակառակը պնդել չի կարելի։** *Կարելի չե չերևակայել արտադրական այնպիսի հարաբերություններ, վորոնք հիմնված են փոխանակության վրա, բայց վորտեղ շահագործում չկա։ Կարող ենք մեզ այնպիսի հասարակություն պատկերացնել, վորտեղ արտադրության միջոցներն արտադրողների մասնավոր սեփականություն են։ Ինարկե, խոսել շահագործումից ազատ փոխանակային հասարակության մասին, իբրեվ տնտեսության մի ձեվի մասին, վորն իսկապես գոյություն է ունեցել մի վորեվե տեղ կամ գոյություն ունի,—չի կարելի։*

ՊԱՏԱՃԱՌԻՄ Ե ԱՐԴՅՈՒՔ ՊԱՐԶ ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՂ ՋԵՎ։

Ձեվ իրաք, պարզ փոխանակային հասարակությունն այն հասարակությունն է, վորտեղ շահագործում դեռ չկա, բայց արդեն կա աշխատանքի բաժանման ու շուկայի համար արտադրելու լայն գործադրում (ապրանքային արտադրություն)։ Այնինչ իրականում շահագործումը շատ ավելի վաղ և առաջ գալիս, քան գործադրած ապրանքային տնտեսությունը։ Նահապետական տոհմի պետն, ստրկատերը կամ ճորտատեր իշխանը դեռևս բնատնտեսության պայմաններում շահագործում են արտադրողին։ Սրանք արտադրողից անմիջաբար խլում են հավելյալ արդյունքն (այսինքն ամբողջ արդյունքը, բացի սրա այն մասից, վոր անհրաժեշտ է արտադրողի գոյությունը պահպանելու համար)։

Պարզ (վոչ-կապիտալիստական) փոխանակային հարաբերությունների (ճիշտ և, համքարային ամեն տեսակի կանոններով կաշկանդված հարաբերությունների) լայնածավալ զարգացման որինակը տեսնում ենք միջնադարյան քաղաքի մեջ, համքարային արհեստի ծաղկման շրջանում։ Սակայն այստեղ քաղաքային տնտեսության բազիսը ճորտագրված ու շահագործվող գյուղի տնտեսությունն է։ Բացի սրանից, արհեստավորի արդյունքի մի մասն (անմիջաբար) ու գյուղացու արդյունքի մի մասը (ճորտատեր իշխանի միջոցով) արդեն խլում է առևտրային կապիտալը։

Յերբ փոխանակային հարաբերությունները շատ խորն են խցկվում ճորտատիրական տնտեսության մեջ, վերջինս կործանվում է, բայց այս դեռ չի նշանակում, թե շահագործումը չքանում է։ Շահագործող ճորտատիրոջը փոխարինում է շահագործող կապիտալիստը։

Խոսք կարող է լինել լոկ **պարզ փոխանակային հարաբերությունների այն տարրերի մասին, վորոնք պատահում էին ֆեոդալական տնտեսության մեջ (քաղաքը), իսկ հիմա պատահում են կապիտալիզմի ժամանակ էլ[1], այն էլ գյուղացու—տնայնագործի կամ արհեստավորի—տնտեսության կերպարանքով, վորչափով վոր սրանք վարձու աշխատանք չեն գործադրում և իրենք հանդես են գալիս շուկայում իբրև վաճառողներ։**

Այսպիսի պարզ փոխանակային հարաբերությունների որինակի վրա չե Մարքսը պարզաբանում, թե վորն է փոխանակային հարաբերությունների ու գնի էությունը։

Վորպեսզի խնդիրը պարզ պատկերացվի, իր վերլուծության սկզբում Մարքսը մի կողմ է թողնում վոչ միայն կապիտալիստական շահագործումն, այլև փողը։ Առուծախի փոխարեն նա հենց գլխից քննում է այն կացությունը, յերբ ապրանքը փոխանակվում է ապրանքի հետ։

[1] Տարբերությունն այն է միայն, վոր ֆեոդալական տնտեսության մեջ արտադրողների միջև կատարվող փոխանակությունը նոր արտադրական հարաբերությունների սաղմն եր իսկ կապիտալիզմի ժամանակ նրանք հին մնացորդներն են, վորովհետև կապիտալիզմի միջոցին իբրև գլխավոր գնորդներ ու ծախողներ հանդես են գալիս վոչ արտադրողները։

ՅԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Այս գլխի նպատակն է պարզաբանել փոխանակային հասարակության հավասարակշռության հիմնական օրենքը — աշխատանքային արժեքի օրենքը ու ընդամենը ցույց տալ նաև, վոր պարզ փոխանակային հարաբերությունների մեջ արդեն խոր հակասություններ կան:

§ 8. ԱՊՐԱՆՔ.

Հասկանալու համար, թե ինչ բան են փոխանակային հարաբերությունները, հարկավոր է իմանալ, թե ինչ է ապրանքը:

Հաճարն ապրա՞նք է, թե ապրանք չէ:

Այս կախված է նրանից, թե գյուղացին ինչի՞ համար է արտադրել հաճարը: Յեթե արտադրել է շուկայի համար, հաճարն ապրանք է: Յեթե արտադրել է իր համար, այն ապրանք չէ: Ասում են, թե գյուղացու տնտեսության ապրանքայնությունն (ТОВАРНОСТЬ) *աճում է: Այս ինչ է նշանակում: Այս նշանակում է, վոր գյուղացին իր արտադրույթի* (ПРОДУКЦИЯ) *ավելի ու ավելի շատ մասն է արտադրում շուկայի համար:*

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԲՆԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ:

Սովորաբար գյուղացին իր արտադրույթի շատ մեծ մասն է արտադրում իր սեփական սպառման համար: Իսկ յեթե վերցնենք, որինակ, արհեստավորին կամ տնայնագործին, ապա սրանք համարյա ամբողջովին շուկայի համար են աշխատում: Այն հարյուրավոր զույգ կոշիկներից, վոր կոշկակարը կարող է կարել մի տարում, նրան ու նրա ընտանիքին հարկավոր է ընդամենը միքանի զույգ: Շատ ու շատ հազարավոր պայտերից, վոր կարող է մի տարում կռել դարբինը, սրան վոչ մեկն էլ հարկավոր չէ: Նշանակում է, կոշկակարը ապրանքարտադրող է $99^{0}/_{0}$-ով, իսկ դարբինը՝ ամբողջ $100^{0}/_{0}$-ով:

Այսպես, ուրեմն, **ապրանքը շուկայի համար արտադրած արդյունքն է:**

Ապրանքարտադրողներն ինչպե՞ս են արտադրում: Հավաքաբա՞ր թե զատ-զատ:

Առաջին հայացքից այս շատ պարզ է թվում: — Իհարկե զատ-զատ: Ահ, այստեղ կոշկակարն է աշխատում: Նա աշխատում է մենակ կամ թե մի զույգ վարպետացուների ու աշկերտների հետ: Այնտեղ առանձնացած, իր բախսին, աշխատում է դերձակը: Մեկ

դերձակի աշխատանքը համաձայնեցրած չէ վոչ ուրիշ դերձակների աշխատանքի հետ ու վոչ էլ վորևէ մեկի աշխատանքի հետ:

Հիմա խնդրեցեք մի վորևէ ապրանքարտադրողից, վոր ձեզ ցույց տա մի այնպիսի ապրանք, վոր նա արտադրել է **միանգամայն անկախորեն:** *Դերձակը ձեզ ցույց կտա հենց նոր կարած ու արդուկած բաճկոնակը: Ուշադրությամբ զննեցեք, և դուք դերձակի քամակին կտեսնեք ջուլհակին, վորը բաճկոնակի համար մահուդ է պատրաստել: Ջուլհակից դենը դուք կտեսնեք մանողին, հետո յել գյուղացուն, վորը վոչխար է պահել և ինքն էլ նրա բուրդը խուզել: Հեռվում կտեսնեք դարբնին, վորը մկրատներ է կռել թե վոչխարի բուրդը խուզելու ու թե դերձակի արհեստանոցի համար, այլև, իհարկե, նաև ասեղ շինողին, վորը մեր դերձակի համար պատրաստել է նրա արտադրության ամենափոքր, բայց և ամենից անփոխարինելի գործիքը: Նրանից հետո գալիս է հանքափորը, վորը մետաղ է հանում թե մկրատների ու թե ասեղների համար և չուգունն՝ արդուկի համար. այնուհետև մեջտեղ է գալիս ածուխ պատրաստողը, վորն ածուխ է մատակարարել հանքանյութը հալելու համար, արդուկի համար և այլն:*

Հարցրեք այս գործավորներից ամեն մեկից, թե դերձակից, թե հյուսնից, թե ջուլհակից, — արդյոք սրանցից յուրաքանչյուրը բանելիս է յեղել ի՞ր համար: Արդյոք նրա աշխատանքի արդյունքը հարկավոր էր իրե՞ն: Դուք կստանաք բացասական պատասխան: Այս մարդիկ բանել են մեկը մյուսի համար: Կարող է պատահել, վոր բաճկոնակն ընկնի գյուղացու ձեռքը՝ սրա տղայի հարսանիքի որվա համար, իսկ գյուղացին, բրդից զատ, արտադրում է նաև հաց, վորը հագուստի ու գերանդիների հետ փոխանակվելով կհասնի թե դերձակին ու թե դարբնին:

Պարզ է, վոր մենք սխալվել էինք: **Ապրանքարտադրողների հասարակությունը, ինչպես յեվ, ի դեպ, մարդկանց ամեն մի ուրիշ հասարակություն, իր էությամբ աշխատանքային կոլլեկտիվ է, վորի մեջ մարդիկ աշխատում են իրար հետ ու միմյանց համար:**

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՁԵՎ Է:

Լենինն ասում է. «փոխանակությունն էլ է հանրային տնտեսության մի հատուկ ձև արտահայտում... Հետևաբար, փոխանակությունը վոչ միայն բաժանում է, այլև միացնում է մարդկանց՝ սրանց հարկադրելով, վոր շուկայի միջոցով հարաբերության մեջ մտնեն իրար հետ:

Իսկ ըստ ձեվի՝ փոխանակային հասարակությունը գերազանցորեն ինդիվիդուալիստական է: *Յուրաքանչյուրն աշխատում է իր հասկացածի համաձայն ու իր բախտին: Իր աշխատանքի ժամանակ ամեն մեկը հաշվի չի առնում իր անհատական շահերը միայն:*

ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ:

Ահա թե վարտեղ է փոխանակային հասարակության հիմնական հակասությունը. կոլեկտիվիստական բովանդակություն՝ կապված ինդիվիդուալիստական ձեվի ժամանակ: Հանորեն արտագրած արդյունքի ինդիվիդուալիստական յուրացումն:

Այս հակասությունը յուրաքանչյուր արտադրողի վրա իր կնիքն է դնում: Արտադրողն, այսպես ասած, դառնում է մապնիա, վոր յերկու բևեռ ունի—կոլլեկտիվիզմի բևեռ ու ինդիվիդուալիզմի բևեռ: Մի կողմից՝ արտադրողն արտադրական կոլլեկտիվի մի մասնիկն է: Կոլլեկտիվից կտրվելը նրա համար միևնույն է թե մահ է: Մյուս կողմից՝ նա անհնազանդ մասի նման, վորը չի կարողանում կպչել մյուս մասերին ու մի բռունցք կազմել, շարունակ ձգտում է առանձնանալ, իրեն հակադրել հասարակությանը:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԴՐՈՒՄՆ ՍՊԱՌՈՒՄԸՆ:

Հասարակությունն արտադրում է, վոր սպառե և սպառում է, վոր արտադրե: Արտադրությունն ու սպառումը վերարտադրության միասնական շրջագիծ են մի տեսակ: Շահագործման հարաբերություններն ընդհանրապես ու կապիտալիստական հարաբերությունները մասնավորապես՝ խախտում են այս շրջագծի միասնականությունը: Դասակարգային հասարակության մեջ նրանք, ովքեր ամեն ինչ են արտադրում, քիչ բան են սպառում, իսկ նրանք, ովքեր շատ են սպառում, վոչինչ չեն արտադրում: Սակայն փոխանակային հարաբերությունները, թեև ինքնըստինքյան առած՝ շահագործման հարաբերություններ չեն, այնուամենայնիվ արդեն ճեղքում են վերարտադրության միասնական պրոցեսը, տնտեսական զարգացման արդեն այդ շրջանում արտադրությունը հակադրելով սպառմանը: Արտադրողը զառվում, անջատվում է սպառողից և փոխանակության պրոցեսում դառնում է նրա անտագոնիստը (հակառակորդը):

Ապրանքարտադրողների հասարակության հակասությունից բղխում է ապրանքի հակասությունը:

Արդյունքը կարող է բավարարել այս կամ այն պահանջը: Հացը կշտացնում է, կիսաքուրքը պաշտպանում է ցրտից: Բայց հենց վոր հացը կամ կիսաքուրքը դառնում են ապրանք, սրանք ձեռք են բերում նոր ունակություն—ուրիշ ապրանքների հետ փոխանակվելու ունակություն: Կիսաքուրքը կամ հացը փոխանակելով՝ կարելի չի թե հաց ստանալ, թե գրքեր ու թե շատ ուրիշ բաներ:

Ապրանքի սպառողական արժեք (այս կամ այն պահանջը բավարարելու ունակություն) ու փոխանակային արժեք (ուրիշ ապրանքների հետ փոխանակվելու ունակություն):

ԱՊՐԱՆՔԻ ՅԵՐԿՈՒ ԿՈՂՄԸ. ԱՊՐԱՆՔԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Ապրանքն սպառողական արժեքի ու փոխանակային արժեքի միասնականությունն է, բայց այս միասնականությունը հակասական է: *Ում համար ապրանքն սպառողական արժեք ունի, նրա համար փոխանակային արժեք չունի, և ընդհակառակը. ում համար ապրանքը փոխանակային արժեք ունի, նրա համար սպառողական արժեք չունի:*

Փոխանակային արժեքի համար և միայն, վոր կոշիկարը կոշիկները տանում և շուկա: Սպառողական արժեքի համար և միայն, վոր գյուղացին կոշիկները շուկայից առնում և տանում: Ապրանքն իր տերոջ համար միայն փոխանակային արժեք ունի, իսկ սպառողի համար միայն սպառողական արժեք ունի:

§ 9. ԱՐԺԵՔ.

Փոխանակային արժեքը վիրտեղ է յերևան գալիս: Փոխանակության մեջ: Միայն յերևան է գալիս, թե հենց այտեղ էլ ծագումն է առնում: Արդյոք ապրանքները փոխանակային արժեք ձեռք են բերում շուկայում, թե այդ արժեքն իրենց հետ են շուկա բերում:

Ահա բանջարանոցի տերը մի հարյուրյակ վարունգ փոխանակեց 10 ֆունտ հացի հետ: Մի հարյուրյակ վարունգի փոխանակային արժեքն իր արտահայտությունը 10 ֆունտ հացի մեջ գտավ: Հարց է առաջ գալիս, թե 10 ֆունտ հացը վարունգների արժեքի միակ արտահայտությունն է իրոք: Ամենևին: Վարունգների փոխանակային արժեքը կարող եր արտահայտվել թե գրպանի հայելիով ու թե որացույցով: Վարունգները մենակ 10 ֆունտ հացի չհանդիպեցին: Հացթուխը շատ հաց ուներ: Սակայն միայն

10 ֆունտ հարկավոր չեղավ՝ մի հարյուրյակ վարունգների փոխանակային արժեքն արտահայտելու համար։

ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՉԻ ՍՏԵՂԾՎՈՒՄ։

Նշանակում է, բանն այն չի մենակ, վոր ապրանքներն իրար հանդիպեցին։ Հանդիպումից ու փոխանակությունից չէր, վոր նրանք փոխանակային արժեք ստացան։ Պարզ է, վոր **ապրանքի փոխանակային արժեքի մեջ կա մի բան, վոր ապրանքն իր հետ շուկա չի բերում դրսից։** Փոխանակային արժեքի այս **բովանդակությունը**, դյուրըմբռնելի լինելու համար, կանվանենք պարզապես **արժեք**։

Հապա վո՞րտեղից է առաջանում ապրանքի արժեքը, և ինչո՞վ է վորոշվում յուրաքանչյուր ապրանքի արժեքի մեծությունը։

Վորպեսզի քիչ պատրաստված ընթերցողին պարզ լինի, թե հետագայում խոսքն ինչին է վերաբերում, վորակի ու քանակի վերաբերյալ յերկու որինակ բերենք։ Ասենք թե Իվանովն ու Սիդորովը սպառողական խանութում յուղ են գնել՝ Իվանովը՝ 100 գրամ, իսկ Սիդորովը մի ամբողջ կիլո։ Արդյոք այս յերկու գնումների միջև քանակային հավասարություն կա՞։

Վոչ, վորովհետև Սիդորովն այնքան յուղ չի գնել, վորքան Իվանովն, այլ 10 անգամ ավելի։

Արդյոք այս յերկու գնումների միջև վորակային հավասարություն կա՞։

Այո, վորովհետև թե՛ Իվանովն ու թե Սիդորովը գնել են միևնույն բանը—յուղ։ Այստեղ մի որինակի հետ գործ ունենք, յերբ քանակային տարբերություն կա վորակային նմանության հետ միասին։

Վորպեսզի մենք կարողանանք յերկու մեծություններ համեմատել քանակապես, նրանք անպայման պետք է վորակային նմանություն ունենան։ Մենք կարող ենք հարց տալ, թե Աբովյան փողոցը լուցկուց քանի անգամ է յերկար։ Ինչո՞ւ կարող ենք։ Դե՛, այն պատճառով, վոր խոսքը վերաբերում է միատեսակ վորակի, վոր ունեն թե փողոցն ու թե լուցկին, այն է՝ յերկարությանը։ Բայց մենք չենք կարող հարցնել, թե Աբովյան փողոցը մի լիտր կաթից քանի անգամ է մեծ, վորովհետև փողոցի ու կաթի մեջ դժվար է գտնել միանման մի վորակ, վոր կարելի լինի քանակապես համեմատել։ Բանի վոր այս իրողությունն է, ուստի և փողոցն ու կաթն անհամաչափելի յեն։

Հիմա վերադառնանք մեր այն հարցին, թե վորտեղից է, վոր

ապրանքների մեջ արժեք կա։ **Արժեքը քանակապես համեմատելի, համաչափելի յե դարձնում ապրանքները։** Վորքան էլ ուզում է տարբեր լինեն յերկու ապրանքներ, մենք միշտ կարող ենք հարցնել, թե մի ապրանքի արժեքը քանի անգամ ավելի կամ պակաս է մյուսի արժեքից։ Սրանից հետևում է, վոր արժեքի էությունը պետք է կազմի մի այնպիսի բան, վորը վորակապես նման է բոլոր ապրանքների մեջ էլ։

Հապա ի՞նչը կարող է լինել այս։

ԻՆՉՈ՞Ւ ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ՉԻ ԿԱՐԵԼԻ ԲՂԽԵՑՆԵԼ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՐԺԵՔԻՑ։

Վորպեսզի ապրանքը շուկա ընկնի, այն պետք է սպառողական արժեք ունենա, այն պետք է մի վորևէ պահանջի բավարարե՝ կարծեցյալ թե իրական պահանջի։ Յեթե այս պայմանը չլինի, վոչվոք աչք չի տնկի ապրանքին, վոչվոք մի բան չի տալ նրա փոխարեն[1]։

Արդյոք սպառողական արժեքը չէ՞ արժեքի հիմքը։ Արդյոք ապրանքի արժեքը կախված չէ՞ ապրանքի ոգտակարությունից։

Վոչ։ Արժեքը համաչափելի յե դարձնում ապրանքներն, այնինչ **տարբեր ապրանքների ոգտակարությունն անհամաչափելի յե։** Կարելի յե յերկու տոպրակ կարտոֆիլը փոխանակել գարմոշկայի հետ կամ թե հորթը փոխանակել մի փութ մեխի հետ, բայց չի կարելի հարց տալ, թե հորթը քանի անգամ ավելի ոգտակար է մի փութ մեխից և կամ թե կարտոֆիլի պատճառած կշտությունը համեմատել գարմոշկայի պատճառած ուրախության հետ։ Նշանակում է՝ **արժեքի հիմքն սպառողական արժեքը չէ։** Յեվ իրոք, կան իրեր, առանց վորոնց մարդն ամենևին ապրել չի կարող, բայց վորոնք վոչ մի արժեք չունեն (որինակ՝ ոդը), և իրեր էլ կան, վորոնց սպառողական արժեքը շատ փոքր է, իսկ արժեքը շատ մեծ է (ադամանդները, մարգարիտը)։ **Վորպեսզի տվյալ ապրանքը փոխանակության առարկա դառնա, ապա սրա համար անհրաժեշտ է սպառողական արժեք։ Բայց այն հարաբերությունը, վորով ապրանքները փոխանակվում են, ամենևին չի վորոշվում նրանց ոգտակարության աստիճանով։**

---

[1] Վորքան ավելի յեն զարգանում արտադրողական ուժերն, այնքան ավելի ու ավելի յեն քչանում այն առարկաները, վորոնք սպառողական արժեք բոլորովին չունեն։ Արտադրության թափթփուկները ծառայում են իբրև հումք, վառելիք, պարարտանյութ, շինանյութ և այլն։ Նույնը կարելի յե ասել նաև սպառման թափթփուկների—փալասի, վոսկրների մասին և այլն։

ԱՐԺԵՔԻ ԱՂԲՅՈՒՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ Է:

Եթե ապրանքների սպառողական արժեքը դեն գցենք, ապա նրանց մեջ կմնա նրանց բոլորի համար ընդհանուր մեկ հատկություն, այն, որ նրանք հանրային աշխատանքի արդյունքներ են: *Թե գարմանի ու կարտոֆիլի մեջ, թե հորթի ու մեխերի մեջ կուտակված է մի շարք արտադրողների աշխատանքը: Չի կարելի հարցնել, թե գարմանը քանի անգամ ավելի օգտակար է մի փութ մեխից. կամ թե ընդհակառակը: Սրա փոխարեն միանգամայն հնարավոր է հարց տալ, թե գարմանն արտադրելու վրա քանի անգամ ավելի աշխատանք է հարկավոր գործադրել, քան մի փութ մեխ արտադրելու վրա:* **Աշխատանքն է, որ համաչափելի չէ դարձնում** *թե մեխերը, թե գարմանն ու թե մյուս* **բոլոր ապրանքները:**

Մեր սկզբնական ենթադրությունը ճշտվեց. ապրանքի արժեքի էությունը կազմում է այն հանրային աշխատանքը, որ կուտակված է նրա մեջ:

Բայց այս չի նշանակում, թե բոլոր ժամանակներում էլ աշխատանքն արժեք է ստեղծել և ստեղծելու է: Վերցնենք, որինակ, վաղեմի հովվական նահապետի ինքնամփոփ տնտեսությունը, վորտեղ այն ամենն, ինչ որ արտադրվում է, հենց այնտեղ էլ սպառվում է՝ փոխանակության առարկա չդառնալով: Արդյոք այնտեղ աշխատանք գործադրվում է արդյունքներ արտադրելու վրա: Անպայման այո: Յեվ շատ ավելի աշխատանք է գործադըրվում, քան արդի պայմաններում: Նահապետի տնտեսության մեջ ամեն մի գավաթ կաթի վրա շատ ավելի աշխատանք էր գնում, քան արդի կաթնատնտեսական ֆերմայում, որը սարքավորված է տեխնիկայի վերջին խոսքի համաձայն: Արդյոք ինքնամփոփ տնտեսության մեջ էլ է աշխատանքն արժեք ստեղծում: Ամենևին: Ինքնամփոփ տնտեսության մեջ ինչպես արտադրությունն, այնպես և սպառումը կարգավորվում են գիտակցաբար: Փոխանակության տարրերն անհայտ է այնտեղ, հետևաբար այն միջավայրում տեղ չկա աշխատանքային արժեքի՝ տարերայնորեն ներգործող օրենքի համար էլ:

ԱՐԺԵՔՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ Է:

Արժեքը վոչ թե արդյունքի հատկությունն է, այլ ապրանքի: *Յերբ է արդյունքն ապրանք դառնում: Արդյունքն ապրանք է դառնում վորոշ արտադրական հարաբերությունների պայմաններում միայն, այն է՝ փոխանակային հասարակության մեջ, վորտեղ շուկայի տարերքը կարգավորում է թե արտադրությունն ու թե սպառումը: Հետևաբար,* **այն իրողությունը, որ աշխատանքն է արժեք ստեղծում, փոխանակային հասարակության արտադրական հարաբերությունների արտացոլումն է միայն:**

Վերջին հաշվով՝ արժեքն արտադրական հարաբերություն է: Արժեքը մեկ իրի ու մյուս իրի հարաբերություն չէ: Արժեքը մինչև անգամ մարդի ու իրի հարաբերություն էլ չէ: Արժեքը մի մարդի ու մյուս մարդի միջև ծագող՝ առարկայացած հարաբերություն է (овеществленное отношение :

§ 10. ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆԸ.

Ապրանքային հասարակությունն, ապրանքարտադրողների հասարակությունն, արտադրական գիտակցական կազմակերպություն չունի: Ամեն մեկն արտադրում է այն բանն ու այնքան, վորքան հարմար է տեսնում՝ գիտակցաբար հաշվի չառնելով հասարակության պահանջները: Հապա ինչն է պատճառը, որ փոխանակային հասարակության կույրորեն շարժվող վիթխարի մեքենան անդունդ չի գլորվում: Հապա ինչու ապրանքային անարխիկ հասարակությունը վոչ միայն չի կործանվում հենց առաջին քայլերի միջոցին, այլ յերևան է բերում զարգանալու ունակություն: Փոխանակային հասարակության կոպիտ, սակավակայուն հավասարակշռությունը, որ, այնուամենայնիվ, հավասարակշռություն է, ինչի՞ վրա է հաստատված:

Սրա պատասխանը մեզ տալիս է աշխատանքային արժեքի օրենքը:

Յենթադրենք, թե արտադրության անարխիայի շնորհիվ հասարակությունը վատ է բաշխում իր ուժերը, և ասենք թե ավելի զոռ է տալիս բրուտների ու տակառագործների արտադրությանը: Փոխանակային հասարակությունը ժողտնխորհ չունի, վորն վերևից արտադրությունը կարգավորելով: Կարող է պատահել, վոր շուկայում այնքան շատ կճուճներ ու տակառներ լինեն, վոր նրանց փոխանակությունն ավելի ու ավելի դժվարանա և անշահավետ դառնա: Այսպիսի անհաճո յերևույթից զգուշացած արտադրողները վաղ կամ ուշ կանցնեն արտադրության ուրիշ ճյուղերի, կսկսեն այնպիսի արդյունք պատրաստել, վորն ավելի շատ աշխատանք չի կլանել, քան, օրինակ, տակառը, բայց կարող է ավելի ձեռնտու պայմանով փոխանակվել: Ասենք թե բրուտներն

ու տակառագործները չկարողացան ուրիշ արհեստ բանեցնել և սովամահ լեղան։ Աշխատանքային արժեքի օրենքն, ինչպես և ամեն մի տարերային օրենք, խնայել չգիտե։ Տվյալ դեպքում էլ այս օրենքն իր արածն արեց։

Բրուտներն ու տակառագործները քչացան, և այսուհետև շուկայում կճուճներ ու տակառներ ավելի քիչ կլինեն։ Սրանց գնահատությունը կսկսի բարձրանալ և նորից կմոտենա սրանց աշխատանքային արժեքին։

Կամ լենթադրենք, թե հասարակությունը շնորհիվ այն հանգամանքի, որ գործում է կուրորեն, չափազանց քիչ դարբիններ է մեջտեղ բերում։ Դանակներ ու պայտեր այնքան չնչին քանակությամբ շուկա կհանվեն, որ սրանք կսկսեն իրենց աշխատանքային արժեքից բարձր գներով փոխանակվել։ Հասկանալի չի՝ այս ձեռնտու չե դարբիններին, բայց չէ՞ որ լերբ մի ապրանք փոխանակվում է իր արժեքից բարձր գնով, այս միայն այն է նշանակում, որ մի ուրիշ ապրանք փոխանակվում է իր արժեքից ցածր գնով։ Աշխատանքային ուժերն արտադրության ավելի քիչ նպաստավոր ճյուղերից կսուժում են ավելի նպաստավոր ճյուղի մեջ։ Աշխատանքային արժեքի օրենքը շուտով վերջ կտա դարբինների բացառիկ բարորության։ Դարբինների թիվն այնքան կավելանա, որ սրանց պայտերի ու դանակների գնահատությունը նորից կսկսի դեպի սրանց աշխատանքային արժեքը։

Այսպիսով, ուրեմն, աշխատանքային արժեքի օրենքն է, որ փոխանակային հասարակության մեջ տարեւոյնուրեն կարգավորում է արտադրողների բաշխումն ըստ արտադրության տարբեր ճյուղերի։

Ահա թե ինչ է նշանակում արդյունքի ապրանքային ձևը։ Քանի դեռ արդյունքն ապրանքային ձև չուներ, այն լոկ համեստորեն, իր ուժերի չափով էր բավարարում հասարակության պահանջները։ Բայց հենց որ փոխանակային հասարակության ծագումն առնելու հետ արդյունքն ապրանքի ձև է ընդունում, արդյունքը դադարում է հասարակության ծառան լինելուց և դառնում է նրա տերը։ Ապրանքային հարաբերություններից առաջ էլ արդյունքի արտադրության վրա աշխատանք էր գործադրվում։ Բայց քանի դեռ արդյունքը միայն արդյունք էր ճնում, նրա վրա ծախսված աշխատանքն անհետ լուծվում էր հենց իր—արդյունքի մեջ։ Բայց հենց որ արտադրողների միջեվ լեղած հարաբերությունները փոխանակության բնույթ են ստանում, հենց որ արդյունքը ապրանքի ձեվ է ընդունում, այս արդյունքի մեջ կուտակված հանրային աշխատանքը գառնում է արտադրության կարգավորիչը (регулятор), մի խոսքով՝ ընդունում է արժեքի ձեվ։ Իրենց աշխատանքային համեմատականության շնորհիվ ապրանքները հեշտությամբ ընդհանուր լեզու չեն գտնում։ Նրանք սկսում են իշխել մարդկանց աշխարհի վրա։

§ 11. ԱՐԺԵՔ ՍՏԵՂԾՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԸ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՐԿՈՒ ԿՈՂՄԸ։

Փոխանակային հասարակության մեջ ամեն մի աշխատանք կարելի չե քննել լերկու կողմից։ Փողոցի լուսավորությունը սարքող ելեկտրոմոնտյորի կամ թե աղյուսի պատ շարող վարպետի կամ թե ֆրենչ կարող դերձակի աշխատանքը կարելի չե քննել նախ այն տեխնիկական մասնագիտական հնարների տեսակետից, որոնք այս արտադրողներից յուրաքանչյուրին հարկավոր են գալիս աշխատելու ժամանակ։ Յերբ մենք այս տեսակետից ենք նայում, աշխատանքի հիշյալ տեսակների մեջն խոր տարբերություններ ենք տեսնում։ Դերձակն, որինակ, բանում է ասեղով, մկրատով։ Վարպետը՝ բահով։ Ելեկտրոմոնտյորը՝ փոքրիկ մուրճով, ունելիքով, և այլն։ Առաջնի նյութեղենը գործվածքն է, յերկրորդինը՝ աղյուսն ու կիրը, յերրորդինը՝ ելեկտրոլարը, կնոպկաները, պատրոնները և այլն։ Առաջնի աշխատանքի հետևանքը լինում է հագուստ, յերկրորդինը՝ տուն, յերրորդինը՝ լուսավորություն։

Սակայն կարելի չե թե ելեկտրոմոնտյորին, թե վարպետին ու թե դերձակին համարել վոչ թե այդպիսիք, այլ փոխանակային հասարակության արտադրական կոլլեկտիվի անդամներ, որոնց միջև լեղած կապը շուկայում արտահայտվում է նրանով, որ սրանք փոխանակում են իրենց աշխատանքի արդյունքները։ Այն ժամանակ սրանց աշխատանքն էլ մեր առաջ լելնում է իր ընդհանրական հանրային ձևով։ Այս դեպքում շուկայի օրենքները բոլորովին անտես են առնում և նրանց համար ամենևին նշանակություն չունեն յուրաքանչյուր առանձին արհեստի համար բնորոշ առանձնահատկությունները։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿՈՆԿՐԵՏ ԿՈՂՄԸ. ՎԵՐԱՑԱԿԱՆ (абстракт) ԱՇԽԱՏԱՆՔԸ։

Առաջին դեպքում մեր աչքի առջև է աշխատանքի կոնկրետ, այսինքն՝ գգայական, նյութական կողմը։ Յերկրորդ դեպքում՝ վերացական կողմը։ Առաջին դեպքում աշխատանքը մեր հանդեպ է լելնում իր կոնկրետ բաղմազանության։ Յերկրորդ դեպքում՝ իր վերացական միակերպության։

Այսպես, ուրեմն, աշխատանքն ունի յերկու կողմ. կոնկրետ ու վերացական:

ՀԱՆՐՈՐԵՆ-ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՇԽԱՏԱՆՔ.

*Դժվար չե գլխի ընկնել, թե աշխատանքի վոր կողմն է արժեք ստեղծում: Աշխատանքի կոնկրետ կողմն անհատներեն բազմապան է: Աշխատանքի յուրաքանչյուր տեսակն ունի իր առանձին հնարները, պահանջում է արտադրության առանձին միջոցներ ու բանելու հատուկ ընտելություններ: Այդպիսի աշխատանքի բազմապան կոնկրետ կողմը կարող է ստեղծել արժեք, վորը բոլոր ապրանքների մեջ էլ վորակապես միևնույնն է: Պարզ է, վոր վոչ: **Աշխատանքի բազմազան կոնկրետ կողմն ստեղծում է ապառողական արժեքներ՝ ուրեք ամբողջ բազմազանությամբ: Իսկ աշխատանքի միակերպ ու միատեսակ վերացական կողմն է, վոր ստեղծում է միատեսակ ու միակերպ արժեք:*

*Կողք-կողքի դրված են յերկու զույգ կոշիկներ: Մեկ զույգը կարված է կոշկեգենի որինակելի արհեստանոցում: Մյուս զույգը յերկար ու բարակ սարքոտել է մենակ բանող կոշկակարը: Կամ թե ամեն իրար մոտ դրված յերկու փոքրիկ տուփ՝ կոշկի մեխերով լի: Մեկի մեջի մեխերը սաշոված են ձեռքի դանակով: Այս մի տաղտուկ ու մանրակրկիտ աշխատանք է: Մյուս տուփի մեխերը թեև հենց նույն վորակն ունեն, բայց շինված են մեքենայով: Այս արագ ու շուտ արվող աշխատանք է: Յեթե ապրանքի յուրաքանչյուր միավորի արժեքը վորոշվեր հենց այս միավորի վրա դրծադրած աշխատանքով, ապա յերկրորդ զույգ կոշկի արժեքը բարձր կլիներ առաջին զույգի արժեքից, իսկ ձեռքով շինած մեխերն էլ թանդ կլինեին մեքենայով պատրաստածից: Իրականում այս այսպես չե: Ապրանքների աշխարհը կարծես սրոհվում է զորամասերի: Ամեն մի տեսակը մի առանձին զորամաս է: Կոշիկների ավյալ տեսակի ամբողջ զորամասը ավյալ պայմաններում պետք է կլանի հանրային աշխատանքի այս չափ ու այս չափ քանակությունն: Մի կողմում՝ ավյալ տեսակի բոլոր կոշիկներն են, մյուս կողմում՝ իրրև կոշիկների արժեքի ապրյուր գոնվում է այն ամբողջ հանրային աշխատանքը, վոր անհրաժեշտ է ավյալ պայմաններում այսքան կոշիկ արտադրելու համար: Յեթե կոշկակարը կոշիկների վրա անճարակությամբ կորցնում է մի ավելորդ որ, նա սրանով չի բարձրացնում իր արդյունքի արժեքը: Ճիշտ է, նրա պատրաստած կոշիկները շատ աշխատանք կլանեցին, բայց այս նրանց անհատական առանձնահատկությունն է լոկ: **Վոչ թե**

ցուցց կլանած ամբողջ աշխատանքն, այլ սրա մի մասն է միայն հանրորեն անհրաժեշտ աշխատանք: *Այնպես էլ է լինում, վոր աշխատանքի այն քանակը, վորն այսոր կարող է հանրորեն անհրաժեշտ համարվել, վաղը կարող է այսպիսին լինելուց դադարել: Արտադրության յեղանակների ամեն մի իսկական կատարելագործում, վորի հետեվանքը լինում է աշխատանքի արտադրողականության բարձրացումը, ցվազեցնում է աշխատանքի այն քանակը, վոր հանրորեն-անհրաժեշտ է տվյալ ապրանքի մեկ միավոր արտադրելու համար: Այսեղից էլ տվյալ ապրանքի միավորի արժեքը փոխանցում է այն չափով, վորչափով մեծացել է աշխատանքի արտադրողականությունը: Ընդամին ընկնում է վոչ միայն նոր արտադրված ապրանքի, այլ յեվ առաջ արտադրված ապրանքի արժեքն էլ*[1]:

Մարքսը գրում է. «կարող է այնպես թվալ, վոր յեթե ապրանքի արժեքը վորոշվում է աշխատանքի այն քանակով, վոր գործադրված է յեղել այդ ապրանքի արտադրության վրա, ապա վորքան ավելի ծույլ ու անհմուտ է մարդ, այնքան ավելի մեծ արժեք ունի նրա ապրանքը, վորովհետև այնքան ավելի շատ ժամանակ է պահանջվում այդ պատրաստելու համար: Սակայն արժեքի եյությունը կազմող աշխատանքը մարդկային միանման աշխատանքն է, մարդկային միանման բանվորական ուժի ծախսումը: Հասարակության հավաքական բանվորական ուժը, վոր արտահայտվում է ապրանքային արժեքների մեջ, այստեղ նկատի չե առնվում իրրև միևնույն բանվորական ուժ, թեև այս հավաքական բանվորական ուժը կազմված է անհատական բանվորական ուժերի անթիվ բազմությունից: Այս անհատական բանվորական ուժերից յուրաքանչյուրը նույնպիսի մարդկային ուժ է, ինչպես և մնացած բոլորը, վորչափով վոր մի՛ջին հանրային բանվորական ուժի բնույթ ունի և գործում է իրրև այսպիսին, այսինքն վորևե ապրանք արտադրելու համար միջին անհրաժեշտ

[1] *Յեթե մի վորևե նոր գյուտ կամ հայտնագործություն դեռ տարածում չե գտել փաստորեն, այն, ինարկե, դեռ չի կարող փոփոխել ապրանքների արժեքը: Այնպես էլ է պատահում, վոր արտադրության կատարելագործված յեղանակը տարածվում է, սակայն ապրանքի շատ մեծ քանակությունն դեռ նին յեղանակով է արտադրվում: Պարզ է, վոր տվյալ ապարիզում հանրորեն անհրաժեշտ աշխատանքը կլինի մի աշխատանք, վոր մոտավորապես միջին տեղն է բռնում արտադրության հին յեղանակի համար պահանջվող անհրաժեշտ աշխատանքի ու արտադրության նոր յեղանակի համար պահանջվող անհրաժեշտ աշխատանքի միջև:*

կամ հանրօրեն-անհրաժեշտ բանվորական ժամանակ և գործադրում։ Իսկ հանրօրեն-անհրաժեշտ բանվորական ժամանակ է այն բանվորական ժամանակը, որն այս կամ այն ապրանքը իրը պատրաստելու համար անհրաժեշտ է ավյալ հասարակության մեջ գոյություն ունեցող նորմալ արտադրական պայմաններում և հրմտության ու աշխատանքի լարվածության միջին աստիճանի ժամանակ։ Որինակ, Անգլիայում, մանածագործական առաջին դազդահի մուծումից հետո, մանվածքի մի վորոշ քանակություն գործվածք դարձնելու համար բավական եր առաջվա աշխատանքի թիերկա կեսը միայն։ Ձեռքով բանող անգլիացի ջուլհակը փաստորեն դեռ հիմա յել մանվածքը գործվածք դարձնելու համար նույնքան բանվորական ժամանակ է գործադրում, վորքան և առաջ, բայց նրա անհատական բանվորական ժամի արդյունքը հիմա հավասար է հանրային բանվորական ժամի կեսին միայն, ուստի և նրա արժեքն առաջվա համեմատությամբ կիսով չափ ընկել է։

Ահա ինչու վորեվե ոգտակար իրի արժեքի մեծությունը վորոշվում է բանվորական ժամանակի այն քանակով միայն, վոր հանրօրեն-անհրաժեշտ է այն իրն արտադրելու համար։ Յուրաքանչյուր առանձին ապրանք այստեղ ընդհանրապես նկատի չի առնվում իրրև ապրանքի տվյալ տեսակի միջին նմուշահատ (экземпляр)։ Այս պատճառով այն ապրանքները, վորոնց մեջ աշխատանքի հավասար քանակություններ կան, կամ վորոնք կարող են արտադրվել բանվորական ժամանակի հավասար միջոցներում, հավասար արժեք ունեն։ Մեկ ապրանքի արժեքը հարաբերում է մի ուրիշ ապրանքի արժեքին այնպես, ինչպես մեկի արտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակը հարաբերում է մյուսի արտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակին։

«Իրրև արժեքներ, բոլոր ապրանքները կարծրացած բանվորական ժամանակի վորոշ քանակներ են միայն։

«Այս պատճառով վորևե ապրանքի արժեքի մեծությունը նույնը կմնար, յեթե նրա արտադրության համար անհրաժեշտ բանվորական ժամանակն էլ անփոփոխ մնար։ Սակայն բանվորական ժամանակը փոփոխվում է աշխատանքի արտադրողական ուժի յուրաքանչյուր փոփոխության հետ միասին։ Աշխատանքի արտադրողական ուժը կախված է բազմազան պայմաններից, ի միջի այլոց՝ բանվորների միջին հմտությունից, գիտության զարգացման ու սրա տեխնիկական կիրառման աստիճանից, արտադրության պրոցեսի հանրային պայմաններից, արտադրության միջոցների չափերից ու ներից և վերջապես զուտ բնական պայմաններից։ Աշխատանքի միևնույն քանակը բարերը տարում արտահայտվում է ութ բուշել ցորենի մեջ և անբերրի տարում՝ չորս բուշելի մեջ. աշխատանքի միևնույն քանակը հարուստ հանքարաններում ավելի շատ քանակությամբ մետաղներ է հանում, քան աղքատ հանքարաններում և այլն։ Ադամանդները հազվադեպ են գտնվում յերկրիս կեղևում, այս պատճառով էլ ադամանդներ գտնելը շատ աշխատանք է խլում, շատ աշխատանք արժե։

«Հետևաբար նրանց փոքր ծավալը շատ աշխատանք է կլանում։ Յեթե հանքարաններն ավելի հարուստ լինելին, աշխատանքի միևնույն քանակը կպարունակվեր ավելի շատ ադամանդների մեջ, և սրանց արժեքը կընկներ։ Յեթե հաջողվեր ածուխն ադամանդ դարձնել փոքր աշխատանք գործադրելով, ապա ադամանդների արժեքը կարող եր աղյուսների արժեքից էլ ցած իջնել։ Ընդհանրապես, վորքան մեծ է ապրանքի արտադրողական ուժն, այնքան ավելի փոքր է վրևե առարկայի արտադրության համար հարկավոր բանվորական ժամանակը. վորքան ավելի քիչ է այն առարկայի մեջ բյուրեղացած աշխատանքի քանակն, այնքան ավելի փոքր է նրա արժեքը։ Ընդհակառակը, վորքան քիչ է աշխատանքի արտադրողական ուժն, այնքան ավելի շատ է վրևե առարկայի արտադրության համար հարկավոր բանվորական ժամանակն, այնքան ավելի մեծ է նրա արժեքը։ Ուրեմն **վորևե ապրանքի արժեքի մեծության փոխհարաբերակցությունը ուղղակի հարաբերական է նույն ապրանքի մեջ մարմնացող աշխատանքի քանակին և հակադարձ հարաբերական է նույն աշխատանքի արտադրողական ուժին։**

ՄԻՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ։

Աշխատանքը չափվում է ժամանակով։ Յեթե վերցնենք յերկու առանձին բանվորների, թեկուզ և այնպիսիների, վորոնք աշխատում են բոլորովին միանման գործիքներով ու բոլորովին միանման նյութեղենով, այնուամենայնիվ կարող է պատահել, վոր նրանցից մեկը ժամանակի մի վորոշ միավորի միջոցին, ասենք, որինակ, մի ժամում, մյուսից ավելի յե արտադրել. սրա պատճառը կամ այն է, վոր նա ավելի թափով, լարված է աշխատում, և կամ թե այն է, վոր նա ավելի հմուտ է։ Բայց աշխատանքի այն ամբողջ քանակի մեջ, վոր հասարակությունը գործադրում է վորևե ապրիզում, առանձին արտադրողների այս բոլոր անհատական

հատկությունները փոխադարձաբար հավասարակշռում, ջնջում են իրար:

ԱՐԺԵՔ ՍՏԵՂԾՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԻՇՏ ՖՈՐՄՈՒԼԱՆ:

Այսպիսով, ուրեմն, աշխատանքի հիմքը կապում է միջից լարվածություն ունեցող ու միջին հմտությամբ կատարվող աշխատանքը: Ապրանքի արժեքը վորոշվում է նրա մեջ մարմնացած հասորեն-անհրաժեշտ վերացական միջին աշխատանքի քանակով:

Յեթե յերկու ապրանք, ասենք, մի զույգ կոշիկ ու մի տոպրակ ալյուր, փոխանակվում են իրար հետ ըստ արժեքի, ապա այս նշանակում է, վոր մի զույգ կոշկի մեջ հանրորեն-անհրաժեշտ վերացական միջին բանվորական ժամանակի նույնքան ժամեր կան, վորքան մի տոպրակ ալյուրի մեջ:

ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇՂՈՒՄՆ ԱՐԺԵՔԻՑ:

Տվյալ ապրանքը պահանջի պակասության հետևանքով կարող է փոխանակվել իր արժեքից ցած գնով: Ընդհակառակը, առաջարկի հանմասությամբ պահանջի անչափ շատ լինելու հետևանքով ապրանքը կարող է փոխանակվել իր արժեքից բարձր գնով: Սակայն արժեքի նկատմամբ կատարվող այս շեղումներն են միայն, վոր արժեքի օրենքին հնարավորություն են տալիս յերևան գալու, ճիշտ այնպես, ինչպես ճոճանակի ուղղաձիգ դրությունից հանելով՝ մենք հնարավորություն ենք տալիս, վոր ծանրության օրենքը յերևան գա: Հավասարակշռության դիրքից հանված ճոճանակը ձգտում է նորից դեպի հավասարակշռության կիթը վերադառնալու, անցնում է սրանից, կրկին վերադառնում է դեպի այս կիթը և այլն: Նույնն է կատարվում նաև այն դեպքում, յերբ ապրանքի փոխանակությունը դուրս է հանվում արժեքային հավասարակշռությունից: Աշխատանքային ջանքերի ներխուժումը տարերայնորեն պակասում է այն ճյուղերում, վորոնց արդյունքները փոխանակվում են իրենց արժեքից ցած գներով, և շատանում է այն ճյուղերում, վորոնց արդյունքները փոխանակվում են արժեքից բարձր գներով: Պահանջի ու առաջարկի խանգարված հավասարակշռությունը աստիճանաբար վերականգնվում է թե այս ու թե այն ճյուղերում, փոխանակության պայմանները մոտենում են ըստ արժեքների կատարվող փոխանակությանը, վորպեսզի նորից շեղվեն սրանից ու նորից մոտենան սրան և այսպես շարունակ ու անվերջ: Աշխատանքային արժեքն այն գիծն է, վորի շուրջը տատանվում են ապրանքների փոխանակության պայմանները: Աշխատանքային արժեքի որենքն այն տարերային որենքն է, վորը կարգավորում է այս պայմանները:

«ՀԱՆՐՈՐԵՆ-ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ» ԸՄԲԸՌՄԱՆ ՅԵՐԿՈՒՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ (версия):

«Հանրորեն-անհրաժեշտ աշխատանքի» այն նշանակությունից զատ, վոր մատնանշել ենք վերևում, մարքսիստական գրականության մեջ մի ուրիշ մեկնություն էլ կա: Միքանիսը «հանրորեն-անհրաժեշտ աշխատանք» գաղափարին վոչ միայն արտադրական, այլև սպառողական նշանակություն են վերագրում: Այսպես, որինակ, Բուդինը «Կարլ Մարքսի թեորիական սիստեմը» վերնագրով իր գրքում, շարադրելով Մարքսի արժեքի թեորիան, գրում է. «Այն աշխատանքը, վոր գործադրված է վորևե առարկայի արտադրության վրա այն նպատակով, վոր նոր արժեք ստեղծվի, վոչ միայն պետք է համապատասխանի նման առարկաներ արտադրելու համար պահանջվող միջին ծախսումին (затрата), այլև պետք է ստեղծի հասարակության համար անհրաժեշտ մի բան: Վորոշելու համար, թե արդյոք տվյալ առարկան հասարակության համար «անհրաժեշտ է» թե վոչ, պետք է հաշվի առնել վոչ միայն այն, թե այս առարկան ընդհանրապես ոգտակար է և իրոք անհրաժեշտ է հասարակության միքանի անդամների համար, այլև այն, թե հանրային անտեսության զարգացման տվյալ աստիճանի վրա ու տվյալ հասարակության մեջ տիրապետող արտադրության ու բաշխման ընդհանուր պայմաններում՝ արդյոք նման առարկաների կարիքն ուրիշ կարիքների համեմատությամբ բավարարված չէ արդեն: Յեթե վորոշ ապրանքից արտադրել են չափազանց շատ, և չափազանց շատ՝ վոչ թե բացարձակորեն վերցրած, այլ տվյալ հանրային պայմանների ու հարաբերությունների համեմատությամբ, ապա այսպիսի արտադրությունն ավելորդ արժեք (добавочная ценность) չի ստեղծում: Բանից դուրս է գալիս, վոր աշխատանքի մի համապատասխան քանակություն զուր է ծախսված: Հասկանալի չէ՝ այս չի նշանակում, թե անհատական մի վորոշ աշխատանք վոչ մի արժեք չի ստեղծում կամ թե արտադրված վորոշ առարկան արժեք չի ունենալու: Սակայն վորովհետև արժեքը հանրային հարաբերություն է, ապա այն ամբողջ աշխատանքը, վոր տվյալ հասարակության մեջ գործադրված է այս տեսակ առարկա-

ներ արտադրելու վրա, համեմատական չափով փոքր արժեք կստեղծի, և յուրաքանչյուր առանձին առարկա այնքան կկորցնի իր արժեքը, որ արտադրած այս տեսակի առարկաների ամբողջ քանակն ավելի արժեք չի ունենա, քան կունենար, յեթե գործադրված չլիներ այս ավելորդ աշխատանքը և արտադրված չլիներ այս առարկաների մի ավելորդ քանակություն»։

Այս կարծիքին է հակվում Հիլֆերդինգն էլ։ Նա ասում է. «Յեթե անհատը չափազանց դանդաղ է աշխատել կամ արտադրել է անօգտակար առարկա,—իսկ անօգտակար կլինի ընդհանրապես օգտակար առարկան էլ, յեթե միայն այս առարկան գերազանցում է իրերի հանրային փոխանակության պահանջը,—ապա տվյալ անհատի աշխատանքը կվերածվի միջին աշխատանքի, հանրորեն-անհրաժեշտ բանվորական ժամանակի»։

Հանրորեն-անհրաժեշտ աշխատանքի մասին այսպիսի հայացքն արմատապես սխալ է։ Բանից դուրս է գալիս, որ արժեքը ոչ միայն յերևան է գալիս ապրանքների շրջանառության ասպարեզում, այլ մասամբ հենց այստեղ էլ ստեղծվում է։ **Այսպիսով, ուրեմն, արժեքի ուսմունքը փոխանակության կարգավորող զսպանակ լինելուց դադարում է յեվ դառնում մի կտոր կակուղ խմոր, վորը հլու յենթարկվում է փոխանակության պայմաններին:**

Իհարկե, արժեքը մի քարացած ու անփոփոխ բան չէ։ Աշխատանքի արտադրողականության փոփոխությունը փոփոխում է հանրորեն-անհրաժեշտ աշխատանքի այն քանակն էլ, որ ծախսվում է արդյունքի յուրաքանչյուր միավորի վրա, հետևաբար փոփոխում է այս միավորի արժեքն էլ։ Սակայն որ արժեքը կարող է փոփոխվել արտադրության պայմանների փոփոխության հետևանքով, սրանից ամենևին չի հետևում, թե արժեքը պետք է փոփոխության յենթարկվի՝ պահանջի ու առաջարկի բոլոր տատանումներին հետևելով։

Մինչդեռ իրոք, առաջարկի ու պահանջի այն անհամապատասխանությունը, որին կարող է հանդիպել ապրանքը շրջանառության ասպարեզում, միայն **շեղում է ապրանքի գինը նրա արժեքից**, մի արժեք, որ ապրանքը բերում է իր հետ արտադրության ասպարեզից։

§ 12. ՀԱՍԱՐԱԿ ՈՒ ԲԱՐԴ ԱՇԽԱՏԱՆՔ.

Արդյունքն ստեղծելուց առաջ հասարակությունը պետք է արդյունք արտադրողին ստեղծի։ Հարկավոր է ապագայի **արտադրողներին** թե կերակրել ու թե աշխատանքի վարժեցնել։ Սովորաբար, յերբ ապրանքները փոխանակվում են ըստ իրենց արժեքի, աշխատանքի այն քանակությունները, որոնք ծախսված են արտադրողներ պատրաստելու վրա, փոխադարձաբար հավասարակշռում են իրար։

Օրինակ, յենթադրենք, թե միջին անորակյալ բանվորի կրթությունը կլանում է հանրորեն-անհրաժեշտ աշխատանքի 4,500 ժամ։ Այնուհետև ասենք թե այս բանվորը կարող է միջին հաշվով տալ 90,000 ժամվա աշխատանք։ Աշխատանքի յուրաքանչյուր ժամին հարկավոր է $^1/_{20}$ ժամ աշխատանք՝ բանվորի կրթության համար։

Հիմա թող ըստ արժեքի իրար հետ փոխանակվեն մի պահարան ու մի կիսաքուրք։ Յերկսի մեջ էլ 20-ական ժամվա աշխատանք կա։

Փորձենք սրա վրա ավելացնել բանվորների կրթության վրա ծախսած աշխատանքը։ Սրանից ոչինչ չի փոխվի (հարկ կլինի մեկական ժամ ավելացնել թե պահարանի ու թե կիսաքուրքի վրա ծախսած աշխատանքի վրա)։

Բայց մի քանի զբաղմունքներ առանձնապես յերկարատև պատրաստություն են պահանջում։ Օրինակ, ինժեներ-քիմիկոսը պետք է տասնյակ տարիներ գործադրի, մինչև որ ստանա իրեն հարկավոր գիտելիքներն ու հմտությունը։ Նրա պատրաստման համար աշխատանք են թափում թե ուսուցիչներն ու թե ուսումնական ձեռնարկներ արտադրողները։ Այս հանգամանքը շատ ու շատ յերկարացնում է այն ճանապարհը, որ պետք է կտրի անցնի հասարակության արտադրական ապարատը՝ քիմիկոսների աշխատանքի արդյունքներ ստանալու համար, իսկ այս անպայման պետք է ազդի տվյալ արդյունքների արժեքի վրա։ Քիմիկոսի աշխատանքի մի ժամը, որ մարմնացած է գարեջրի, արհեստական պարարտանյութի կամ թե անիլինի ներկերի մեջ, հասարակ ժամ չէ, այլ մի ժամ է՝ պլյուս այն բանվորական ժամանակի մի փոքր մասը, որ հարկավոր է յեղել քիմիկոսի բարձր որակավորումն առաջ բերելու համար։

Ասենք թե քիմիկոսի **բարձր** վորակումն առաջ բերելու հա-

մար պահանջվում է հանրօրեն-անհրաժեշտ բանվորական ժամանակի 27,000 ժամ[1]։ Յենթադրենք թե արդեն պատրաստված քիմիկոսի աշխատանքի կյանքի միջին տևողությունը 30 տարի չէ, իսկ հաշվելով տարեկան 300-ական բանվորական որ ու օրվա մեջ էլ 6 ժամ աշխատանք, այս 30 տարին կաս 54,000 ժամ։ Պարզ է, որ քիմիկոսի յուրաքանչյուր ժամին ընկնում է $^1/_2$ ժամ այն աշխատանքից, որ գործադրվել էր բարձր պատրաստման համար։ Քիմիկոսի բանվորական մեկ ժամը պետք է $1^1/_2$ անգամ ավելի արժեք առեղծի, քան անորակյալ բանվորի մեկ բանվորական ժամը։ **Պարզի վորոշման համաձայն՝ բարդ աշխատանքը, այսպես ասած, ասիճանի բարձրացրած կամ թե բազմապատկած հասարակ աշխատանք է։**

§ 13. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՏԻՇԻԶՄԸ.

Արդյունքի ապրանքային ձևն, ինչպես վերևում պարզաբանեցինք, փոխանակային հասարակության արտադրական հարաբերությունների արտացոլումն է, ինչպես կինեմատոգրաֆի եկրանի վրայի կենդանի պատկերն արտացոլումն է այն ժապավենի, վոր անցնում է կախարդական լապտերի միջով։

Բայց այս չի խանգարում, վոր ապրանքն իսկապես ակրություն անի փոխանակային հասարակության մեջ։ Շուկան, վոր բաշխում է արտադրության ու սպառման բոլոր միջոցները, չի հարցնում, թե՝ դու ոձ ես, կամ թե՝ ինչ ես արել, այլ թե՝ ինչ ես բերել հետդ։ Շուկայում իրար հանդիպում, կռվում, միմյանց հաղթում են **ապրանքները**։ Ապրանքի հաղթությունը կամ պարտությունն ապրանքատիրոջ հաղթությունն է և կամ պարտությունը։ Յեվ մարդկանց, վորոնց սարկացրել են իրերը, թվում է, թե շուկայում հրապարակ չեկող իրերն իսկապես, բայի իրենց բնական հատկություններից, առանձնահատուկ շուկային վորպիսություններ էլ ունեն, վորոնց մեջ թաղնված է նրանց իբր թե հավիտենական տիրապետության գաղտնիքը։

Յերբ կրոնի հաշիշով արբեցած մարդը նայում է սրբապատկերին, նրան թվում է, թե սրա մեջ ինչ-վոր ներքին սրբություն կա։ Յերբ նա դպատանում է, տեսնում է, վոր սրբապատկերը վոչ այլ ինչ է, բայց չեթե ներկոտած տախտակ կամ թիթեղ։ Նույնն է ապրանքն էլ։ Բանի մարդը կուրացած է ապրանքային հարաբերություններից, նրան թվում է, թե շուկայում ըրջան գործող իրերը հենց իրենց **էությամբ** իրեն ապրանքներ են, և վոր շաքարին նույնքան հատուկ է ապրանք լինելը, վորքան հատուկ է քաղցր լինելը։ Յեթե ապրանք լինելն իրերի բնական հատկություն է, ապա ինչպես կարելի չէ մտածել ապրանքները, շուկան, փոխանակությունը վերացնելու մասին...

Այնինչ իրապես ապրանքը մարդկանց բախտին ու մտքին ակրում է վոչ թե իր բնական հատկությունների շնորհիվ, այլ հանրային տնտեսության փոխանակային կերպվածքի (уклад) շնորհիվ։ Նախնադարյան տոհմական համայնքի մեջ ապրանք չկար։ Ապրանք չի լինելու կոմունիստական հասարակության մեջ էլ։

Ապրանքի տիրապետությունը մարդկանց բախտի ու մտքի վրա Մարքսն անվանում է ապրանքային Քիսիքիզմ, վորովհետև այս տիրապետությունը նա համեմատում է Քեսիքի (կուռքի) մարդկանց մտքերի վրա ունեցած տիրապետության հետ, այն Քեսիքի, վոր մարդիկ իրենց են շինել իրենց ձեռքերով։

Ինչպես տեսնում ենք, ապրանքային ֆետիշիզմն ունի թե սուբյեկտիվ կողմ (ապրանքները փաստորեն իշխում են մարդկանց բախտի վրա) ու թե սուբյեկտիվ կողմ (մարդիկ սխալ պատկերացումներ են ունենում ապրանքի եության մասին)։ Ապրանքային ֆետիշիզմի սուբյեկտիվ կողմը չքանում է մարքսիզմի լուսի շնորհիվ։ Իսկ ապրանքային ֆետիշիզմի օբյեկտիվ կողմը կչքանա միայն այն ժամանակ, յերբ կվերանա ապրանքային կազմակերպությունն, այսինքն յերբ կհաղթանակի կոմունիզմը։

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՓՈՂ.

§ 14. ԱՐԺԵՔԻ ՉԵՎԵՐԸ.

ԻՆՉՈՒ ԱՐԺԵՔԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՆՄԻՋԱԲԱՐ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ Ի ՄԵՋ ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼ։

Մենք գիտենք, վոր արժեքի եությունը միջին հանրօրեն-անհրաժեշտ բանվորական ժամանակն է, վոր կուտակված է ապրանքի մեջ։ Արդյոք կարող է վորևե ապրանքի արժեքն արտահայտվել անմիջապես բանվորական ժամանակի լեզվով։ Արդյոք կարելի՞ է յուրաքանչյուր ապրանքի վրա մի թղթի կտոր կպցնել՝ վրան գրելով,

[1] Իհարկե այստեղ ազդեցություն ունի նաև հեռակայքը. դասընթացը հաջողությամբ ավարտած յուրաքանչյուր տասնյակ քիմիկոսներին ընկնում են վորոշ թվով անհաջողակներ, վորոնք չեն կարողանում ավարտել։ Այն աշխատանքը, վոր ծախսված է այս անհաջողակների կրթության վրա, նույնպես ծանա

թե այն ապրանքի վրա հանրորեն-անհրաժեշտ աշխատանքի քանի ժամ է ծախսված: Ինչպես վերևում տեսանք, ամեն մի ապրանք անթիվ արտադրողների աշխատանքի արդյունք է: Նրանցից յուրաքանչյուրն ապրանքին նայելով՝ իրավունք ունի ասելու, թե «իմ աշխատանքից էլ մի կաթիլ կա նրա մեջ»: Վերտեղից գտնենք այն հաշվապահին, որը հաշվել կարողանար այս բոլոր կաթիլները: Յեթե այս բանը մինչև անգամ հնարավոր էլ լիներ, համենայն դեպս այս հաշվարկությունն արտադրության գիտակցական կազմակերպման հետևանք կլիներ: Իսկ մենք գործ ունենք ապրանքների տարերային ինքնակազմակերպման հետ, որը գործում է նույնպես կուրորեն, որպես աղի մանրիկները, յերը սրանք իրրև կանոնավոր բյուրեղներ նստում են լուծույթի տակը:

ՌՈԲԵՐՏ ՈՈՒԵՆ Ի ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՂԵՐԸ.

Այստեղից էլ առաջ է գալիս այսպես կոչված աշխատանքային փողն ստեղծելու բոլոր փորձերի անպտղությունը: Այսպիսի փորձ արել է, որինակ, Ռոբերտ Ուեյնը: Նրա «Աշխատանքային արդար փոխանակության ինստիտուտն» արտադրողներից ընդունում էր ապրանքներ և նրանց տալիս էր աշխատանքային բոններ, որոնց վրա նշանակված էր լինում ապրանքների վրա գործադրված աշխատանքի ժամերի թիվը: Այս բոնները տալով՝ ինստիտուտի կրպակներում («շուկաներում») կարելի յեր առնել ամեն մի ապրանք, որը համապատասխան չափով աշխատանք էր պարունակում:

Արժեքի վորոշումը, հասկանալի է, նախ թեյական էր լինում, յերկրորդ՝ միանգամայն վոչ-ճկուն: Արտադրության պայմաններն ու հետևաբար նաև ապրանքի մեջ պարունակվող հանրորեն անհրաժեշտ աշխատանքը փոխվում են, իսկ ապրանքի պիտակը (ярлычок) մնում էր նույնը: Բայց, սրանից զատ, յերևան էր գալիս վարուն (ходкий) ու վոչ-վարուն (неходкий) ապրանքների տարբերությունը: Առաջինները ձեռքից ձեռք են խլխլում, իսկ յերկրորդները մնում են պահած: Տարերային շուկայում այս յերևույթը կկարգավորվեր նրանով, որ վոչ-վարուն ապրանքների գները կընկնեին նրանց արժեքից ցած և վարուն ապրանքներինը կբարձրանային նրանց արժեքից վեր: «Ինստիտուտը» զուրկ էր այս կարգավորչից և փակվեց՝ գոյությունը յերկու տարի քարշ տալով: Բայց հենց այնքան ժամանակ էլ «Ինստիտուտը» դիմանալ կարողացավ այն պատճառով միայն, որ հավանորեն ապրանքներում պարունակվող աշխատանքը վորոշվում էր ավելի շուկայի գներին հարմարեցնելով, քան «ըստ արտարության»:

ԱՐԺԵՔԸ ՎՈՐՈՇՎՈՒՄ Է ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ:

Խնդիրը բարդանում է նաև նրանով, որ նախ՝ արժեքը չափվում է վոչ թե այն աշխատանքով, որը գործադրված է հենց տվյալ ապրանքի վրա, այլ հանրորեն-անհրաժեշտ աշխատանքով: Յերկրորդ՝ նրանով, որ արդեն պատրաստի ապրանքների արժեքը փոփոխվում է աշխատանքի արտադրողականության փոփոխվելու հետ միասին: **Արժեքն էապես վորոշվում է այն աշխատանքով, որ հարկավոր կլիներ տվյալ ապրանքը վերարտադրելու համար՝ աշխատանքի այնպիսի արտադրողականությամբ, որը միջին արտադրություն կլիներ տվյալ հասարակության պայմաններում: Նշանակում է՝ տվյալ ապրանքի կլանած աշխատանքային բոլոր ծախսումների** (трудовые затраты) **մանրակրկիտ գրանցումը, միևնույն է, վոչ մի հետեվանքի չեր հասցնի:**

ԱՐԺԵՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ:

Իրականում ապրանքներն ավելի հասարակ չեզք են գտնում: Սկզբում արժեքն արտահայտելու ազերսով յուրաքանչյուր ապրանք դիմում է ապրանքին, որի հետ փոխանակվում է: Սակայն փոխադարձ ծառայություն մատուցելու այս յեղանակը կարող է գործել այնքան ժամանակ միայն, քանի փոխանակությունը դեռ պատահական բնույթ ունի և քանի այնպես է յերևում, թե արժեքն է բղխում փոխանակության պայմաններից և վոչ թե ընդհակառակը: Այն վորսորդը, որն աղվեսի մորթին փոխանակել է մի ձան մեղրի հետ, տեսնում է, որ իր ապրանքի արժեքը քաղցր, մեղրի արտահայտություն գտավ: Սակայն առաջին՝ որ նա այստեղ դեռ վոչ մի ճշգրիտ քանակային հարաբերություն չի տեսնում: Նա առել է մի ձան մեղրն այնպես, ինչպես որ հանդիպել է նրան: Թերևս մեղվապահն ինքն էլ ստույգ գաղափար չունեը, թե ձանը որքան մեղր է տանում: Յերկրորդ՝ նրան ընդհանրապես ամենից ակներև ճշմարտություն է թվում, որ աղվեսի մորթու արժեքը վորոշվում է նրանով, ինչ վոր կարելի չե տանալ մորթու փոխարեն: Միայն այն ժամանակվանից, յերբ փոխանակությունը զարգանում է և հատկապես յերբ ճշգրիտ քանակային հարաբերություններ են սահմանվում փոխանակվող

ապրանքների միջև, պարզվում է, որ փոխանակությունն ու արժեքի արտահայտությունը միևնույն բանը չեն։ Արույրը ապրանքը դեռ կփոխանակվի թե չէ,—այս հետո կերևա։ Բայց ապրանքին ամենից առաջ հարկավոր է իր արժեքի արտահայտությունը գտնել, այլապես դեռ ապրանք չէ այն։ Ապրանքի սպառողական արժեքը (չէթե միայն այս ապրանքն արտադրության միջոց չէ) կարելի է վորոշել առանց ապրանքային աշխարհի մյուս անդամների չէլ ոգնությանը դիմելու։ Ինձորի սպառողական արժեքը կարելի է վորոշել նրանով, որ կմատանանշեք նրա հատկությունները ճաշակելիքի տեսակետից։ Ուրիշ բան է արժեքը. այստեղ ապրանքը չի կարող առանց մի ուրիշ ապրանքի յոլա գնալ։ Միևնույն խընձորի արժեքը ցույց տալու համար դուք հարկադրված կլինեք մատնանշելու մի ուրիշ վորևե ապրանքի վորոշ քանակություն։ **Ապրանքն իր արժեքը կարող է արտահայտել միայն ուրիշ ապրանքով։**

Արժեքի պարզ ձևը։ Մարքսը ցույց տվեց, որ արժեքի պարզ ձևի մեջ արդեն, երբ մի ապրանքի արժեք արտահայտվում է մի ուրիշ ապրանքով (որինակ՝ 1 չեզ=60 փութ ցորեն),— արժեքի վոզային ձևի սաղմը կա։

Այստեղ վոզային սաղմը ցորենն է։ Ոնիկը, որ Միխակի վոտից փուշ է հանում, իրոզության ավյալ դեպքում կատարում է միևնույն դերն, ինչ որ մարդկային հասարակության շրջանակներում կատարում են բոլոր բժիշկները միասին վերցրած։ Նույն կերպ էլ մեր ձևակերպման սահմաններում (1 չեզ=60 փութ ցորեն) ցորենը կատարում է հենց նույն դերը, որ զարգացած ապրանքային աշխարհի շրջանակներում փողն է կատարում։ Չեզը գտնվում է արժեքի **հարաբերական** ձևում, այսինքն չեզն այն ապրանքն է, որի արժեքն իր հարաբերական արտահայտությունն է գըտնում [1]։ Ցորենը գտնվում է արժեքի **եկվիվալենցային** ձևում [2]։ Տվյալ փորմուլայի սահմաններում ցորենը չեզի արժեքի մարմնացումն է (նյութական պատկերացումն է), ինչպես որ զարգացած ապրանքային աշխարհի շրջանակներում ար-

Արժեքի ծավալված ձև։ 1 չեզը = { 60 փութ ցորեն, կամ 5 փութ մեղր, կամ 6 մսխալ վոսկու և այլն։

Փոխանակության զարգացման այս աստիճանի վրա չէլ ապրանքը դեռ հաստատապես բաշխված չէն։ Այսօր չեզն է իր արժեքն արտահայտում չերկաթով, վաղը՝ չերկաթը չեզով։ Չէ ահա հենց այն ապրանքը, որն ամենից հաճախ է արտահայտում իր արժեքն (այսինքն՝ որն ամենից հաճախ է փոխանակության առարկա լինում), տարերայնորեն հրապարակ է մղվում արժեքի ընդհանրական արտահայտչի դերը կատարելու։ Արժեքի ծավալված ձևը մի տեսակ հակասական դասավորություն է առանում և փոխվում է **արժեքի բնդհանրական ձևի**։

Արժեքի ընդհանրական ձևը։ 60 փութ ցորեն = 5 փութ մեղր = 6 մսխալ վոսկի = } 1 չեզի։

Արժեքի ընդհանրական արտահայտիչ դարձավ չեզը։ Բայց վերջինս տուրճան է մի ժամով միայն։ Վաղը նրան կարող է դուրս մղել վորևե այլ ապրանք։

«Ընդհանրական հակվիվալենտային ձևն ընդհանրապես արժեքի ձևն է։ Հետևաբար այն կարող է պատկանել ամեն մի ապրանքի։ Մյուս կողմից՝ ավյալ ապրանքը գտնվում է ընդհանրական համարժեքային ձևի մեջ այն ժամանակ ու այն չափով միայն, երբ ու վորչափով վոր մյուս բոլոր ապ-

[1] Հատկապես հարաբերական. վորովհետև ապրանքի բացարձակ արժեքը պետք է կոնկրետ կերպով արտահայտված լիներ հանրորեն-անհրաժեշտ այլհատանքի ժամերով կամ թե բոպհներով, իսկ այս, ինչպես վերևում տեսանք, միանգամայն աննպատակ է։

[2] Եկվիվալենտ — համարժեք։

րանքներն այն ապրանքն առաջ են հրում իրենց միջավայրից իբրև համարժեք։ Յեվ միայն այն րոպեից, յերբ այսպիսի անջատումը դառնում ե մեկ առանձին, հատուկ ապրանքային տեսակի բաժին ու վիճակ, այս րոպեից միայն ապրանքային աշխարհի արժեքի միասնական հարաբերական ձևն օբյեկտիվ կայունություն ու ընդհանրական հանրային նշանակություն ե ստանում։

«**Այն առանձնահատուկ ապրանքային տեսակը, վորի բնական ձևի հետ հանրորեն ձուլվում ե համարժեքային ձևը, դառնում ե փողային ապրանք կամ գործում ե իբրև փող... Ապրանքների միջև այս արտոնյալ տեղը... պատմության ընթացքում գրավել ե մի վորոշ ապրանք, այն ե՝ վոսկին**» (Մարքս)։

ԱՐԺԵՔԻ ՓՈՂԱՅԻՆ ՁԵՎԸ։

60 փութ ցորեն=
5 փութ մեղր=
20 փութ յերկաթ=
1 յեզ . . . =
} 6 մսխալ վոսկու։

«Փողային ձևը ձուլվում ե կամ ամենակարևոր առարկաների հետ, վորոնք ստացվում են դրսից և տեղական արդյունքների համար ներկայանում են իբրև փոխանակային արժեքի յերևան գալու բնականորեն զարգացող ձև, կամ թե սպառման այն առարկայի հետ, վորը կազմում ե տեղական օտարելի գույքի գլխավոր տարրն, ինչպիսին ե, որինակ, անասունը։

«Յերբ ապրանքների փոխանակությունը ճեղքում ե իր տեղական սահմանները, և ընդսմին ապրանքային արժեքը զարգանալով դառնում ե ընդհանրապես մարդկային աշխատանքի մարմնացում, փողային ձևն անցնում ե այն ապրանքներին, վորոնք հենց իրենց բնական հատկությամբ առանձնապես պիտանի յեն ընդհանրական համարժեքի հանրային ֆունկցիան կատարելու, այն ե՝ անցնում ե ազնիվ մետաղներին» (Մարքս)։

Ապրանքների արժեքի արտահայտության գործում աստիճանաբար մասնագիտանում են հատուկ ապրանքներ—փողերը։

ԻՆՉՈՒ ՎՈՍԿԻՆ ԴՈՒՐՍ Ե ՎԱՆՈՒՄ ՄՅՈՒՍ ՓՈՂԱՆՅՈՒԹԵՐԸ։

Ինքը փողն ամենից առաջ պետք ե ապրանք լինի։

Միակ փողային ապրանքի տեղը համարյա վերջնականապես նվաճել ե վոսկին։ Վոսկին ապրանք ե։ Վոսկին առաջին հերթին սպառողական արժեք ունի իբրև զարդարանքներ պատրաստելու նյութեղեն։ Վոսկին բանեցնում են ատամնաբուժական տեխնիկայի մեջ և այլն[1]։ Մյուս կողմից՝ վոսկին իբրև աշխատանքի արդյունք, ունի արժեք։ Վորովհետև վոսկու արդյունահանությունը (добыча) կապված ե աշխատանքի մեծ ծախսումների հետ, ուստի վոսկու ամեն մի կշռային միավոր ուրիշ ապրանքների **համեմատությամբ** ավելի մեծ արժեք ունի։ Ընդսմին վոսկու արժեքը լոկ աննշան տատանումների յե յենթարկվում։ **Ազնիվ մետաղների այս «աշխատատարողությունը»** (трудоемкость) **նրանց ամրության, միատեսակության, բաժանականության ու հալողականության հետ միասին ապահովել ե նրանց հաղթանակը մյուս բոլոր փողանյութերի հանդեպ** (անասունների, մորթիների, յերկաթի, պղձի հանդեպ և այլն), վորոնք առաջ են քաշվում տնտեսական զարգացման պրոցեսում։ Փողանյութի ապրանքային եյությունը, սպառողական արժեքի ու արժեքի բևեռներ ունենալը նրա համար **անհրաժեշտ ե**, բայց միայն այս **բավական** չե։ **Ապրանքը կարող ե փող դառնալ այն չափով, վորչափով զատվել ե մնացած ապրանքների շարքից, վորչափով հակադրվում ե մյուս ապրանքներին, իսկ մյուս ապրանքներն ել հակադրվում են նրան։** Փողը չի կարող մարդկանց նշանակածը լինել։ Փողն ստեղծողն ապրանքների աշխարհն ե՝ իր ամբողջությամբ առած։ **Տնտեսական զարգացման պրոցեսում ե, վոր փողը տարերայնորեն ասպարեզ ե քաշվում ապրանքային աշխարհի խորքերից։**

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԲԵՎԵՌԱՑՈՒՄԸ։

Առաջ ամեն մի ապրանք առանձին վերցրած՝ ուներ յերկու բևեռ—սպառողական արժեքի ու արժեքի բևեռ։ Այժմ բևեռացումը (հակադիր մասերի—բևեռների բաժանվելն) ընդգրկում ե ամբողջ ապրանքային աշխարհը։ Մի կողմից՝ սպառողական արժեքի բևեռն ե—բոլոր շարքային ապրանքները։ Մյուս կողմից՝ արժեքի բևեռն ե—փողը։ Արժեքի տեսակետից նայեցեք վոր ապրանքին վոր կուզեք, և դուք նրա մեջ փող կտեսնեք։ Գյուղացին իր ձիու մահը վողբում ե միայն նրա համար, վոր տեսնում ե այն հարյուր ռուբլու կորուստը, վոր ձիու արժեքն եր։ Այնտեղ, վորտեղ անցորդը տեսնում ե հրապուրիչ կարկանդակներ, հրուշակագործը տեսնում ե միայն փող, վորին պետք

[1] Դեռ XIX դարի սկզբում ամբողջ աշխարհում պերճանքի առարկաների մեջ 25% ավելի վոսկի կար, քան իբրև փող գոյություն ուներ։ Հետագայում պատկերը փոխվեց։ Որինակ, 1911 թվականին ամբողջ աշխարհում վոսկեդրամ (золотая монета) ե կտրվել 372 միլիոն դոլլարի, իսկ արդյունաբերական նպատակով բանեցրել են 166 միլիոն դոլլարի վոսկի։

է վերածվել այն կարկանդակները։ Նայեցեք փողին սպառողական արժեքի տեսակետից, և դուք կտեսնեք այն ապրանքները միայն, որ այդ փողով կարելի յե գնել։ Այն բանվորի աչքում, որը ճաշարան է գնում 15 կոպեկը գրպանում, այս 15 կոպեկը ճաշ է։ **Արժեքը կանխիկ կամ յերևակայական (իդեալական) փողի կերպարանք է ստացել։ Սպառողական արժեքն ընդունել է նույնպես կանխիկ կամ իդեալական շարքային ապրանքների կերպարանք։**

Այսպես, ուրեմն, փողն այն ապրանքն է, որ մյուս ապրանքները՝ տարերայնորեն առաջ քաշելով՝ դարձրել են ընդհանրական էկվիվալենտ յեվ որը պինդ հաստատվել է այս դերում։ Յուրաքանչյուր առանձին ապրանքի նման ապրանքների ամբողջ աշխարհն էլ տրոհվում է բևեռների — սպառողական արժեքի բևեռում լինում են շարքային ապրանքները, իսկ արժեքի բևեռում՝ փողը: Փողի նյութի մեջ արժեքն իր ամենահամապատասխան մարմնացումն է գտնում: Մի խոսքով՝ փողն արժեքի մարմնացումն է։

Փողը մարմնացնում է փոխանակային հասարակության հանրային հարաբերությունները՝ նրանց ամբողջ հակասականությամբ։ Փողն այն կախման մարմնացումն է, որ ունի ապրանքարտադրողը հասարակությունից։ Փողն այն հանրային ուժի մարմնացումն է, որն ընկնելով հասարակության առանձին անդամի ձեռքը՝ դառնում է մի գործիք, որով սա իշխում է հասարակության գլխին։

ՓՈՂԻ ՖԵՏԻՇԻԶՄԸ։

Մենք վերևում տեսանք, թե ինչպես արդյունքի ապրանք դառնալու պրոցեսում մարդկանց հարաբերությունները փոխարինվում են իրերի հարաբերություններով։ Բայց **հանրային հարաբերությունների առարկայացման ամենապայծառ ու ամենից աչքի ընկնող ձևը տեսնում ենք փողի մեջ:** Իրերի արտաքին յերևույթով կուրացած մարդին այնպես է թվում, թե արդյունքին իրեն հատուկ է արժեք ունենալը, իսկ ոսկուն իրեն հատուկ է արժեքի մարմնացում լինելը։ Ապրանքի ֆետիշիզմն իր ամենապայծառ արտահայտությունն է գտնում փողի ֆետիշիզմի մեջ։ **«Փողային ֆետիշի առեղծվածն՝ ընդհանրապես ապրանքային ֆետիշի առեղծված է: Միայն այս առեղծվածը փողի մեջ ավելի յե աչքի ընկնում յեվ ավելի յե շաղում մարդու հայացքը»** (Մարքս)։

Անցնում ենք փողի ֆունկցիաների հարցին։

§ 15. ՓՈՂՆ ԻԲՐԵՎ ԱՐԺԵՔԻ ՉԱՓ։ ԳԻՆ.

Փողի ֆունկցիաներից առաջինն ու ամենակարևորն արժեքի չափ լինելու ֆունկցիան է:

«Ոսկու առաջին ֆունկցիան այն է, որ ապրանքային աշխարհին նյութեղեն ընձեռի՝ նրա արժեքն արտահայտելու համար...

«Այսպիսով ոսկին գործում է իբրև արժեքների ընդհանրական չափ, և սկզբում միայն այս ֆունկցիայի շնորհիվ է, որ ոսկին... փող է դառնում։

«Փողը չէ, որ ապրանքները համաչափելի յե դարձնում։ Ընդհակառակը։ Հենց այն պատճառով, որ ապրանքներն — իբրև արժեքներ — առարկայացած մարդկային աշխատանք են և, հետևաբար, համաչափելի յեն ինքնըստինքյան, — հենց այս պատճառով և նույն այն ապրանքները կարող են իրենց արժեքները չափել միևնույն հատուկ ապրանքով՝ այսպիսով այս վերջինս դարձնելով իրենց արժեքների ընդհանրական չափ, այսինքն փող։ **Փողն իբրև արժեքի չափ այն անհրաժեշտ ձևն է լոկ, որով յերևան է գալիս ապրանքներին հատուկ՝ արժեքի չափը — բանվորական ժամանակը:** Իրական ոսկու մի մանրահատ (крупица) անգամ հարկավոր չէ ունենալ միլիոնների հասնող ապրանքային արժեքները ոսկով արտահայտելու համար։ Հետևաբար, **արժեքի չափի իր ֆունկցիան փողը կատարում է իբրև մտքով յերևակայելի կամ իդեալական փող»** (Մարքս)։

ԳԻՆ։

Շուկայում մենք պատահում ենք ապրանքների **գների**։ Ի՞նչ բան է գինը։ Խնդիրն ավելի պարզ կացուցելու համար վեր առնենք մի այնպիսի յերկիր, որտեղ շուկայում ոսկի փողն էլ է շրջան գործում և ոչ թե նրանց փոխարինող թղթադրամները, բանկնոտները միայն և այլն։ Վերցնենք թեկուզ հենց Ռուսաստանը 1897 ու 1914 թվականների միջև։ Ցանկանալով մի զույգ վալենկա գնել, դուք կիմանաք, որ նրա գինը յերեք ռուբլի յե։ Ի՞նչ է յերեք ռուբլին։ Այս իմանալու համար հարկավոր է, որ դուք տեղեկանաք որևէ ոսկեդրամի, թեկուզ հենց 10 ռուբլիանոցի քաշի մասին։ Դուք կիմանաք, որ ոսկե տասնոցում 174,24 դոլյա զուտ ոսկի կա։ Հետևաբար ռուբլու մեջ կա 17,424 դոլյա, իսկ յերեք ռուբլում՝ 52,272 դոլյա ոսկի։ Այսպես, ուրեմն, մեր առջև կա այս հավասարությունը — 1 զույգ վալենկան = 52,272 դոլյա ոսկի։ Ի՞նչն է,

վոր կարող է համեմատելի դարձնել վալենկաներն ու մի մետաղ, վորը բանեցնում են նշանդրեքի մատանիներ ու արհեստական ատամներ շինելու համար։ Պարզ է, վոր միայն արժեքը, միջին հանրորեն-անհրաժեշտ աշխատանքը միայն, վոր պարունակվում է վալենկաների ու վոսկու մեջ։ Վալենկաների արժեքն իր արտահայտությունը գտավ փողանյութի կշռային վորոշ քանակի մեջ։ Փողանյութի կշռային այս վորոշ քանակը, վոր վալենկաների արժեքն է արտահայտում, վալենկաների գինն է հենց։

Պահանջի ու առաջարկի միջեվ վորքան ավելի շատ է հավասարակշռություն լինում, վալենկաների գինն այնքան ավելի ճիշտ է արտահայտում նրանց արժեքը։ Պահանջի՝ առաջարկից գերակշիռ լինելու հանգամանքը գինը շեղում է արժեքից, մղում է արժեքից վեր, իսկ ընդհակառակն, առաջարկի՝ պահանջից գերակշիռ լինելը գինը ձգում է, պահում է արժեքից ցած։ Այսպես, մեր որինակում հնարավոր է, վոր 52,272 գոլիա վոսկու մեջ փաստորեն միջին հանրորեն-անհրաժեշտ աշխատանք ավելի քիչ կա, քան մի զույգ վալենկայի մեջ։ Վալենկաներ այնքան շատ են արտադրված, վոր վալենկա պատրաստող գործարանների ու տնայնագործների մրցության շնորհիվ նրանց գինն ընկել է արժեքից ցած։ Բայց հենց վոր շեղող պատճառը թուլանում է, գինը նորից սկսում է մոտենալ արժեքին։

Այսպես, ուրեմն, **գինն ապրանքի արժեքն է՝ փողանյութի վորոշ քանակով արտահայտված։**

ԳՆԵՐԻ ՄԱՍՇՏԱԲԸ։

Մենք դեռ խոսելու յենք ապրանքանման այն առարկաների—արժեթղթերի, հողի՝ վորպես այսպիսու և այլ իրերի մասին, վորոնք աշխատանքային արժեք չունեն։ Մեր որինակում վալենկաների գինը յերեք ռուբլի յեր։ Վորչափով վոր գինն արտահայտում է արժեք, այս նշանակում է, թե վալենկաների արժեքը պարունակող ձույլ վոսկու մեջ, այսինքն զուտ վոսկու այն կտորի մեջ, վորն իր աշխատանքային արժեքով հավասար է մի զույգ վալենկայի,—հաշվեփողի միավորը՝ 17,424 գոլիան՝ պարունակվում է յերեք անգամ։ Ստացվում է, մի տեսակ, յերկակի չափում (двойное измерение)[1]։ Արժեքը չափվում է վոսկով։ Իսկ վոսկե փողի միավորը—ներկա դեպքում ռուբլին՝ 17,424 գոլիան - չափում է վերևում մատնանշված վոսկու քանակը։ **Հաշվեփողի միավորը իր բոլոր ստորաբաժանումներով կատարում է մի հատուկ ֆունկցիա—գների մասշտաբի ֆունկցիա։**

«Փողն, իբրև արժեքի չափ ու իբրև գների մասշտաբ, յերկու միանգամայն տարբեր ֆունկցիա յե կատարում։ Փողն արժեքի չափ է՝ իբրև մարդկային աշխատանքի հանրային մարմնացում, իսկ գների մասշտաբ է՝ իբրև մետաղի կշռային վորոշ քանակություն։ Փողն իբրև արժեքի չափ ծառայում է այն նպատակին, վոր բազմաթիվ պես-պես ապրանքների արժեքները դարձնի գներ, վոսկու մտքով յերևակայելի՝ վոսկու քանակություններ. իսկ իբրև գների մասշտաբ՝ փողը չափում է վոսկու այս քանակությունները։ Արժեքի չափի միջոցով ապրանքները չափվում են իբրև արժեքներ. իսկ գների մասշտաբն, ընդհակառակը, վոսկու տարբեր քանակությունները չափում է վոսկու մեկ քանակությամբ»։ (Մ ա ր ք ս)։

§ 16. ՓՈՂԸ՝ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ։ ԳԱՆՁ.

Փոխանակային հասարակության մեջ արժեքն եյապես շըղթայված է մի վայրից։ Փոխանակության ժամանակ ամեն մեկը ճար է փնտրում իրեն պատկանող արժեքը պահպանելու՝ միայն սպառողական արժեքը փոխելով։ Յեվ ահա անմիջական փոխանակության ժամանակ ապրանքների ձեռն ու վոտը նրանց տեղափոխությունների ընթացքում պինդ կաշկանդված են։ A ապրանքը կարող է B-ի մոտ գնալ, յեթե միայն B ապրանքն A-ի մոտ գնա։ Բրբրված շորերով կոշկակարը միայն այն դեպքում կարող է հագուստ ստանալ, յեթե պատահի վոտաբոբիկ դերձակի։ Յեթե մի զույգ կոշիկը յերեք անգամ ավելի արժե բլուզից, կոշկակարին ուրիշ բան չի մնում, բայց յեթե միանգամից յերեք բլուզ ձեռք բերել, յեթե չի ուզում իր ապրանքի փոխանակության մեջ կորուստ ունենալ։

ՅԵՐԿՈՒ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ (метаморфоза)։

Փողերի միջամտելը բոլորովին փոխում է դրությունը։ Փողն այն արժեքն է իր մաքուր ձևով, վորը կարող է ապրանքատերը պահել իր ձեռքում՝ հրաժարվելով մեկ սպառողական արժեքից, բայց մի ուրիշ սպառողական արժեք ձեռք չբերելով դեռ։ **Փողն իբրև շրջանառության միջոց փոխանակության միասնական ակտը տրոհում է յերկու մասի։**

[1] Յերկակի չափումն տեսնում ենք, որինակ, ջերմաչափի մեջ [illegible] սնդիկի սյունը վորոշում է բարեխառնությունն, իսկ ցուցնակը իր ստորաբաժանումներով չափում է սնդիկի սյունի բարձրությունը։

Փոխանակ մեկ կերպարանափոխության, այն է՝ «կոշիկ»—«հագուստ» կերպարանափոխության, արժեքը յերկու կերպարանափոխության է յենթարկվում (две метаморфозы).

Առաջին կերպարանափոխությունն է՝ կոշիկ—փող:

Յերկրորդ կերպարանափոխությունն է՝ փող—հագուստ:

Կոշկակարը կոշիկները նախ փող է դարձնում՝ ծախելով, ուրիշ, հյուսնին և հետո յել այս փողը դարձնում է հագուստ: Յեթե միայն կոշկակարի ու դերձակի արանքը չի խցկվում առևտրականը, թե կոշիկներն ու թե հագուստն, ինչպես բոլոր ապրանքները, առուծախի ակտից հետո դուրս են գալիս շրջանառության ասպարիզից յեվ մտնում են սպառման բնագավառը: Ուրիշ բան է փողը: Բայց այն դեպքից, յերբ փողը գանձ է դառնում (այդ մասին ներքևում կխոսենք), փողը շրջանառությունից դուրս չի յելնում գեպի վորեվե տեղ: Հենց նրանով, վոր փողը կոշկակարին ոգնեց՝ կոշիկները հագուստ դարձնելու, հենց միևնույն բանով եյ հյուսնին ոգնեց իր կահկարասիքը կոշիկներ դարձնելու և դերձակին ոգնեց իր հագուստը դարձնելու իրեն հարկավոր մի վորևե այլ ապրանք: Շրջանառության ասպարիզում մնալով, փողը ձեռքից ձեռք է անցնում՝ ոժանդակելով նորանոր ապրանքների տեղափոխությանը:

ՓՈՂԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՊՐԱՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ:

Պարզ, բայց դժվարագնաց ճանապարհը, վոր է «ապրանք—ապրանք», բաժանվում է յերկու մասի. «ապրանք—փող» ու «փող—ապրանք»:

Առաջ է գալիս ապրանքների աշխարհի խիստ կենտրոնացում: Այստեղ թագավորում է փողը: Ապրանքը կարող է շարժվել միայն դեպի փողը կամ փողից դեպի մի ուրիշ կողմ. ապրանքն ապրանք է այն չափով միայն, վորչափով կարելի չէ հուսալ, թե նրա փոխարեն հնարավոր է փող ստանալ: Ապրանքները մի տեղից մի ուրիշ տեղ են շպրտվում փողի կախարդական գավազանի փոքրիկ շարժումով: Այն իշխանությունը, վոր ապրանքներն ունեն ապրանք արտադրողների վրա, հատկապես բացահայտ է դառնում այն ժամանակ, յերբ իրենք ապրանքներն էլ ընկնում են փողի իշխանության տակ:

ԴԱՆԴ:

Փողային փոխանակության ճանապարհի առաջին կեսը (Ա—Փ) վերջը է: Այս գարիվերը կտրելն այնքան էլ հեշտ չէ: Ձեվ գտնելու բան չկա այստեղ:

Հասարակության միայն մի վորոշ մասին պիտանի սպառողական արժեքը հարկավոր է լինում փոխանակել մի արժեքով, վորը պիտանի յե բոլորին ու ամեն մեկին: Սրա փոխարեն՝ փոխանակության ճանապարհի յերկրորդ մասը (Փ—Ա) վայրկյան ճանապարհի յերկու կեսի՝ այն է՝ Ա—Փ-ի ու Փ—Ա-ի արանքում, վորտեղ այն հանդես է յեկել շրջանառության միջոցի ֆունկցիայով,—կարող է մեծ կամ փոքր դադար անել, մի դադար, վորի ժամանակ փողը հրապարակ է գալիս իբրեվ խնայողության գործիք, իբրեվ գանձ:

Գանձը կարգավորում է փողային շրջանառությունը: *Գանձերն,—ինչպես Մարքսն է ասում, «այն ավազաններն են, վորոնք շրջանառության մեջ գտնվող փողի համար ծառայում են իբրև արտամղող ու ներմղող կանալներ. այս պատճառով փողը յերբեք ամբողջովին չի լցնում բուն իսկ շրջանառության կանալները»: Այս տեսակետից դանձը ճիշտ նույնպիսի դեր է կատարում, ինչպիսին կատարում է ծանրաչափի տակի ամանը, վոր լցված է լինում անդիկով: Ամանից խողովակի մեջ ավելի շատ անդիկ չէ անցնում, քան հարկավոր է ոդի ճնշումը հավասարակշռելու համար:*

Այսպես էլ գանձերի ասպարիզից շրջանառության ասպարեզ ավելի շատ փող չի մտնում, բան հարկավոր է այն ապրանքների գները հաստատելու համար, վորոնք մտնում են շրջանառության մեջ:

Բայց մյուս կողմից էլ ծախելու հնարավորությունը, առանց մի բան գնելու, կարող է վատ հետևանքներ ունենալ: Յեթե փողատերը չի ուզում բաժանվել փողից, ապա ապրանքատերն էլ ապրանքից բաժանվել չի կարող: Այստեղից էլ առաջ է գալիս վաճառահանման ճգնաժամերի հնարավորությունը[1]:

§ 17. ՓՈՂԸ՝ ՎՃԱՐԵԼԱՄԻՋՈՑ.

Սահնք թե կողք-կողքի ապրում են մի սայլագործ ու մի հացթուխ: Սայլագործը յերկու շաբաթում մեկ սայլ է շինում:

[1] Հնարավորությունը չպետք է շփոթել անխուսափելիության հետ: Ճշգ-նաժամերի անխուսափելիության պատճառները մենք քննելու յենք ներքևում:

Հաջխուխան եվ ամեն որ հաց է թխում: Սալլագործը իր ապրանքը—սալը—վերջացնի և կծախի 14 որից հետո միայն, այնինչ նրան ամեն որ ուտելու հաց է հարկավոր: Հաջխուխը իր ապրանքը—հացը տալիս է սալլագործին այն պայմանով, որ յերկու շաբաթից հետո հացի փողն առանա: Այս յերկու շաբաթ ժամանակով հաջխուխը բաժանվում, կորվում է իր ապրանքի վաչ միայն սպառողական արժեքից, այլ և փոխանակային արժեքից: Իսկ սալլագործը վաղորոք ստանում է իր սալլի արժեքը նախքան սալլի պատրաստ լինելն ու փողային ձև ընդունելը: Սալլագործը հանգես է գալիս պարտապանի (դեբիտոր) դերում, հացթուխը՝ պարտատիրոջ (կրեդիտոր): Հացը հանձնելու հետ ծագում է պարտքը, որ մարելու, վճարելու յեն վորոշ ժամանակամիջոց հետո: Այս ժամկետի գալուց հետո փողը հանգես է գալիս վճարելամիջոցի դերում:

Վերեվում մենք տեսանք, որ փողը, իբրեվ շրջանառության միջոց, «ապրանք—ապրանք» ճանապարհը բաժանում է յերկու մասի, յեվ այս մասերը սրանք են. «ապրանք—փող» ու «փող—ապրանք»:

Վճարելամիջոցի դերում հանդես գալով՝ փողը հիշյալ ճանապարհի առաջին կեսը նորից բաժանում է յերկու մասի, վորոնք հետեվյալն են՝ «ապրանք—պարտք» ու «պարտք—փող»: «Ապրանք—փող» բանաձևի համաձայն կարելի չե ապրանք ծախել այն մարդկանց միայն, վորոնք ապրանքներ են ունեցել և այս ապրանքները փոխանակել են փողի հետ[1]: Պարտքով ապրանք ծախել կարելի չե նաև այն մարդկանց, վորոնք ապրանք հետո կունենան կամ վորոնք ապագայում միայն կփոխանակեն իրենց պատկանող ապրանքները փողի հետ: Փողը իբրեվ վճարելամիջոց քննդյանում է շուկան՝ թույլ տալով, որ շուկա մտնի վոչ միայն կանխիկ արժեք, այլ յեվ այն արժեքը, վորը գեռ հետագայում պետք է ստեղծվի կամ իրացվի (փողային ձևի քննության): Փողը, իբրեվ վճարելամիջոց, փոխանակային կապ է ստեղծում տարբեր ժամանակներում գոյություն ունեցող ապրանքների միջեվ:

Փողը շաղկապում է այն ապրանքները, վորոնց արտադրության ու իրացման ժամանակաշրջանի տևողությունը տարբեր է:

[1] Հասկանալի յա, որ նրանց եկվիվալենտ յել փող ստանալու մի ամբողջ շարք յեղանակներ կան (ավազակություն և այլն), բայց մենք այս դեպքերը թողնում ենք դեն:

Մի խոսքով՝ փողը ստեղծում է ապրանքների կապ ժամանակի մեջ:

Քանի զարգանում են փոխանակային հարաբերությունները, փողի, իբրև վճարելամիջոցի դերն ավելի ու ավելի կարևոր է դառնում: Այս բանն ակներև է դառնում կապիտալիզմի վերջին հատվածների ժամանակ, յերբ հզոր զարգացում են ունենում և մեծանում են վարկային հիմնարկների ցանցերը, զարգանում է անփող հաշվեհարդարների սիստեմը և համաշխարհային տնտեսության վրա իշխում է ֆինանսական կապիտալը (արդյունաբերական կապիտալի հետ ձուլված վարկային կապիտալը):

Փողի, իբրեվ վճարելամիջոցի, Քուենկցիան կանխիկ փողի տնտեսումն է առաջ բերում: Այս լինում է այն ժամանակ, յերբ վճարումները փոխադարձաբար մարում են իրար: Որինակ.

Վճարումների փոխադարձ մարումը:

Ոհաննեսը պարտ է Պետոյանին 100 ռուբլի վարսակի փող: Պետոյանը պարտ է Սեթոյանին 100 ռուբլի խոտի փող: Սեթոյանը պարտ է Ոհաննեսին 100 ռուբլի ձրտի փող: Համաձայնության գալով՝ նրանք կարող են իրենց պարտքերը ջնջել առանց մի կոպեկ փողի: Բանից դուրս է գալիս, որ առուծախի յերեք ակտ (վարսակ, խոտ, ձրտի) կատարված է առանց փողի իրական մասնակցության: Այսպիսի դեպքերում, ինչպես վոր եր արժեքի չափի Քուենկցիա կատարելու դեպքում (տես եջ 49), փողը հանգես է գալիս իբրեվ յերեվակայելի փող:

Շրջանառության միջոցի ու վճարելամիջոցի Քունկցիաների տարբերությունն ակնառու յերևան է գալիս փողանյութի արժեքի անկման ժամանակ: Փողի, իբրև շրջանառության միջոցի, դրությունը նվազում է, այնինչ նրա, իբրև վճարելամիջոցի, ուժը ճնում է անփոփոխ, և այս վերջին հանգամանքից շահվում են պարտապաններն ու ձեռավում պարտատերերը:

§ 18. ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՎՈՐ ՓՈՂԻ ՔԱՆԱԿԸ.

Վերցնենք մի վորոշ ժամանակամիջոց, որինակ, մի շաբաթ: Յերկրում վոքան փող պետք է լինի, որ այս մի շաբաթվա ընթացքում շրջանառության ունեցած պահանջները բավարարեն: Փող հարկավոր է նախ նրա համար, որ մի շաբաթվա ընթացքում առած ապրանքների գները վճարվեն: Մի շաբաթվա մեջ

կատարված գնումների գումարը նշանակենք Ա. տառով [1]։ Սրանից հարկավոր է հանել այն գնումների գումարը, որոնք կատարված կլինեն վարկով, առանց կանխիկ դրամի։ Վարկով առած ապրանքների գների գումարը նշանակենք Բ տառով։ Հետո փող հարկավոր է այն պարտագրերի վճարումները կատարելու, որոնց ժամկետը լրանում է տվյալ շաբաթվա մեջ։ Այս վճարումների գումարը նշանակենք Գ տառով։ Սրանից պետք է հանել այն վճարումները, որոնք փոխադարձաբար մարում են իրար (որինակը տես վերևում)։ Փոխադարձաբար իրար մարող այս վճարումների գումարը նշանակենք Դ տառով։

Վերջնականում շաբաթվա մեջ փողի կատարած գնողական ու վճարողական գործունեության գումարը հավասար կլինի Ա.—Բ+Գ—Դ։

Յեթե փողային յուրաքանչյուր միավոր շաբաթվա ընթացքում միայն մեկ գործ կատարև, ուրիշ խոսքով՝ յեթե դրամական ամեն մի միավոր միայն մեկ անգամ շրջան գործե, ապա հենց ճիշտ այնքան փող հարկավոր կլինի, որքան որ ասացվում է վերոհիշյալ փորմուլայի մեջ։ Իրականում կարող է ուրիշ կերպ լինել։ Միևնույն դրամը (монета) շաբաթվա մեջ կարող է շրջան գործել մի քանի անգամ։ Վաճառականը կարող է մի պարտիա ապրանքի համար առանձ 1,000 ռուբլի։ Այս հազար ռուբլով նա կարող է շահագործից (барышник) գնել մի ուրիշ ձի։ Շահագործը միևնույն շաբաթվա մեջ նույն հազար ռուբլով կարող է վճարել մի ուրիշ վաճառականին տալիք պարտքն, իսկ վերջինս կարող է ելի նույն հազարով վորևե ապրանք առնել։ Մեր այս որինակի մեջ միևնույն 1,000 ռուբլին մի շաբաթվա մեջ շրջան գործեց 4 անգամ։

Յեթե ճաշարանում միևնույն ամանն որվա մեջ մի քանի հաշվով մատուցվում է տասը տարբեր հաճախորդների, ապա պարզ է, որ ճաշարանին մի քանի հաշվով հարկավոր ամանների թիվը 10 անգամ պակաս կարող է լինել որական հաճախորդների թվից։ Նույնն է նաև փողերի վերաբերմամբ։ Յեթե փողի յուրաքանչյուր միավոր շաբաթվա մեջ մի քանի հաշվով մեկ անգամից ավելի չի շրջան գործում, ասենք, որինակ, անում է ե շրջան, ապա մի շաբաթվա մեջ կատարվող շրջանառության կարիքները բավարա-

[1] Այս դեպքում, յեթե միևնույն ապրանքը շաբաթվա մեջ մի քանի անգամ է ձեռքից-ձեռք անցնում, հաշվի առնվում է ամեն մի գնումն առանձին-առանձին։

րելու համար ե. անգամ ավելի քիչ փող է պետք, քան հարկավոր եր նախընթաց փորմուլայի համաձայն, այսինքն հիմա հարկավոր է.

$$\frac{А.—Б+Г—Д}{е}$$

Սակնհայտ է, որ շրջանառության մեջ հարկավոր փողի քանակն 1) այնքան ավելի շատ է լինում, որքան շատ ապրանք կա շուկայում, 2) այնքան ավելի շատ է լինում, որքան ավելի շատ անգամ է շրջան գործում ապրանքի տվյալ միավորը միջին հաշվով, 3) այնքան ավելի բիչ է լինում, որքան ավելի շատ են փոխադարձաբար իրար մարող վճարումները, 4) այնքան ավելի բիչ է լինում, որքան ավելի արագ է շրջան գործում փողի յուրաքանչյուր միավորը։

§ 19. ԴՐԱՄ.

Փողն իր բնական կերպարանքով, ադնիվ մետաղի ձուլվերի ձևով ամենից ավելի գործածվում է մի ազգային հարաբերությունների ժամանակ։ Ներքին շուկայում փողն ամենից առաջ հանդես է գալիս դրամի ձևով։ Հաստատված է, որ ֆրանսիական 5 ֆրանկանոց արծաթ դրամը, որ 25 գրամմ է կշռում, մաշվելու հետևանքով տարեկան միջին հաշվով թեթևանում է 3 միլլիգրամմ։ Սակայն 5 ֆրանկանոցը դրամի արժանիքը (достоинство) կորցնելու համար, ապադրամվելու համար (демонетизироваться) պետք է նորմալի համաձայն կորցնի իր կշռի $^1/_2{}^0/_0$-ը կամ 125 միլլիգրամմ։ Ուրիշ խոսքով՝ տարեկան 3 միլլիգրամմ հաշվելով՝ դրամն, այնուամենայնիվ, կարող է գործել 43 տարի. 5 ֆրանկանոց դրամը, որը կշռում է 24,876 գրամմ, նույնպիսի գնողական ուժ ունի, որքան և նույն արժանիքի դրամը, որ կշռում է 25 գրամմ։ Այս յերկու դրամի ապրանքային արժեքը տարբեր է, բայց հապա իրենն է, որ նրանց հավասար է դարձնում։—Միայն դրամահատված լինելը (чекан)։ Նշանակում է՝ **դրամն արդեն փող չե՝ այս բառի զուտ արժեքային իմաստով։ Դրամի մեջ մեծատյա բովանդակության կողքին արդեն մի պայմանական բան էլ կա։ Այս պատճառով դրամն իբրև այսպիսին այլևս արդեն չի կարող իբրև արժեքի չափ ծառայել, այլ ծառայում է լոկ իբրև շրջանառության, վճարման ու խնայողության միջոց։**

Փողանյութի ուսերին ձգած դրամային համազգեստի պայ-

մանական բնույթը յերևան ե գալիս, յերբ դրամը դուրս ե անցնում այն պետության սահմանից, վորի կնիքը դրված ե դրամի վրա։ Դրամային համազգեստը սահմանից այն կողմ բանի տեղ չի անցնում, և դրամին ընդունելություն են ցույց տալիս վոչ թե «ըստ հագուստի», այլ ըստ կշռի, յեթե միայն մտադրություն չունեն այն դրամը յետ ուղարկել իր ծննդավայրին՝ ապրանքների գներ վճարելու կամ ուրիշ պահանջների համար։ **Բայց դրամի յերկակի բնույթն ամենից ավելի յերևան ե գալիս այն հանգամանքում, վոր հնարավոր ե կնիքը միանգամայն բաժանել մետաղից յեվ վոր կարող ե գոյություն ունենալ այսպես կոչված թղթադրամ:**

ՄԵՏԱՂԱԴՐԱՄԸ։

Ներկայումս բոլոր պետությունների մեջ ել դրամահատումը պետական ռեգալիա (մենաշնորհ) ե։ Դրամահատումը լինում ե **կամ բացահայտ ու կամ գոց**։

ԱԶԱՏ ՈՒ ԳՈՑ ԴՐԱՄԱՀԱՏՈՒՄԸ։

Ռուսաստանում, որինակ, 1899 թվականի դրամային որենսդրության (МОНЕТНЫЙ УСТАВ) համաձայն յուրաքանչյուր մասնավոր անհատ իրավունք ուներ դրամանոց (МОНЕТНЫЙ ДВОР) վոսկի տանելու ($^1/_4$ ֆունտ զուտ մետաղից վոչ պակաս քաշով), վոր փոխարենը կլշտով նույնքան վոսկի ստանա դրամով։ Ընդամենը դրամահատման համար մեկ փութ զուտ վոսկուց առնում եյին 42 ռ. $31^1/_2$ կոպեկ։ Իսկ մեկ փութ զուտ վոսկուց ստացվում եր 21,157 ռուբլի։ Ընդհակառակն, արծաթ դրամի հատումը գոց եր, այսինքն մասնավոր անձանց չեր թույլատրվում։

Բացահայտ դրամահատումը կանգուն ե պահում այն մոտավոր հավասարությունը, վոր կա դրամ մետաղի ու ձույլ մետաղի գների միջեվ: Մենք խոսում ենք չակերտավոր «գների» մասին, վորովհետև բացահայտ դրամահատման դեպքում իսկապես հարկ չկա խոսելու փողամետաղի գնի մասին. փողամետաղը փոխանակ փողով ծախելու՝ այն կարելի յե պարզապես փող դարձնել։

ԼԻԱՐԺԵՔ ՈՒ ԹԵՐԱՐԺԵՔ ՓՈՂԵՐԸ։

Բացահայտ հատման ժամանակ դրամը չի կարող լիարժեք չլինել[1]: Ռուսական 5 ու 10 ռուբլիանոցները լիարժեք դրամներ եյին հենց։ Ընդհակառակը, **գոց հատման ժամանակ յերբեմն շատ մեծ ե այն**

[1] Ամենագլխավոր յերկրների դրամների պարիտետների աղյուսակ։

	1 Ռուբլին	1 Ֆունտ-ստեռլինգը	1 Ֆրանկը	1 գեր. մարկը	Հ. Ա. Մ. Ն. 1 դոլլարը
Ռուբլի ու կոպեկ	1,00,	9,457	0,375	0,463	1,943
Անգլիական պենս	25,376	240	9,515	11,748	49,316
Ֆրանկ ու սանտիմ	2,666	25,221	1,00	1,234	5,182
Գերմանական ու լեհական մարկ ու պֆենիգ	2,160	20.429	0,81	1,00	4,197
Հյուս. Ամեր. Մ. Նահանգն. դոլլար ու ցենտ	0,514	4,866	0,193	0,238	1,{0

տարբերությունը, վոր լինում ե վաճառվող մետաղի, ասենք, որինակ, ձույլ արծաթի ու այն արծաթադրամի միջեվ, վոր կարելի յե ստանալ ձույլ արծաթից։ Այսպես, որինակ, մեր արծաթ մանեթանոցները, վորոնց հատումը գոց եր, շատ ավելի քիչ արծաթ եյին պարունակում, քան կարելի յեր նրանցով գնել։ 1914 թվականին զուտ արծաթը շուկայում արժեր ֆունտը 16 ռուբլի։ Վաճառողը տալով մի ամբողջ ֆունտ արծաթ, վոր պարունակում եր 96 մսխալ, ստանում եր 16 ռուբլի, վորոնցից ամեն մեկը պարունակում եր 4 մսխալ 21 դոլիա զուտ արծաթ։ Ձույլ արծաթի 96 մսխալի փոխարեն նա ստանում եր $67^1/_2$ մսխալ արծաթ դրամով։

ԱՐԺՈՒԹԱՄԵՏԱՂԸ։

Չնայած վոր 1897 ու 1914 թվականների արանքում ընկած ժամանակամիջոցում մեզանում յերեք փողամետաղ կար—վոսկին, արծաթն ու պղինձը,—արժութամետաղը (ВАЛЮТНЫЙ МЕТАЛЛ) մենակ եր—վոսկին եր։ Փողի միավորը վոսկե ռուբլին եր—17,424 դոլիա զուտ վոսկին։ Վճարողական անսահման ուժ ուներ միայն վոսկին ու վոսկու փոխարկելի վարկատոմսերը (КРЕДИТНЫЙ БИЛЕТ): Յեթե մի վաճառական, վոր մյուսին 100,000 ռուբլու վճարելիք ունենար, այս գումարի պղնձադրամ բերեր կամ արծաթ մանեթանոցներ, պարտատերն իրավունք ուներ պղինձը (քաշով 2,000 փութ) ու նույնիսկ արծաթը (քաշով մոտ 126 փութ) ընդունելուց հրաժարվել, բայց նա պարտավոր եր հիշյալ գումարը վոսկով ընդունելու, չնայած վոր այս գումարի վոսկին, այնուամենայնիվ, կկշռեր 5 փթից ավելի։

ՄԱՆՐՈՒՆ ԴՐԱՄԸ։

Արծաթադրամն ու պղնձադրամը մեզանում միայն մանրուն դրամ եյին։

Մանրուն դրամը մեզանում յերկու տեսակ եր. ա) բարձրահարգ արծաթադրամ (ֆնտի մեջ $83^1/_2$ մսխալ զուտ արծաթ)—ռուբլիանոցները[1], կես մանեթանոցներն ու քառորդ մանեթանոցները։ Բարձրահարգ մանրուն դրամն ընդունելը պարտադիր եր մինչև 25 ռուբլին. բ) բիլոնային դրամ ցածրահարգ արծաթից (ֆնտի մեջ 48 մսխալ զուտ արծաթ)—20, 15, 10 ու 5 կոպեկանոցներ և պղնձից—5, 3, 2, 1, $^1/_2$ ու $^1/_4$ կոպեկանոցներ։ Բիլոնային դրամն ընդունելը պարտադիր եր մինչև 3 ռուբլի։ **Մանրուն արծաթի բացարկը** (ВЫПУСК) **սովորաբար շատ սահմանափակված ե լինում:** Այսպես,

[1] Ռուբլին պարունակում ե 405 դոլիա զուտ արծաթ։ Ռուբլու ընդհանուր կշիռը՝ մետաղախառնուրդն (лигатура) ել հետը հաշված՝ 466,55 դոլիա յե։

որինակ, մեզանում մանրուն արծաթի բացարկը չպետք է բնակչության շնչին 3 ռուբլուց ավելի լիներ։

ԹԵՐԱՐԺԵՔ ԱՐԺՈՒԹԱԴՐԱՄԸ։

Միշտ միայն մանրուն դրամը չէ, որ գոց է հատվում։ Որինակ, Բրիտանական Հնդկաստանում, որտեղ արժութամետաղն արծաթն է, գլխավոր փողային միավորը—ռուպին (0,3244 դոլլար) 1893 թվականից գոց է հատվում։ **Արժութափողերի գոց հատման հետևանքից այն է լինում, որ արժութափողերի գնողական ուժը տարբերվում, հեռանում է այն մետաղի արժեքից, որից շինված է արժութափողը։** Վորքան էլ տատանվելիս լինի դրամամետաղի արժեքն, այս տատանումը չի կարող անմիջապես ազդել դրամի գնողական ուժի վրա, ինչպես որ ովկիանոսի ջրի մակարդակի ցածանալը չի կարող անմիջապես այն հետևանքն ունենալ, որ փակ ավազանի ջրի մակարդակն էլ իջնի։ Ընդ սմին հետևանալը սովորաբար լինում է դեպի մեկ կողմն, այն է՝ դրամի թերարժեքության կողմը։ Հակառակը շատ հազվադեպ է լինում։

Վոչ մի միտք չունի, որ պետությունն, որինակ, մեկ կոր արծաթին վճարե 1 ռ. 30 կոպեկ և նրանից 1 ռուբլու դրամ կարե։ Յեթե այսպիսի «գերարժեքավոր» (сверхценная) դրամ բաց թողնվեր էլ, ապա այն իսկույն կչքանար շրջանառության միջից։

ԴՐԱՄՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՈՒՄԸ։

Փոխանակ այսպիսի դրամը տալու և 1 ռուբլի արժեք ունեցող ապրանք գնելու, ավելի ձեռնտու կլիներ այն դրամը վերահալելով (переплавить) արծաթ դարձնել և տեղն ստանալ 1 ռ. 30 կոպեկ։ Այս սպառնալիքն էլ ավելի մեծ կլիներ համաշխարհային շուկայի կողմից, որտեղ դրամն ամենից հաճախ գնահատվում է վոչ թե ըստ համազեստի, այլ ըստ իր մետաղյա բովանդակության։ Շուտով գերարժեքավոր դրամը մասամբ կվերահալվեր, կամ կթողներ արտասահման և կամ էլ պուլիկներով կթաղվեր։

Այս պատճառով էլ, գոց հատվող դրամը, ուզում է արժութային լինի թե մանրուն, միևնույն է, սովորաբար թերարժեք է լինում։ Յեվ ընդհակառակը, թերարժեք դրամը անպայման պետք է գոց կտրվի։ Յեթե կառավարությունը վոչ միայն ինքը ռուբլի դարձներ 70 կոպեկ արժեցող արծաթի կտորն, այլև այս աներ ուրիշների համար էլ, այն ժամանակ անչափ շատ կլիներ այն մարդկանց թիվը, որոնք կցանկային ոգտվել դրամանոցի այսպիսի սիրալիր վերաբերմունքից։

Համաշխարհային ռազմական կատաստրոֆի նախորյակին արժութամետաղի դերը կատարում եր գլխավորապես վոսկին։ Բայց վոսկին արծաթին հաղթեց յերկարատև կռվից հետո միայն և այն էլ վոչ լիովին։ Քանի ամրապնդվում էին համաշխարհային տնտեսական կապերն, այնքան ավելի ու ավելի պարզորոշ եր դառնում, թե անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր առանձին յերկիր իր լիարժեք արժութադրամն ունենա։ Քանի դեռ դրամն իր ծննդավայրումն է, թերարժեքությունը նրան կարող է չվնասել էլ, յեթե միայն թերարժեք դրամն անչափ մեծ քանակությամբ չէ բացարկված։ Բայց հենց վոր թերարժեք դրամն իր «հայրենիքի» սահմանից դուրս է անցնում, բանը բոլորովին փոխվում է։

Իհարկե, յեթե տվյալ դրամի ծննդավայրն, ասենք որինակ, Ա պետությունը շատ պարտապաններ ունի արտասահմանում, ապա Ա-ի դրամը, թեկուզ և թերարժեք լինի այս, բազմաթիվ փնտրողներ կունենա արտասահմանում էլ, վորովհետև այս թերարժեք դրամը կարող է պետք գալ Ա պետության քաղաքացիներին վճարումներ կատարելու ժամանակ։ Դրությունը լավ է լինում նաև այն ժամանակ, յերբ Ա յերկրում թերարժեք դրամն անարգել փոխարկվում է լիարժեք դրամի։ Պատերազմից առաջ այս վիճակն ուներ ֆրանսիական թերարժեք արծաթյա մանրուն ռուբլին էլ։ Բայց յեթե այսպիսի նպաստավոր հանգամանքները չկան, թերարժեք դրամն արտասահման անցնելու դեպքում լոկ մի կոր արծաթի նշանակություն ունի։ Սահմանվում է մի դրություն, յերբ փողային միավորի՝ Ա յերկրի ներսում ունեցած գնողական ուժն ու նույն միավորի արտասահմանյան կուրսը մեծ տարբերություն են ունենում իրարից։

Այսպես, ուրեմն, վորչափով վոր ամրապնդվում են համաշխարհային տնտեսական կապերը և յուրաքանչյուր յերկրի համար ավելի ու ավելի կարևոր է դառնում ոտարերկրյա շուկան, յուրաքանչյուր յերկրի համար ավելի ու ավելի անհետաձգելի անհրաժեշտություն է դառնում այնպիսի հաստատուն արժույթ ունենալը, վորի ժամանակ փողի, յերկրի ներսում ու արտասահմանում ունեցած գնողական ուժի միջև տարբերություն չի լինում։ Վորչափով վոր վոսկին է դարձել համաշխարհային փող, այս բանին ամենից ավելի հաստատ հասնում են նրանով, վոր լիարժեք վոսկեդրամի ազատ հատումն է սահմանվում։

ՄՈՆՈՄԵՏԱԼԻԶՄ։

Սակայն իրոք մի քանի յերկրներում վոսկե **մոնոմետալիզմ** մտցնելը (*մոնոմետալիզմը միակ մետաղարժույթ ունենալն է*) մի շարք արգելքների հանդի-

պես։ Առաջին հերթին դիմադրություն ցույց ավին հանքերի տերերը։ Այնուհետև ամեն մի յերկրում էլ կան խմբեր, որոնք դրամական շահագրգռված են հայրենի արժույթի (отечественная валюта) ցածր կուրսով։ Սրանք արտահանիչներն են (экспортер), այսինքն այն կալվածատերերն, արդյունաբերողներն ու առևտրականները, որոնք ապրանք են արտահանում արտասահման։ Ապրանքների դիմաց նրանք ստանում են ոսկերկրյա փող, որը փոխում են իրենց հայրենի դրամի։ Հենց սրանք են, որ ուրախ են լինում, յերբ ոսկերկրյա փողը փոխանակելով հայրենի դրամ ավելի շատ են ստանում, այսինքն սրանք ուրախանում են, յերբ հայրենի դրամի կուրսը ցած է։

ԲԻՄԵՏԱԼԼԻԶՄ։

Այստեղից էլ առաջ է գալիս այն կռիվը, որ մղվում է բիմետալլիզմի համար (բիմետալլիզմն այն է, յերբ յերկու արժութամետաղ է լինում, տվյալ դեպքում՝ ոսկի ու արծաթ)։ Բիմետալլիզմը դուռ կերպարանքով դուրս ուներ Անգլիայում 1717 թվականից մինչև 1774 թվականն ու Ֆրանսիայում 1803-ից մինչև 1874 թվականը։

Ֆրանսիայում և սրա հետ միասին ամբողջ լատինական դրամային դաշնակցության մեջ[1] (монетный союз) ոսկու և արծաթի արժեքների փոխհարաբերությունը սահմանված եր $15^1/_2$, այսինքն մեկ կիլոգրամ ոսկուց $15^1/_2$ անգամ ավելի մեծ գումարի դրամ եր կարվում, քան մեկ կիլոգրամ արծաթից։ Մոտավորապես նույնպիսի փոխհարաբերություն եր սահմանված բիմետալլիզմի այլ յերկրներում էլ։ Հասկանալի չե, այս յերկու արժութամետաղից յուրաքանչյուրի առանձին գինը շուկայում չէր փոփոխություն եր ունենում։ Ֆրանսիան, որ ինակ, արծաթի գինը իր բարձրության վրա պահելու նպատակով յերբեմն հարկադրված եր լինում արծաթի մեծ գնումներ կատարելու իր դրամանոցի համար։ Այնուամենայնիվ քանի դեռ տատանումները փոքր էին, բիմետալլիզմը կարող եր դիմանալ։

XIX դարի 70-ական թվականներից սկսած՝ ոսկու և արծաթի արժեքների տարբերությունն սկսեց արագ աճել։ Գերմանիան հաղթված Ֆրանսիայից վոսկով հինգ միլիարդ տաանալով՝ 1873 թվականից արծաթե արժույթից անցավ ոսկե արժույթին՝ այն հաշիվն անելով, թե իր արծաթի պաշարները վոսկու հետ կփոխանակե լատինական դաշնակցության յերկրներում, որտեղ ազատ կատարվում եր ինչպես արծաթի դրամատառումն, այնպես և արծաթադրամը ոսկե դրամի փոխելը։ Լատինական դաշնակցությունը հարկադրված յեղավ արծաթի ազատ դրամատառումը դադարեցնելու։ Լատինական դաշնակցության որինակին հետևեցին մյուս յերկրներն էլ (Ավստրիան 1879-ին, Հյուսիս-Ամերիկյան Միացյալ Նահանգներն ու Հնդկաստանը 1893 թվականին)։

ԿԱՂԱՑՈՂ ԱՐԺՈՒՅԹ։

Չնայած սրան՝ արծաթե թերարժեք հինգ ֆրանկանոցը լատինական դաշնակցության յերկրներում ու արծաթե դոլլարը Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում պահպանում էին իրենց անսահմանափակ վճարողական ուժը։ **Բիմետալլիզմի այսպիսի ձևը (յերբ յերկու մետաղն էլ անսահմանափակ վճարողական ուժ ունեն յեվ միայն մեկն է ազատ գրամահատվում, կոչվում է կապացող արժույթ** (хромающая валюта)։

(Թերարժեք դրամի դնողական ուժի հարցը չենք կարող քննել, մինչև վոր չծանոթանանք թղթադրամի թեորիայի հետ, վորը կշարադրենք վարկից հետո՝ վարկային փողերի թեորիայի հետ)։

ԽՆԴԻՐՆԵՐ.

№ 1. Յերկրի մեջ մի շաբաթվա ընթացքում ծախվում և առնվում է 700 միլիոն ռուբլու ապրանք, վորից 300 միլիոն ռուբլունը՝ վարկով։ Նույն այս շաբաթվա ընթացքում պարտագրերի համաձայն պետք է վճարվի 250 միլիոն ռուբլի։ Պարտագրերի փոխադարձ մարումը 75 միլիոն ռուբլի չե։ Շաբաթվա մեջ յուրաքանչյուր ռուբլին միջին հաշվով շրջան է կատարում մեկ անգամ։

Տվյալ յերկրում մեկ շաբաթվա շրջանառության համար վճռքան փող է պահանջվում։

№ 2. Յերկրում մեկ ամսվա մեջ ծախվում է 500 միլիոն ռուբլու ապրանք, վորից 200 միլիոն ռուբլունը ծախվում է վարկով։ Այս ամսվա ընթացքում պարտագրերի մարում է կատարվում 150 միլիոն ռուբլի գումարով, վորից 50 միլիոն ռուբլին մարվում է անփող։ Ամսվա մեջ փողը միջին հաշվով շրջան է կատարում 4 անգամ։

Ամսվա ընթացքում շրջանառության համար վճռքան փող է պահանջվում։

---

[1] Ֆրանսիան, Բելգիան, Շվեյցարիան, Հունաստանն ու Ռումինիան XIX դարի 60-ական թվականներին համաձայնություն կնքեցին, վոր այս բոլոր յերկրների համար փոդային միատեսակ բիմետալլիկ սիստեմ մտցնեն։ Հիմք ընդունեցին Ֆրանկը (Իտալիայում՝ լիրան, Հունաստանում՝ դրախման, Ռումինիայում՝ լեյը. սրանք—են 0,37498 ռուբլու, համարյա $37^1/_2$ կոպեկի)։ Արծաթն ու ոսկին պետք է ազատ դրամահատվեին հավասարապես։ 1925 թվականին Բելգիան դուրս յեկավ այս դաշնակցությունից։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻ՛Ն ԱՐԺԵՔԻ ԹԵՈՐԻԱ՛Ն ՈՒ ԲՈՒՐԺՈՒԱԿԱ՛Ն ԳԻՏՈՒԹՅՈՒ՛ՆԸ.

§ 20. ԿԼԱՍՍԻԿՆԵՐԸ.

Ներկայումս բուրժուական գիտությունն ամեն կերպ հրաժարվում է աշխատանքային արժեքի թեորիայից, որովհետև այս թեորիան այն ուղիղ դրմամբ, որպիսին տվել է նրան Մարքսն, ու սրա վրա հիմնված հավելյալ արժեքի թեորիան ցույց են տալիս,

1) որ կապիտալիստական արտադրությունը հիմնված է բանվոր դասակարգին անխնա շահագործելու վրա,

2) որ կապիտալիստական տնտեսակարգն իր խոր հակասությունների շնորհիվ կործանման է դատապարտված:

Կապիտալիստների դասակարգը խիստ կերպով շահագործված է, որ կոծկե, սքողե թե մեկն ու թե մյուսը: Այստեղից էլ հենց առաջ է գալիս բուրժուական գիտության ձգտումը՝ արժեքի մի ուրիշ, թղթյա թեորիա կառուցել իսկական թեորիայի փոխարեն:

ԻՆՉՈ՞Ւ ՑԵՐԻՏԱՍԱՐԴ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՉԷՐ ՎԱԽԵՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ԹԵՈՐԻԱՅԻՑ:

Այսպես չէր կապիտալիզմի նոր ծաղկման, փթթման ժամանակ: Բուրժուազիան, որ ճըզմել և հաղթել էր ֆեոդալներին, ամենևին մտքով չէր անցկացնում, թե կգա ժամանակ, երբ ինքն էլ ստիպված է լինելու հրապարակից չքանալ: Բանվոր դասակարգի հեղափոխական շարժումը միայն սաղմնային դրությամբ գոյություն ուներ: Այս պատճառով էլ բուրժուական գիտությունն ավելի խիզախ էր և չէր վախենում այնտեղ գնալուց, ուր տանում էր նրան գիտական վերլուծությունն, իսկ վերջինս նրան քաշում-տանում էր աշխատանքային արժեքի թեորիայի կողմը: Աշխատանքային արժեքի բուրժուական թեորիան ամենամեծ լիավարտության հասցրեց Ռիկարդոն: Սրա մոտավորուն նախորդն Ա. Սմիթն էր:

Ընդունված է՝ Սմիթին ու Ռիկարդոյին անվանել քաղաքատնտեսության կլասիկներ (օրինակելի հեղինակներ): *Բուրժուական տնտեսագիտական մտքի ավելի հետագա վիժվածքների համեմատությամբ Սմիթն ու Ռիկարդոն, անկասկած, արժանի յեն կլասիկի կոչմանը: Բայց, այնուամենայնիվ, կլասիկների ու Մարքսի աշխատանքային արժեքի թեորիաների միջև սար ու ձոր տարբերություն կա:* **Կլասիկներին ծանոթ չէր դիալեկտիկական մեթոդը, որը Մարքսի թեորիայի հիմքն է:** *Կլասիկների նպատակային հարցադրումն* (целевая установка) *էլ բոլորովին այլ էր, քան Մարքսինը: Իր հետազոտությունների մեջ Մարքսն իրեն նպատակ էր դրել պարզաբանել կապիտալիստական տնտեսակարգի հակասությունները՝ ցույց տալով, թե սրանք են պրոլետարական հեղափոխության հիմնական շարժիչները: Կլասիկները, որոնք կապիտալիզմն ամենակատարյալ տնտեսակարգն էյին համարում, իրենց խնդիր էյին դրել՝ պարզաբանել այն «բնական» օրենքները, որոնց շնորհիվ այս անտեսակարգին մշտենջենական գոյություն է ապահովված*[1]:

Եվ հենց այն պատճառով, որ կլասիկների ուսմունքն անտեսում է կապիտալիզմի հակասությունները, ուստի այս ուսմունքն ինքը տառապում է հակասականությամբ:

Այնուամենայնիվ Մարքսի թեորիան ուսումնասիրելու ժամանակ շատ օգտակար է ծանոթանալ, թե կլասիկների յերկրում ինչպես է դրված արժեքի հարցը: Մարքսին կլասիկների հետ համեմատելը կանխապաշտպանում է քաղաքատնտեսության հարցերը գռեհկորեն, ոչ-դիալեկտիկաբար հասկանալուց:

§ 21. ԱԴԱՄ ՍՄԻԹԸ.

Ադամ Սմիթը XVIII դարի անգլիացի տնտեսագետ է: Նրա աշխատությունը—«Հետազոտություններ ազգերի հարստության բնույթի ու պատճառների մասին»—համարյա նույն այն ժամա-

[1] *Հենց այս խնդիրն էլ կլասիկները դնում էյին յերկրորդաբար, որովհետև նրանց յերկերը հիմնականում կիրառական* (прикладной) *բնույթ ունեյին: Սմիթի գլխավոր աշխատության — «Ազգերի հարստության» — նպատակն է՝ ապացուցել ազատ առևտրի առավելությունը: Ռիկարդոյի գլխավոր աշխատության գործնական աստառի մասին վկայում է հենց նրա անունը, որ է՝ «Քաղաքատնտեսության ու հարկման* (налоговое обложение) *սկզբունքները»:*

նակ լույս տեսավ, յերբ հրապարակ հանվեց մանող մեքենան, ուրեմն տեխնիկական մեծ հեղափոխության նախօրյակին։

Սմիթը դեռ ծանոթ չեր ֆաբրիկային, բայց լավ ծանոթ եր մանուֆակտուրային և լիովին գնահատում եր աշխատանքի բաժանման նշանակությունը։ Նա չեր կարող չտեսնել, վոր աշխատանքի բաժանումը, պակասեցնելով ապրանքի միավորի աշխատատարողությունը, այն հետևանքին ե հասցնում, վոր ապրանքի միավորի գինը պակասում ե։ Այստեղից ել մի քայլ ե մնում հասկանալ այն, թե պատճառական կախում կա ապրանքի գնի ու այն աշխատանքի քանակի միջև, վոր պահանջվում ե այս ապրանքն արտադրելու համար։ Ադամ Սմիթի ժամանակվա արդյունաբերական ձեռնարկությունը **կենդանի** աշխատանքի իսկական թագավորություն եր։ Առարկայացած մեռյալ աշխատանքի ներկայացուցիչներն արտադրական պրոցեսի կրավորական ներկայացուցիչներն եյին միայն—հումքը, շենքերն ու գործիքը, վորին ուղղություն տվողը բանվորի ձեռքն եր բացառապես։ **Այն ժամանակ դեռ անհնարին եր այն պատրանքը, թե մեքենան ե արժեք ստեղծում։**

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՈՒ ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ։

Սմիթը ջոկում ե **իրարից սպառողական ու փոխանակային արժեքները** և ժխտում ե սպառողական արժեքի ազդեցությունը փոխանակային արժեքի մեծության վրա։ Նա գրում ե. «Հաճախ ե պատահում, վոր անչափ բարձր սպառողական արժեք ունեցող առարկաները բոլորովին չեն ունենում կամ թե չնչին փոխանակային արժեք են ունենում։ Ջրից անհրաժեշտ բան չի կարող լինել, բայց հազիվ թե կարելի լինի ջուրը տալով փոխարենը մի բան ստանալ»։

Ըստ Սմիթի՝ **փոխանակային արժեքը չափվում ե աշխատանքով**։ «Արժեքի միակ ընդհանրական, ինչպես և միակ ճիշտ չափն ե աշխատանքը»։

ՍՄԻԹԻ ԱՐԺԵՔԻ ԹԵՈՐԻԱՅԻ ԽԱՌՆԱՇՓՈԹՈՒԹՅՈՒՆԸ։

Սակայն Սմիթի ուսմունքն աշխատանքի, իբրև արժեքի չափի մասին, մշուշապատ ու հակասական բնույթ ունի։ **Նրա յերկի մեջ աշխատանքը հանդես ե գալիս վոչ այնքան իբրև արժեքի «իմմանենտ»** [1] **չափ, վորքան իբրև այնպիսի ապրանք, վորն ամենից ավելի յե պիտանի ընդհանրական եկվիվալենտի համար։**

[1] Իմմանենտ նշանակում ե (արժեքի) եությունից բղխող։

«Աշխատանքը, վորը յերբեք չի փոփոխվում իր սեփական արժեքի տեսակետից, միակ իրական ու վորոշ չափն ե, վորով միշտ ու ամենուրեք կարելի յե գնահատել ու համեմատել փոխանակության տարբեր առարկաների արժեքները»։

Սմիթի աշխատության մի ամբողջ շարք հատվածներից բղխում ե, վոր արժեքի չափ ծառայում ե վոչ թե այն աշխատանքը, վոր գործադրվում ե ապրանքի արտադրության վրա, այլ այն «աշխատանքն» (ավելի ճիշտ՝ բանվորական ուժը), վոր կարելի յե գնել տվյալ ապրանքով։

Վորովհետև այն ամենակարևոր ապրանքներից մեկը, վորոնցով «աշխատանք ե գնվում», հացն ե, ապա Սմիթը հացն ել ե արժեքի չափ համարում և ընդամենը մատնանշում ե, թե հացի արժեքը, վոր տարեցտարի մեծ տատանումների յե յենթակա, բազմամյա ժամանակաշրջան նկատի առնելով՝ համեմատաբար կայուն ե։ Բոլորովին ընդհակառակն ե, յերբ խոսքը գալիս ե թանգարժեք մետաղներին։ Սրանց արժեքը տարեցտարի քիչ ե փոփոխվում, բայց յերկարատև ժամանակաշրջաններում զգալի կերպով ցածրանում ե այն։ Սմիթի յեզրակացությունն այն ե, վոր հացահատիկն ավելի լավ արժեքի չափ ե, քան վոսկին ու արծաթը։

ՍՄԻԹՆ ԱՐԺԵՔԻ ՈՐԵՆՔԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ Ե ՄԻՆՉ-ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՎ։

Վոր Սմիթն այսպես անփութորեն շփոթում ե ապրանքի մեջ առարկայացած աշխատանքն այն աշխատանքի հետ, վորը կարելի յե «գնել» ապրանք տալով տեղը,—այս բացատրվում ե նրանով, վոր նա արժեքն աշխատանքով չափելն ընդհանրապես վերագրում ե մինչ-կապիտալիստական ժամանակներին [1], պարզ փոխանակության պայմաններին։ «Աշխատանքը վաճառողը» վոչ թե պրոլետարն ե, այլ արտադրության միջոցների տերը։ Ակներև ե, վոր «աշխատանքի վաճառքը» պետք ե պարզապես հասկանալ իբրև «աշխատանքի արդյունքի» վաճառք։ Բայց մինչդեռ Մարքսը յերևան ե հանում կապիտալիզմի որենքների ու պարզ փոխանակության որենքների անքակտելիությունն, **Սմիթը կարծում**

[1] «Ադամն ապրանքի արժեքը վորոշում ե ապրանքի մեջ յեղած բանվորական ժամանակով, բայց արժեքի այս վորոշման իրական լինելը նա վերագրում ե մինչ-Ադամյան ժամանակներին» (Մարքս)։

է, թե քանի զարգանում է կապիտալիզմը, պարզ փոխանակության օրենքները վերանում են՝ իրենց տեղը զիջելով նոր ավեցինիկ օրենքներին:

Ընդհանուր առմամբ Սմիթը մինչև վերջ չի հասցնում ապրանքի մասին արած իր վերլուծությունը: Կապիտալիստական իրականության ծովում յելք չգտնելով՝ Սմիթի վերլուծությունն ընդհատվում և կորչում է ավազուտներում:

§ 22. ՌԻԿԱՐԴՈՆ.

Բուրժուական բոլոր տնտեսագետների միջից ամենաճիշտ վորոշումն այն բանի, թե ապրանքի արժեքի մեծությունը վորոշվում է նրա վրա գործադրված աշխատանքի քանակով,—տալիս է Ռիկարդոն (անգլիացի տնտեսագետ ու բանկիր. 1772—1823): Նա քննադատում է այն յերկակի ըմբռնումը, վոր ուներ Սմիթն աշխատանքի մասին, իբրև արժեքի չափի, և պարզորոշ հրապարակում դնում է այն սկզբունքն, «ըստ վորի ապրանքների արժեքները մեծանում կամ փոքրանում են՝ կախումն ունենալով նրանց վրա գործադրված աշխատանքի շատանալուց կամ քչանալուց»:

Սակայն Ռիկարդոն էլ, վորը չէր ըմբռնում ապրանքի վոչ հակասությունները ու վոչ էլ ֆետիշիզմը, վոչ աշխատանքի յերկու կողմերը յեվ վոչ էլ աշխատանքի ու բանվորական ուժի տարբերությունը, նա աշխատանքային արժեքը շատ հասարակ, գռեհկացրած ձևով էր հասկանում:

Սմիթի նման նա յել արժեքի մեջ տեսնում էր վոչ թե հանրային հարաբերություն, վոչ թե մարդկանց հարաբերությունը, վոր առարկայացած է ապրանքի մեջ, այլ **իրի՝ մարդի հետ ու մարդի՝ իրի հետ ունեցած հարաբերություն:**

Նպատակահարմար աշխատանքն ընդհանրապես փոփոխում է բնության ընձեռած նյութեղենը, սրան նոր հատկություններ է տալիս: Կլասիկների մոտ իմիկս այս նոր հատկությունների, վոր աշխատանքը տալիս է նյութեղենին, հանդես է գալիս և արժեքը: **Խոսելով աշխատանքի, իբրև արժեքի աղբյուրի մասին, կլասիկները վերցնում են աշխատանքը, մի տեսակ, զուտ տեխնիկական տեսակետից: Այստեղից էլ առաջ է գալիս այն, վոր**

նրանք չեն ըմբռնում աշխատանքի յերկու կողմերը: Սրա շնորհիվ նրանք չեն հասկանում արժեքի օրենքի վոչ հանրորեն ու վոչ էլ պատմականորեն պայմանավորված լինելը, վոչ էլ ապրանքի հակասությունը, մի հակասություն, վորից բխում են փոխանակության ու կապիտալի մի ամբողջ շարք այլ հակասություններ: Յեթե բուրժուական կապիտալիստական քաղաքատնտեսությունը քննության առարկա դարձներ արժեքի հանրային ձևի պրոբլեմն, ապա բուրժուական քաղաքատնտեսությունը կվերածվեր իր հակադրության (կապիտալիզմի մշտնջենական գոյության օրենքներն ուսումնասիրող գիտությունից կդառնար կապիտալիզմի հակասություններն ու նրա կործանման պատճառներն ուսումնասիրող գիտություն): Ահա թե ինչն է պատճառը, վոր բուրժուական քաղաքատնտեսությունը Ռիկարդոյից հետո մանրանում է, ծանծաղանում և հետզհետե այլասերվում:

Իսկ կլասիկ քաղաքատնտեսությունն իր հակադրությանը փոխարկել կարող էր բանվոր դասակարգի իդեոլոգ Մարքսը միայն:

§ 23. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿՎԱ ԹԵՈՐԻԱՆԵՐԸ.

Ռիկարդոյի հետևորդները, վորոնք ցանկություն ունեյին իրենց ուսուցչի սիստեմի թերություններն ուղղելու, բայց չունեյին վոչ նրա լայն շրջածիրն (кругозор) ու վոչ էլ նրա անկեղծությունը, նրա ուսմունքն աստիճանաբար վոչնչի վերածեցին: XIX դարի 40-ական թվականներին Գերմանիայի մեջ ծագումն է առնում տնտեսագիտության այսպես կոչված **պատմական** դպրոցը: Այս դպրոցը, վորի ամենանշանավոր ներկայացուցիչներն եյին Ռոշերը, Հիլդեբրանդ-հայրը, Բրունոն ու Կնիսը, տնտեսագիտության ծանրության կենտրոնը **թեորիայի** հարցերից հետզհետե փոխում է դեպի տնտեսության **պատմության** հարցերը:

ՊԱՏՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ.

Հանձինս պատմական դպրոցի ներկայացուցիչների՝ բուրժուական գիտությունը յերես է դարձնում կապիտալիստական հարաբերությունների թեորիական վերլուծությունից, յերես է դարձնում այն պատճառով, վոր այս վերլուծությունը բուրժուազիային վոչինչ հաճելի բան չի խոստանում:

Սակայն XIX դարի վերջին քառորդում բուրժուական տնտեսական մտքի պատմության մեջ նոր ժամանակաշրջան է սկսվում։ Յերբ պրոլետարիատի իդեոլոգները—Մարքսն ու Ենգելսը—կատարեցին այն վերլուծությունը, որն այնպես սարսափելի չեր բուրժուազիայի համար, և ստեղծեցին թեորիա, որը մերկացնում է կապիտալիզմի ամբողջ անհրապույրը ներքինը,—այս բանից հետո բուրժուազիան այլևս չեր կարող չերես շուռ տալ թեորիայի հարցերից։ Հարկավոր եր չերեսը դարձնել դեպի Թշնամին և նրա ճիշտ թեորիային հակադրել ուրիշ սխալ ու կեղծ թեորիա, որը կոծկեր այն իրողությունը, թե պրոլետարիատին կապիտալիստներն ստրկացնում են, և այնպես պատկերացներ, թե կապիտալիզմը մարդկային հասարակության տնտեսական կազմակերպության բարձրագույն ձևն է և հավասարության ու չեղբայրության թագավորություն։ Այս մխսիան կատարեցին այսպես կոչված ավստրիական դպրոցի թեորետիկները[1], որոնք ստեղծեցին «սահմանային ոգտակարության» (предельная полезность) թեորիան։ Այս թեորիան շուտով տիրողը չեղավ ամբողջ աշխարհում։ Բուրժուական ամենանշանավոր տնտեսագետներն այս կամ այն ձևով ընդունեցին այս թեորիան։ Վերջինս ունկընդիրներին մատուցվում է բոլոր տնտեսպիտական ամբիոններից։ Նրա կողմնակիցները Մարքսի թեորիան չնթարկում են հավասարապես կատաղի ու անարդյունք քննադատության։

Սահմանային ոգտակարության թեորիան ամենից ավելի կարգավորված ու լիավարտ վիճակի չե հասել Բյոմ-Բավերկի չերկերում (Բյոմ-Բավերկն ավստրիացի պրոֆեսսոր եր ու ֆինանսների մինիստր)։ Նրա թեորիան հիմնական գծերով շարադրում ենք հաջորդ դրվագներում։

§ 24. ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԱՐԺԵՔԻ ԹԵՈՐԻԱՆ.

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼ ՈՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵՐՁԵՑՈՒՄԸ։

Բյոմ-Բավերկն արժեքի հարցին մոտենում է զուտ հոգեբանորեն։ Նրա աչքում այս վոչ թե հանրային հարց է, վոչ թե արտադրական հարաբերությունների հարց է, այլ ամենից առաջ գնահատող սուբյեկտի անհատական հարց է։ Նրա աչքում արժեքը վոչ թե մարդի՝ մարդի հետ ունեցած հարաբերությունն է, վորը առարկայացած է ապրանքի մեջ, այլ մարդի՝ իրի հետ ունեցած հարաբերությունն է։ Սակայն այս դեռ քիչն է։ Նրա աչքում արժեքը վոչ թե արտադրողի՝ իրի հետ ունեցած հարաբերությունն է, այլ սպառողի՝ իրի հետ ունեցած հարաբերությունն է, սպառողի, վորն իրեքը վոչ մի բանի վրա աշխատանք չի թափում, այլ ամեն ինչ ստանում է պատրաստի կերպարանքով։ Այնուհետև, արժեքը, Բյոմ-Բավերկի կարծիքով, միայն ապրանքային տնտեսարկության կատեգորիա չե։ Արժեք ասելով նա հասկանում է մարդի այն հատկությունն ընդհանրապես, վորով մարդը կարևորություն է տալիս իրեն, ուզում է այս իրը լինի հաղուստ, ճանկընդեղ թե սիրեցյալ տատի պատկերը։

Պարզ է, վոր այսպիսի մեծագույնս ժամանակ արժեքը Բյոմ-Բավերկի աչքում պետք է վերջնական հաշվում վերածվի սպառողական արժեքի։

Բայց, այնուամենայնիվ, Բյոմ-Բավերկը չեր կարող պարզապես հայտարարել, թե սպառողական արժեքն և այն արժեքը, վորը կազմում է գնի հիմքը։ Ջե վոր ամեն մի չերեխա չգիտե, թե կան իրեր, ինչպես, որինակ, ջուրը, ոդը և այլն, վորոնք վիթխարի սպառողական արժեք ունեն՝ չունենալով վոչ մի փոխանակային արժեք։ Այստեղ, թվում եր թե, չի կարելի զանց առնել աշխատանքային ծախսումների հարցը։ Ոդն այն պատճառով արժեք չունի, վոր նրա վրա վոչ մի աշխատանք չի թափած... Բայց հենց աշխատանքային ծախսումների հարցից է, վոր Բյոմը վախենում և ավելի, քան կրակ ու բոցից։ Նա մի խորամանկ շենք է կառուցում, վորի միջոցով բոլորովին մեջ է տալիս, թռնում է այն հարցի վրայից, թե աշխատանքն է արժեքի աղբյուրը։

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԱՐԺԵՔ ՈՒ ՕԲՅԵԿՏԻՎ ԱՐԺԵՔ։

Ամենից առաջ նա սահմանում է յերկու տեսակ արժեք—սուբյեկտիվ արժեք ու օբյեկտիվ արժեք։

Սուբյեկտիվ արժեք ասելով նա հասկանում է այն ճշմարտությունը, վոր մի վորոշ նյութական բարիք ունի ուրիշի բարեկեցության համար։

Օբյեկտիվ արժեք ասելով տնտեսագիտական իմաստով նա հասկանում է նյութական բարիքների՝ փոխանակության ապա-

[1] Այս դպրոցի հիմնադիրները—Մենգերը, Վիզերն ու Բյոմ-Բավերկը—բոլորն էլ ապրում էին Ավստրիայում։

րիզում ունեցած օբյեկտիվ ճշմարտությունը, պարզ ասած՝ փոխանակային արժեքը:

Թող ընթերցողը չկարծի, թե այստեղ մեր առջև տեսնում ենք մի բան, որը նման է Մարքսի կամ նույնիսկ կլասիկների սպառողական ու փոխանակային արժեքներին: Խնդիրն այն է, որ Բյոմ-Բավերկն օբյեկտիվ արժեքն ուղղակի սուբյեկտիվ արժեքից է դուրս բերում:

Սկսենք սուբյեկտիվ արժեքից:

Տվյալ «նյութական բարիքի» արժեքը կախումն ունի նրա պիտանի լինելուց: Սրանից հետևում է, որ **արժեքի մեծությունը կախված է նրա պիտանի լինելու աստիճանից:** *Խնդիրն այն է, որ պիտանությունը (нужность) լինում է տարբեր աստիճանի: Չի կարելի, օրինակ, համեմատել ջրի պիտանությունը, երբ ծարավը հագեցնելու համար է այս, ու նույն ջրի այն պիտանությունը, երբ ծաղիկներ ջրելու կամ սենյակի շորը լողացնելու համար է:*

Սուբյեկտիվ արժեքի հասկացողությունը կատարելու համար Բյոմ-Բավերկը դիմում է յերկակի մեկուսացման: Նա **նախ մեկուսացնում է գնահատող մարդին հասարակությունից:** *Յերկրորդ՝ նա մեկուսացնում է «նյութական բարիքի» տվյալ նմուշահատերը (экземпляры) սրանց ամբողջ տեսակից ու սեռից: «Նյութական բարիքների» վոչ մի տեսակ ընդհանրապես, ըստ Բյոմի, չի կարող արժեք ունենալ ինքնըստինքյան: Յերկաթն ընդհանրապես, ջուրն ընդհանրապես և այլն կարող են միայն* **օգտակար** *լինել: Արժեքն սկսվում է* **պիտանության** *հետ միայն: Յեթե ձեզ հարկավոր է մի բաժակ ջուր, և դուք բաժակը ձեռքներումդ նայած եք վոլգայի ջուրթափ յեզերքին, մի բաժակ ջուրը ձեզ համար վոչ մի սուբյեկտիվ արժեք չունի, թեև ջուրը չի կորցրել ձեզ համար ունեցած ոգտակարությունը:*

Յեթե ձեզ հարկավոր է մի փութ յերկաթ, իսկ դուք մի ամբողջ վագոն ունեք այս մետաղից, մի փութ յերկաթը ձեզ համար սուբյեկտիվ արժեք չունի արդեն: Սուբյեկտիվորեն արժեքավոր է տվյալ մարդի համար այն, առանց որի չբավարարված կմնա նրա որևե կարիքը:

Այսպես, ուրեմն, ըստ Բյոմ-Բավերկի՝ տվյալ «նյութական բարիքի» սուբյեկտիվ արժեքն այնքան ավելի մեծ է, որքան ավելի կարեվոր է այն կարիքը, որ բավարարվում է այս բարիքով:

ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՈՒՄԸ: (градация):

Բյոմը պահանջները բաժանում է ըստ կարեվորության, հետո յուրաքանչյուր կարգում տարբերում է պահանջների լարվածության զանազան աստիճանները: Ստացվում է հետևյալ սխեման, վորում հռոմեական թվանշաններով նշանակված են պահանջների կարգերն, իսկ արաբական թվանշաններով յուրաքանչյուր պահանջի սաստկության աստիճանը:

I	II	III	
10	—	—	
9	9	—	
8	8	8	
7	7	7	
6	6	6	
5	5	5	
4	4	4	
3	3	3	
2	2	2	
1	1	1	
0	0	0	և այլն:

Ասենք թե I-ը ցույց է տալիս աննդի պահանջը, II-ը՝ հագուստի պահանջը, III-ը՝ բնակարանի պահանջը և այլն: Պարզ է, որ լարվածության ամենաբարձր աստիճան հնարավոր է I կատեգորիայում: Սրա համար էլ այստեղ պահանջի լարման ամենաբարձր աստիճանը նշանակված է 10 թվանշանով: Հագուստի պահանջն արդեն չի կարող այսպիսի լարման հասնել, սրա համար էլ այստեղ լարվածության ամենաբարձր աստիճանը 9 է: Եվ ավելի պակաս լարման աստիճանի կարող է հասնել հագուստի պահանջն, ուստի լարման բարձրագույն աստիճանն այստեղ միայն 8 է և այլն: Բայց նույնիսկ ամենակարևոր պահանջը, կարող է լարման շատ թույլ աստիճան ունենալ: Որինակ, ուտելու պահանջը, յերբ այս արտահայտվում է կուշտ ճաշից հետո բերանը մի բանով քաղցրացնելու ցանկությամբ: Այս է պատճառը, որ նույնիսկ I կատեգորիայում լարման I աստիճան կա:

րիզում ունեցած որյեկտիվ ճշտությունը, պարզ ասած՝ փոխանակային արժեքը:

Թող ընթերցողը չկարծի, թե այստեղ մեր առջև տեսնում ենք մի բան, որ նման է Մարքսի կամ նույնիսկ կլասիկների սպառողական ու փոխանակային արժեքներին: Խնդիրն այն է, որ Բյոմ-Բավերկն որյեկտիվ արժեքն ուղղակի սուբյեկտիվ արժեքից է դուրս բերում:

Սկսենք սուբյեկտիվ արժեքից:

Տվյալ «նյութական բարիքի» արժեքը կախումն ունի նրա պիտանի լինելուց: Սրանից հետևում է, որ **արժեքի մեծությունը կախված է նրա պիտանի լինելու աստիճանից:** *Խնդիրն այն է, որ պիտանությունը (нужность) լինում է տարբեր աստիճանի: Չի կարելի, օրինակ, համեմատել ջրի պիտանությունը, երբ ծարավը հագեցնելու համար է այս, ու նույն ջրի այն պիտանությունը, երբ ծաղիկներ ջրելու կամ սենյակի շանը լողացնելու համար է:*

Սուբյեկտիվ արժեքի հասկացողությունը կատարելու համար Բյոմ-Բավերկը դիմում է յերկակի մեկուսացման: Նա **նախ մեկուսացնում է գնահատող մարդին հասարակությունից:** *Յերկրորդ՝ նա մեկուսացնում է «նյութական բարիքի» ավյալ նմուշահատերը (экземпляры) սրանց ամբողջ տեսակից ու սեռից: «Նյութական բարիքների» վոչ մի տեսակ ընդհանրապես, ըստ Բյոմի, չի կարող արժեք ունենալ ինքնըստինքյան: Յերկաթն ընդհանրապես, ջուրն ընդհանրապես և այլն կարող են միայն* **ոգտակար** *լինել: Արժեքն սկսվում է* **պիտանության** *հետ միայն: Յեթե ձեզ հարկավոր է մի բաժակ ջուր, և դուք բաժակը ձեռքներումդ նստած եք վոլգայի զառիթափ յեզերքին, մի բաժակ ջուրը ձեզ համար վոչ մի սուբյեկտիվ արժեք չունի, թեև ջուրը չի կորցրել ձեզ համար ունեցած ոգտակարությունը:*

Յեթե ձեզ հարկավոր է մի փութ յերկաթ, իսկ դուք մի ամբողջ վագոն ունեք այս մետաղից, մի փութ յերկաթը ձեզ համար սուբյեկտիվ արժեք չունի արդեն: Սուբյեկտիվորեն արժեքավոր է ավյալ մարդի համար այն, առանց վորի չբավարարված կմնա նրա վորևե կարիքը:

Այսպես, ուրեմն, ըստ Բյոմ-Բավերկի՝ տվյալ «նյութական

բարիքի» սուբյեկտիվ արժեքն այնքան ավելի մեծ է, վորքան ավելի կարեվոր է այն կարիքը, վոր բավարարվում է այս բարիքով:

ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՈՒՄԸ: (градация):

Բյոմը պահանջները բաժանում է ըստ կարգերի, հետո յուրաքանչյուր կարգում տարբերում է պահանջների լարվածության զանազան աստիճանները: Ստացվում է հետևյալ սխեման, վորում հռոմեական թվանշաններով նշանակված են պահանջների կարգերն, իսկ արաբական թվանշաններով յուրաքանչյուր պահանջի աստիճանը:

I	II	III
10	—	—
9	9	—
8	8	8
7	7	7
6	6	6
5	5	5
4	4	4
3	3	3
2	2	2
1	1	1
0	0	0 և այլն:

Ասենք թե I-ը ցույց է տալիս սննդի պահանջը, II-ը՝ հագուստի պահանջը, III-ը՝ բնակարանի պահանջը և այլն: Պարզ է, որ լարվածության ամենաբարձր աստիճան հնարավոր է I կատեգորիայում: Սրա համար էլ այստեղ պարավոր է I կատեգորիայում: Սրա համար էլ այստեղ պահանջի լարման ամենաբարձր աստիճանը նշանակված է 10 թվանշանով: Հագուստի պահանջն արդեն չի կարող այսպիսի լարման հասնել, սրա համար էլ այստեղ լարվածության ամենաբարձր աստիճանը 9 է: Եվ ավելի պակաս լարման աստիճանի կարող է հասնել հագուստի պահանջն, ուստի լարման բարձրագույն աստիճանն այստեղ միայն 8 է և այլն: Բայց նույնիսկ ամենակարևոր պահանջը, կարող է լարման շատ թույլ աստիճան ունենալ: Որինակ, ուտելու պահանջը, յերբ այս արտահայտվում է կուշտ ճաշից հետո բերանը մի բանով քաղցրացնելու ցանկությամբ: Այս է պատճառը, որ նույնիսկ I կատեգորիայում լարման I աստիճան կա:

Իսկ հապա այն դեպքում, երբ բարիքի վորոշ քանակ անհրաժեշտ է տարբեր աստիճանի կարևորություն ունեցող պետքերի համար: Այն ժամանակ ինչով է վորոշվում տվյալ բարիքի սուբյեկտիվ արժեքը:

Բյոմը խորամանկ ժպտով է սպասում այս հարցին, վորովհետև նրա կարծիքով՝ հենց այս կետումն է ամփոփված ամենահետաքրքրական միջուկը, վորից և ամբողջ թեորիան ստացել է իր անունը:

Բյոմը այսպես է դատում.

ՆՐՁՔԻ ՄԻԱՁՆԱԿ ԲՆԱԿԻՉԸ:

«Ձեռնթափրենք մի բնակիչ, վորի խրճիթը գտնվում է նախնադարյան անտառում (Բյոմն առանց մեկուսացման բան ասել չի կարող), հաղորդակցության ամեն տեսակի ճանապարհներից դուրս,—հենց նոր հավաքել է իր արտից 5 տոպրակ հացահատիկ: Սրանով նա պետք է կերակրվի մինչև հետևյալ հունձը: Իբրև կարգ ու կանոն սիրող տնտեսատեր, նա առաջուց հաշիվ է անում, թե ինչպես գործածի իր պաշարը: Մի տոպրակը նրան անհրաժեշտ է, վորպեսզի միայն սովից չմեռնի մինչև հաջորդ հունձը: Մյուս տոպրակը նրան հարկավոր է իր սնունդն այն աստիճան լավացնելու համար, վոր իր առողջությունը և ուժերը պահպանե: Նա մտադրություն չունի իր պաշարից դեռ մի մասն էլ հացի ու ալյուրից շինվող ուտելիքների համար գործածելու: Ընդհակառակը, նրա համար շատ ցանկալի կլիներ հացից կազմված սննդի վրա մի քիչ էլ մսե ուտելիք ավելացնել, սրա համար էլ չերրորդ տոպրակը նա նախանշում է թռչուններ կերակրելու համար: Չորրորդ տոպրակը նա պետք է գործածի հացահատիկի ողի պատրաստելու համար (արաղի պղինձն էլ մտահան արված չէ): Սրանցով լիովին ապահովվում են նրա անձնական բոլոր համեստ պահանջները: Մի տոպրակ էլ մնում է դեռ: Մեր տնտեսատերը վճռում է այս տոպրակն էլ բանեցնել մի քանի թռչնակ պահելու համար, վորոնց բլբլոցը լսելը նրան դուր է գալիս»:

Հիմա Բյոմը հարց է տալիս, թե մեր Ռոբինզոնի աչքում ալյուրի յուրաքանչյուր տոպրակի սուբյեկտիվ արժեքն ինչ է լինելու: Այս հարցին պատասխանելու համար նա մի ուրիշ հարց է մեջտեղ դնում, թե՝ մեր բնակիչն ինչից կզրկվի, եթե նրա տոպրակներից մեկը չքանա: Պատասխանը պարզ է. նա կզրկվի «թռչնակների բլբլոցը լսելու» բավականությունից: Այստեղից Բյոմն այն եզրակացությունն է անում, թե այս շատ կասկածելի բավականությունն է վորոշում ալյուրի յուրաքանչյուր **առանձին** տոպրակի սուբյեկտիվ արժեքն այն բնակչի համար, վորովհետև այս տոպրակներից վորևե մեկի կորուստը (վորն ուզում է լինի, միևնույն է) նրա համար թռչնակների բլբլոցը լսելու բավականությունից զրկվելու կորուստ է:

Մեջ բերված որինակում հացահատիկը թռչնակները կերակրելու համար գործածելը հերթականության (очередность) տեսակետից վերջինն է, սահմանայինը (предельный): Ցավ ահա այս ամենացավագ, ծայրասահմանայինը կիրառումն է վորոշում հացահատիկի տոպրակներից յուրաքանչյուրի սուբյեկտիվ արժեքն այն բնակչի համար:

Բյոմն այս ձևակերպում է այսպես.

ԾԱՅՐԱՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՈՂՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ.

«Իրի արժեքը վորոշվում է այս իրի սահմանային ոգտակարությամբ»:

Այստեղից էլ ամբողջ թեորիան ստացել է իր անունը, վոր է՝ «սահմանային ոգտակարության թեորիա»:

Բյոմի չերկերում սուբյեկտիվ արժեքի թեորիան դեռ մի ամբողջ շարք լրացումներ էլ ունի:

Սրանցից ամենակարևորները հետևյալներն են.

1. **Ավելի բարձր արժեքը փոխարինվում է** (սուբստիտուցիա) **ստորին արժեքով:**

ԲԱՐՁՐ ԱՐԺԵՔԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆ ՍՏՈՐԻՆ ԱՐԺԵՔՈՎ:

Որինակ, մի մարդից գողացել են նրա ձմեռվա վերարկուն: Նա կարող է նոր վերարկու ստանալ չուխակը տալով[1]: Վերարկուի արժեքն արդեն վորոշվում է վոչ թե տաք հագուստի պահանջով, այլ չերաժշտության պահանջով: Վոչովհետև վերարկուն կորցրածին չերբ մի լավ ծեփե յուրտը, նա կզոհե չուխակը և վերարկու կձարե: Վերջին հաշվում նա զրկվեց վոչ թե տաք հագուստից, այլ չերաժշտությունից միայն: Այստեղ վերարկուի արժեքը **փոխարինվում է** չուխակի արժեքով: Բյոմի ասելով գործնական

[1] Այս որինակը մենք ենք բերում: Բյոմը չուխակի փոխարեն փողն է բերում, վորի մասին նա բոլորովին իրավունք չունի խոսելու, վորովհետև փողն ամենևին չի տեղավորվում նրա սխեմայի մեջ:

կյանքում համարյա միշտ էլ այսպես է լինում։ Վոչվոք հայը սրա սեփական կարգի համաձայն չի գնահատում, այլ այն բարիքների կարգի համաձայն, վորոնք տրվում են հացի տեղակ։

2. Այն բարիքների արժեքները, վորոնք առանձին-առանձին անպործածադրելի չեն։ Որինակ։ Ի՞նչ արժեք կունենա այն գրիչը, վոր կարող է ոգուտ տալ թանաքի ու թղթի հետ միասին գործածադրվելով։ Այսպիսի «կոմպանիական» (компанейские) բարիքները Բյոմն անվանում է կոմպլեմենտար բարիքներ, այսինքն փոխադարձաբար իրար լրացնող բարիքներ։

ԿՈՄՊԼԵՄԵՆՏԱՐ ԲԱՐԻՔՆԵՐ։

Այն դեպքում, յերբ կոմպլեմենտար բարիքն անփոխարինելի է և առանձին չի կարող գործածադրվել (որինակ՝ լարերն ու ջութակը, ելեկտրալապտերն ու պատրոնը), յուրաքանչյուր իր առանձին վերցրած նույն արժեքն ունի, ինչ վոր ամբողջ խումբը։ Մյուս դեպքերի համար Բյոմը դուրս է բերում մի շատ բարդ յեղանակ, վորով յուրաքանչյուր առանձին իրին վերագրում է, հաշվակցնում է արժեքի այն մասը, վոր կհասնի այն իրին։

3. Արտադրողական բարիքների (պարզ ասած՝ արտադրության միջոցների) արժեքները։ Որինակի համար վերցնենք մանածագործական հաստոցը։ Վերջինս անմիջապես չի կարելի սպառել։

Սպառել կարելի է այն հագուստը միայն, վորը կարված կլինի այս հաստոցի վրա պատրաստած գործվածքից։ Հաստոցից զրկվելը գյուղացու համար կարող է համազոր լինել հագուստից զրկվելուն։ Նախընթաց դատողություններից չվելով՝ Բյոմը հարկադրված է այն յեզրակացության գալու, թե հաստոցի սուբյեկտիվ արժեքը վորոշվում է հագուստի սուբյեկտիվ արժեքով։ Ուրիշ խոսքով ասած՝ **արտադրողական բարիքների սուբյեկտիվ արժեքը վորոշվում է արդյունքի սուբյեկտիվ արժեքով։ Բյոմը բանվորական ուժը էլ է դասում արտադրողական բարիքների (կոմպլեմենտար արտադրողական բարիքների) շարքում։**

§ 25. ՕԲՅԵԿՏԻՎ ԱՐԺԵՔԻ ԹԵՈՐԻԱՆ.

Այս բոլոր դատողությունները, յեթե սրանք հավակնություն չունենային անհետագիտական թեորիայի հետ վորևե առընչություն ունենալու, յեթե, որինակ, Բյոմն այս դատողությունները վերա-

պահեր իր միայնակ գաղութաբնակի համար, թութակների բլբլոցի փոխարեն,—թերևս վորոշ նշանակություն կունենային դեռ։ Բայց Բյոմի աչքում այս դատողություններն օբյեկտիվ արժեքի թեորիայի հիմքն են անտեսագիտական իմաստով, այսինքն Բյոմը հավակնում է իր սուբյեկտիվ արժեքի ոգնությամբ բանալի գտնելու շուկայի յերևույթների համար։ Հասկանալի չէ, վոր այս բանը բոլորովին չի հաջողվում նրան։

Ամենից առաջ Բյոմը հավատում է, թե փոխանակությունը հնարավոր է այն ժամանակ միայն, յերբ յերկու կողմերը միակերպ չեն գնահատում փոխանակելի բարիքները։ Որինակ, ասենք թե Ա-ն սեղան ունի, իսկ Բ-ն՝ կոշիկներ։ Նրանք կարող են իրար հետ իրենց «բարիքները» փոխանակել այն դեպքում միայն, յեթե Ա-ն կոշիկներն ավելի չէ գնահատում, քան սեղանը, և Բ-ն էլ՝ սեղանն ավելի, քան կոշիկները։

Յեթե Ա-ի աչքում սեղանն ու կոշիկները նույնը լինելին, նա չեր փոխանակիլ։ Ընդհակառակը, Բ-ն միայն այն պատճառով խոխանակություն կատարեց, վոր նրա աչքում սեղանը կոշիկներից կարևոր եր։

Այստեղ Բյոմը միանգամից դուրս է շպրտում իր թեորիայի վոտների տակից այն հիմքն, առանց վորի ընդհանրապես վոչինչ չի կարելի հասկանալ շուկայում կատարվածից։ Փոխանակողի առաջին հոգսն այն է, վոր իրեն համար պարզե, թե իրենից պահանջածն արդյոք արժե՞ իր ստացածին, այսինքն փոխանակվող իրերի արժեքների մեջև թեկուզ մոտավոր հավասարություն կա՞ արդյոք, թե՞ վոչ։ Պարզ է, վոր այս հավասարությունը չի կարող հիմնված լինել սպառողական արժեքների վրա, վորոնց հավասարությունն ընդհանրապես անհնարին է։ Բյոմը հարկադրված է լինում հրաժարվելու այս հիմքից, այսինքն այն իրողությունից, վոր փոխանակությունը ձգտում է հավասարության մի վորոշ գծի հասնելու, քանի վոր նա նպատակ է դրել իր օբյեկտիվ արժեքը բղխեցնել սուբյեկտիվ արժեքից։

Այս պատճառով Բյոմն ասում է, թե ցյուբական բարիքների օբյեկտիվ արժեքը վոչ այլ ինչ է, բայց յեթե բոլոր առանձին սուբյեկտիվ գնահատությունների համազդակը, ինչպես վոր մարմնի իրական շարժման գիծը մարմնի վրա ներգործող բոլոր ուժերի համազդակն (равнодействующая) է։

Բյոմը վերջնական հաշվում օբյեկտիվ արժեքը վերածում է գնի։ *Գնի կազմության* (ценообразование) *մեխանիզմը նա նկարում է այս կերպ։* **Շուկա դիմող գնորդներին ու վաճառողներին նա դասակարգում է ըստ փոխանակունակության** (обменоспособность) **աստիճանների։** *Գնողն այնքան ավելի փոխանակունակ է, վորքան ավելի բարձր է գնահատում այն առարկան, վոր ցանկանում է գնել։ Յեթե, որինակ, Ա-ն պատրաստ է ձիու փոխարեն վճարել 100 ռուբլի (Բյոմի կարծիքով այս նշանակում է, վոր Ա-ի աչքում ձիու սուբյեկտիվ արժեքն ավելի բարձր է, քան 100 ռուբլու սուբյեկտիվ արժեքը), իսկ Բ-ն պատրաստ է ձիու տեղակ տալու 50 ռուբլի միայն, ապա այս նշանակում է, վոր Ա-ն ավելի փոխանակունակ է, քան Բ-ն։ Վաճառողներին գալով՝ միանգամայն հակառակն է լինում։ Վաճառողն այնքան ավելի փոխանակունակ է, վորքան ավելի ցած է գնահատում իր ապրանքը։ Այնուհետև Բյոմը շուկա դիմող բազմությունն էլ բաժանում է յերկու կարգի—հաղթողներ ու հաղթվողներ։ Հաղթողը նա յե, ում հաջողվել է գործարք կատարել (գնել կամ ծախել)․ հաղթվածը նա յե, ում հաղթել են մրցակիցները և վորը շուկայից վերադառնում է առանց գործարք կատարելու։*

Շուկայում հնարավոր է 4 դեպք։

ԳՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՉՈՐՍ ԴԵՊՔԸ։

Առաջին դեպք։ **Մեկ գնող կա ու մեկ վաճառող։** *Այստեղ մրցում չկա,* **յեվ գինը պետք է կանգնե, սահմանվի գնողի գնահատության (մաքսիմում) ու վաճառողի գնահատության (մինիմում) միջեվ։** *Որինակ՝ գնողը պատրաստ է ձիու փոխարեն վճարելու 400 ռուբլուց վոչ ավելի։ Վաճառողը պատրաստ է ձին ծախելու 300 ռուբլուց վոչ պակաս գնով։ Իրար հետ սակարկելով՝ նրանք գինը սահմանում են 300-ի և 400-ի միջև։ Յերկրորդ դեպք։* **Մեկ ծախվող ապրանքի համար շատ գնողներ կան։** *Գնողները մրցում են իրար հետ։ Պարզ է, վոր միայն մեկ գնող կարող է հաղթող դուրս գալ։ Մյուսները մրցության մեջ կպարտվեն։ Որինակ։ Միևնույն Ա վաճառողը պատրաստ է իր ձին ծախելու 300 ռուբլով, և Ա, Բ, Գ ու Դ գնողներն էլ պատրաստ են գնելու առաջինը՝ 400-ով, յերկրորդը՝ 380-ով, յերրորդը՝ 360-ով ու չորրորդը՝ 350-ով։ Ձին կհասնի Ա գնողին։ Ի՞նչ գնով։ Գինը չի կարող 400 ռուբլուց ավելի լինել, վորովհետև գնողներից վոչ մեկը մտադիր չե այս գումարից ավելի վճարելու, և չի կարող 380-ից էլ ցած լինել, քանի վոր պարտված գնողներից առաջինն, այն է Բ-ն, թույլ չի տալ, վոր գինն այս գումարից ցած իջնի․ սա ձիու փոխարեն կվճարե 380 ռուբլի, միայն թե շուկայից չելնե դատարկ ձեռքով։*

Այսպես, ուրեմն, գնողների միակողմանի մրցման ժամանակ գինը պետք է տատանվի հաղթող գնողի գնահատության ու պարտված գնողներից առաջնի գնահատության միջեվ։ Իհարկե, այս բոլորը լինում է այն պարագայում, յերբ ծախողի գնահատությունը գնողների բոլոր գնահատություններից բարձր չե, վորովհետեվ այս *դեպքում* **վաճառքը չի կարող գլուխ գալ** *ընդհանրապես։*

Յերրորդ դեպք։ Վաճառողների միակողմանի մրցում։ Շուկայում ընդամենը մեկ գնող կա, վորը պատրաստ է ձիու փոխարեն վճարելու 400 ռուբլի և չորս վաճառողներ։

Ա	*պատրաստ է ծախելու*	*300 ռուբլով,*
Բ	» »	*320* »
Գ	» »	*340* »
Դ	» »	*360* »

Բոլոր ձիերը միևնույն վորակի յեն։ Իհարկե, հաղթող դուրս կգա Ա-ն։ Նա իր ձին կծախե։ Ի՞նչ գնով։ Վոչ ավելի եժան, քան ամենացածր գինն էր և վոչ ավելի թանգ, քան հաջորդ ցածր գինն, այսինքն 320 ռուբլուց վոչ թանգ։ Գինը 320 ռուբլուց վեր բարձրացնել թույլ չի տալ Բ-ն, վորը իր ձին կծախե այս գնով, միայն թե յետ չտանե տուն։

Այսպես, ուրեմն, վաճառողների միակողմանի մրցման ժամանակ գինը տատանվում է հաղթողի ամենացածր գնահատության ու հաղթված վաճառողներից առաջնի գնահատության միջեվ։ Իհարկե, այս լինում է այն պարագայում, յերբ գնողի գնահատությունը վաճառողների բոլոր գնահատություններից ցածր չե։

Վերջապես չորրորդ ամենամանվածապատ դեպքը, յերբ միաժամանակ իրար հետ մրցում են թե գնողներն ու թե վաճառողները։

Այս դեպքից գլուխ հանելու համար անհրաժեշտ է **թե գնողներին ու թե վաճառողներին դասավորել նրանց փոխանակունակության կարգով։** *Նշանակում է վաճառողներին պետք է դասա-*

վորենք ամենացածր գներից սկսելով, իսկ գնողներին՝ ամենաբարձր գներից:

Որինակի համար ասենք, թե մենք ունենք մեկ ձիու այսպիսի ծայրահեղ գնահատություններ (դարձյալ հասկացվում է, վոր ձին միևնույն վորակի պետք է լինի):

Գնողներ		Վաճառողներ	
Ա	400	Ը	300
Բ	380	Թ	320
Գ	360	Ժ	340
Դ	340	ԺԱ	360
Ե	320	ԺԲ	380
Զ	310	ԺԳ	400
Է	300	ԺԴ	410

Չմոռանանք, վոր խոսքը վերաբերում է միասնական շուկային, վորտեղ մեկ գին կա: Առաջարկված ձիերից վորքան էլ վոր ծախվի, պետք է ծախված լինի մոտավորապես միևնույն գնով:

Տվյալ դեպքում վո՞րը կլինի այս մեկ գինը:

Սրա համար մեկ-մեկ զննենք վերոգրյալ ցանկի գնահատությունները՝ տեսնելու համար, թե նրանցից վորը կարող է շուկային գին դառնալ:

Սկսենք ամենից շուտ համոզվող վաճառողի գնահատությունից, այն է 300 ռուբլուց: Այս գնով, ինչպես տեսանք, պատրաստ են գնելու բոլոր գնողները: Բայց այս գինը ձեռնտու յե միայն մեկ վաճառողի համար, իսկ վերջինս հիմա այս գնով չի համաձայնվի վաճառել: Տեսնելով, վոր գնողները մրցում են իրար հետ, նա հանդարտ կսկսե ծխել իր ծխամորճը և կսպասե, վոր գինը բարձրանա, վորքան կարելի յե ավելի շատ: Գների այս բարձրացումը, վոր այնքան ցանկալի յե մեր ծխողի համար, կարող է նրա համար յերկու անցանկալի հետևանք ունենալ: Վորքան բարձրանում են գները,

1) այնքան նորանոր վաճառողներ հանդես են գալիս շուկա,
2) այնքան նորանոր գնողներ են անընդհատ դուրս ընկնում հրապարակից:

Մենք վաճառամիջնորդի (маклер) դեր ստանձնենք, գները գոռանք և տեսնենք, թե սրանից ինչ դուրս կգա:

Հայտարարում ենք՝ 300:

Գնողների կողմից բարձրանում է 7 ձեռք, իսկ վաճառողների կողմից՝ մեկ ձեռք, այն է՝ մեր ծխող Ը-ինը:

— 320:

Գնողներից յերկուսը, այն է՝ Զ-ն ու Է-ն տխուր ցած թողին ձեռքերը: Բայց ավելացավ մի վաճառող, այն է՝ Թ-ն: ընդամենը մնաց 4 գնող և 2 վաճառող:

— 340:

Վաճառողների կողմից բարձրանում է մի նոր ձեռք, այն է՝ Ժ-ինը, սրա փոխարեն գնողների շարքում իջնում է Ե-ի ձեռքը: Ընդամենը մնում է 4 գնող, 3 վաճառող:

— 360:

Մի վաճառող ավելանում է (ԺԱ), փոխարենը գնողների թիվը քչանում է մեկով (Դ): Ընդամենը 3 գնող, 4 վաճառող: Բայց այս մի բանի նման չե:

Միայն այն գինն է իրական, յերբ գնողների ու վաճառողների թիվը հավասարվում, նույնանում է: Կարիք չկա աճուրդը շարունակելու: Վորովհետև շարունակելու դեպքում անհավասարությունը կսկսե ավելի ու ավելի մեծանալ. վաճառողները կավելանան, գնողները կպակասեն: Հարկ է լինում վերադառնալ 340 ռուբլանոց գնին, յերբ յուրաքանչյուր վաճառողին մեկ գնող է ընկնում և ամեն մի գնողին՝ մեկ վաճառող:

Շուկա յեկած 7 զույգից մրցման մեջ հաղթեց 3 զույգ, իսկ պարտվեց 4 զույգ: Դ, Ե, Զ, Է գնողները դատարկ ձեռքերով, իսկ ԺԱ, ԺԲ, ԺԳ, ԺԴ վաճառողները չծախված ձիերը հետներն առած՝ տուն են վերադառնում հուսախաբ և իրար նախատում այն բանի համար, վոր միմյանց հանդեպ զիջող չեն յեղել:

Նորից ակնարկ ձգենք մեր աղյուսակի վրա և կտեսնենք, վոր **աղյուսակի առաջին 3 տողում գնողների գնահատությունները բարձր են վաճառողների գնահատություններից: Այսպիսի տողերն անվանենք նորմալ:** 4-րդ տողից սկսվում է «աննորմալությունը» — գնողների գնահատությունները վաճառողների գնահատություններից ցած են: Այսպես, ուրեմն, 3 «նորմալ» տող կա, 3 հաղթած զույգ: Փորձենք նորանոր աղյուսակներ կազմել, հարմարեցնել, և հետևան-

քը միշտ միևնույնը կլինի. **բացի հաս «նորմալ» տող լինի, այնքան հաջողակ գույգեր կլինեն:** *Ինչ վերաբերում է գնին, ապա ավյալ չորրորդ դեպքում, այն է՝* **գնողների ու վաճառողների համաժամանակյա մրցման դեպքում գինը պետք է տատանվի վերջին հաղթած գույգի** *(Բյոմը այս գույգը անվանում է սահմանային)* **գնահատության ու առաջին պարտված գույգի գնահատության միջև**[1]**:**

Այսպես, ուրեմն, սուբյեկտիվ գնահատությունների իրար են շուկայի գին ստացվեց, որը Բյոմի աչքում օբյեկտիվ արժեքը որոշողն է: Բայց այս լոկ տեսողության պատրանք է:

Յեթե մինչև անգամ ընդունենք էլ, որ յուրաքանչյուրի համար ձիու սուբյեկտիվ գնահատություն ստեղծվում է այն ամայի կղզում, որի վրա Բյոմն առանձնացնում է գաղութարնակին հասարակությունից, ապա այս բանն ամենևին չի կարելի ասել փողի սուբյեկտիվ գնահատության մասին: Մարդիկ փողն իրրև շըրջանառության միջոց իրենց ձեռքն են առնում նրա համար, որ հետո հանձնեն ուրիշների ձեռքը:

ՎՈՐՆ Է ՕԲՅԵԿՏԻՎ ԱՐԺԵՔԻ ԹԵՈՐԻԱՅԻ ՍԽԱԼԸ:

Փողի սուբյեկտիվ գնահատությունը սուբյեկտիվ գնահատությունն է այն բանի, որ կարելի չէ ստանալ փողով: Համառ ժի գնողը, որը չցանկացավ իր ձին ծախել 340 ռուբլով, հավանորեն աչքի առաջ ուներ, թե 340 ռուբլով ինչ կարող եր ձեռք բերել: Նա, ասենք թե, այդ ժամանակ տուն եր շինում և տարված եր շինանյութեր գնելու մտքերով: Յեթե շուկայում այնպիսի գներ լինեյին, որ նա կարողանար 340 ռուբլով գնել իրեն հարկավոր բոլոր շինանյութերն ու վրադիր նաև մեկ կով, ապա այս ամբողջ բարիքի սուբյեկտիվ արժեքը նրա աչքում ավելի կլիներ, քան ձիու սուբյեկտիվ արժեքը, և նա դոհունակությամբ այս ձին կծախեր 340 ռուբլով: Ուրիշ խոսքով ասած՝ **փողի սուբյեկտիվ արժեքը կախումն ունի գոյություն ունեցող շուկայի գներից:** *Այնինչ Բյոմն, ընդհակառակը, շուկայում գոյություն ունեցող գներն ուզում է բղխեցնել փողի սուբյեկտիվ արժեքից: Ինչպես վոր ալխիմիկ խարեբաները հալվող արճճի մեջ կամացուկ սլացնում եյին այն վոսկին, վորը նրանք ձգտում եյին ստանալ արճճից, այնպես էլ Բյոմն իր դատողության հիմք է դարձնում շուկայի այն գները, վորոնց ծագումը նա հանձն է առնում բացատրել: Այնուհետև Բյոմի վաճառողները այն վաճառողները չեն, վորոնք կազմում են շուկայի հիմնական հասարակությունը:* **Վաճառողներ գտնելու համար Բյոմը հարկադրված է գնալ գյուղական տոնավաճառ և սրա պուճախներից մեկում գտնել գեղացիների, վորոնք տատանվում են, թե արդյոք իրենց ձիերը ծախեն, թե պահեն դաշտային գործերի համար:**

Շուկայի տիպիկ վաճառողը այն վաճառողն է, վորի աչքում ապրանքի սուբյեկտիվ արժեքը հավասար է զերոյի:

Զիաբուծարանի տերը, վոր ձիեր է ծախում, իր կարիքների համար սովորաբար բավարար չափով ապահովված է լինում ձիերով: Իր ձիերին գներ նշանակելով՝ նա հաշվի չէ առնում շուկայի հանգամանքները և վոչ էլ երբեք այն, թե ձին վոր աստիճան հարկավոր է իրեն—ձիաբույծին: Իսկ յեթե մենք ձիերի փոխարեն վեր առնենք վորևե մասնավական ապրանք, ապա Բյոմի հարցադրման անհեթեթությունն էլ ավելի աչքի կզարկե: Ինչ կասեր նույն գյուղական տոնավաճառում աղի, կուլպի կամ կճուճի առուտուր անող մարդը, յեթե իմանար, թե ամբողջ աշխարհում անուն հանած մի գիտնական տնտեսագետ նրա ապրանքի գները դուրս է բերում այն հանգամանքից, թե այս ապրանքը վորքան հարկավոր բան է իր, այն է՝ գյուղական տոնավաճառում առուտուր անող մարդին:

Այսպես, ուրեմն, Բյոմի ամբողջ չարչարանքը զուր բան է: **Օբյեկտիվ արժեքը վոչ մի կերպ չի կարելի դուրս բերել, բղխեցնել սուբյեկտիվ արժեքից: Շուկայի տարերքը չի յենթարկվում գնողների ու վաճառողների կամքին, այլ ճիշտ կամքն է յենթարկում իրեն: Շուկայի տարերքը իր հերթին յենթարկվում է արտադրության օբյեկտիվ պայմաններին միայն: Յեվ միայն արտադրության պայմաններում պետք է վորոնել գների հիմնական կարգավորիչը:**

[1] *Ավելի ճիշտ կլինի ասել հետևյալը. գնի մաքսիմումը կատանվի ծայրահասահմանային գնողի ու առաջին պարտված վաճառողի գնահատությունների միջև (մեր որինակի մեջ Գ ու ԺԱ.): Գնի մինիմումը կատանվի ծայրահասահմանային վաճառողի ու առաջին պարտված գնողի գնահատությունների միջև (մեր որինակի մեջ Ժ ու Դ).*

ԲՅՈՄ-ԲԱՎԵՐԿԻ ՄԵԹՈԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

Ընկ. Բուխարինը մատնանշում է Բյոմի մեթոդների հետևյալ թերությունները. 1. **Օբյեկտիվ, հաճույքից մերձեցման փոխարեն սուբյեկտիվ, անհատական մերձեցում։** *Անհատն առնվում է ոչ այն հանրակողմանի կախման մեջ, որ ունի հասարակությունից, այլ իբրև մի ինչ-որ կատարյալ բան, որ ինքնուրույն և ինքնարավ։ Մինչև անգամ լեգենդային Ռոբինզոնը միայն այն պատճառով չէր նչացավ, որ նրա մոտ կային հասարակության ստեղծած արտադրության միջոցներ, որ նա փրկել, վերցրել էր խորտակված նավից։ Իսկ Բյոմի անտեսարար (хозяйствующий) սուբյեկտները վերցվում են հասարակությունից միանգամայն մեկուսացած վիճակում։*

2. **Ոչ-պատմական մերձեցում։** *Թե փոխանակությունն ու թե կապիտալիստական հարաբերությունները քննվում են, իբրև մի ինչ-որ մշտնջենական ու անփոփոխ բան։ Այս պատճառով էլ ապրանքի արժեքը բղխում է ոչ թե հանրային հարաբերություններից, այլ ապրանքի բնական հատկություններից։*

3. **Արտադրական ու վերարտադրական** (воспроизводственный) **տեսակետի փոխարեն, որը անհրաժեշտ է տնտեսական յերևույթները ըմբռնելու համար, հրապարակ է հանված զուտ սպառողական տեսակետ։** *Ոչ թե արտադրության պայմանները, այլ սպառման պայմանները են փոխանակության պայմանները թելադրողը։ Արժեքի իր թեորիայի մեջ Բյոմը հիմք է դարձնում մի արդյունք, որը պատրաստի ընկել է յերկնքից, և որի տերը մնաք է անում, թե արդյոք հվաժարվի իր այս սեփականությունից, թե՞ ինքն սպառի այն։*

Այս պատճառով միանգամայն իրավացի է ընկ. Բուխարինը, որը Բյոմի թեորիան անվանել է «ռանտյեի բաղաքատնտեսություն», այսինքն այնպիսի կապիտալիստի քաղաքատնտեսություն, որն ապրում է իր կապիտալի տոկոսներով, և որին միակերպ խորթ են թե արտադրությունն ու թե շրջանառությունը՝ այս բառի լայն իմաստով։ Ուստի զարմանալի չէ, յեթե քաղաքատնտեսության ավստրիական կամ հոգեբանական դպրոցը զարգանում է հենց այն ժամանակ, յերբ ռանտյեն դառնում է ամենատիպիկ կապիտալիստական դեմքը և յերբ, ինչպես հետո կտեսնենք, հին կապիտալիզմի յերկրները մյուս յերկրների նկատմամբ ռանտյեի դրության մեջ են ընկնում։

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ.

ՅՈՐ ԲՈՐԴ ՀԱՏՎԱԾ.

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ.

ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԸ.

(Հավելյալ արժեքի արտադրությունը ու կապիտալի արտադրությունը).

Փոխանակության հիմնական որենքն, արժեքի որենքը պարզելուց հետո մենք կարող ենք վերադառնալ մեր ուսումնասիրության հիմնական առարկային—կապիտալիստական հարաբերություններին և տեսնել, թե փոխանակության որենքներն ինչպես են ներգործում այստեղ։

Այս գլխի նպատակն է պարզաբանել,

1. թե արժեքի որենքի հիման վրա ինչպես և առաջ գալիս կապիտալիստական շահագործումը, և

2. ինչ բան է կապիտալն, ինչ կազմություն ու շրջապտույտ (кругооборот) ունի։

Սրա համար մենք պարզաբանում ենք՝ ա. թե ինչ բան է բանվորական ուժը և ինչպես է ապրանք դառնում, ու բ. թե բանվորական ուժի՝ ապրանք դառնալու շնորհիվ ինչպես է արտադրողի ստեղծած արժեքը արտհվում յերկու մասի—բանվորական ուժի արժեքի ու հավելյալ արժեքի։

§ 26. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՈՐԵՆՔՆ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ.

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԸՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ։

Մանենք կապիտալիստական գործարանը։ Արդյոք գործարանը սարքավորված և տեխնիկայի վերջին խոսքի համաձայն, թե բանում և անդրջրհեղեղյան յեղանակներով, այնտեղ բանվորները քրտնում են 8 թե 16 ժամ, արդյոք նրանք այնտեղ տնվում են սեյղոկալի

գլխով թե 3 տեսակից ճաշ են ուտում,—մի բան անկասկածելի չե, այն, որ գործարանում վոչ մի փոքր պատառակ անգամ, վոչ մի կտոր հումք չի պատկանում բանվորներին։ Տվյալ գործարանը կազմող արտադրության բոլոր միջոցների սեփականատերը հանգիստ նստում և իր փափուկ առանձնասենյակում և հեռախոսի փողակը ձեռքին քարե կարկուտ կամ անուշ որ և բերում իր գործարանի գլխին, չեթե միայն գործարանը վաղուց արդեն չի անցել բաժնետիրական ընկերության ձեռքը։ Հիմա չեթե անմիջական արտադրողը մի բան ծախում և շուկայում, համենայն դեպս այս այն ապրանքը չե, որում կուտակված և իր աշխատանքը։ Շուկայում գլխավոր վաճառողներն ու գնողները կապիտալիստներն են։ Մենակ սպառման ամենալավ միջոցները չեն, որ բաժին են ընկնում կապիտալիստներին։ Սրանց ֆաբրիկաներն ու գործարանները կլանում են ամբողջ ածուխն ու յերկաթն, ամբողջ բամբակն ու բուրդը, մի խոսքով՝ արտադրության բոլոր միջոցները, վորոնք կազմում են շուկայում ծախվող ապրանքների գլխավոր մասսան, կլանում են, վոր բազմաքանակ նորանոր ապրանքների կերպարանքով նորից շուկա դուրս նետեն։

Յեթե անմիջական արտադրողը բոլորովին վտարված և արտադրության միջոցների շուկայից, յեթե սպառման միջոցների շուկայում նա վոչինչ չի ծախում այլևս, այլ լոկ գնում և այն բոլորն, ինչ վատ բան վոր կա այն շուկայում, ապա արդյոք այս արտադրողի աշխատանքը, վոր բյուրեղացած և ապրանքների մեջ, շարունակում և արտադրության կարգավորիչը լինել։ Արդյոք աշխատանքային արժեքի որենքը պահպանում և իր ուժն այնտեղ, վորտեղ աշխատանքը վոչ միայն աշխարհի տերը չե, այլ մինչև անգամ շուկայի յել տիրականը չե։

Պետք և ըրական պատասխան տալ։ Այո։

ԱՐԺԵՔԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ։

Կապիտալիստը շուկայի կազմակերպիչը չի ամենևին, այլ միայն իր ձեռնարկության (թեև այս ել միայն անունով և)։ Շուկայում կապիտալիզմի ժամանակ, ինչպես վոր եր պարզ ապրանքային հասարակության մեջ ել, շարունակում և թագավորել տարերքը[1]։

Կապիտալիստական հասարակության մեջ շուկան ընդհանրապես տերեր չի ճանաչում։ Շուկան ինքն և փոխանակային հասարակության տերը։ Շուկան կարող և միայն սպասավորներ ունենալ։ Հասպ ռվքեր են շուկայի սպասավորները։

Համենայն դեպս կապիտալիստները չեն, վորոնք սպիտակ ձեռքեր ունեն և հղկած-սարքած յեղունգներ։ Կապիտալիզմի ժամանակ ել շուկայի իսկական սպասավորն անմիջական արտադրողն և։ Վոչինչ, վոր նա կապիտալիստական հասարակության լեզվով կոչվում և վարձու բանվոր։ Շուկայի համար նա, իբրև արտադրող, շարունակում և լինել արտադրող կոլլեկտիվի լիիրավ (полноправный) անդամ, վորովհետև նա և միայն նա չե, վորի շնորհիվ շուկան սնվում և ապրանքներով։

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԵՆ։ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՍՊԱՌՈՒՄԸ։

Արտադրության ճանապարհին ապրանքի ածած ամեն մի քայլը մի կում (глоток) կենդանի աշխատանք և։ Ճիշտ և, վորքան ավելի չե զարգացած տեխնիկան, աշխատանքն այնքան ավելի զարտուղի ճանապարհ և ընտրում ապրանքներ արտադրելու համար։ Փոխանակ աշխատանքն ուղղակի հացահատիկը կալսելու վրա գործադրելու, նախ աշխատանքը գործադրում են կալսիչներ ու ելեկտրաշարժիչներ արտադրելու վրա։ Գութաններ գործ ելուց առաջ արտադրում են գութագործ մեքենաներ։ Սպառման միջոցների արտադրվելուց առաջ արտադրվում են արտադրության միջոցները—շենքերը, մեքենաները, հումքն, ժամանակ նյութեղենները։ Բայց այդ «զարտուղի ճանապարհները» չեն խախտում արժեքի որենքը։ Արտադրության միջոցները ճիշտ նույնպիսի ապրանքներ են, ինչպիսիք վոր են սպառման միջոցներն ել։ Արտադրության միջոցներն ել պետք և իրենց շուկային փոխանակային հարաբերություններով արտահայտեն իրենց արտադրողների հանդեպ հարաբերությունները։ Արտադրության միջոցներն ել համաչափելի չեն դառնում շնորհիվ այն հանգամանքի, վոր նրանց մեջ հանդորեն-անհրաժեշտ միջին աշխատանք է կուտակված։ **Արտադրության միջոցներն ել են սպառվում։ Նրանք սպառվում են արտադրողաբար։ Այս պարագայի շնորհիվ արտադրության միջոցների արժեքը չի չքանում սպառման ժամանակ, այլ փոխանցվում է այն արդյունքին, վորը պատրաստվում է արտադրության միջոցներից ու սրանց միջոցով։**

ԱՐԺԵՔԻ ՓՈԽԱՆՑՎԵԼՆ ՈՒ ՍՏԵՂԾՎԵԼԸ։

Բրդի արժեքն ստեղծվել է այն գյուղացու աշխատանքի շնորհիվ, վոր վոչխար և բուծել և խուզել նրա բուրդը։ Մանողը մանվածքին և փոխանցում բրդի, ժամանակ նյութեղենների (ածխի, քսելու յուղի, ներկերի ու այլ իրերի) արժեքը և շենքի

[1] Սինդիկատներն ու տրեստները բանը չեն փոխում։ Յեթե միավորության ներսից վտարված և մրցումն, ապա ել ավելի կատաղորեն են մրցում իրար հետ միավորությունները։

ու մանող մեքենայի արժեքից համապատասխան մի մաս[1]: Հումքի, ոժանդակ նյութեղենների ու մեքենայի մեջ կուտակված մեռյալ աշխատանքին մանողը միացնում է իր կենդանի աշխատանքը: Հին արժեքին միացնում է նորը: Այսպիսով մանվածքի արժեքն ստեղծված է լինում այն աշխատանքի գումարով, որը գործադրված է մի կողմից բուրդ, ոժանդակ նյութեղենները ու մեքենաները արտադրելու վրա և մյուս կողմից՝ մանելու վրա: Մանածագործը մանվածքը իր հաստոցի վրա գործվածք դարձնելով, գործվածքին և փոխանցում մանվածքի արժեքն ու հաստոցի արժեքի մի մասը՝ իր աշխատանքով նոր արժեք ավելացնելով: Նույն բանն է լինում, երբ գործվածքն ընկնում է դերձակի ձեռքը, որը նրանից շոր է կարում: Այսպիսով **կապիտալն ամենից առաջ արժեքների մի գումար է**[2]: Կապիտալի տարրերն այն չափով են կապիտալի տարրեր, որչափով որ նրանց մեջ աշխատանք է կուտակված: Յեթե այն պատրանքն է առաջ գալիս, թե արտադրությունը կարգավորողը կապիտալն է, ապա այս հենց այն պատճառով է լինում, որ հանրային աշխատանքի խախինեերը (сгустки) կապիտալի ձև են ընդունել: Պարզ է, որ կապիտալիզմի ժամանակ աշխատանքային արժեքը շարունակում է արտադրության կարգավորիչը լինել: Ավելին. ինչպես ներքևում կտեսնենք, միայն կապիտալիզմի ժամանակ է, որ աշխատանքային արժեքի որենքն ու սրան հատուկ հակասականությունը հարկ չեղած շարժումն ու զարգացումն են ունենում:

§ 27. ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՐԺԵՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՒ ՀԱՎԵԼՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԸ:

Վոչ մի շահագործող չի կարող շահագործվողից խլել սրա ամբողջ բանվորական որը: Շահագործումը բանվորական որը կարատելով բաժանում է յերկու մասի—**անհրաժեշտ** ու **հավելյալ**: Անհրաժեշտ ժամանակի ընթացքում արտադրողը ծառայում է իրեն, արտադրում է **արդյունքի անհրաժեշտ** մաս, վորն ուղղակի կամ **թե փոխանակվելուց հետո** տալիս է այն ամենն,

[1] Յեթե, որինակ, մանող մեքենան բանելու հենց սկզբից մինչև իր լուծվելը մաշվելը կարող է 200.000 փութ մանվածք պատրաստել, ապա մանվածքի յուրաքանչյուր փթի մեջ մտնում է մեքենայի արժեքի $^1/_{200,000}$ մասը:

[2] Այս խոսքերը չպետք է կապիտալը վորոշում ընդունել: Յերբ մենք խոսում ենք, թե գալն ամենից առաջ կաթնասուն է, այս ճիշտ է, բայց գալը վորոշումը չէ այս:

ինչ անհրաժեշտ է նրա բանվորական ուժի վերարտադրության համար: Հավելյալ ժամանակի ընթացքում նա ծառայում է իր տիրոջը, սրա համար հավելյալ արդյունք է արտադրում անկախ այն բանից, թե նրա տիրոջ անունն ստրկատեր եր, ֆեոդալ թե կապիտալիստ:

Ստրկատիրական հասարակության մեջ արտադրողներին շահագործելու յեղանակը հասարակ ու պարզորոշ եր: Մտրակին զոռով՝ նա հարկադրում եր, վոր ստրուկն աշխատե նրա փոխարեն: Տերը խլում եր ստրկի աշխատանքի արդյունքը և նրան միայն այն եր թողնում, ինչ անհրաժեշտ եր նրա կյանքը պահպանելու համար. ուրիշ խոսքով ասած՝ ստրկատերն **անմիջական բռնագործությամբ** ստրկից խլում եր հավելյալ արդյունքը՝ նրան թողնելով անհրաժեշտ արդյունքը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՒ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔԸ:

Թվում եր թե փոխանակային հասարակության պայմաններում տեղ չպետք է ունենար այն յերևույթը, յերբ արտադրողների մի մասը սիստեմատիկ շահագործում է մյուս մասին և մանավանդ յերբ անարտադրող տարրերը շահագործում են արտադրողներին, տեղ չպետք է ունենար, վորովհետև տերերի ու ստրուկների հարաբերության փոխարեն մենք այստեղ տեսնում ենք լոկ առուծախի հարաբերություններ, շուկային հավասարության հարաբերություններ: **Փոխանակային հարաբերությունները չեն ջնջում շահագործումը, այլ ավելի սրեցնում:**

Փոխանակային հարաբերությունները չվերացրին հասարակության դասակարգային բաժանումն, այլ սրեցին դասակարգային հակասությունները: Շուկան վոչ միայն ոժանդակում է հասարակության մեջ կատարվող նյութերի փոխանակությանն, այլ և այս բանն անում է հատկապես այնպես, վոր ել ավելի սուր ու ցայտուն է յերևան գալիս դասակարգային կազմությունը հասարակության, վորը բաժանվում է արտադրողների ու շահագործողների: Շուկան, վոր վոչ մի ռասային և դասային արտոնություններ չի ճանաչում, շուկան, վոր չի հարցնում «ով ես», այլ թե «ինչ ու ինչքան ես բերել»,—հենց այս շուկան ինչպես է դասակարգային սիստեմատիկ շահագործման միջոց լինում: Շուկային հարաբերությունների մեջ ինչպիսի մեխանիզմ է թագնված, վոր բանվոր դասակարգին հարկադրում է շահագործող դասակարգերին—կապիտալիստներին ու հողատերերին տալու իրենց աշխատանքի ամբողջ արդյունքը և սրա փոխարեն ստանալու այնքան

միայն, վորչափ հարկավոր է աշխատունակությունը պահպանելու համար:

Այնինչ նրանից հետո, յերբ այս մերկացրեց Մարքսն, այս գաղտնիքը շատ պարզ է: **Փոխանակային հատասություններ հավելյալ արդյունքի յուրացման նոր յեղանակ են ստեղծում:**

Բանի էությունն այս է.

Փոխանակային հասարակության մեջ բոլորը գնող են: Բայց գնումը փող է պահանջում: Փող կարելի չէ ճարել միայն վաճառքի միջոցով[1]: Հետևաբար փոխանակային հասարակության մեջ բոլորը պետք է և՛ վաճառողներ լինեն: Սակայն մի բան ծախելու համար հարկավոր է կամ արտադրել և կամ թե ուրիշի արդյունքը յուրացնել: **Արտադրելու համար հարկավոր են արտադրության միջոցներ:** Արտադրության միջոցներն ամբողջ կոլլեկտիվի գույության բաղխն է, վորը մինչսոցիալիստական հասարակության մեջ գտնվում է կոլլեկտիվի միայն մեկ մասի տրամադրության տակ: Իսկ ի՞նչ կարող է ծախել հասարակության այն անգամը, վորը վոչ արտադրության միջոցներ ու վոչ էլ իբրեվ մակաբույծ ապրելու ընդունակություն ունի: Նրան մի բան է մնում. վաճառի առարկա, ապրանք դարձնել իր աշխատունակությունը, իր բանվորական ուժը:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԸՆ ԱՊՐԱՆՔ:

Բանվորական ուժը վաճառող դառնալու համար արտադրողը պետք է յերկու տեսակ ազատություն ունենա. նա նախ պետք է ազատ լինի ստրկային և ճորտային կախումից, պետք էինքը լինի իր սեփական բանվորական ուժի տերը: Ահա թե ինչու կապիտալիզմի լայն զարգացումն ու ճորտային իրավունքը կամ ստրկությունը անհամատեղելի չեն:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ:

Յերկրորդ՝ բանվորական ուժ վաճառող դառնալու համար արտադրողը պետք է ազատ լինի արտադրության միջոցներ ունենալուց: Վորովհետև նա յեթե արտադրության միջոցները ունենա, իր բանվորական ուժը չի ծախի, այլ այն կբանեցնի սեփական արտադրության մեջ: Հետո, սկզբնական կուտակմանը նվիրած գլխում կտեսնենք, թե կապիտալիզմի այժմյան յերկրներում ինչ միջոցներով հասան այն վիճակին, վոր **աշխատավոր մասսաներն արտադրության միջոցներից ազատազրվեցին:**

[1] *Վոսկի փնտռողներին (золотоискатель), վորոնք փող ճարում են անմիջապես աշխատանքով, մենք մի կողմ ենք թողնում:*

Այսպես, ուրեմն, **կապիտալիզմի առաջին ու գլխավոր հիմքը բանվորական ուժի ապրանք դառնալն է:**

Ապրանքը պետք է ունենա սպառողական և փոխանակային արժեք: Հետևաբար մեր առջև յերկու հարց կա.

1. վո՞րն է «բանվորական ուժ» կոչվող ապրանքի սպառողական արժեքն ու

2. այս ապրանքի արժեքն ինչո՞վ է վորոշվում:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ:

Առաջին հարցին պատասխանելու համար նայենք, թե բանվորական ուժ գնողն ինչպես և գործադրում այն: Նա վաճառողին հարկադրում է, վոր սա իր բանվորական ուժը բանեցնեն, սպառե աշխատանքի պրոցեսում: **Աշխատանք—ահա բանվորական ուժի սպառողական արժեքի անունը:** Տվյալ դեպքում աշխատանքը հանդես չի գալիս յուղ, չիթ կամ ավտոմոբիլներ ստեղծող կոնկրետ կողմով: Մարդուժն ինքը չեր հագնում այն չթերը, վոր պատրաստվում էին նրա գործարաններում: Ծորդը թեև յերբեմն ման և գալիս սեփական արտադրության ավտոմոբիլով, համենայն դեպս 1926 թվականին շատ մտահոգված եր, վոր իր ավտոմոբիլները չելին վաճառահանվում: Բանվորական ուժ գնողին չեն հետաքրքրում արդյունքներն, իրրև այսպիսիք: **Այստեղ հանդես է գալիս աշխատանքն, իրրև փոխանակային հասարակության աշխատանքային էներգիայի ընդհանուր ավազանից բղխող մի առավակ, հանդես է գալիս աբստրակտ աշխատանքը, վորն արժեք ստեղծողն է:** Նոր արժեք ստանալ այն արժեքի փոխարեն, վոր ծախված է յեղել բանվորական ուժ գնելու վրա,—ահա կապիտալիստի իսկական նպատակը: Հասկանալի չե, անհրաժեշտ է, վոր նոր արժեքն առաջվա արժեքից շատ լինի: Այլապես խաղը կորցնում է իր իմաստը:

Անցնենք մյուս հարցին. ինչո՞վ է վորոշվում բանվորական ուժի արժեքը: Վո՞րտեղ է արտադրվում բանվորական ուժը: Բանվորի օրգանիզմի մեջ: Իր բանվորական ուժի արտադրման համար ի՞նչ է անում բանվորը: Նա գործ է ածում ուտելիք ու խմելիք, հագուստ, բնակարան, հանգստանում է, զվարճանում է և այլն: Բայց այս դեռ քիչ է. նա հաց ու ջուր է տալիս վոչ միայն իրեն, այլ և իր ընտանիքին՝ այսպիսով բանվորական ուժ ստեղծելով վոչ միայն այսորվա, այլ և ապագայի համար:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ԱՐԺԵՔԸ:

Այժմ պարզ է, թե ինչից է գոյանում բանվորական ուժի արժեքը: Այն, ինչ վոր բանվորն ու սրա ընտանիքն սպառում են, յերկրքից քից չի ընկնում: Ուտելիքը, հագուստը և այլն արտադրվում են:

Սրանց վրա աշխատանք է թափվում։ Մի խոսքով՝ բանվորի ու սրա ընտանիքի բանեցրած սպառման միջոցներն արժեք ունեն։ Արդյոք բանվորի ու սրա ընտանիքի գործածած սպառման միջոցների արժեքներն անվերադարձ կորչո՞ւմ են։ Վա՛չ։ Վորչափով վոր սպառումը բանվորական ուժ է ստեղծում, սպառածի արժեքը փոխանցվում է բանվորական ուժից ճիշտ այնպես, ինչպես մանածագործարանում ծախսված ածխի կամ քսելու յուղի արժեքը փոխանցվում է գործվածքին։

Այսպես, ուրեմն, բանվորական ուժի արժեքը հավասար է բանվորի ու սրա ընտանիքի ապրուստի միջոցների արժեքին։

Մենք արդեն գիտենք, վոր կապիտալիստական շահագործումը, մյուս բոլոր սիստեմատիկ շահագործումների նման, արդյունքը բաժանում է անհրաժեշտ ու հավելյալ մասերի։ Ի՞նչ բան է անհրաժեշտ արդյունքը։—Դա արտադրողի ապրուստի միջոցներն են, այն արտադրողի, վորը սիստեմատիկ շահագործման է ենթարկվում։ Ուրեմն մենք կարող ենք ասել, թե **բանվորական ուժի արժեքն անհրաժեշտ արդյունքի արժեքն է։**

Հիմա, յերբ մենք արդեն գիտենք, թե ինչ են բանվորական ուժի սպառողական արժեքն ու արժեքը, մեզ այլևս դժվար չի լինել հասկանալ, թե կապիտալիստական շահագործման եությունը վորն է։

Կապիտալիստը ի՞նչ է վճարում։

— Բանվորական ուժի արժեքը կամ, վոր նույնն է, անհրաժեշտ արդյունքի արժեքը։

Կապիտալիստը ի՞նչ է ստանում։

— Ամբողջ արդյունքի արժեքը։

Ե՞նա ի՞նչ է շահում։

— Հավելյալ արդյունքի արժեքը կամ հավելյալ արժեքը։

Այսպես, ուրեմն, կապիտալիստական շահագործման եությունն այն է, վոր կապիտալիստը բանվորական ուժը գնելով և անհրաժեշտ արդյունքի արժեքը վճարելով՝ յուրացնում է հավելյալ արժեքը, այսինքն հավելյալ արդյունքի արժեքը։

Որինակի համար վերցնենք յերկաթագործ բանվորին։ Ասենք թե նրա բանվորական ուժի արժեքը հավասար է որական 2 ռուբլու։ Յենթադրենք թե 10-ժամյա բանվորական որվա ընթացքում 3 ռ. 50 կոպեկի յերկաթ բանեցնելով և հատոցն ու արտադրության միջոցները 50 կոպեկի չափ մաշելով՝ 200 հատ 4 կոպեկանոց մանեկ (гайка) է պատրաստում։ Ընդամենը նրա

արդյունքն արժե 8 ռուբլի։ Արանից հանելով արտադրության միջոցների արժեքը՝ նա մեկ որվա ընթացքում 4 ռուբլու նոր արժեք է ստեղծել։ Այս նորաստեղծ չորս ռուբլի արժեքը տրոհվում է յերկու մասի. 2 ռուբլին բռնում է այն փողի տեղը, վոր վում է յերկու մասի. 2 ռուբլին կապիտալիստը վճարել է իբրև բանվորական ուժի արժեք, իսկ 2 ռուբլին կապիտալիստին բաժին է ընկնում միանգամայն ձրի, կապիտալիստական շահագործման հետևանքով։ Այս վերջին յերկու ռուբլին է հենց հավելյալ արժեքը։

Այսպիսով հավելյալ արժեքը կարելի չե ճանաչել այսպես վորոշել՝ ասելով, թե հավելյալ արժեքը բանվորի նոր ստեղծած արժեքի ու նրա բանվորական ուժի արժեքի տարբերությունն է։

Բանվորի, իբրև արտադրական կոլլեկտիվի անդամի, աշխատանքով ստեղծվող արժեքը միանուլլ է։ Բայց շնորհիվ այն հանգամանքի, վոր բանվորական ուժն աշխատանքի պրոցեսից առաջ վաճառվել է կապիտալիստին, ուստի բանվորի աշխատանքով նոր ստեղծված արժեքը բաժանվում է յերկու մասի։ Մի մասը գնում է բանվորական ուժի արժեքի տեղը բռնելու, մյուսը հավելյալ արժեքն է, վորը յուրացնում է կապիտալիստը ձրի։

Մեր որինակի մեջ յերկու մասն իրար հավասար են։

Ընդամին յերկու մասի չե բաժանվում այն ժամանակն էլ, վորի ընթացքում բանել է բանվորը։ Այն տրոհվում է անհրաժեշտ ժամանակի ու հավելյալ ժամանակի։

ԻՆՉ ՅԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ՅԵ ՏՐՈՀՎՈՒՄ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ։

Անհրաժեշտ ժամանակի ընթացքում բանվորը վերարտադրում է իր ամբողջ բանվորական ուժի արժեքն, ուրեմն վերջին հաշվով աշխատում է իր համար։ Հավելյալ ժամանակի ընթացքում նա ձրի աշխատում է կապիտալիստի համար։ Յեթե մեր որինակի մեջ արժեքը տրոհվում եր 1 ու 1 հարաբերությամբ, ապա նույն այս հարաբերությամբ տրոհվում եր բանվորական ժամանակն էլ. սրա 5 ժամը կազմում եր անհրաժեշտ ժամանակ ու 5 ժամն էլ՝ հավելյալ ժամանակ։

Յերբ մենք ասում ենք, թե մեր որինակում բանվորը իր համար աշխատում եր 5 ժամ, ապա այս չի նշանակում, թե նա իր բանվորական ուժը պետք է վերականգնի հենց այն արդյունքով, վոր ինքն արտադրել է այս 5 ժամում։ Յեթե նա, որինակ, մանեկներ է պատրաստում, ապա այս դեռ չի նշանակում, թե նա կերակրվելու չի մանեկներով։ Բանվորն ինքը չի կարող ար-

տադրել այն բոլորն, ինչ վոր իրեն հարկավոր է[1], բայց սրա փոխարեն նա անհրաժեշտ ժամանակի ընթացքում արտադրում է եկվիվալենտ այն բանի, վոր իրեն հարկավոր է։

Յեթե մեր բանվորի աշխատանքին նայենք ամբողջ հասարակության տեսակետից, ապա կտեսնենք, վոր **հասարակությունը բանվորի պահանջները բավարարելու համար որական գործադրում է 5 ժամ հանրորեն-անհրաժեշտ բանվորական ժամանակ, իսկ բանվորը հասարակության կարիքների համար որական գործադրում է 10 ժամ**, այսինքն նա որական հասարակությանը տալիս է 5 ժամվա հավելյալ աշխատանք, և այս էլ կապիտալիստական հասարակությունների հակասությունների շնորհիվ նրա ձեռքը չի ընկնում, ում հարկավոր էր։ **Հավելյալ աշխատանքը փոխանակ վիճակվելու հասարակության, իբրեվ այդպիսուն, վիճակվում է կապիտալիստների դասակարգին։**

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՈՐՄԱՆ։

Շահագործման նորման վորոշողն այն հարաբերությունն է, վոր ունի հավելյալ բանվորական ժամանակն անհրաժեշտ բանվորական ժամանակի նկատմամբ։

Մեր վերևում բերած որինակի մեջ հավելյալ բանվորական ժամանակը կազմում է անհրաժեշտի 100%-ը, (5՝ հավելյալ, 5՝ անհրաժեշտ), նշանակում է շահագործման նորման հավասար է 100%-ի։

Շահագործման նորման վորոշելու այս յեղանակը կիրառելի չե վոչ միայն կապիտալիստական, այլև ամեն մի ուրիշ սիստեմատիկ շահագործման համար էլ (ստրուկների, ճորտերի շահագործում)։ Բայց կապիտալիստական պայմանները շահագործման նորման վորոշելու համար առանձնահատուկ յեղանակ էլ ունեն, այսինքն այն հարաբերությունը, վոր ունի հավելյալ արժեքը բանվորական ուժի արժեքի նկատմամբ։ Վերևում բերած որինակում հավելյալ արժեքը իր չափերով հավասար էր բանվորական ուժի արժեքին, վորն էլի շահագործման 100%-ի նորմա չե տալիս։

Այսպես, ուրեմն, շահագործման նորման այն հարաբերությունն է, վոր ունի հավելյալ բանվորական ժամանակն անհրաժեշտ բանվորական ժամանակի նկատմամբ կամ թե հավելյալ արժեքը բանվորական ուժի արժեքի նկատմամբ։

[1] Կապիտալիզմի բուն իսկ ծագումը հնարավոր է այն ժամանակ միայն, յերբ աշխատանքի բաժանումը բարձր աստիճանի չե հասել։

§ 28. ԿԱՊԻՏԱԼԸ.

Չի կարելի մենակ բանվորական ուժ գնել։ Բանվորական ուժն ոգտագործելու համար հարկավոր են արտադրության միջոցները—գործիքներ, հումք, ժամանակ նյութեղեններ։

Արտադրության միջոցներն արտադրման պրոցեսում սպառվում են միանգամից կամ թե աստիճանաբար։ Արտադրության միջոցներից վոմանց նյութը փոխանցվում է արդյունքին (հումք)։ Արտադրության միջոցներից մյուսները վոչնչանում կամ մաշվում են՝ առանց իրենց նյութն արդյունքին փոխանցելու (վառելիք, մեքենաներ և այլն)։ Յերշիկի կտորի մեջ մենք առանց դժվարության կարող ենք ճանաչել այն միսը, վորից շինված է այն։ Բայց մենք յերշիկի մեջ վուր կվորոնենք հետքերն այն քսելու յուղի, վորը բանեցրել են յերշիկի գործարանի շարժիչը յուղելու համար։ Սակայն արտադրության միջոցի նյութը փոխանցվում է արդյունքին թե վոչ, միևնույն է, **արտադրության միջոցների արժեքն անպայման փոխանցվում է արդյունքին**[1]։ Արդյոք մենք կարող ենք բանվորական ուժի մասին էլ նույնն ասել։ Յերբեք։ Արդյունքի արժեքն ինչքա՞ն հավասար կլիներ, յեթե բանվորական ուժի արժեքը փոխանցվեր արդյունքին պարզապես։ Վոչ ավելի, վոչ պակաս, քան արտադրության միջոցների արժեքին՝ պլյուս բանվորական ուժի արժեքը։ Այս նշանակում է, թե կապիտալիստը ձիշտ նույնքան արժեք կստանար, վորքան ծախսել էր և վոչ յերբեք ավելի։ Իսկ յեթե տեսնում ենք, վոր բացի վերոհիշյալներից կապիտալիստը դեռ հավելյալ արժեք էլ է ստանում, ապա այս լինում է հենց այն պատճառով, վոր բանվորական ուժի արժեքը պարզապես չի փոխանցվում արդյունքին, այլ փոխարինվում է մի ավելի մեծ արժեքով, վոր իր աշխատանքով բանվորը նոր է ստեղծել։

Այսպիսով կապիտալիստի կողմից գործադրված բոլոր արժեքներն էլ ընդունակ չեն աճելու։ Կապիտալիստը, վոր ծարավի չե իր ձեռքն ընկած հանրային ուժի, այն է՝ արժեքի աճմանը, հարկադրված է գնելու արտադրության միջոցներ, վորոնց արժեքն աճել չի կարող։ Արտադրության միջոցների արժեքը յերեխայի կուլ տված պղնձե կոճակի նման արտադրության պրոցեսից դուրս է գալիս հենց այն վիճակով, ինչպես վոր մտել էր այն պրոցեսի մեջ, վորովհետև արտադրության միջոցների արժեքը լոկ

[1] Յեթե, իհարկե, արտադրության միջոցները խելացի չեն գործադրված։

փոխանցվում է արդյունքին: Ամեն կարող է այն արժեքը միայն, որը կապիտալիստը ծախսել է բանվորական ուժ գնելու համար կամ, ավելի ճիշտ ասած՝ այն արժեքը, որը կապիտալիստին կանխավճարում է բանվորը, որը իր վարձն ստանում է գործից հետո միայն:

ՄՇՏԱԿԱՆ ՈՒ ՓՈՓՈԽԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ:

Կապիտալի մեկ մասը պետք է անփոփոխ մնա, որը մյուս մասը կարողանա ամեն: Այստեղից էլ առաջ է գալիս այն, որ կապիտալը բաժանվում է երկու մասի—մշտական ու փոփոխական կապիտալ: **Կապիտալի մշտական մասը վճարում է արտադրության միջոցների արժեքը: Փոփոխական կապիտալը՝ բանվորական ուժի արժեքը: Մարքսը կարճության համար մշտական կապիտալը ճշտականում է c.** *(Constante)* **տառով, փոփոխականը՝ v.** *(Variable)* **տառով, հավելյալ արժեքը՝ m.** *(Mehrwert)* **տառով:**

Այս բաժանմանը, որին առաջին անգամ հայտնագործել է Մարքսը, կապիտալիստը բոլորովին տեղյակ չէ: Նրա աչքում մեկ ռուբլին նույնքան թանկ է, որքան և մի ուրիշը: Բայց գալը, որը թեկուզ չգիտե էլ, որ իր առումները բաժանվում են երեք տեսակի—կարիչներ, ժանիքներ ու ազորիքներ,—այնուամենայնիվ շատ լավ է բանի գնում իր առումները: Կապիտալիստը չի ուզում գլուխ ցավացնել այն հարցի համար, թե իր ռուբլիներն ինչպես են իրենց մեջ բաժանում իրենց պարտականությունները: Նա գիտե մի բան—որ իր կապիտալն աճում է, և նա անկեղծորեն հավատացած է, թե աճման այս պրոցեսը, որը կապիտալիստի համար ամենից հաճելի պրոցեսն է, կատարում է ամբողջ կապիտալը և որ թե սրա այն մասը միայն, որը նա քոռ կոպեկներով տալիս է բանվորներին: Կապիտալն ուռչում է, որովհետև ծծում է արժեքի աղբյուրը – բանվորական ուժը: Իսկ կապիտալիստին թվում է, թե կապիտալի փորում արժեքի աղբյուր կա:

ԿԱՊԻՏԱԼԻ ՇՐՋԱՊՏՈՒԹՅՈՒՆԸ:

Սկսվում է կապիտալի կերպարանափոխությունը (տրանսֆորմացիա): Կապիտալը փողի կերպարանքով շուկա մանելով՝ այստեղից յեղնում է ապրանքի—արտադրության միջոցների ու բանվորական ուժի—կերպարանքով: Կապիտալիստն արտադրության միջոցները բոլորովին անկյատել է վաճառողից: Բանվորական ուժի նկատմամբ նույնն անել չի կարելի: Կապիտալիստը բանվորական ուժն սպառման վայրն է քարշ տալիս այս ուժը վաճառողին, բանվորին էլ հետը բոլորովին ճիշտ այնպես, ինչպես նա իր մանկանոցն

է քարշ տալիս իր յերեխայի համար իր սեփական կաթը ծախող ծծմորը:

Բայց բանվորական ուժն սպառելու սպարեզը արտադրության սպարեզն է: Այստեղ բանվորը (վոչ իրավապես, այլ տեխնիկապես) տիրանում է արտադրության միջոցներին՝ սրանց մեջ մի շարք մեխանիկական ու քիմիական փոփոխություններ մտցնելով: Հենց նույնտեղ էլ արտադրության միջոցները տիրանում են բանվորին և սրա միջից ծծում, հանում են նրա ծախած բանվորական ուժը: Արտադրության միջոցներն ու բանվորական ուժը միաձուլված են արդեն... կատարվում է կապիտալիստական աշխարհի սրբազնասուրբը խորհուրդը: Կապիտալը, որը **արտադրական կապիտալի** ձև է ընդունել, գլուխ է բերում աճման պրոցեսը... Այս պրոցեսից դուրս գալով՝ կապիտալը նորից ընդունում է ապրանքային ձև և շուկա չե շտապում՝ էլի **փողային** փայլուն ձև ընդունելու և նոր շրջապտույտի մեջ նետվելու:

Այսպիսով արդյունաբերական կապիտալի ֆորմուլան այս է. Փ—Ա—Արտ—Ա′—Փ′, այսինքն փողային, ապրանքային, արտադրական, ապրանքային ու փողային ձևեր: Այս ֆորմուլայի **Ֆառաջին** յերկու անդամի սահմաններում այն արժեքը, որը գործադրել եր կապիտալիստը, պահպանում է իր սկզբնական մեծությունը. վերջին յերկու անդամին արդեն ցույց են տալիս աճած արժեքը (գործադրած արժեքը՝ պլյուս հավելյալ արժեքը), իսկ միջին անդամին, այն է՝ **կապիտալի արտադրական ձեվը** (բանվորական ուժի ու արտադրության միջոցների միաձուլումը) **հենց այն ձեվն է, որի սահմաններում կատարվում է արժեքի աճումը:**

Կապիտալը հանդես է գալիս ապրանքային, արտադրական թե փողային ձևով, միևնույն է, կապիտալիստը նրա մեջ մեծապես մի բան է տեսնում—արժեք, փող: Յեթե կապիտալն արտադրության պրոցեսից առաջին անգամ դուրս է յեկել 1,000 ռուբլի կշիռի կերպարանքով, իսկ յերկրորդ անգամ՝ 2,000 ռ. կշիռի, ապա այս ինքնըստինքյան դեռ կապիտալիստի բանը չէ շահում: Կարող է պատահել, որ այն ժամանակվա ընթացքում կոշիկները յեղաբարիկ եժանացած լինեն: Արժեքի աճման փոխարեն նվազում առաջվեց: Կապիտալիստի աչքում կարևոր է վոչ թե այս կամ այն իրը, որում մարմնացած է իր կապիտալն, այլ իրի արժեքի մեծությունը: Հետո, կապիտալիստի համար կարևոր է վոչ թե իր կապիտալի դաղարն, այլ շարժումը: **Քարացած արժեքը կապիտալ չե, այլ մեռյալ գանձ:**

ԻՆՉ Ե ԿԱՊԻՏԱԼԸ:

Միայն այն ժամանակ, յերբ արժեքի ձեվով կուտակված մեռյալ աշխատանքն սկսում ե կլանել կենդանի աշխատանք, յերբ արժեքն այսպիսով ինքնաճման ընդունակություն (способность самовозрастания) **ե ձեռք բերում, այս արժեքը դառնում ե կապիտալ:**

Մեքենաները, ծխախոտը, քարածուխը կամ վոսկին կապիտալ են այն չափով միայն, վորչափով հավելյալ արժեքի յուրացման գործիքներ են:

Թե արժեքն ու թե կապիտալն արտադրական հարաբերություններ են լոկ: *Ապրանքի արժեքի մեջ արտահայտված են հավասար արտադրողների արտադրական հարաբերությունները:* **Վերջին հաշվում կապիտալը բանվորական ուժ վաճառողների դասակարգի ու բանվորական ուժ գնողների դասակարգի արտադրական հարաբերությունն ե:**

Հենց սկզբից արդեն մենք նշել ենք այն խոր հակասությունը, վոր կա ապրանքի յերկու բևեռի—սպառողական արժեքի ու արժեքի միջև:

Սպառողական արժեքի ու արժեքի միջև յեղած հակասությունը բանվորական ուժի, իբրև ապրանքի, մեջ արդեն վորոշակի արժեքային արտահայտություն ե ստանում:

Այս հակասության արդյունքը հավելյալ արժեքի կերպարանք ե ընդունում: Հավելյալ արժեքին ձգտելը դառնում ե արտադրության միակ շարժիչ դրդապատճառ: Ահա այս ե ապրանքի հակասության շարժիչ ուժը:

§ 29. ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ.

Կապիտալը բերում ե հավելյալ արժեք: Հավելյալ արժեքը իր հերթին կապիտալ ե ստեղծում:

Այս ճիշտ ե նույնիսկ այն դեպքում, յերբ կապիտալիստն ապրուստի համար ծախսում ե այնքան, վորքան հավելյալ արժեք ե ստանում:

Կապիտալիստն, ասենք, ուներ 10,000 ռուբլի: Ավելի պարզ դարձնելու համար յենթադրենք, թե կապիտալիստը նորելուկ ե և թե նա մյուս կապիտալիստներից տարբերվելով՝ իր սկզբնական կապիտալը վաստակել ե իր քրտինքով: Նա տարեկան ստանում եր 2000 ռուբլի հավելյալ արժեք: Ապրուստի համար ծախսում եր նույնքան: 5 տարուց հետո նրա սկզբնական կապիտալից վո՞րքան մնաց նրա մոտ:

— Ամբողջ 10,000 ռուբլին,—կասե կապիտալիստը:

— Վոչինչ,—կասենք մենք:

— Իսկ այն 10,000-ը՞, վոր մնացել ե նրա մոտ:

Վորպեսզի մեզ համար պարզ լինի, թե այս մնացած 10,000 ռուբլին ինչ ե, հարկավոր ե նկատի ունենալ, թե կարո՞ղ ե արդյոք կապիտալիստը սուրբ հոգով ապրել, թե՞ վոչ: Յեթե չի կարող, նշանակում ե, վոր վաղ թե ուշ նրա կապիտալն ամբողջովին կուտվի, կպրծնի: Տարեկան նա ապրուստի վրա ծախսում եր 2,000, և ամեն տարի շարքից դուրս ընկած ռուբլիների տեղը բռնում եյին նորերը, վորոնք բանվորներից կորզվում եյին հավելյալ արժեքի կերպարանքով: Հնգամյակի վերջում կապիտալն ամբողջովին նորոգված յեղավ: Այն 10,000 ռուբլին, վոր հիմա ունի կապիտալիստը, գոյացել են կապիտալիստի յուրացրած հավելյալ արժեքից:

Ինարկե, մեր կապիտալիստը կարող ե ասել, թե ինքը հավելյալ արժեքն ե կերել, իսկ իր քրտինքով դատած փողերը պահել, տնտեսել ե: Բայց նրա այս ասածը դատարկ խոսք կլինի: Հասարակական տեսակետից այս միևնույնը կլիներ, յեթե արտելում մի ճաշորդ ուտեր ընկերոջ համար դրած հացը և հետո ասեր, թե ինքը իր հացը պահել, տնտեսել ե:

Վորքան ավելի մեծ ե կապիտալիստի կապիտալն, այնքան ավելի հավանականություն կա նրա ոգտին, թե ուրիշ կապիտալիստների դեմ մղած կռվում նա հաղթանակը կտանե: Խոշոր կապիտալ յեղած ժամանակ կարելի յե տեխնիկորեն ավելի լավ սարքավորել իր ձեռնարկությունը. մեծ պարտիաներով գնվող հումքն ավելի եժան ե նստում: Խոշոր կապիտալիստներին ավելի սիրով ու ավելի նպաստավոր պայմաններով են վարկ տալիս: Այս բոլորի հետևանքով կապիտալիստը, կամա թե ակամա, բոլոր ուժերով ձգտում ե, վոր մեծացնե իր կապիտալը: Ուստի բացառիկ յերևույթ ե այն կապիտալիստը, վորը նույնքան ե ծախսում իր ապրուստի վրա, վորքան յուրացնում ե իբրև հավելյալ արժեք: Ընդհանուր կանոն ե, վոր հավելյալ արժեքը վոչ միայն բռնում ե կապիտալի այն մասի տեղը, վոր ծախսում ե կապիտալիստն ապրուստի վրա, այլ և վորոշ ավելցուկ ե տալիս, վորի շնորհիվ մեծանում են այն կապիտալի չափերը, վորով կապիտալիստը գործ ե անում: **Կապիտալի կուտակման պրոցեսը կապիտալի այնպիսի աճման պրոցեսն ե հենց, վոր կատարվում ե նրան կցվող հավելյալ արժեքի հաշվին:**

կապիտալի մեծանալը իր հերթին մեծացնում է հավելյալ արժեքի չափերը, և ընդհակառակը: Այս պատճառով էլ կուտակման պրոցեսը կարելի չէ պատկերացնել հետզհետե ընդլայնվող պարուրագծի (спираль) ձևով: Ճիշտ է, առանձին կապիտալի գլխին կարող է այն էլ գալ, որ սրա կապիտալը վոչ միայն չի աճիլ, այլ, ընդհակառակը, կքչանա կամ թե բոլորովին կչքանա անճարակության, մրցակիցների դուռ անելու կամ թե պարզապես տարաբախտ պատահականությունների ընորհիվ: Բայց մեկ կապիտալիստի տարվածը մեծ մասամբ մյուսի համար տարած է: Կապիտալիստների համար, չեթե վերջինս առնենք իբրև դասակարգի ամբողջություն, կուտակման պրոցեսն անընդհատ հարատևող պրոցես է: Այս պրոցեսի ավելի մանրամասն լուսաբանությունը կտանք հետո, վերարտադրությանը նվիրած գլխում:

Ա Ն Դ Ի Ր Ն Ե Ր.

ա. Շահագործման նորմա.

Ծանոթություն: Այս տիպի բոլոր խնդիրների ժամանակ չենթադրել ենք,

ա. վոր արտադրության պայմանները համապատասխանում են հանրորեն-անհրաժեշտ պայմաններին ու

բ. վոր գները դուգադիպում են արժեքներին (և ուրեմն աշխատավարձը դուգադիպում է բանվորական ուժի արժեքին):

№ 3. Վորոշել շահագործման նորման, չեթե բանվորական որն 9-ժամյա չէ, և բանվորները գործատիրոջ համար աշխատում են 5 ժամ:

№ 4. Մեկ ձեռնարկության մեջ բանվորներն աշխատում են 9 ժամ, վորից 3 ժամը հարկավոր է բանվորական ուժի արժեքի տեղը հանելու համար: Վորոշել շահագործման նորման:

№ 5. Ձեռնարկությունը տարեկան արդյունքի վրա գործադրում է 250 հազար ռուբլու մշտական կապիտալ և 80 հազար ռուբլի չել փոփոխական կապիտալ: Տարեկան արդյունքի արժեքն է 430 հազար ռուբլի: Վորոշել շահագործման նորման:

№ 6. Ձեռնարկության մեջ բանվորները միջին հաշվով ստանում են ամսական 50 ռուբլի: Ամեն աշխատում են 250-ական ժամ: Հանրորեն-անհրաժեշտ աշխատանքի ամեն մի ժամն ստեղծում է մի արժեք, վորը փողով արտահայտված անում է 40 կոպեկ: Վորոշել շահագործման նորման:

№ 7. Շահագործման նորման 200% է: Անհրաժեշտ ժամանակը 4 ժամ է: Վորոշել բանվորական որվա տևողությունը:

№ 8. Կարի գործարանում յուրաքանչյուր բանվորն ամիսը միջին հաշվով պատրաստում է 25 կոստյում: Կոստյումի արժեքը 25 ռուբլի չէ: Յուրաքանչյուր կոստյում կլանում է 15 ռուբլու արտադրության միջոցներ: Մեկ բանվորի միջին աշխատավարձն ամսական անում է 100 ռուբլի: Վորոշել շահագործման նորման:

№ 9. Գործարանատերը յուրաքանչյուր չերկու ամսում արտյունքի վրա ծախսում է 180 հազար ռուբլու մշտական կապիտալ ու 150 հազար ռուբլու փոփոխական կապիտալ: Շահագործման նորման 120% է: Վորոշել տարեկան արտադրանքի (продукция) արժեքը:

№ 10. Ձեռնարկությունն ունի 2000 ռուբլի փոփոխական կապիտալ, վորը տարվա ընթացքում շրջան է գործում 6 անգամ: Ձեռնարկությունը տարեկան 18,000 ռուբլու հավելյալ արժեք է ստանում: Վորոշել շահագործման նորման:

№ 11. Ձեռնարկությունն ունի 12,000 ռուբլու փոփոխական կապիտալ, վորը շրջան է գործում յուրաքանչյուր 9 ամիսը մեկ անգամ: Ձեռնարկությունն ստանում է 27,000 ռուբլու հավելյալ արժեք: Վորոշել շահագործման նորման:

№ 12. Գործարանն ունի 3,000 ռուբլի փոփոխական կապիտալ, վորը տարեկան շրջան է գործում 3 անգամ: Շահագործման նորման 200% է: Յուրաքանչյուր բանվոր միջին հաշվով տարեկան ստեղծում է 1,800 ռուբլու նոր արժեք: Քանի՞ բանվոր է աշխատում գործարանում:

բ. Մշտական ու փոփոխական կապիտալը.

№ 13. Մշտական կապիտալը 100,000 ռուբլի չէ: Փոփոխական կապիտալը՝ 10,000 ռ.: Հիմնական կապիտալը՝ 70,000 ռ., Վորոշել շրջանառու կապիտալը:

№ 14. Հիմնական կապիտալն է 400,000 ռ.: Մշտական կապիտալը՝ 500,000 ռ.: Շրջանառու կապիտալը՝ 200,000 ռ.: Վորոշել փոփոխական կապիտալը:

№ 15. Ձեռնարկության հիմնական կապիտալն է 160,000 ռ. շրջանառու կապիտալը՝ 180,000 ռ.: Փոփոխական կապիտալը՝ 60,000 ռ.: Վորոշել ձեռնարկության մշտական կապիտալը:

ԲԱՑԱՐՁԱԿ ՈՒ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔ.

ԲԱՑԱՐՁԱԿ ՈՒ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԸ:

Շահագործողն ընդհանրապես ու կապիտալիստը մասնավորապես յերկու հոգս ունեն: Նախ՝ վոր արտադրողի բանվորական որն, ինչքան կարելի յե, յերկար լինի: Յերկրորդ՝ վոր անհրաժեշտ ժամանակը, վորքան կարելի յե, կարճ լինի: Թե մեկի ու թե մյուսի հետևանքը լինում է բանվորական ժամանակի յերկարելը, **շահագործման նորմայի մեծացումը:**

Բանվորական որը, մի տեսակ, պարանի յե վերածվում, վորի մի մասն իր ձեռքում պահում է կապիտալիստն, իսկ մյուսը՝ բանվորը: Ամենից առաջ կապիտալիստն աշխատում է կաշուց դուրս գալու չափ ձիգ տալ պարանը, վորքան կարելի յե այս յերկարացնել, իսկ հետո յել հակառակորդին, վորքան կարելի յե, քիչ մասը թողնել:

Այսպես, ուրեմն, կապիտալիստը հավելյալ արժեքը մեծացնելու յերկու յեղանակ ունի. 1) բանվորական որն ըստ կարելույն յերկարացնելը ու 2) բանվորական ուժի արժեքը քչացնելը: Առաջին դեպքում մենք գործ ենք ունենում բացարձակ հավելյալ արժեքի արտադրության հետ: Յերկրորդ դեպքում՝ հարաբերական հավելյալ արժեքի արտադրության հետ:

§ 30. ԲԱՑԱՐՁԱԿ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

ա. Բանվորական որվա համար մղվող կռիվը.

Առաջին հերթին քննենք բացարձակ հավելյալ արժեքի արտադրությունը:

Ռուրժուական յերկրների բանվորական որեցգրությունը: Արհմիություններ.

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐՆ ՈՒ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՍՍԱԿՆ «ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ» ԺԱՄԱՆԱԿ:

Կապիտալի ախորժակը սահման չի ճանաչում: Մոսկվայի շրջանի գործարանային տեսուչ Յանժուլը 1884 թվականին վերաբերող իր հաշվետվության մեջ գրում է. «Դժվար է հավատալ, թե մի քանի գործարաններում հասակավորների ու փոքրահասակների բանվորական որը մինչև վորքան ելին յերկարացնում: Ռազմական գործարաններում աշխատանքը տևում էր օրական սովորաբար 16—18 ժամ առանց վորևե հերթափոխի: Ինելու, ուտելու և հանգստանալու համար բանվորին օրական 6—8 ժամից ավելի չեր մնում: Յեվ այսպիսի իրոք սարսափելի աշխատանքով զբաղված ելին վոչ միայն հասակավոր տղամարդիկ ու կանայք, այլ և մանուկները, վորոնցից շատերը տաս տարեկան հասակին էլ չելին հասած լինում: Պատահում ելին յերեք տարեկանից վոչ մեծ մանկիկներ էլ, վորոնք աշխատում ելին իրենց մայրերի հետ»:

Պրոֆեսոր Ուբրեն, վորը Յենայում կառավարում էր Յեյսի օպտիկական գործիքների հայտնի գործարանը (Գերմանիայում), գրում է.

«Հայրս մանող էր Ելզենախում: Մինչև 50-ական թվականների սկիզբը նա պետք է աշխատեր ամեն իր որը 14—15—16 ժամ՝ առավոտվա 5-ից մինչև յերեկոյան 7-ը, յերբ գործը սովորական ընթացք ուներ, և 16 ժամ՝ առավոտվա 5-ից մինչև յերեկոյան 8-ը, յերբ գործը լավ ընթացք ուներ, և այս էլ առանց բանթողների, նույնիսկ առանց ճաշվա հանգստի... Յես կանգնում եյի և նայում, թե ինչպես հայրս՝ հենվելով մեքենային կամ արկղի վրա նստոտելով, շատ-շատ ուտում էր ճաշը, վոր բերում ելինք պատուհով, և դատարկ պատուհն ինձ էր վերադարձնում, վոր իսկույն նորից գործի անցնեմ: Հայրս հսկա մարդ էր, արտասովոր ամուր կազմվածքով, բայց 48 տարեկան հասակում նրա կեցվածքն ու տպավորությունը ծերունու յեր. նրա ավելի պակաս ամրակազմ ընկերները 38 տարեկան հասակում արդեն ծերունի ելին»:

«Լինում են դեպքեր,—հաղորդում է 1832 թվականի անգլիական լեռնային արդյունաբերությանը վերաբերող մի հաշվետվություն,—վոր մանուկները հենքերում սկսում են աշխատել 4 տարեկան հասակից. իսկ այն սովորական հասակը, վորից նրանք սկսում են աշխատել, ութ-ինը տարեկան հասակն է: Մանուկները պետք է հակելին պատանդքերի (ШТОЛЬНЯ) դռներին: Սրա համար նրանք պետք է հենքերը գային, հենց վոր աշխատանքներն սկսվելու լինելին, և կարող ելին հետևել բոլոր աշխատանքների վերջանալուց հետո միայն: Ընդամեն վորովհետև մանուկները բոլորովին մենակ ելին մնում, այլ և մթության մեջ, ուստի այս պարապմունքը ծանր մենավոր բանտարկության միայն նրանով էր տարբերվում, վոր ժամանակ առ ժամանակ նրանց կողքով անցնում ելին ածխով բարձած սայլակները:

Վեց տարեկան հասակից սկսած մանուկները նույնպես պարտական եւին ածուխ բարձած վագոնիկները քաշել կամ հրել։ Ինչպես վստահացնում եւին բոլոր վկաները, այս աշխատանքը բոլոր ֆիզիկական ուժերի լարումն էր պահանջում։ Շատ տեղերում նրանք պիտք է մեջքով կրկին ածուխը՝ բարձրանալով դիք դրված սանդուղքներով։ Ստորերկրյա ներքացնքներն այնքան ցածր եւին լինում յերբեմն, որ նույնիսկ ամենափոքր մանուկները կարող եւին միայն ձեռքերի ու վոտքերի վրա ընկած սողալով առաջ շարժվել և այս հակարնական դրության մեջ նրանք պիտք է քարշ տալով տանեյին բարձած սայլակները»։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄՆ (НОРМИРОВАНИЕ) ԱՐՀԱՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ի ՄԻՋՈՑՈՎ։

Բանվորական որվա նորմավորման գործում մեծ դեր է կատարել անմիջական գործունեյությունն արհմիությունների, վորոնք բանվորական որվա կրճատումը հավաքական տարիֆային պայմանագրերով իրականացրել են այնտեղ, վորտեղ չեր կարելի որենսդրական կերճատում գլուխ բերել։

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ։

Արհեստակցական շարժման ամենախոշոր նվաճումը հավաքական պայմանագիրն է։ Հավաքական պայմանագրերը կնքում են մի կողմից՝ բանվորական միավորությունները ու մյուս կողմից՝ ձեռնարկությունների միավորությունները, քիչ անգամ առանձին ձեռնարկությունները։ Հավաքական պայմանագիրը սահմանում է բանվորական որվա տեողությունը, վարձատրության ձևն ու չափերը և այլ պայմաններ, վորոնք պարտադիր են իրական աշխատանքային պայմանագրի ծագման դեպքում, այսինքն այն դեպքում, յերբ բանվորն ընդունվում է գործի։

ԳՈՐԾԱԴՈՒԼ ՑԵՎ ԼՈԿԱՈՒՏ։

Արհմիությունների ձեռքում ամենազորեղ վենքն ընդդեմ կապիտալիստների մղած կերվում՝ **գործադուլն** է, այսինքն աշխատանքի համերաշխած ու միաժամանակ դադարեցումը մինչև այն ժամանակ, յերբ ձեռնարկատերերը կբավարարեն բանվորների առաջադրած պահանջները։ Ձեռնարկությունների միությունները բանվորների պահանջներին, թե պետք է բարելավել աշխատանքի պայմանները, պատասխանում են **լոկաուտով**, այսինքն գործը կանգնեցնելով։

Գործադուլները բանվորների կողմից անչափ մեծ զոհեր են պահանջում։ Գործադուլավոր բանվորները թե իրենց ու թե իրենց ընտանիքներին դատապարտում են սովի բոլոր սարսափներին։ Արհմիությունների գործադուլային ֆոնդերը սովորաբար աղքատ հանվում են։ Ահա թե ինչու շատ մեծ և տոկուն այն գործադուլների, վորոնք վերջանում են բանվորների լիակատար կամ մասնակի պարտությամբ (1881 թվականից մինչև 1890 թվականը Միացյալ Նահանգներում յեղած 22,793 գործադուլի 36,19%-ն ավարտվել է բանվորների լիակատար պարտությամբ, իսկ 13,04%-ը մասնակի պարտությամբ)։ Գերմանիայում աստիճանաբար պակասում է թիվը այն գործադուլների, վորոնք բանվորների լիակատար հաղթությամբ են վերջանում (1899 թվականին՝ 25%, 1908 թվականին՝ 15%)։

Գործադուլները ճնշելու գործում յեռանդուն մասնակցում է կապիտալիստների ամբողջ դասակարգն ի դեմս բուրժուական կառավարության։ Ցարական Ռուսաստանում գործադուլները հաճախ ճնշում եւին զենքի ուժով։ Նույնիսկ «դեմոկրատական» յերկրներում, վորտեղ բանվոր դասակարգը կարողացել է գործադուլների «ազատություն» նվաճել, վոստիկանությունը հաճախ պրովոկացիայի նյութ է դարձնում սովահար բանվորների արարքները (որինակ, փոքրի կողոպուտը), վորպեսզի առիթ ունենա գործադուլը կազմակերպողներին ձերբակալելու և գործադուլը վիժեցնելու։ Իսկ համաշխարհային պատերազմի ժամանակվանից սկսած, յերբ բուրժուազիան պատռելով դեն ձգեց իր յերեսի դիմակը դեմոկրատիզմի, բուրժուական կառավարությունները բոլորովին դադարեցին գործադուլավոր բանվորներին բանի տեղ դնելուց։ Ամերիկյան վոստիկանությունը գործադուլավոր հանքագործների ժողովները խանգարում, ցրում եր մի հատուկ արտասվաբեր գազով, վորը գրգռում եր աչքի թաղանթն ու շնչառության ուղիները [1]։

[1] Համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո թուլանում է բանվորների գործադուլային կռիվը, վոր մղվում եր կապիտալի դեմ։ Սակայն համաշխարհային պատերազմի յերկրորդ շրջանից (1917—1918 թ. թ.) սկսած՝ գործադուլային շարժումը նորից լայն թափ է ստանում։ Մյուս ամենագլխավոր կապիտալիստական յերկրներում, Անգլիայում ու Գերմանիայում, գործադուլավոր բանվորների թիվն այս է յեղել.

1913	թվականին	770 հազար
1914	»	386 »
1915	»	417 »
1916	»	408 »
1917	»	1,512 »
1918	»	1,876 »

ԻՐԱՎԱԲԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ (АРБИТРАЖНЫЕ КОМИССИИ):

Շատ յերկրներում կան **իրավարար հանձնաժողովներ**, վորոնց կոչումն է քննել այն կոնֆլիկտները, վոր առաջ են գալիս ձեռնարկությունների ու բանվորների միջև։ Սակայն այս հանձնաժողովները հենց այն պատճառով հազիվ նշանակություն չունեն, վոր նրանց վորոշումները պարտադիր չեն վոչ մեկ ու վոչ էլ մյուս կողմի համար (բացառություն են նայ Զելանդիան ու Հարավային Ուելսը, վորտեղ իրավարար հանձնաժողովի վճիռները պարտադիր են յերկու կողմի համար էլ)։

ՈՐԵՆ ՕՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ։

XIX դարի 40-ական թվականներին **բանվորական շաբաթվա ճնշման** տակ Անգլիայում սկիզբ դրվեց բանվորական որվա տևողությունն ու մանուկների շահագործումը սահմանափակելուն։ 1848 թվականից սկսած մանածագործական արդյունաբերության մեջ փաստորեն մացվեց 10-ժամյա բանվորական որ (իրավաբանորեն որենքը վերաբերում եր միայն կանանց ու դեռահասակներին)։ Շուտով միևնույն պատճառից հարկադրված՝ մյուս կապիտալիստական յերկրներն էլ վոտք դրին բանվորական որն որենսդրական ճանապարհով կարգավորելու ուղին։ Ռուսաստանում $11^1/_2$-ժամյա բանվորական որ (10-ժամյա բանվորական որ տոնների նախորյակին) սահմանվեց 1797 թվականին։

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐՎԱ ՅԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։

Փորձը ցույց է տվել, վոր բանվորական որվա կրճատումը շատ դեպքերում չի պակասեցնում կատարած գործի քանակը։ Յերբ բանվորին ուժասպառ չեն անում անչափ յերկար բանվորական որով, ապա նա ընդունակ է ավելի ինտենսիվ աշխատելու։

«Ռ. Գարդները Պրեստոնում գտնված իր յերկու մեծ գործարանում 1844 թվականի ապրիլի 20-ին 12-ժամյա բանվորական որվա փոխարեն մացրեց 11-ժամյա։ Մոտ մի տարի անց՝ յերևաց, վոր հենց նույնքան արդյունք է պատրաստված յեղել միևնույն ծախքերն անելով, և բոլոր բանվորները 11 ժամում ճիշտ այնքան բան են արել, վորքան առաջ 12 ժամ աշխատելով» (Մարքս)։

Իր ժամանակին հենց նույնպիսի փորձ կատարվել է կալ Ցեյսի՝ Յենայում գտնվող ֆաբրիկայի օպտիկական գործանոցներում, վորոնք հայտնի չեն ամբողջ աշխարհում, և վորտեղ աշխատում եր մոտ 1,600 բանվոր։ Կառավարչի ծրագրած կարգով աս-



տիճանաբար $11^3/_4$-ժ. բանվորական որից անցան 9, իսկ հետո յել 8-ժամյա բանվորական որվա, ընդ վորում պատրաստած արդյունքի քանակը վոչ միայն չպակասեց, այլ մի քանի տոկոս ավելացավ։

Ինժեներ Շուլց Դյուբուան հետազոտել է Մայնի Ֆրանկֆուրտի քարտաշ գործավարձվորների (сдельщик) աշխատանքի արտադրողության շարժումը 29 տարվա ընթացքում (1885—1914)։ Այս ժամանակամիջոցում բանվորական որվա յերկարությունը հետզհետե նվազել է.

մինչև 1889 թ. ներառյալ 11 ժ.
մինչև 1907 թ. » 10 »
մինչև 1911 թ. » 58 ժ.
շաբաթական,
մինչև 1914 թ. ներառյալ 11 ժ.։

Աշխատանքի տեխնիկան միշտ հնացել է միևնույնը։

Վորքան կարճացել է բանվորական որն, այնքան աճել է աշխատանքիարտադրողությունը։ Փարատաշների միջին պատրաստածը 1912, 1913, 1914 թվականներին 25% բարձր է յեղել 1885, 1886, 1887, 1888 թվականների միջին պատրաստածից։

Փոքրիկ վայրկյաններ ընկնում են 1899 ու 1905 թվականներին, վորոնք շինարարության կրճատման տարիներ են յեղել։ Գործադրկության սպառնալիքի ուրվականը սառեցնում եր գործավարձվորին և պակասեցնում եր նրա աշխատանքի ինտենսիվությունը։

Այն դեպքերը, երբ կապիտալիստները կամովին կրճատում էին բանվորական որը, մատերի վրա կարելի չի հաշվել։ Բանվորական որվա որենսդրական նորմավորումն անգամ հաճախ նպատակին չէր հասնում, որովհետև գործարանային վերատեսչությունը թուլլ էր լինում։

Բ. Հանվորական որենսդրությունը համաշխարհային պատերազմի ժամանակվա մոտերից ու նրանից հետո.

ՌՈՒՍԱՍՏԱՆ։

Համաշխարհային պատերազմի սկսվելու մոտերքը պատկերն այսպիսի չէր։ Ռուսաստանում որենսդրական ճանապարհով $11^1/_2$-ժամյա բանվորական որ էր սահմանված (1897)։ Փաստորեն խոշոր ձեռնարկություններում աշխատում էին 9—10 ժամ։

ԱՆԳԼԻԱ, ԳԵՐՄԱՆԻԱ, ՖՐԱՆՍԻԱ, ԱՄԵՐԻԿԱ։

Անգլիայում որենսդրությունը 10-ժամյա բանվորական որ սահմանել էր միայն մանածագործական արդյունաբերության մեջ։ Հանքերում ու հանքարաններում փաստորեն կար 8-ժամյա բանվորական որ։ Գերմանիայում գերակշռում էր 10-ժամյա բանվորական որը։ Նույնն էր նաև Ֆրանսիայում ու Ամերիկայում։ Ամերիկայում բանվորական որվա նկատմամբ գոյություն չունի և վոչ մի որենսդրական սահմանափակում։ Նրա տևողությունը նորմավորվում է միայն հավաքական պայմանագրերով։

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում կատարած 1914 թվականի անկետան պարզել է, որ անկետայի ընդգրկած բոլոր բանվորների $11,8^0/_0$ էր միայն 48-ժամյա շաբաթ նվաճել, շաբաթական 48 ժամից ավելի ու մինչև 60 ժամ աշխատում էր բանվորների $61,3^0/_0$-ն, իսկ $26,9^0/_0$-ն աշխատում էր շաբաթական 60—72 ժամ։

Յերկրապնդիս վրա միակ անկյունը, որտեղ ութժամյա բանվորական որը փաստորեն իրագործված էր պատերազմից առաջ, — հեռավոր Ավստրալիան է։

Ինչ վերաբերում է մանուկների աշխատանքին, ապա համաշխարհային պատերազմի սկսվելու մոտերքը պատկերն այսպիսի էր։ Ռուսաստանում, Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Բելգիայում, Շվեդիայում, Նորվեգիայում ու Հոլլանդիայում մինիմալ հասակ սահմանված էր 12 տարեկանը, Գերմանիայում՝ 13 տարեկանը (պարտադիր ուման հետևանքով փաստորեն 14 տարեկանը), Շվեյցարիայում ու Ավստրիայում՝ 14 տարեկանը (Ավստրիայում բացառություն էր արված արհեստային ձեռնարկությունների համար, վորտեղ մինիմալ հասակ սահմանված էր 12 տարեկանը)։

Պատերազմն ու «պաշտպանության» համար կատարվող աշխատանքը, վոր ընդգրկել էր ամբողջ աշխարհը, ժամանակավորապես իչխք դարձրեց աշխատանքի մասին չեղած բոլոր որենքները։ Սրա փոխարեն, երբ պատերազմը վերջացավ, բուրժուազիան, վորի սերը հեղափոխական սպառնալի շարժումն ան էր ձգել, մի ամբողջ շարք յերկրներում սահմանեց 8-ժամյա բանվորական որ, վորն առանց այն այն էլ բազմաթիվ յերկրներում մտցված էր հայտի կարգով (явочный порядок)։ Աշխատանքի համաշխարհային կազմակերպության առաջին կոնֆերանսը, վոր 1919 թվականի հոկտեմբերին գումարվեց Վաշինգտոնում և վորը նախատեսված էր Վերսալի դաշնագրով, մի քանի բացառություններ անելով ընդունեց, վոր բոլոր յերկրների համար պարտադիր է 48-ժամյա շաբաթն ու մինիմալ հասակը՝ 14 տարեկան։ Բայց յերբ հեղափոխության փոթորիկը մի քիչ մեղմացավ, բուրժուազիան շտապեց նորից գրավելու այն դիրքերը, վոր լքել էր։

Վաշինգտոնի կոնֆերանսի վորոշումը մնաց թղթի վրա։ Հիմա Գերմանիայում մեր աչքի առջև սահմանվում է 9—10-ժամյա բանվորական որ։

Միայն բանվորա-գյուղացիական Ռուսաստանն է, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո մտցրեց 8-ժամյա բանվորական որ և հավատարմությամբ էլ պահպանում է այն [1]։

§ 31. ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Ա. Ավելացիր (избыточная) հավելյալ արժեքի արտադրության յերկու ուղին.

Ինչպես արդեն մատնանշել ենք, Մարքսը **հարաբերական հավելյալ արժեք** է անվանում այն հավելյալ արժեքը, վորը ծագում է անհրաժեշտ բանվորական ժամանակը կրճատելու հետևանքով։

[1] Ծանոթ.—խմբ. Համաձայն Համամիութենական կենտգործկոմի 1927 տարեվերջի մանիֆեստի արդեն արտադրական մի շարք ճյուղերում անցել են 7-ժամյա բանվորական որվա։

Իսկ ինչ կերպ է կատարվում անհրաժեշտ բանվորական ժամանակը նվազեցնելը:

Այս կատարվում է **առաջին հերթին տեխնիկայի առաջադիմությանը զարկ տալով այն ճյուղերում, վորոնք բանվորի պահանջները բավարարելուն են ծառայում:**

ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ:

Որինակի համար առնենք բանվորի ծախսի այնպիսի հոդված, ինչպիսին է վառելիքն ու ճրագլույսը: Առնենք թե այն փայտը, վառարանը նորոգելը, նավթը, վոր տարվա ընթացքում հարկավոր է բանվորին, 150 ժամվա հանրորեն-անհրաժեշտ աշխատանք են կլանում: Բայց ահա տվյալ յերկրի բանվորներն անցան կենտրոնական ջեռուցման ու ելեկտրականության: Հիմա յուրաքանչյուր բանվորի բնակարանի վառելիքն ու ճրագլույսը կլանում է տարեկան 75 ժամ միայն: Բանվորական ուժի արժեքը տարեկան նվազում է 75 ժամով, որական $^1/_4$ ժամով՝ կլոր հաշվով ընդունելով, վոր տարվա մեջ 300 բանվորական որ կա: Անհրաժեշտ ժամանակը նվազել է $^1/_4$ ժամով, հավելյալ ժամանակն ավելացել է:

Նույն այս յեղանակով անհրաժեշտ բանվորական ժամանակը նվազում է գործվածքների, կոշիկների արտադրությունն, աղի արդյունահանությունն ու փոխադրությունը լավացնելու հետևանքով և այլն և այլն, իսկ սրա հետ զուգորդված՝ աճում է շահագործման նորման:

Այսպես, ուրեմն, արտադրության այն ճյուղերում, վորոնք ծառայում են բանվորների պահանջները բավարարելուն, աշխատանքի արտադրողականության ավելացնելը մեծացնում է շահագործման նորման, հարաբերական հավելյալ արժեք է տալիս:

Անհրաժեշտ բանվորական ժամանակը քչացնելու, ուրեմն յեվ հարաբերական հավելյալ արժեք արտադրելու մեկ ճանապարհն էլ այն է, վոր բանվորի ընտանիքի մի մասը հանվի նրա խնամատարությունից:

ԿԱՆԱՆՑ ՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ:

Սրան հասնում են նրանով, վոր բանվորի կնոջն ու յերեխաներին էլ են քաշում արտադրության մեջ: Թե բանվորի կինը, վոր ապագա բանվորներ է մեծացնում, և թե հենց իրենք այս ապագա բանվորները դառնում են ներկայի բանվորներ: Կնոջ ու յերեխաների ապրուստի արժեքը ջնջվում, հանվում է ընտանիքի հոր բանվորական ուժի արժեքի հաշվի միջից: Սրա հետևանքը նորից լինում է անհրաժեշտ բանվորական ժամանակի կրճատումը, շահագործման նորմայի աճումը:

Ձիաբուծության մեջ վնասաբեր է լինում այն, յերբ զամբիկները (МАТКА) բանում են ուժից վեր և քուռակներն էլ՝ ժամանակից առաջ: Բայց այս պատահում է միայն այն պատճառով, վոր ձիեր ունենալու ուրիշ յեղանակ չկա, բացի ձիեր բուծելը: Այլ բան է բանվոր դասակարգը: Յեթե մանուկների աշխատանքը խարխլում է սրանց ուժերն արմատակի, ապա ավելի վատ հենց մանուկների համար: Կապիտալիստը դարդ անելու բան չունի: Բանվոր դասակարգ վերարտադրելը հնարավոր է վոչ միայն ներսում, այլ և դրսից: Բանվոր դասակարգի շարքերը լրացվում են այն տարրերով, վորոնք գոյանում են գյուղացիության ու մանր բուրժուազիայի քայքայումից: Սրանք արագությամբ լցնում են սերնդական (ПОТОМСТВЕННЫЙ) պրոլետարների հալվող շարքերը:

Սակայն հարաբերական հավելյալ արժեք արտադրելու այս յերկրորդ ուղին էլ սերտ զուգորդված է տեխնիկայի առաջադիմության հետ: Ձեռքով կատարված աշխատանքի ժամանակ բանվորի ֆիզիկական ուժն ավելի կարևոր է, քան մեքենայով աշխատելու միջոցին: Յեվ հենց մեքենային արտադրությունն էր, վոր ձեռնարկության դռները լայն բաց արեց կանանց ու մանուկների առջև:

Մենք պարզաբանեցինք, վոր տեխնիկայի առաջադիմությունն արտադրության այն ճյուղերում, վորոնք ծառայում են բանվորների պահանջներ բավարարելուն, հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունը շատացնում է, ուրիշ խոսքով՝ շահագործման նորման մեծացնում է: Իսկ վորովհետև արդյունաբերության ճյուղերի մեծամասնությունը (հատկապես այն ճյուղերինը, վորոնք արտադրության միջոցներ են արտադրում) ուղղակի կամ անուղղակի առնչություն ունեն բանվորական ուժ վերարտադրելու հետ, ուստի ընդհանրապես ու ամբողջությամբ առած՝ տեխնիկայի առաջադիմությունը մեծացնում է բանվորի շահագործման նորման:

ՎՈՐՔԱՆ ԱՎԵԼԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ Է ԱՇԽԱՏԱՆՔՆ, ԱՅՆՔԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ Է ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՈՐՄԱՆ:

Արդյունաբերական կապիտալիզմի ծագման հենց սկզբնական շրջանում, յերբ բանվորի ապրուստի բոլոր միջոցներն արտադրվում եյին նախնադարյան յեղանակներով, շահագործման նորման ցածր եր: Մինչև անգամ 14-ժամյա բանվորական որ լինելու ժամանակ կարող եր պատահել, վոր բանվորի ապրուստի միջոցները տեխնիկայի ցածր մակարդակի շնորհիվ պարունակում եյին, ասենք, 8 ժամվա հան-

բորբեն-անդրաժեշտ աշխատանք. 14—8=6. շահագործման նորման լինում է 6 : 8=75%:

Բարձր տեխնիկա ունեցող արդի ձեռնարկություններում, վորտեղ բանվորական ուժի, բանվորի վերարտադրության միջոցները պարունակում են, ասենք, 3 ժամ հանրորեն-անդրաժեշտ բանվորական ժամանակ, նույնիսկ 8-ժամյա բանվորական որ ունենալու դեպքում շահագործման նորման կլինի 5 : 3=166⅔%: Այսպիսով կապիտալիստը՝ տեխնիկական կատարելագործումներ կիրառելով՝ հենց սրանով էլ բարձրացնում է շահագործման նորման: «Ապրանքի արժեքը հակառակ հարաբերական է աշխատանքի արտադրողական ուժից, ընդհակառակը, հարաբերական հավելյալ արժեքն ուղիղ հարաբերական է աշխատանքի արտադրողական ուժին» (Մարքս):

Ինքնըստինքյան հասկանալի չէ, վոր յուրաքանչյուր առանձին կապիտալիստ իր ձեռնարկության մեջ արտադրության տեխնիկան բարձրացնելով՝ համապատասխարգային նկատառումներով չէ ղեկավարվում:

Մարտենի չեղանակի մուծումը (երբ չուգունից պողպատ ու երկաթ է ստացվում՝ չուգունը երկաթի ձուլի հետ հալելով) երկաթի կամ թե պողպատի ամեն մի տոննայի արժեքն իջեցնելով՝ միաժամանակ իջեցնում էր բանվորական ուժի վերարտադրության արժեքն էլ, վորովհետև երկաթի ու պողպատի արժեքը մտնում է բանվորի սպառման բազմաթիվ միջոցների արժեքի մեջ, իբրև սրա բաղադրիչ մաս: (Ահա մի քանի որինակ այն կապի, վոր կա երկաթի ու բանվորի կենսամիջոցների միջև.— երկաթ—գութան—հաց, պողպատ—կարի մեքենա—հագուստ, պողպատ—երկաթուղի—բանվորին հարկավոր արդյունքների փոխադրություն և այլն): Բայց այն գործարանատերերը, վորոնք կպել են արդյունահանության նորագյուտ չեղանակից, ամենևին նկատի չեն ունեցել այս բարդ կապը, վոր ներգործում է դանդաղ ու համապատասխարգային մասշտաբով:

Առանձին վերցրած, ամեն մի կապիտալիստի համար տեխնիկական կատարելագործումներն ավելի անմիջական ու ակներև հրապույր ունեն:

Բ. Ավելադիր հավելյալ արժեքը.

Խնդիրը հետևյալումն է. վոչ մի տեխնիկական կատարելագործություն կայծակի արագությամբ չի տարածվում արդյունա-

բերության ավյալ ճյուղի մեջ: Կատարելագործությունների արագ տարածմանն արգելք են լինում թե գաղտնիքներն ու թե արտոնագրերը (патент), վորոնք տրվում են հնարիչներին և վորոնք առանձին ձեռնարկուների կողմից ձեռք են բերվում իսկական սեփականություն: Խանգարում է կապիտալների պակաս լինելն ու պահպանողականությունն էլ, իսկ ամենից ավելի խանգարում է կապիտալի հին ներդրումների (вложение) զոռն էլ. այն կապիտալիստները, վորոնք մեծ կապիտալներ են դրել հին տիպի սարքավորման մեջ, չեն շտապում կատարելագործություններ մտցնելու՝ ջանալով ըստ կարելույն շատ ոգտագործել արդեն կատարված ներդրումները: Ձեվ ահա, **բանի արտադրության նոր չեղանակը բավականաչափ չի տարածվել**, այս նոր չեղանակը հատուկ ոգուտներ է տալիս նրանց, ովքեր կիրառում են այն:

Ասենք թե ձեռքով պատրաստված հազար աղյուսը պարունակում է 60 ժամվա հանրորեն-անդրաժեշտ միջին աշխատանք, իսկ մեքենայով շինած էլի հազար աղյուսը՝ 40 ժամվա: Այնուհետև դնենք թե հանրորեն-անդրաժեշտ միջին աշխատանքի մեկ ժամվա ստեղծած արժեքը փողային ձևով 40 կոպեկ է: Այն ժամանակ ձեռքով պատրաստած հազար աղյուսի արժեքը հավասար է 24 ռուբլու, իսկ մեքենայով շինվածներինը՝ 16 ռուբլու: Քանի դեռ մեքենան տարածված չէր բոլորովին, աղյուսի հանրային արժեքը վորոշվում էր արտադրության վոչ թե նոր, այլ հին չեղանակով, ուրեմն հավասար էր 24 ռուբլու: Այնինչ մեքենայով շինած աղյուսի անհատական արժեքը հավասար էր 16 ռուբլու: Յեթե ընդունենք, վոր աղյուսի գինը զուգադիպում է նրա արժեքին, ապա աղյուսի «անհատական» արժեքի ու հանրային արժեքի տարբերությունը, վոր մեր որինակում հավասար է 8 ռուբլու, կմտնի այն ձեռնարկուի գրպանը, վորն առաջինն է մեքենաներ կիրառել իր աղյուսագործարանում:

Վորովհետև հազար աղյուսի «անհատական» արժեքն էլ, վոր անում էր 16 ռուբլի, համապատասխան քանակությամբ հավելյալ արժեք պարունակում է արդեն, ուստի վերոնշյալ 8 ռուբլին **ավելադիր հավելյալ արժեք է:**

Այսպես, ուրեմն, ավելադիր հավելյալ արժեքն բնդհանուր նորմայից գերազանցող հավելյալ արժեքի այն ավելցուկն է, վոր առժամանակ ստանում են արտադրության կատարելագործված չեղանակներ կիրառող կապիտալիստները: Սրանք այն ավելցուկն ստանում են այնքան ժամանակ, քանի նրանց կիրառած

բորեն-անհրաժեշտ աշխատանք. 14—8=6. շահագործման նորման լինում է 6 : 8=75%:

Բարձր տեխնիկա ունեցող արդի ձեռնարկներում, վորտեղ բանվորական ուժի, բանվորի վերարտադրության միջոցները պարունակում են, ասենք, 3 ժամ հանրորեն-անհրաժեշտ բանվորական ժամանակ, նույնիսկ 8-ժամյա բանվորական որ ունենալու դեպքում շահագործման նորման կլինի 5 : 3=166⅔%: Այսպիսով կապիտալիստը՝ տեխնիկական կատարելագործումներ կիրառելով՝ հենց սրանով էլ բարձրացնում է շահագործման նորման: «Ապրանքի արժեքը հակառակ հարաբերական է աշխատանքի արտադրողական ուժից, քանդհակառակը, հարաբերական հավելյալ արժեքը ուղիղ հարաբերական է աշխատանքի արտադրողական ուժին» (Մարքս):

Ինքնըստինքյան հասկանալի է, վոր յուրաքանչյուր առանձին կապիտալիստ իր ձեռնարկության մեջ արտադրության տեխնիկան բարձրացնելով՝ համապատասխարգային նկատառումներով չե ղեկավարվում:

Մարտենի լեզանակի մուծումը (երբ չուգունից պողպատ ու երկաթ է ստացվում՝ չուգունը երկաթի ձույլի հետ հալելով) երկաթի կամ թե պողպատի ամեն մի տոննայի արժեքն իջեցնելով՝ միաժամանակ իջեցնում էր բանվորական ուժի վերարտադրության արժեքն էլ, վորովհետև երկաթի ու պողպատի արժեքը մանում է բանվորի սպառման բաղմաթիվ միջոցների արժեքի մեջ, իբրև սրա բաղադրիչ մաս: (Ահա մի քանի որինակ այն կապի, վոր կա երկաթի ու բանվորի կենսամիջոցների միջև.— երկաթ—գութան—հաց, պողպատ—կարի մեքենա—հագուստ, պողպատ—երկաթուղի—բանվորին հարկավոր արդյունքների փոխադրություն և այլն): Բայց այն գործարանատերերը, վորոնք կպել են արդյունահանության նորագյուտ լեզանակից, ամենևին նկատի չեն ունեցել այս բարդ կապը, վոր ներգործում է դանդաղ ու համապատասխարգային մասշտաբով:

Առանձին վերցրած, ամեն մի կապիտալիստի համար տեխնիկական կատարելագործություններն ավելի անմիջական ու ակնհայտ հրապույր ունեն:

բ. Ավելագիր հավելյալ արժեքը.

Խնդիրը հետևյալումն է. վոչ մի տեխնիկական կատարելագործություն կայծակի արագությամբ չի տարածվում արդյունա-

*բերության ավյալ ճյուղի մեջ: Կատարելագործությունների արագ տարածմանն արգելք են լինում թե գաղտնիքներն ու թե արտոնագրերը (патент), վորոնք տրվում են հնարիչներին և վորոնք առանձին ձեռնարկուների կողմից ձեռք են բերվում իսեփական նության: Խանգարում է կապիտալների պակաս լինելն ու պահպանողականությունն էլ, իսկ ամենից ավելի խանգարում է կապիտալի հին ներդրումների (вложение) զոռն էլ. այն կապիտալիստները, վորոնք մեծ կապիտալներ են դրել հին տիպի սարքավորման մեջ, չեն շտապում կատարելագործություններ մտցնելու՝ չնայելով ըստ կարելույն շատ ոգտագործել արդեն կատարված ներդրումները: Յեվ ահա, **բանի արտադրության նոր յեղանակը բավականացափ չի տարածվել**, այս նոր յեղանակը **հատուկ** ոգուտներ է տալիս նրանց, ովքեր կիրառում են այն:*

Ասենք թե ձեռքով պատրաստված հազար աղյուսը պարունակում է 60 ժամվա հանրորեն-անհրաժեշտ միջին աշխատանք, իսկ մեքենայով շինած էլի հազար աղյուսը՝ 40 ժամվա: Այնուհետև դնենք թե հանրորեն-անհրաժեշտ միջին աշխատանքի մեկ ժամվա ստեղծած արժեքը փողային ձևով 40 կոպեկ է: Այն ժամանակ ձեռքով պատրաստած հազար աղյուսի արժեքը հավասար է 24 ռուբլու, իսկ մեքենայով շինվածներինը՝ 16 ռուբլու: Քանի դեռ մեքենան տարածված չէր բոլորովին, աղյուսի հանրային արժեքը վորոշվում էր արտադրության վոչ թե նոր, այլ հին յեղանակով, ուրեմն հավասար էր 24 ռուբլու: Այնինչ մեքենայով շինած աղյուսի անհատական արժեքը հավասար էր 16 ռուբլու: Յեթե ընդունենք, վոր աղյուսի գինը զուգադիպում է նրա արժեքին, ապա աղյուսի «անհատական» արժեքի ու հանրային արժեքի տարբերությունը, վոր մեր որինակում հավասար է 8 ռուբլու, կմտնի այն ձեռնարկուի գրպանը, վորն առաջինն է մեքենաներ կիրառել իր աղյուսագործարանում:

Վորովհետև հազար աղյուսի «անհատական» արժեքն էլ, վոր անում էր 16 ռուբլի, համապատասխան քանակությամբ հավելյալ արժեք պարունակում է արդեն, ուստի վերոնշյալ 8 ռուբլին **ավելագիր հավելյալ արժեք է:**

Այսպես, ուրեմն, ավելագիր հավելյալ արժեքն ընդհանուր նորմայից գերազանցող հավելյալ արժեքի այն ավելցուկն է, վոր առժամանակ ստանում են արտադրության կատարելագործված յեղանակներ կիրառող կապիտալիստները: Սրանք այն ավելցուկն ստանում են այնքան ժամանակ, քանի նրանց կիրառած

կատարելագործությունն արտադրության սովորական յեղանակ չե դարձել դեռ:

*Ահա այս ավելադիր հավելյալ արժեքն է հենց այն հրապուրիչ խանծը (*приманка*), վոր կապիտալիստին հարկադրում է իր ձեռնարկության տեխնիկական մակարդակը բարձրացնելու, վորքան հնարավոր է։*

*Մեր կապիտալիստը կարող է ավելադիր հավելյալ արժեքի հաշվին փոքրիկ զիջում անել գնողներին, որինակ, հազար աղյուսը 24 ռուբլու փոխարեն կարող է ծախել 23 ռուբլով։ Սրանով նա հաղթում է իր մրցակիցներին, հենց սրանով էլ նրանց ստիպում է իր որինակին հետևել և իրենց մոտ աստիճանաբար մեքենային արտադրություն մտցնել։ Յերկրում սկսվում է աղյուսի արտադրության մեքենայացման (*машинизация*) պրոցեսը։ Այս պրոցեսը վերևում շարադրված պատճառով բավական յերկարատև պրոցես է լինում։ Քանի ծավալվում է այս պրոցեսն, այն ավելադիր հավելյալ արժեքը, վոր յուրացնում եյին մեքենայացված (*машинизированный*) ձեռնարկությունների տերերն, ավելի ու ավելի քչանում է։ Յերբ աղյուսի մեքենային արտադրությունը վըճռական գերակշռություն է ստանում, ավելադիր հավելյալ արժեքը չքանում է բոլորովին։ Հազար աղյուսի 16 ռուբլի արժեքը դառնում է աղյուսի հանրային արժեք։*

Այն ժամանակ արդեն այն փոքրաթիվ ձեռնարկուները, վորոնք դեռ պահպանում եյին արտադրության ձեռքով կատարվող յեղանակը, հարկադրված են լինելու իրենց արդյունքը սրա անհատական արժեքից ցած գնով ծախելու։ Յեթե ընդունենք, վոր աղյուսի գինը զուգադիպում է նրա արժեքին, սրանք հազար աղյուսին 8-ական ռուբլի պակաս կստանան։ Հասկանալի յե, վոր նրանք այսպիսի պայմաններում չեն կարող յերկար ժամանակ գլուխ պահել։ Նրանք կամ պետք է մեքենաներ մտցնեն և կամ թե ստիպված լինեն վերջիվերջո իրենց խանութ-մանութը փակելու։

Մարքսն ավելադիր հավելյալ արժեքը քննում է իբրև հարաբերական հավելյալ արժեքի ձևերից մեկը, թեև ավելադիր հավելյալ արժեք կարող է գոյանալ արտադրության այն ճյուղերում էլ, վորոնք ամենևին չեն ծառայում բանվորի պահանջները բավարարելուն։ Այս հասկանալու համար դառնանք դեպի այն րոպեն, յերբ առաջին ձեռնարկուն սարքի ձգեց աղյուսի մեքենային արտադրությունը։

ԱՎԵԼԱԴԻՐ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ Է։

Դիցուք թե աղյուսի արտադրության մեջ 10-ժամյա բանվորական որ լինելու դեպքում շահագործման նորման 100% է ընդհանրապես։ Այս նշանակում է, վոր բանվորը փոփոխուն կապիտալի եկվիվալենտն արտադրելու նպատակով բանել է 5 ժամ։ Այնուհետև յենթադրենք, թե հազար աղյուսի արժեքը (վոր 60 ժամվա հանրորեն-անհրաժեշտ միջին աշխատանքի արդյունք է) կիսով չափ կազմված է արտադրության միջոցների, որինակ, շենքի, վառելիքի արժեքից (հազար աղյուսին 30 ժամ) ու կիսով չափ էլ կենդանի աշխատանքի նոր ավելացրած արժեքից (դարձյալ 30 ժամ)։ Պարզ է, վոր աղյուսագործարանում հազար աղյուսին ընկնում է 3 որ։ Մի որվա մեջ միևնույն բանվորը միջին հաշվով պատրաստում է $333^1/_3$ աղյուս։ Իր որական աշխատանքի կեսով, վոր նա թափել է $166^2/_3$ աղյուսի վրա, նա ծածկում է իր բանվորական ուժի արժեքը։ Մյուս կեսն ստեղծում է հավելյալ արժեք։

Հիմա, յեթե աշխատանքի արտադրողականությունը մեքենայի շնորհիվ մեծացել է, բանվորը 5 ժամից ավելի պակաս ժամանակում է պատրաստում իր $166^2/_3$ աղյուսը, վորոնց հանրային արժեքը փոփոխված չէ։ Բանվորական որվա անփոփոխ մնալու միջոցին անհրաժեշտ բանվորական ժամանակը քչացել է, իսկ հավելյալ բանվորական ժամանակը շատացել։ Ակներև է, վոր մեջտեղում կատարվածը հարաբերական հավելյալ արժեքի արտադրություն է։

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ.

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔՆ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐԱԳ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆ (концентрация) ՈՒ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ (централизация).

§ 32. ԿԱՊԻՏԱԼԻԶՄՆ ՈՒ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.

*Այսպես, ուրեմն, բացի յուրաքանչյուր կապիտալիստի այն ձգտումից, վորի նպատակն է շատացնել բանվորի աշխատանքային բեռնավորումը (*трудовая нагрузка*—բացարձակ հավելյալ արժեքի արտադրությունը), կապիտալիզմին հատուկ է նաև*

այն ձգտումը, վորի նպատակն է շահագործման նորման մեծացնել՝ կրճատելով բանվորական անհրաժեշտ ժամանակն, այսինքն՝ արտադրելով հարաբերական հավելյալ արժեք։ Այն ձգտումը յուրաքանչյուր առանձին կապիտալիստի գիտակցության մեջ ընդունում է ավելադիր հավելյալ արժեքի ծարավի կերպարանք։

Սրա մեջ է գաղտնիքն այն տեխնիկական հեղափոխության, վոր կապիտալիզմն արեց համեմատական այնքան կարճ ժամկետում։

Կապիտալիզմը արտադրության յուրաքանչյուր ճյուղ վերցնում է այնպես, ինչպես վոր ճա կա։ Ընդամին նա չի խորշում տեխնիկական ամենահետամնաց ճյուղերից էլ։ Բայց հենց վոր տիրում է մի վորեվե ճյուղի, կապիտալիզմն արագորեն հեղափոխում է նրա տեխնիկան։

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՆ։

Կապիտալիզմի ժամանակ արհեստային տեխնիկայի խարսխի վրա հիմնված՝ սկզբում գարգացավ մանուֆակտուրան։ Մանուֆակտուրան այն ձեռնարկությունն է, վորտեղ գործածական է նույն այն գործիքը, վոր գործածական էր արհեստավորի արհեստանոցում էլ, բայց վորտեղ արտադրությունը կազմակերպված է արդեն կապիտալիստական սկզբունքներով յեվ մասսայական մասշտաբով։ Նույնիսկ այն դեպքում, յերբ բանվորական ուժ ծախողները մանուֆակտուրայում շարունակում են աշխատել հենց նույն այն մեթոդներով, վորով արհեստավորն աշխատում էր իր արհեստանոցում, այնուամենայնիվ աշխատանքի արտադրողականությունը մեծանում է շնորհիվ այն առավելությունների, վոր ունի կոլլեկտիվ աշխատանքը (կոոպերացիան) մենակ բանողի աշխատանքի հանդեպ։

«Ինչպես վոր հեծելազորի եսկադրոնի հարձակողական ուժը կամ հետևակ զնդի դիմադրության ուժն էլապես տարբերվում է հարձակման ու դիմադրության այն անհատական ուժերի գումարից, վոր հայտաբերում է ամեն մի առանձին հեծյալ կամ հետևակ,—ճիշտ նույն կերպ էլ առանձին բանվորների ուժերի մեքենական գումարը տարբերվում է այն հանրային ուժից, վոր հայտաբերում են բանվորները, յերբ բազմաթիվ ձեռքեր միաժամանակ ու միասին զբաղված են միևնույն անբաժան ոպերացիայի մեջ, այնպիսի ոպերացիայի, վորպիսին է, որինակ, վորևե ծանրություն բարձրացնելը, ծանր չարխ (ворот) պտտացնելը, կամ ճանապարհի վրայից վորևե արգելք վերացնելը։

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԿՈՂԵԿՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ Է։

Սակայն բացի այն նոր ուժից էլ, վոր առաջ է գալիս բազմաթիվ ուժեր միացնելուց ու մի հավաքական ուժ կազմելուց, արտադրողական աշխատանքների մեծամասնության ժամանակ հենց միայն հանրային շփման կամ կոնտակտի իրողությունն արդեն առաջ է բերում մրցություն ու հոգու յուրահատուկ գրգիռ, վորոնք բարձրացնում են առանձին բանվորների արտադրողականությունն, այնպես վոր հավասար բանվորական որում, 144 ժամվա մեջ 12 մարդը միասին ընդհանուր արդյունք շատ ավելի կարտադրե, քան 12 առանձին-առանձին բանվորներ, վորոնցից ամեն մեկն աշխատում է 12 ժամ, կամ մեկ բանվոր, վոր հաջորդաբար աշխատե 12 որ անընդհատ» (Մարքս)։

Ընդամին հնարավոր է լինում տնտեսել բնակարանից, վառելիքից, լուսավորությունից և այլն։

«Այն սենյակը, վորտեղ աշխատում են 20 ջուլհակ իրենց 20 հաստոցներով, ավելի ընդարձակ պիտի լինի, քան այն սենյակը, վորտեղ բանում է մի անկախ ջուլհակ յերկու վարպետացուների հետ։ Սակայն 20 մարդի համար հարկավոր մի արհեստանոց շինելու վրա շատ ավելի քիչ աշխատանք կգնա, քան 10 հատ այնպիսի արհեստանոց շինելու, վորոնցից յուրաքանչյուրը նախանշված է յերկու մարդի համար։

Բայց կապիտալիստական ձեռնարկությունը, վորը ծագել է արհեստային տեխնիկայի խարսխի վրա, չի կարող յերկար ժամանակ մնալ այս խարսխին կառչած։

Բազմաթիվ արհեստավորների միատեղ բանելն աշխատանքի բաժանման այնպիսի հնարավորություն է ընձեռում, վորի մասին արհեստավորի գործանոցը յերազել էլ չի կարող։ Սմիթն, որինակ, այսպես է նկարագրում գնդասեղների արտադրությունը իր ժամանակվա (XVIII դար) մանուֆակտուրայի մեջ.

«Մեկ գործավորը մետաղալար է քաշում, մյուսն ուղղում է այն, յերրորդը կտրատում է, չորրորդը ծայրը սրում է, հինգերորդը հղկում է մյուս ծայրն ասղագնդիկի համար։ Բուն իսկ ասղագնդիկը յերկու կամ յերեք առանձին ոպերացիաների առարկա յե. ասղագնդիկ կապել-պատրաստելը ջոկ զբաղմունք է, գլնդասեղները մաքրելը՝ մի այլ պարապմունք. նույնիսկ թղթերը ծակելն ու սրանց մեջ գնդասեղներ հագցնել-շարելը հատուկ ու ջոկ զբաղմունք է,—մի խոսքով՝ գնդասեղի ամբողջ արտադրությունը տրոհվում է տասնևութ ջոկ-ջոկ պարապմունքների»։

Այսպիսի բաժանման ժամանակ աշխատանքի արտադրողականությունը բարձրանում է յերկու պատճառով։ Նախ ամեն մի գործավոր կարողանում է լավ հմտանալ իր գործում։ Յերկրորդ՝ կարիք չի լինում, վոր գործավորը ժամանակ վատնե գործիքը կամ աշխատանքի յեղանակը փոխելու վրա։

Մանուֆակտուրան ամենից առաջ հեղափոխում է արտադրության **մեթոդները**։ Բայց մանուֆակտուրան սրա վրա դադար առնել չի կարող։

«**Մանուֆակտուրայի ժամանակաշրջանը պարզացնում, բարելավում յեվ հասցնում է բանող գործիքները՝ դրանք հարմարեցնելով մասնակի բանվորների բացառիկ պարզացված ֆունկցիաներին։ Հենց դրանով էլ մանուֆակտուրայի ժամանակաշրջանն ստեղծում է նյութական նախադրյալները մեքենայի**, վորը բազմաթիվ պարզ մեքենաների համակցություն (комбинация) է» (Մարքս)։

§ 33. ՄԵՔԵՆԱՆԵՐԸ.

Մանուֆակտուրայում կատարելագործված մեքենաները դառնում են **բանող մեքենայի** մասեր։ Կապիտալիզմը դուրս է գալիս մեքենայի արտադրողականության ընդարձակ ուղին։ Մանուֆակտուրային փոխարինելու յե գալիս **գործարանը**։

Ի՞նչ պետք է հասկանալ **բանող մեքենա** ասելով։

Մտնենք մի վորևե գործարան, թեկուզ հենց մահուդագործարանը։ Սկսենք դիտել մեքենային բաժանմունքից։ Այստեղ կտեսնենք մի վիթխարի շոգեմեքենա կամ մի շարք շոգեմեքենաներ։ Այստեղ վոչ բուրդ ու բամբակ կա, վոչ մանվածք ու վոչ էլ գործվածք։ Այստեղ մեքենաները վոչ մի հատուկ մանածագործական գործ չեն անում։ Նրանց արածն այն է միայն, վոր վառելիքի (փայտի, քարածխի, հողածխի—торф) մեջ թաքնված էներգիան դարձնում են շարժման էներգիա։

ՇԱՐԺԻՉ.

Այսպիսով շոգեմեքենաները շարժիչներ են լոկ (հետո մենք կծանոթանանք մի ամբողջ շարք այլ շարժիչների հետ)։ Մտնենք գործարանի մյուս բաժանմունքները։ Մանարանի բաժանմունքում մենք կտեսնենք մանիչ մեքենաներ։ Սրանք բուրդ ու բամբակը մանվածք են դարձնում։ Մանածագործական բաժանմունքում մանվածքը մանածագործական հաստոցների (станок) վրա գործվածք է դառնում։ Ապպրետուրայի բաժանմունքում գործվածքը մեքենաների մի ամբողջ

շարք սիստեմի միջոցով վերջնական մշակման է յենթարկվում։ Մի մեքենա մահուդի վրա խավ (ворс) է սարքում, մյուսն այս խավը հարթում հավասարեցնում է, յերրորդն արդուկում է մահուդը և այլն։

ԲԱՆՈՂ ՄԵՔԵՆԱ.

Մանիչ մեքենան, մանածագործ մեքենան, ապպրետուրային (аппретурный) մեքենաները—սրանք բոլորը **բանող** մեքենաներ են։ Սրանք անմիջաբար գործ ունեն մշակվող նյութեղենի հետ և անհրաժեշտ փոփոխություններ են մտցնում սրա մեջ։ Բանող մեքենաները հաղորդիչ փոկերի, գլանների (вал), ատամնավոր անիվների ու լծակների միջոցով միացած են շարժիչի հետ, վորը նրանց շարժման է դնում։

ՏՐԱՆՍՄԻՍԻԱ.

Այսպես, ուրեմն, մեր մահուդագործարանի մեքենաների սիստեմը մենք կարող ենք տրոհել հետևյալ խմբերի—**շարժիչ մեքենաներ, բանող մեքենաներ** ու հաղորդիչ մեխանիզմ կամ տրանսմիսիա։ Բուն իսկ բանող մեքենայի մեջ մենք հաճախ կարող ենք տարբերել գործիքը, վորն անմիջաբար ներգործում է մշակվող նյութի վրա (մանիչ մեքենայի իլիկը, կարի մեքենայի ասեղը), ու **մեխանիզմը**, վորն ուղղություն է տալիս գործիքին։

ԲԱՆՈՂ ՄԵՔԵՆԱՅԻ ՄԵՋ ՑԵՂԱԾ ԳՈՐԾԻՔԸ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ Է ԴՐՎՈՒՄ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՇՆՈՐՀԻՎ.

Մանածը մանիչ մեքենայից առաջ էլ կար, զգեստն էլ կարի մեքենայից առաջ կար։ Առաջներում այն գործիքին, վորն արդյունք է արտադրում, վոչ թե մեխանիզմն էր ուղղություն տալիս, այլ արհեստավորի ձեռքերը։ Արհեստ իմանալու էությունը վո՞րն էր ամենից առաջ։ Գործիքով աշխատել կարողանալը, գործիքը ճիշտ բանեցնելը։ Մարդուս ձեռքերը, վոտքերն ու մատները կարող են շարժվել ամեն ուղղությամբ։ Յուրաքանչյուր տվյալ դեպքում վարպետը պետք է հազար ու հազար հնարավոր շարժումների միջից ընտրե ու անե մեկ հարկավոր շարժում։

ԳՈՐԾԻՔՆ ՈՒ ԱՐՀԵՍՏԱՎՈՐԸ.

Այս բանը պահանջում է ընտելություն, հմտություն։ Բանող մեքենայի զորությունն այն է, վոր յուրաքանչյուր տվյալ դեպքում մեքենան գործիքին վորոշ շարժումներ միայն կարող է հաղորդել։

Ահա թե ինչու շատ ավելի հեշտ է, մեքենան կառավարել սովորելը, քան գործիքով բանելը։ Արհեստային աշխատանքի ժամանակ արտադրության պրոցեսը շատ մեծ կախում ունի աշխատողի (արհեստավորի) ճարպիկությունից։ Մեքենայի ժամանակ

արհեստավորին փոխարինում է **բանվորը**։ Բանվորին շատ ավելի քիչ փորձ ու ընտելություն է հարկավոր արդեն։ Մարքսն ասում է.

ՄԵՔԵՆԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԽՈՒՄ ՈՒՆԻ ԲԱՆՎՈՐԻ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԹՎԻՑ։

«Բանող գործիքների այն քանակը, որ մարդ կարող է միաժամանակ գործածել, սահմանափակված է արտադրության այն բնական գործիքների թվով, որ ունի մարդը, այսինքն սահմանափակված է նրա մարմնի օրգանների թվով։ Գերմանիայում մի ժամանակ փորձ են արել մեկ բանվորին հանձնարարելու, որ նա յերկու մանիչ անիվներ պտտացնե, այսինքն նրան հարկադրել են, որ միաժամանակ բանացնե թե յերկու ձեռքն ու թե յերկու վոտը։ Բայց այս խիստ մեծ լարում էր պահանջում։ Հետո հնարվեց ступальный ճախարակը, որ յերկու իլիկ ուներ, բայց միաժամանակ յերկու թել մանել կարողացող մանողները նույնքան հազվադեպ եյին, վորքան յերկգլխանի մարդիկ։ Այնինչ «Ջեննին» (մանիչ մեքենա, վոր հնարել էր Գարգրիվսը 1764—7 թվականներին[1]) հենց իր յերևան գալու սկզբից 12—18 իլիկով էր բանում. գուլպագործ մեքենան մի անգամից գործում է հարյուրավոր շյուղերով և այլն։ Այսպիսով բանից դուրս է գալիս, վոր այն գործիքների քանակը, վորոնցով մեկ բանող մեքենա աշխատում է միաժամանակ, հենց սկզբից արդեն այլևս կախում չունի այն օրգանական շրջանակներից, վորոնց մեջ դրված է բանվորի ձեռքի գործիքը»։

§ 34. XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ.

Ներկայումս արդյունաբերության ամենակարևոր, առաջամուղ ճյուղը մետաղագործությունն է։ Սակայն մետաղագործությունը մեջ տեղ գալով՝ այս գիրքը գրավել է XIX դարի յերկրորդ կեսին միայն։ Մինչ այդ՝ առաջնությունը պատկանում էր մանածագործությանը։ Յեվ հենց մանածագործական արդյունաբերության մեջ ավելի առաջ, քան մյուս ճյուղերում, հանդես յեկավ մեքենային արտադրությունը։ Կապիտալիզմի արած տեխնիկական հեղափոխության առաջին ծիծեռնակները բանող մեքանաներն եյին, այն էլ հատկապես մանիչ մեքենաները, վորոնք հնարվել, շինվել են XVIII դարի յերկրորդ կեսում (Գարգրիվս, Արկրայտ, Կրոմպտոն)։

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԱԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ։

Մանիչ մեքենայի գյուտից առաջ Անգլիայում մանածագործներին մանվածք պակասում էր։ Բուրդն ու բամբակը յերբեմն տարիներով սպասում եյին, վոր իլիկին հասնելու արժանանան։ Այժմ ընդհակառակը, մանածագործները չեյին հասցնում և չեյին կարողանում ամբողջ մանվածքը գործվածք դարձնել։ Գործին ոգնեց մանածագործական մեխանիկական հաստոցը, վոր հնարեց Կարտրայտը (1785)։

Մի շարք կատարելագործություններից հետո (Ռադկլիֆ ու Գարգրիվս) մեխանիկական հաստոցը լայնորեն տարածվեց XIX դարի սկզբում միայն։

Դեռևս 1830 թվականին Անգլիայում գործածության մեջ եյին 50 հազարից ավելի մանածագործական հաստոցներ։ 1913 թվականից մենակ բամբակեղենի արտադրության մեջ գործում եյին Անգլիայում 750,000, Գերմանիայում՝ 230,000, Ռուսաստանում մոտ 200,000 հաստոց։

Մանածագործական հաստոցը մանիչ մեքենան լրացրեց մեկ կողմից, այն է՝ նրա արդյունքի—մանվածքի հետագա մշակման կողմից։ Սակայն մանիչ մեքենան լրացման կարիք ուներ մի ուրիշ կողմից էլ (մանիչ մեքենայի բանեցրած հումքի կողմից), այն է՝ կարիք կար, վոր բամբակը մաքրելու մեքենա լիներ (հունդը մանոնից բաժանելը)։ Այսպիսի մեքենա յել հնարեց XVIII դարի վերջում ուսուցիչ Ուիտնին։

§ 35. ՇԱՐԺԻՉԸ.

Յերբ արդյունաբերության այնպիսի մի կարևոր ճյուղի մեջ, վորպիսին մանածագործությունն էր, բանող մեքենաների մի ամբողջ լիավարտ շարք կար հնարված մեջտեղում (բամբակազտիչ, մանիչ, մանածագործական),—այս բանից հետո միայն կարող էր լայն կիրառում ունենալ շոգեմեքենան, վոր ավելի վաղ էր հնարած։

ՇՈԳԵՄԵՔԵՆԱՆ։

Այսպիսով **բանող մեքենան** էր հատկապես, վոր շրջադարձու դեր կատարեց կապիտալիստական տեխնիկայի պատմության մեջ։ **Իսկ շարժիչը, ինչպես ասացինք, բանող մեքենայի համեմատ էր համարվում արդեն։**

Շոգեմեքենան արտադրության մեջ առաջին անգամ կիրառել է անգլիացի գարբին Նյուկոմենը։ Նյուկոմենի մեքենան գործ էր ածվում հանքահորերից ջուրը դուրս հանելու համար։ Նյուկոմենի 1712 թվականի մեքենայի մեջ շոգին շարժում է խցանը (поршень) դեպի մի կողմ միայն։ Հակառակ շարժումն առաջ է գալիս մթնոլորտի ճնշման շնորհիվ։ Ուատտի մեքենան (1784 թ.) կրկնակի ներգործություն ունի։ Շոգին հերթով ազդում է խցանի յերկու կողմերից էլ՝ խցանը շարժելով յետ ու առաջ։ Ուատտի մեքենան միանգամից շատ վառելիք էր տնտեսում Նյուկոմենի մեքենայի համեմատությամբ։ Ուատտը իր մեքենաները ձրի յեր տալիս

հանքատերերին և նրանցից ստանում էր միայն յերրորդ մասն այն տնտեսածի, որ նրանք ստանում էին վառելիքի գործածության ժամանակ։ Ուատտի ժամանակվանից սկսած՝ շոգեմեքենաների սահմանային հզորությունը (предельная мощность) մի քանի ձիուժից (ձիուժ կոչվում է այն ուժը, որ հարկավոր է 15 փութը մեկ վայրկյանում մեկ ոտնաչափ բարձրացնելու համար) հասել է մի քանի հազար ձիուժի։ Մեծ շոգենավերի վրա պատահում են շոգեմեքենաներ, որոնք ունենում են 20,000 ձիուժ։ Շոգու սկզբնական ճնշումը արդի շոգեմեքենայի մեջ 12 անգամ ավելի յե, քան Ուատտի մեքենայի մեջ։ Մեկ բանող ցիլինդրի փոխարեն գործ է ածվում նրանց մի ամբողջ սիստեմ։

Շոգին կաթսայից մտնում է առաջին ամենափոքրիկ ցիլինդրը։ Այստեղ ներգործելով շոգին անցնում է ավելի մեծ չափեր ունեցող մյուս ցիլինդրի մեջ, որտեղ համապատասխան չափով ճնշումը նվազում է (ճնշման տարբերությունը հարկադրում է, որ շոգին փոքրիկ ցիլինդրից անցնի մեծի մեջ)։ Ներգործելով յերկրորդ ցիլինդրի մեջ՝ շոգին անցնում է յերրորդ, էլ ավելի մեծ ցիլինդրի մեջ, որտեղ դարձյալ կատարում է իր գործը նախքան սառնարանն անցնելը։ Այսպես է յեռակի ծավալում ունեցող մեքենան։ Շոգին այսպես բազմաթիվ անգամ օգտագործելը մեծապես տնտեսում է վառելիքը։ Նույն այս նպատակով մի շարք կատարելագործություններ են արված հնոցավառման ու բուն իսկ այն կաթսայի կազմության մեջ, որը շոգի յե տալիս։ Արդի տնտեսող մեքենաները մեկ ժամում մեկ ձիուժի համար գործ են ածում $^{1}/_{2}$ կիլոգրամմ, փոխանակ $^{3}/_{4}$ կիլոգրամմի, որ գործ էր ածվում Ուատտի մեքենայի մեջ։

Շոգեմեքենան իր կնիքը դրեց XIX դարի ամբողջ կապիտալիստական արդյունաբերության վրա։ Այս դարի գործարանի շենքի մեջ ամենից առաջ աչքի յե ընկնում մի բարձր ծխնելույզ— շոգեմեքենայի շնչառության օրգանը։

ՇՈԳԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՊԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

Շոգեմեքենաները բազմաթիվ արմատական պակասություններ ունեն։ Նրանց իրադրումը (установка) շատ բարդ և հոյավիթխար է։

Կաթսային սնելու համար անհրաժեշտ է ջրի մշտական պաշար։ Յեթե աշխատանքի մեջ ընդհատում է տեղի ունենում, այն ժամանակ հարկ է լինում կամ պարապ տեղը շոգին պատրաստ պահել ու զուր վառելիք փչացնել և կամ թե աշխատանքը վերսկսելու միջոցին ժամանակ կորցնել ու վառելիք

վատնել՝ մեքենան նորից բանի ձգելու համար։ Այնուհետև շոգեմեքենաները օգտագործում են շատ չնչին մասն այն ջերմության, որ ստացվում է վառելիքից (6—9%, իսկ բազմապատիկ ծավալում ունեցող մեքենաների մեջ՝ 15—17%)։

Պետք է ասել, որ վառելիքի օգտակար ներգործության տոկոսը շատ ավելի բարձր է լինում, յերբ ներգործող շոգու ջերմությունը գործ է ածվում շենքերը տաքացնելու, յեռացնելու համար և այլն։

XIX դարի վերջերում շոգեմեքենաների հետ մրցել են սկսում ներքին այրման շարժիչները։

ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ ՇԱՐԺԻՉ։

Ներքին այրման շարժիչի մեջ, ինչպես և շոգեմեքենայի մեջ, գործը կատարում է խցանը, որը շարժվում է ցիլինդրի միջով։ Այստեղ խցանը շարժման մեջ է դրվում ոչ թե ջրշոգիով, այլ գազերով, որոնք առաջ են գալիս վառելիքի այրվելուց։ Այս գազերը հրում են խցանն, ինչպես որ հրացանի գնդակը հրում են այն գազերը, որոնք առաջ են գալիս վառոդի պայթյունից։ Շոգեմեքենայի մեջ ջրշոգին վառելիքի ու խցանի միջնորդն է։ Ներքին այրման շարժիչի մեջ վերացված է այս միջնորդությունը։ Վորովհետև ցիլինդրի մեջ մտնելով վառելիքը պետք է այրվի առանց մնացորդ տալու, ուստի այս վառելիքը պետք է լինի կամ գազանման և կամ թե հեղուկ (բենզին, կերոսին, նավթ)։ Վառելիքի հետ միասին պետք է ցիլինդրի մեջ թափանցի նաև օդի մի հոսանք, որ անհրաժեշտ է վառելիքի լիակատար այրման համար։

Ներքին այրման շարժիչները լինում են յերկտակտ ու քառատակտ։ Յերկտակտ շարժիչների մեջ խցանի յուրաքանչյուր յերկու շարժմանն ընկնում է այրվող նյութի մեկ բոցավառումն։ Բոցավառումը կատարվում է հատուկ լուցիչ (зажигательный) անոթի միջոցով։ Յերկու շարժումներից մեկը ներգործող շարժում է (рабочий ход) (խցանի շարժումը ցիլինդրի մեջ առաջացող գազերի ճնշման տակ) և մյուսն էլ դատարկ շարժում է (холостой ход) (խցանի հակադարձ շարժումը դեպի ցիլինդրի ներսը), շարժում, որ կատարվում է թափի անվի իներցիայի շնորհիվ։ Քառատակտ շարժիչի մեջ չորս տակտին գալիս է մեկ ներգործող շարժում։ Այսպես, Ոտտոյի շարժիչի մեջ (1870) առաջին շարժման ժամանակ ցիլինդրի մեջ թափանցում է այրվող նյութի ու օդի խառնուրդը, յերկրորդ շարժման ժամանակ այս խառնուրդը սեղմվում է, յերրորդ (ներգործող) շարժման ժամանակ

այրվող նյութը բոցավառվում է եղեկարական կայծից, չորրորդ շարժման ժամանակ գազերը, վորոնք առաջ ելին չեկել, դուրս են չեղնում։ Նույն այս շարժիչի մեջ չորս շարժումներից յերեքը կատարվում են թափի (маховое) անվի իներցիայի շնորհիվ, անիվ, վորն այս պատճառով պետք է ավելի խոշոր չափեր ունենա։

ԴԻԶԵԼ։ Սկզբում ներքին այրման շարժիչները գործ ելին ածվում մանր իրադրումների (установка) ասպարեզում միայն՝ առանց վտարելու շոգեմեքենան խոշոր արդյունաբերության ասպարեզից։ Բանը փոխվեց, յերբ ներքին այրման շարժիչը կատարելագործվեց Դիզելի ձեռքով (1894 թ.)։ Դիզելի քառատակտ շարժիչը գործում է այս կերպ։ Յուրաքանչյուր աոաջին շարժումը, վոր կատարվում է թափի անվի իներցիայի շնորհիվ, դուրս ողջ է ներս ծծում։ Յերկրորդը նույնպես իներցիայի շնորհիվ այնպես սեղմում է ճնշում միջի ողը, վոր վերջինս տաքանում, շիկանում է՝ հասնելով 650°-ի։ Յուրաքանչյուր չորրորդ շարժման սկզբին ցիլինդրի մեջ է ցողվում փոշիացած նավթը, վորը բոցավառվում է շիկացած ողի հպումից։ Այրվելուց ստացված գազերի ընդլայնման ուժի հաշվին կատարվում է յերրորդ ներգործող շարժումը։ Չորրորդ շարժումը դուրս է նետում ներգործած-սրծած գազերը։

Դիզելի շարժիչը քմահաճ չէ վառելիքի նկատմամբ (այս շարժիչն սպառում է ամենաբազմազան տեսակի հեղուկ ու կիսահեղուկ վառելիք)։ Այս շարժիչը տնտեսող է, վորովհետև գործի չի վերածում այն ամբողջ տաքության մինչև 35%-ը, վոր ստացվում է վառելիքը ցիլինդրի մեջ լուցելուց ու այրվելուց։ Իր առավելությունների շնորհիվ Դիզելի շարժիչը XX դարում վտարեց շոգեմեքենան բազմաթիվ խոշոր ձեռնարկություններից։

ՇՈԳԵՏՈՒՐԲԻՆ։ Ցիլինդրավոր շոգեմեքենայի հետ մյուս կողմից սկսեց մրցել շոգետուրբինը[1]։ Այստեղ շոգին կաթսայից ուղղակի սլանում է, խուժում տուրբինի անվի շուրջն ամրացված թիակների վրա և պտտացնում այս անիվը, ինչպես վոր ջուրը պտտացնում է ջրաղացի անիվը։ Վորովհետև միանիվ տուրբինները չափազանց արագ են շարժվում (վայրկյանում մինչև 500 անգամ), ուստի սրանց փոխարեն գործ են ածում բազմանիվ տուրբիններ։ Բոլոր անիվները պնդացրած են ընդհանուր գլանի վրա։ «Փոխանցիչ» հատուկ թիակների ոգնությամբ շոգին մեկ անվից անցնում է մյուս անվին՝ հրելով և շարժելով «ներգործող» թիակները և հարկադրելով սրանց, վոր շարժվեն գլանի հետ միասին։ Շոգետուրբինները գործի չեն վերածում այն տաքության մինչև 25%-ը, վոր պարունակվում է այրվող վառելիքի մեջ։ Այժմ շինվում են տասնյակ-հազարավոր ձիուժի հզորություն ունեցող շոգետուրբիններ։ Եղեկտրակայաններում ու ռազմանավերում շոգեմեքենաները բոլորովին վտարված են շոգետուրբինների շնորհիվ։

ԽՍՀՄ մեջ մոտ 80 հատ հզոր շոգետուրբինային իրադրումներ (установка) կան. Մոսկվայում՝ Մոգեսը (Могэс), Պրոխորովկան, Լենինգրադում՝ Լենինգրադի եղեկտրականը, Գուտիլովի գործարանը, Խարկովում՝ եղեկտրականը և այլն։

§ 36. ՎԱՌԵԼԻՔ։ ԵՂԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

ՋԵՐՄԱՇԱՐԺԻՉՆԵՐԻ ԳԱԿԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։ Ջերմաշարժիչները (շոգիով այրումն ունեցող ու ներքին այրման ջերմաշարժիչներն) անուղղելի պակասություններ ունեն։ Այն տարածությունը, վորին կարող է սպասարկել յուրաքանչյուր շարժիչ առանձին վերցրած, շատ փոքր է։ Տրանսմիսիան (լավագույն դեպքում այն խողովակները, վորոնք կենտրոնական կաթսայից շոգին տանում են դեպի գործանոցային շենքերում գտնվող առանձին ցիլինդրները) եներգիայի շատ մեծ տոկոս է կլանում, ծանրաբեռնում, նեղացնում և ֆաբրիկայի կամ գործարանի շենքը։ Ջերմամեքենաները փչացնում են ողը և հաճախ աղետների պատճառ են լինում։

Ջերմաշարժիչների քանակի ու հզորության վիթխարի աճման շնորհիվ արդի կապիտալիստական յերկրների հանդեպ ծառացել է վառելիքի սովի ուրվականը։

ՓԱՅՏԵ ՎԱՌԵԼԻՔ։ Հանքավայրերի, գործարանային քաղաքների ու յերկաթուղիների մոտերքում յեղած անտառները մարդիկ վաղուց կրել, սպառել են։ Անտառների վերջնական վոչնչացման հետևանքը կարող է այն լինել, վոր գետերը կծանծաղանան, ավազուտները կծավալվեն և մի շարք կլիմայական աննպատակ փոփոխություններ առաջ կգան։ Սրա շնորհիվ յեվրոպական յերկրներում անտառահատումը կատար-

[1] Շոգետուրբինը կարող եր կառուցվել XIX դարի 80-ական թվականներին միայն։ Առաջ չկար բավականաչափ ամուր նյութեղեն, վորը կարողանար դիմանալ պտտվող տուրբինի սարսափելի արագությանը։ Բացի սրանից, անհրաժեշտ ճշտություն ել չկար մեքենայի մասերի արտադրության մեջ։

վում է կամաց-կամաց այն հաշվով, որ հատումից առաջացող պակասորդը ծածկվի աճումն ավելացնելով։ Փայտե վառելիքը մեծ մասամբ հետին շարք է մղվել։ Նրա տեղը բռնել է քարածուխը, որի պաշարներին են մեծապես պարտական նշանակալից չափով իրենց արդյունաբերության ծաղկյալ վիճակով խոշորագույն կապիտալիստական երկրները (Անգլիա, Գերմանիա, Միացյալ Նահանգներ)։ Սակայն քարածխի պաշարներն աստիճանաբար սպառվում են, ինչպես և նավթի պաշարները, որը փոխարինում է քարածխին։ Ավտոմոբիլային ու ոդային տրանսպորտն, այլ և մեքենայացված հողագործությունը այս արժեքավոր վառելիքի ավելի ու ավելի մեծ քանակ են կլանում[1]։ Քարածխի հանքաշերտերն (залежи) ու նավթի աղբյուրները վեճ ու կռվի առարկա չեն կապիտալիստական պետությունների միջև։

ՔԱՐԱԾՈՒԽ։

ՆԱՎԹ։

Տասնիններորդ դարի վերջերին ու քսաներորդի սկզբներին լայնորեն տարածվում է ելեկտրաշարժիչը։ Իսկապես դինամո-մեքենան հնարքի-այի վոչ մի այնպիսի աղբյուր չի ոգտագործում, վորն առաջանծանոթ լիներ։ Դինամո-մեքենան լոկ այն է անում, վոր շարժիչ

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՈՒԺԻՆ։

[1] Ներքին գործոց մինիստրության՝ վաշինգտոնի Ցերկրաբանական Բյուրոյի տվյալների համաձայն Միացյալ Նահանգները տարեկան 400 միլիոն տոննա նավթ գործածելով՝ միայն 18 տարի կեն ապահովված սեփական նավթով։ Մեջ բերած թվանշանները հասկանալի կլինեն, եթե մտաբերենք, որ ներկայումս Միացյալ Նահանգներում գործածության մեջ են առնվազը 12 միլիոն ավտոմոբիլ։

«Անգլիական տվյալների համաձայն՝ պինդ վառելիքի համաշխարհային ընդհանուր պաշարը հավասար է 7,5 բիլիոն (միլիոն միլիոն) տոննի։ Տարեկան սպառումը 1,250 միլիոն տոննա է (1920 թվականին ամբողջ աշխարհում հայթայթված է 72 միլիարդ փութ ածուխ)։ Եթե սպառումը չշատանար, այս քանակը կարող էր բավականացնել 6,000 տարի։ Իսկ եթե հաշվի առնենք սպառման տարեկան աճումն, ապա այս ամբողջ պաշարն սպառելու համար շատ ավելի փոքր ժամկետ կտեսնվի. այսպես, ընդունելով այս աճումը 5% (բարդ տոկոսների հասարակ հաշվները անելով), կստանանք 117 տարվա տևողություն ունեցող ժամկետ (ըստ Ռայդիգի)։

Ինքնըստինքյան հասկանալի է, վոր քարածխի պաշարներն ոգտագործելու չափով էլ հարկ է լինում խորացնել հանքասրահները և հետևաբար աշխատել ավելի բարձր բարեխառնության ժամանակ (յերկրի խորքերում բարեխառնությունը յուրաքանչյուր 25—40 մետրին բարձրանում է մի ինչ հաշվով մեկ աստիճան)։ Աճում են թե արտադրության ծախքերն ու թե աշխատանքի դժվարությունը։ 1858 թվականին ամենախոր հանքասրահը հասնում էր մինչև 300 մետրի։ 1910 թվականին Անգլիայում հասել էին մինչև 1,061 մետրի, իսկ Բելգիայում՝ մինչև 1,250 մետրի։

եներգիան դարձնում է ելեկտրական հոսանք, իսկ այս էլ իր հերթին շարժիչ եներգիայի է փոխարկվում ելեկտրաշարժիչի կողմից։ Դինամո-մեքենան շարժման մեջ է դրվում ներքին այրման շարժիչների, շոգեմեքենայի, շոգետուրբինների ու ջրատուրբինների միջոցով։ Դինամո-մեքենան ոգտագործում է եներգիայի այն աղբյուրները, վորոնք վաղուց հայտնի չեն։ Ջրի վայր թափվելու ուժը շոգուց շատ ավելի առաջ էր գործադրվում ջրաղացներում, մահուդալմկարաններում (сукновальня) և այլն։ Սակայն քանի դեռ ջրային եներգիայից կարող էին ոգտվել այն ձեռնարկությունները միայն, վորոնք բուն իսկ ջրային եներգիայի աղբյուրի մոտ էին գտնվում, ջրային եներգիայի՝ արդյունաբերության մեջ ունեցած դերը յերկրորդական էր։

ՍՊԻՏԱԿ ԱԾՈՒԽ։

Միայն դինամո-մեքենան և ջրի անկման ուժը դարձնում սպիտակ ածուխ, վորը պետք է լրացնի սև ածխի պրծնող պաշարները։

Ամբողջ աշխարհի ջրային եներգիան կարող է հարյուրավոր ու հարյուրավոր միլիոն ձիուժ տալ (մաքսիմումը հաշված է 1,500 միլիոն ձիուժ)։ Իսկ ներկայումս այն ջրային իրաղրուսիների ընդհանուր հզորությունը, վորոնք գործում են կամ թե կառուցվում, հասնում է մոտ 30 միլիոն ձիուժի, այսինքն կազմում է լոկ 6%-ն ամբողջ աշխարհի այն ուժային ապպարատի, վոր ներկայումս հասնում է կես միլիարդ ձիուժի։

ՏԵՂԱԿԱՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ։

Շատ ձեռնտու չե ելեկտրակայաններում ոգտագործել այսպես կոչված «տեղական վառելիքը»—հողածուխ[1], այրվող թերթաքար (сланец), ածխի վատ տեսակներ ու նույնիսկ վառելափայտ։ Այս վառելիքները հեռու վայրեր փոխադրելը ձեռնտու չե։ Այս պատճառով էլ շատ ավելի ձեռնտու չե ելեկտրակայաններ շինել այն վայրերում, վորտեղ վատ տեսակի վառելիք է հայթայթվում, և ապա եներգիան հաղորդիչ լարերի միջոցով փոխադրել այնտեղ, վորտեղ այս եներգիան հարկավոր է։

Փոխանակ $1^1/_2$ միլիարդ փութ պայմանական[2] վառելիքի,

[1] Հողածուխն սկսում է ավելի ու ավելի մեծ դեր խաղալ շնորհիվ այն հանգամանքի, վոր կատարելագործվում են նրա հայթայթման յեղանակները։ Ջրային ուժեղ հոսանքի շնորհիվ հողածուխը բացվում, լուծվում է այն աստիճան, վոր հետո այս կարելի չե դուրս մղել ջրհանների միջոցով, վորից հետո հողածուխը նորից չորացնում, մինչև ջուրը հանում են (ջրահողածուխ)։

[2] Վառելիքի տարբեր տեսակները տաքության հավասար քանակ չեն տալիս այրվելու ժամանակ։ Եթե Դոնավազանի միջակ քարածխի փութն ըն-

վոր բանեցնում է ռուսական արդյունաբերությունը պատերազմից առաջ, բավական կլիներ 800 միլիոն փութ, եթե մեր արդյունաբերությունը համակենտրոնացված լիներ փոքրաթիվ կետերում և ելեկտրիֆիկացիայի ենթարկված լիներ։ Եթե նավթային լուսավորություն ունեցող քաղաքում ելեկտրականություն շինվի, որն ունենա Դիզելի շարժիչ, ապա վերջինս միևնույն չափով լույս մատակարարելու համար 8 անգամ քիչ նավթ կբանեցնի։

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՈՒԺԹՁԱՆ ՄԱՆՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ (ДРОБИМОСТЬ)։

Ելեկտրական եներգիան անչափ մանրելի է։ Այս եներգիան միապես հարմար ու սիրուն կարող է շարժման մեջ դնել վիթխարի մեքենական մուրճն ու պատիկ գործիքը, վորով մատիտներ են սրում։ Ամեն մի հաստոց, յուրաքանչյուր բանող մեքենա կարող է ունենալ հատուկ շարժիչ, ընդ վորում հոսանքը շարժիչի մեջ մտցվում և գործի ժամանակ միայն։ Այս պատճառով տրանսմիսիան կարելի չէ մինիմումի հասցնել։

Ընդհանրապես ելեկտրականությունը ձեռնարկության կերպարանքը փոխում է անճանաչելիության աստիճան։ Եթե ձեռնարկությունն իրեն հարկավոր եներգիան ստանում է դրսից, ապա չքանում է վառելը, շոգեկաթսաները, բարձր ծխնելույզները, ու սրանց հետ կապված մուրը։ Մեծավիթխար տրանսմիսիայի բացակայության շնորհիվ գործանոցների ողն ու լույսն առատանում է։ Բանող մեքենաները կարիք չեղած դեպքում հեշտությամբ կարելի չէ փոխադրել մի տեղից մի ուրիշ տեղ։

§ 37. ՏՐԱՆՍՊՈՐՏԸ.

Արտադրության չեղանակի հեղաշրջումը, վոր կատարված է լինում արդյունաբերության մեկ վոլորտում, առաջ և բերում նույնպիսի հեղաշրջում մյուս վոլորտներում էլ։ Իսկ արդյունաբերության ու հողագործության արտադրության չեղանակի մեջ կատարված հեղաշրջումն անհրաժեշտ դարձրեց հանրային-արդյունաբերական պրոցեսի ընդհանուր պայմանների, այսինքն հարաբերությունների (сношение) ու տրանսպորտի միջոցների հեղաշրջումն էլ։ Այն-

---

դունենք միավոր, ապա մերձմոսկովյան գորշ քարածխի փութը պետք է ընդունել $^3/_7$, չոր վառելափայտի փութը՝ $^9/_{20}$, իսկ նավթի փութը՝ $^{10}/_7$ միավոր։ Ցերը հաշվում են յերկրի վառելիքային հարստությունները, չէ կարելի նավթի փթերը պարզապես գումարել հողածխի, վառելափայտի ու այլոց փթերի հետ։ Հարկավոր է բոլորը վերածել մեկ միավորի, այսպես կոչված «պայմանական» միավորի։ Ռուսաստանում պայմանական վառելիքը Դոնավազանի միջակ ածուխն է։

պիսի հասարակության հարաբերությունների ու տրանսպորտի միջոցները, վորի միջնակետը (средоточие) մանր հողագործությունն էր սրա ոժանդակ տնային արդյունաբերության հետ ու քաղաքային արհեստը, էլ ամենևին չէին կարողանում բավարարել մանուֆակտուրայի ժամանակաշրջանի արտադրության կարիքները, մի ժամանակաշրջանի, վոր ուներ հանրային աշխատանքի լայն բաժանում, աշխատանքի միջոցների ու բանվորների համակենտրոնացում, գաղութային շուկաներ։ Հենց այս էր պատճառը, վոր հարաբերությունների ու տրանսպորտի այն միջոցները իրոք հեղաշրջում կատարվեց։ Ճիշտ նմանապես տրանսպորտի ու հարաբերությունների այս միջոցներն էլ, վոր ժառանգություն ելին մնացել մանուֆակտուրային ժամանակաշրջանից, շուտով անտանելի կապանքներ դարձան խոշոր արդյունաբերության համար, վորն ունի արտադրության տեխնիկական թափ, մասսայական չափեր, վորը մեծաքանակ կապիտալ ու բանվորներ և մշտապես շպրտում արդյունաբերության մի վոլորտից մի ուրիշ վոլորտ և վորն ստեղծում է նորանոր շաղկապներ, վորոնք ընդլայնվելով վեր են ածվում համաշխարհային շուկայի» (Մարքս)։

Մեքենան տրանսպորտի ասպարեզը մուտք է գործել արտադրության մեջ մուտք գործելուց մի քանի տասնամյակ հետո։ Կրամպտոնը մանիչ մեքենան կատարելագործել է 1779 թվականին։ Մանածագործական մեխանիկական հաստոցն Անգլիայում լայն կիրառում է ունենում XIX դարի սկզբին։ Հենց այս ժամանակ

ՇՈԳԵՆԱՎ ՈՒ ՇՈԳԵԿԱՌՔ։

էլ Ֆուլտոնը շինում և շոգենավն (1807) ու Ստեֆենսոնը՝ շոգեկառքը (1814)։ Շոգեմեքենան իր հսկա լինելու շնորհիվ կարողացավ նվաճել խոշոր տրանսպորտը միայն։ Ոժանդակ ու մանր փոխադրությունները և մոտիկ յերթևեկությունները դեռ յերկար ժամանակ կատարվում ելին կենդանի ուժի միջոցով։ Սակայն XIX դարի վերջում ներքին այրման թեթև ու վոչ մեծ շարժիչի շնորհիվ արագ տարածվում է ավտոմոբիլը։ Ավտոմոբիլը մենակ սայլատար ու կառատար ձիու հետ մրցել չի սկսել։ Ինչպես ցույց տվեց համաշխարհային պատերազմի փորձն,

ԱՎՏՈՄՈԲԻԼ։

ավտոմոբիլը կարող է մրցել յերկաթուղու հետ էլ։

Անիվների հատուկ լրացուցիչ սիստեմ (թրթուրանման շարժում) ունեցող ավտոմոբիլը կարող է առաջ շարժվել ինչ մակերևույթի վրայով էլ վոր ուզես—ավազի, քարերի վրայով և այլն։ Այդպիսի ավտոմոբիլներ նստած այժմ անցնում են մեծ անապատ-

նները, վորոնք առաջ միայն ուղտերի կարավաններին էին մատչելի։ Թրթուրանման շարժում ունեցող ավտոմոբիլները հրետանուց վատարում են ձիերին։

Դիզելի շարժիչը, վորը իր խոշորության շնորհիվ պետքական չե ավտոմոբիլի համար, մուտք է գործել ծովային տրանսպորտի մեջ։ Դիզելի շարժիչ ունեցող նավը կարող է առանց նոր վառելիք վերցնելու լողալ 57 որ, այնինչ ածխով բանող շոգենավերը (վորոնք շոգեշարժիչ ունեն) կարող են լողալ վոչ ավել քան 15 որ։

ՋՐԱՆՑՔՆԵՐ։

Յեվրոպան Ասիայի, Ավստրալիայի ու Արեվելյան Աֆրիկայի հետ միացնելու գործում վիթխարի նշանակություն ունեցավ Սուեզի ջրանցքը փորելը։ Պանամայի ջրանցքը միացրել է Ատլանտյան ու Խաղաղ ովկիանոսի ջրերը։ Մի շարք ծովային ջրանցքներ են փորված, և արհեստականորեն խորացված ու լայնացված են շատ գետերի հուները։ Այս բոլորի հետևանքով ծովային ու գետային նավագնացությունը չտեսնված չափերի յե հասել։

Սուեզի ջրանցքը փորելու հետևանքով յեվրոպական նավահանգիստների ու Հնդկաստանի միջև ընկած ճանապարհը կրճատվել է այս կերպ. Տրիեստից Բոմբեյ գնացող շոգենավերինը՝ 37 որով, Ջենովայից Բոմբեյ՝ 32, Մարսելից՝ 31, Լիվերպուլից, Լոնդոնից, Ամստերդամից ու Համբուրգից՝ 24 որով։

Պանամայի ջրանցքը փորելու հետևանքով Նյու-Յորկից Սան-Ֆրանցիսկո ընկած ճանապարհը կարճացել է յերկու անգամից ավելի։ Նյու-Յորկից Չիլի ընկած տարածությունը կրճատվել է յերկու անգամ։

Նյու-Յորկից Պանամայի ու Հոնոլուլուի վրայով մինչև Յոկոհամա ընկած տարածությունը հավասար է 10,000 կիլոմետրի, իսկ Նյու-Յորկից Սուեզի, Սինգապուրի ու Շանհայի վրայով մինչև Յոկոհամա՝ 13,600 կիլոմետր։ Պանամայի ջրանցքը յեվրոպական նավահանգիստները մոտեցրել է Խաղաղ ովկիանոսի ամերիկյան նավահանգիստներին։ Լիվերպուլից Մագելլանի նեղուցով մինչև Սան-Ֆրանցիսկո հավասար է 14,000 մղոնի, Պանամայի ջրանցքով՝ 8,000 մղոնի։

ՈՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ։

Ավտոմոբիլիզմն այնքան կատարելագործեց ներքին այրման շարժիչը, վոր հնարավոր դարձավ ողից ծանր ապպարատներով — աերոպլաններով ողագնացությունը։ Այստեղ շարժիչի միջոցով շարժման մեջ է դրվում պրոպելլերը, վորն ողի մեջ գործում է այն սկզբունքի համաձայն, վորով շոգենավի պտուտակը գործում է ջրում։ Վերջին տարիներում ավիացիան արդեն սկսում է լուրջ դեր խաղալ ճանապարհորդներ, պոստ և թեթև ու շատ բեռներ տեղափոխելու գործում[1]։

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՈՒԺԻՆԸ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԵՋ։

Ընդամին տրանսպորտի ասպարիզում ավելի ու ավելի յե սատկանում ելեկտրական էներգիայի կիրառումը։ Ելեկտրական էներգիան ամենից առաջ նվաճել է քաղաքային ու մերձքաղաքային տրանսպորտը (ելեկտրաքարշներ, ստորերկրյա յերկաթուղիներ և այլն)։ Վորքան ավելանում է հզոր ելեկտրակայանների թիվը, այնքան ելեկտրականությունն սկսում է շոգին վատարել սովորական յերկաթուղիներից էլ[2]։

ԿԱՊ։

Տրանսպորտի զարգացման զուգընթաց տեղի յե ունենում կապի զարգացումն էլ։ Պոստը լինում է սովորական, պնևմատիկ[3] ու ողային։ Հեռագիրն ու հեռախոսը լինում են սովորական, կաբելային ու անթել (ռադիոհեռագիրն ու ռադիոհեռախոսը)։

Տրանսպորտի ու կապի տեխնիկայի արագ զարգացման շնորհիվ ավելի ու ավելի ցայտուն և հանդես գալիս համաշխարհային տնտեսության միությունը, վորը վարագուրվում և կապիտալիստական առանձին պետությունների մեկուսացած վիճակով։

§ 38. ՄԵՔԵՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՅՆ ԻՄԱՍՏՈՎ.

Վերևում մենք մատնանշել ենք, վոր բանող մեքենան վերացրեց այն կախումը, վոր արտադրություն ուներ բանվորների որգանների թվից։ Մեքենային արտադրությունն այս բառի լայն իմաստով (արտադրություն, վոր հիմնված և ֆիզիկայի ու քիմիայի որենքների նպատակահարմար ոգտագործման վրա) շատ ավելի հեռու յե գնում։

---

[1] Ողային հաղորդակցությունը յերթևեկության միակ յեղանակն է, վոր կարող է կատարվել ուղիղ գծով։ Սրա շնորհիվ, որինակ, Լոնդոնից Մոսկվա ուղևորվելու ժամանակ ճանապարհը կրճատվում է $^1/_4$-ով։

[2] Ելեկտրական քարշը (электротяга) ամենից ավելի ձեռնտու յե անընդհատ շարժման ժամանակ։

[3] Մրարների ու ծանրոցների փոխադրությունը կատարվում է փոքրիկ անցքերով (канал), վորտեղ բեռը շարժվում է սեղմած, խտացրած ողի հրելու հետևանքով։

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՀԱՐԹՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԼՈՒՍԻ ՈՒ ՋԵՐՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ։

Էլեկտրական հներգիան դառնում է լույս։ Էլեկտրական լուսավորությունը վոչ միայն վտարել է մոմն ու նավթը քաղաքներից, այլ և վերջին ժամանակներում սկսել է մրցել գյուղական մարխի (лучина) հետ։ Բոլոր խոշոր ու գործարաններում շոգեմեքենայի կողքին սարքում են հատուկ դինամոներ լուսավորության համար։

ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

Տեխնիկան վիթխարի հաջողություններ է ձեռք բերել յերկաթ մշակող արդյունաբերության մեջ։ Յերկաթի հանքանյութը (руда) յերկաթի ու թթվածնի քիմիական միացումն է։ Մետաղ ստանալու համար անհրաժեշտ է թթվածինը զատել հանքանյութից։ Այս նպատակին հասնում են նրանով, վոր մանրացրած հանքանյութը խառնում են ածխի հետ և այրում, ըստ վորում հանքանյութի թթվածինը միանում է ածխի թթվածնի հետ, և ստացվում է զուտ մետաղ։ Մինչև XVIII դարն այս գործողությունը կատարվում եր նախնադարյան յեղանակով, դաբրանոցների հնոցներում։ Հանքանյութից անմիջապես յերկաթ եր ստացվում։ Առաջադիմական մեծ քայլ է հալոցային յեղանակը (доменный способ), վորը կիրառվում է տասնութերորդ դարի սկզբից։ Հալոցային կամ հանքասրահի վառարաններում ածխի հետ[1] խառնված յերկաթի հանքանյութից ստացվում է հալված չուգուն, վորը 2-ից մինչև 5% ածխածին և պարունակում։ Չուգունը մասամբ բանացնում են զանազան բաներ—վագոնի անիվներ, ամանեղեն և այլն ձուլելու համար, մասամբ պողպատացնում են, այսինքն պարունակած ածխածինը նվազեցնելով պողպատ են դարձնում (պարունակած ածխածինը լինում է $^1/_2$-ից մինչև 2%) և կամ կռելու յերկաթ են շինում (սրա պարունակած ածխածինը լինում է $^1/_2$%-ից էլ պակաս)։ Պողպատացման յեղանակները XIX դարի ընթացքում հասան կատարելագործության ամենաբարձր աստիճանին։ Առաջ կիրառվում եր сыродутный յեղանակը, յերբ չուգունը յերկաթ էին դարձնում յեռակի հալելով, վորի հետևանքով ստացվում եր кричный յերկաթի գունդ կտոր։

ՊՈՒԴԼԻՆԳԱՑՈՒՄ։

Առաջադիմական մի քայլ է պուդլինգայինը վառարանը, վորտեղ չուգունին չէ դիպչում այրվող նյութեղենը, և վորտեղ մետաղի զանգվածները վառարանի ներսում խառնում են մեքենական փոցխերը։ Պողպատացման ժամանակ աշխատանքի արտադրողականության վիթխարի մեծացման է հասցնում Բեսսեմերի յեղանակը։

ԲԵՍՍԵՄԵՐԻ ՑԵՂԱՆԱԿ։

Բեսսեմերի կոնվերտերների մեջ հալված չուգունի միջով անցնում է ողի մի հոսանք, վորն այրելով հանում է ավելորդ ածխածինը. 600 փութ չուգունը Բեսսեմերի յեղանակով պողպատ են դարձնում 20 րոպեյում, այնինչ պուդլինգացման ժամանակ սրա համար հարկավոր եր 3 որ, իսկ сыродутный սիստեմի ժամանակ՝ 3 շաբաթ։ XIX դարի վերջում լայն կիրառում ունեցավ չուգունից պողպատ ու յերկաթ ստանալու Մարտենի յեղանակը, վորի ժամանակ հալում են կռելու յերկաթը կամ յերկաթի գունդ կտորը։ Վերջապես վիթխարի դեր է կատարել Թոմասի յեղանակը, վորի միջոցով մշակվում են յերկաթի այն հանքանյութերը, վորոնք ֆոսֆոր են պարունակում։ Մինչև Թոմասի գյուտն (1872) այսպիսի հանքանյութերն արժողություն չունեյին, վորովհետև ֆոսֆորի ներկայությունը մետաղը դարձնում եր փխրուն։ Թոմասը կիր ու մագնեզիտ գործածելով ֆոսֆորուտ չուգունից ստանում եր մի կողմից պողպատ, վոր ֆոսֆորից ազատ եր, իսկ մյուս կողմից՝ ֆոսֆորաթթու պարունակող քծվարներ (шлаки), վորոնք աղացած վիճակում (Թոմասի ֆոսֆորային ալյուր) հրաշալի պարարտանյութ են։

ՄԱՐՏԵՆԻ ՑԵՂԱՆԱԿԸ։

Կարևոր նշանակություն ունի այն նվաճումը, յերբ հնարավորություն է ստացվում հալված չուգունը վերամշակման համար անմիջապես փոխադրել կոնվերտերի մեջ՝ առանց սառեցնելու և յերկրորդ անգամ տաքացնելու։ Այն գաղերը, վորոնք ստացվում են հալոցներում, ոգտագործվում են իբրև վառելիք գազաշարժիչների։

Չուգունի համաշխարհային հալթայթումը 1920 թվականին հասել եր 4,837 միլիոն փթի։ Բացի սրանից, հարկավոր է ուշադրության առնել չուգունի, յերկաթի ու պողպատի գունդ կտորների այն վիթխարի քանակները, վորոնք վերամշակվում են յուրաքանչյուր տարվա ընթացքում։ Վերջնիս դերը շարունակ մեծանում է մետաղագործության մեջ։ Յելնելով այն հանգամանքից, վոր տարեց-

[1] Առաջներում գործադրվում եր փայտածուխ։ 1735 թվականից սկսած վերջնիս փոխարեն գործ են ածում կոկս։

Կոկսն ստացվում է ածուխը կամ հողածուխը խանձելով (обжигание) ճիշտ այնպես, ինչպես վոր փայտը խանձելով ստացվում է փայտածուխ։ Կոկսը ծանր է (1,9 անգամ ծանր է ջրից), ունի կիսամետաղային փայլ։

տարի նվազում և չերկաթի այն մասը, որը փչանում է ժանգոտվելուց, կորչում և նավաբեկությանց ժամանակ և այլն, վոմանք ընդունում են, որը չերկաթ մշակող արդյունաբերությունը ժամանակին ապրվելու չե (обходиться) մենակ գունդ կտոր չերկաթով՝ սրա վրա ավելացնելով մետաղի համեմատաբար փոքրիկ քանակ միայն, որը նորից ստացվելու չե հանքանյութից։

Ներկայումս պողպատի բարձր տեսակները պատրաստվում են այնպիսի վառարաններում, որոնք տաքանում են ելեկտրական եներգիան չերմության դարձնելու միջոցով։ Ելեկտրական վառարանը չերմության այնպիսի բարձր աստիճաններ և տալիս, որը չի կարելի ստանալ անմիջապես վառելիք վառելով։ Ելեկտրական չեղանակով կարելի չե պողպատ պատրաստել չուգունի ու չերկաթի մտորին տեսակներից, որոնք այլ չեղանակների ժամանակ միանգամայն անպետք են արտադրության համար։

ԵԼԵԿՏՐԱՊՈՂՊԱՏ։

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1917 թվականին արդեն 50 միլիոն փթից ավելի ելեկտրապողպատ եր հայթայթված։

Մեզանում ելեկտրապողպատ պատրաստվում է Բելյայի անվան գործարանում, որը Զատիշչե կայարանին մոտ է (Մոսկվա-Նիժեգորոդյան չերկաթուղու Բոգորոդսկի ճյուղ)։

Ալյումին հայթայթելու գործում ելեկտրաչերմությունը կատարյալ հեղաշրջում մտցրեց։ Այս մետաղի գոյության մասին իմացվեց 1828 թվականին միայն։ Այնինչ ալյումինն ամենատարածված մետաղներից մեկն է։ Կավը կարելի չե համարել ալյումինի հանքանյութ (ալյումինն սկզբում հենց այսպես կավի արծաթ էլ կոչվում եր)։ Այս մետաղի առաջին 30 կիլոգրամը, որը հիսունական թվականներին հայթայթվել եր Ֆրանսիայում, 72 հազար ֆրանկ արժեր։ Ալյումինի մեծաքանակ արտադրությունը հնարավոր չեղավ այն հանգամանքի շնորհիվ միայն, երբ կիրառվել սկսեցին ելեկտրական վառարանները, որոնք բարձր չերմություն ունեն։ Ներկայումս ալյումինի փունտն արժե 40—50 կոպեկ։ Ալյումինը գործածվում է ամենուրեք, որտեղ անհրաժեշտ է դիմացկուն ու թեթև շինարարական նյութեղեն (աերոպլաններ, ավտոմոբիլներ, ելեկտրական հաղորդիչներ)։ Ներկայումս շատ տարածված է ալյումինի ամանեղենը, որն եժան է, թեթև ու չի ժանգոտում։

ԱԼՅՈՒՄԻՆ։

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ։

Ելեկտրական եներգիան կարելի չե դարձնել ոչ միայն շարժիչ, լուսի ու չերմության եներգիա, այլ և քիմիական եներգիա, որը լայն չափով կիրառվում է արտադրության մեջ (կաշի դաբաղելը, իրեր անագելը (лужение), նիկելացումը, ցինկացումը, հանքանյութից մետաղներ ստանալը)։

Լայնորեն մեքենայացված է լեռնային գործը։ Հանքասրահում աշխատող հանքափորի փոխարեն գործում է փորիչ մեքենան, որը շարժողության մեջ է դրվում ելեկտրականությամբ։ Սայլակների ու ստորերկրյա ձիու փոխարեն բանում է ելեկտրական տրանսպորտը։

§ 39. ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԵՔԵՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Մեքենան սկզբում արտադրվում եր մանուֆակտուրային եղանակով։ Ընդամին մանուֆակտուրան իր գոյության համեմատաբար չերկարատև ժամանակաշրջանից հետո միայն հասավ տեխնիկական զարգացման այն բարձրության, որն անհրաժեշտ է մեքենաներ արտադրելու համար։ Ուստի համար ավելի հեշտ եր գծել շոգեմեքենան իր բոլոր մանրամասնություններով հանդերձ, քան այդ շոգեմեքենայի համար գտնել բավական ամուր մետաղ ու արհեստանոց, որը կարողանար ճիշտ գլան շինել։

Շուտով չերևաց, որ մանուֆակտուրային ծագում ունեցող մեքենաներն անբավարար են ինչպես քանակի, այնպես և որակի կողմից։

«Խոշոր արդյունաբերությունը պետք է տիրանար արտադրության՝ իր համար բնորոշ միջոցին, բուն իսկ մեքենային, պետք է մեքենա արտադրեր մեքենաներով»։ Միայն այս անելով ու այս ժամանակ խոշոր արդյունաբերությունը իրեն համապատասխան տեխնիկական պատվանդանն ստեղծեց և կանգնեց իր սեփական վոտքերի վրա։ XIX դարի առաջին տասնամյակներում քանի աճում եր մեքենային արտադրությունը, մեքենան իրոք ու աստիճանաբար տիրանում եր բանող մեքենաների ֆաբրիկացիայի գործին։ Սակայն միայն վերջին տասնամյակում և (1867 թվականից առաջ), որ վիթխարի չերկաթուղային շինարարությունն ու ովկիանյան նավատնացությունը կյանքի կոչեցին այն ցիկլոպյան (հսկայական) մեքենաները, որոնք կիրառվում են առաջին մոտորները շինելիս։

Մեքենաների մեքենային ֆաբրիկացիայի ամենից էական արտադրական պայմանն այն շարժիչն էր, որն ընդունակ է ուզածդ ատիճանի ուժ առաջ բերելու և միևնույն ժամանակ ամբողջովին ենթակա լինելու վերահսկողությանը։ Այս շարժիչն արդեն կար ի դեմս շոգեմեքենայի։ Սակայն սրա հետ միաժամանակ մյուս խնդիրն էլ այն էր, որ մեքենային ձեղանակով արտադրվելին այն խստորոշ երկրաչափական ձևերը, որոնք անհրաժեշտ էլին մեքենաների առանձին մասերի համար, այն է՝ գծերը, մակերևույթները, շրջանները, գլաններն, կոնուսներն ու գնդերը։ XIX դարի առաջին տասնամյակում Հենրի Մոդսլին այս պրոբլեմը լուծեց՝ հնարելով սահող սուպորտը (скользящий супорт), որը շուտով վերածվեց յուրաշարժ մեխանիզմի և վերջինս, որն սկզբնապես նախանշված եր հյուսնական հաստոցի համար, փոխակերպված ձևով այստեղից փոխադրվեց և հարմարեցվեց մեքենաշինական ուրիշ մեքենաների վրա։ Այս մեքենական հարմարանքը (приспособление) փոխարինում է վոչ թե վորևե առանձին գործիքի, այլ հենց մարդի ձեռքին, որը վորոշ ձև և սահեցում՝ կարող գործիքի սուր ծայրը մոտեցնելով, կլպցընելով աշխատանքի նյութեղենին կամ ուղղելով դեպի աշխատանքի նյութեղենն, որինակ, դեպի յերկաթը։

ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ։

Այս կերպով հաղողվեց մեքենաների առանձին մասերի յերկրաչափական ձևեր արտադրել «այն ատիճանի դյուրությամբ, ճշտությամբ ու արագությամբ, վորպիսուն չեր կարող տիրանալ ամենահմուտ բանվորի ձեռքը վոչ մի փորձառության հետևանքով» (Մարքս)։

Այն մեծ ճշտության շնորհիվ միայն, վորին հասել են մեքենային մասերի արտադրության ասպարիզում (արդի հյուսնական հաստոցինը՝ $^1/_{100}$ միլլիմետրի չափ), հնարավոր յեղավ ներքին այրման շարժիչի զարգացումն, իսկ սրա հետ նաև ավտոմոբիլի ու աերոպլանի զարգացումը։ Իրենց հերթին արդի այն մեքենաները, վորոնք գործադրվում են մետաղների մշակման ասպարիզում, անհնարին կլինելին, յեթե XIX դարի վերջում (1900 թ.) ասպարեզ չգար արագահաս վոլՓրամի պողպատը, որը իր պնդությունը չի կորցնում մինչև անգամ այն ժամանակ էլ, յերբ արագ բանելուց ինքը կարմրում, շրկանում և սպիտականալու աստիճան։

§ 40. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ.

Արդյունքի շատացնելուն հասնում են նույնպես **աշխատանքի գիտական կազմակերպության մեթոդներով**։ Բանվորի աշխատանքային շարժումներն ուսումնասիրվում են, և սրանցից զատում են այն բոլորն, ինչ վոր ավելորդ շարժում է։ Քրոնոմետրաժի միջոցով (ժամանակը շատ ստույգ չափելու) սահմանում են յուրաքանչյուր պրոցեսի տևողությունը։ Ինժեներ Տրամը տալիս է 138 և 139 եջերի 2 աղյուսակը, վորտեղ թվարկված են բանով հող փորող սևաբանվորի աշխատանքի բոլոր հնարները։ Առաջին աղյուսակի մեջ թվարկված են սովորական հնարներն, իսկ յերկրորդ աղյուսակում՝ այն փոփոխված հնարները, վորոնք սահմանված են գիտական հետազոտության հիման վրա։

Ինչպես ցույց է տալիս յերկու աղյուսակի համեմատությունը, յերկրորդ փոփոխված պրոցեսի միջոցին ավելի քիչ ժամանակ է պահանջվում։ Մեկ բանվորական որվա մեջ կատարված աշխատանքի արտադրողականությունը կամ մեկ որում արված աշխատանքի քանակը մեծանում է 50%-ով, ընդսմին բանվորական եներգիայի ծախսումը կամ բանվորների հոգնածությունը չի շատանում, այլ քչանում է։

Կարևոր նշանակություն ունի ձեռնարկության մեջ հաստոցների, մեքենաների ու այլ սարքավորման իրադրումը։ Ուղիղ սարքավորված ձեռնարկության մեջ մեքենաները տեղավորված են լինում վոչ թե ըստ բաժանունքների, այլ դասավորվում են շինվածքները (изделия) անցնելիք ճանապարհի վրա այն նպատակով, վոր նրանց անելիք վաղքը կրճատվի։

Շինվածքները հաստոցից հաստոց են տեղափոխվում կոնվեյերների միջոցով (ինքնաքարշների)։ Վոչ թե բանվորն է շարժվում, իր տեղը փոխում շուրջը պտտելով, այլ շինվածքն է անընդհատ հորձանքի նման հոսում բանվորի մոտով։ Այս հորձանքի մոտ կանգնած բանվորները կազմում են մեկ միասնական շղթա։ Բավական է, վոր սրանցից մեկն ու մեկը մի րոպե անուշադիր լինի, և ահա շղթան ընդհատված է արդեն։ Այս սիստեմի ժամանակ ինքը գործն է վերահսկում բանվորին։ Վերահսկողության վրա անելիք ծախսումները կարելի չե լինում հասցնել մինիմումի։

Սակայն աշխատանքի գիտական կազմակերպությունը կապիտալիստական պայմաններում դառնում է շահագործումը սաստկացնելու գործիք միայն։ Աշխատանքի «գիտական» կազմակերպության այն հռչակավոր սիստեմը, վոր մշակել է ամերիկացի ինժեներ Տեյլորը, ամենից առաջ աշխատանքը յենթարկում է արտակարգ ինտենսիֆիկացիայի, իսկ այս միանգամայն ջարդուխուրդ եր անում բանվորին։ Քրոնոմետրաժի համար Տեյլորը վերցնում է ամենից ուժեղ բանվորներին։ Այսպիսով պարզելով

մաքսիմալ արտադրողականության պայմանները՝ նա իր գտած «նորմանները» պարտադիր եր դարձնում բոլոր բանվորների համար։

ԱՌԱՋԻՆ ԱՂՅՈՒՍԱԿ.

Առաջին բանվորական պրոցեսս։ Հողային աշխատանքներ։

Բահի ձևը՝ № 6։ Բահի տարողությունը՝ 5 կիլոգրամմ։
Ջերմությունը՝ 18° Ռ. Հանգամանք՝ բաց դաշտ։

№	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ	Ժամանակը վարկյաններով հաշված
1	Բահը գետնին դեմ անելը	0,4
2	Վոտքով բահին խփելը	1,8
3	Մարմնի վերին մասը ծռելը	0,2
4	Վոտքը յետ վերցնելը	0,2
5	Բահով հողը պրծացնելը	2,8
6	Բահը բարձրացնելը	1,8
7	Թեքված մարմինն ուղղելը	0,4
8	Մարմինը պտուտաձև շարժելը	0,6
9	Բահը յետ տանելը	0,8
10	Հողը դեն նետելու շարժումը	1,8
11	Բահին հորիզոնական դիրք տալը	1,8
12	Մարմինը շուռ տալով նախկին դիրքով կանգնելը	0,6
	Ընդամենը . . .	13,2
	Ավելադիր ժամանակ 10%	1,3
	Լրիվ ժամանակը . .	14,5

Լրիվ արտադրողականութ. 10 ժամվա ընթացքում 7,000 կիլոգր.
Մեկ ժամ. » աշխատանքի առաջին ժ. մոտ 1,000 »
» » » » վերջին » » 500 »

ԳՅՈՒՏԵՐԻ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԲՐԻԿԱՑԻԱ.

Արտադրության լեղանակների բուն իսկ կատարելագործումը ներկայումս «ֆաբրիկային բնույթ» է կրում։ Առանձին աշխատող գյուտարարը, որը իր գլխու ու իր բախտին փորձեր է անում և մոդելներ շինում, հետին շարքն է մղված արտադրության կատարելագործման հատուկ բաժիններով

ՅԵՐԿՐՈՐԴ ԱՂՅՈՒՍԱԿ.

Ցերկրորդ բանվորական պրոցեսս։ Հողային աշխատանքներ։

Բահի ձևը՝ № 6։ Բահի տարողությունը՝ 5 կիլոգրամմ։
Ջերմությունը՝ 18° Ռ. Հանգամանք՝ բաց դաշտ։

№	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐՄԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒՑ ՀԵՏՈ	Ժամանակը վարկյաններով հաշված
1	Բահը գետնին դեմ անելը . . .	0,4
2	Վոտքով բահին խփելը . . .	1,8
3	Մարմնի վերին մասը ծռելը . .	0,2
4	Բահով հողը պրծացնելը . . .	2,8
5	Բահը բարձրացնելը, վոտքը լծակի տեղ բանեցնելով . . .	1,8
6	Մարմինը ծալված պտտացնելը . .	0,6
7	Հողը ուղիղ դեն նետելը . . .	1,8
8	Մարմինը և միաժամանակ բահը պտտցնելը	0,6
9	Մարմնի վերին մասը բարձրացնելը .	0,2
	Ընդամենը . .	10,2
	Ավելադիր ժամանակ 25%	2,55
	Լրիվ ժամանակը .	12,75

Լրիվ արտադրողականութ. 10 ժամվա ընթացքում 10,488 կիլոգր.
Արտադրողականության գերազանցումը առաջին պրոցեսսի համեմատությամբ . . . 3,488—50%

կողմից, վորոնք գոյություն ունեն խոշոր ձեռնարկություններին կից և վորտեղ գյուտերը «ֆաբրիկացիայի չեն չենթարկվում» ինժեներների ու տեխնիկների ամբողջ կոլլեկտիվի կողմից։

§ 41. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Կապիտալիստական արտադրությունը մասսայական արտադրություն է։ Ձեռնարկությունն ապրանքի ամեն մի տեսակից շուկա չի նետում մեծաթիվ միավորներ. գործվածքներ՝ յուրաքանչյուր տեսակից ու նախշից հազարավոր արշիններ, ամանեղենն՝ միևնույն անունն ու չափն ունեցող տասնյակ հազարավոր հատ, հրացաններ՝ հարյուր ու հարյուր հազար։ Մեքենաների արտադրությունն էլ մասսայական բնույթ ունի։

Մեքենաներն այլևս չեն շինվում, այլ ֆաբրիկացիալի չեն ենթարկվում։ Առաջ յուրաքանչյուր առանձին մեքենայի համար մասերը պատրաստվում էին ջոկ-ջոկ, և ամեն մի մեքենան էլ առանձին-առանձին էին շինում՝ այս մասերը համախմբելով։ Մասսայական արտադրության միջոցին մասերը պատրաստվում են մի ամբողջ շարք մեքենաների համար միանգամից, իսկ այնուհետև էլ կատարվում է մեքենաների մասսայական համախմբումը։ Ամերիկայում քիչ-քիչ չքանում է «նավաշինության» գաղափարը։ Նավերը նույնպես ֆաբրիկացիալի չեն ենթարկվում մասսայական չափերով։ Այսպես, որինակ, ամերիկյան նավաշինարանը, որ կառուցել է Ֆորդն, ամեն որ կարող է ծով թողնել մեկական հատ 50 միաւոր չերկարություն ունեցող ականակիր խորտակիչ (минный истребитель)։

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՖԱԲՐԻԿԱՑԻԱ։

Ֆորդի ավտոմոբիլի գործարանում, որը գտնվում է Դետրոյտում (Հյուսիսային Ամերիկայի Միչիգանի նահանգ), և որտեղ մասսայական արտադրության մեթոդներն ամենալայն չափերով են կիրառվում, արտադրանքն աճել է և 1914 թվականի 265,000 ավտոյից հասել է 2,2 միլիոնի 1923 թվականին։ Թե Ֆորդի գործարանում ինչպես արագ և աճել աշխատանքի արտադրողականությունն արտադրության կազմակերպության անընդհատ բարելավման շնորհիվ, այս մասին ամենից լավ վկայում են հետևյալ թվերը. 1910 թվականին մեկ բանվորին տարեկան գալիս եր 3 ավտոմոբիլ, հիմա՝ 20-ից ավելի։

ՏԻՊԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏԻԶԱՑԻԱ։

Մասսայական արտադրությունը մենակ նրանով չի արտահայտվում, որ այս կամ այն շինվածքներն ավելի մեծ քանակությամբ են արտադրվում։ Եթե ավտոմոբիլի գործարանը՝ կամենալով բավարարել ամեն տեսակ ճաշակ՝ ավտոմոբիլներ և պատրաստում 10—15 մոդելների համաձայն, ապա յուրաքանչյուր մոդել ամենից առաջ պահանջում է մանրամասն գծագրական մշակումն, ապա և այն արտադրելու համար հատուկ կազմակերպություն, առանձնահատուկ իրադրություններ և այլն։ Ֆորդի գործարանը, որի մասին մենք ասացինք վերևում, միայն մեկ տիպի ավտոմոբիլ և պատրաստում։ Սպառողների բոլոր տեսակի ճաշակները հաշվի առնելու փոխարեն իր մոդելի գործնականությամբ ու եժանությամբ նա լինքն և սպառողներին թելադրում, թե սրանց ինչ է հարկավոր։ Բացի սրանից, Ֆորդի գործարանն ավտոմոբիլը մատչելի է դարձրել բնակչության այնպիսի խավերին, որոնք առաջ չէին էլ կարող յերազել «պերճանքի» այսպիսի «առարկա» ունենալու մասին[1]։ Ֆորդի ավտոմոբիլի կոտրված մասը, միակ մոդելի շնորհիվ, կարող է փոխարինվել նոր մասով, որտեղ որ ուզես. գայկանները, պտուտակները և այլն պատրաստվում են փոքրաթիվ կաղապարներով միայն։ Արդի մեքենաշինական գործարաններում միևնույն գայկան հարմար գալով գործադրվում է վոչ միայն միևնույն մեքենայի տարբեր մասերի համար, այլև տարբեր մեքենաների համար։ Այս հեշտացնում է մասերի արտադրությունը և անչափ հեշտացնում է վերանորոգումը։ Եթե ռուսական տրանսպորտի մեջ մեքենաներն այս կերպ նորմալիզացիայի չենթարկված լինելին, ապա ռազմական ավերածությունից հետո կատարվող նրա վերանորոգումն այնքան աշխատանք չեր պահանջի։

ՄԱՍԵՐԻ ՆՈՐ ՄԱՇԻԶԱՑԻԱ։

§ 42. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ.

Կապիտալիստական ձեռնարկությունները բոլորը միակերպ կենսունակ չեն։ Շահույթի յետևից վազելը կապիտալիստին հարկադրում է կատարելագործել արտադրության յեղանակները։ Վորքան ավելի կատարյալ են արտադրության յեղանակները, այնքան ավելի պակաս է ապրանքի յուրաքանչյուր միավորի ինքնարժեքն, ապրանքն այնքան ավելի շուտ գնորդ կգտնի, և այնքան ավելի մեծ շահույթ կարող է ստանալ կապիտալիստը։ Սակայն տեխնիկական ձեռք բերած նվաճումներից յետ չմնալու և շարունակ նոր կատարելագործումներ մտցնելու համար հարկավոր են միջոցներ։ Մանր ձեռնարկուի ուժից վեր է այս։ Նույնիսկ այն դեպքում, յերբ մանր ձեռնարկությունը հարկավոր մեքենա յե ձեռք բերում, միշտ չի կարողանում անընդհատ ոգտագործել այս մեքենան։ (Որինակի համար, առնենք թղթահատ մեքենան, որը գործ է ածվում կազմարարության ասպարեզում։ Այս մեքենան միայն խոշոր ձեռնարկության մեջ

ԽՈՇՈՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎՈՉ ԼՐԻՎ ԲԵՌՆՈՒՄԸ ՄԱՆՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ։

[1] *Սակայն պետք է ասենք, որ վերջին տարիներում Ֆորդի «ճամպք վոջիլը» (Ամերիկայում Ֆորդի ավտոմոբիլին այս անունն են տվել) դգալի չափով կորցրել է իր ժողովրդականությունը, և Ֆորդի արտադրանքի վաճառահանումը դժվարություններ յե հանդիպում։ Բուրժուազիան ավտոմոբիլի «ժողովրդական» տիպի նկատմամբ խորշանք է զգում, իսկ բանվորական լայն մասսաներին մինչև անգամ Ֆորդի ավտոմոբիլն էլ մատչելի չե, չնայած սրա համեմատաբար եժան լինելուն։*

կարող է բանել ամբողջ օրն անընդհատ, իսկ չեթե այսպիսի մեքենա՝ ձեռք բերի փոքրիկ արհեստանոցը, ապա մեքենան որվա մեծ մասը պարապ կկանգնի)։ Իսկ մեքենայի ամեն մի պարապ կանգնելը զուտ վնաս է։ Նախ՝ այն պատճառով, վոր մեքենան պարապ կանգնած մնալով ժանգոտում է և մաշվում անարտադրողաբար, այնինչ աշխատելիս մաշվում է արտադրողաբար, և նրա արժեքն աստիճանաբար փոխանցվում է արդյունքին։ Յերկրորդ՝ բանեցնում է մեքենան, թե վոչ, այն կորցնում է իր արժեքը՝ շնորհիվ նոր գյուտերի ու կատարելագործությունների, ուրիշ խոսքով՝ մեքենան հնանում է (բարոյական մաշումն)։

Յերբ մեքենան չի աշխատում, նրա ներկայացրած կապիտալը պարապ կանգնած է մնում, շահույթ չի բերում։ Հենց մենակ շահութաբեր չլինելու խողությունը կապիտալիստական աշխարհում նկատվում է իբրև վնաս։

Մանր ձեռնարկատերն ավելի վատ պայմանների մեջ է գտնվում հում նյութի կողմից էլ, վորը նա հարկադրված է փոքր քանակներով գնելու, ուրեմն և պակաս ձեռնտու գներով։ Նրա համար ավելի դժվար է վարկ ստանալը, և ստացած վարկի համար նա ավելի ծանր տոկոսներ է վճարում։

Այս բոլոր շարադրածի հետևանքով **արտադրության ամեն ասպարեզում մանր ձեռնարկությունները դուրս են մղվում խոշորների կողմից, վորոնց մեջ համակենտրոնացնում են թե կապիտալները ու թե բանվորական ուժը։**

ԳԵՐՄԱՆԻԱ։

«Գերմանիայում,—ասում է Լենինը,—արդյունաբերական ձեռնարկությունների յուրաքանչյուր հազարի միջից խոշոր ձեռնարկություն էյին, այսինքն ունեյին 50-ից ավելի վարձու բանվոր.—1883 թվականին՝ 3 հատ, 1885 թվականին՝ 6 ու 1907 թվականին՝ 9։ Յուրաքանչյուր հարյուր բանվորից նրանց ընկնում եր 22, 30 ու 37 բանվոր։ Սակայն արտադրության համակենտրոնացումը շատ ավելի սաստիկ թափ ունի, քան բանվորների համակենտրոնացումը, վորովհետև խոշոր գործատներում աշխատանքը շատ ավելի արտադրողական է։ Այս մատնանշում են այն տվյալները, վորոնք վերաբերում են շոգեմեքենաներին ու ելեկտրաշարժիչներին»։

Հատկանշական են հետևյալ տվյալները, վորոնք վերաբերում են Գերմանիայում գործ ածուխ հայթայթելու գործին։ (Տես 143 եջի աղյուսակը)։

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ։

«Արդի կապիտալիզմի մյուս առաջավոր յերկրում, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ել ավելի սաստիկ է արտադրության համակենտրոնացումը։ Այստեղ վիճակագրությունը զատում է նեղ իմաստով առաջ արդյունաբերությունը և ձեռնարկությունները խմբում է տարեկան արդյունքի արժեքի մեծության համեմատ։ Խոշորագույն ձեռնարկությունները, վորոնք

Թվականներ	Ձեռնարկությունների թիվը	Զբաղված բանվորների թիվը հազարներով	Պատրաստված ածուխը հազարավոր տոններով
1871—75	827	25	9,672
1881—85	645	27	14,169
1891—95	601	37	22,027
1900	569	51	40,498
1910	530	73	69,547
1913	465	80	87,185
1916	396	90	94,034

ունեն 1 միլիոն դոլլարի ու ել ավելի շատ արտադրություն, 1904 թվականին 1900 հատ էյին (ընդհանուր 216,180 ձեռնարկությունների միջից, այսինքն 0,9$^{0}/_{0}$)։ Նրանք ունեյին 1,4 միլիոն բանվոր (ընդհանուր 5,5 միլիոն բանվորի միջից, այսինքն 25,6$^{0}/_{0}$)։ Հինգ տարի հետո, 1909 թվականին, համապատասխան թվանշաններն են 3,060 ձեռնարկություն (ընդհանուր 268,491 ձեռնարկությունների միջից, այսինքն 1,1$^{0}/_{0}$), 2 միլիոն բանվոր (ընդհանուր 6,61 միլիոն բանվորների միջից—30,5$^{0}/_{0}$) ու 9 միլիարդի արտադրություն (ընդհանուր 30,7 միլիարդի միջից—43,8$^{0}/_{0}$)։

Յերկրի բոլոր ձեռնարկությունների ամբողջ արտադրության համարյա կեսը գտնվում է ձեռնարկությունների ընդհանուր թվի **մեկ հարյուրերորդ մասի** ձեռքում։ Յեվ այս յերեք հազար հսկա ձեռնարկություններն ընդգրկում են արդյունաբերության 258 ճյուղ։

1870 թվականին Անգլիայում մանածագործական ու մանածային արտադրության մեջ մեկ ձեռնարկությանն ընկնում եր 10,840 իլիկ. 30 տարի անց՝ այս թիվը բարձրացավ մինչև 14,474-ի, այսինքն շատացավ 33,5$^{0}/_{0}$-ով։ Համակենտրոնացման փայլուն օրինակ է Ֆրանսիայի շաքարի արդյունաբերությունը։ 1880 թվականին Ֆրանսիայում կային 486 գործարան, վորոնք արտա-

դրում եյին 337,000 տոննն ածխինադ. 1901 թվականին գործարանների թիվը քչանալով հասավ 334-ի, իսկ արտադրությունն աճելով հասավ 1,040,000 տոննի։ Գործարանի միջին արտադրությունը 693 տոննից բարձրացավ 3,113 տոննի, այսինքն շատացումը 349% է անում։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Շնորհիվ այն հանգամանքի, որ կապիտալիստական արդյունաբերության այդ զարգացումը Ռուսաստանում ավելի ուշ սկսվեց, քան յեվրոպական այլ յերկրներում, և այն ել յեղավ ոտարերկրյա կապիտալի աջակցությամբ, այս պատճառով Ռուսաստանը կարողացավ միանգամից ոգտվել խոշոր արտադրության այն տեխնիկայից, որ մշակվել եր Արևմտյան Յեվրոպայում։ Այստեղից ել առաջ և յեկել ռուսական արդյունաբերության մեծապես համակենտրոնացած լինելը։ Համաշխարհային պատերազմի սկսվելու մոտերքը յուրաքանչյուր հարյուր բանվորից ըրաղված եր

	Ռուսաստանում 1913 թ.	Գերմանիայում 1907 թ.
Մանր արդյունաբերության մեջ (մինչև 20 մարդ բանեցնող ձեռնարկություններ)	38	43
Խոշոր արդյունաբերության մեջ, վորից	62	57
Մանր ձեռնարկություններում (21-ից մինչև 100 մարդ)	10	22
Միջակ ձեռնարկություններում (101-ից մինչև 500 մարդ)	17	21
Խոշոր ձեռնարկություններում (501-ից մինչև 1000 մարդ)	11	6
Խոշորագույն ձեռնարկություններում (1000-ից ավելի մարդ)	24	8

Ռուսաստանի բոլոր բանվորների քառորդ մասը (24%) աշխատում եր հսկա ձեռնարկություններում (վորոնք բանեցնում եյին 1000-ից շատ մարդ)։ Այս տոկոսը յերեք անգամ շատ է գերմանականից (8%)։ Ռուսաստանը Գերմանիայից առաջ եր ընկել վոչ միայն բանվորների տոկոսային հարաբերությամբ, այլ և այն բանվորների բացարձակ թվական հարաբերությամբ,

վորոնք աշխատում եյին հսկա ձեռնարկություններում. այս բանվորների թիվը Ռուսաստանում 920 հազար եր, Գերմանիայում՝ 880 հազար։ Կապիտալի այսպիսի համակենտրոնացումը հատկապես ապշեցուցիչ եր, վորովհետև կատարվում եր շատ հետամնաց մանր արդյունաբերության ու ել ավելի հետամնաց գյուղական հողագործության ֆոնի վրա։

ՄԱՆՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մի քանի տնտեսագետների թվում եր, վոր ելեկտրական էներգիան իր մանրելիության շնորհիվ մանր արտադրողի հանդեպ նոր ապագա յե բաց անում։ Այս հույսերը չարդարացան։ Յեթե մանր ձեռնարկությունը կարողանա ել ելեկտրական էներգիան ձեռք բերել հենց միևնույն գնով, վորով այն ձեռք է բերում խոշոր ձեռնարկությունն, ապա խոշոր ձեռնարկության մյուս բոլոր առավելությունները այնքան կարևոր են, վոր սրանք անխուսափելի յեն դարձնում մանր ձեռնարկությունների կործանումը։

§ 43. ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ.

Կապիտալի համակենտրոնացման հարցում պետք է տարբերել յերկու կետ.

1. այն, վոր արտադրության ավելի ու ավելի մեծաքանակ միջոցներ են դառնում կապիտալ,

2. այն, վոր մեծ կապիտալները համակենտրոնանում են սակավաթիվ ձեռքերում։

Թե մեկն. ու թե մյուսն արտադրության համակենտրոնացման հետևանք է։ Ավելի ճիշտն ասած՝ նույնիսկ հետևանք չե, այլ միևնույն յերևույթի մյուս կողմը։ Խոշոր արտադրության հաղթանակը, վոր վերջինս տանում է մանր արտադրության վրա, միևնույն ժամանակ խոշոր կապիտալիստի հաղթությունն է, վոր սա տանում է գաճաճային կապիտալիստի վրա։ Կապիտալիստական սեփականությունը համակենտրոնանում է համեմատաբար սակավաթիվ ձեռքերում։

Բացի կապիտալիստական **սեփականության** համակենտրոնացումից, կարևոր դեր է խաղում կապիտալը **ցնորիցելու** համակենտրոնացումն ել։ Ակտիվ կապիտալիստը մեկնակ այն կապիտալը չե տնօրինում, վորը նրա լիակատար սեփականությունն է. Նա տնօրինում է այն կապիտալն ել, վորն ստանում է վարկով։

Տիրանալով բաժնետիրական ընկերության իրական իշխանությանը՝ նա տնօրինում է ակցիոներների կապիտալները։ Յեթե նա գլխավոր դեր կատարողն է մենաշնորհական միավորության մեջ (տրեստում, սինդիկատում, կարտելում), նա տնօրինում է այն բոլոր ձեռնարկությունների կապիտալները, որոնք մտնում են միավորության մեջ։ Այսպես է առաջ չեկել մեր ժամանակվա կապիտալի համակենտրոնացման բարձրագույն ձևը, երբ կապիտալիստական պետությունների մեջ հասարակության կյանքի ամենակարևոր աղբյուրների տնօրինությունն արխիմիլիոներների ու միլիարդատերերի փոքրիկ խմբակի ձեռքին է։

Մենեջերության համակենտրոնացումից տարբերելու համար կապիտալի **ցեորիցմաց** համակենտրոնացումն ընդունված է անվանել կապիտալի **կենտրոնացում**։

Սակայն մենք տեսնում ենք, որ Մարքսը միքիչ այլ իմաստով է գործածում «կենտրոնացում» տերմինը։ Նա ասում է.

«Յուրաքանչյուր անհատական կապիտալ ներկայացնում է արտադրության միջոցների ավելի կամ պակաս չափեր ունեցող համակենտրոնացում, որին զուգընթաց է բանվորների ավելի մեծ կամ փոքր բանակի գլխին համապատասխանորեն պետ հանդիսանալը։ Յուրաքանչյուր կուտակում դառնում է նոր կուտակման միջոց։ Այն հարստության քանակի մեծանալու հետ, որ գործում է իբրև կապիտալ, կուտակումը մեծացնում է նրա համակենտրոնացումն էլ անհատական կապիտալիստների ձեռքերում... Ընդամին սկզբնական կապիտալից պոկվում են կտորներ, որոնք գործում են իբրև նոր ինքնուրույն կապիտալներ։ Այս ժամանակ, ի միջի այլոց, մեծ դեր է խաղում դույքերի բաժանումը, որ կատարվում է կապիտալիստների ընտանիքներում։ Այս պատճառով, երբ կուտակվում է կապիտալը, ավելի կամ պակաս չափով մեծանում է կապիտալիստների թիվը։

Ամբողջ հանրային կապիտալի այս բաժան-բաժան լինելուն, որով այն վեր է ածվում բազմաթիվ անհատական կապիտալների, հակազդում է նրանց ձգողությունը։ Այս արդեն արտադրության միջոցների հասարակ համակենտրոնացում չէ, որ նույնանում է կուտակման հետ, այս արդեն աշխատանքի վրա ունեցած պարզ տիրապետություն չէ։ Այս՝ արդեն գոյացած կապիտալների համակենտրոնացում է, սրանց անհատական ինքնուրույնության վոչնչացում, կապիտալիստի եքսպրոպրիացիա կապիտալիստի ձեռքով, երբ բազմաթիվ մանր կապիտալներ վեր են ածվում փոքրաթիվ խոշոր կապիտալների... Կապիտալն **այստեղ** շատանում է մի քանիսի ձեռքում, որովհետև **այնտեղ** նա չքացել, դուրս է եկել շատերի ձեռքից։ Բառի բուն իմաստով այս է հենց կենտրոնացումը (централизация), որը պետք է տարբերել կուտակումից ու համակենտրոնացումից (концентрация)»։

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՑԻՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՀԵՍՏԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ։

Սակայն գործարանը դեռ մինչև հիմա չել բոլորովին չի վտարել մանուֆակտուրան։ Մինչև այժմ էլ, որինակ, կարի, հրուշակների կամ կահի (мебельный) գործարաններն ավելի մանուֆակտուրաներ են, քան ֆաբրիկաներ։ Դեռ բոլորովին չի մեռած արհեստը։ Դեռ չխոսելով հետամնաց յերկրների մասին՝ նույնիսկ զարգացած կապիտալիզմ ունեցող յերկրներում էլ արհեստը պահպանել է իր նշանակությունը։ Պերճանքի մի քանի առարկաների արտադրությունը մինչև հիմա չել դեռ պահել է իր արհեստային բնույթը։ Յերբեմն բուն իսկ այն իրողությունը, որ արտադրությունը ձեռքով է կատարվում (որինակ՝ ժանյակները)։ Այնուհետև, արհեստը, որ վտարված է նոր առարկաների արտադրության ասպարեզից, պինդ դիմանում է հին առարկաների բարենորոգման ու կարկատելու ասպարեզում։

ՏՆԱՇԽԱՏ ՏՆԱՑՆԱԳՈՐԾ։

Մի քանի դեպքերում մանուֆակտուրան, փոխանակ բարձրանալու զարգացման հաջորդ աստիճանը և ֆաբրիկայի վերածվելու, **տեխնիկապես** նորից տրոհվում է իր բաղադրիչ մասերի։ Մանուֆակտուրային փոխարինելու չե գալիս **ցեայցագործճեռի արհեստանոցը** կամ այսպես կոչված **տցաշխատճեռի** աշխատանքը։ Այս վիճակն ունեցան նաև ռուսական մանածագործական մի քանի մանուֆակտուրաներ։ Այն բանից հետո, երբ հարևան գյուղացիք յուրացրին աշխատանքի այն հնարները, որ գործադրվում էին մանուֆակտուրայի մեջ, նրանք հարմարեցրին և սկսեցին իրենց տանն աշխատել՝ կապիտալիստից առանալով հում նյութը և պատրաստի արդյունքը նրան հանձնելով։

Համենայն դեպս, մանածագործական արհեստագործությունն առաջ է գալիս մանուֆակտուրայից թե անկախորեն, այս միևնույնն է,—մանածագործական արտադրությունը դեպ-

քերի ճնշող մեծամասնության ժամանակ փոչ այլ ինչ է, բայց յեթե կապիտալիստական արտադրություն։ Հումքը տալիս է մեծագնորդ կապիտալիստը, սրան էլ հանձնում են պատրաստի արդյունքը։

ԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ.

ՄԵՔԵՆԱՆ ՈՒ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ.

§ 44. ԲԱՆՎՈՐԻ՝ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՈՒՆԵՑԱԾ ԴԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ.

Արտադրության մեքենայացումը հարաբերական հավելյալ արժեքի անսպառ աղբյուր է կապիտալիստների դասակարգի համար։ Իսկ մեքենայացումը կապիտալիզմի պայմաններում ինչ է տալիս բանվոր դասակարգին։

Ամենից առաջ **մեքենան արմատապես փոխում է այն դերը, որ կենդանի ուժն ունի արտադրության պրոցեսի մեջ։**

ՄԱՐԴԸ Մ Ե ՔԵՆԱՅԻ ԿՑՈՐԴ.

Արհեստի ու մանուֆակտուրայի մեջ գործիքն է կցորդը մարդի, որը շարժողության մեջ է դնում այն։ **Գործարանում մարդն է մեքենայի կցորդը։** Բանվորը, մի տեսակ, լցնում, խցում է մեքենաների սիստեմի պակասությունները, անում է այն, ինչ որ դեռ հնարավոր չի յեղել մեխանիզացիայի ու ավտոմատիզացիայի յենթարկել[1]։

Սրա հետևանքներն այս են.

1. Մեքենայի ժամանակ չարունակ նվազում են այն պահանջները, որ առաջադրվում են բանվորի ֆիզիկական ուժի նկատմամբ։ Յեթե մետաղագործության, քարածխի արդյունաբերության ու այլոց մեջ մինչև այժմ դեռ մնացել են այնպիսի համքարություններ, վորոնք բացի ընտելությունից ֆիզիկական մեծ ուժ են պահանջում (մետաղ գլանողները, ամբարհարողները), ապա այս տեղի ունի այն չափով միայն, վորչափով վորոշ ոպերացիաներ դեռ մեքենայացված չեն։

ԿԱՆԱՆՑ ՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ.

2. Սրանով է բացատրվում **կանանց ու մանուկների աշխատանքի լայն կիրառումը մեքենային արտադրության մեջ։** Անգլիայի մանածագործական արդյունաբերության մեջ XX դարի սկզբին չափահաս բանվոր տղամարդիկ միայն միքիչ եյին ավելի բանվորների մեկ քառորդից։ Մնացածները կանայք եյին ու մանուկներ։

Կանանց ու մանուկների աշխատանքը նվազեցնում է բանվորական ուժի արժեքը։ Քանի վոր կինն ու յերեխաներն աշխատում են, նրանց ապրուստն արդեն էլ չի մտնում ընտանիքի մեծի բանվորական ուժի արժեքի մեջ։ Ընտանիքի ապրուստի այն միջոցների տեղակ, վորոնց համար առաջ բանում եր միայն հայրն, այժմ սրա հետ միասին աշխատում են կինն ու յերեխաներն էլ։ Այս դեռ քիչ է. հիմա կինն ու յերեխաները մրցակիցներ էլ են հոր հանդեպ։ Ավելի եժան բանվորական ուժը դուրս է մղում, ասպարեզից հանում է ավելի թանգը։

3. Մյուս կողմից տեսնում ենք հետևյալը։ Արհեստավորն ընդգրկում եր արտադրական պրոցեսն ամբողջությամբ վերցրած։ Հին ժամանակվա զինագործ վարպետը շինում եր ամբողջ հրացանը՝ փայտե ղոնդաղից սկսած մինչև նշանառության հատիկը։ Միևնույն կոշկակարը կաշու կտորը կոշիկ եր դարձնում՝ հաջորդաբար կատարելով գործի բոլոր մասերը՝ մինչև կոշկի ականջները կպցնելն էլ հետն առած։ **Մեքենան արտադրական պրոցեսի այս «ամբողջականության» վերջ տվեց։** Մեքենան արհեստավորին մի տեսակ յերկճեղքեց՝ բաժանելով ինժեների ու բանվորի։ Առաջինն ընդգրկում է գործի ամբողջ պլանը։ Յերկրորդը միայն մեկ ոպերացիա է կատարում, մեկ մանրամասնություն է գլուխ բերում։

ՎՈՐԱԿՅԱԼ ՈՒ ԱՆՎՈՐԱԿՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔ.

Բանվորներն իրենց հերթին բաժանվում են վորակյալ (սովորած), կիսավորակյալ (թերավարժ) բանվորների ու սևաբանվորների։ Ընդսմին մասսայական արտադրության զարգացման հետևանքն այն է լինում, վոր քանակապես սաստիկ կրճատ-

[1] «Մանուֆակտուրայի ու արհեստի մեջ բանվորը հարկադրում է, վոր աշխատանքի գործիքը ծառայե նրան, իսկ գործարանում նա ինքն է ծառայում մեքենային։ Այնտեղ աշխատանքի գործիքի շարժումը ծագում է բանվորից, այստեղ սա յե հետևում աշխատանքի գործիքի շարժմանը։ Մանուֆակտուրայի մեջ բանվորները մեկ կենդանի որգանիզմի անդամներն են, գործարանում մեռյալ որգանիզմը գոյություն ունի նրանցից անկախ. բանվորները հարում, միանում են այս մեռյալ մեխանիզմին, իբրև սրա կենդանի կցորդներ։ Ծայրաստիճան լարելով նյարդային սիստեմը՝ մեքենային աշխատանքը միևնույն ժամանակ ճնշում, խեղդում է մկանների բազմակողմանի խաղն ու շարժումը և իր հզորածանր ձեռքը դնում է մարմնական ու հոգեկան ամեն տեսակի ազատ գործունեյության վրա։ Աշխատանքի բուն իսկ հեշտացումը դառնում է տանջանքի միջոց. մեքենան բանվորին չի ազատում աշխատանքից, մեքենան բանվորի աշխատանքը զրկում է ամեն բովանդակությունից» (Մարքս)։

վում են բանվորական մասսայի ինչպես վերին, այնպես և ստորին շերտերը. ծանրության կենտրոն է դառնում միջակ, կիսավորակյալ, «թերավարժ» (подученный) բանվորը։ Սևաբանվորի աշխատանքն ավելի ու ավելի պակաս է պետք գալիս այն չափով, վորչափով մեխանիզացիայի չեն յենթարկվում ամեն տեսակի բեռնումներն ու բեռնաթափումները, ներքին տրանսպորտը, մաշինիզացիայի չեն յենթարկվում հողային աշխատանքները և այլն։

Ինչ վերաբերում է վորակյալ բանվորներին, ապա նորագույն տեխնիկայի բոլոր ջանքերն ուղղված են այն նպատակին, վոր արտադրական պրոցեսի յուրաքանչյուր առանձին մաս այնպես պարզ բնույթ է ստանում, վոր **տասնյակ կիսավորակյալ բանվորների միայն հարկավոր է լինում կցել մեկ վորակյալ բանվոր։**

Ֆորդի գործարանում, վորի մասին խոսել ենք վերևում, բանվորների գլխավոր մասսան կազմում են ոտարալեզուները, վորոնց մեջ գերակշռում են Ասիայից յեկածներն ու մինչև անգամ ռունամորթ ցեղերի ներկայացուցիչները։ Յեվ թերավարժ բանվորական ուժի այս մասսան «խառտուտիկ նախշած է» միքանի հարյուր հոգի բարձր վորակյալ բնիկ ամերիկացիներով—գործիքարարներով, կաղապարագործներով, ձևագործներով և այլն։

Այս բոլորի հետևանքով աճում է բանվորի փոխարինելիությունը։ Մանուֆակտուրայի մեջ բանվորի անհատական հմտությունը շատ կարևոր էր։ Սրա շնորհիվ բանվորը կարող էր զգալ, վոր իր վոտքերի տակ հաստատուն հող ունի։ **Արդի գործարանում անփոխարինելի բանվորներ շատ քիչ կան։** Կրիզիսների շրջանում, յերբ մասսայական արտադրանքը չի վաճառահանվում պրծնում, գործարանատերն առանց յերկար ու բարակ քաշվելու փողոց է շպրտում ավելորդ բանվորներին։ Նա վստահ է, վոր հարկավոր յեղած դեպքում բանվորական **պահեստազորը** միշտ էլ նրան կմատակարարի անհրաժեշտ մարդկային նյութեղենը և դեռ մի բան էլ ավելի։

Այս պատճառով էլ կապիտալիզմի արտադրության բոլոր գործոնների միջից ամենից քիչ է գնահատում ամենակարևոր գործոնը—մարդկային նյութեղենը։

§ 45. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՆՏԵՆՍԻՖԻԿԱՑԻԱՆ։ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ.

4. Մեքենաները շատ կապիտալ են կլանում։ Մեքենաները մաշվում են վոչ միայն այն ժամանակ, յերբ բանում են, այլև այն ժամանակ, յերբ պարապ կանգնած են լինում. Նրանք ժանգոտում և փչանում են։ Բացի դրանից, նրանք «մաշվում են բարոյապես», այսինքն հնանում են շնորհիվ այն հանգամանքի, վոր յերևան են գալիս և տարածվում են ուրիշ, ավելի կատարյալ մեքենաներ։ Ֆիզիկապես ու բարոյապես մաշվելու հետևանքով մեքենայի կյանքը շատ կարճ է։ **Այս պարագան կապիտալիստին հարկադրում է դողալու մեքենայի աշխատանքի ամեն մի րոպեի վրա։** Այժմ նա ուրախ կլիներ, յեթե կարողանար բանվորին հարկադրել, վոր սա աշխատե 24 ժամ անընդհատ։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՆՏԵՆՍԻՖԻԿԱՑԻԱՆ.

Յերբ կապիտալիստն արհմիությունների կողմից արգելքների յե հանդիպում, վորոնք թույլ չեն տալիս բանվորական օրը յերկարացնել, նա զոռ է տալիս բանվորի աշխատանքի ինտենսիֆիկացիային։ Նա բանվորին ստիպում է սաստիկ լարված աշխատելու։ Բանվորի ամեն մի ժամից նա կարծես թե ուզում է մեկուկես ժամ դուրս բերել[1]։ Յեվ հենց մեքենան էլ այս բանում օգնում է կապիտալիստին։ Բանվորին ավելի լարված աշխատանքի ստիպելու համար շատ դեպքերում բավական է մեքենայի արագությունը սաստկացնել։

Վորքան ավելի արագ է բանում մեքենան, այնքան ավելի լարված պետք է աշխատե նրա կցորդը—բանվորը։

5. Բայց ամենասարսափելի բանը, վոր մեքենան կապիտալիզմի պայմաններում բերում է բանվորին, գործազրկությունն է։ Նոր մեքենան բանվորների ամբողջ կատեգորիաներ անպետք է դարձնում։ Նրանց մի մասը հարմարվում է մեքենային, տեղավորվում, իսկ մյուս մասը շպրտվում է փողոց։ Արտադրության մեխանիզացիայի ասպարիզում կատարված յուրաքանչյուր խոշոր գյուտ հազարավոր բանվորների մատնում է քաղցի ու ցրտի։ Այս պատճառով լիովին հասկանալի յե, թե ինչու մեքենային արտադրության զարգացման սկզբում այնքան բազմաթիվ եյին այն փորձերը, յերբ բանվորները վոչնչացնում եյին մեքենաները, վորոնք նրանց թշվառության մերձագույն պատճառն եյին։ Բանվոր դասակարգը միայն աստիճանաբար ազատվեց այն գիտակցությամբ, թե մեղավորը վոչ թե **մեքենաներն** են, այլ կապիտալիստական շահագործումը։

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ։

Մեքենան ինքնըստինքյան աշխատանքը հեշտացնելու յեվ սրա արտադրողությունը շատացնելու մի միջոց է։ Կապիտալիզմի հակասական պայմաններում է միայն, վոր մեքենան դառնում է բանվո-

[1] Մեքենաներն ու այլ սարքավորումն ամենից արագ օգտագործելու նպատակով մտցնում են յերկու հերթափոխով կատարվող աշխատանք։ Բանվորները մեկ շաբաթ աշխատում են ցերեկը, հաջորդ շաբաթ՝ գիշերը։

ըի շահագործումը շատացնելու և նրա վիճակը վատթարացնելու միջոց։

ՏԱՍԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԱՊԻՏԱԼԻԶՄՆ Ի՞ՆՉ ԱՐԴԵԼԻՔՆԵՐ Ե ԴՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋԸՆԹ.

§ 46։ ԿԱՊԻՏԱԼԻԶՄՆ ՈՒ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ.

Նույնիսկ այն ժամանակ, երբ կապիտալիզմը ծաղկում եր և դեռ առաջ եր մղում արտադրողական ուժերի զարգացումը, նույն կապիտալիզմն այն խոշոր հնարավորությունները չեր ոգտագործում և ծավալում, որոնք կարող եյին մեծացնել աշխատանքի արտադրողականությունը։

Հասարակության այն ձգտումը, որի նպատակն է մեծացնել իր արտադրական հզորությունը, կապիտալիզմի ժամանակ ընդունում է կապիտալիստի այն ձգտման կերպարանք, որի նպատակն է ավելի մեծաքանակ հավելյալ արժեք առանալ կամ, վերացականորեն ասած՝ ընդունում է կապիտալի ինքնաճման կերպարանք։ Հասարակության այն ձգտումը, որի նպատակն է բնության վրա ունեցած իշխանությունը մեծացնել, արտահայտվում է կապիտալիստների դասակարգի այն ձգտումով, որի նպատակն է հասարակության վրա իրենց ունեցած իշխանությունն ավելացնել։ **Ամբողջությամբ առած հասարակության ձեռնտու չեն այն բոլոր կատարելագործությունները, որոնցից մեծացնում են աշխատանքի արտադրողությունը։ Իսկ կապիտալիստին ձեռնտու չեն այն կատարելագործությունները միայն, որոնցից մեծացնում են հավելյալ արժեքի չափերը։**

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐՈՆՑ ՁԵՌՆՏՈՒ ՉԵՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԻՆ։

Վոր այս յերկուսը միևնույն բանը չեն, ցույց է տալիս հետևյալ որինակը։ Ասենք թե յերկաթուղու համար հողային աշխատանքներ են կատարվում կապիտալիստական յեղանակով։ Սրա համար հարկավոր է բանի դնել 200 հողափորներ (землекоп), որոնք պետք է աշխատեն 300 որ՝ որական 10-ական ժամ, ուրիշ խոսքով ասած՝ պետք է գործադրել 600,000 բանվորական ժամ։ Ճանապարհը «կառուցողներին» առաջարկեցեք մի մեքենա, որը միևնույն գործը կանե նույն 300 որում 10 բանվորով, ընդվորում ինքը մեքենան պարունակում է

իր մեջ 500,000 ժամվա աշխատանք։ Մեքենան հենց ճիշտ կբավե տվյալ աշխատանքը կատարելու համար, վորից հետո կանպետքանա։ Նշանակում է՝ մեր հողային աշխատանքների համար ընդամենը կգնա 500,000 ժամ և սրան էլ ավելացրած $10 \times 10 \times 300 = 30.000$ ժամ, բոլորը միասին 530,000 ժամ։ Տնտեսված կլինի $600,000 - 53,000 = 70,000$ ժամ։ Արդյոք կապիտալիստները կհամաձայնեն, վոր բանվորներին փոխարինեն այդպիսի մի մեքենա։— Ամենևին։ Ինչո՞ւ։ Պարզապես նրա համար, վոր բանվորների հետ գործ ունենալու դեպքում նրանք վճարում են վոչ թե աշխատանքի, այլ բանվորական ուժի գինը։ Մենք չենք սխալվիլ, յեթե ասենք, թե 600,000 ժամին նրանք, համենայն դեպս, ավելի չեն վճարի, քան 300,000 ժամի վարձն է։ Իսկ մեքենայի արժեքը նրանք ստիպված կլինեն վճարելու ամբողջովին, վորովհետև մեքենայի սերը (сливки)—հավելյալ արժեքն—արդեն քաշել են ուրիշ կապիտալիստներ։ Այսպիսի հաշիվ կա։ Ձեռքով կատարվող աշխատանքի ժամանակ հարկ կլինի վճարել 300.000 ժամի վարձ։ Մեքենայով կատարվող աշխատանքի ժամանակ՝ $500,000 + \frac{30,000}{2} = 515,000$ ժամվա վարձ։ Հանրային աշխատանքի տեսակետից մեքենան տալիս է 70,000 ժամ ոգուտ։ Կապիտալիստի տեսակետից տալիս է 215,000 ժամ ձյուս։ Այս պատճառով էլ բանվոր ձեռքերի եժանությունը կապիտալիստական պայմաններում արգելք է լինում տեխնիկայի առաջադիմությանը։ Այն մեքենան, վորը ձեռնտու չե Ամերիկայում, վորտեղ բանվոր ձեռքերը թանգ են, տեղն ու տեղն անձեռնտու չե, ուրեմն և կիրառելի չե Յեվրոպայում։ Յարական Ռուսաստանի տեխնիկական հետամնացությունը նշանավոր չափով բացատրվում է նրանով, վոր այստեղ բանվոր ձեռքերն եժան եյին։

ԳԱՂՏՆԻՔՆԵՐՆ. ԱՐՏՈՆԱԳՐԵՐԸ (патенты)։

Արտադրության մի քանի յեղանակներ կազմում են **գաղտնիքը** կամ մենաշնորհն առանձին առանձին ձեռնարկությունների, վորոնք ունեն նրանց արտոնագրերը [1], և այս պատճառով էլ հիշյալ յեղանակները չեն կարող տարածում ունենալ։ Յուրաքանչյուր խոշոր արդյունաբերական ֆիրմա ձգտում է, վոր իր

[1] Արտոնագիրը տրվում է գյուտարարին (изобретатель), վոր սա իրավունք ունի իր գյուտը վորոշ թվով տարիների ընթացքում մենակ շահագործելու։ Յեթե արտոնագիրը հենց գլխից չի ընկնում ձեռնարկության տեր կապիտալիստի ձեռքը, վորի մոտ կատարվել է գյուտն, ապա սովորաբար այս արտոնագիրը ծախում են կապիտալիստին։

գործի յեղանակները գաղտնի պահե: Այսպիսի գաղտնիքներ կարելի յե գտնել բոլոր ճյուղերի մեջ՝ այս կամ այն տեխնիկական պահանջի համար պողպատ արտադրելու ու ջրմխելու (закалка) յեղանակներից սկսած մինչև շոկոլադի տարածված տեսակների դեղատոմսերը:

§ 47. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԸ ԳԻՇԱՏԻՉ ԿԵՐՊՈՎ ՈԳՏԱԳՈՐԾԵԼԸ.

Մի բան էլ, վոր չպետք է մոռանալ, այն է, վոր կապիտալիզմը շռայլ ու անտնտեսարար կերպով է վատնում ինչպես պահեստի, այնպես յեվ արտադրության մեջ բանող կենդանի բանվորական ուժը: Հարցրեք յեվրոպական վոր քաղաքում վոր կուզեք, թե վո՞րտեղ ամենից անառողջ թաղեր կան, և դուք առաջուց կարող եք վստահ լինել, որ հենց այնտեղ է կուչուրած բանվոր բնակչությունը:

ՎԱՏ ՍՆՈՒՆԴՆ ՈՒ ՎԱՏԹԱՐԱԳՈՒՅՆ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԲԱՆՎՈՐ ՄԱՍՍԱՅԻՆ Է ՎԻՃԱԿՎԱԾ:

Ձեռնարկություններին կից նկուղներ կամ կացարաններ, վորոնց լույսն ու ոդը պակաս է, ուտելիք, վոր սննդարար նյութեր քիչ է պարունակում, սպիտակեղենի ու տաք հագուստի չկալություն,— ահա բանվոր մասսայի վիճակը:

Ուստի զարմանալի չէ, յեթե բանվորական թաղերում մահացությունը շատ շատ է: Այս թաղերում շատ դժվար է հանդիպել մի կարմրաթուշ ու լիասուն (упиганный) յերեխայի: Աշխատանքի պայմաններն ավելի առողջապահական չեն, քան տնային կյանքի պայմաններն են:

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.

Ստորերկրյա բանվորների կյանքին սպառնում են փլուզումները, հեղեղումները, հրդեհները: Նրանց վատթարագույն թշնամին հանքարանի գազն է: Ոդի հետ միանալով՝ այս գազը կազմում է մի խառնուրդ, վորը պայթում է ամենապստիկ կայծից: Իհարկե, Դեվու կանխարգել ցանցն անվտանգ է դարձնում հանքարանի լապտերիկի բոցը: Էլ ավելի լավ է հանքարանի ելեկտրական լապտերիկը: Սակայն պատահում են դեպքեր, յերբ պայթյուն առաջացնելու համար բավական է այն կայծը, վոր դուրս է թռչում գործիքի՝ քարին զարկվելուց:

1879 թվականին Բելգիայում Ագգարրի հանքարանում յեղած պայթյունի ժամանակ սպանվեց 121 հոգի: 1908 թվականին մեզանում Ուրկովսկի հանքերում պայթյունից վոչնչացավ 283 մարդ: 1906 թվականին Ֆրանսիայի մեջ Կարյերում գազի պայթյունից միաժամանակ փչացավ ավելի քան 1000 մարդ:

ՎՆԱՍԱԿԱՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Բանվորների առողջությունն արագ է փչանում այն արտադրությունների մեջ, վորտեղ գործ է ածվում սնդիկ (հայելու արտադրություն, ջերմաչափ շինելը): Սնդիկով խրոնիկաբար թունավորվելուց բանվորները թքածորումն են ստանում: Լնդերն ուռչում են և խոցոտվում: Մարսողությունը խանգարվում է (լուծ, փորացավեր), վոսկրները մշտապես մզզում, ցավում են:

Հայելիների արտադրության մեջ սնդիկը կարելի յե փոխարինել արծաթով: Սակայն կապիտալիստ ձեռնարկուներն ամենևին չեն շտապում արտադրության յեղանակը փոխելու, քանի վոր փոփոխությունը դրամական ոգուտներ չի խոստանում նրանց: Իսկ բանվորների առողջության հետ նրանք, ի՞նչ խոսք, վոր վոչ մի գործ չունեն:

Ֆետրովի գլխարկների արտադրության ժամանակ, վորոնք պատրաստվում են նապաստակի կամ ճագարի աղվամազից, վերջինս մորթիներից պոկում են թունավոր բաղադրությունների միջոցով, վորոնց մեջ սնդիկ կա: Աղվամազը պոկելու մի ուրիշ, միանգամայն անվնաս յեղանակ կա, բայց, այնուամենայնիվ, այս յեղանակը բավականաչափ չի տարածվում:

Լուցկու արտադրության մեջ որենսդրական միջամտություն պետք յեղավ այն բանի համար, վոր թունավոր սպիտակ ֆոսֆորի փոխարեն կարմիրը գործածվի: Քանի սպիտակ ֆոսֆորի գործածությունը Յեվրոպայի բոլոր յերկրներում որենքով արգելված չեր, լուցկու գործարաններում աշխատող տասնյակ հազարավոր բանվորներ տառապում եյին խրոնիկական ֆոսֆորային թունավորմամբ, վորի ժամանակ մարդու ամբողջ վոսկրոտանքը փտում է, ատամներն ընկնում են վոսկրների ու ծնոտների կտորիկներով միասին:

Ապակու արտադրության մեջ այսպես կոչված «փչողները» (выдувальщик) խողովակի ծայրով վերցնում են ապակյա հալված զանգվածը և փչելով նրանից պատրաստում են զանազան ձևերի ու չափերի ամանեղեն կամ ապակյա հսկա գնդեր, վորոնց ուռած գլուխները կտրում են և հետո ուղղելով՝ լուսամուտի կամ հայելու ապակեթերթեր են շինում: Փչողը միշտ լարում է իր թոքերը: Այս պատճառով էլ թե թոքերի լայնացումն ու թե թոքախտը փչողների մոտ ամենասովորական հիվանդությունն են: Վաղուց արդեն մի գործիք կա հնարած ապակու մեքենական փչման համար, բայց կապիտալիստական արտադրության մեջ

այս գործիքը չի տարածվում շնորհիվ բնական ապարատների — բանվորի թոքերի եժանության[1]:

Հանքահորերի խորքերում, հանքավայրերում, հալոցի վառարանների մոտ, պղնձաձուլ ու յերկաթաձողարար (рельсопрокатный) գործարաններում բանվորներն ուժասպառ են լինում, հաշմանդամ են դառնում և շատ են վոչնչանում միայն այն բանի հետևանքով, վոր կապիտալին ձեռնտու չե վոչ աշխատանքի նորմալ տևողություն ու ինտենսիվություն սահմանել, վոչ ել գումարներ ծախսել այնպիսի հարմարությունների համար, վորոնք կպաշտպանեյին մրսելուց, մաքուր ոդն անպակաս կանեյին, կապահովեյին անդամախեղումից և այլն:

ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ:

Զարմանալի չե, յեթե բանվորներին վիճակվող դժբախտ պատահարները սովորական յերևույթ են: Ընդսմին այս դժբախտ պատահարներն ամենամեծ թվով տեղի յեն ունենում բանթողից կամ աշխատանքը վերջացնելուց առաջ վերջին ժամերում, յերբ բանվորի ուշադրությունը հոգնած ե: Յեվրոպայի խոշոր ֆաբրիկաներում ու գործարաններում տեղի ունեցող դժբախտ պատահարների միջին թիվը տարեկան հասնում ե 1,500,000-ի, վորից ավելի քան 16,000-ի վերջը մահ ե լինում: Մենակ Ռուսաստանում պատերազմից առաջ տարեկան լինում եր մոտ 300 հազար դժբախտ պատահար, վորից 27,000-ը՝ ծանր ու 4½ հազարը՝ մահացու: Սպանվածների ու վիրավորների թվով արդի «խաղաղ» կապիտալիստական արդյունաբերությունը յետ չի մնում հին «լավ» որերի պատերազմներից:

48. ԽԱՓԱՆԻՉ (застойные) ՏԵՆԴԵՆՑՆԵՐԸ.

Նորագույն ժամանակներում կապիտալիզմի խափանիչ տենդենցներն սկսում են գերակշռել այն առաջադիմական միտումներից, վոր նույն կապիտալիզմն ունի տեխնիկայի ասպարեզում:

Վոչ այն բոլոր կատարելագործությունները, վորոնք ձեռնտու յեն իր մրցորդներին հաղթելու ձգտող կապիտալիստին, ձեռնտու յեն նաև կապիտալիստական միավորությանը, վորը մենաշնորհաբար տիրացել ե արդյունաբերության տվյալ ճյուղին: Այսպիսի միավորությունը կարիք չունի շտապելու և հին մեքենան դուրս շպրտելու նորագյուտ մեքենայի սիրուն, յեթե վերջինս բացառիկ ոգուտներ չի խոստանում: Իհարկե, միավորությունն այս կամ այն գյուտը, վորն առնչություն ունի միավորության արտադրության հետ, անուշադիր չի թողնիլ, վորպեսզի հիշյալ գյուտը չընկնի ուրիշների ձեռքը: Միավորությունը գնում ե գյուտը և հաճախ այն դնում ե առժամանակ գրվանի տակ:

[1] Մեզանում ներկայումս հերթի յե դրված այն հարցը, թե ԽՍՀՄ ապակեղենի բոլոր ձեռնարկություններում պետք ե մշակման մեքենական յեղանակներ մտցնել:

Ներկայումս համաշխարհային տնտեսության հիմնական տեխնիկական խնդիրն արտադրության ելեկտրիֆիկացիան ե (արտադրությունն ելեկտրոեներգիայի փոխադրելը):

Կապիտալիստական հասարակության պայմաններում արտադրությունը լրիվ ելեկտրիֆիկացիայի յենթարկելու (արտադրությունն ելեկտրոեներգիայի շուռ տալու) խնդիրն անհաղթահարելի արգելքների յե հանդիպում:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

Այն բոլոր քայլերը, վոր կապիտալիստական յերկրներում արվում են այս ուղղությամբ, դեմ են առնում, բախվում են առանձին անհատների ու ձեռնարկությունների մասնատիրական շահերի հակազդեցությանը, այն անհատների ու ձեռնարկությունների, վորոնք արդեն կարողացել են իրենց թաթերը դնել եներգիայի այս կամ այն աղբյուրի վրա: Մնում ե հարկադրաբար ոտարացնել հիշյալ աղբյուրները, մի ոտարացում (отчуждение), վոր գործնականորեն կիրառվում ե կապիտալիստական յերկրներում, օրինակ՝ յերկաթուղիներ անցկացնելու ժամանակ: Սակայն այսպիսի «ոտարացման» ժամանակ սեփականատիրոջը սովորաբար այնպիսի մեծ գումար ե վճարվում, վորից ստացած տոկոսները նրան նույնքան հասույթ կարողանային տալ, վորքան տալիս եր ոտարացված գույքը: Այսպես փրկանքով գնելը բազմաթիվ դեպքերում շատ կթանգացներ ելեկտրական եներգիան և այս բոլորովին անձեռնտու կդարձներ շոգու կամ ներքին այրման շարժիչների համեմատությամբ:

ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՆ ՈՒ ԿՌԻՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԴԵՄ:

Ելեկտրիֆիկացիայի յենթարկված տնտեսության մեջ բանվորների համար շատ ավելի հեշտ ե ընդհանուր գործադուլ անցկացնելը: Բավական ե դադարեցնել ելեկտրակայաններում կատարվող աշխատանքը, վորպեսզի կանգ առնի, սառչի յերկրի ամբողջ կյանքը: Այս նկատառումը նույնպես յետ ե պահում կապիտալիստներին ելեկտրիֆիկացիայի ընդարձակ պլաններից:

Որինակ՝ Հոլլանդիայում դեռևս պատերազմից առաջ հրապարակ եր հանվել ընդհանրական էլեկտրիֆիկացիայի պլանը։ Վերջինս տապալվեց հենց այն պատճառով, որ վախեցան բանվորներից։

Էլեկտրիֆիկացիան հատկապես մեծ դժվարություններ չե հանդիպում ամենահին կապիտալիստական յերկրում—Անգլիայում։ Ամբողջ Անգլիան էլեկտրական էներգիա ավելի չի սպառում, քան մենակ մի քաղաք—Նյու-Յորկը (5 միլիարդ կիլովատ-ժամ)։

Կապիտալիզմի պայմաններում անհնարին և հաստատուն կերպով կազմակերպել ստանդարտիզացիան ու տիպիզացիան (տես եջ 140), քանի որ այս գործի համար միասնական կարգավորիչ կենտրոն և պահանջվում։

Այս բոլորի հետևանքով կարելի չե ասել, թե արդեն անցել և այն ժամանակը, յերբ կապիտալն արտադրողական ուժերի զարգացման դրական գործոն եր։ Մեր աչքի առջև կապիտալն արտադրողական ուժերի զարգացման գործոնից դառնում և արգելակ (արտադրական հարաբերությունների բաղխումն արտադրողական ուժերի զարգացման հետ)։

Ա Ն Դ Ի Ր.

Կատարելագործություններ, որոնք ձեռնտու յեն հասարակության ամբողջապես առած, բայց ձեռնտու չեն կապիտալիստին.

№ 16. Շոգենավերին 10,000 տոննն բեռ ձեռքով բառնալու համար շոգենավագծին հարկավոր և 200 բարձող 4 որվա ընթացքում։ Կրանը մտցնելուց հետո այս բեռը շոգենավին բարձվում և 4 որվա ընթացքում մենակ 15 բանվորով։ Բանվորական ուժի արժեքն որական 50 կոպեկ եր։ Շահագործման նորման և 300%։ Վերոհիշյալ բեռը բարձելուց կրանի մաշվածքը հաշվում են 200 բանվորական որ։ Եներգիայի արժեքը 150 բանվորական որ և։

Պետք և վորոշել,

1. Թե ընկերությունը քանի՞ բանվորական որ և շահում, յերբ վերոհիշյալ բեռը կրանով և բարձվում։

2. Թե շոգենավի տերը հավելյալ արժեքի ի՞նչ գումար և վորցնում այս պատճառով։

Ս. Շ Խ Ա. Տ Ա. Վ Ա. Ր Ջ Ը.

«Բանվորական ուժի մշտական առուծախը ձեն և։ Իսկ բովանդակությունն այն և, վոր կապիտալիստն ուրիշի՝ արդեն առարկայացած աշխատանքի մի մասը, վորը նա մշտապես յուրացնում և առանց եկվիվալենտ վճարելու, նորից ու նորից փոխանակում և ուրիշի կենդանի աշխատանքի ավելի ու ավելի մեծ քանակի հետ» (Մարքս)։

§ 49. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ.

Բանվորական ուժի արժեքն ու նրա գինը.

Բանվորական ուժ գնելը բանվորին վարձելու կերպարանք և ընդունում։ **Բանվորական ուժի գինն ընդունում և աշխատավարձի, այն և՝ բանելու, աշխատանքի համար տրվող վարձի կերպարանք։** Բայց մենք արդեն գիտենք, վոր յեթե կապիտալիստն իրոք բանվորին տար այն արժեքը, վոր սա յե ստեղծում, ապա աննհնարին կլիներ թե յուրաքանչյուր առանձին կապիտալիստի ու թե ամբողջ կապիտալիստական հասարակության գոյությունը։

Իրականում բանվորի ստեղծած արժեքի մի մասը կապիտալիստի ձեռքն և ընկնում ձրի, բայց այս վարագուրվում և աշխատավարձի ձևով։ Կապիտալիստն ասում և բանվորին. «Դու իզուր ես ինձ քո շահագործողն անվանում։ Այն աշխատանքիդ փոխարեն, վորից ոգտվում եմ, յես քեզ վճարում եմ հնչուն դրամով, մինչև վերջին կոպեկը»։ Այն շահագործման վրա, վորին կապիտալիզմի ժամանակ յենթակա յե մարդը մարդի կողմից, քող և ձգվում։ «Մարկի բանվորական որվա այն մասն անգամ, վորի արժեքը հատուցվում և,—ինչպես ասում և Մարքսը,—թվում և չհատուցված, այնինչ բանվորի չհատուցված մասն իսկ թվում և հատուցված։ Միայն ճորտ գյուղացու մոտ, վորը շաբաթվա մեջ 3 որ և աշխատում իր արտում ու 3 որ տիրոջ արտում, վոչնչով չի վարագուրված ժամանակի տրոհումը յերկու մասի—անհրաժեշտ ժամանակի ու հավելյալ ժամանակի։

Իրականում աշխատավարձը բանվորական ուժի գինն և, վոր տատանվում և բանվորական ուժի արժեքի շուրջը։ Ինչպես արդեն գիտեինք, բանվորական ուժի արժեք ասելով պետք և հաս-

կանալ այն ամեճի արժեքը, վոր հարկավոր ե բանվորական ուժի վերարտադրության համար, այն ե՝ բանվորի ու նրա ընտանիքի ապրուստի անհրաժեշտ միջոցների արժեքը։

Չպետք ե կարծել, թե խոսքն այստեղ վերաբերում ե ֆիզիոլոգիական մի վորոշ մինիմումի, առանց վորի վրա չե հասնում քաղցից ու ցրտից առաջացող մահը. չպետք ե նաև մտածել, թե բանվորական ուժի արժեքը միշտ ու ամենուրեք միևնույնն ե։

Բանվորի ու նրա ընտանիքի այն պահանջները, վորոնք բանվորական ուժի արժեքն են վորոշում, կախումն ունեն ոչ թե Ֆիզիոլոգիական, այլ պատմական հանգամանքներից։

«Բնական պահանջներն, որինակ, ուտելիքը, հագուստը, վառելիքը, բնակարանը և այլն, տարբեր են լինում, նայած յերկրի կլիմայական ու այլ բնական պայմաններին։ Մյուս կողմից՝ այսպես կոչված անհրաժեշտ պահանջների չափերն ել նմանապես, ինչպես և սրանց բավարարության տալու յեղանակը պատմական զարգացման արգասիք են և այս պատճառով մեծ մասամբ յերկրի կուլտուրական մակարդակից կախումն ունեն և ուրիշ բանի այլոց ելապես վորոշվում են այն հանգամանքի շնորհիվ, թե ազատ բանվորների դասակարգն ինչպիսի պայմաններում և հետևաբար ինչպիսի սովորություններով ու կենսական պահանջներով ե առաջ յեկել, ձևավորվել» (Մարքս)։

ԱՇԽԱՏԱՎԱՐՁՆ ՈՒ ԲԱՆՎՈՐԻ ԱՊՐՈՒՍՏԻ ՄԻՆԻՄՈՒՄԸ։

Վոչ միայն յուրաքանչյուր յերկիր, այլ և միևնույն յերկրում ամեն մի ազգն ու մինչև անգամ արտադրության տարբեր ճյուղեր միևնույն ազգնում իրենց առանձնահատկություններն ունեն ապրուստի մինիմումի (прожиточный минимум) վերաբերմամբ։ Փոխվում են վոչ միայն անհրաժեշտության առարկաների գները, այլ և այս առարկաների քանակն ու վորակն ել, նայած կլիմայական պայմաններին, յերկրի կուլտուրական մակարդակին ու տվյալ բանվորի աշխատանքի բնույթին։

Արտադրողական ուժերի զարգացումը զարգացնում և ձևափոխում ե բանվորի պահանջները։ Յեվ այս լինում ե առաջին հերթին այն պատճառով, վոր փոխվում ե բուն իսկ վորակն այն բանվորական ուժի, վորի նկատմամբ պահանջ և առաջադրում շուկան։ Այն բանվորը, վորը գրագիտություն չի սովորել, վատ անունդ և ստացել, քունը բավականաչափ չի առել կամ թե բաղնիքի կարիք ունի, այսպիսի բանվորը չի կարող յերևան հանել

այնպիսի ուշադրություն, կայունություն և հասկացողություն, վոր պահանջվում ե բարդ մեքենայով բանելու ժամանակ։ Մի մասն այն հոգատար վերաբերմունքի, վորին մեքենան ե արժանանում կապիտալի կողմից, կապիտալը կամա թե ակամա պետք ե նվիրե այս մեքենայի կցորդին—բանվորին ել։ Պարզ ե, թե վորչափով վոր փոխվում են այն վորակային պահանջները, վորոնք առաջադրվում են բանվորական ուժի նկատմամբ, նույնչափով ել փոխվում են բանվորների պահանջներն ել։ Սակայն վերջիններս փոխվում են նաև շնորհիվ այն հանգամանքի, վոր փոխվում ե այն ել, ինչ բանվորը գնում և շուկայում, ինչ վոր նրան հարկավոր ե շուկայից տանելու, իբրև սպառման միջոց։ Տեխնիկայի ամբողջ պրոցեսը չի կարող սլանալ բանվորի կողքից՝ առանց ամենևին փոփոխելու բանվորի սպառման պայմանները։ Կապիտալիստական աշխարհը կամա թե ակամա պետք ե բանվորներին թեկուզ հենց միքիչ հաղորդակից անե կուլտուրայի բարիքներին։ Արդի պայմաններում բանվորներին գազանների մորթիներ հագցնելն ավելի թանդ կնստեր, քան թե նրանց գործվածքներից կարած հագուստներ տալը։ Բանի դեռ բանվորը մենակ ե, նա կարող ե թուլատրել, վոր ինքը միքիչ բարձրացնի իր պահանջների մակարդակը։ Ծխախոտ, լրագիր, կիրակնեց կիրակի մի բաժակ գինի, մեկ մեկ ել թատրոն։ Բայց յերբ նա ընտանիքավոր ե դառնում և յերբ հարկ ե ունենում միջոցները ծախսել ապագա կապիտալիստների համար ապագա բանվորներ պատրաստելու վրա, նրա համար արդեն դժվար ե ձեռք քաշել իր «արվեստական» պահանջներից[1]։ Նա հիմա արդեն ավելի լավ կհամարի պակաս ուտել, քան կհրաժարվի իր ծխամորճից։ Այսպիսով բանվորի պահանջների մակարդակը թեպետև դանդաղ, բայց, այնուամենայնիվ, բարձրանում ե։

Մյուս կողմից՝ քանի արտադրության մեջ են քաշվում բանվորների կանայք ու նրանց յերեխաներն, այնքան ել նվազում ե ընդհանուր գումարն այն ամենի, ինչ վոր հարկավոր ե միջին մեծության ընտանիք ունեցող բանվորին։ Վերջապես յեթե արտադրողական ուժերի զարգացման համեմատ ընդհանուր առմամբ աճում ե այն ապրանքների նյութական ծավալը, վորոնք բան-

[1] Պահանջները յերկու տեսակի—արվեստական ու բնական պահանջների բաժանելն ինքը հենց շատ խնդրական ե։ Ցեթե կուզեք, թեման հայր ու յեփած կերակրի պահանջն ել ե արվեստական, վորովհետև կրակի գյուտից առաջ այս պահանջը չկար։

վորին հարկավոր են իր բանվորական ուժը վերարտադրելու համար, բայց և քչանում է այն ժամանակը, վոր անհրաժեշտ է այս ապրանքների յուրաքանչյուր միավորն արտադրելու համար։ **Այսպես, ուրեմն, բանվորական ուժի արժեքը վորոշվում է այն ամենի արժեքով, վորն անհրաժեշտ է տվյալ կոնկրետ պայմաններում բանվորական ուժի վերարտադրության համար։**

Բանվոր դասակարգի այն կռիվը, վոր նա մղում է աշխատավարձի բարձրացման համար, այն չափով, վորչափով վոր այս կռիվը տանում է դեպի բանվորի կյանքի պայմանների բարձրացումը,—նպատակ ունի վոչ թե բանվորական ուժի գինը բարձրացնել ավելի, քան նրա արժեքն է, այլ բանվորական ուժի բուն իսկ արժեքը բարձրացնել։

ԱՅՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՎՈՐՈՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ԳԻՆՆ ԸՆԿՆՈՒՄ Է ՆՐԱ ԱՐԺԵՔԻՑ ՑԱԾ։

Բայց այս կռիվն էլ ավելի մեծ չափով հարկավոր է նրա համար, վոր բանվորական ուժի գինը պաշտպանե արժեքից շատ ու շատ ցածր ընկնելուց, մի անկում, վորն ունի մի ամբողջ շարք պատճառներ։

ՊԱՀԵՍՏԻ ԲԱՆԱԿԸ։

Ա.) Պահեստի բանակը։ *Ստրկատիրական շահագործման թույլ կողմերից մեկն այն էր, վոր—գործ ուզում է լիներ, թե չլիներ—ստրկին հարկավոր էր կերակրել։ Բանվորն անչափ ավելի ձեռնտու է, հատկապես նկատի ունենալով այն տենդոտությունը, վորով տոգորված է կապիտալիստական արտադրությունը։ Յերբ ապրանքների նկատմամբ առաջադրվող պահանջը մեծ է, ձեռնարկությունների դռները լայն բացվում են բանվորական ուժ ներս ընդունելու համար։ Բանվորացող գյուղացին կամ արհեստավորը համեմատաբար ավելի հեշտությամբ է արորից կամ սեփական արհեստանոցից անցնում հաստոցի վրա բանելուն։ Կոնյունկտուրայի անկման ժամանակ հակառակ յերևույթն է լինում։ Բանվորական գործող բանակի մի մասն անցնում է պահեստի բանակի շարքերը։ Այս անցումը բանվորի համար համազոր է քաղցած մնալուն, իսկ յերկարատև գործազրկության դեպքում համազոր է նաև սովամահության ու լյումպեն-պրոլետարիատի շարքերն անցնելուն։ Պոռնկությունը գործազրկության ուղղակի հետևանքն է։*

ԼՅՈՒՄՊԵՆ-ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏ։

Լյումպեն-պրոլետարիատի տիպին մոտենում են այսպես կոչված պատահական բանվորները, մարդիկ, վորոնք տուն ու տեղ չունեն, վորոշ պարապմունք չունեն, ցնցոտիներ են հագած, աշխատում են, յերբ գործ կա, կամ թե գողություն են անում, յերբ գործ չկա։ Սրանց թիվը շատ մեծ է լինում մեծ քաղաքներում, մանավանդ նավահանգիստ քաղաքներում։ Լյումպեն-պրոլետարիատի մի առանձին տեսակն են ամերիկյան թափառաշրջիկ բանվորները։ Սրանց թիվը հաշվում են 3½ միլիոն։ Սրանք անտառային դատումներից անցնում են հանքարանները, հետո այստեղից էլ դիմում են գյուղատնտեսական աշխատանքների, յերկաթուղիներ շինելու գործում բանելու։ Սրանց աշխատանքը վարձատրվում է գռոշներով, սրանց հետ շատ կոպիտ են վարվում. բանելու ժամանակաշրջաններում ապրում են շտապ սարքտած քողտիկներում կամ թե հենց ուղղակի բաց յերկնքի տակ։ Մի-յերկու դոլլար ճանկները ձգելով՝ նրանք ատելի աշխատանքից փախչում են տափաստանը, վորտեղ ապրում են «կոմմունաներով»՝ կողոպտելով ֆերմերների այգիներն ու բանջարանոցները։ Ծախսելով մինչև վերջին գռոշը՝ նրանք նորից բաժանվում են իրարուց և գործ են վորոնում՝ կայարանից կայարան ճանապարհն անցնելով շպալների վրայով կամ գողունի մտնելով ապրանքատար գնացքները։ Ամերիկյան գնացքներն ամեն գարնան վագոնների կտուրներին կամ բուֆերների վրա ու այլ տեղ թառած այսպիսի գողունի ճանապարհորդներ փոխադրում են մոտ կես միլիոն հոգի։

Համաշխարհային պատերազմը միաժամանակ վերացրեց գործազրկությունը, զենքի, ռումբերի, հանդերձանքի առարկաների արտադրությունը կատարվում էր ամբողջ թափով։ Տասնյակ միլիոնավոր մարդիկ «աշխատում էյին» հրացաններով ու հրետանիով կամ նստած ապրում էյին խրամատներում։ Բայց էլ ավելի սարսափելի յեղավ գործազրկությունը զորացրումից հետո։ Առ 1-ն հունվարի 1922 թ. այն գործազուրկները, վորոնք նպաստ էյին ստանում (իսկ վո՞րքան կային այնպիսիները, վորոնք չէյին ստանում), կլոր թվով Անգլիայում 2 միլիոն հոգի էյին, Իտալիայում՝ 600 հազար, Բելգիայում՝ 80 հազար, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ 3½ միլիոն։

Սակայն կապիտալիզմի սիստեմի մեջ պահեստի բանակը այն անհրաժեշտ ողակն է, առանց վորի անհնարին է արտադրության արագ ընդլայնումը։ Բացի բանվորական ուժի պահեստի դերը կատարելուց, պահեստի բանակը կապիտալի համար կարևոր է նաև նրանով, վոր բանվորական ուժի առաջարկը պահանջից ավելի բարձր մակարդակի վրա յե պահում և այսպիսով բանվորական ուժի գինը հրում ներքև՝ արժեքից ցած շեղելով։

«ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺ» ԿՈՉՎՈՂ ԱՊՐԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Բ) Բանվորական ուժի, իբրեվ ապրանքի, առանձնահատկությունն այն է, որ այս ապրանքը չի կարելի պահածո դարձնել (консервировать), **պահել վաղվա որվա համար:** Շուկա բերած բանվորական ուժը նման է այն գինուն, որը տակառից գնում է: Թանգարժեք հեղուկը հոսում, թափվում է, այս պետք է շուտ ծախել, որովհետև բոպե առ բոպե պակասում է: Այս հանգամանքը բանվորին, իբրև վաճառողի, միշտ գնում է աննպաստ դրության մեջ, դժվարացնում է իր ապրանքը սրա արժեքով ծախելը:

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ԴՐՍԻՑ ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼԸ:

գ) Բանվորական ուժի վերարտադրությունն ասելով հասկացվում է բուն իսկ բանվորի վերարտադրությունը, բանվորին մի ուրիշով փոխարինելը, յերբ նա կորցնում է աշխատունակությունը: Յեթե մահվան կամ ինվալիդության պատճառով արտադրությունից հեռացող բանվորներին կարողանային հերթափոխելու գալ բանվորների յերեխաները միայն, վորոնք հմտացել, կրթվել են աշխատավարձի հաշվին, ապա շուկայի կույր ու աննպատակ որենքները կապիտալին կհարկադրելին 1) բանվորին տալու ընտանիքի ապրուստի միջոցներ, 2) ավելի հոգատարությամբ վերաբերվելու բանվորին ու սրան վաղաժամ ուժասպառ չանելու դրկանքներով և ուժից վեր աշխատանքով: Կապիտալն ստիպված պիտի լիներ բանվորին տալու այն բոլորն, ինչ վոր իրոք անհրաժեշտ է նրա բանվորական ուժը վերականգնելու համար: Ուրիշ խոսքով ասած՝ կապիտալը հարկադրված կլիներ բանվորական ուժի իսկական արժեքը վճարելու: Իրականում այս բանը չի լինում: **Բանվոր դասակարգն, ինչպես ասել եմ վերեվում, վերարտադրվում է վոչ միայն նեոսից, այլ յեվ գրսից՝ գյուղացիների, արհեստավորների ու այլոց բանվորացման շնորհիվ: Այս պատճառով կապիտալը հնարավորություն ունի բանվորին վոչ թե պարզապես շահագործելու, այլ գիշատիչ կերպով շահագործելու:**

Գյուղից յեկող թարմ ուժերի մշտական հոսանքը բանվոր դասակարգին ամբողջությամբ առած ապահովում է այլասերումից, բայց այլասերման վտանգ և բերում յուրաքանչյուր պրոլետարական ավյալ ընտանիքին առանձին վերցրած:

Ահա այն գլխավոր պատճառները, վորոնց հետևանքով բանվորական ուժի գինը տենդենց և ունենում սաստիկ շեղվելու արժեքից ցած, յերբ բանվորական ուժ վաճառողների ազատ ու փոխադարձ մրցում գոյություն ունի: Այս տենդենցը թուլանում է, յերբ սահմանափակում են բանվորների փոխադարձ մրցման ազատությունը, և այս սահմանափակումը կենսագործում են արհեստակցական միությունները:

Աշխատավարձի մակարդակն ամենից ավելի բարձր է Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

1905—1908 թվականներին միջին իրական աշխատավարձը [1] Միացյալ Նահանգների աշխատավարձի նկատմամբ հետևյալ տոկոսներն են կազմում.

Անգլիայում	63
Գերմանիայում	40
Ֆրանսիայում	35
Բելգիայում	34
Ռուսաստանում	20

Սակայն Ամերիկայում ել բանվորների փոքրիկ տոկոսը միայն իրոք կարող է այնպես ապրել, վոր կարողություն չունենա այս բառի ամենահասարակ իմաստով և ծայրը-ծայրին հասցնե:

Սկոտտ Նիրինգի տվյալների համաձայն՝ Մասսաչուզետի նահանգում (արդյունաբերական տեսակետից ամենազարգացած նահանգներից մեկում) 1912 թվականին արտադրության մեջ զբաղված 436,576 հասակավոր տղամարդկանցից շաբաթական ստանում եին.

10 դոլլարից պակաս	126.011	հոգի կամ	28,86%
10-ից 15 դոլլար .	166.140	» »	38,13%
15 » 20 » .	98.839	» »	22.64%
20 » 25 » .	31.416	» »	7,20%
25 ու ավելի » .	13.870	» »	3,17%

Յեթե,—ասում է Նիրինգը,—հաշվի առնենք գործազրկության, հիվանդությունների ու այլ նման ժամանակաշրջանները, վորոնք խլում են միջին հաշվով տարեկան բանվորական ժամանակի $^1/_5$-ից մինչև $^1/_3$ մասն, ապա կհամոզվենք, վոր բոլոր չափահաս բանվորների կեսը տարեկան 600 դոլլարից պակաս է ստանում, և այս թվում ել $^1/_4$-ը 400 դոլլարից պակաս,—աշխատա-

[1] Իրական աշխատավարձ կազմում են այն արդյունքները, վոր բանվորը կարող է գնել իր ստացած փողով:

վարձի թվանշանները, որոնք ամերիկյան պայմաններում ընտանիքավոր մարդու համար գրեթե համազոր են մուրացկանության։

Համաշխարհային պատերազմը ցածացրեց բանվոր դասակարգի ապրուստի մակարդակը կապիտալիզմի յերկրներում, բացի Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներից։

Յեթե իրական աշխատավարձի մինչ-պատերազմյան մակարդակը 100 ընդունենք, ապա սրա համեմատությամբ բանվորներն ստանում էին.

	1915	1916	1917	1918	1919	1920	1921	1923
Անգլիայում (ածխարդյունաբերությունը)	96	89	75	89	104			80
Գերմանիայում (շինարարները)						67		55
Հյուսիս Ամերիկայի Միացյալ Նահանգներում (գլխավոր արտադրություններում միջին հաշվով)	99	96	87	82	84	87	107	117

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ ՈՒ ԱՐՏԱԾՈՒՄԸ։

Բանվորական ուժը նմանապես համաշխարհային տնտեսության արդյունքն է և ելապես։ Բանվորական ուժն էլ է ներմուծման ու արտածման առարկա լինում։ Ամենից ավելի Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներն են ոտար բանվորական ուժ ներմուծում (1861-ից մինչև 1900 թվականը՝ $14^1/_2$ միլիոն ոտարականներ)։ Բանվորների սաստիկ արտագաղթ գալիս է Չինաստանից (կուլիները), Ինուսաստանից, Իտալիայից։ Կարիքների ցածր մակարդակ ունեցող հետամնաց յերկրների բանվորները զարգացած կապիտալիզմի յերկրներում ձգում են աշխատավարձը և մեծապես խափանում են արհմիությունների գործունեությունն այն կռվում, որ սրանք մղում են բանվորների ապրուստի մակարդակը բարձրացնելու համար։

Սակայն տեխնիկայի առաջադիմությունները զարգացած կապիտալիզմ ունեցող յերկրներին հնարավորություն են տալիս, որ արտադրությունը մեծացնեն առանց նույնքան անգամ մեծացնելու այն բանվորների քանակը, որոնք զբաղվում են նույն արտադրության մեջ։ Այստեղից էլ առաջ է գալիս այն յերևույթը, որ ներգաղթի գլխավոր յերկրները—Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու Ավստրալիան հագեցած են բանվորական ձեռքերով։ Մի հագեցածություն, որ կա ոչ միայն ճգնաժամերի միջոցին, այլ և արդյունաբերության վերելքի ժամանակ։ Ներգաղթը կատարեց իր գործը՝ այս յերկրներն արդասաբեր դարձնելով և նրանցում փարթամորեն զարգացնելով կապիտալիզմը—ներգաղթը կարող է հեռանալ։ Ինչպես այն տնվորը, որ բնակելի մեծ տարածություն է նվաճել, Ավստրալիան պատնեշներով պաշտպանվում է ճնացած աշխարհից և նոր բանվորներ ներս չի թողնում։ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1921 թվականի հունիսի 3-ի որենքը սահմանել է ներգաղթողների այն առավելագույն քանակը, որ կարող է տալ այս կամ այն յերկիրը։ Մաքսիմումը հավասար է 1905—1914 թվականների միջին ներգաղթի մեկ յերրորդական մասին։ Ընդամին ամեն մի յերկրի բաժինը հաշվվում է առանձին-առանձին[1]։

§ 50. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՁԵՎԵՐԸ.

Բանվորական ուժ ծախելիս չափի մեջ խաբվում են ոչ թե գնորդները, այլ վաճառորդները։ Բանվորական ուժի չափը բանվորական որն է, որը բոլոր չափերի մեջ ամենից առաձգականն է։ Մենք վերևում տեսել ենք, որ բանվորական որվա տևողությունն ամենաբազմազան է։ Որվա աշխատանքի ժամերի թիվը, այսպես ասած, գծային չափ է, յերկարության չափ։ Բայց ինչպես որ միևնույն յերկարություն ունեցող յերկու փայտ դեռ կարող են տարբեր հաստություն էլ ունենալ, այնպես էլ բանվորական ժամը կարող է ամենատարբեր ինտենսիվություն, լարվածություն ունենալ։ Կարելի չէ ասելով աշխատել, մի բոպեյում անելով թե 100 և թե 200 կութ (стежки)։ Գրաշարը կարող է մեկ ժամում շարել 1,000 տառ և կարող է առանց գործը մի բոպե անգամ դադարեցնելու շարել մինչև 300 տառ։ Իհարկե մեքենային աշխատանքի ժամանակ թափը բանվորի ձեռքին չէ, այլ մեքենայի[2], բայց և այնպես այս դեպքում էլ վորքան ավելի

[1] Այստեղ շատ կարևոր դեր է կատարում հեղափոխական «վարակից» վախենալն էլ։

[2] Մեքենայի բանելու արագությունը շատ դեպքերում հարմարեցնում են բանվորների աշխատանքի միջին արագությանը։

ինտենսիվ է աշխատանքն, այնքան ավելի ուշադրություն է պահանջվում կամ թե այնքան ավելի շատ հաստոցներ կարելի չէ հանձնարարել մեկ բանվորի։

Աշխատանքի միջին ինտենսիվությունը տարբեր երկրներում միատեսակ չէ։

Իհարկե կանոն կարելի չէ ասել, թե որքան ավելի լավ են բանվորի կյանքի պայմանները և որքան ավելի կարճ է բանվորական օրն, այնքան ավելի ինտենսիվ է նրա աշխատանքը։ Բայց յուրաքանչյուր երկիր ունի իր ինտենսիվության միջին աստիճանը, որն արժեք ստեղծող աշխատանքի հիմքն է կազմում։ Աշխատանքի այն ինտենսիվությունը, որ միջինից ցած է, վնասաբեր է կապիտալիստի համար։ Ընդհակառակն, աշխատանքի այն ինտենսիվությունը, որը միջինից բարձր է, կապիտալիստին ավելադիր հավելյալ արժեք է տալիս։ Այս նկատի ունենալով՝ կապիտալիստը բանվորական ուժը գնելիս աշխատում է ծախողին չափի մեջ խաբել երկու ուղղությամբ, այն է՝ թե բանվորական օրվա երկարության մեջ ու թե աշխատանքի ինտենսիվության մեջ։ Այս միևնույն է, թե մեկ մեշոկ խոտ գնելիս նա աշխատեր թե մեշոկն ավելի լիքը լցնել և թե այն ավելի պինդ ճխտել։

Աշխատանքի ինտենսիվությունը մեծ կախում ունի այն բանից, թե իրենք բանվորներն ինչքան են շահագրգռված իրենց աշխատանքի արտադրողականությամբ։ Ընդհանուր աշխուժությունն ու յեռանդով աշխատանքի կպչելը մեծացնում է պատրաստվող արդյունքի քանակն, ընդվորում յերբեմն հնարավոր է լինում մինչև անգամ մեքենաների արագությունն էլ սաստկացնել։

Այս պատճառով բանվորների աշխատանքի ինտենսիֆիկացիայի համար բանեցրած խարդախությունների ամենամեծ մասը կատարվում է աշխատավարձը վորոշելու ասպարեզում։

Բարձրությունն այն աշխատավարձի, վոր բանվորներն ստանում են իրենց բանվորական ուժի փոխարեն, տարբեր է զանազան յերկրներում ու ռայոններում, արտադրության զանազան ճյուղերում, միևնույն արտադրության տարբեր համքարությունների մեջ ու միևնույն համքարության ներսում՝ տարբեր վորակում ունեցող բանվորների համար։ Կանանց բանվորական ուժն ավելի պակաս է վարձատրվում, քան տղամարդկանցը։ Էլ ավելի պակաս է վարձատրվում դեռահասների բանվորական ուժը։

ԺԱՄԱՆԱԿԱՎԱՐՁ. Աշխատանքի գլխավոր ձևերն են՝ ժամանակավարձն ու գործարքայինը։ Առանձին դեպքում իբրև բանվորական ուժի չափ ծառայում է անմիջաբար ժամանակի միավորը — ժամ, օրը, շաբաթը։ Յերկրորդ դեպքում իբրև չափ ներկայանում է պատրաստված արդյունքի միավորը — չթի արշինը, մեխերի փութը և այլն։

Վորովհետև կապիտալիստը շահագրգռված է վոչ միայն նրանով, վոր բանվորական օրն ըստ կարելույն շատ տևողություն ունենա, այլ և նրանով, վոր աշխատանքն, ինչքան հնարավոր է, ավելի մեծ ինտենսիվություն ունենա, ուստի աշխատավարձի այն ձևը, վորն ամենից ավելի չէ սիրում կապիտալիստը, գործարքայնությունն է, վորի ժամանակ բանվորն ինքը շահագրգռված է, վոր պատրաստած արդյունքի քանակը շատ լինի։

ԳՈՐԾԱՎԱՐՁ։ Գործարքային ձևով աշխատեցնելը բանվորին պատասխանատու չէ դարձնում հում նյութի և օժանդակ նյութեղենների վատ հատկության համար. մանածագործի պատրաստած արդյունքի քանակը յերբեմն նվազում է այն պատճառով, վոր մանածը վատ է լինում, և թելը խիստ շուտ-շուտ կտրվում է։ Սակայն գործավարձի ամենավատ կողմն այն է, վոր աշխատավարձի այս ձևը բանվորների մեջ պառակտում ու մրցում է մտցնում։ Յերբ կապիտալիստը հասնում է իր նպատակին, և բանվորների մրցակցության շնորհիվ մեծանում է պատրաստած արդյունքների միջին քանակն, ապա այսպիսի հետևանքներ են ստացվում.

1 կապիտալիստը հիմք է ունենում գործավարձը ցածացնելու.

2 ձեռնարկության մեջ բանվորական ձեռքերի վորոշ ավելցուկ է առաջանում, և այս բանվորները փողոց են նետվում՝ կարծես այսպիսով վարձատրություն են ստանում այն բանի համար, վոր յեռանդով են բանել։

Յեվ բանվորների միջև կատարվող այս մրցումն եյապես ամենևին նման չէ այն մրցակցությանը, վոր լինում է մեր բանվորների միջև խորհրդային ձեռնարկություններում։ Կապիտալիստական ձեռնարկության մեջ բանվորն աշխատում է իր դասակարգային թշնամու համար։ Իսկ մեզանում բանվորն աշխատում է բանվոր դասակարգի համար, վորն և ձեռնարկության տերն է հենց։

Մի շարք խառը ձևեր էլ կան, վորոնք գործավարձի ու ժամանակավարձի միավորությունն են։

ԿԵՏԱՐՔԱՎԱՐՁ (Поурочная плата)։

1) կետարքային աշխատավարձ (поурочная заработная плата)։ Բանվորին կետարք (урок) է տրվում։ Բանվորական որվա ընթացքում նա պարտավոր է պատրաստել այսքան ու այսքան բան։ Մենք վերևում տեսանք, թե «գիտական կազմակերպության» մեթոդներով ինչպես է կետարք սահմանվում։ Իբրև հիմք ընդունում են աշխատանքը վոչ թե միջակ բանվորի, այլ ամենալավ բանվորի, վորի յեռանից պետք է քսի ու քրտինք մտած կրնկակոխ շտապե միջակ բանվորը՝ վախենալով տուգանքից ու արձակվելուց։ Աշխատավարձի այս ձևն եյապես միացնում է թե ժամանակավարձի ու թե գործավարձի հոսի կողմերը։

ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԸ։

Պարգևների սիստեմ (система премий)։ Այս սիստեմը միևնույն կետարքն է, բայց կետարքից ավելի պատրաստած քանակի համար տրվում է **ցվեր—պարգեվ**։ Հենց ճիշտ նվեր է վոչ թե վարձատրություն։ Պարգևատրման բազմաթիվ սիստեմներ կան (Հելսի, Ռոուենի, Եմերսոնի, Տաունի, Ռոշերի ու այլոց սիստեմները), բայց սրանց բոլորի էությունն այն է, վոր պատրաստած քանակի ավելցուկի վարձը լիովին չեն տալիս, այլ մի մասը միայն։ Յեթե կետարքավարձը ապահովում է «նորմալ» շահագործումն, ապա պատրաստած քանակի ավելցուկի համար տրվող վարձն արդեն գերշահագործումն (сверх-эксплоатация) է առաջ բերում։

Պատահում են աշխատավարձի հետևյալ սիստեմներն էլ.

ՇԱՀՈՒԱԾՔՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼԸ։

1) **Շահույթներից մասնակցելու** սիստեմ։ **Տարվա վերջում** բանվորներին բացի աշխատավարձից վճարվում մի մասն այն դուստ շահույթից, վոր ստացել եր ձեռնարկությունը։

Հենց միայն այն հանգամանքը, վոր դասումի վրա չկող այս սովորաբար չնչին հավելումն ստանալու համար բանվորը պետք է սպասե մի ամբողջ տարի,—հենց այս հանգամանքը զրկում է այս ձևը իր էական նշանակությունից։ Այն բանվորները, վորոնք մեկ տարուց պակաս են բանել, շահույթներին չեն մասնակցում բոլորովին։ Յերբեմն այս հավելումը տրվում է միայն «հին» բանվորներին, վորոնք ձեռնարկության մեջ աշխատել են յերկու-յերեք տարուց վոչ պակաս։ Այս սիստեմը բանվորներին պատասխանատու չի դարձնում գործատիրոջ կողմից գործերը վատ վարելու համար։ Շահույթներին մասնակցելու փոխարենը յերբեմն ձեռնների մասնակցություն է դուրս գալիս։

Յերը շահույթ չկա, հավելում էլ չկա, իսկ այս հավելումը վոչ այլ ինչ է եյապես, բայց յեթե սովորական դասումի այն մասը, վոր չի վճարած բանվորներին։ Շահույթներին մասնակցելու սիստեմն առաջին անգամ ծագումն է առել XIX դարի 40-ական թվականներին։ Սկզբում մեծ հույսեր եյին դնում այս սիստեմի վրա։ Մի գերմանացի գիտնական աշխատավարձի այս ձևին նվիրած իր դասախոսությունը վերջացրել է հետևյալ միամիտ խոսքերով. «Այլ ևս սոցիալական հարց չկա. այս հարցն արդեն կարելի է լիովին լուծված համարել»։ Սակայն բանվորների կողմից շահույթներին մասնակցելը շատ քիչ տարածում ունեցավ, վորովհետև արհեստակցական միությունները դիմադրում եյին այս սիստեմին։ (Վերոհիշյալ սիստեմի ոգտին 70 տարի բուռն պրոպագանդա անելուց հետո 1926 թվականի մոտերքն Անգլիայում այն ընդգրկած ուներ 190,700 մարդ միայն [1]։

ՍԱՀՈՒՆ ՎԱՐՁԱՔԱՓԻ ՍԻՍՏԵՄ։

2) **Սահուն** վարձաչափի սիստեմ (система скользящей скалы)։ Այս սիստեմի ժամանակ աշխատավարձի չափը կախված է բանվորի արտադրած արդյունքի գնից։ Յեթե արդյունքը լավ գին է ունենում, աշխատավարձը բարձրանում է, և ընդհակառակը։ Աշխատավարձը սահմանելիս յերբեմն նկատի չեն առնում վոչ միայն արդյունքի գինն, այլ և արտադրության ծախքերը (издержки производства)։ Այս հանգամանքի շնորհիվ սահուն վարձաչափի սիստեմը մոտենում է շահույթներին մասնակցելու սիստեմին։ Սակայն այստեղ գների ու արտադրության ծախքերի փոխհարաբերությունից կախված է վոչ թե աշխատավարձի վրա դրվող հավելումն, այլ ամբողջ աշխատավարձն, ըստ վորում հաշիվներն արվում են վոչ թե տարեկան ընդհանուր հաշվեկշռի համաձայն, այլ ըստ այն գնարկության (калькуляция), վոր կատարվում է ապրանքի յուրաքանչյուր բաց թողած քանակի դեպքում առանձին։

Սահուն վարձաչափի սիստեմը տարածված է Անգլիայի ու

[1] Վերջին ժամանակներում բանվորների՝ շահույթներին մասնակցելու սիստեմը կիրառում եր Անգլիայի «սապոնի արքա» Լեվերհելմը, վոր բանվորների՝ Լեվերհելմի շահույթներին մասնակցելն ամենևին չխանգարեց «սապոնի արքային»՝ հարստանալ բանվորների անվճար աշխատանքի հաշվին,—այս մասին վկայում է այն, վոր Լեվերհելմը իր գործունեությունն սկսելով իբրև մանր խանութպան՝ մեռնելիս իր վորդուն թողեց կես միլիարդ ռուբլուց ավելի փող ու վրաները՝ լորդի տիտղոսը։

Միացյալ Նահանգների յերկաթագործական ու ածխի արդյունաբերության ասպարիզում։

Նույն իսկ բուրժուական տնտեսագետները մատնանշում են, որ այս սիստեմի ժամանակ խարեյություններ են կատարվում, չնայած բանվորական միությունների ամբողջ հսկողությանը։ Բանվորներին իրական գներից ցած գներ ու արտադրության իրական ծախքերից բարձր ծախքեր են ցույց տալիս։ Սահուն վարձաչափի սիստեմը հնարավորություն է տալիս ձեռնարկուին, որ սա իր մրցակիցների դեմ կռվելիս գներն իջեցնե ոչ միայն իր հաշվին, այլ և բանվորների հաշվին։ Համեմատաբար ավելի փոքր չարիք է լինում այս սիստեմն այն ժամանակ, յերբ սահմանվում է մի որոշ մինիմում, որ բանվորն ստանում է ամեն տեսակի գների ժամանակ, և յերբ գների կացությունից կախված է այն հավելումը միայն, որ տրվում է այս մինիմումից բացի։

Թե արդյոք հացթուխը գնորդին լմորը մատուցում է իբրև սպիտակ հաց թե բուլկի, սրանից բանը չի փոխվում էապես։ Յերկու դեպքում էլ հացթուխը հաց է ծախում, և սպառողն էլ հաց է գնում։ Ճիշտ նմանապես էլ աշխատավարձի էությունը չի փոխվում, ինչ կերպարանքով էլ որ մատուցեն աշխատավարձը բանվորին։ Աշխատավարձը միշտ էլ ճնում է բանվորական ուժի գին։ Իսկ որովհետև բանվորական ուժն աստիճանաբար հատնում է ժամանակի ընթացքում, ուստի ամենից առաջ ժամանակն է նրա չափը։

ԱՇԽԱՏԱՎԱՐՁՆ ԵՑՈՂՆ ՄԻՇՏ ԹԱՄԱՆԱԿԱՎԱՐՁ Ե։

Ահա թե ինչու աշխատավարձը միշտ ժամանակավարձ է եյապես, մինչև անգամ այն ժամանակ էլ, յերբ հատավարձի կերպարանք է ունենում։ Յեթե բանվորը գործած մահուդի ամեն մի արշինին ստանում է 5-ական կոպեկ, ապա այս ամենևին չի նշանակում, թե նա մահուդ է ծախում կապիտալիստին։ **Այստեղ մահուդի արժեքը ժամանակի յուրատեսակ չափ է միայն։** Փորձը ցույց է տվել, թե բանվորը միջին հաշվով քանի արշին մահուդ է պատրաստում որական։ Ասենք թե 30 արշին։ Բանվորական որը 10 ժամ հաշվելիս՝ 3 արշինը մեկ ժամ է ցույց տալիս։ Բանվորական ուժի որական գինն անում է 5×30=150 կոպեկ։ Այս բանն ամենից պարզորոշ յերևան է գալիս մեքենաներ մուծելու ժամանակ, որոնք մեծացնում են աշխատանքի արտադրողությունը։ Ձեռքի հաստոցը մեխանիկական հաստոցով փոխարինելով՝ ձեռնարկուն հենց վոր հավաստում է, թե աշխատանքի արտադրողականությունը քանի անգամ է շատացել, այնքան անգամ էլ քչացնում է գործավարձը, յեթե միայն ժամանակավարձ չի մտցնում։

Սակայն աշխատավարձի ձևը բանվորների համար անկարևոր չէ ամենևին։ Աշխատավարձի հենց այն ձևերը, որոնք հատկապես ցանկալի յեն կապիտալիստների համար, ամենից աննպաստ են բանվորների համար։ Կապիտալիստների աչքում գործավարձությունը (сдельщина) մեծ կշիռ ունի ամենից առաջ այն պատճառով, որ հսկողության կարիքը քչանում է[1]։ Գործավարձության ժամանակ մի ամբողջ շարք արտադրությունների մեջ հնարավոր է բանվորի՝ տանն աշխատելը։ Գործավարձությունն ու պարգևատրումը սափրում են, որ յուրաքանչյուր առանձին բանվոր իրեն հակադրե իր հետ բանող բոլոր ընկերներին։ Ամեն մեկն առանձին-առանձին ճգնում է մինչև վերջին հնարավորությունը գործադրելով իր աշխատանքն ինտենսիվացնել[2], իսկ այս բարձրացնում է մշակածի այն միջին չափը, որին հավասարվում է հատավարձը, և այս բոլորի հետևանքով հատավարձը վերջիվերջո ցածանում է։ Բանից յերևում է, որ բանվորները միայն կապիտալիստի ոգուտի համար ելին իրենց կաշուց դուրս գալիս։

Սակայն հարկավոր է նշել, որ կոնվեյերական սիստեմի ժամանակ, վորտեղ աշխատանքի ինտենսիվությանն ոժանդակում է արդյունքի անընդհատ հոսանքը, կապիտալիստը կարիք չունի պնդելու, որ գործավարձություն մտցվի։

Արտաժամյա աշխատանքների վարձը կարծես թե աշխատավարձի հավելումն է։ Թվում է, որ բանվորն իբրև թե կետարքայլին ժամերի համար ստանում է իր բանվորական ուժի արժեքն, իսկ արտաժամյա ժամերի համար վորոշ հավելում է ստանում—«ծխախոտի փող»։ Բայց այս կարծիքը թյուրիմացություն է տեղն ու տեղը։

ԱՐՏԱԺԱՄՑԱ ԱՇԽԱՏԱՆՔԸ։

Թեկուզ հենց այն ասենք, որ վորչափով ծխախոտն ու մյուս արվեստական պահանջները դարձել են պահանջներ, սրանց արժեքը մըտնում է բանվորական ուժի արժեքի մեջ։ Հետո, աշխատանքի վեր-

[1] Բացառություն կազմում են այնպիսի աշխատանքները, որոնք դժվար է ստուգել, յերբ կատված պրծած են արդեն, ինչպես է, որինակ, աղյուսով պատ շարելը։

[2] Ոչ թե բանվորա-գյուղացիական պետության ոգին, ինչպես մեզանում է՝ ԽՍՀՄ պետական արդյունաբերության մեջ, այլ հոգուտ կապիտալիստի։

ջին ժամերն, ուզում է՝ կետարքային լինեն սրանք թե արտաժամյա՝ միևնույն է,—շատ ու շատ ավելի չեն մաշում բանվորի օրգանիզմը, քան առաջին ժամերը: Օրգանիզմը, մի տեսակ, ունի իր շրջանառու և հիմնական միջոցները: Շրջանառու միջոցների ծախսումն ամեն օր վերականգնվում է սնունդ ընդունելով ու հանգստանալով: Իսկ հիմնական միջոցների ծախսումը կարող է վերականգնվել խոշոր վերանորոգման միջոցով միայն: Արտաժամյա աշխատանքներն, ինչպես և աշխատանքի վերջին ժամերն ընդհանրապես, յերբ բանվորական օրն անչափ յերկար է,—միշտ կատարվում են օրգանիզմի հիմնական միջոցների հաշվին: Յեվ յեթե արտաժամյա աշխատանքները միքիչ ավելի թանգ են վարձատրվում, ասենք մեկ ու կես անգամ ավելի, ապա այս հավելումը բավական չէ այն բանի համար, վոր իր ուժերն սպառած բանվորը կարող լինի առանձնապես սննդարար կերակրման անցնել կամ թե կարողանա ժամանակ առժամանակ, օրինակ, հանգստի տուն գնալ, ինչպես անում են ԽՍՀՄ բանվորները:

Օրգանիզմի հիմնական ուժերի մսխելու հետևանքը լինում է ուժերի անկումը, վարակիչ հիվանդությունների ավելի տրամադիր լինելը, վաղաժամ ինվալիդությունն ու վաղաժամ մահը: Այնուհետև, վորչափով վոր արտաժամյա աշխատանքները սովորական յերևույթ են դառնում, նրանք ընդհանրապես կետարքային են դառնում եյապես: Արդյոք արտաժամյա աշխատանքների վարձը տրվում է կետարքային վարձացուցակով թե արտաժամյա վարձացուցակով, միևնույն է, այս վարձը մտնում է բանվորի բյուջեյի մեջ: Բանվորն արդեն մենակ կետարքային վարձով ապրել չի կարող. Նշանակում է՝ այն բանվորական օրը, վոր նա գործադրում է ապրուստի անհրաժեշտ միջոցներ ստանալու համար, փաստորեն բանից դուրս է գալիս, վոր անչափ յերկարացրած բանվորական որ է[1]:

§ 51. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ.

Բանվորի ստացած աշխատավարձի իսկական մեծությունը կարելի չէ իմանալ վոչ թե փողի այն գումարից, վոր նա սեղմած է ունենում բռի մեջ, յերբ վերադառնում է աշխատավարձն ստանալուց, այլ սպառման այն առարկաների քանակից ու վորակից, վոր բանվորն այն փողով ձեռք է բերում շուկայում: Յեթե Մոսկվայի բանվորն ստանում է 20 ռուբլի, իսկ Կլինցովսկունը՝ 18, ապա հնարավոր է, վոր յերկրորդը իր փողով սպառման իրական առարկաներ ավելի շատ ստանա, քան առաջինը: Ահա թե ինչու

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ.

պետք է իրարից զանազանել անվանական աշխատավարձը, վորը չափվում է փողի քանակությամբ, ու իրական աշխատավարձը, վորը չափվում է բանվորական ուժի վերարտադրության իրական միջոցների քանակով, այսինքն սպառման առարկաների քանակով: Բանվորական ուժի գինը գների ընդհանուր աճումից յետ մնալու տենդենց է ունենում: Աշխատավարձի 5$^{0}/_{0}$-ով բարձրանալը ցածանալ է իսկապես, յեթե սպառման այն առարկաները, վորոնք հարկավոր են բանվորին, միջին հաշվով թանկացել են 10-$^{0}/_{0}$-ով: Ընկնող արժույթի պայմաններում աշխատավարձն էլ ավելի քիչ է լինում, յեթե նկատի ունենանք փողի գնողական ուժի անկումը:

Դարձյալ պետք է տարբերել պայմանագրով ստանալիք աշխատավարձի մեծությունն ու բանվորի իրոք ստացած այն գումարը, վոր մնում է տուգանքները հանելուց հետո: Ուշանալն, արդյունքի անբավարար լավորակությունը, վորի

ՀԱՆՈՒՐԴՆԵՐԸ (вычеты):

պատճառը հումքի վատ վորակն է հաճախ, բանվորի՝ բավականաչափ հնազանդ չլինելն,— այս բոլորը տուգանելու առիթներ են: Կապիտալիստի աչքում տուգանքը շատ անգամ վոչ թե արտադրողականությունը բարձրացնելու կամ կարգապահությանը զարկ տալու միջոց է, այլ հասույթի յուրատեսակ մի հոդված է: (Ինչպես յերևաց 1885 թվականի հունվարի գործադուլի ժամանակ, Տիմոֆեյ Մորոզովի գործարանում, վորը գտնվում էր Օրեխովո-Զույևոյում, տուգանքները կազմում եյին աշխատավարձի մինչև 25$^{0}/_{0}$-ը: Սրանից հետո գործարանային օրենքի այն վորոշումը, թե տուգանքների մաքսիմումը պետք է հավասար լինի աշխատավարձի 5$^{0}/_{0}$-ին, գործարանային վերատեսչության թուլության հետևանքով ճշտորեն չէր գործադրվում):

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԲՆԱՎՃԱՐՈՎ (натурой):

Կապիտալիստական ձեռնարկությունները բազմաթիվ դեպքերում ձգտում են աշխատավարձը բանվորներին մթերքներով տալու: Ֆաբրիկա-գործարանային խանութներում բանվորն սպառման առարկաներ գրքույկով ստանում է վարկով: (Այս

[1] Բացի սրանից, արտաժամյա աշխատանքները կրճատում են բանվորական գործող բանակի չափերն ու մեծացնում են պահեստի բանակը: Վորտեղ ամեն մի բանվոր կատարում է $1^{1}/_{5}$ բանվորի գործ, այնտեղ 10 բանվորը փոխարինում է 12-ին, և ուրեմն բանող բանվորի յուրաքանչյուր տասնյակը ձեռնարկությունից վտարում է յերկու բանվորի:

դեպքի մեջ վարկ չկա այս բառի ճիշտ իմաստով առած։ Իսկապես վոչ թե կապիտալիստն է վարկատուն բանվորին, այլ, ընդհակառակը, բանվորն է կապիտալիստին վարձով տալիս իր բանվորական ուժը, վորի վճարը նա ստանում է այն բանից հետո միայն, յերբ հիշյալ ուժն արդեն գործադրված է)։

Սովորաբար բանվորը բացի արդյունաբերական կապիտալի շահագործումից, յերբ շահագործողը գործատուն է, յենթարկվում է նաև առևտրական կապիտալի շահագործմանը, յերբ կեղեքողը իր խանութպանն է, իսկ յերբեմն յենթարկվում է վաշխառուական կապիտալի յել շահագործմանը, յերբ հարստահարողը մանր վաշխառուն է, վորից բանվորն ավազակային տոկոսներով մի քանի ռուբլի յե կորզում մինչև մոտիկ ստացքը (получка)։

Գործարանային խանութը, վորի հետ հաճախ զուգորդված է լինում ապրանքի պարտադիր վերկալումը, բանվորին ամբողջովին հանձնում է մեկ շահագործողի ձեռքը։ Բայց շահագործման միասնականությունն ստեղծելով բնավճար աշխատավարձն էլ ավելի ծանր է դարձնում այս շահագործումը։ Աշխատավարձը մթերքներով տալու ժամանակ չափազանց սահմանափակվում է բանվորներին մատչելի ապրանքների ընտրությունն, ապրանքների վորակը ցածանում է, իսկ գները մեծ մասամբ բարձրանում են։ Մի կողմից՝ վորպեսզի անհրաժեշտ փոփոխական կապիտալը փոքրացնի ըստ հնարավորին[1], իսկ մյուս կողմից՝ վորպեսզի բանվորին դարձնի գործարանային խանութի պարտադիր գնորդ, կապիտալիստն աշխատում է այնպես անել, վոր աշխատավարձ տալն ըստ կարելույն ուշ-ուշ լինի[2]։ Ցարական Ռուսաստանում

[1] Յեթե աշխատավարձը տալու ժամկետը կապիտալի պտույտի ժամկետներից կարճ չե, կապիտալիստն իր ամբողջ փոխոխական կապիտալը վարձով ստանում է բանվորներից։ Որինակ՝ յեթե ապրանք արտադրելու և սրա տեղակ փող ստանալու համար մեկ ամսից ավելի հարկավոր չե, և յեթե ընդամին աշխատավարձ վճարվում է 1 անդամ ու ամսի վերջին, ապա պարզ է, վոր կապիտալիստը վոչինչ չի կանխավճարում բանվորին, այլ միայն այն փողն վորոշ մասն է տալիս նրան, վոր ստացել եր բանվորի արտադրած ապրանքը վաճառելով։ Ռուսաստանում անցյալ դարում, յերբ ապրանքը ծախվում եր իննամսյա կամ տարեկան մուրհակներով, ապրանքների իրացման դանդաղությանը պատճառով աշխատավարձը յերբեմն վճարվում եր տարին 2 անդամ միայն։

[2] Մոսկվայի նահանգի գործարանային վերաուսուչ Յանժուլը պատմում է. «Բանվորները տառապում եյին այն պատճառով, վոր աշխատավարձի վճարման ժամկետները չափազանց անորոշ եյին։ Բանվորական պայմանագրի մեջ սովորաբար չեր վորոշվում բոլորովին, թե բանվորներին յերբ պետք է վճարվի աշխատավարձը, և գործատերը բանվորներին փող տալիս եր ըստ իր հա-

1886 թվականի հունիսի 2-ի որենքով արգելված եր ինչպես աշխատավարձը մթերքներով տալն, այնպես և աշխատավարձը ամիսը յերկու անգամից ավելի ուշ-ուշ վճարելը։ Սակայն իրականում այս արգելքը հաճախ մնում եր մեռյալ տառ շնորհիվ գործարանային վերատեսչության թուլության ու այն հալածանքների, վորին յենթարկվում եյին գանգատվող բանվորները։

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ։

Դասակարգային հարաբերությունները լիովին բնորոշելու համար շատ կարևոր է թեկուզ մոտավոր[1] պատկերացում ունենալ այն մասին, թե 1) բանվորի ստեղծած բոլոր արժեքների վո՞ր մասն է բաժին ընկնում նրան իբրև աշխատավարձ ու 2) նրա այս բաժինն ավելանո՞ւմ է, թե՞ պակասում։

Իբրև որինակ դիտեցեք 178 եջի I աղյուսակը, վոր ցույց է տալիս շարժումն այն բաժնի, վոր բանվորներն ունեցին Անգլիայի ազգային հասույթի մեջ։

Նույնն է ուրիշ յերկրներում էլ։ Արտագրեն ընկնում է բանվոր դասակարգի բաժինը, վոր նա ունի ազգային հասույթի մեջ։ Արտադրողական ուժերի զարգացումը կարծես թե բանվոր դա-

[1] Նկատի ունենալով վիճակագրական նյութի անկատարությունը՝ ճիշտ տվյալների մասին խոսք չի կարող լինել։

սակարգի կշռից և անցնում՝ լռել մեծացնելով նրա շահագործման նորման։

Հաջորդ աղյուսակը բնորոշում է հարաբերական աշխատավարձի շարժումը ցարական Ռուսաստանում 1900-ից մինչև 1913 թվականը։

	Թ Վ Ա Կ Ա Ն Ն Ե Ր	Ազգային հասույթի նկատմամբ %%
I	1843	45,6
	1860	47,1
	1866	43,5
	1884	41,4
	1891	42,7
	1903	38,3
	1905	38,0
	1908	38,0

Աշխատավարձի բաժինը մեկ բանվորին ընկնող զուտ պրոդուկցիայի մեջ արտահայտվում էր տարեկան միջին հաշվով (ԽՍՀՄ տերրիտորիայում) այսքան ռուբլով.

	Թ Վ Ա Կ Ա Ն Ն Ե Ր	Զուտ պրոդուկցիան	Աշխատավարձը	Աշխատավարձը պրոդուկցիայի վոր %-ն էր
II	1900	399	194,7	48,8
	1908	541	234,7	43,4
	1913	790	279,8	35,4

Յերբ աշխատավարձը քննում ենք այն տեսակետից, թե բանվոր դասակարգի բաժինը վորքան է արդյունքի մեջ, մենք գործ ունենք հարաբերական աշխատավարձի հետ։ Հարաբերական աշխատավարձի արագ անկումը դասակարգային հակասությունների խորանալու յեվ սրվելու ստույգ նշանն է։

§ 52. ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ (ՌՈՃԻԿ).

Ձեռնարկուն գնում է վոչ միայն բանվորների, այլև ծառայողների, այսինքն կազմակերպիչների, հսկիչների, հաշվետարների ու այլոց բանվորական ուժը։ Վորքան ավելի բարձր է ծառայողը իր աստիճանակարգով (ранг), վորքան ավելի շատ թելեր են կենտրոնացած նրա ձեռքերում, այնքան ավելի անձեռնտու չէ կապիտալիստին, վոր այս ծառայողին պահե դառը վիճակում և սրան դարձնի իր դասակարգային հակառակորդը։ Ստորին ծառայողներն, իհարկե, ավելի քիչ չեն շահագործվում, քան բանվորները։ Ինչ վերաբերում է բարձր ծառայողներին—դիրեկտորներին, ինժեներներին և այլն, ապա նրանք վոչ միայն չեն շահագործվում, այլ, ընդհակառակը, կապիտալիստը, լինի տանտեմայի թե ուղղակի ռոճկի կերպարանքով, նրան մաս է հանում բանվորից քամած հավելյալ արժեքից։ Բարձր ծառայողները բանվորական ուժ վաճառողների դիմակի տակ նույնպես կապիտալիստների կոմպանյոններն են հանդիսանում։ Իրենց խնայողությունները նրանք հաճախ զետեղում են հենց նույն այն ձեռնարկությունների մեջ, վորտեղ իրենք են աշխատում։ Ձեռնարկության մեջ իրենց կապիտալներով այսպես մասնակցելը միքանի դեպքերում մինչև անգամ պարտադիր է նրանց համար։ Բացի սրանից, ինչպես արդեն տեսել ենք վերևում, բաժնետիրական ընկերությունների մեջ միքանի բարձր պաշտոններ (վարչության անդամներ, վերստուգիչ հանձնաժողովի անդամներ և այլն) հենց միայն նրա համար են ստեղծվում, վոր «հիմնադիրներն» ու մյուս «հարկավոր» մարդիկ կարողանան ձեռնարկության շահույթի մի մասը յուրացնել իբրև ռոճիկ, նստավարձ[1] և այլն։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Энгельс.—,,Положение рабочего класса в Англии''.

Туган-Барановский.—,,Русская фабрика в прошлом и настоящем''.

И. А. Трахтенберг.—,,Коллективный договор''.

Ю. Борхардт.—,,Капитал К. Маркса''.

А. Кон.—,,Теория промышленного капитализма''.

Залкинд.—,,История русской фабрики''.

Г. Вейнберг.—,,Что такое тарифное соглашение и так далее''.

Джон-Кол.—,,Системы заработной платы''.

[1] Նիստերին մասնակցելու վարձ։

ՇԱՀՈՒՅԹՆ ՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ.

§ 53. ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ՆՈՐՄԱՆ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԻ ՆՈՐՄԱՆ.

«Հավելյալ արժեքը հազարավոր ապավակներով տարածվում, լցվում է սիրողների գրպանները. նրա մի մասը մտնում է հենց իրեն—կապիտալիստի գրպանը. այս շահույթն է. մի մասը հասնում է կալվածատեր հողատիրոջը (ռենտա), մի մասը իրրև հարկեր հասնում է կապիտալիստական պետությանը, մի մասը՝ վաճառականներին, խանութպաններին, չեկեղեցիներին, հասարակաց անեղին, դերասաններին ու կլոուններին, բուրժուազիայի գրչակներին և այլն։ Այս հավելյալ արժեքի հաշվին են ապրում բոլոր մակաբույծները, որոնց առաջ և բերում և բազմացնում կապիտալիստական հասարակակարգը» («Азбука коммунизма»)։

Ամենից առաջ կանգ առնենք շահույթի վրա։

Այն չերկար ցանկի մեջ, որ բերում է ընկ. Բուխարինը, չերեք խոշոր խմբեր կան, որոնք հավելյալ արժեքն ստանում են ուղղակի. կապիտալիստների դասակարգը, հողատերերի դասակարգն ու կապիտալիստական-հողատիրական պետությունը։ Մնացածները պնակալեզներ են, որոնք կերակրվում են կապիտալիստներին, հողատերերի ու սրանց կառավարության տված վարձատրություններով։

ՇԱՀՈՒՅԹՆ ԻՐՐԵՎ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ՄԱՍ։

Շահույթը հավելյալ արժեքից տարբերվում է ամենից առաջ քանակով։ **Շահույթը հավելյալ արժեքի այն մասն է, որը հասնում է կապիտալիստին։**

Սակայն, բացի այս քանակային տարբերությունից, տարբերություն կա նաև ըստ էության։

Այս տարբերությունը հասկանալու համար կանգ առնենք հետևյալ օրինակի վրա։

Ա. կապիտալիստը պատրաստի հագուստի գործարանի մեջ դրել է 200,000 ռուբլի։ Նրա ձեռնարկության մեջ աշխատում են 75 մարդ, որոնք օրական միջին հաշվով ստանում են 2-ական ռուբլի։ Մեկ տարվա ընթացքում (300 բանվորական օր) գործարանը պատրաստում է 10,000 կոստյում 50-ական ռուբլի արժեքով։ Նյութեղենների, մեքենաների ու շենքերի մաշվածքի, վառելիքի, ճրագելյուի ու այլոց վրա գործարանը տարեկան ծախսում է 410,000 ռուբլի։ Պարզ կացուցանելու համար մի կողմ թողնենք այն հողի ռենտան, որի վրա շինված կա գործարանը։ Ցենթադրենք, որ բոլոր վերոհիշյալ գները համապատասխանում են իսկական արժեքներին, և հաշվենք, թե Ա. կապիտալիստը տարեկան վիրքան է հավելյալ արժեք ստանում։

Սրա համար ամենից առաջ գտնենք, թե տալվա ընթացքում ընդամենը վիրքան նոր արժեք է ստեղծվել գործարանում։ Յեթե արդյունքի արժեքը հավասար է 500,000 ռուբլու, որից 410,000 ռուբլին արդյունքին փոխանցվել է նյութեղենից, մեքենաներից և այլն, ապա պարզ է, որ գործարանում մեկ տարվա ընթացքում ստեղծված է 90,000 ռուբլու նոր արժեք։

Նոր ստեղծված արժեքի 90.000 ռուբլուց կապիտալիստը բանվորներին վճարել է 45,000 ռուբլի։ Այսպիսով, գործարանում մեկ տարվա ընթացքում նորից ստեղծված արժեքը բաժանվել է յերկու հավասար մասի. 45.000 ռուբլին բռնում է փոփոխական կապիտալի տեղն, իսկ 45.000 ել կազմում են հավելյալ արժեքը։

Շահագործման ֆ՚նչպիսի նորմա ստացվեց։—100%։

Բայց կապիտալիզմը հավելյալ արժեքի նորման վարագուրում է մի ուրիշ նորմայով, այն է՝ շահույթի նորմայով։ Հարցրեք Ա. կապիտալիստից, թե նրա ձեռնարկության մեջ հավելյալ արժեքի նորման որքան է, և նրանք մինչև անգամ չեն էլ հասկանա, թե ինչի մասին են հարցնում նրանց։ Սրա փոխարեն ամեն մի կապիտալիստ հասկանում է, թե ինչ բան է շա՚ուլթի նորման։

Ամենից առաջ տեսնենք, թե կապիտալիստն ինչպես է հաշվում իր շահույթը։ Նա, իհարկե, վոչ մի տարբերություն չի դնում բանվորական ուժի վրա արած ծախսումների ու մյուս ծախսումների միջև։ Արդյունքի վրա արած բոլոր ծախսումները, ուզում է նյութեղենի արժեք լինի, մեքենաների ու շենքերի մաշվածք, աշխատավարձ, միևնույն է,—նա միակերպ հաշվի չի առնում իրրև ինքնարժեք։

Արդյունքի արժեքից ինքնարժեքը հանելով՝ կապիտալիստն ստանում է շահույթի գումարը։ Մեր օրինակի մեջ նրա հաշվեկշռ այսպիսի կերպարանք է ստանում.

Արդյունքի արժեքը . . .	500.000 ռ.
Ինքնարժեքը	455.000 ռ.
Շահույթը . .	45.000 ռ.

Իսկ շահույթի նորման հաշվելու համար նա շահույթի գումարը բաժանում է այն ամբողջ կապիտալով, որ ինքը ծախսել է և մեր օրինակում 200.000 ռուբլի չե։

$$\frac{45.000}{200.000} = 22\frac{1}{2}\%;$$

ՇԱՀՈՒՅԹԸ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔՈՆ ԵՒ ՇԱՐՈՂԶ ԾԱԽՍՎԱԾ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԾ։

Մեր բառերով ասած՝ այդ նշանակում է, որ շահույթի նորման ստացվում է հավելյալ արժեքը բաժանելով կանխավճարած ամբողջ կապիտալով։ Յեվ շահույթի գլխավոր առանձնահատկությունը հենց այս է. շահույթը հավելյալ արժեքն է, միայն թե ոչ թե փոփոխական կապիտալի հետ համեմատած, այլ այն ամբողջ կապիտալի հետ համեմատած, որ կապիտալիստը կանխավճարել է։

Հենց նրանով, որ հավելյալ արժեքը համեմատության մեջ է դրվում ամբողջ կապիտալի հետ, վարագույր է ձգվում շահագործման հարաբերությունների վրա։ Յեվ դուրս է գալիս, որ ոչ թե բանվորն, այլ ինքը կապիտալն է ստեղծել հավելյալ արժեքը։

Շահույթի նորմա ասելով սովորաբար հասկացվում է տարեկան նորման։ Այս պատճառով էլ շահույթի նորման վորոշելու համար պահանջվում է յերեք տվյալ.

1. շահույթի քանակը,
2. ծախսված կապիտալի մեծությունն ու
3. այն ժամանակի տևողությունը, որի ընթացքում գործել է կապիտալը։

Յեթե մենք գիտենք շահույթի քանակն, ապա **շահույթի նորման այնքան ավելի մեծ է, որքան ավելի փոքր է ծախսված կապիտալն ու սրա պտույտի ժամանակը։** 100 ռուբլի շահույթը մեկ տարվա ընթացքում շրջանառության մեջ յեղած 1,000 ռուբլու վրա հաշվելով՝ տալիս է $10^0/_0$ շահույթի նորմա, իսկ 2000 ռուբլու վրա հաշվելով՝—միայն $5^0/_0$։ Իսկ 2 տարի շրջանառության մեջ յեղած 2,000 ռուբլու վրա հաշվելով՝—միայն $2^1/_2{}^0/_0$։ Այսպես, ուրեմն, **շահույթի նորմա հակառակ հարաբերական է կապիտալի մեծությանն ու կապիտալի պտույտի տեվողությանը։**

§ 54. ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒ ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼԸ։ ԿԱՊԻՏԱԼԻ ՈՐԳԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ.

Մարքսը հայտնագործեց, որ կապիտալը բաժանվում է յերկու մասի—մշտական ու փոփոխական կապիտալների։ Հնարավոր է մի ուրիշ բաժանում էլ, որ հայտնի չէ ամեն մի կապիտալիստի. ըստ այսմ կապիտալը բաժանվում է հիմնական ու շրջանառու մասերի։ Վերցնենք որևէ արտադրական պրոցես։ Ասենք թե մեր առջև կանգնած է մանածագործարանի մանարանի բա-

ժանմունքը, որ բանում է ամբողջ թափով։ Պրոցեսին մասնակցում են՝ բանվորական ուժը, հումքը (բամբակ), ոժանդակ նյութեղեններն (ածուխ), մեքենաները, շենքերը։ Պրոցեսն ավարտվելուց հետո էլ արդեն մեջտեղում չեն լինիլ վոչ այն բամբակը, վոչ այն ածուխը, վոչ էլ այն բանվորական ուժը, վորոնք մասնակցում էին այս պրոցեսին։ Այսպես, ուրեմն, բանվորական ուժը, հումքն ու ոժանդակ արդյունքները, վորոնք մասնակցել են արտադրության մեջ, ամբողջովին գործադրված են։ Ուրիշ է մեքենաների ու շենքի բանը։ Սրանք մնում են գործարանում այն բանից հետո էլ, յերբ արդյունքը դուրս է գալիս, հեռանում այնտեղից։ Սրանք լոկ աստիճանաբար են մաշվում։ Գործարանից դուրս յեկող մանվածքի ամեն մի փունջը իր հետ տանում է մեքենաների ու շենքի արժեքի մի մասնիկը միայն[1]։ Շենքերի ու մեքենաների մաշվող մասնիկների արժեքն **աստիճանաբար** վերադառնում է կապիտալիստի գրպանն իբրև փող, որ նա ստանում է մանվածքը վաճառելով։

Բանվորական ուժը, բամբակն, ածուխը շրջանառու կապիտալի տարրերն են։ Մեքենաները, շենքերը հիմնական կապիտալի տարրերն են։

Այսպես, ուրեմն, շրջանառու կապիտալի տարրերն ամեն անգամ ամբողջովին կլանվում, չքանում են արտադրության պրոցեսի մեջ։ Իսկ հիմնական կապիտալի տարրերը մասվում են աստիճանաբար, նրանց արժեքը մաս-մաս է մտնում արդյունքի արժեքի մեջ յեվ մաս-մաս էլ վերադառնում է կապիտալիստին։

ԿԱՊԻՏԱԼԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՅԵՐԿՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ.

Փոփոխական կապիտալ	Բանվորական ուժ	Շրջանառու կապիտալ
Մշտական կապիտալ	Հումք	
	Ոժանդակ նյութեղեններ	
	Մեքենաներ	Հիմնական կապիտալ
	Շենքեր	

Այսպիսով, փոփոխուն կապիտալն ամբողջ մտնում է շրջանառու կապիտալի մեջ, մշտական կապիտալը մասամբ մտնում է

[1] Խնդիր. Շինությունն ավարտելուց հետո գործարանի շենքի արժեքն եր $1/_2$ միլիոն ռուբլի։ Այստեղ տարեկան միջին հաշվով գործում եյին՝ մեկ միլիոն արշին մանուղ։ Շենքի վերանորոգությունը տարեկան խլում եր 1000 ռուբլի։ 50 տարի անց շինության արժեքը յեղել եր 50,000 ռ.. Մանուղի յուրաքանչյուր արշինի մեջ շենքի արժեքի վոր մասն եր մտնում, յեթե այս արտահայտենք փողով։

հիմնականի մեջ (շենքեր, մեքենաներ), մասամբ էլ շրջանառուի մեջ (հումք, ժամանակ նյութեղենները)։

ՇԱՀՈՒԹԻ ՆՈՐՄԱՆ ՎՈՐՈՇԵԼԻՍ ՀԱՇՎԻ ՑԵՆԱՌՆՎՈՒՄ ԱՄԲՈՂՋ ԿԱՊԻՏԱԼԸ։

Ինքնըստինքյան հասկանալի չե, վոր յերբ կապիտալիստն իր ստացած շահույթի նորման պարզելու համար այս շահույթը բաժանում է կապիտալով, ապա նա ուշադրություն է առնում վոչ միայն կապիտալի այն մասը, վոր մտել է տվյալ պտույտի մեջ, այլ ամբողջ կանխավճարած կապիտալը, թե շրջանառուն ու թե հիմնականը։

Կապիտալիստից հարկավոր շրջանառու կապիտալի չափերը կախված են պտույտի արագությունից։ Վորքան ավելի արագ է պտույտը, շրջանառու կապիտալ այնքան փիչ է հարկավոր։

Պատրաստի հագուստի գործարանի որինակում, վոր բերել ենք վերևում, մատնանշված է կապիտալի ընդհանուր գումարը միայն (200,000), բայց մենք չգիտենք, թե այս կապիտալն ինչպես է բաժանված հիմնական ու շրջանառու կապիտալների։ Փորձենք հիմա սահմանել այս բաժանումը, և մենք իսկույն կըհասկանանք, թե պտույտի արագությունն ինչ մեծ նշանակություն ունի անհրաժեշտ շրջանառու կապիտալի մեծության համար։ Սկզբում չենթադրենք, թե գործարանը բանում է Նիժնի-Նովգորոդի տոնավաճառի համար միայն, և ուրեմն այս գործարանի կապիտալը շրջան է գործում տարին մեկ անգամ։ Այս դեպքում գործարանը պետք է ուղիղ 455,000 ռուբլու մենակ շրջանառու կապիտալ ունենար[1], այսինքն շրջանառու կապիտալն իր մեծությամբ պետք է հավասար լիներ տարեկան պրոդուկցիայի ինքնարժեքին, վորովհետև այս շրջանառու կապիտալը պետք է բավականացներ տոնավաճառից մինչև տոնավաճառ։ Վորովհետև գործարանի մեջ դրած ամբողջ կապիտալը, թե շրջանառուն ու թե հիմնականը, 200,000 ռուբլուց ավելի չե, ապա պարզ է, վոր գործարանը պետք է տարվա մեջ մի քանի պտույտ գործե։ Հնարավոր են, որինակ, այսպիսի ավյալներ.

ՊՏՈՒՅՏԻ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գործարանն անում է տարեկան 5 պտույտ։ Հիմնական կապիտալը հավասար է 110,000 ռուբլու, և այս մաշվում է միջին հաշվով յուրաքանչյուր 22 տարում։ Շրջանառու կապիտալը հավասար է 200,000—110,000=90,000 ռուբլի։ Հիմնական կապիտալը տարեկան մաշվում է 110,000 : 22=5000 ռուբլի։ Վորովհետև գործարանը տարեկան 5 պտույտ է անում, ապա յուրաքանչյուր պտույտին ընկնում է հիմնական կապիտալի 1,000 ռուբլու մաշվածք։ Այս հազար ռուբլին+90,000 ռ. հիմնական կապիտալն անում է յուրաքանչյուր պտույտին 91,000 ռուբլի, իսկ հինգ պտույտին՝ 455,000 ռուբլի, վորը համապատասխանում է տարեկան պրոդուկցիայի ինքնարժեքին։

[1] Միևնույն՝ հիմնական կապիտալի մաշվածքը։

Արտադրության տարբեր ճյուղերում ու միևնույն ճյուղի տարբեր ձեռնարկություններում մեջ կապիտալներն ամենատարբեր կերպով են բաժանվում մշտական ու փոփոխական մասերի։

Ընդհանրապես վորքան ավելի բարձր է տեխնիկան, սովորաբար այնքան ավելի մեծ է մշտական կապիտալն ու այնքան ավելի փոքր՝ փոփոխուն կապիտալը։

ԿԱՊԻՏԱԼԻ ՈՐԳԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ։

Կապիտալի որգանական կազմ կոչվում է մշտական կապիտալի հարաբերությունը փոփոխական կապիտալի ճկատմամբ, վորչափով վոր այս հարաբերության մեջ արտացոլում է տեխնիկական մակարդակը։

ԿԱՊԻՏԱԼԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ։

Այսպիսով կապիտալի որգանական կազմի հիմքը նրա տեխնիկական հիմքն է, այսինքն բանվորների թվի հարաբերությունը արտադրության միջոցների այն քանակի ճկատմամբ, վոր նրանք կարող են շարժողության մեջ դնել։ Հասկանալի չե, վոր չի կարելի մի վորևե վորոշ ժամանակում մի վորոշ ձեռնարկության վերաբերմամբ ճշգրտորեն արտահայտել, թե նրա կապիտալի տեխնիկական կազմը ինչպիսին է։ Յերբ մենք տեսնում ենք, վոր գործարանում 100 բանվորը 100 ձիուժանոց մեկ շարժիչով ու 100 հատոցը որական 200 կիլոգրամ մանվածքն են դարձնում գործվածք, ապա այստեղից վոչ մի ճիշտ հարաբերություն չեզրակացնել չի կարելի, քանի վոր առանձին ավյալներն անհամեմատելի չեն (բանվորներին չի կարելի համեմատել մանվածքի հետ և այլն)։

Ուրիշ բան է, յերբ մենք համեմատենք յերկու ձեռնարկություն կամ թե միևնույն ձեռնարկությունը տարբեր ժամանակներում։ Յերբ մենք առաջին այցելությունից մի տարի անց յերկրորդ անգամ գանք վերոհիշյալ գործարանը և տեսնենք, վոր բանվորների թիվը նույնն է մնացել, շարժիչի ձիուժերի քանակը, հատոցների թիվը ու պատրաստ-

վող մանվածքի քանակը կրկնապատկվել է, մենք կարող կլինենք վորոշակի հավաստել, թե կապիտալի տեխնիկական կազմը բարձրացել է։

Իհարկե, պատահում է, վոր մշտական կապիտալի հարաբերությունը փոփոխուն կապիտալի նկատմամբ աճում է՝ առանց կապիտալի տեխնիկական կազմի համապատասխան աճման։ Յեթե այն գործարանը, վորի մասին խոսեցինք վերևում, պահեր բանվորների միևնույն քանակը, նույնքան հաստոցներ և այլն, բայց բամբակ պատրաստելուց անցներ մետաքսին, հումքի արժեքը կաճեր, ուրեմն և կաճեր մշտական կապիտալի հարաբերությունը փոփոխուն կապիտալի նկատմամբ, այնինչ կապիտալի տեխնիկական կազմը նույնը կմնար։

Կապիտալի արժեքային կազմ կոչվում է մշտական կապիտալի հարաբերությունը փոփոխուն կապիտալի նկատմամբ, յերբ այս հարաբերությունը վերցվում է կապիտալի տեխնիկական կազմից միանգամայն անկախ։

ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ (ценностный) ԿԱԶՄԸ։

Ավելի պարզ կացուցանելու համար կապիտալի յուրաքանչյուր հարյուրյակ տրոհում են հաստատուն ու փոփոխական մասերի, որինակ՝ 50c+50v կամ թե 90c+10v։ **Վորքան մեծ է c-ն, այնքան բարձր է կապիտալի օրգանական կազմը։**

Որինակ՝ 95c+5v կապիտալի օրգանական կազմն ավելի բարձր է, քան 06c+40v կապիտալինը։

Փորձենք վերևում մեջ բերած սխեմայի համաձայն սահմանել պատրաստի հագուստի մեր այն գործարանի կապիտալի օրգանական կազմը։

Տարվա մեջ բանվորներին ընդամենը վճարվում է 45,000 ռուբլի։ Վորովհետև գործարանը տարեկան 5 պտույտ է անում, ապա յուրաքանչյուր պտույտի մեջ մտնում է 9,000 ռուբլի աշխատավարձ։ Հետևաբար գործարանն ունի 9,000 ռուբլի փոփոխական կապիտալ ու 200,000—9,000=191,000 ռուբլի մշտական կապիտալ։

Այսպիսով գործարանի կապիտալի օրգանական կազմը հավասար է 191: 9 կամ $95^1/_2$: $4^1/_2$, այսինքն $95^1/_2$ c+$4^1/_2$ v։

§ 55. ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ (ПЕРЕМЕЩЕНИЕ)։

Պատրաստի հագուստի գործարանի որինակում, վոր վերևում մեջ ենք բերել, մենք չենթադրել էինք, թե գները համապատասխանում էին արժեքին։ Սրա շնորհիվ այն ամբողջ հավելյալ արժեքը, վոր ստեղծել էին բանվորները, բաժին ընկավ նրանց վարձողին իբրև շահույթ։ Ուրիշ բան կլիներ, յեթե գները չհամապատասխանեին արժեքներին։

Յեթե, որինակ, գործարանատերն իր արդյունքը ծախեր սրա արժեքից ցած գնով, ապա նրա շահույթն ավելի քիչ կլիներ, քան հավելյալ արժեքի այն քանակությունը, վոր բանվորներն ստեղծել էին հենց նրա գործարանում։ Վորչափով վոր ապրանքը ծախվեր արժեքից ցած գնով, հետևաբար այն կլիներ, վոր հավելյալ արժեքի մի մասը կմտներ գնորդի ձեռքը։ Այսպես, որինակ, յենթադրենք, վոր գործարանատերը յուրաքանչյուր կոստյումը ծախել է արժեքից 1 ռուբլի ցած գնով։ Այս հանգամանքը գործարանում ստեղծած հավելյալ արժեքից 10,000 ռուբլի **կտեղափոխեր** (переместить) գնորդների գրպանները։

Ընդհակառակը, յեթե գործարանատերն իր արդյունքը ծախեր սրա արժեքից բարձր գնով, նրա շահույթը կգերազանցեր այն հավելյալ արժեքից, վոր ստեղծված կլիներ նրա գործարանում։

Հասկանալի չե, վոր յեթե արժեքից շեղվելին վոչ թե այն արդյունքի գները, վոր գործարանատերը ծախում է, այլ այն հումքի գները, վոր գործարանատերն առնում է, ներգործությունը հակառակը կլիներ։ Հումքի գնելի՝ արժեքից ցած ընկնելը կշատացներ գործարանատիրոջ վաստակն ավելի, քան հավելյալ արժեքն է։ Այս դեպքում գործարանատերը, բացի այն հավելյալ արժեքից, վոր ստեղծվել էր նրա գործարանում, կստանար նաև այն հավելյալ արժեքի մի մասը, վոր ստեղծված կլիներ հումքն արտադրող ձեռնարկություններում։ Այս էլի կլիներ հավելյալ արժեքի տեղափոխումը։

Այսպես, ուրեմն, ձեռնարկության շահույթը միայն այն ժամանակ է հավասար տվյալ ձեռնարկության մեջ արտադրված հավելյալ արժեքին, յերբ ինչպես արտադրության միջոցների, այնպես և արդյունքի գները չեն շեղվում արժեքից։ Հակառակ դեպքում կատարվում են հավելյալ արժեքի մասնակի տեղափոխություններ։ Այն ձեռնարկուն, վորը գնում է արժեքից բարձր գներով կամ թե ծախում է արժեքից ցածր գներով, նա իր կոնտրագենտին[1] բաժին է հանում մի մասն այն հավելյալ արժեքից, վորն ստեղծված է յեղել իր գործարանատիրոջ ձեռնարկության մեջ։

1 Կոնտրագենտ է կոչվում գնորդը վաճառորդի վերաբերմամբ ու վաճառորդը՝ գնորդի վերաբերմամբ։

§ 56. ՇԱՀՈՒՅԹԻ ՀԱՎԱՍԱՐ ՆՈՐՄԱՆ.

Մինչև հիմա մենք բերում էինք պատրաստի հագուստի այն գործարանի օրինակը, որն ուներ 200,000 ռուբլի կապիտալ, 75 բանվոր՝ որական 2 ռուբլի աշխատավարձով, և որտեղ շահագործման նորման 100%-եր։

Այս օրինակին զուգընթաց վերցնենք մի ուրիշ օրինակ, թեկուզ հենց գարեջրի գործարանինը, որն ունի նույնքան կապիտալ, հենց նույնպիսի աշխատավարձ ու շահագործման նույնպիսի նորմա, բայց որտեղ բանվորների թիվը տարբեր է։ Պատրաստի հագուստի գործարանում կար 75 հոգի բանվոր։ Գարեջրի գործարանում կար միայն 50 բանվոր։ Այս հանգամանքն ինչպես պետք է ներգործե շահույթի նորմայի վրա։ Պատրաստի հագուստի գործարանում շահույթի նորման հավասար էր $22^1/_2\%$-ի։ Արդյոք գարեջրի գործարանում այն նորման ավելի բարձր կլինի, թե՞ ցածր։

Յեթե միայն այստեղ էլ գները համապատասխան լինեն արժեքներին, ապա գարեջրի գործարանում շահույթի նորման պետք է ավելի ցածր լինի, քան պատրաստի հագուստի գործարանում էր, և ցած լինի այնքան անգամ, որքան անգամ վոր նրա բանվորների թիվը քիչ էր։ Յեվ իրոք, քանի վոր գները համապատասխանում են արժեքներին, ապա հավելյալ արժեքի տեղափոխում չի կատարվում։ Յեթե ռենտան չհաշվենք, գործարանը հավելյալ արժեք չի տալիս կողմնակիների և դրսից էլ վոչ մի տեղից արժեք չի ստանում։ Գարեջրի գործարանատերն իրրև շահույթ ստանում է այն հավելյալ արժեքը միայն, որը քամում է հենց իր բանվորներից։ Վորովհետև շահագործման միևնույն նորմայի ժամանակ հավելյալ արժեքն այնքան ավելի քիչ է, որքան ավելի քիչ են բանվորները, ուստի սրանից յերևում է, թե որքան քիչ է բանվորների թիվը, այնքան ավելի քիչ է շահույթն էլ։ Գարեջրի գործարանի բանվորները պատրաստի հագուստի գործարանի բանվորների $^{50}/_{75}$ մասը կամ յերկու յերրորդականն են. նշանակում է նրա շահույթն էլ պետք է լինի սրա շահույթի յերկու յերրորդականի չափ։ Վորովհետև այստեղ էլ ու այնտեղ էլ կապիտալները հավասար են, ապա շահույթի նորման էլ պետք է մյուսի յերկու յերրորդականի չափ լինի։ Պատրաստի հագուստի գործարանում շահույթի նորման հավասար էր $22^1/_2\%$-ի։ Գարեջրի գործարանում շահույթի նորման պետք է հավասար լինի

$$22^1/_2 \times {}^2/_3 = \frac{45.2}{2.3} = 15\%:$$

Ավելի պարզ դարձնելու համար՝ այս տուրգենք թվերով։ Գարեջրի գործարանը իր բանվորներին տարեկան վճարում է $2 \times 50 \times 300 = 30,000$ ռուբլի։ Ֆանի վոր շահագործման նորման 100% է, հավելյալ արժեքը նույնպիսի գումար է կազմում։ Վորովհետև ամբողջ հավելյալ արժեքը մնում է ձեռնարկությանը մեջ, շահույթի գումարը նույնպես հավասար է 30,000 ռուբլու։ 200,000 ռուբլի կապիտալի դեպքում այս անում է տարեկան 15%։

Ընդհանրապես յերբ շահագործման նորման ու աշխատավարձը միևնույնն են և կապիտալի մեծությունն էլ միևնույնն է (յեթե հավելյալ արժեքի տեղափոխում էլ չլինի), շահույթն այնքան ավելի բարձր է, որքան աւելի շատ են բանվորները, այնինչ համեմատաբար որքան ավելի շատ է փոփոխական կապիտալն, այնինչ որքան ավելի ցած է կապիտալի օրգանական կազմը։

Հավասար կապիտալներն անհավասար շահույթ կարող են տալ վոչ միայն այն պատճառով, վոր բանվորների թիվն անհավասար է։ Շահույթի անհավասարությունն կարող է առաջվել նաև նրա հետևանքով, վոր շահագործման նորման անհավասար լինի արտադրության տարբեր ճյուղերում[1]։

Այս դրությունը պատկերացնենք ընդհանուր ձևով։ Ասենք թե գարեջրի ձեռնարկությունները տարեկան 15% շահույթ են տալիս, իսկ պատրաստի հագուստի գործարանները՝ 20%-ից ավելի։ **Արդյոք կարո՞ղ է այս յերկար շարունակվել։ Վոչ, այս անհնարին է։ Այն կապիտալիստները, վորոնք կապիտալներ են դնում նոր ձեռնարկությունների մեջ, կխուսափեն գարեջուր արտադրելու գործից։ Ընդհակառակը, դեպի կարուձևի արդյունաբերությունը**

[1] *Շահույթի նորմայի անհավասարության պատճառ կարող է լինել պատրաստի արագության տարբերությունն էլ։ Բայց յերբ կապիտալները հավասար են, և շահագործման նորման էլ միևնույնն է, պատրաստի արագության տարբերությունը վերջնվերջո բանվորների թվի տարբերությունից է առաջանում։ Այս հասկանալու համար յիշեցնենք, վոր պատրաստի հագուստի այն գործարանը, վորի մասին խոսել ենք վերևում, տարեկան վոչ թե 5, այլ 1 պատրաստ է գործում՝ ունենալով նույն մեծության կապիտալ, վորն, ինչպես յենթադրել ենք, կազմված է 9000v-ից ու 191,000c-ից։ Հենց պատրաստ անելիս գործարանը վճարում էր տարեկան 45,000 ռուբլի աշխատավարձ։ Մեկ պատրաստ գործելիս տարեկան կվճարե միայն 9,000 ռուբլի։ Յեթե աշխատավարձի բարձրությունը հավասար լինեն, գործարանը 5 անգամ ավելի քիչ բանվոր պիտի ունենա, այս պատճառով էլ յերբ շահագործման նորման միևնույնն է, գործարանը 5 անգամ ավելի քիչ հավելյալ արժեք կտանա։*

ձգտելու հոսանք առաջ կգա: Կարուձևի նորանոր գործարաններ են բացվում, որոնք ահագին քանակությամբ պատրաստի հագուստ են նետում շուկա: Առաջարկն այնքան կգերազանցե պահանջից, որ հարկ կլինի պատրաստի հագուստն իր արժեքից ցած գնով ծախել: Բարձր շահույթի հետքն անգամ չի մնա: Ընդհակառակը, դարբնի գործի մեջ ոչ մի նոր ձեռնարկու չի մտնի: Բացի սրանից, առաջվա ձեռնարկություններն էլ կրանեն մի կերպ քարշ գալով: Արդյունաբերության այս ճյուղն ավելի ու ավելի քիչ քանակությամբ արդյունքներ կմատակարարե շուկային, իսկ սրա հետևանքն այն կլինի, որ դարբնի պահանջը կգերազանցե առաջարկից: Դարբնի գինը կբարձրանա, սրա հետ կբարձրանա շահույթն էլ:

ՇԱՀՈՒՅԹԻ ՀԱՎԱՍԱՐ ՆՈՐՄԱՆ:

Կապիտալի այս միգրացիան, այսինքն կապիտալի՝ ավելի պակաս շահութաբեր ճյուղերից դեպի ավելի շահութաբեր ճյուղերը փոխադրվելն այն հետևանքն է առաջ բերում, որ հավելյալ արժեքը կապիտալի՝ ավելի ցածր օրգանական կազմ ունեցող ճյուղերից տեղափոխվում է ավելի բարձր օրգանական կազմ ունեցող ճյուղերը: Այս առաջ է բերում տարբեր ճյուղերում եղած շահույթները հավասարեցնելու ձգտում, շահույթի հավասար նորմայի ձգտում[1]:

Ընդհանուր առմամբ դուրս է գալիս, որ կապիտալիստներն իրար հանդիպելով շուկայում, ուր նրանք դիմում են իրենց ապրանքներն իրացնելու նպատակով, կապիտալի ապրանքային ձևը փողային ձևով փոխարինելու նպատակով,—փոխադարձ մրցման շնորհիվ իրար ձեռքից խլխլում են հավելյալ արժեքի այն ավելցուկները, որոնք գերազանցում են շահույթի միջին նորմային: **Այս պատճառով հավելյալ արժեքի վրա պետք է նայել իբրև կապիտալիստների, մի տեսակ, համադասակարգային ֆոնդի վրա**[2]: Կարծես թե յուրաքանչյուր առանձին ձեռնարկության մեջ ստացվող հավելյալ արժեքը գնում թափվում է կապիտալիստների դասակարգի ընդհանուր կաթսայի մեջ, և նոր այստեղից կապիտալիստներից յուրաքանչյուրը կորզում է իր բաժինը շահույթի կերպարանքով: Այս կորզելուն ուղեկից է լինում կատաղի կռիվը, որն ամենից առաջ յերևան է գալիս իբրև մրցում: Իսկ որովհետև կապիտալիստի ուժը ոչ թե բռունցքի մեջ է, այլ ռուբլու, ուստի ոչ այնքան մարդն է մրցում մարդի հետ, որքան մի անհատական կապիտալ՝ մյուս անհատական կապիտալի հետ: Կապիտալը մի տեսակ բանակ է, կարծես, և յուրաքանչյուր առանձին ռուբլին՝ այս բանակի մարտիկը: **Սրա հետևանքով շահույթը ձեռնարկությունների միջև բաշխվում է ոչ թե ըստ բանվորների թվի, այլ ըստ կապիտալի մեծության:**

[1] Մեր խոսքը միայն ձգտման մասին է, որովհետև տարբեր ճյուղերում ու միևնույն ճյուղի տարբեր ձեռնարկությունների մեջ փաստորեն շահույթի մեծ անհավասարությունն, այնուամենայնիվ, շարունակում է գոյություն ունենալ:

[2] Այստեղ մենք նկատի ունենք հավելյալ արժեքն այն բանից հետո, յերբ արդեն սրանից հանված է հողատիրոջ բաժինը—ռենտան:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՄՐՑՈՒՄԸ ՉԻ ՊԱԿԱՍԵՑՆՈՒՄ ՇԱՀՈՒՅԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ:

Կապիտալիստների մրցումը չի նվազեցնում շահույթի ընդհանուր քանակը: Յեթե մրցումն առաջ է բերում գների անկում, և յեթե այս հանգամանքից վնասվում են կապիտալիստներն իբրև վաճառողներ, ապա նույն հանգամանքից շահում են դարձյալ հենց կապիտալիստներն, իբրև գնողներ: Մրցումը չի պակասեցնում շահույթի ընդհանուր քանակը, որ բաժին է ընկնում կապիտալիստների դասակարգին, այլ միայն ավելի հավասարաչափ է բաշխում այն:

Ասածներս վերաբերում են **զուտ կապիտալիզմի** պայմաններին: Իրական կապիտալիստական տնտեսության մեջ, որչափով որ սրանում դեռ կան ինքնուրույն մանր արտադրողներ և որչափով վերջիններս գնողներ ու վաճառողներ են հանդիսանում, սրանք նույնպես կարող են շահվել կապիտալիստների մրցումից, քանի որ կապիտալիստները սրանց էլ ծախում և սրանցից էլ են գնում ապրանքներ: Բայց այս հանգամանքը գործնականորեն մեծ նշանակություն չունի: Ինչպես կտեսնենք ստորև մեր այն հոդվածում, որ նվիրված է արտադրության մնացորդներին, մանր արտադրողները **իրենց ընդհանուր մասսայով** վերցրած ավելի քիչ չեն շահագործվում կապիտալիստների ու հողատերերի կողմից, քան շահագործվում են բանվորները:

§ 57. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ.

Յենթադրենք, թե տվյալ հասարակության ամբողջ կապիտալը հավասար է 300-ի[1]: Ըստ իր օրգանական կազմի այս կապիտալը տրոհվում է յերեք մասի.

I. 70 մշտական + 30 փոփոխական = 100
II. 80 » + 20 » = 100
III. 90 » + 10 » = 100

[1] Կուզեք՝ միլիոն, կուզեք՝ միլիարդ:

Այնուհետև ասենք թե ամբողջ կապիտալն առանց բաժանվելու չերկու մասի—հիմնական ու շրջանառու կապիտալի,—տարեկան մեկ պտույտ է անում։ Շահագործման նորման ընդունենք 200%։

Տարեկան արդյունքը կլինի

I. $70 + 30 +$ հավելյալ արժեք $60 = 160$
II. $80 + 20 +$ » » $40 = 140$
III. $90 + 10 +$ » » $20 = 120$

Բայց վորովհետև մրցման շնորհիվ ամբողջ հավելյալ արժեքը (60+40+20=120) կդառնա ամբողջ կապիտալին հասնող միջին շահույթ[2] (120:3=40 %), ուստի շուկայի գները փոխանակ անմիջապես արժեքին հավասարվելուն ձգտելու, կսկսեն ձգտել հավասարվելու արտադրության գնին, այսինքն արտադրության ծախքերի (մշտական ու փոփոխական կապիտալի) գումարին՝ պլյուս միջին շահույթը։

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ։

Այսպես, ուրեմն, ապրանքի արտադրության գինը ցվյալ ապրանքի արտադրության ծախքերի գինն է՝ վրան ավելացրած միջին շահույթը։ Շուկայի գները կապիտալիզմի պայմաններում տատանվում են վոչ թե արժեքի շուրջը, այլ արտադրության գնի շուրջը։

Տարեկան արդյունքի արտադրության գները կլինեն

I. $70 + 30 + 30 = 140$ (արտադրության գինը 20-ով ցած և արժեքից
II. $80 + 20 + 40 = 140$ (արտադրության գինը հավասար և արժեքին)
III. $90 + 10 + 40 = 140$ (արտադրության գինը 20-ով բարձր և արժեքից)։

Նկատենք, վոր II կապիտալի որգանական կազմը համապատասխանում է ամբողջ հանրային կապիտալի միջին որգանական կազմին։

Ինչքա՜ II կապիտալի մեջ արտադրության գինը հավասար է լինում արժեքին։ Վորովհետև նրա որգանական կազմը համապատասխանում է հասարակության կապիտալի միջին որգանական կազմին։

Ինչքա՜ III կապիտալի մեջ արտադրության գինը 20-ով բարձր է արժեքից։ Վորովհետև այս կապիտալը հավասար լինելով 100-ի

[2] *Մենք մի կողմ ենք թողնում հողատիրոջ բաժնի—ռենտայի հարցը։*

հավելյալ արժեք մատակարարողներ—բանվորներ ավելի քիչ է պահում իր բոի մեջ, քան միջին հաշվով ընկնում է յուրաքանչյուր հարյուրյակի։ Այս կապիտալն ինքը չի լիովին քամում հավելյալ արժեքն, այլ այս կորզում, խլում է I կապիտալից միայն, վորում բանվորներ ավելի շատ կան, քան պետք է լիներ միջին հաշվով։

Հիմա բոլորովին պարզ է նմանապես, թե ինչու I կապիտալի մեջ արտադրության գինն արժեքից ցած է։ Դեպի այս կողմ իր ձեռքը խոթել է III կապիտալը՝ իր շահույթը հավասարեցնելու նպատակով։

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԻՆՆ ՈՒ ԱՐԺԵՔԸ։

ա) Կապիտալի միջին կազմի ժամանակ արտադրության գինը հավասար է արժեքին։ բ) Եթե կապիտալի որգանական կազմը միջինից ցած է, արտադրության գինն արժեքից ցած է։ գ) Եթե կապիտալի որգանական կազմը միջինից բարձր է, արտադրության գինն արժեքից բարձր է։ դ) Իբրև ամբողջություն վերցրած հանրային վողջ կապիտալի համար շահույթի գումարը հավասար է հավելյալ արժեքի գումարին [1], ուստի յեվ արտադրության գինը հավասար է արժեքին։

Բանվորական ուժի՝ ապրանք դառնալը պարզ փոխանակային հասարակությունը դարձնում է կապիտալիստական հասարակություն, այսինքն վերջինս ձգվում, բաժանվում է չերկու դասակարգի—բանվորական ուժը ծախողների դասակարգի ու նույնը գնողների դասակարգի։

Մեկ դասակարգի՝ մյուսին ճնշելու հեռևանքը հավելյալ արժեքն է։ Հավելյալ արժեքի ներդասակարգային բաժանքը այս հավելյալ արժեքը դարձնում է շահույթ, վորի նորման կարգավորվում է բացառապես արժեքի տվյալներով (այն հարաբերությամբ, վոր հավելյալ արժեքն ունի ամբողջ կանխավճարված կապիտալի արժեքի նկատմամբ)։

Արտադրության գինն այն արժեքն է, վորը չեթարկվել է շահույթի հավասար նորմայի որենքի ներգործությանը։

Յուրաքանչյուր ճյուղի շահույթը միայն պատահաբար կա-

[1] *70+80+90=240 մշտական կապիտալ, 30+20+10=60 փոփոխական կապիտալ, 240։ 60=80։ 20։*

րող է նույնանալ միջին շահույթի հետ. հետևաբար գինը միայն պատահաբար կարող է նույնանալ արտադրության արժեքի հետ։ Բայց ազատ մրցման պայմաններում, ինչպես տեսել ենք, վորևէ ճյուղի շահույթը չի կարող յերկար ժամանակ միջին շահույթից շեղված մնալ։ Այստեղից էլ առաջ է գալիս այն, վոր շահույթը տատանվում է միջին նորմալի շուրջը, և գներն էլ տատանվում են արտադրության գների շուրջը։ Այսպիսով կապիտալիստական հասարակության մեջ **շուկայի գները կարգավորող արտադրության գներ են**։ Արտադրության գները, մի տեսակ, վարագուրում են արժեքը, վորչափով վոր խոսքը չի վերաբերում վոչ ամբողջ հասարակության միագումար կապիտալին ու վոչ էլ այնպիսի առանձին կապիտալների, վորոնց կազմը համապատասխանում է հասարակության ամբողջ կապիտալի միջին կազմին։

Բայց, ինչպես տեսանք, թե արժեքի արտադրությունն ու թե արժեքի շահույթ դառնալը բուն իսկ արժեքի օրենքի ներգործության հետևանք է։ Այսպիսով արտադրության գինն արժեքը վարագուրում է վոչ ավելի, քան ծառերի ճյուղերն են սքողում ծառը։ Այս սքողումն արժեքից անջատ ու արտաքին մի բան չէ, արժեքի օրենքի հերքումը չէ, այլ նույն արժեքի զարգացման ու շարժման արդյունքն է միայն։

§ 58. ՇԱՀՈՒՅԹԻ ՆՈՐՄԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ.

Կապիտալն իր այն տարերային ձգտման ժամանակ, վորի նպատակն է հարաբերական հավելյալ արժեք ստեղծել, ինքն իրեն հակասում է։ Մշտական կապիտալի տարրերը—մեքենաները, հումքն, ոժանդակ նյութեղեններն—գործարանից ավելի ու ավելի չեն վտարում բանվորին, վորը հավելյալ արժեքի աղբյուրն է։ Կապիտալի օրգանական կազմն աճում է։ Յուրաքանչյուր հարյուրյակին ավելի ու ավելի փոքրաքանակ հավելյալ արժեք է

ընկնում։ Շահույթի հետևյալ ֆորմուլայի մեջ—$\frac{m}{c+v}$ (հավելյալ արժեքը բաժանած կանխավճարված կապիտալով)—հայտարարը (մշտական ու փոփոխական կապիտալը) շարունակ մեծանում է այն պատճառով, վոր անդուլպ ուռչում է նրա առաջին անդամը —c-ն (մշտական կապիտալը)։ Ճիշտ է, համարիչն էլ է մեծանում այն պատճառով, վոր աճում է շահագործման նորմանը (տես § 31), բայց մինչդեռ շահագործման նորման մեծանում է

միքանի տասնյակ տոկոսով, մեկ բանվորին ընկնող մեքենաների հումքի, ոժանդակ նյութեղենների արժեքը մեծանում է հարյուրավոր տոկոսներով։ Յեթե կապիտալի յուրաքանչյուր հարյուրյակ գդալի պես յերկարում, պարզվում է շահույթի բաժին ստանալու, ապա գդալների թիվը շատ ավելի արագ է աճում, քան շահույթի քանակությունը։ Յուրաքանչյուր հարյուրյակին ավելի ու ավելի քիչ շահույթ է բաժին ընկնում։ **Շահույթի նորման ընկնում է, չնայած վոր շահույթի քանակությունն աճում է։**

ՇԱՀՈՒՅԹԻ ՆՈՐՄԱՅԻ ԱՆԿՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Շահույթի նորմալի անկումը մահվան վտանգ չի սպառնում կապիտալիստներին (վորչափով վոր աճում է շահույթի քանակությունը), բայց սրա փոխարեն ավելի ու ավելի յե սրում կապիտալիզմի հակասությունները։

Շահույթի նորմալի անկումն ու ապրանքի եժանացումը, վորն աշխատանքի արտադրողականության հետ կապ ունի,—այս բոլորը քչացնում են այն շահույթը, վոր ապրանքի յուրաքանչյուր միավոր բերում է կապիտալիստին։

Որինակի համար վերցնենք մատաի մի գործարան, վորն ունի 100,000 ռուբլի կապիտալ։ Ասենք թե գործարանը շահույթ է ստանում ճիշտ միջին նորմալի համաձայն (իրականում շահույթը միայն ձգտում է հավասարվելու միջին նորմային)։ Գործարանը տարեկան արտադրում է 150,000 գրոսս մատիտ (գրոսսը 144 հատ է)։ Յենթադրենք, թե շահույթի միջին նորման 15% է։ Գործարանի ամբողջ շահույթը հավասար է 15,000 ռուբլու։ Ուրեմն յուրաքանչյուր գրոսս 10 կոպեկ շահույթ է տալիս։ Բայց անա կատարվեց յերկու փոփոխություն.

1. Ֆաբրիկան բարձրացրեց տեխնիկան՝ 30,000 ռուբլու ավելագիր կապիտալ ծախսելով։ Այժմ գործարանն արդեն արտադրում է տարեկան վոչ թե 150,000, այլ 200,000 գրոսս։

2. Շահույթի նորմայի անկման տենդենցի շնորհիվ շահույթի նորման իջավ մինչև 12%։ Այժմ գործարանի շահույթը հավասար է տարեկան 15,600 ռուբլու։ Բայց արդեն ամեն մի գրոսսը վոչ թե 10 կոպեկ շահույթ է տալիս, այլ միայն 7,8 կոպեկ։

Կապիտալը պետք է ավելի ու ավելի շատ քանակությամբ ապրանք նետե շուկա։ Շուկան ավելի ու ավելի հաճախ է տա-

ռապում ստամոքսի խանգարումով[1]. սրա հետեվանքը լինում են վաճառականության ցցուժամերը, որոնք հիմնիվեր ցնցում են կապիտալիստական արտադրությունը:

Այնուհետեվ, շահույթի նորմայի անկումը մի կողմից կապիտալիստներից հարկադրում է միացալու յեվ արտելներ, սինդիկատներ ու տրեստներ կազմելու, իսկ մյուս կողմից կապիտալից ստիպում է հին կապիտալիզմի յերկրներից ձգտելու դեպի գաղութային ու կիսագաղութային յերկրները, որտեղ շահույթը ավելի բարձր է: Այստեղից էլ առաջ է գալիս կապիտալիզմի իմպերիալիստական վերածերումը (перерождение), որի հետ մենք մանրամասն կծանոթանանք ստորև:

Ի՞ՆՉՆ Է ՄԻՋԻՉ ԱՐԳԵԼՔ ԼԻՆՈՒՄ ՇԱՀՈՒՅԹԻ ՆՈՐՄԱՅԻ ԱՆԿՄԱՆԸ:

Բացի շահագործման նորմալի մեծացումից, կմատնանշենք նաև հետևյալները այն պատճառներից, որոնք միջիչ արգելք են լինում շահույթի նորմայի անկմանը.

1. Կապիտալի պտույտների արագանալը, որը հետևանք է լինում թեկուզ այն բանի, որ լավանում են արտադրտի պայմանները: Կապիտալի յուրաքանչյուր նոր պտույտ հավելյալ արժեքի մի նոր կում է, որ թափվում է ընդհանուր կաթսայի մեջ և մեծացնում է շահույթի նորման:

2. Մշտական կապիտալի տարրերի—մեքենաների, հումքի ու այլ բանների եժանանալը: Սրա հետևանքով շահույթի ֆորմուլայի մեջ c-ն այնպես արագ չի աճում:

ԽՆԴԻՐՆԵՐ.

Շահույթի նորմա.

Այս բաժնի բոլոր խնդիրներում յենթադրվում է, որ ձեռնարկության ստացած ամբողջ հավելյալ արժեքը դառնում է շահույթ:

№ 17. Ավտոմոբիլի գործարանը, որն ունի 7 միլիոն ռուբլու կապիտալ, ամսական պատրաստում է 1000 մեքենա՝ յուրաքանչյուրի գինը 1000-ական ռուբլի: Գործարանն աշխատավարձի վրա ամսական ծախսում է 290,000 ռուբլի, հումքի, վառելիքի ու ոժանդակ նյութեղենների վրա ամսական գնում է 300,000 ռուբլի:

[1] Հասկանալի յե, որ սրա պատճառը վոչ թե ապրանքների պահանջի պակասությունն է, այլ վճարունակ պահանջի պակասությունը:

Շենքի ու մեքենաների մաշվածքը 25,000 ռուբլի յե ամսական: Պետք է վորոշել շահույթի նորման:

№ 18. Ձեռնարկությունը, որ ունի 100,000 ռուբլու մշտական կապիտալ ու 20,000 փոփոխական կապիտալ, ամսական ստանում է 1000 ռուբլի շահույթ: Պետք է վորոշել շահույթի նորման:

№ 19. Ձեռնարկությունն ունի 500,000 ռուբլու հիմնական կապիտալ, 200,000 ռուբլու շրջանառու հիմնական կապիտալ (оборотно-постоянный капитал) ու 150,000 ռուբլու փոփոխական կապիտալ: Շրջանառու կապիտալը տարեկան 2 պտույտ է անում: Յուրաքանչյուր պտույտը տալիս է 85,000 ռուբլի շահույթ: Պետք է վորոշել շահույթի տարեկան նորման ու շահագործման նորման:

ԿԱՊԻՏԱԼԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ.

№ 20. Ձեռնարկությունն ունի 480,000 (264,000) ռուբլու մշտական ու 120,000 (36,000) ռուբլու փոփոխական կապիտալ: Պետք է որգանական կազմն արտահայտել կապիտալի հարյուրերորդական մասերով:

№ 21. Հանրային կապիտալի գումարը 220 միլիարդ ռուբլի յե, որն ըստ արտադրության ճյուղերի բաշխվում է այս կերպ. Ա ճյուղում՝ 48 միլիարդ ռուբլու մշտական և 8 միլիարդ ռուբլու փոփոխական կապիտալ. Բ ճյուղում՝ 25 մշտական ու 5 փոփոխական կապիտալ. Գ ճյուղում՝ 60 մշտական ու 15 փոփոխական կապիտալ. Դ ճյուղում՝ 33 մշտական ու 11 փոփոխական կապիտալ. Ե ճյուղում՝ 10 մշտական ու 5 փոփոխական կապիտալ: Պետք է վորոշել հանրային կապիտալի միջին որգանական կազմը:

Հավելյալ արժեքի տեղափոխումը.

№ 22. Ձեռնարկությունն ունի 220,000 ռուբլու մշտական կապիտալ և 80,000 ռուբլու փոփոխական կապիտալ: Շահագործման նորման 100% է, իսկ շահույթի նորման 20%:

Պետք է վորոշել, թե տարեկան արդյունքն իրացնելիս ձեռնարկությունն իր արտադրած հավելյալ արժեքի գումարից վոքան պակաս է ստանում:

№ 23. Ձեռնարկությունն ունի 340,000 ռուբլու մշտական կապիտալ ու 60,000 ռուբլու փոփոխական կապիտալ: Շահագործման նորման 55% է: Շահույթի միջին նորման 22% է:

Պետք է վորոշել, թե ձեռնարկությունը տարեկան վճռքան շահույթ և սեփական հավելյալ արժեքից ավելի ստանում։

№ 24. Ամբողջ հասարակության կապիտալի միջին օրգանական կազմը հավասար է 80 c + 20 v։ Տվյալ ձեռնարկությունն ունի 25,000 (40,000) [140,000] c ու 3,500 (20,000) [35,000] v։ Ձեռնարկությունը շահույթ ստանում է միջին նորմալի համաձայն։ Արդյոք ձեռնարկությունն է իր հավելյալ արժեքի մի մասը տալիս ուրիշին, թե ինքն է քաշում յուրացնում ուրիշի հավելյալ արժեքը։

Շահույթի հավասար նորմա.

№ 25. Հանրային կապիտալի միջին օրգանական կազմն է՝ մշտականը՝ 80, փոփոխականը՝ 20, հավելյալ արժեքի նորմանը է 80%։

Պետք է վորոշել շահույթի միջին նորման։

№ 26. Ձեռնարկությունն ունի 310,000 ռուբլու մշտական կապիտալ ու 90,000 ռուբլու՝ փոփոխական կապիտալ։ Հանրային կապիտալի միջին օրգանական կազմն է՝ մշտական՝ 80, փոփոխական՝ 20, իսկ շահագործման հանրային նորման 100% է։

Պետք է վորոշել տվյալ ձեռնարկության տարեկան շահույթի գումարը միջին նորմալի համաձայն։

№ 27. Ձեռնարկությունն ունի 180,000 ռուբլու մշտական ու 45,000 ռուբլու փոփոխական կապիտալ։ Ձորս ամսվա ընթացքում շահույթը չեզել է 18,000 ռուբլի (օրգանական կազմը միջին կազմ է)։

Պետք է վորոշել շահույթի նորման։

№ 28. Ձեռնարկությունն ունի 420,000 ռուբլու մշտական կապիտալ, վորից 240,000 ռուբլին ընկնում է հիմնական կապիտալին։ Ձեռնարկության փոփոխական կապիտալը հավասար է 80,000 ռուբլու։ Շրջանառու կապիտալը պտույտ է գործում 4 ամիսը մեկ անգամ։ Տարեկան մաշվում է հիմնական կապիտալի 1/8-ը։ Տարեկան արտադրանքն իրացվում է 900,000 ռուբլու։

Պետք է վորոշել շահույթի նորման։

Արտադրության գնի վորոշումը.

№ 29. Պրոդուկցիայի վրա յուրաքանչյուր վեց ամսում ծախսվում է 355,000 մշտական կապիտալ ու 45,000 ռուբլու փոփոխական կապիտալ։ Շահույթի միջին նորման 18% է տարեկան։

Պետք է վորոշել տարեկան արդյունքի արտադրության գինը։

№ 30. Ձեռնարկությունը պրոդուկցիայի վրա տարեկան ծախսում է 520,000 ռուբլու մշտական կապիտալ ու 130,000 ռուբլու փոփոխական կապիտալ։ Շահագործման նորման 100% է։ Կապիտալի օրգանական կազմը միջին կազմ է։

Պետք է վորոշել տարեկան արդյունքի արտադրության գինը։

№ 31. Աղյուսի գործարանը, վոր ունի 150,000 ռուբլի կապիտալ, աշխատավարձի վրա տարեկան ծախսում է 35,000 ռուբլի, վառելիքի ու նյութեղենների վրա՝ 40,000 ռուբլի, շենքերի ու մեքենաների մաշվածքը՝ տարեկան 10,000 ռուբլի։ Շահույթի միջին նորման 15% է։ Տարվա ընթացքում պատրաստում է 3 միլիոն աղյուս։

Պետք է վորոշել մեկ հազար աղյուսի արտադրության գինը։

§ 59. ՍՄԻԹԻ ՈՒ ՌԻԿԱՐԴՈՅԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԹԵՈՐԻԱՆ.

Սմիթի ու Ռիկարդոյի աչքում, որոնք կապիտալիզմը «բնական» տնտեսակարգ էին նկատում, շահույթն այնքան բնական յերևույթ եր թվում, որ նրանք քիչ ուշադրություն էին դարձնում շահույթի ծագման հարցի վրա։ Սմիթի կարծիքով՝ կապիտալիզմի պայմաններում ապրանքի արժեքն[1] արդեն չի վորոշվում աշխատանքով, այլ պարզապես գոյանում է աշխատավարձի, շահույթի ու ռենտայի գումարից։ Նա գրում է. «Աշխատավարձը, շահույթն ու ռենտան ինչպես ամեն մի հասույթի, այնպես և փոխանակային արժեքի յերեք սկզբնական աղբյուրն են»։ Իսկ աշխատավարձի, շահույթի ու ռենտայի մեծությունն Սմիթի կարծիքով կախումն ունի տվյալ հասարակության մեջ յեղած միջին «սովորական» նորմաներից։

Շահույթի եյության մասին Ռիկարդոն էլ ճիշտ գաղափար չուներ։

Ռիկարդոն չի բացատրում շահույթի ծագումը.

Ռիկարդոյի աչքում հարցն այն եր միայն, թե ինչից է կախված շահույթի չափը: *Քանի վոր շահույթի ծագման հարցը Ռիկարդոյին քիչ եր հետաքրքրում, նա չեր կարող գլխի ընկնել, թե ինչ է հավելյալ արժեքի կատեգորիայի եյությունը։ Զգիտենալով շահույթի ու հավելյալ արժեքի տարբերությունը, Ռիկարդոն չեր կարող իմանալ արտադրության գնի ու արժեքի տարբերությունը։ Յեթե Սմիթը վայրը մի կողմն եր ծռում՝ արժեքի որենքի ներգործությունը սահմանափակելով մինչկապիտալիստական ժամանակներով, ապա Ռիկարդոն վայրը ծռում է մյուս կողմը և նույնիսկ կապիտալիստական պայմաններում գներն անմիջապես*

[1] *Ավելի ճիշտն ասած՝ «բնական գինը», վորի շուրջն է տատանվում շուկայի գինը՝ կախումն ունենալով պահանջից ու առաջարկից։ Սմիթի «բնական գինը» հիշեցնում է Մարքսի արտադրության գինը, բայց այստեղ նմանությունը զուտ արտաքին է։*

ըղխեցնում է արժեքից՝ զանց առնելով արտադրության գինը։ Իր սուբ մտքով նա կռահում է այն անհարիրությունը, վոր ստեղծվում է այն դեպքում, յերբ միևնույն մեծությունն ունեցող յերկու կապիտալ պտույտի մեջ են յեղել անհավասար ժամանակամիջոցներում։ Մի կապիտալն, ասենք, գործել է մեկ տարի, մյուսը՝ յերկու տարի։ Բանվորների թիվը թե այստեղ ու թե այնտեղ միևնույնն է։ (Որգանական կազմի հավասարության կամ անհավասարության մասին խոսելու հարկ չկա, վորովհետև Ռիկարդոն չգիտեր մշտական ու փոփոխական կապիտալների տարբերությունը)։ Թվում եր, թե յերկրորդ դեպքում արդյունքը պետք է կրկնապատիկ արժեք ունենա։ Այնինչ Ռիկարդոն իբրև կապիտալիստ չեր կարող չիմանալ, վոր միջին պայմանների ժամանակ յերկրորդ արդյունքի գինը յերկրորդի գնից բարձր կլինի **ավելի քան կրկնակի չափով:** *Մեզ համար պարզ է սրա պատճառը. արժեքը կարող է կրկնապատիկը լինել, իսկ արտադրության գինը կրկնապատիկից էլ ավելի, վորովհետև շահույթը մտնում է արտադրության գնի մեջ, իսկ շահույթի մեծությունը միջին հաշվով ուղղակի հարաբերական է կապիտալի պտույտի ժամանակին։ Ռիկարդոն, վորը չգիտեր, թե ինչ է արտադրության գինը (թեև մի քանի դեպքերում ազատ կերպով զգում եր այն), սրա նման որինակի բացատրության ժամանակ շփոթվում, խճճվում է և գալիս այն յեզրակացության, թե այսպիսի դեպքերում արժեքը վորոշողը ծախսված աշխատանքի քանակը չէ մենակ։*

ՇԱՀՈՒՅԹԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ԿԱԽՈՒՄՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻՑ.

Սրա փոխարեն Ռիկարդոն իր այն ըմբռնումից, վոր ուներ արժեքի մասին, այն յեզրակացությունն է անում, թե աշխատավարձի ավելանալուց ապրանքի արժեքը չի մեծանում, այլ կապիտալիստի շահույթն է միայն քչանում։ Այս յեզրակացությունը շատ կարևոր է ինչպես կապիտալիստների, այնպես էլ բանվորների համար։ Շատ հավանական է, վոր Ռիկարդոն այս յեզրակացությամբ **ցանկանում եր կապիտալիստներին սովորեցնել, վոր սրանք անիմաստ լինեն** *աշխատավարձն ավելացնելու հարցերում։ Յեթե,—կարծես ասում եր նա,—դուք մտածում եք, թե բանվորների աշխատավարձն ավելացնելով՝ դուք հետո հավելուրդը (прибавка) կբարդեք ձեր գնորդների վրին, ապա այս* **պատրանք է միայն,** *վորովհետև աշխատավարձի ավելացնելուց*

ապրանքի արժեքը չի մեծանում։ Սրա փոխարեն այս կեղծակացությունը մյուս կողմից մերկացնում է այն խաբեբայությունը, որով կապիտալիստները կռվում են բանվորների՝ աշխատավարձն ավելացնելու պահանջների դեմ։ Կապիտալիստներն ասում են բանվորներին. եթե աշխատավարձն ավելացնենք, կենսամիջոցների արժեքն էլ կբարձրանա, և դուք իրապես ոչինչ չեք շահի։ Ռիկարդոյի կեղծակացությունը, թերևս հենց նրա կամքի հակառակ, խորտակում, մերկացնում է այս խաբեբայությունը։

§ 60. ԲՅՈՄ ԲԱՎԵՐԿԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԹԵՈՐԻԱՆ.

Բյոմը շահույթի հարցի վերաբերմամբ շատ բարդ դատողություններ է անում, որոնք ամբողջությամբ ու ընդհանրապես առած՝ հանգում են հետևյալին.

ԹԵՈՐԻԱՅԻ ԿՈՐԻԶԸ ԿԱԶՄՈՒՄ Է ՆԵՐԿԱ ՈՒ ԱՊԱԳԱ ԲԱՐԻՔՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ։

Բյոմն այստեղ էլ անկյունաքար է դարձնում սուբյեկտիվ գնահատության հարցը։ *Նա ասում է, թե երբ մենք ունենք երկու նույնանման բարիք, որոնցից մեկը հիմա է պատրաստ (ներկա բարիք), իսկ մյուսը պատրաստ կլինի որոշ ժամանակ հետո (ապագա բարիք), ապա* **ներկա բարիքի սուբյեկտիվ գնահատությունը միշտ բարձր է լինում ապագա բարիքի սուբյեկտիվ գնահատությունից։** *Բյոմի ասելով՝ այս է տոկոսի թեորիայի ու միաժամանակ նաև շահույթի թեորիայի «կորիզն ու կենտրոնը»։*

Երբ պարտապանը պարտատիրոջից ստանում է 95 ռուբլի՝ տալով կես տարվա ժամկետով 100 ռուբլու մուրհակ, ապա Բյոմն այստեղ նկատում է փոխանակային ակտ, այն է՝ ներկա բարիքի (95 ռուբլու) փոխանակություն ապագա բարիքի հետ (100 ռուբլու հետ, որ նրան պետք է վճարվի $^{1}/_{2}$ տարի հետո)։

Փոխանակ տոկոսը շահույթից բղխեցնելու[1]**, Բյոմն ընդհակառակն է վարվում. նա շահույթը հետեվեցնում է տոկոսից։** *Նրա կարծիքով փոխառուները (ссудополучатели) միակ մարդիկը չեն, որոնք հոժար են լինում ապագա բարիքների տեղակ ներկա բարիքներ ստանալու։ Այս գործում նրանց հետ մրցում են... բանվորները, որովհետև կապիտալիստական պայմաններում, ինչպես Բյոմն է հասկանում այս պայմանները, բանվորական ուժն (ըստ Բյոմի, աշխատանքը) նույնպես ապագա բարիք է։*

Ըմբռնելու համար, թե բանի էությունն ինչ է, հարկավոր է կարճառոտ բացատրել, թե Բյոմն ինչ է հասկանում արտադրության կապիտալիստական եղանակ ասելով։

Գետից ջուր վերցնելու համար կարելի է Դիոգենեսի նման իր բուռը գործածել։ Սակայն այս կերպ չի կարելի շատ ջուր վերցնել։ Այսպիսի եղանակի փոխարեն, որ Բյոմն անվանում է **ուղղակի** *եղանակ, դիմում են* **զարտուղի** *եղանակի. նախ՝ ժամանակ են վատնում դույլ պատրաստելու վրա, իսկ հետո արդեն այս դույլով ջուր են վերցնում։ Քարերն էլ կարելի է գետնից*

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐՏՈՒՂԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ։

հանել դատարկ ձեռքերով (հետաքրքրական կլիներ Բյոմից հարցնել, թե նա որտեղ է տեսել, որ քարերն այս կերպ են հանում գետնից), կամ թե դիմել զարտուղի եղանակի և այս նպատակի համար անհրաժեշտ գործիք պատրաստել։

Այսպիսի զարտուղի ճանապարհը Բյոմի կարծիքով կապիտալիստական ճանապարհ է արդեն։ *Այն վայրենուն, որը թռչուն է որսում ոչ թե ուղղակի պոչից բռնելով, այլ նախապես ժամանակ է վատնում նետ ու աղեղ շինելու համար, Բյոմը նույնպես կապիտալիստ կհամարեր և կդներ Ռոկֆելլերի կողքին։*

Այնուհետև Բյոմն այսպես է դատում.—

Եթե բանվորն իր համար ձեռնտու համարեր իր բանվորական ուժն անմիջաբար օգտագործելն, (օրինակ պտուղներ և ուտելու համար պիտանի այլ բուսականություն հավաքելու վրա գործադրելը), ապա նրա բանվորական ուժը կլինի ներկա բարիք։ Բայց բանվորը իր համար բավական ձեռնտու չէ համարում այսպիսի զբաղմունքը։ Նա ցանկանում է իր բանվորական ուժը

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺՆ ԱՊԱԳԱ ԲԱՐԻՔ Է։

գործադրել ավելի զարտուղի ու ավելի արտադրողական եղանակով։ Այս հանգամանքի շնորհիվ նրա բանվորական ուժը դառնում է ապագա բարիք, այսինքն բանվորական ուժի արգասիքը միայն հետագայում կարող է սպառման միջոց հանդիսանալ։ Առայժմ նա չի կարող իր բանվորական ուժով իր փորը կշտացնել։ Այս պատճառով նա դիմում է այն մարդի օգնության,

[1] *Այս մասին մանրամասն տես վարկին նվիրված գլխում։*

վորն ունի սպառման պատրաստի միջոցներ կամ թե, ավելի ճիշտն ասած, փող, վոր նրան հարկավոր է սպառման միջոցներ գնելու համար։ Բանվորն այս մարդի հետ փոխանակություն է անում. **բանվորը նրան տալիս է ապագա բարիք, այն է՝ իր բանվորական ուժը, իսկ նա բանվորին տալիս է ներկա բարիք՝ աշխատավարձի կերպարանքով։** Բյոմը լռում է այն մասին, թե, կենսամիջոցներից բացի, բանվորին արտադրության միջոցներ էլ են հարկավոր։ Բանվորն սկսում է իր գարտուղի ճանապարհն, այն է, սկսում է արտադրության միջոցներ պատրաստել (ըստ յերևութին՝ դատարկ ձեռքերով)։ Արտադրության միջոցները տարբեր կարգերի յեն լինում։ Արտադրության առաջին կարգի միջոցներն սպառման միջոցներ են մատակարարում անմիջապես։ Արտադրության յերկրորդ կարգի միջոցները տալիս են արտադրության առաջին կարգի միջոցներ և այլն։

Կարգով պատրաստելով արտադրության միջոցների այն ամբողջ շղթան, վոր հարկավոր է նրան, բանվորը վերջապես հասնում է սպառման միջոցներին, ներկա բարիքներին, սակայն այս ներկա բարիքները վաղուց արդեն կանխավաճառված են (запроданы) կապիտալիստին, կանխավաճառված են դեռևս այն ժամանակ, յերբ նրանք ներկա բարիքներ չեյին դեռ, այլ ապագա բարիքներ եյին։ **Կապիտալիստը, վորն արդյունքի համար վճարել է դեռևս այն ժամանակ, յերբ այս արդյունքն ապագայում լինելիք բան եր, կորզում է շահույթ, վորը ներկա ու ապագա բարիքների արժեքի տարբերությունն է։**

«Շահույթը,—ասում է Բյոմը,—ծագում է ձեռնարկուի ձեռքերի մեջ, վորովհետև ապագա բարիքները ձեռնարկուի մոտ հասնում են ավելի ուշ, քան նրանք ներկա բարիքներ... Արժեքի աճումն է հենց, վոր կապիտալին ընկնող շահույթ է ներկայացնում։ Այնուհետև նա ասում է. «Սոցիալիստական «հավելյալ արժեք» տերմինը ճիշտ է այն իմաստով, վոր արժեքն իրոք աճում է»։

Իհարկե, Բյոմի կարծիքով ամենևին պարտադիր չէ, վոր արդյունքն արտադրության բոլոր փուլերն անցնի միևնույն բանվորի կամ թե միևնույն կապիտալիստի ձեռքում մնալով։

Արդյունքն ապագա բարիքից ներկա բարիք դառնալու իր ճանապարհին կարող է անցնել մի շարք ձեռնարկությունների միջոցով, բայց այս դեպքում արդյունքը յուրաքանչյուր ձեռնար-

կության մեջ զատում է համապատասխան մասն այն շահույթից, վոր բերում է ինքը՝ հաստատանալով աստիճանաբար և ապագա բարիքից ներկա բարիք դառնալով։

Ահա թե Բյոմն ինչպես է հասկանում բանվորի ու փոխատուի (ссудоискатель) միջև տեղի ունեցող մրցումը։ Սրանք յերկուսն էլ ներկա բարիքների փոխարեն առաջարկում են ապագա բարիքներ։ Տարբերությունն այն է միայն, վոր փոխատուն ապագա բարիքների վորոշ գումար է առաջարկում (ասենք, որինակ, հիմակվա 100 ռուբլու փոխարեն կես տարի անց՝ 105 ռուբլի)։ Այն ապագա բարիքը, վոր առաջարկում է բանվորը (իր բանվորական ուժը), մի վորոշ մեծություն է ապագայում։ Այստեղից էլ առաջ է գալիս շահույթի ու փոխատուական տոկոսի (ссудный процент) տարբերությունը։

ԻՆՉՈՒ ԲՅՈՄԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԹԵՈՐԻԱՆ ՃԻՇՏ ՉԵ։

Այն ընթերցողի համար, վորը ծանոթ է Մարքսի թեորիային, ակնհայտ է, վոր կարիք չկա Բյոմ Բավերկի թեորիան լուրջ քննադատելու։ Այս թեորիայում ամեն ինչ վոչ միայն սխալ է, այլ ուղղակի միամտություն է սկզբից մինչև վերջ։ **Արտադրական պրոցեսի տարբեր ետապները փաստորեն կատարվում են վոչ թե մեկը մյուսի յետևից, այլ զուգընթաց։** Նրանք, այսպես ասած, դասավորվում են վոչ թե ժամանակի, այլ տարածության մեջ։ Մանածագործական ձեռնարկություններում չեն դադարեցնում մանելը, յերբ սկսում են գործելը, և չեն դադարեցնում գործելը, յերբ սկսում են ապրետուրային գործը։ Այնուհետև Բյոմն այնպես է պատկերացնում բանվորի դրությունը, վոր կարծես թե սրա առջև յերկու ճանապարհ կա—կամ աշխատել ուղիղ ճանապարհով, այսինքն դատարկ ձեռքերով ու ստանալ փոքր արդյունք և կամ թե աշխատել զարտուղի ճանապարհով և ստանալ մեծ արդյունք։ Այս աղաղակող սուտ է։ **Դատարկ ձեռքերով բոլորովին վոչինչ չի կարելի անել։** Մարդկային հասարակության արտադրական սիստեմը միանգամայն անհնարին է առանց արտադրության միջոցների։ Անհնարին է վոչ միայն «ուղիղ ճանապարհով» աշխատելն, այլ և դատարկ ձեռքերով վորևե զարտուղի ճանապարհով աշխատել սկսելն անգամ։ Այն բանվորը, վորը կուզենար դատարկ ձեռքերով թեկուզ հենց ասեղ արտադրելու ձեռ-

նարկել, անհուսորեն շվարած կանգ կառներ այն բանն արտադրելու վրա, վորը հարկավոր է հանքանյութը փորելու հանելու համար։ **Կապիտալիստների դասակարգի ամբողջ ուժը հենց այն է, վոր այս դասակարգը իր ձեռքումն է պահում արտադրության միջոցները։** Այս դասակարգի իդեոլոգը հարկադրված է վարագուրելու այս պարագան։

Միանգամայն անհերքելի է այն պնդումը, թե արտադրության միջոցները, վորոնք Բյոմի կարծիքով ապագա բարիքներ են, պետք է այս հանգամանքի շնորհիվ մեացած հավասար պայմաններում ավելի ցած գնահատվեն, քան սպառման միջոցները, վորոնք ներկա բարիքներ են։ Ի՞նչ կասեր ինքը Բյոմ Ավստրո-Հունգարիայի ֆինանսների մինիստր լեզած ժամանակ, յեթե վորևե մեկը նրան առաջարկեր սպառման անհամար միջոցներ՝ Ավստրո-Հունգարիայի արտադրության բոլոր միջոցների փոխարեն։ Նա անկասկած կասեր՝ «վոչ»։ **Արտադրության միջոցներով հեշտ ու շուտ կարելի չե սպառման միջոցներ ել ստացալ։ Իսկ մեծակ սպառման միջոցներով վոչինչ չի կարելի անել։**

Բյոմի սուբյեկտիվ ինդիվիդուալիստական մերձեցումը, վոր անհիմն դուրս յեկավ շրջանառության վոլորտում, միանգամայն անհերքելի է դառնում, յերբ Բյոմը դիմում է վերլուծելու այն, ինչ վոր կատարվում է արտադրության վոլորտում։

ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԸ, ՇՈՒԿԱՅԻՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԽՍՀՄ ՄԵՋ ԱՆՑԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ.

§ 61. ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԸ ԽՍՀՄ ՄԵՋ.

Լավ, բայց բանն ինչպես է ԽՍՀՄ մեջ։ Արդյոք մեզանում վերաեել կարելի՞ չե կապիտալի, հավելյալ արժեքի, շահույթի գոյությունը։ Ինչպես պետք է հասկանալ մեր բանվորների ստեղծած աշխատավարձը։ Արդյոք այս աշխատավարձն եյապես նույնը չե՞, ինչ վոր է կապիտալիստական յերկրներում յեղած աշխատավարձը։

Ահա հարցեր, վորոնք սովորաբար հուզում են սովորողին։

Տարակուսանքը շատանում է այն պատճառով, վոր մեր բառերի այն պաշարը, վոր վերաբերում է տնտեսության հարցերին, փոխ է առնված կապիտալիստական պրակտիկայից։ Մեր ձեռնարկությունները իրենց շենքերն ու սարքավորումն անվանում են **հիմնական կապիտալ**։ Հումքը, վառելիքն ու բանվորներից տալու համար հարկավոր փողը կոչում են **շրջանառու կապիտալ**։ Հենց այն, վոր տալիս են բանվորներին, անվանում են աշխատավարձ։ Տարվա վերջում ձեռնարկությունները պարզում են, թե վորքան է իրենց **շահույթը**։

Մեր տնտեսության հիմքերի ավելի մանրամասն քննությունը կարելի չե տալ այս գրքի վերջում միայն, այն բանից հետո, յերբ վերջացրած կլինենք կապիտալիստական տնտեսության վերլուծությունը և պարզաբանած կլինենք այն պատճառները, թե ինչու մեր տնտեսական ձևերը հաջորդելու յեկան կապիտալիստական ձևերին։ Առայժմ սահմանափակվենք ընդհանուր բնույթ ունեցող մի քանի նկատողություններով։

Մենք արդեն գիտենք, թե **կապիտալի գաղափարը չի կարելի անջատել բանվոր դասակարգի շահագործվելուց, վորը կատարվում է կապիտալիստների ձեռով**։

Կապիտալիստական ձեռնարկության շենքերի, մեքենաների,

հումքի ու վողերի մեջ նյութականացած են յերկու դասակարգի— հավելյալ արժեքը յուրացնողների դասակարգի ու բանվորական ուժը վաճառողների դասակարգի—հարաբերությունները։

Կապիտալիստները միայն այն պատճառով կարող են յուրացնել հավելյալ արժեքը, վոր արտադրության միջոցները հափշտակել են արտադրողներից, և այս միջոցները պատկանում են չարտադրողներին։

Մեր պետական ձեռնարկությունները բուն իսկ ապրատավորների սեփականությունն են։ Արտադրողի ու արտադրության միջոցների անջատմանը վերջ է տրված։ Այստեղ հենց ինքը կոլեկտիվ տնտեսատերն է աշխատում արտադրության իր սեփական միջոցներով։ **Այստեղ չկա շահագործող ու շահագործումը, հետևաբար այստեղ հարկ էլ չկա խոսք բաց անելու հավելյալ արժեքի մասին։**

«Հավելյալ արժեք» արտահայտությունը կապիտալիստական պրակտիկայից չի առած։ Այս արտահայտությունն առաջ է յեկել կապիտալիստական հարաբերությունների գիտական վերլուծության ժամանակ։ Նշանակում է՝ քանի վոր խոսքը մեր պետական տնտեսության մասին է, մենք կարող ենք միանգամայն ձեռք քաշել այս արտահայտությունից։

Այնտեղ, վորտեղ հավելյալ արժեք չկա, չի կարելի խոսել կապիտալի մասին, վորովհետև կապիտալի հիմնական հատկանիշը հավելյալ արժեք յուրացնելն է հենց։ Չի կարելի խոսել շահույթի մասին, վորը հավելյալ արժեքի ձևերից մեկն է։ Այնտեղ, վորտեղ բանվորական ուժը գնող չկա, վորտեղ բանվորական ուժի վաճառք էլ չկա, հետևաբար չկա բանվորական ուժի գին էլ, ճշտությունը՝ աշխատավարձ էլ չկա այս բառի կապիտալիստական իմաստով։

Ինքնըստինքյան հասկանալի չէ, վոր մասնավոր ձեռնարկություններում, վորոնք չեն թարկված չեղել պետականացման կամ թե վորոնք մասնավոր մարդկանց են հանձնված վարձակալության կամ կոնցեսիայի կարգով,—պահպանվել է բանվորական ուժի առուծախն, ուրեմն և կապիտալիստական հարաբերությունները, թեև պրոլետարական իշխանության, իհարկե, այստեղ կապիտալիստների ախորժակների հանդեպ գնում է արգելքներ, վորոնք անհայտ են կապիտալիստական յերկրներում։

Բոլորովին այլ է բանը պետական ձեռնարկություններում։ Վոր պետական ձեռնարկությունները բանվորական ուժի գնորդ-

ներ չեն, սրա լավագույն ապացույցն այն է, վոր մեր պետական ձեռնարկությունները ձգտում են բանվորին ըստ կարելույն ավելի շատ բան տալ։ Գնորդն ու վաճառորդը անտագոնիստներ են։ Գնողը հակադիր է կանգնում վաճառորդին։ Գնորդը ձգտում է, վոր մաքսիմումն ստանալով միևիմում տա, այսինքն, վորքան կարելի չէ, քիչ տա և, վորքան հնարավոր է, շատ ստանա։

Պետարդյունաբերությունը ձգտում է, վոր բանվորներին, ինչքան կարելի չէ, շատ տա և սրանցից այնքան առնե միայն, վորքան անհրաժեշտ է մեր տնտեսության կանոնավոր զարգացման համար։ Ի՞նչն է գաղտնիքը, վոր վարձողի ու բանվորի շահերի միջև հակասություն չկա։ Պարզապես այն, վոր արտադրողը մեջտեղում կա, իսկ վարձող չկա։ Պետարդյունաբերության տերը բանվոր դասակարգն է։ Պետարդյունաբերության բանվորների հավաքական աշխատավարձը զուտ պրոդուկցիայի այն մասն է, վոր տնտեսատերը վերցնում է իր ապրուստի համար՝ դեկավարվելով վոչ միայն այսորվա, այլև վաղվա որվա շահերով։ Բանվոր դասակարգը գիտակցաբար սահմանափակում է իր սպառումը, վորպեսզի պրոդուկցիայի վորոշ մասը կարելի լինի ծախսել արտադրությունն ընդլայնելու վրա։

Մեր պետարդյունաբերության զուտ պրոդուկցիան Այստեղ զուտ պրոդուկցիան տրոհվում է յերկու մասի—անհրաժեշտ ու հավելյալ արդյունքի։ **Այստեղ զուտ պրոդուկցիայի արժեքը տրոհվում է վոչ թե աշխատավարձի ու հավելյալ արժեքի, այլ ապրուստային մասի** (прожиточная часть) **ու կուտակվող մասի**[1]։

Իհարկե, մեր պետարդյունաբերության պրոդուկցիայի արժեքի մի մասը ծծվում է, գնում է կապիտալիստների գրպանն, իբրև շահույթի մասնավոր առևտրականի, վորը պետարդյունաբերության արդյունքների առուտուրով է զբաղվում, գնում է իբրև ավանդների ու փոխառությունների տոկոսներ և այլն։ Բայց այս յերևույթը պետարդյունաբերության որգանական հատկությունը չէ, այլ այնպիսի հատկություն է, վորից կարելի է ազատագրվել բարենպաստ պայմաններում. այնինչ հավելյալ արժեքի արտա-

[1] Բարենպաստ պայմաններում այսպիսի մասերի չի տրոհվում ինքնուրույն մաս արտադրողի պրոդուկցիան ու պրոդուկցիայի արժեքն էլ։ Կապիտալիստական պայմաններում այսպիսի մասերի չի տրոհվում կապիտալիստի շահույթը։ Ընդհանրապես տրոհման այս յեղանակը բնորոշ է արտադրության միջոցների սեփականատիրոջ հասույթի համար։

դրությունը կապիտալիստական արդյունաբերության համար առանձնահատկական հատկությունն է։

Մեր պետարդյունաբերության պրոդուկցիան փաստորեն տրոհվում է 4 մասի.

1. Անհատական-ապրուստային մաս—«աշխատավարձը»,

2. Համադասակարգային-ապրուստային մաս—հարկերը, որոնք ծախսվում են բանվոր դասակարգի կարիքների, այն է՝ կրթության, առողջապահության, պաշտպանության վրա և այլն,

3. Կուտակվող մաս—սոցիալիստական կուտակման ֆոնդ,

4. Վայթուման (утечка)—շահույթը, որ ստանում են կապիտալիստները և այլն։

Այսպիսով մեզանում, որչափով որ խոսքը վերաբերում է պետարդյունաբերության, **ապրանքների շարից դուրս է քցել այն ապրանքը, առանց որի չկա կապիտալիզմ, այն է՝ դուրս է քցել բանվորական ուժը։**

Որչափով որ բանվոր դասակարգը տիրացել է արտադրության միջոցներին, նա չպետք է և չի կարող շուկա հանել բանվորական ուժը, որը հարկավոր է հենց իրեն—բանվոր դասակարգին։

Կապիտալ, շահույթ, աշխատավարձ բառերը մեր պետձեռնարկություններում կորցրել են իրենց ներից դասակարգային բովանդակությունը։ Նրանք մեզանում պահպանել են իրենց պայմանական գործածությունը միայն։ Հին բառերով մենք ճանաչում ենք միանգամայն նոր հարաբերություններ։ Չեվ հենց այս պայմանական իմաստով էլ մենք գործ ենք ածելու այս բառերը այստեղ, որչափով որ խոսքը կվերաբերի մեր պետձեռնարկություններին։

ԱՐԺԵՔԸ ԽՍՀՄ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ։

Շատ ավելի բարդ է այն դերի հարցը, որ ունի արժեքի օրենքը մեր տնտեսության մեջ։ Բայց այս հարցին մոտենալ կարելի կլինի այն ժամանակ միայն, երբ մենք ավելի պարզորոշ գաղափար կունենանք անցման շրջանի եկոնոմիկայի մասին ընդհանրապես։ Այս պատճառով մենք հարկադրված ենք այս հարցի քննությունը հետաձգելու մինչև այն գլուխը, որը նվիրված է լինելու խորհրդային տնտեսությանը, և որը շարադրելու ենք այս գրքի վերջում։

§ 62. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԽՍՀՄ ՄԵՋ.

ՄԱՍՆԱՎՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ։

Նույնիսկ վորչափով վոր խոսքը վերաբերում է այն ձեռնարկություններում եղած աշխատավարձին, վորոնք դեռ մնացել են մասնավոր մարդկանց ձեռքում, ԽՍՀՄ բանվորները վայելում են այնպիսի առավելություններ, վորոնք անծանոթ են բուրժուական յերկրների բանվորներին։ Աշխատանքի վերաբերյալ որենքների ժողովածուն բանվորներին ապահովում է 8-ժամյա բանվորական որ, 42-ժամյա շաբաթական հանգիստ, յուրաքանչյուր կիսամյակում յերկու շաբաթվա արձակուրդ, սոցիալական ապահովագրություն։ Հավաքական պայմանագրերը, վոր բանվորները կնքում են վարձողների հետ, կարգավորվում են արհմիութենական որգանների կողմից։ Վերջիններս պաշտպանում են բանվորների բոլոր որինական պահանջներն, ընդվորում այս պաշտպանությունը շատ ավելի եյական է, քան այն պաշտպանությունը, վոր կարող է անել բուրժուական յերկրի վորևե արհմիություն։ Յերբ բանվորը դատարանում արդարացատություն է վորնում ընդդեմ վարձողի, վորը իր շահագործման պոչը շատ հեռուներն է հասցնում, բանվորն այժմ վստահ է, վոր իր գործը քննելու յե վոչ թե բուրժուական իշխանության խորովիլակը, այլ իր յեղբայր բանվորը։ Նա վստահ է, վոր դատարանը կըմբռնե նրա գործը և չի թողնիլ, վոր զրկեն նրան։ Բանվորի շահերը պաշտպանելու գործում մեծ դեր է խաղում խորհրդային մամուլն էլ։ Բանթղթակցի ամեն մի նկատողություն այն մասին, թե այսինչ գործատերը կորցրել է իր չափը, հարկավոր արձագանգ է գտնում, և գործատերերի քմահաճույքին որինական դիմադրություն է ցույց տրվում։

ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ։

Սակայն աշխատավարձի հարցը բոլորովին այլ մակարդակի վրա յե գտնվում խոշոր արդյունաբերության ու տրանսպորտի մեջ, վորոնք գտնվում են բանվոր դասակարգի ձեռքին։ Այստեղ այլևս չկա այն կապիտալիստը, վորի շահերն անհաշտելիորեն հակասում են բանվորների շահերին։ Խորհրդային յուրաքանչյուր ձեռնարկության տերը ԽՍՀՄ ամբողջ բանվոր դասակարգն է։ Բացի բանվոր դասակարգից, ուրիշ վոչվոքից չի կախված այն հարցը, թե արդյունքի արժեքի վոր մասը պետք է տալ բանվորին և վորը պետք է թողնել արտադրությունն ընդլայնելու համար։ Հասկանալի յե, վոր այս հարցը լուծելիս բան-

վոր դասակարգը հաշվի չե առնում վոչ միայն այսորվա շահերն, այլ և վաղվանը։

Յեռյակ զորը (скрепа), վորով հզոր ե ԽՍՀՄ (խորհուրդները, արհմիութիւնները, կոմմունիստական կուսակցութիւնը), իր ազդեցութիւնը հայտաբերում ե աշխատավարձը կարգավորելու գործում էլ։ Մենք այստեղ տեսնում ենք արհմիութիւնների, ԺՏԳԽ-ի ու Աշխժողկոմատի որգանների գործակցութիւն՝ կոմմունիստական կուսակցութեան ղեկավարութեան տակ։

Աշխատավարձի հարցը քննելու գործի մեջ ներս են քաշվում բանվորական լայն մասսաները։ Հավաքական պայմանագիրը կընքելուց առաջ սրա պայմանները քննվում են յուրաքանչյուր ձեռնարկութեան մեջ բոլոր բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովի կողմից։ Պայմանագիրը քննելուց առաջ վարչութեան մանրամասն զեկուցումն են լսում ձեռնարկութեան գործերի դրութեան մասին, այլև տեղեկութիւններ այն մասին, թե ամբողջ ԽՍՀՄ մեջ տնտեսական կոնյունկտուրան ինչպիսի չե։ Այսպիսով Խորհրդային Միութեան բանվոր դասակարգն ամբողջովին ու յուրաքանչյուր ձեռնարկութեան բանվորներն առանձին վերցրած՝ տեսնում են, թե պրոդուկցիայի վոր մասը կարելի չե տալ բանվորին իբրև աշխատավարձ և վոր մասը պետք ե յետ դրվի արտադրութեան միջոցների վերականգնման և ուժեղացման վրա գործադրելու համար։

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։

Մեզանում աշխատավարձի քաղաքականութեան նպատակն է՝ բարձրացնել բանվոր դասակարգի ապրուստի մակարդակն աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացնելու և արդյունաբերութիւնն ամրապնդելու, զարգացնելու միջոցով։ Յեվ մեր տնտեսութեանը վերաբերող թվական տվյալները պերճախոս վկայում են, վոր մատնանշած յերեք գծով էլ մենք առաջ ենք գնում, թեև վոչ միևնույն արագութեամբ։

	Մեկ բանվորի տարեկան համախառն մշակածը (валовая выработка) 1925—1926թ. (մինչ պատ. ռուբլիներով).	1913 թվականի մշակածի %-ը
1. Քարածխ. արդյունաբ.	747,9	86,8
2. Նավթային. »	9,625,6	90,2
3. Աղի »	1,485,7	73,8
4. Բամբակեղեն »	2,016,6	89,1
5. Լուցկու »	731,7	106,6

Աշխատանքի արտադրողականութիւնը շատ ավելի ցածր ե յերկաթաշեն արդյունաբերութեան մեջ։

	Արտադրողականութեան %-ը 1913թ. համեմատութեամբ
Ջուդունինը	55,5
Մարտենինը	69,3
Գլանած յերկաթինը (прокат)	60,1

Բանվորների ամսական միջին աշխատավարձը սրա վրա արտվող հավելուրդներով (ապահովագրութիւն, բանվորների կենցաղի բարելավում և այլն) Մոսկվայի ապրանքային ռուբլիներով։

	1926—1927թ.թ.	1913 թվականի
	Ի կ ի ս ա մ յ ա կ ո ւ մ	
Ամբողջ արդյունաբերութեան մեջ, թղթով վորի	38,31	33,23
Մետաղեղենի	» »	41,93	43,96
Մանածագործական	» »	33,65	22,15
Կաշեգործական	» »	47,75	31,54
Քիմիական	» »	44,43	25,18
Սննդեղենի	» »	38,73	22,47
Փայտագործական	» »	33,58	26,32
Պոլիգրաֆ	» »	43,34	35,69
Թղթեղենի	» »	38,20	23,40

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՉՈ՞Վ ՅԵ ԴԱՆԴԱՂ ԱՃՈՒՄ։

Իհարկե, աշխատանքի արտադրողականութեան աճման դանդաղութեան գլխավոր պատճառները մեքենաների մաշվածութիւնն ե, գործիքների պակասը, հում նյութի վատ վորակը, ձեռնարկութիւնների անբավարար բեռնումը, արտադրութեան բուն իսկ կազմակերպութեան մեջ յեղած թերութիւնները ու բանվորների անբավարար վորակավորումը, բայց և այնպես վորոշ չափով պատճառ ե նաև աշխատանքի անբավարար ինտենսիվութիւնն ու այն 8 ժամվա անբավարար խտացումն էլ, վորի ընթացքում բանվորները պետք ե կանգնած մնան և բանեն հաստոցի

մոտ։ Յեթե աշխատանքի արտադրողականությունը չբարձրացվի, անկարելի կլինի շարունակել բանվորի աշխատանքի ու ընդամենը նաև ապրուստի մակարդակի բարձրացումը։ Հնարավոր չի լինել երկար ժամանակ գնով գյուղին տալ այն ապրանքները, որ անհրաժեշտ են նրան, իսկ այս սպառնում է այն տնտեսական ու քաղաքական շաղկապի ամրությանը, որ կա բանվոր դասակարգի ու գյուղացիության միջև։ Ահա թե ինչու աշխատանքի արտադրողականության բարձրացումը կարևորագույն հարց է հանդիսանում, որի վրա պետք է խիստ մեծ ուշադրություն դարձնեն կուսակցական, արհեստակցական ու խորհրդային որգանները։

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ։

Հավաքական պայմանագրերը կնքվում են մի կողմից՝ արհեստակցական միությունների ու մյուս կողմից՝ վարձողի կամ վարձողների խմբի միջև, միևնույն է, թե այս վարձողը պետական ձեռնարկություն է, թե մասնավոր անձ։ Պայմանագրերը կարող են լինել համապարփակ (генеральный), որ ընդգրկում է տնտեսության կամ կառավարման մի ամբողջ ճյուղ կամ տեղական։

ՏԱՐԻՖԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Հավաքական պայմանագրի ամենից հյական մասը տարիֆային համաձայնությունն է։ Այս համաձայնությունը սահմանում է բանվորների ու ծառայողների աշխատանքի վարձատրության չափերն, այլ և աշխատավարձ վճարելու ժամկետներն ու աշխատավարձի ձևերը։

Վորովհետև աշխատավարձը շարունակ բարձրանում է մեզանում, ուստի տարիֆային համաձայնությունները սահմանվում են կարճատև ժամանակի համար։ Աշխատավարձը հաշվելու հիմքն **առաջին կարգի տարիֆային դրույքն է ու տարիֆային ցանցը**։

ՏԱՐԻՖԱՅԻՆ ՑԱՆՑ։

Առաջին կարգի տարիֆային դրույքը վորոշում է վոչ մի վորակավորում չունեցող բանվորի, այն է՝ սևաբանվորի կամ սովորելու առաջին շրջանում գտնվող աշակերտի աշխատանքը։ Յուրաքանչյուր բանվորի գատումը կախված է տարիֆային ցանցի այն կարգից, որին պատկանում է բանվորն ըստ իր վորակավորման։ Ներկայումս մեզանում գործածական է 17 կարգ ունեցող ցանցն, ընդ վորում առաջին կարգի գատումի հարաբերությունը մեծ մասամբ = 1:8։

Արհեստակցական Միությունների Համամիութենական կենտրոնական Խորհրդի IV պլենումը հաստատել է հետևյալ նորմալ տարիֆային ցանցը։

Տարիֆային կարգեր	Կոեֆֆիցիենտ
I	1
II	1,2
III	1,5
VI	1,8
V	2,2
VI	2,5
VII	2,8
VIII	3,1
IX	3,5
X	4,2
XI	4,6
XII	5,
XIII	5,5
XIV	6,2
XV	6,7
XVI	7,2
XVII	8.

Այս նորմալ տարիֆային ցանցն աստիճանաբար դուրս է մղում այն մյուս ցանցիկները, վորոնք գործածական են մեզանում։

Ինքնըստինքյան հասկանալի չէ, վոր առաջին կարգի դրույքը չի կարող ավելի ցած լինել [1], քան գատումի այն մինիմումը, վոր ամեն ամիս սահմանվում է որենսդրական կարգով, ընդվորում աշխատավարձի մինիմումի տեսակետից Արհեստային Միության ամբողջ տերրիտորիան բաժանված է 5 տարիֆային գոտու, նայած գների մակարդակին։ Այսպես, որինակ, Մոսկվայի, Լենինգրադի, Արխանգելսկի նահանգները պատկանում են առաջին գոտուն, Դոնեցի, Իվանովո-Վոզնեսենսկու նահանգներն ու Ղրիմի հանրապետությունը՝ յերկրորդ գոտուն, Տվերի նահանգը, Բելոռուսսիայի հանրապետությունը՝ յերրորդ գոտուն, Բրյանսկի նահանգը, թաթարական հանրապետությունը չորրորդ գոտուն, Կալուգայի, Կուրսկի նահանգները՝ հինգերորդ գոտուն։

Տարիֆային դրույքը վորոշում է բանվորի գատումը, վոր սա

1 Ավելի բարձր էլ չի կարող լինել

անում է 192 ժամ աշխատելով (այս թիվը բանվորական ժամերի միջին թիվն է մի ամսում 46-ժամյա բանվորական շաբաթվա դեպքում)։ Գործարքային աշխատանքի ժամանակ վնասատուները կատարվում են նույն այս հաշիվը ցելակետ ընդունելով։

Յեթե բանվորն աշխատանքի միջին ինտենսիվությունից բարձր ինտենսիվություն է հայտաբերում, ապա նա ստանում է **գերգատում** (приработок)։ *1924 թվականին, յերբ գործարքայինով անսահմանափակ աշխատելն ընդունվեց, գերդատման նորմայի բոլոր սահմանափակումները վերացվեցին (գործարքայնության սահմանափակումները պահպանված են դեռահասակների համար)։*

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՌՈՒԲԼԻՆ.

Դրամական ռեֆորմից առաջ, յերբ արժույթը շարունակ ընկնում էր, աշխատավարձն ուղղակի հաշվվում էր **ապրանքային ռուբլիներով**։ *Ապրանքային ռուբլու հիմքը կազմում է* **բյուջետային ինդեքսը**։ *Վերցված է ապրանքների մի շարան, վորոնք անհրաժեշտ են բանվորի առօրյա ապրուստի համար*[1]։ *1913 թվականին ապրանքների այս շարանը Մոսկվայում արժեր 10 ռուբլի։ Հասկանալի յե, վոր վորքան ընկնում էր թղթադրամի գնողական ուժն, այս շարանի արժեքը խորհրդային դրամանիշներով ավելի ու ավելի բարձրանում էր։ Ամեն տվյալ դեպքի ժամանակ բյուջետային շարանի արժեքը, վոր արտահայտվում էր խորհրդային դրամանիշներով, բաժանվում էր 10-ի։ Քանորդը լինում էր ապրանքային ռուբլի։ Այսպես, օրինակ, 1922 թվականի ապրիլի 1-ին բյուջետային շարանը Մոսկվայում արժեր 2.190 ռուբլի 1922 թվականի խորհրդային դրամանիշներով։ Նշանակում է՝ ապրանքային ռուբլին այն ժամանակ Մոսկվայում հավասար էր 2.190 : 10=219 ռուբլի 1922 թվականի խորհրդային դրամանիշներով։ 1924 թվականի փետրվարի 8-ին բյուջետային շարանը Մոսկվայում արժեր 212,300 ռուբլի 1923 թվականի խորհրդային դրամանիշներով։ Ուրեմն ապրանքային ռուբլին այն ժամանակ հավասար էր Մոսկվայում 21,230 ռուբլու 1923 թվականի դրամանիշներով։*

Ա. Սննդի առարկաներ.

1.	*Հաճարի ալյուր*	*1 փութ*
2.	*Ցորենի »*	1/2 »
3.	*Կրուպա (պշենո)*	*7 ֆունտ*

[1] Մինչպատերազմյան 10 ռուբլու արժեքով բյուջետային ինդեքսի շարանը, վոր սահմանել է Գոսպլանին կից ինդեքսային հանձնաժողովը 1923 թվականի նոյեմբերին։

4.	*Կարտոֆիլ*	*0,95 փութ*
5.	*Թթու կաղամբ*	*8 ֆունտ*
6.	*Ճակնդեղ*	4 »
7.	*Գլուխ սոխ*	1,7 »
8.	*Միս*	7,8 »
9.	*Կովի հալած յուղ*	1 »
10.	*Անքաշ կաթ*	*5 1/2 շիշ*
11.	*Ձու*	*3 հատ*
12.	*Բուսական յուղ*	*1,7 ֆունտ*
13.	*Սովորական սելյոդկա*	3 »
14.	*Շաքար*	2 »
15.	*Աղ*	2 »

Բ. Առաջին անհրաժեշտության առարկաներ.

16.	*Հասարակ կոշիկներ*	0,07
17.	*Չիթ*	*2,2 արշին*
18.	*Քաթան*	0,7 »
19.	*Քաղաքացիական մահուդ*	*0,16 արշին*
20.	*Նավթ*	*6 ֆունտ*
21.	*Հասարակ սապոն*	1 »
22.	*2-րդ տեսակի ծխախոտ*	0,18 »
23.	*Լուցկի*	*3 տուփ*
24.	*Վառելափայտ*	*0,024 խ. սաժ.*

Ուրիշ քաղաքներում, վորտեղ շարանի արժեքը ցածր էր, ապրանքային ռուբլու արժեքն էլ ցածր էր։ Աշխատավարձի ապրանքային ռուբլիներով հաշվելն արհեստակցական միությունները սկսեցին կիրառել 1922 թվականին։ 1923 թվականին Խորհրդային Միության գրեթե ամբողջ արդյունաբերության մեջ աշխատավարձը հաշվվում էյին ապրանքային ռուբլիներով։

ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ.

Արժույթի անընդհատ անկման շրջանում ապրանքային ռուբլին իր ծառայությունը մատուցեց բանվոր դասակարգին։ Ապրանքային ռուբլին ապահովում էր աշխատավարձի **իրական** *նշանակության պահպանումը*[1]։ *Բանվորն իմանում էր, թե վորքան էլ թանգանային իրեն անհրաժեշտ մթերքները, նա տվյալ ամսում ավելի քիչ մթերք չի ստանա, քան անցյալ ամսին։ Այսպիսով ապրան-*

[1] Հասկանալի յե, վոր բանը գլուխ չէր գալիս առանց տարազարկերի (перебой), *յերբ աշխատավարձը միաժամանակ յետ էր ընկնում գների աճումից։ Ապրանքային ռուբլին յերևան էր հանում այս յետանկումը* (отставание)։

քային ռուբլին պաշտպանում եր բանվորի կյանքի մակարդակը և չեր թողնում, որ այս ցածանա։ Իսկ յերբ հնարավոր եր լինում, բանվորի կյանքի մակարդակի բարձրացման հասնում եյին նրանով, որ ապրանքային ռուբլիններով արտահայտված աշխատավարձն եյին բարձրացնում։

Յերբ 1924 թվականին մտցվեց փողային դրամական ռեֆորմը, նրանից հետո աշխատավարձն սկսեցին հաշվել վոսկե ռուբլիններով։ Ապրանքային ռուբլին մի տեսակ յելավ հրապարակից, բայց, այնուամենայնիվ, վոչ վերջնականապես։ Հիմա յել այն բոլոր դեպքերում, յերբ հարկ և լինում բանվորների այս կամ այն կատեգորիայի աշխատավարձի մակարդակը հաշվի առնել, դիմում են ապրանքային ռուբլու ոգնությանն։

ԳՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ, ԻՐԲԵՎ ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ։

Իրական աշխատավարձը հարկ յեղած բարձրության վրա պահելու համար լայն սպառման առարկաների գները յենթարկվում են կարգավորման։ Կոփվ և մղվում վերադիր ծախսերի դեմ, արդյունաբերական ու առևտրական ձեռնարկությունների այն ձգտման դեմ, որի նպատակն և լինում բարձր շահույթ ձեռք բերել և այլն։ Սակայն այս տեսակետից ամենակարևոր բանն ապրանքների արտադրական ինքնարժեքն իջեցնելն և, որի համար անհրաժեշտ և բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, սրա ռացիոնալիզացիան ու ինտենսիֆիկացիան։ Այսպիսով ՄՍՀՄ բանվորներն աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելով՝ հենց սրանով ոժանդակում են, որ իրենց իրական աշխատավարձը միանգամից բարձրանա յերկու կողմից. նրանք նախ՝ մեծացնում են աշխատավարձի ֆոնդը և յերկրորդ՝ եժանացնում են իրենց սպառման առարկաները։

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՐՋԱՊՏՈՒՅՏԸ.

ՅԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ.

ՏԱՍՆՋՈՐՍԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ։

ԿԱՊԻՏԱԼԸ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎՈԼՈՐՏՈՒՄ.

§ 63. ԿԱՊԻՏԱԼԻ ՇՐՋԱՊՏՈՒՅՏԸ.

IV գլխում մենք քննեցինք, թե կապիտալը իր շարժման ճանապարհին ինչ ձևեր և ընդունում։ Ձևերի այս հերթափոխը մենք կնշանակենք Փ—Ա—Արտ.—Ա՝—Փ՝ ֆորմուլայով։ Փողային ձև, ապրանքային ձև, արտադրական ձև (այսինքն բանվորական ուժի ու արտադրության միջոցների միաձուլումն), ապրանքային ձև յերկրորդ անգամ, բայց արդեն աճած արժեքով ու վերջապես փողային ձև ելի յերկրորդ անգամ։ Վերջին փողային ձևը վորակապես նույնանում է առաջին սկզբնական ձևի հետ։ Սկզբում փող եր, վերջում դարձյալ փող ստացվեց։ Բայց այստեղ միայն վորակային նույնություն կա, իսկ բանակային նմանություն չկա յերբեք։ Փողի բանակությունն աճել է։ Յերկրորդ Փ-ն առաջին Փ-ից ավելի շատ է, այլապես այս խաղը կապիտալիստի համար կոպեկի նշանակություն չեր ունենա։

Կապիտալի աճումը տեղի չե ունենում արտադրության միջոցների ու բանվորական ուժի կցման (СТЫК) վայրում, այն է՝ արտադրության վոլորտում։ Բայց այս չի նշանակում, թե կապիտալը շարունակ կարող է արտադրության վոլորտում մնալ։ Կապիտալն անպայման պետք է հանդես գա շրջանառության վոլորտում (այսինքն շուկայում) արտադրության վոլորտը անցնելուց առաջ ու հետո։

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎՈԼՈՐԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՐՎՈՂ ՄԵԿ ՀԱՁՑԻՆ (явка) ԸՆԿՆՈՒՄ Է ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎՈԼՈՐՏՈՒՄ ԱՐՎՈՂ ՅԵՐԿՈՒ ՀԱՁՑ։

Արտադրության վոլորտն անցնելուց առաջ կապիտալը պետք է վոտ դնե շրջանառության վոլորտը, վորպեսզի այստեղ դրամական ձևը թոթափե և դառնա արտադրության միջոցներ ու բանվորական ուժ։ Թե արտադրության միջոցներն ու թե բանվորական ուժը մտնում են արտադրության վոլորտը (ձեռնարկության մեջ), վոր այստեղից դուրս գան ապրանքի (արդյունքի) ձևով։ Վերջինս իրացվելու համար (այսինքն փողի վերածվելու համար) պետք է նորից անցնի շրջանառության վոլորտը։

Ինչպես վոր ծայրերը միացրած շղթայի մեջ ամեն մի ողակ կարող է առաջինն ողակ համարվել, այնպես էլ արդյունաբերական կապիտալի յուրաքանչյուր անդամ կարող է առաջինը համարվել[1]։ Փ—Ա.—Արտ.—Ա¹—Փ¹ ֆորմուլայի փոխարեն կարող ենք ունենալ Ա.—Արտ.—Ա¹—Փ¹—Ա¹ կամ Արտ.—Ա¹—Փ¹—Ա¹—Արտ.։

Սակայն կապիտալի վոր ձևից էլ սկսելու լինենք ֆորմուլան, մի բան անկասկած է. լրիվ շրջապտույտ կատարելու համար կապիտալը պետք է մեկ անգամ վոտ դնե արտադրության վոլորտն ու յերկու անգամ էլ շրջանառության վոլորտը։ Այս պատճառով «կապիտալի շրջապտույտը ներկայացնում է շրջանառության ու արտադրության միասնականությունն» (Մարքս)։

ՊՏՈՒՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԻ ՈՒ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ։

Սովորողներին խորհուրդ եմք տալիս մտքում ամուր պահել պտույտի ժամանակամիջոցի ու շրջանառության ժամանակամիջոցի տարբերությունը։ Շրջանառության ժամանակամիջոցը պտույտի ժամանակամիջոցի մի մասն է։ Պտույտի ժամանակամիջոցն արտադրության ժամանակամիջոցի ու շրջանառության ժամանակամիջոցի գումարն է։

Արտադրության վոլորտն ու շրջանառության վոլորտը յերբեք չպետք է գտնվեցրած հասկանալ այն իմաստով, թե սրանք տարածության վորոշ մասերն են։ Ապրանքը կարող է գործարանի բակից դուրս տարվել և, այնուամենայնիվ, մնալ արտադրության վոլորտում։ Յեվ իրոք, տրանսպորտն, ապրանքը տեղափոխելն ու սպառողին հասցնելը դեռ արտադրության գործողություն

[1] Այնուամենայնիվ Փ... Փ¹ ֆորմուլան ամենից պարզորոշն է, վորովհետև սկսվում և վերջանում է արժեքի ամենաշոշափելի ու ամենից ինքնուրույն փողային ձևով։

է, այն է՝ նրա վերջին գործողությունն է։ Յեվ ընդհակառակն, ապրանքը կարող է մնալ գործարանի բակում և արդեն շրջանառության վոլորտում լինել։ Այս լինում է հենց այն ժամանակ, յերբ ապրանքը պատկած՝ սպասում է գնորդի։

Շրջանառության վոլորտում արժեքը շարքային ապրանքի կեղևը փոխում ու փողային կեղև է հագնում և, ընդհակառակը՝ դրամական կեղևը փոխում ու շարքային ապրանքի կեղև է հագնում։ **Վորտեղ էլ վոր ապրանքը պատկած լինի, այն գտնվում է շրջանառության վոլորտում, յերբ պատկած սպասում է իր՝ փող դառնալուն։**

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎՈԼՈՐՏՆ ՈՒ ԱՅՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՉԱՓԵՐԸ, ՎՈՐ ՈՒՆԵՐԱԺԵՇՏ Է ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՋԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ։

Արդյոք շրջանառության վոլորտն աղդում է այն կապիտալի չափերի վրա, վոր հարկավոր է արդյունաբերական կապիտալիստին։ Թվում եր, թե քանի վոր կապիտալը հարկավոր է միայն նրա համար, վոր գնվի այն բոլորն, ինչ անհրաժեշտ է արտադրության վոլորտին, ապա յեթե ուզում ենք վորոշել, թե տվյալ ձեռնարկությանն ինչքան փող է հարկավոր, մենք պետք է միայն այն հաշվենք, թե վորքան կարժենան արտադրության այն միջոցներն ու բանվորական ուժը, վոր հարկավոր են ձեռնարկության լիաբեռնության համար։ Այնինչ իրոք այսպես չէ։ Այս հասկանալու համար բանը կոնկրետ պատկերացնենք. ասենք թե կապիտալիստը գնել է մի պարտիա մանվածք, ներկեր և այլն ու վարձել է բանվորներ։ Այս նպատակի համար նախատես է 5,000 ռուբլի։ Սրա տեղակ նա ստացել է 20,000 մետր չիթ, վոր կարող է շահույթով ծախել ու գործը նորից սկսել, այն է՝ յելի մի պարտիա մանվածք ու ներկեր գնել, իր գործարանում թողնել նույն բանվորներին և նորից սկսել արտադրության պրոցեսը։ Արդյոք այս նշանակում է, թե տվյալ ձեռնարկությունն իրոք կարող է 5,000 ռուբ. շրջանառու կապիտալով գործել[1]։ Յեթե ձեռնարկությունն այլևս շրջանառու կապիտալ չունի իրոք, վոր իրը լիներ կամ թե ուրիշից փոխ առած, այն ժամանակ կատացվի այսպիսի պատկեր. գործարանը պարապ կկանգնի, մինչև վոր մի նոր պարտիա բամբակ ու ներկեր և այլն գնվի։

[1] Վորպեսզի չբարդացնենք այս հարցը, վոր առանց այն էլ բարդ է, մենք այստեղ չենք խոսում հիմնական կապիտալի շրջապտույտի մասին։

Հեռվաբար կապիտալիստի շրջանառու կապիտալը պետք է գործե յերկու հերթափոխով, բացի դեռ մեկ մասը գտնվում է արտադրության վոլորտում, մյուս մասը պետք է բաց տեսնե շրջանառության վոլորտում: Մեր որինակում, յերբ կապիտալիստը իր մի պարտիա չիթը պատրաստել է և այն ուղարկել շուկա, մինչև այս պարտիան իրացնելը (ծախելը) նրան ելի 5,000 ռուբլի յե հարկավոր, վորպեսզի նույն այն ժամանակ բանեցնե մի նոր պարտիա բամբակ:

Այսպես, ուրեմն, բացի այն կապիտալից, վոր հարկավոր է արտադրության վոլորտին սպասարկելու համար, կապիտալիստին մի ավելագիր կապիտալ ել է հարկավոր շրջանառության վոլորտին սպասարկելու համար:

ՊԱՐԱՊ ԿԱՊԻՏԱԼԻ ԱԶԱՏՎԵԼԸ:

Յեթե արտադրության ժամանակամիջոցը շարունակվում է ճիշտ այնքան, վորքան շրջանառության ժամանակամիջոցն է, ապա կապիտալի յերկու հերթափոխը պետք է իրար հավասար լինեն: Իսկ յեթե, որինակ, շրջանառության ժամանակամիջոցը յերկու անգամ ավելի յերկարատև է, քան արտադրության ժամանակամիջոցն է, ապա շրջանառության վոլորտում հերթապահություն անելու համար հարկավոր է կրկնապատիկ ավելի կապիտալ, քան հարկավոր է արտադրության վոլորտին: Իսկ այն դեպքում, յերբ շրջանառության ժամանակամիջոցն արտադրության ժամանակամիջոցի բազմապատիկը չե (не кратен), այսինքն յեթե արտադրության միջոցը շրջանառության մեջ չի պարուսկսվում միճաճի ամբողջ ացգամ, ապա ժամանակ առժամանակ պետք է պարապ կապիտալ ազատվի:

Այս հասկանալու համար առնենք թվով մի որինակ: Ասենք թե արտադրության ժամանակամիջոցը հավասար է յերկու ամսվա, իսկ շրջանառությանը՝ 4 ամսվա: Այսպիսով կապիտալի պտույտի ամբողջ ժամանակամիջոցը հավասար է 6 ամսվա: Արդյունքի այն պարտիան, վոր բավական է ձեռնարկության բեռնավորման համար, պարունակում է 5,000 ռուբլու կապիտալ: Ավելի պարզորոշ պատկերացնելու համար յերևակայենք, վոր ձեռնարկությունը հենց նոր է սկսել բանել: Հունվարի 1-ին սկսվել է արտադրության ժամանակամիջոցը: Այս ամսաթվին կանխավճարված է յեղել 500 ռուբլի: Մարտի 1-ին ապրանքի պարտիան պատրաստ է յեղել և շուկա չե ուղարկվել: Մեր յենթադրածի համաձայն այս պարտիան իրացվելու չե 4 ամսից վոչ շուտ, այսինքն հուլիսի 1-ից վոչ վաղ: Վորպեսզի արտադրության պրոցեսն անընդհատ շարունակվի, ձեռնարկուն պետք է նորից 5,000 ռուբլի կանխավճարե: Մայիսի 1-ին արդեն պատրաստ է ապրանքի նոր պարտիան, վորը նույնպես մտնում է շրջանառության վոլորտն, իսկ առաջին պարտիան դեռ դուրս չի յելել շրջանառության վոլորտից:

Վորպեսզի արտադրությունն անընդհատ շարունակվի, ձեռնարկուն ելի պետք է 5,000 ռուբլի կանխավճարե: Այսպիսով արդեն նա ընդամենը կանխավճարել է 15000 ռուբլի: Վերջապես հուլիսի 1-ին միայն, յերբ պատրաստ կլինի յերրորդ պարտիան, ել հարկավոր չի լինիլ նոր փող կանխավճարել, վորովհետև այդ ժամանակ իրացված կլինի առաջին պարտիան, և նրա տեղակ ստացած փողը կվերադառնա ձեռնարկությունն: Հետագայում ամեն բան կշարունակվի միևնույն կարգով: Յեթե միայն արտադրության չափերը, գները և արտադրության ու շրջանառության ժամանակամիջոցների տևողությունն անփոփոխ մնան, 15,000 ռուբլանոց շրջանառու կապիտալը միշտ զբաղված կլինա ձեռնարկության մեջ: Յեվ այս փողից միայն $^1/_3$-ը հերթապահություն կանե արտադրության վոլորտում: Իսկ մնացած $^2/_3$-ը հարկավոր են շրջանառության վոլորտի համար:

Մեր վերցրած որինակում շրջանառության ժամանակամիջոցն արտադրության ժամանակամիջոցի բազմապատիկն է. վերջինս առաջնի մեջ պարունակվում է 2 անգամ: Հիմա առնենք ուրիշ թվեր. արտադրության վոլորտի համար 2 ամիս ու շրջանառության վոլորտի համար 3 ամիս: Նախընթաց ամբողջ հաշիվը նորից անենք, բայց արդեն նոր թվերով: Մենք տեսնում ենք նախ, վոր այժմ արդեն շրջանառության վոլորտի համար յեռապատիկ գումար է հարկավոր: Յերկրորդ, վոր կապիտալն ամեն անգամ շրջանառության վոլորտից յելնելով՝ պարապ կմնա մի ամսվա ընթացքում, մինչև վոր նրա համար տեղ բացվի արտադրության վոլորտում:

Անհրաժեշտ է վերապահություն անել, վոր վերևում բերած դատողություններն սխեմատիկ են:

Իրականում այնպես չի լինում, վոր շրջանառության ժամանակամիջոցն ապրանքի համար ամեն անգամ միշտ միևնույնը մնա։ Այս ժամանակամիջոցի տևողությունն առաջին հերթին կախված է կոնյունկտուրայից։ Լավ կոնյունկտուրայի դեպքում շրջանառության ժամանակամիջոցի տևողությունը կարող է զերոյի հասնել ապրանքը տաք-տաք, հաստոցից հենց նոր դուրս յեկած, գնում են։ Ավելին. շրջանառության ժամանակամիջոցի տևողությունը կարող է մինչև անգամ բացասական մեծություն դառնալ։ Այս լինում է այն ժամանակ, յերբ ապրանքը գնում և փողը վճարում են ապրանքի պատրաստ լինելուց առաջ։

Այնուհետև, այս սխեմայի մեջ, վոր տվինք, մեծ փոփոխություններ է մտցնում վարկը։ Այս փոփոխությունների մասին խոսելու յենք ստորև, վարկին նվիրած գլխում։

Բայց, այնուամենայնիվ, վերևում բերած սխեմաները շատ կարևոր են։ Այս սխեմաները, վորոնց մեջ վերցված են պարզ ու կայուն փոխհարաբերություններ, յերևան են հանում եյությունն այն բանի, վոր կատարվում է իրականության մեջ, վորտեղ հարաբերություններն ավելի բարդ են և պակաս կայուն են։

Այս սխեմաները նախ յերեվան են հանում շրջանառության վոլորտի ազդեցությունն այն կապիտալի չափերի վրա, վոր պահանջվում է յուրաքանչյուր ձեռնարկության համար։ Յերկրորդ, նրանք բացատրում են, թե պտույտն ինչ դեպքերում է պարապ կապիտալ առաջ բերում, յեվ վերջապես այս «սխեմաները բանալի յեն տալիս հասկանալու, թե վորոնք են առեվտրական կապիտալի կենսունակության պատճառները։

§ 64. ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ՈՒ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹԸ.

Ինչպես հայտնի յե, առևտրական կապիտալը պատմականորեն նախորդել է արդյունաբերական կապիտալին։ Կապիտալիստական առևտուրը շահվում, ուռճանում եր այն արդյունքի հաշվին, վոր ֆեոդալը խլում եր գյուղացուց։ Բայց ահա, յերբ ծնվեց կապիտալիստական արդյունաբերությունը և աշխարհը նվաճեց, առևտրական կապիտալիստը վոչ միայն բեմից չհեռացավ, այլ, ընդհակառակն,ել ավելի ամրապնդեց իր դիրքերը։ Իբրև կանոն կարելի յե ասել, վոր արդյունաբերող կապիտալիստն

ինքը չե իր արդյունքը ծախում ուղղակի սպառողին։ Սպառողի ձեռքն ընկնելուց առաջ արդյունքը սովորաբար ընկնում է մեծածախ առևտրականի ձեռքը։ Սա ապրանքը վերավաճառում է ուրիշ ավելի մանր առևտրականների, և ապա միայն սրանք են արդեն, վոր ապրանքն անմիջաբար ծախում են իրենց վերջին նշանակված տեղը։

Հապա ինչո՞վ է բացատրվում աշխատանքի այսպիսի յուրահատուկ բաժանումը կապիտալիստների միջև։ **Ինչո՞ւ արդյունաբերող կապիտալիստն իր ձեռքից բաց է թողնում ապրանքը, առանց սրանից քամելու այն ամբողջ շահույթը, վոր հնարավոր է քամել յեվ թույլ է տալիս, վոր այս ապրանքից շահվեն ուրիշ կապիտալիստներ։**

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ։

Այստեղ աշխատանքն իրենց միջև բաժանել են վոչ թե մարդիկ, այլ արտադրության վոլորտում հերթապահություն անող կապիտալներն ու շրջանառության վոլորտում հերթապահություն անող կապիտալները։

Մեր՝ վերևում բերած որինակում կապիտալիստը կարող եր իր արտադրությունը յեռապատիկ շատացնել, յեթե նրա կապիտալն ազատեյին շրջանառության վոլորտում իբրև պահածու (мариновка) մնալուց։ Արտադրության ավելի խոշոր մասշտաբը նրան մի ամբողջ շարք առավելություններ կընձեռեր մրցորդների հանդեպ։ Մյուս կողմից այն կա, վոր կապիտալը մի վոլորտից մյուս վոլորտն անցնելիս ժամանակ առ ժամանակ պարապ է մնում, իսկ յերբ «աշխատանքը» բաժանված է առևտրական ու արդյունաբերական կապիտալների միջև, կապիտալի պարապության ժամանակամիջոցները կրճատվում են։

Աշխատանքի բաժանումն արդյունաբերական ու առևտրական կապիտալների միջև յերկու խոշոր առավելություն ունի.

1. Արդյունաբերողը կարող է մեծացնել իր ձեռնարկությունը յեվ այս բանի հետեվանքով ոգտվել խոշորացրած ձեռնարկության առավելություններից:

2. Կապիտալի պարապության ժամանակամիջոցի տեվողությունը մինիմումի յե հասցվում:

Առևտրականը իր կապիտալով սպասարկելով արդյունաբերական ձեռնարկության արտադրության մեկ ժամանակամիջոցի արդյունքի իրացմանը՝ իր կապիտալը չպետք է պարապ թողնի բոլորովին մինչև արտադրական ժամանակամիջոցի վերջանալը, քանի վոր նույն միջոցին այս կապիտալը կարող է զբաղվել մի ուրիշ արդյունաբերական ձեռնարկության արդյունքի իրացումով։

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹԸ։

Առևտրականի կապիտալն էլ է ձգտում հավելյալ արժեքի բաժին ստանալ իր մեծության համեմատական չափով, իբրև առևտրային շահույթ։

Սակայն սրանից չպետք է հետևեցնել, թե առևտուրն արդյունքի բաշխման նպատակահարմար չեզոնակ է։ Կազմակերպված բաշխման ժամանակ միայն փոքրիկ մասը հարկավոր կլիներ այն աշխատանքի, որ հիմա միանգամայն անարտադրողաբար վատնում են իրար դեմ մրցող առևտրային ձեռնարկությունների բանվորները ու ծառայողները, վաճառորները, ռեկլամի ասպարեզի գործավորները և այլն։

Առևտրական կապիտալիստի շահույթը նույնպես ձգտում է միջին նորմային։ Եթե առևտրական կապիտալիստը հարկադրված լինի ապրանքին այնպիսի բարձր գներ վճարելու, որոնց միջոցին նրա համար անմատչելի կլինի միջին շահույթն, այն ժամանակ կապիտալը վազ թե ուշ առևտրի ասպարիզից կգաղթի արդյունաբերության ասպարեզը։ Սրա հետևանքը կլինի մի կողմից այն, որ առաջարկը կշատանա, իսկ մյուս կողմից՝ առևտրական պահանջը կպակասի։ Գործարանային գները պետք է իջնեն այն աստիճան, որ **միջին շահույթը մատչելի լինի առեվտրական կապիտալին էլ**։

Ներքին շուկայի մենաշնորհացման պայմաններում, որտեղ առևտրական կապիտալի մրցման ճնշումը շատ դժվարացած է, յերկուսից մեկն է լինում. կամ խոշոր առևտրական կապիտալի միջնորդությունը բոլորովին վերացվում է և և արդյունաբերական միավորությունները անմիջական հարաբերություններ են ունենում սպառողների հետ (Զինգերի մեքենաները) ու կամ մանրածախ առևտրականի հետ, կամ թե չե առևտրականն այնպիսի նեղիչ պայմաններով է արտադրանք ստանում (նա իրավունք չունի մրցորդներից բան գնելու, որոշված գնից բարձր վաճառելու), որ փաստորեն դառնում է արդյունաբերական ֆիրմայի գործակալը միայն[1]։

[1] Մյուս կողմից առևտրական կապիտալը շատ խոշոր դեր է կատարում ժամը արտադրողների (գյուղացիների ու տնայնագործների) բազմությունը շահագործելու ասպարիզում։ Այսպես առևտրական կապիտալը հանդես է գալիս թե իբրև արտադրության մեծագնորդ ու թե իբրև պրոդուկցիայի միջոցների ու սպառման միջոցների վաճառորդ։

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԻ ՄԵՋ ՄՏՆՈՒՄ Է ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹՆ ԵԼ։

Արտադրության գինն այն սահմանն է, որի շուրջը տատանվում է այն գինը, որ ապրանքի համար վճարում է **վերջին գնորդն**, այսինքն սպառողը (միևնույն է, թե սա արդյոք սպառում է այս բառի սովորական իմաստով, թե սպառում է արտադրողաբար)։ **Այսպիսով ապրանքի արտադրության գնի մեջ մտնում են արտադրության ծախքերը՝ պլյուս կապիտալիստական շրջայի բոլոր ողակների շահույթը՝ արդյունաբերողից սկսած ու մանրածախ առեվտրականով վերջացրած։**

§ 65. ԱՌԵՎՏՐԻ ՄԻՋԱՆԻ ՀԱՏՈՒԿ ՁԵՎԵՐԸ.

Ա. Մեծածախ առեվտրի մեջ.

Ապրանքի՝ մեկ տիրոջից մյուսին անցնելուն պարտադիր կերպով չպետք է ուղեկից լինի ապրանքի իրական տեղափոխությունը մի վայրից մի ուրիշ վայր։ Իհարկե, յերբ ապրանքը գնել է սպառողը, վերջինս պետք է փաստորեն ստանա ապրանքը։ Նույնն է լինում, յերբ ապրանքը գնում է մանրածախ առևտրականը։ Իսկ յերբ ապրանքը գնում է մեծածախ առևտրականը կամ չարաշահը վերավաճառելու նպատակով, ապա ապրանքի իրական տեղափոխությունը մի վայրից մի ուրիշ վայր՝ հաճախ միանգամայն ավելորդ է լինում։

Հենց այս պատճառով էլ առևտրական խոշոր կենտրոններում լայն ծավալվում է ձեռնարկությունների մի հատուկ տեսակ՝ ապրանքային պահեստատնոցները։ Ապրանքն ի պահ ընդունելով՝ պահեստատնոցն ապրանքատիրոջը տալիս է պահեստատնոցի ընկալագիր (складочное свидетельство)։ Վաճառքի ժամանակ բուն ապրանքը ծախելու փոխարեն վաճառորդը գնորդին հանձնում է պահեստատնոցի ընկալագիրը միայն։ Ընկալագրի ձեռքից-ձեռք անցնելու հետևանքով ապրանքը շատ անգամ կարող է իր տերը փոխել՝ միշտ միևնույն տեղում մնալով։

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԱՏՈՑՆԵՐՆ, ՆՐԱՎԱՏՈՐՆԵՐԸ, ՎԱՐԱՆՏՆԵՐԸ.

Մի քանի յերկրներում պահեստատները միևնույն ապրանքի համար տալիս են յերկու փաստաթուղթ—պահեստատնոցի ընկալագիր վաճառքի համար ու **վարանտ**՝ գրավադրման համար։

Ապրանքային պահեստատնոցների առանձին տեսակը կազմում են հացահատիկների ելևէատորները, որտեղ պահելու համար ընդունված ապրանքը—հացահատիկը—դի-

մաքրվում ե. տարբեր տերերի հացահատիկները խառնում են իրար: Ելեվատորի պահեստանոցի ընկալագիրը լոկ այն ե ապահովում, վոր ի պահ տվողը կարող ե ընդհանրապես վորոշ քանակությամբ ու վորոշ լավորակությամբ հացահատիկ ստանալ, բայց ավանդատուն չի կարող պահանջել հենց ճիշտ այն հացահատիկը, վոր ինքը տվել ե: Ելեվատորներում հացահատիկը մաքրում են և վորոշ տեսակների (ստանդարտներ) վերածում:

Ապրանքային պահեստանոցների ու ելեվատորների սիստեմը վոչ միայն տրանսպորտի տնտեսումն ե առաջ բերում, այլ և ընդհանրապես արագացնում ե գործարքները և հենց սրանով ել կրճատում ե շրջանառության ժամանակամիջոցը:

Մեծածախ առևտուրը գործարքների ամենամեծ արագության հասնում ե ապրանքային բորսաներում:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱՆԵՐԸ: Ապրանքային բորսայում պտույտ գործելու համար ամենից ավելի հարմար են լինում այնպիսի ապրանքները, վորոնց համար կարելի յե վորոշ թվով նմուշներ (ստանդարտներ) սահմանել. այսպիսիք են՝ հացահատիկները, բամբակը, շաքարն, սպիրտը, սուրճը: Ստանդարտի շնորհիվ ապրանքը դառնում ե միանգամայն փոխարինելի իր: Վաճառողը պարտավորվում ե գնողին ծախելու վոչ թե մի անհատորեն վորոշ ապրանք, վորը տվյալ ժամանակում գտնվում ե այս ինչ տեղում, այլ մի ապրանք, վորը համապատասխան լինի վորոշ ստանդարտի: Այստեղից ել հնարավորություն ե առաջ գալիս նախ մի ապրանք ծախելու և հետո միայն գնելու այն[1]: Պայմանագիրը կնքելիս միայն մատնանշվում ե ստանդարտը և ցույց ե տրվում քանակն[2] ու հանձնելու ժամանակն ու տեղը: Մնացած մանրամասնություններն արդեն նախատեսված են բորսային սովորույթներով: Սրա շնորհիվ պայմանագիրը կարող կնքվել բերանացի մեկ րոպեյում: Պայմանագրի իրական լինելու համար բավական ե միայն, վոր այս նշված լինի բորսային մակլերի տետրում[3]:

---

[1] Սակայն պետք ե ասել, վոր բորսաներում ըստ ստանդարտի կատարվող վաճառքներին զուգընթաց՝ գործնականում կիրառվում ե «նմուշը տեսնելով (по пробе) վաճառք ել»:

[2] Սովորաբար բորսայում յուրաքանչյուր ապրանքի համար կա ծախու նվազագույն միավոր: Այսպես, որինակ, Համբուրգի բորսայում շաքարը ծախվում ե 500 մեշոկից կազմված կամ 500 մեշոկի բազմապատիկը յեղող պարտիաներով (1000 մեշոկ, 1500 մեշոկ և այլն):

[3] Բորսային մակլերը մի պաշտոնյա յե, վորը բորսայում կատարում ե միաժամանակ թե միջնորդի ու թե նոտարի դեր: Իր արածի համար նա կողմերից ստանում ե կուրտաժ, վորի չափը կախված ե գործարքի չափից:

Բորսային կոմիտեներն ամեն որ հրապարակում են ապրանքների տեղեկատու գները: Գները դուրս են բերում այն գործարքների ու առաջարկների հիման վրա, վոր կատարած են լինում գնողներն ու վաճառողներն որվա ընթացքում:

Ապրանքային բորսաներում մեծ դեր են կատարում ժամկետով գործարքները: Վաճառողը պարտավորվում ե ապրանքը հանձնել, իսկ գնողը՝ ընդունել վոչ թե հիմա, այլ վորոշ ժամանակ անց, սակայն գինը կտրում են հիմա: Գործարանատերն, որինակ, կարող ե ժամկետով գործարքների միջոցով իրեն մի ամբողջ տարվա համար ապահովել հումքով՝ առանց իր պահեստանոցներում դիզելու և ամսական մի վորոշ քանակ ստանալով: Այնուհետև ժամկետով գործարքը մի միջոց ե, վորով իրենց ապահովում են գների փոփոխություններից: Վաճառողն իր ապագա ապրանքն ապահովագրում ե գների անկումից, իսկ գնողը՝ նրանց բարձրանալուց: Բայց ժամկետով գործարքները շատ դեպքերում **տարբերության** չարաշահության (спекуляция на разницу) բնույթն են միայն կրում:

ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒԹՅՈՒՆ Այս կատարվում ե հետևյալ կերպով: Ասենք թե Իվանովը հունվարի 1-ին ծախում ե Պետրովին 5000 փութ հաճար փետրվարի 1-ի ժամկետով, փութը մեկական ռուբլի: Պետրովին հաճար սկի հարկավոր չի, և Իվանովն ել հաճար չի ունենալու: Յերկուսով ել միայն տարբեր կերպով են գուշակում, թե փետրվարի մեկին հաճարի բորսային գինն ինչ կլինի: Իվանովն անկումն եր սպասում, Պետրովը՝ բարձրացում: Ահա յեկավ փետրվարի 1-ը: Ասենք, թե ճիշտ գուշակել եր Պետրովը, և հաճարի բորսային գինը բարձրացավ մինչև փութը 1 ռ. 10 կոպեկ: Յեթե Իվանովը կամենար Պետրովին իրոք հաճար տալ փութը 1-ական ռուբլով, ապա նա պետք ե գներ 1 ռուբլի 10 կոպեկով՝ փթի մեջ 10 կոպեկ կորցնելով, վորն ամբողջ գործարքում կանի 500 ռուբլի: Իվանովը հենց այս տարբերությունն ե վճարում Պետրովին, և սա նրան ազատում ե հաճարը հանձնելու պարտավորությունից: Յեթե, ասենք, ճիշտ գուշակած ե լինում Իվանովը, և հաճարի գինն ընկած ե լինում մինչև 90 կոպեկ, տարբերությունը վճարում ե Պետրովը:

ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐԸ: Փոխանակության հին ձևերի մնացորդ ե տոնավաճառային առևտուրը: Վերջինս առանձնապես հաստատ հարատևում ե գյուղատնտեսական յերկրներում, վորտեղ առևտրական գործարքների մեծ քանակությունը գցում են

այն ժամանակին, երբ բերքը հավաքվում է, և դաշտային աշխատանքներն սկսվում են։ Տոնավաճառները լինում են տարբեր մասշտաբի և տարբեր տևողության։ Գյուղական տոնավաճառները շարունակվում են մի երկու օր և սպասարկում են միքանի գավառակի։ Նիժնի-Նովգորոդի տոնավաճառը շարունակվում է համարյա երկու ամիս (հուլիսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը)։ Արդյունաբերական երկրներում, որտեղ կա բորսաների ցանց, սարքի ընկած տրանսպորտ, պոստ-հեռագրական ու հեռախոսային լավ կապ, տոնավաճառներն աստիճանաբար չքանում են կամ թե փոխվում, դառնում են ապրանքների ցուցահանդեսներ։

Բ. Մանրածախ առևտրի մեջ.

Վաղուց արդեն անցել է այն ժամանակը, երբ մանրածախ առևտուրը (розничная торговля) պարտադիր կերպով մանրավաճառ առևտուր (мелочная торговля) էր։ Ճիշտ է, խոշոր առևտուրն այնպիսի վճռական առավելություններ չունի մանրի հանդեպ, ինչպիսի առավելություններ որ ունի խոշոր արտադրությունը մանրի հանդեպ։ Մանրավաճառի խանութն, արկղիկը դեռ շարունակում է գոյություն ունենալ շնորհիվ իր ճկունության, հարմարվելու ունակության, գնորդին ընդառաջ գնալու շնորհքով։ Մանրավաճառի խանութը բանվորի վրա ունեցած իր իշխանությունը պահում է նաև այն վարկի շնորհիվ, որ տրամադրում է բանվորին։

Սրա փոխարեն ամեն տեսակի այն մանրածախ խանութները, որոնք միջին չափեր ունեն, աստիճանաբար հրապարակից դուրս են մղվում խոշոր առևտրային ձեռնարկությունների հետևյալ սիստեմների կողմից։

ՀԱՄԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

1. Նրանք դուրս են մղվում համապրանքային խանութների (универсальные магазины) կողմից, որոնցից յուրաքանչյուրը կազմված է մի ամբողջ շարք ամեն տեսակի բաժանմունքներից։ Փոքր տարածության վրա կենտրոնացնելով ամեն տեսակի ապրանքներ՝ սպիտակ հացից, կանաչուց, ձկնից սկսած մինչև երաժշտական գործիքներն ու կահը՝ համապրանքային խանութները գնորդին ազատում են ապրանքներ փնտռելու նպատակով քաղաքը մի ծայրից մինչև մյուս ծայրը վոտի տակ տալու անհրաժեշտությունից։

Համապրանքային խանութներն իրենց գնորդներին տրամադրում են ամեն հնարավոր հարմարություններ—բուֆետներ, ընթերցարան, դահլիճներ, գրելու առանձնասենյակներ և այլն։

2. Մանրածախ խանութները դուրս են մղվում մենապրանքային խանութների (специальные магазины) կողմից։ Այս խանութներից յուրաքանչյուրը ծախում է միայն մեկ տեսակ ապրանք, որինակ, միայն կոշկեղեն, միայն գուլպաներ, միայն օպտիկական պարագաներ ու ակնոցներ։ Սրա փոխարեն յուրաքանչյուր այսպիսի խանութ տասնյակ բաժանմունքներ է ունենում քաղաքի տարբեր մասերում, երբեմն էլ նաև տարբեր քաղաքներում։

Խոշոր առևտրային ձեռնարկությունները մեծ պտույտների շնորհիվ կարող են սահմանափակվել ավելի փոքր շահույթով և ապրանքներին ավելի ցածր գներ նշանակել։ Խոշոր գնորդներ հանդիսանալով՝ նրանք կարող են իրենց պայմանները թելադրել գործարանատերերին՝ սրանցից ստանալով լավագույն ապրանքներ ավելի ձեռնտու պայմաններով։ Բացի սրանից՝ նրանք կարող են մեծ գումարներ ծախսել ռեկլամների վրա։

§ 66. ԱՌԵՎՏՈՒՐԸ ԽՍՀՄ ՄԵՋ.

Մեր այն կռվի ընթացքում, որ մղում ենք առևտրական կապիտալի դեմ, մենք գնում ենք երկու գծով—պետական առևտրի գծով ու կոոպերացիայի գծով։ Ամբողջ արտաքին առևտուրն (տարբերկրյա պետությունների հետ արած առևտուրը) պետության մենաշնորհն է, և պետությունն այս անում է ի դեմս Առևտրի ժողովրդական կոմիսարիատի։ Ինչ վերաբերում է ներքին առևտրին, ապա տրեստներն ու սինդիկատներն ամենից առաջ ձգտում են անմիջական հարակցության մեջ մտնել սպառողների հետ։ Այս նպատակով այն տրեստները, որոնք լայն սպառման առարկաներ են արտադրում, հնար եղածին պես, բաց են անում սեփական խանութներ, կրպակներ ու նույնիսկ արկղներ՝ մանրածախ առևտուր անելու համար։ Տրեստները կանգ չեն առնում վաճառաշրջիկ առևտուր (разносная торговля) կազմակերպելու առաջ էլ։ Моссельпромщик-ը (գյուղատնտեսական արդյունաբերության Մոսկվայի տրեստի արտադրանքները ծախող վաճառաշրջիկը) Մոսկվայում սովորական դեմք է դառել։ Մյուս կողմից, պետական առևտրի ներկայացուցիչներն են պետական առևտրական հատուկ ձեռնարկությունները, ինչպիսիք են պետական համապրանքային խանութներն ու մի շարք բաժնետիրական ընկերություններ (որինակ, Мосторг-ը), որոնց բաժնետերերը պե-

տական ձեռնարկութիւններն ու հիմնարկները են։ Պետառևտրին զուգընթաց գործում է հզոր ցանցն սպառողական կոոպերատիվների, վորոնց միավորողը Центросоюз-ն է։

Թե առևտրի ասպարիզում վորքան աջող է գնում այն կռիվը, վոր մղում ենք մանավոր կապիտալի դեմ,—այս մասին վկայում է հետեյալ աղյուսակը.

ԽՍՀՄ ժողովրդական տնտեսութեան զարգացումը 1913—27 թ. թ. ընթացքում.

(Մանավոր կապիտալի դերը ԽՍՀՄ առևտրի մեջ միլիոն ռուբլիներով).

	1923/24 թ.	19 4/25 թ.	Մեկ տարում աճումը % % -ով.	1925/26 թ.	Մեկ տարում աճումը %%-ով.	1926/27 թ.	Մեկ տարում աճումը %%-ով.
Մանանավոր մեծածախ առևտուրը...	1030	614	— 37,5	981	+ 52,3	1159	+ 18,1
%% միջնորդ. մեծածախ ամբողջ պռույտի նկատմամբ	21,8	9,5	—	9,4	—	9.0	—
Մանանավոր մանրածախ առևտուրը	2946	30˙6	+ 3,7	3879	+ 26,9	4087	+ 5,4
%% միջնորդ. մանրածախ ամբողջ պռույտի նկատմամբ	58,6	44,3	—	38,8	—	35.5	—

ԽՆԴԻՐՆԵՐ.

Առեվտրական շահույթը.

№ 32. Ձեռնարկուն ունի 640.000 ռուբլու մշտական կապիտալ ու 160,000 ռուբլու փոփոխական կապիտալ։ Շահագործման նորման 125% է, կապիտալի որգանական կազմը հավասար է միջին հանրային կազմին։ Տարեկան արդյունքն ամբողջովին ծախվում է առևտրականին, վորը տարվա ընթացքում այս ապրանքի վրա պարապեցնում է 200,000 ռուբլու կապիտալ։ Ինչպես առևտրականն, այնպես և արդյունաբերողն ստանում են շահույթ միջին նորմալի համաձայն։

Պետք է վորոշել՝

1. հավելյալ արժեքի ընդհանուր գումարն ու

2. այն, թե հավելյալ արժեքից ինչ գումար է ստանում արդյունաբերողն ու ինչ գումար՝ առևտրականը։

№ 33. Ձեռնարկութիւնը տարեկան պրոդուկցիայի վրա ծախսում է 480,000 ռուբլու մշտական ու 120,000 ռուբլու փոփոխական կապիտալ։ Կապիտալի որգանական կազմը հավասար է միջին հանրային կազմին։ Շահագործման նորման 100% է։ Տարեկան ամբողջ պրոդուկցիան ծախվում է մեծածախ առևտրականին, վորը տարվա ընթացքում այս ապրանքի վրա պարապեցնում է 300,000 ռուբլու կապիտալ։ Արդյունաբերողն ու առևտրականն ստանում են շահույթ միջին նորմալի համաձայն։

Պետք է վորոշել, թե արդյունաբերողն արտադրութեան գնից վորքան զիջում է անում առևտրականին՝ տոկոսներով հաշված։

ՏԱՍՆՉԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ.

ՎԱՐԿԸ.

§ 67. ՎԱՐԿՆ ՈՒ ՍՐԱ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Շրջանառութեան վորոշոտում իրար դեմ կանգնած են լինում ապրանքներն ու փողը։ Բայց սրանից չի հետևում, թե այստեղ գնորդներ հանդիսանում են միայն փողատերերը, և թե այստեղ բոլոր գործարքները կատարվում են կանխիկ հաշվեհարդարով։ Զարգացած կապիտալիստական պայմաններում շատ մեծ դեր են խաղում վարկային գործարքները։ Վարկային գործարքն արտահայտվում է նրանով, վոր ապրանքատերը հրաժեշտ է տալիս իր ապրանքին՝ սրա համարժեքը վոչ թե հենց հիմա, այլ միառժամանակ հետո ստանալու համար։ Բայց վարկային գործարքը կարող է արտահայտվել նրանով էլ, վոր փողատերը փողը ժամանակավորապես զիջում է ուրիշին, իսկ վերջինս արդեն հանդես է գալիս իբրև կանխիկ փողով գնում անող։

Վարկի սաղմնային տարրերն անխուսափելի չեն պարզ, վոչ-կապիտալիստական փոխանակութեան պայմաններում էլ։

Փոխանակային հասարակութեան հիմնական լոզունգն այս է. «կաս—կառնես»։ Փոխանակային ակտ ունի չերկու մասնակից, և սրանցից յուրաքանչյուրի համար փոխանակային ակտը կազմված է չերկու մասից. ձեռքից հանվում է մեկ իրը և ձեռք է բերվում մյուս իրը—եկվիվալենտը։ Բայց, ինչպես արդեն

տեսել ենք վերևում, նյութերի հանրային փոխանակությունը բազմաթիվ դեպքերում համառորեն պահանջում է, վոր փոխանակային ակտի յերկու մասերի միջև ավելի կամ պակաս յերկարատև ընդհատում լինի: Ով հիմա չի առել, վոր վճարե մի վորոշ ժամանակ հետո, դառնում է **պարտապան**: Ով հիմա տվել է, վոր հետո ստանա, դառնում է **պարտատեր**

Արդյոք սրանից հետևում է, թե վարկը նույնքան հին է, վորքան և փոխանակությունն է, և արդյոք սրանից հետևվում է, թե մինչ-փողային փոխանակային հարաբերության ժամանակ, յերբ ապրանքը դեռ պարզապես փոխանակվում էր ապրանքի հետ, արդեն վարկ գոյություն ուներ իր արդի նշանակությամբ:

Վոչ յերբեք:

Ամենաշատը, վոր կարելի յե ասել անփող փոխանակության դարաշրջանների վերաբերմամբ, այն է, վոր այս դարաշրջաններում վարկի պատահական **սաղմնային ձևեր** կային:

Վարկը տնտեսական կատեգորիա յե դառնում միայն այն ժամանակ, յերբ փողը թագավորում է, և այս լինում է նախ այն պատճառով, վոր վարկը իր ձևավորումն է ստանում փողի, իբրև վճարամիջոցի, ֆունկցիայի մեջ (տես գլուխ IV): Յերկրորդ այն պատճառով, վոր վարկը բավականաչափ քանակական զարգացման հասնում է այն լայն ծավալման միջոցին, վոր փոխանակությունն ունենում է փողի շնորհիվ:

Արդյունաբերական կապիտալի ծագումից դեռ շատ առաջ վարկը կարողացել էր **փոխանակության ձևից փոխարկվել ու դառնալ շահագործման միջոց**: Վաշխառուական կապիտալը կապիտալի ամենահին ձևն է: Փոխառուական կապիտալը հավելյալ արժեքի կապիտալիստական յուրացման ամենահին ձևն է: Վարկն իբրև շահագործման միջոց իր վերջնական ձևավորումն ստանում է զարգացած կապիտալիզմի պայմաններում:

ՎԱՐԿԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Իր էությամբ վարկը նույնպես հակասական է, ինչպես յեվ ինքը՝ փոխանակային հասարակությունը: Չթի արտադրության համար, ասենք, անհրաժեշտ են բամբակ, ներկեր, մեքենաներ, քարածուխ: Այս չորս սյուները, վորոնց վրա հաստատված է չթի արտադրությունը, մասնավոր սեփականության պատնեշներով բաժանված են իրարից: Բամբակը պատկանում է պլանտատորին,

ածուխը՝ քարածխային կոմպանիային, մեքենաները՝ մանածագործարանի տիրոջն, իսկ ներկերը՝ քիմիական գործարանին:

Իսկ ինչ վերաբերմունք ունի վարկն այս պատնեշների նկատմամբ: **Մի կողմից՝ վարկը կարծես թե վոչնչացնում է մասնավոր սեփականության այս պատնեշները**: Բամբակը, քարածուխն ու ներկերն առանց կոմպենսացիայի հանձնվում են մանածագործարանի տիրոջը, վորն այս ապրանքներն ստանում է վոչ թե փող տալով, այլ վարկով: Արտադրության միջոցները, վորոնք միմյանցից անջատված էին մասնավոր սեփականության շնորհիվ, իրար են հանդիպում վարկի ոգնությամբ:

Բայց մյուս կողմից՝ վարկն ամեն կերպ անխախտ պահպանում է այն պատնեշները, վոր վոչնչացնում է ըստ յերեվութին: Վերցրածի փոխարենը **պետք է վճարել**, ինչ էլ վոր ուզում է լինի: Ավելին. վերցրածի փոխարենը պետք է վճարել անպայման վորոշ ժամկետում:

Այն փոխանակության տարերքի մեջ, վորը վոչ մի ժամկետ չի ճանաչում, վարկը համառորեն աշխատում է օրացուցայնություն (календарность) **մտցնել**: Մեր մանածագործարանի տերը՝ վարկով բամբակ ստանալով՝ ճիշտ նշանակում է վճարման ժամկետը, թեև նա բոլորովին չգիտե, թե յերբ է ծախվելու իր չիթը, և ուրեմն նա յերբ կստանա հարկավոր փողը՝ վճարումը կատարելու համար: Վարկը պարտապանին է նետում այն, ինչ վոր հարկավոր է իրեն—վարկին, ինչպես վոր յերեխաները շանը ձգում են թելի վրա անցկացրած մի կտոր միս: Շունը կուլ տված է լինում միսն, իսկ նրանք կլլածը յետ են դուրս քաշում: Վարկի հակասությունն ամենօրյա կյանքում արտահայտվում է սնանկություններով, նրանով, վոր չեն կամենում կամ հնար չեն ունենում իր ժամանակին վերադարձնելու այն արժեքը, վոր վերցրել էին վարկով: Այս հակասությունն ավելի պարզորոշ արտահայտվում է ճգնաժամերի միջոցին, յերբ սնանկությունը դառնում է կանոն, իսկ վճարումը՝ բացառություն:

Յերբ վճարումները փոխադարձաբար մարում են իրար, փողը վճարելամիջոցի դեր կատարում է յերևակայորեն: Փոխադարձաբար իրար ծածկող պարտքերի մարման ժամանակ փողի իրական մասնակցություն չի պահանջվում: Վորքան ավելի ուժեղ են զարգանում վարկային հարաբերությունները, այնքան ավելի քիչ է կանխիկ դրամ հարկավոր մուրհակները. չեկերը ևայլն վճարելու համար: Այն պատրանքն

և ստացվում, վոր իրերի ընթացքը դեպի այն և տանում, յերբ կանխիկ փող բոլորովին հարկավոր չի լինի։

ՁՈՒՏ ՎԱՐԿԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՆՔԸ։

Մի քանի բուրժուական անտեսագետներ այս յերևույթի մեջ տեսնում են մինչև անգամ ընդհանրապես փոխանակության ու մասնավորապես կապիտալիզմի հակասությունների լուծումը։ Նրանք յերազում են մի կապիտալիզմի մասին, վորում փող չի լինիլ, և վորը հիմնված կլինի զուտ վարկային սկզբունքների վրա։ Սակայն այս կարծիքը պատրանք և լոկ։ Նախ՝ փողի չքացնալու հետ կչքանա արժեչափն էլ, առանց վորի անհնարին են փոխանակային զարգացած հարաբերությունները։ Յերկրորդ՝ փոխադարձաբար միմյանց մարող պարտավորությունների շղթան կտրվում և մերթ այստեղ ու մերթ այնտեղ «հաշիվները հավասարեցնելու» բաղձանքը դառնում է կանխիկ փողի ծարավ։

«Փողի, իբրև վճարելամիջոցի, ֆունկցիան անմիջական հակասություն է պարունակում։ Վորչափով վոր վճարումները հավասարվում են իրար, փողը գործում է յերևակայորեն միայն, իբրև հաշվեփող կամ արժեչափ։ Վորչափով վոր հարկ է լինում իրական վճարումներ կատարելու, փողը հանդես է գալիս վոչ թե իբրև շրջանառության միջոց, վոչ թե լոկ իբրև վաղանցուկ միջնորդ նյութերի փոխանակության միջոցին, այլ իբրև հանրային աշխատանքի անհատական մարմնացումն, իբրև փոխանակային արժեքի ինքնուրույն կացություն կամ բացարձակ ապրանք։

Այս հակասությունն առանձին սաստկությամբ արտահայտվում է արդյունաբերական ու առևտրային ճգնաժամերի այն րոպեին, վորը կոչվում է դրամական ճգնաժամ։ Վերջինս հնարավոր է այնտեղ միայն, վորտեղ մեկը մյուսին հաջորդող վճարումների շղթան և այս վճարումները հավասարեցնելու արվեստական սիստեմը լիակատար զարգացման են հասել։ Այս մեխանիզմի ընդհանրական խախտումների ժամանակ, ինչ պատճառից էլ վոր առաջացած լինեն այս խախտումները, փողը հաշվեփողի զուտ յերևակայական ձևից հանկարծակի ու անմիջաբար փոխակերպվում և դառնում է հնչուն դրամ»... (Մարքս)։

Ընդհանրապես ասած՝ վարկը կանխիկ դրամի վերնաշենքն է միայն։ Վերնաշենքը կարող է մի քանի անգամ գերազանցել պատվանդանից, բայց վերնաշենքն առանց խարսխի հնարավոր չե։

Արդի կապիտալիստական իրականության մեջ **հարկավոր է զանազանել վարկավորման յերկու հիմնական ձև։**

1. Վարկավորումն ապրանքով (առևտրային վարկ).

2. Վարկավորումն պարապ կապիտալով։

§ 68. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՎԱՐԿ.

Հենց վոր ապրանքն արտադրված է լինում, արդյունաբերական ձեռնարկությունն անում է այն բոլորը, ինչ վոր կախված է իրենից, վորպեսզի անմիջաբար կամ մեծածախ առևտրի միջոցով իր ապրանքը հրելով դնե մանրածախ առևտրի տրամադրության տակ։ Սակայն արդյունաբերողն այս դեպքում դեմ է առնում մի արգելքի, այն է՝ առևտրականը փողի պակասություն է ունենում։ Արդյունաբերողը, վոր շահագրգռված է ապրանքների վաճառահանության մեջ, մեծածախորդին (оптовик) **վարկով** է տալիս ապրանքի այն քանակը, վորը գնելու համար մեծածախորդը կանխիկ փողի պակասություն է զգում։ Մեծածախորդն իր հերթին նույնն է անում մանրածախ առևտրականին։ Մանրածախ առևտրականը յերբեմն իր հերթին վարկ է տալիս սպառողին։ Սպառողական վարկին ամենից հաճախ դիմում են բանվորական ուժը վաճառողները, մարդիկ, վորոնք վարձու չեն աշխատում և վորոնք հարկ են ունենում վարկավորելու իրենց գնորդներին (վորչափով վոր բանվորներին աշխատավարձը վճարվում է այն բանից հետո միայն, յերբ նրանց ծախած բանվորական ուժն սպառված, գործադրված և արդեն)։ Սակայն արդյունաբերական ձեռնարկությունները միայն բանվորական ուժը չե, վոր վարկով են գնում։ Նրանք վարկից ոգտվում են նաև այն ժամանակ, յերբ հումքի, վառելիքի, ոժանդակ նյութեղենների, յերբեմն էլ նաև մեքենաների գնում են կատարում։

Վարկային պտույտի մեջ պարտքի վճարումը սովորաբար ապահովվում է մուրհակով։

Մուրհակները գրվում են հատուկ բլանկների վրա, վորոնց մուրհակատուրքը վճարված է. մուրհակները վայելում են հատուկ իրավունքներ, վորոնք չեն տարածվում սովորական փոխատուա-

վան գրութիւնների վրա (заемные письма)։ Մուրհակին վերաբերող դատական հայցն անվիճելի չի համարվում, չեթե միայն մուրհակ ավողը չի հերքում իր ստորագրութեան իսկական լինելը։ Չվճարելու դեպքում մուրհակը **բողոքարկութեան** ենթարկվում է, այսինքն չվճարելու մասին պաշտոնապես հայտնում են նոտարին, ապա և հայտարարվում է լրագրութեան ընդհանուրի։ Սովորաբար դադարեցնում են այն ֆիրմաներին վարկ տալը, որոնց մուրհակները բողոքարկված են։

ՀԱՍԱՐԱԿ ՄՈՒՐՀԱԿ։

Մուրհակը լինում է երկու տեսակ—հասարակ մուրհակ ու փոխգիր (переводный вексель)։

Ահա հասարակ մուրհակի մի օրինակ.

Մասկվա քաղաք։ 1924 թ. հոկտեմբերի 1-ին։ 50,000 վոսկե ռուբլու մուրհակ.

Հազար իննհարյուր քսան հինգ թվականի հունվարի մեկին։ «Экспортхлеб» բաժնետիրական ընկերութիւնն այս մուրհակի համաձայն պարտավոր է վճարելու Մոսկվա քաղաքում «Хлебопродукт» ակցիոներական ընկերութեանը կամ նրան, ում որ այս ընկերութիւնը կպատվիրե, հիսուն հազար ռուբլի վոսկով։

«Экспортхлеб» բաժնետիրական ընկերութիւն։
Դիրեկտոր-կարգադրիչ՝ (ստորագրութիւն)։

ՓՈԽԳԻՐ ՄՈՒՐՀԱԿ։

Փոխգիրը մուրհակի բնագիրն այսպես է լինում.

Մոսկվա քաղաք։ 1924 թ. հոկտեմբերի 1-ին։ 50,000 վոսկե ռուբլու մուրհակ։

Հազար իննհարյուր քսան հինգ թվականի հունվարի մեկին այս մուրհակի համաձայն վճարեցեք «Хлебопродукт» ընկերութեանը հիսուն հազար ռուբլի վոսկով։

«Экспортхлеб» ակցիոներական ընկերութիւն։
Դիրեկտոր-կարգադրիչ (ստորագրութիւն)։
«Центросоюз»-ին Մոսկվայում։

Ինչպես երևում է վերևում մեջ բերած օրինակներից, հասարակ մուրհակը պարունակում է վճարման խոստում, որ մեկ անձ (մուրհակատուն) անում է մի ուրիշին (մուրհակատեր)։ Իսկ փոխգիր մուրհակը պարունակում է մուրհակատուի (ստորագրողի) պատվերը մի երրորդ անձի (ստորագրող), որ նա որոշ գումար վճարե մուրհակատիրոջը (ռեմիտենտ)։

Հասկանալի չե, որ փոխգիրն ինքնըստինքյան դեռ չի **պարտավորեցնում**, որ ստրոգրողը (երրորդ անձ) անպայման վճարե։ Սա կարող է բոլորովին չճանաչել ստրոգրողին (մուրհակատուին) կամ վոչ մի հիմք չունենալ՝ նրա պատվերով վճարում անելու համար։ Այս պատճառով պետք է փոխգիրը նախապես ներկայացված լինի ստրոգրողին։ Մուրհակի համաձայն վճարում անելը ստրոգրողի համար պարտադիր է դառնում, չեթե մուրհակի վրա նա մակագրում է, թե մուրհակն ընդունում է (հոժարագիր—акцепт)։ Վերևում մեջ բերած օրինակում «Центросоюз»-ը պետք է հոժարագրե (акцептировать) մուրհակը։ Հոժարագիրը մակագրվում է մուրհակի երեսի կողմում և լինում է այս բովանդակութեամբ. «Ընդունված է» կամ «Հոժարագրված է», և ստորագրութեան։

ԱԿՑԵՊՏ։

Յերբ վարկով տրված ապրանքի փողի վճարումն ապահովելու փոխգիր մուրհակ է գործածվում, այն ժամանակ իրրև ստրոգրողի հանդես է գալիս վարկառուն։ Իսկ իրրև ռեմիտենտ նա մատնանշում է կամ իրեն կամ մի ուրիշ անձի, որին նա իր հերթին պարտավոր է վճարել։ Իրրև ստրոգրող հանդես է գալիս պարտապանը, որը հոժարագրում է մուրհակն ապրանքն ստանալիս։ Ի դեպ, մեզանում այսպիսի դեպքերի ժամանակ ավելի գործածական և հասարակ մուրհակը։

ԻՆԴՈՍՍԱՄԵՆՏ։

Մուրհակը կարող է հանձնվել մի այլ անձնավորութեան՝ ինդոսսամենտի (հանձնողագիր) միջոցով (ինդոսսամենտը հանձնողական մակագրութեուն է մուրհակի յետևի կողմում։ Ինդոսսամենտը կարող է կազմված լինել մենակ ստորագրութենից)։ Այս պատճառով էլ այն մուրհակը, որ, օրինակ, մեծածախ առևտրականն ստացել է մանրածախորդից, ինդոսսամենտի միջոցով կարող է հանձնվել գործարանատիրոջն այն ապրանքի փողի տեղ, որ ստացված է յեղել սրանից։ Մուրհակն այսպիսով շարժվում է ապրանքի շարժման հակառակ ուղղութեամբ։ Գործարանատերն իր հերթին կարող է մուրհակը վաճառել բանկին (մուրհակը զեղչման յենթարկել)։ Յերբ մուրհակի ժամկետը լրանում է, մանրածախ առևտրականն արդեն բանկին է անմիջապես վճարում մուրհակի համաձայն։ Յերբ մանրածախորդը փողը ժամանակին չի վճարում, բանկն ինդոսսամենտների հիման վրա

իրավունք ունի իր հայեցողությամբ պահանջելու, վոր վճարումը կատարև մեծածախորդը կամ թե գործարանատերը։

Վարկով կատարվող մանրածախ վաճառքի ժամանակ մուրհակները քիչ են գործածվում։ Մուրհակների փոխարեն կիրառում են գնումնացատետրեր (заборные книжки)։

§ 69. ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ ՊԱՐԱՊ ԿԱՊԻՏԱԼՈՎ.

Պարապ կապիտալները լինում են յերկու տեսակ.

1. Ակտիվ (արդյունաբերական ու առևտրական) կապիտալիստների՝ ժամանակավորապես ազատվող կապիտալներ ու

2. Անգործ կապիտալիստներից (ռանտյեներից) պատկանող կապիտալներ։

Ամենից առաջ խոսենք առաջին կետի մասին։

ՎՈՐՏԵՂԻՑ ԵՆ ՍՏԱՑՎՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՊԱՐԱՊ ՄՆԱՑԱԾ ԿԱՊԻՏԱԼՆԵՐԸ։

XIV գլխում յուրց տվինք, թե այն կապիտալը, վորն իրացվում է պրոդուկցիայի ծախելու ժամանակ, միևնույն ժամանակ չի կարող իսկույն յեվեթ ընդարձակ արտադրության հանվել, և այս էլ այն պատճառով, վոր անհամապատասխանություն է լինում արտադրության ժամանակամիջոցի ու շրջանառության ժամանակամիջոցի միջև։ Ժամանակ առ ժամանակ ազատվում է պարապ կապիտալ, և տերը չի կարողանում այնպես հարմարեցնել, վոր իր ձեռնարկության մեջ կիրառվի այս կապիտալը։ Ժամանակավորապես պարապ մնացած կապիտալի աղբյուրներից մեկն այս է։ Այնուհետև, հիմնական կապիտալն, այն է՝ շենքերը, մեքենաները և այլն աստիճանաբար են մաշվում։ Յերբ կապիտալիստը մի պարտիա ապրանք է ծախում, ստացած փողի մեջ կա վոչ միայն հումքի, ժանդակ նյութերենների, բանվորական ուժի ու այլոց գինը՝ վրան ավելացրած շահույթը, այլ և հիմնական կապիտալի մաշված մասի գինը։ Այսպես, ուրեմն, հիմնական կապիտալի մաշված մասի գինն (ամորտիզացիա) վերադառնում է կապիտալիստի գրպանն աստիճանաբար և կազմում ամորտիզացիոն ֆոնդ։ Այս ֆոնդը կուտակվում է վորոշ ժամանակի ընթացքում, իսկ հետո արդեն խոշոր դումարներով ծախսվում է հիմնական կապիտալի այս կամ այն մասը վերականգնելու վրա։ **Ձեռնարկության ամորտիզացիոն ֆոնդերը ժամանակավորապես պարապ մնացած կապիտալների մյուս աղբյուրն են։ Այնուհետև ժամանակավորապես ազատ կարող է մնալ շահույթի մի մասը, վորի դեռ կապիտալիստը չի կարողացել այն ծախսել իր**

ապրուստի վրա, գործադրել ձեռնարկությունը ընդլայնելու համար կամ թե դնել նոր ձեռնարկության մեջ։ Վերջապես պարապ կապիտալները կարող են ժամանակ առ ժամանակ ստացվել սեզոնային ձեռնարկություններում։ Այնպես էլ է պատահում, վոր ձեռնարկուն մեկ գործ լուծարքի չի յենթարկում, իսկ մյուսը դեռ բաց արած չի լինում։ Նրա կապիտալը ժամանակավորապես պարապ է մնում։

Միջնել հիմա խոսեցինք ժամանակավորապես պարապ մնացած կապիտալների մասին։

Ինչ վերաբերում է յերկրորդ կետին, այն է՝ անակտիվ կապիտալիստների կապիտալներին, ապա այս մասին հատուկ բացատրություններ տալու կարիք չկա։

ԱԿՏԻՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐՆ ՈՒ ՌԱՆՏՅԵՆԵՐԸ։

Ռանտյեն, վորը վոչինչ չի անում յեվ ապրում է իր կապիտալի տոկոսներով միայն, խիստ շատ սովորական դեմք է կապիտալիզմի յերկրներում։ Ռանտյեի վիճակը Ցրանսիայում ամեն մի ձեռնարկուի փայփայած յերազանքն է։ Յեթե միայն գործերը թույլ են տալիս, նա մոտ 50 տարեկան հասակում լուծարքի չի յենթարկում իր ձեռնարկությունը, վոր ազատ նվիրվի հաճելի պարապմունքին։

Սակայն հարկավոր է վերապահություն անել այն մասին, թե «պարապ կապիտալ» արտահայտությունը ճիշտ չէ։ Քանի դեռ փողը պարապ պառկած է, կապիտալ չէ այն, այլ մեռյալ գանձ։ Յեթե մարդ ապրի գանձի հաշվին, վերջինս կհալվի կպրծնի։ **Կապիտալիստական շահագործումը հնարավորություն է տալիս գանձը գործադրելու հատույթի աղբյուր։** Սրա համար գանձը պետք է փոխատուական կապիտալ դարձվի, այսինքն պետք է իրրև փոխատվություն հրամցվի ակտիվ կապիտալիստին, վորն այս գանձը միացնում է իր կապիտալին և նետում է պտույտի մեջ։ Ժամանակավորապես պարապ մնացած կապիտալները դառնում են ժամանակով տրվող փոխատուական կապիտալ։ Ռանտյեների կապիտալները մշտապես մնում են փոխատուական կապիտալի վիճակում։

Ակտիվ կապիտալիստը փոխատուական կապիտալի տիրոջը բաժին է հանում իր շահույթի մի մասն, իբրեվ փոխատուական տոկոս։

§ 70. ՓՈԽԱՏՈՒՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԸ.

Յերբ կապիտալիստն ինքն է հանդես գալիս իբրև արտադրության կազմակերպիչ, ապա կարող է այն կեղծ տպավորությունն ստացվել, որ կարծես թե շահույթը կապիտալիստի կազմակերպական աշխատանքի գինն է։ Կարելի չէ կարծել, որ կապիտալիստը շահույթը բանվորներից չի քամում իբրև հավելյալ արժեք, այլ հենց ինքը կապիտալիստն է ստեղծում։ Կապիտալը գեն է նետում թզենու իր վերջին տերևիկը (հանդես է գալիս բոլորովին մերկ), յերբ փոխատուական կապիտալի ձև է ընդունում։ Փոխատուական կապիտալի տերը վոչ միայն մասը մատին չի զարկում, այլ մինչև անգամ չի յել իմանում, թե կապիտալն ինչի վրա յեն գործադրել։ **Տոկոսաբեր կապիտալը իբրեվ սեփականություն ներկայացող այն կապիտալն է, որ հակադրվում է իբրեվ ֆունկցիա ներկայացող կապիտալին» (Մարքս)։**

Յերբ կապիտալը գառնում է փոխատուական կապիտալ, շահույթը տրոհվում է յերկու մասի—ձեռնարկուական շահույթի ու փոխատուական տոկոսի, իսկ քանի որ տոկոսը շահույթի մի մասն է, ապա տոկոսի նորման իբրև կանոն պետք է շահույթի նորմայից պակաս լինի։

Շահույթի նորման, ինչես արդեն գիտենք, կարգավորվում է արժեքի որենքով. կապիտալիստների ամբողջ դասակարգին բաժին հասնող շահույթի մասսան հավասար է հավելյալ արժեքի մասսային՝ հանած ռենտան, որ վճարված է լինում հողատերերին։ Շահույթի միջին նորման հավասար է տարեկան շահույթի նորմային, շահույթի, որ բաժանվում է գործող ամբողջ կապիտալի վրա։

Բանն այսպես չէ, յերբ խոսքը վերաբերում է տոկոսի նորմային,

Պարզ է, որ տոկոսի նորման այնքան մեծ է, որքան ավելի մեծ է շահույթի այն մասը, որն իբրև փոխատուական տոկոս տրված կլինի փոխատուական կապիտալի տերերին։

Բայց թե շահույթի որ մասը կգնա իբրև փոխատուական տոկոս, այս հարցն անմիջապես չի լուծվում արժեքի հարաբերություններով։ Այս առաջին հերթին կախված է փոխատուական կապիտալի պահանջից ու առաջարկից, իսկ պահանջն ու առաջարկը վորոշողն ամբողջ տնտեսական կոնյունկտուրան է իր հերթին։

Յուրաքանչյուր տվյալ դեպքում տոկոսի բարձրությունը կախված է նաև պարտապանից, վարկային գործարքի ժամկետից ու բնույթից, այլև ապահովման բնույթից։ Չնայած կապիտալիստական յերկրներում վարկի մի քանի տեսակների տոկոսի մակարդակը յերբեմն ընկնում է մինչև տարեկան 2% ու ավելի ցած [1])։

ՏՈԿՈՍԻ ՆՈՐՄԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ։

Շահույթի նորմայի անկման հետ (տես § 58) պետք է տոկոսի նորման էլ ընկնի։ Սրա պատճառը հասկանալու համար հարկավոր է ուշադրություն առնել այն, որ կապիտալիստների՝ ռանտյեների ու ձեռնարկուների բաժանվելը հատատապես սահմանված մի բան չէ։ Յեթե յենթադրենք, որ շահույթի նորման ընկնում է իսկ տոկոսի նորման անփոփոխ է մնում, ապա շահույթի նորմայի անկումից կտուժի վոչ թե ռանտյեն, այլ ձեռնարկուի կապիտալը։ Ձեռնարկուական շահույթի նորման այնքան կնկնի, որ կսաստկանա ձեռնարկուական բանակից ռանտյեի բանակն անցնելու ձգտումը. այս հանգամանքը կշտացնե փոխատուական կապիտալների առաջարկը և ուրեմն առաջ կբերե տոկոսի նորմայի անկում։

§ 71. ԿԱՊԻՏԱԼԻ ՖԵՏԻՇԻԶՄԸ.

Մենք վերևում պարզաբանել ենք արդյունաբերական կապիտալի ֆորմուլան (Փ—Ա— Արտ.—Ա¹—Փ¹)։ Առևտրական կապիտալի ֆորմուլան ավելի պարզ է՝ Փ—Ա—Փ¹։ Բայց ամենից ավելի պարզ է փոխատուական կապիտալի ֆորմուլան՝ Փ—Փ¹։ Կապիտալը ինքնաճուն (самовозрастающая стоимость) այստեղ հանդես է գալիս ամենից պարզորոշ ու ապշեցուցիչ կերպարանքով, վորովհետև այստեղ թագուն են մնում բանվորների շահագործման այն մեխանիզմի բոլոր հետքերը, որի հետևանքով արժեքն ավելանում է։

Ապրանքի ֆետիշիզմն այն է, որ արդյունքի ապրանքային ձևը, որը հանրային հարաբերությունների արտացոլումն է միայն, համարվում է իրի բնական հատկություն։ Սակայն ապ-

---

[1]) *Բայց այս յերկրներում էլ տոկոսի նորման զրամական ճգնաժամերի միջոցին հակա թռիչքներ է գործում։ Այսպես, որինակ, 1919 թվականին Նյու-Յորկում յեղավ դեպք, յերբ ամենավստահելի ապահովումով ձեռք բերած կարճատև փոխատվության տոկոսի նորման բորսայում բարձրացավ մինչև տարեկան 30%։*

րանքի ֆետիշիզմը իր բարձրագույն ավարտումն է ունենում կապիտալի ֆետիշիզմի մեջ։ Արժեքի ինքնաճումն էլ է իբրի հատկություն ընդունվում։ «Արժեք արտադրելը, տոկոս բերելը դառնում է փողի նույնպիսի հատկություն, ինչպես վոր տանձենու հատկությունը տանձ տալն է» (Մարքս)։

Պարապ նստած սեփականատիրոջ կապիտալի՝ հասույթ բերելու ունակությունը համարվում է վոչ թե կապիտալիստական հասարակության օրենք, այլ բնության օրենք։

Մարքսը մեջ է բերում բուրժուական հեղինակներից մեկի հետևյալ դատողությունը։

«Տոկոսաբեր փողն սկզբում դանդաղ է աճում. բայց վորովհետև աճման թափը շարունակ արագանում է, ուստի և մի վորոշ ժամանակ անցնելուց հետո, այս թափն այնպես է արագանում, վոր գերազանցում է ամեն մի յերևակայությունից։ Յեթե մեր փրկչի ծնվելու ժամանակ մեկ պեննի[1] տային 5%-ով ու տոկոսների տոկոսներով, ապա այս մեկ պեննին աճելով, հիմա դարձած կլիներ մի գումար, վոր ավելի կլիներ, քան այն գումարը, վոր պարունակվելիս կլիներ 150 միլիոն յերկրագնդերի մեջ, վորոնք շինված լինեյին զուտ վոսկուց։ Բայց նույն այս պեննին, յեթե փոխտրվեր պարզ տոկոսներով, նույն ժամանակամիջոցում աճելով հազիվ դառնար 7 շիլլինգ $4^1/_2$ պեննի։

Յեթե փրկչի ծնվելու ժամանակ մեկ շիլլինգ փոխ տրվեր 6%-ով ու տոկոսների տոկոսներով, ապա այս մեկ շիլլինգը շատանալով կդառնար ավելի մեծ գումար, քան կարող եր բովանդակել ամբողջ արեգակնային համակարգությունը, յերբ վերջինս դառնար մի գունդ, վորի տրամագիծը հավասար կլիներ Սատուրնի ոըբիտի տրամագծին։ Այս պատճառով պետությունը յերբեք չի կարող անխուսափելի դժվար դրության մեջ գտնվելիս լինել, վորովհետև ամենափոքրիկ խնայողությունների միջոցով պետությունը կարող է ամենակարճ ժամանակում վճարել իր ամենամեծ պարտքերն, ինչպես այս պահանջում են նրա շահերը»։

«Հեղինակն,— ասում է Մարքսը,— կապիտալը զննել է՝ ուշադրության չառնելով վերարտադրության ու աշխատանքի պայմանները և դիտել է այն իբրև ինքնագործ ավտոմատ, իբրև ինքնիրեն մեծացող հասարակ թիվ»։

---

1). Պեննին անգլիական դրամ է, վոր չորս կոպեկից մի քիչ պակաս է։

§ 72. ՖԻԿՏԻՎ ԿԱՊԻՏԱԼ.

Վորովհետև կապիտալը կապիտալիստի աչքում կարևոր է լոկ իբրև անաշխատ հասույթի աղբյուր, ուստի **կապիտալիստական տնտեսության մեջ անաշխատ հասույթի ամեն մի աղբյուր իբրև կապիտալ է դիտվում:**

ՀՈՂԻ ԳԻՆԸ ԿԱՊԻՏԱԼԱՑՈՒՄՆ Է։

Այս կարգին ամենից առաջ պատկանում է հողը։ Վերջինս, քանի դեռ սրա վրա աշխատանք չի թափված, արժեք չունի, ուստի և չի կարող իսկական կապիտալ համարվել։ Բայց վորչափով վոր հողն անաշխատ հասույթ (ռենտա) բերելու ընդունակ է, հողը գնում են և նրան փող են տալիս։ **Հողի գինը ստացվում է հողի բերած անաշխատ հասույթի կապիտալացումից։**

Ասենք թե տվյալ ժամանակում տոկոսի միջին նորման հավասար է 5-ի։ Այնուհետև յենթադրենք, վոր տվյալ հողամասը 1000 ռուբլու անաշխատ հասույթ է բերում տարեկան։ Ի՞նչ կլինի հողի գինը։ Գնորդը դատում է «յերից կանոնի» յեղանակով. տարեկան 5 ռուբլի ստանալու համար յես պետք է բանեցնեմ 100 ռուբլի։ Ի՞նչպիսի կապիտալ պետք է յես գործադրեմ տարեկան 1000 ռուբլի ստանալու համար։ Պատասխան.—յես պետք է այնքան հարյուր ռուբլի բանեցնեմ, վորքան անգամ վոր 1000-ը շատ է 5-ից։

$$X = \frac{100.1000}{5} = 20{,}000 \text{ ռուբլի։}$$

Հասույթի կապիտալացման հաշվումը (исчисление) **կատարելու համար ընդհանրապես տարեկան հասույթը բաժանում են տոկոսի նորմայով։**

Տվյալ հողամասի գինը կձգտի հասնելու հենց 20,000 ռուբլուն։ **Բայց վորչափով վոր հողի վրա աշխատանք չե թափված, հողի գինը վոչ թե իսկական, այլ ֆիկտիվ կապիտալ է։**

Այսպես, ուրեմն, ֆիկտիվ կապիտալը կապիտալացրած անաշխատ հասույթ է եյապես: Ֆիկտիվ կապիտալ են պարտատոմսերն էլ:

Այն փողերը, վորոնց համար պարտատոմսեր են ստացված, թերևս վաղուց արդեն վառոդի ծխի յեն փոխարկվել։ Բայց չնայած այս հանգամանքին՝ պարտատոմսերն իրենց տերոջն իրավունք են տալիս ստանալու մի մասը պետական հասույթների, վորոնք պետք է ամեն տարի նրան վճարվեն իբրև պարտատոմ-

սերի տոկոսներ: Յեվ յեթե պարտատոմսերը գին ունեն և կարող են ծախվել, ապա **սրանց գինը կապիտալացումն է այն հասույթի, վոր բերում են պարտատոմսերը:** Այս հատկապես պարզորոշ յերևան է գալիս այսպես կոչված պետական ռենտայի նկատմամբ, վորի մարումը պարտադիր չէ:

Հետո, **ֆիկտիվ կապիտալ են ակցիաները**, վորչափով վոր ակցիոները չի կարող պահանջել, վոր բաժնետիրական ձեռնարկությունը նրան վերադարձնե իրական կապիտալի այն մասը, վորքան ընկնում է նրա ակցիաներին: Այսպիսով բաժնետիրացման ժամանակ կապիտալը կարծես թե յերկուտակվում է: Բաժնետիրական ձեռնարկության իրական կապիտալին զուգընթաց գոյություն է ունենում ֆիկտիվ կապիտալ՝ ակցիաների կերպարանքով:

Բաժնետիրական ընկերության կապիտալը յերբեմն **յերեքտակվում է:** Այս լինում է այն ժամանակ, յերբ հատուկ ակցիոներական ընկերություն է հիմնվում ուրիշ ընկերությունների ակցիաները իր ձեռքում պահելու համար:

§ 73. ԲԱՆԿԵՐԸ.

Բանկերն այն կենտրոններն են, ուր հոսում թափվում են փոխատուական կապիտալները յեվ վորտեղից էլ բաշխվում են նրանք:

Ռանտյեների կապիտալները (ռանտյե կոչվում են այն կապիտալիստները, վորոնք գործերով չեն պարապում, այլ ապրում են կապիտալից ստացած տոկոսներով), արդյունաբերական ու առևտրային ձեռնարկությունների այն դրամական միջոցները, վորոնք ժամանակավորապես ազատ են մնացել, պետական գանձարանի պահեստի միջոցները, բանվորների խնայած գրոշներն,— այս բոլորն անմիջաբար կամ խնայողական գանձարկղերի միջոցով հոսում, թափվում են բանկերը:

ՊԱՍՍԻՎ ՈՒ ԱԿՏԻՎ ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐ:

Բանկերի ոպերացիաները լինում են յերկու տեսակ—պասսիվ (**յերբ բանկն է վարկով փող վերցնում**) **ու ակտիվ** (**յերբ բանկը փող է տալիս վարկով**):

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԵՐ:

Առաջին հերթին ծանոթանանք **առևտրական** բանկերի գործունեության հետ, վորոնք ֆինանսավորում են արդյունաբերությունն ու առևտուրը:

ԴԵՊՈԶԻՏ:

Առևտրային բանկերի պասսիվ ոպերացիաների գլխավոր տեսակը կազմում է ժամկետավոր կամ անժամկետ **դեպոզիտներ (ավանդներ) ընդունելը:** Բանկերի համար ավելի ձեռնտու յեն ժամկետավոր ավանդները, քան անժամկետները: Ժամկետավոր ավանդները վերադարձնելու համար բանկերը պետք է վորոշված ժամանակին ազատ փող ունենան: Իսկ անժամկետ ավանդները վերադարձնելու համար նրանք պետք է պատրաստ լինեն ամեն րոպե: Այս պատճառով էլ անժամկետ ավանդներն ավելի ցած են տոկոսավորվում, քան ժամկետավորները, կամ թե նրանց համար տոկոս չեն վճարում ամենևին:

ՍԵՅՖԵՐ:

Շատ բանկեր իրենց կլիենտներին հատուկ վճարով արկղեր են տրամադրում թանգագին իրերը պահելու համար (սեյֆեր): Սեյֆը սովորաբար ունենում է յերկու բանալի. մեկը պահվում է բանկում, իսկ մյուսը՝ սեյֆի վարձակալի մոտ: Հասկանալի յե, վոր սեյֆի վարձակալությունը վարկային ոպերացիա չէ. արժեքները սեյֆի մեջ ընկած մնում են, իբրև մեռյալ գանձ:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎՆԵՐ:

Ավանդների հատուկ ու շատ կարևոր տեսակն են հասարակ **ընթացիկ հաշիվները:** Բանկը վորևե անձի կամ թե հիմնարկի համար ընթացիկ հաշիվ բանալով՝ մի տեսակ պարտավորվում է վարելու նրա գանձարկղն, այսինքն ընդունելու այն վճարումները, վորոնք նրան են հասնում, և վճարումներ կատարելու այն չեկերով, վոր նա յե տալիս:

ՉԵԿ:

Չեկը պարզացրած փոխգիր մուրհակի նման մի բան է, վոր կարող է դուրս գրվել ներկայատրողի անունով և վորն առանց հոժարագրի պարտադիր է այն գումարի սահմաններում, վոր պահ տրված կա ընթացիկ հաշվով: Չեկը զորություն ունի շատ կարճ ժամկետում միայն (սովորաբար 5—10 որ): Չեկերը սովորաբար դուրս են գրվում հատուկ բլանկների վրա, վոր բանկը տալիս է տետրիկների ձևով (չեկատետրեր):

ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ԶԵՂՉՈՒՄԸ:

Առևտրային բանկերի ակտիվ ոպերացիաների մեջ առաջին տեղը բռնում է մուրհակների զեղչումը (դիսկոնտ): Ասենք թե մի վորևե Ա ձեռնարկություն իր տված ապրանքի դիմաց ստացել է, որինակ, 10,000 ռուբլու մուրհակ 3 ամիս ժամկետով: Բայց ձեռ-

նարկութիւնն սպասել չի կարող։ Նրան անհրաժեշտ է հումք գնել նոր ապրանք արտադրելու համար կամ թե աշխատավարձ վճարել, իսկ նա շրջանառութեան ազատ միջոցներ չունի։ Նա մուրհակն ուղարկում է **առեվտրային բանկ զեղչում անելու համար**[1]։ Յենթադրենք, թե տվեալ րոպէում զեղչման սակագինը հավասար է տարեկան 6%-ի։ Յերեք ամսվա ընթացքում այս կանի $1^1/_2\%$։ 10,000 ռուբլու $^1/_2$ տոկոսը կլինի 150 ռուբլի։ Նշանակում է՝ բանկն Ա. ձեռնարկութեանը վճարում է 10000—150=9850 ռուբլի[2], մենակ թե ինդոսսամենտ պահանջելով (ինչպես արդեն գիտենք, ինդոսսամենտ հարկավոր է այն դեպքի համար, երբ մուրհակատուն ժամանակին չվճարելը մուրհակի համաձայն։ Այն ժամանակ բանկն իրավունք ունի մուրհակն ուղարկելու, որ Ա.-ից գանձվի)։ Այսպիսով զեղչման համար ընդունվում են այն մուրհակները միայն, որոնք երկու ստորագրութիւն էլ ունեն (թե մուրհակատուի ստորագրութիւնն ու թե ինդոսսամենտի)։

ԼՈՄԲԱՐԴԱՅԻՆ ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐ։

Առևտրային բանկերի ակտիվ ոպերացիաների մյուս տեսակը լոմբարդային ոպերացիաներն են, այսինքն այն փոխատվութիւնները, որ ընձեռվում են գրավադրելով զանազան արժէքներ—ադնիվ մետաղների ձուլակներ, տոկոսաբեր թղթեր, բաժնետոմսեր, պահգրեր, նավբեռնագրեր, երկաթուղային բեռնագրերի պատճենագրեր և այլն։

ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎՆԵՐ։

Բանկը կարող է վարկավորել կլիենտին՝ սրա համար բանալով **հատուկ ընթացիկ հաշիվ**, որով կլիենտը կարող է մինչև մի որոշ դումարի հասնող չեկեր դուրս գրել բանկի անունով նույնիսկ այն դեպքում, եթե բանկը նրան վոչինչ պարտ չէ։

Հատուկ ընթացիկ հաշիվները բաց են անում սովորաբար ապրանքների կամ թե արժէթղթերի ապահովմամբ (ապահովմամբ հաշիվներ—онкольные счета)։ Ապահովմամբ հաշիվն ավելի հարմար[1] ու ձեռնտու է բանկին, քան սովորական լոմբարդային փոխատվութիւնը. վարկավորելու համար թուլատրված դումարը

[2] Հասկանալի է, որ բանկն ամեն պատահական մարդու համար մուրհակ չի զեղչում, այլ միայն այն կապիտալիստների համար, որոնց վստահելի է համարում։ Ամեն մի կլիենտի համար սահմանվում է «զեղչման վարկի» որոշ մաքսիմում։

[2] Այս դումարից հաճախ ելի մի փոքր դումար են հանում, այսպես կոչված պրովիզիոն դումար անվան տակ։

միանգամից չեն վերցնում բանկից, այլ աստիճանաբար, երբ ու որքան որ հարկավոր է լինում։

ՀՈԾԱՐԱԳՐԱԿԱՆ ՈՒ ՑԵՐԱՇԽԱՎՈՐՑԱԿԱՆ ՎԱՐԿ։

Բանկը կարող է կլիենտին իրավունք տալ, որ սա մինչև մի որոշ դումարի փոխգիր մուրհակներ տա բանկի վրա, և բանկն այս մուրհակները պետք է հոժարագրի։ Ով որ չեր կամենա տվյալ կլիենտի մուրհակով ապրանք բաց թողնել վարկով, բայց այս կանի հոժարութեամբ այն մուրհակի վրա վստահացած, որի վրա դրոշմված կլինի բանկի հոժարագիրը։ Ժամկետը լրանալիս մուրհակը վճարում է սովորաբար վոչ թե բանկն, այլ կլիենտը, եթե վերջինս չի սնանկացել։ Անգլիայում հատուկ հիմնարկներ կան, որոնք մասնագիտացած վարկ են տալիս հոժարագրի միջոցով. սրանք հոժարագրական գրասենյակներ են (акцептные конторы)։

Ռուսաստանում հոժարագրական վարկի փոխարեն տարածված է այսպես կոչված յերաշխավորյալ վարկը (гарантийный кредит)։ Ձեռնարկութիւնը բանկից փողի փոխարեն յերբեմն ստանում է «յերաշխավորման նամակ», որով բանկը յերաշխավորում է, թե ձեռնարկութեան արած այս կամ այն գնման դումարն ապահովաբար կվճարվի։

ԿՈՄԻՍՍԻՈՆ ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐ։

Բացի վարկային ոպերացիաներից, բանկերը կատարում են **կոմիսսիոն ոպերացիաներ** էլ։

Բանկերն իրենց կլիենտների հանձնարարութեամբ գնում և ծախում են արժէթղթեր, ընդունում են այս արժէթղթերը պահելու և վարելու, այսինքն իր ժամանակին կուպոնները կտրելու, տիրաժ դուրս եկած որիներն փոխանակելու և այլն, մուրհակն ու այլ փաստաթղթեր ընդունում են ինկասսո[1], փող են փոխադրում քաղաքից քաղաք՝ չեկեր տալով իրենց բաժանմունքների վրա կամ իրենց այն թղթակիցների վրա[2], ուր պետք է փոխադրվի փողը և այլն։ Իրրև վարձատրութիւն կոմիսսիոն ոպե-

[1] Փոխանակ, որինակ, ապրանքները վերադիր վճարով ուղարկելու, կարելի է բեռնագրի դուբլիկատն ուղարկել այն տեղի բանկն ինկասսո, ուր հղվում է ապրանքը։ Բանկը բեռն ստացողին չի հանձնում դուբլիկատը, մինչև վոր սա չի մուծում նրանից գանձվելիք գումարը։

[2] Թղթակից կոչվում են բանկային այն մյուս հիմնարկները, որոնք հարաբերութիւն ունեն տվյալ բանկի հետ։

բացիաներ կատարելու համար՝ բանկն ստանում է ամբողջ հանձնարարության արժեքի տոկոսի մի վորոշ մասն, այսպես կոչված կոմիսսիոն կամ պրովիզիոն դումար։

ԵՄԻՍՍԻՈՆ ԲԱՆԿԵՐԸ։

Վաշխառուներից տարբերվելով՝ բանկերն իրենց կլիենտներին վարկով տալիս են վոչ թե իրենց՝ բանկերի, այլ ուրիշների փողը, վոր իրենց գործի մեջ են քաշում իրենց ավանդներ։

Սակայն կան բանկեր, վորոնք իրենք են ստեղծում շրջանառության այն միջոցները, վոր նրանք վարկով տալիս են իրենց կլիենտներին։ Այսպիսի բանկերը կոչվում են եմիսսիոն բանկեր, նրանց բացի թողած շրջանառության միջոցներից ել բանկնոտ անուններ են տալիս։ Եմիսսիոն բանկերի մասին մենք ավելի մանրամասն խոսելու ենք ներքևում, վարկադրամին ու թղթադրամին նվիրած գլխում։

ՀԻՊՈԹԵԿԱՅԻՆ ԲԱՆԿԵՐ։

Առևտրային բանկերի հակառակ **հեպոթեկային բանկերը** վոչ թե կարճակեաց, այլ երկարակեաց վարկ են տալիս **հեպոթեկայով**, այսինքն անշարժ կալքի գրավադրությամբ[1]։ Հիպոթեկային վարկից ոգտվում են ամենից ավելի հողատերերը, վորոնք միջոցների պակասություն են զգում անտեսությունը վարելու համար, նաև, քաղաքի տնատերերը, վորոնք վոչ միայն արդեն կառուցած տներն են գրավադրում՝ նոր տներ շինելու համար փող ստանալու նպատակով, այլ ամենից շատ գրավադրում են հիպոթեկային բանկերի ոգնությամբ կառուցվող տները։ Սրա համար նրանք աստիճանաբար գրավադրում են շենքերի մասերն այն չափով, ինչ չափով վոր սրանք շինված պատրաստ են լինում։ Հողատերերն ել հաճախ նույն վիճակն են ունենում միայն շնորհիվ այն հանգամանքի, վոր հող են գնում հիպոթեկային բանկերի ոգնությամբ կամ ուրիշին են փոխանցում այն հիպոթեկային պարտքը, վոր արդեն ծանրանում է հողի վրա[2]։

[1] Առևտրային բանկերը չեն կարող երկարակետ փոխառություններ ընձեռել, քանի վոր նրանք թե կարճակեաց ու թե անժամկետ ավանդներ են ընդունում։

[2] Որինակ, կալքի գինը 100,000 ռուբլի է։ Նրա վրա ծանրանում է հիպոթեկային բանկին տալիք 75,000 ռուբլի պարտք։ Գնորդը հանձն է առնում բանկին տալիք պարտքը՝ լրացուցիչ կերպով վճարելով միայն 25,000 ռուբլի։

Վորովհետև հիպոթեկային բանկի վարկը համեմատաբար եժան է լինում, ուստի այս վարկի ոգնությանը դիմում է անշարժ կալքերի տերերի շատ մեծ մասը։ Ջափազանցություն չի լինի, եթե ասենք, վոր քաղաքային անշարժ կալքերի, և նշանավոր չափով նաև գյուղատնտեսական անշարժ կալքերի իրական սեփականատերերը հիպոթեկային բանկերն են։ Վորովհետև հեպոթեկային բանկերը կալքի լրիվ արժեքի չափով վարկ չեն տալիս ամենևին (սովորաբար տալիս են արժեքի 60—75 տոկոսի չափով), ուստի արժեքի մնացորդով հաճախ փոխառություններ են վերցնում մասնավոր վաշխառուներից (այսպես կոչված յերկրորդ գրավադրությամբ), արդեն շատ ու շատ ավելի ծանր պայմաններով։ Յերբ վճարումները կանոնավոր չեն կատարվում և կալքը ծախվում է աճուրդով, նախ բավարարություն ստանում են առաջին գրավատվության հիման վրա ներկայացվող հայցերն ու հետո արդեն յերկրորդ գրավատվության հիման վրա ներկայացվող հայցերը։

Առևտրական բանկերն իրենց համար հարկավոր միջոցներ հավաքում են ավանդների կերպարանքով։ Հիպոթեկային բանկերը բոլորովին ուրիշ միջոցի յեն դիմում։

ԳՐԱՎԱԹԵՐԹԵՐ։

Հիպոթեկային բանկերը բաց են թողնում հատուկ պարտագրեր (обязательства), այն է՝ գրավաթերթեր (закладные листы), վորոնք վորոշ տոկոս են բերում և վոր գնում են ռանտյեները հատուկ ստանալու համար կամ թե ձեռք են բերում չարաշահները բորսային խաղերի համար։ Բուն իսկ փոխատվությունների ժամանակ ամենից ավելի հաճախ վոչ թե փող են տալիս, այլ գրավաթերթեր, մի բան, վոր վորոշ չափով, թանգացնում է հիպոթեկային կրեդիտը, վորովհետև պարտապանը գրավաթերթերը ծախելիս գրեթե միշտ կուբրում մի բան կորցնում է։ Նա հարկադրված է լինում գրավաթերթերը սրանց անվանական գնից ցած գնով ծախելու։ Սրա փոխարեն նա վճարումներն ել կարող է կատարել վոչ թե կանխիկ փողով, այլ բանկի գրավաթերթերով։ Հիպոթեկային բանկին տալիք պարտքի մարումը (погашение) կատարվում է կամ միանգամից ժամկետի վերջում, և այս դեպքում ամեն տարի մարվում են միայն տոկոսները, և կամ թե ամեն տարի կատարվում են մուծանքներ, վորոնք

պարունակում են թե պարտքի տոկոսները ու թե ամորտիզացիոն մասը (պարտքի մի մասի մարումն)։

ՄԵԼԻՈՐԱՏԻՎ ԲԱՆԿԵՐ։ Հիպոթեկային բանկերի շարքին են պատկանում **մելիորատիվ** բանկերը, որոնք նպատակավոր փոխառություններ (целевая ссуда) են ընձեռում այնպիսի մելիորատիվ աշխատանքներ (мелиоративные работы)[1] կատարելու համար, որոնք կապված են մեծ ծախսումների հետ, այն է՝ ճահիճները չորացնելու, վոռոգում մացնելու, ճանապարհներ անցկացնելու համար և այլն։

§ 74. ԲԱՆԿԵՐԸ ԽՍՀՄ ՄԵՋ

ԽՍՀՄ բանկային սիստեմի կենտրոնում կանգնած է պետական բանկը։ Վերջինս ամենից առաջ եմիսիոն բանկ է։ Բանկն իր բաց թողած բանկնոտները (չերվոնեցները) գործադրում է արդյունաբերությանն ու առևտրին վարկ տալու համար, և այս անում է թե անմիջապես ու թե հատուկ բանկերի միջոցով։ Վերջիններս այն միջոցների մի մասը, որ սրանց հակավոր է վարկատրման համար, ստանում են Պետբանկից՝ մուրհակները սրա մոտ վերադեղչելու (переучет) միջոցով[1], ընդվորում վերադեղչման մաքսիմալ գումարը (լիմիտ), որ սահմանվում է յուրաքանչյուր բանկի համար առանձին, փոխվում է, նայած Պետբանկի միջոցների չափին, տվյալ հատուկ բանկի նշանակությանը և այլն։ Բացի սրանից, Պետական բանկը մանակցում է հատուկ բանկերի կապիտալին, իբրև բաժնետեր։ Բայց թե Պետբանկի ու թե հատուկ բանկերի համար վարկատրման միջոցների աղբյուր են ներքաշված ավանդներն ու ընթացիկ հաշիվները։ Ձեռնարկությունների այն միջոցները, որոնք ազատվում և պահվում են այս կամ այն ժամկետի համար, մուծվում են ընթացիկ հաշվով։

[1] Ասենք թե Մանածագործական սինդիկատն Արդյունաբերական բանկում դեղչել է տարեկան 10%-անոց ու 10,000 ռուբլու գումարի յեռամսյա մուրհակը։ Այսպիսով Արդյունբանկը մուրհակին վճարած է լինում 10,000—250=9,750 ռուբլի։ Արդյունբանկը, վորպեսզի այս մուրհակին աված դրամն ազատ հետագա գործառնություններ կատարելու համար, մուրհակը վերադեղչում է Պետբանկում 8%-ով։ Յեթե մուրհակն, ասենք, Արդյունբանկի պորտֆելում պառկած մնացել է մեկ ամիս, Պետբանկն արժույթից (այսինքն մուրհակում գրած գումարից) դեղչում է 133 ռ. 33 կոպ. և Արդյունբանկին վճարում է 9,877 ռ. 67 կոպ.։

Ճիշտ է, այսոր մուծած փողերը վաղը կարող են յետ պահանջվել, բայց վաղը կարող են նոր մուծանքներ էլ լինել։ Սրա հետևանքը լինում է ավելի կամ պակաս կայուն միացորդ, որը կարող է գործադրվել վարկային ոպերացիաների համար։

ՀԱՏՈՒԿ ԲԱՆԿԵՐԸ։ Մեզանում կան հետևյալ հատուկ բանկերը — Առևտր-արդյունաբերական բանկը, Արտաքին առևտրի բանկը (նախկին Առևտրական բանկը), Համամիութենական կոոպերատիվ բանկը, Գյուղատնտեսական, Կոմմունալ բանկերն ու Ելեկտրոբանկը։ Ինչպես Պետական, այնպես և միքանի հատուկ բանկեր իրենց բաժանմունքների ու գործակալությունների մեծագույն զարգացած ցանցն ունեն ամբողջ Միության մեջ։ Բացի կենտրոնական բանկերի բաժանմունքներից, մի շարք քաղաքներում կան նաև տեղական, գլխավորապես քաղաքային բանկեր։ Առ 1-ն հունիսի 1927 թ. ավանդների ու ընթացիկ հաշիվների ընդհանուր գումարը Պետբանկում, Արդյունբանկում ու Մոսկվայի քաղաքային բանկում 809 միլիոն ռուբլի չեր։

Մանր ավանդները ներքաշելու համար կա խնայողական գանձարկղերի մեծագույն ճյուղավորված ցանց (առ 1-ն ապրիլի 1927 թ. խնայողությունների ընդհանուր գումարը 149 միլիոն ռուբլի չեր)։

§ 75. ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԸ.

Վարկի մեծ պահանջ առաջադրում են կապիտալիստական յերկրների պետությունները։ Յերկրագնդիս բոլոր «կուլտուրական» ու կիսակուլտուրական յերկրներում (բացառությունն չե Հարեշատանն էլ) այսպես կոչված արտակարգ բյուջենների գլխավոր հասույթաբեր հոդվածը վաղուց արդեն պետական փոխառություններն են։

Ռուսաց գանձարանի պարտաբեռնությունը (задолженность) համաշխարհային պատերազմի սկզբին 9 միլիարդից քիչ պակաս եր, իսկ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակվա մոտերքում պարտքը շատանալով հասել եր մինչև 33 միլիարդ ռուբլի։

Պետությունների պարտքերը 1914 թվականին.

Մեծ Բրիտանիա .	7.760 միլիոն ֆունտ-ստերլինգ,
Միացյալ Նահանգներ .	21.340 միլիոն դոլլար,
Ֆրանսիա . .	316 միլիարդ ֆրանկ,
Իտալիա . .	117,4 միլիոն լիրա,
Յապոնիա . .	3.887 միլիոն իեն։

Պետական երկարատև փոխառութիւնները կնքվում են պարտատոմսեր բաց թողնելու միջոցով։ Պարտատոմսերը սակավ բացառութիւնով դուրս են գրվում ներկայացնողի նշումով։ Տոկոսները վճարվում են կուպոններով։ Որոշ ժամկետով կնքված փոխառութիւնների մարումը կատարվում է տիրաժների միջոցով (վիճակով որոշում են, թե որ համարները պետք է մարվեն)։ Տիրաժ չեղած համարների փողը վճարվում է անվանական արժեքի համաձայն, այսինքն պարտատոմսի վրա գրված գնի համաձայն [1]։

Ռենտային փոխառութիւններ։

Բայց շատ տարածված են պետական **աճող ժամկետ** կամ **ռենտային** փոխառութիւնները։ Պետութիւնը պարտավորվում է այս փոխառութիւնների տոկոսները միայն վճարել։ Ինչ վերաբերում է բուն իսկ պարտատոմսերը մարելուն, ապա պետութիւնն այս անում է այն ժամանակ միայն, երբ այդ մարումը համարում է իր համար նպաստավոր, այսինքն երբ միջոցներ է ունենում տոկոսները վճարելու բեռից իրեն ազատելու։

Այսպիսի դեպքերում պետութիւնը պարզապես գնում է իր պարտատոմսերը բորսայում՝ այնպիսի ժամանակ ընտրելով, երբ այս պարտատոմսերի գինը ցածր է, և աշխատելով այնպես անել, որ իր առաջարկով նրանց գները չբարձրացնե [2]։

Այս մարելու պարտադիր չլինելը **ռենտայի** գնորդներին չի խանգարում, որովհետև ռենտան հեշտ է բորսայում իրացնելը (փող դարձնելը), ընդ որում բորսային գինը կարող է հավասար լինել անվանական գնին և կամ թե սրանից բարձր կամ ցածր լինել։ Այս կախում ունի նրանից, թե տվյալ ժամանակում տոկոսի միջին նորման որն է. Յեթե հեշտութիւնով կարելի չէ 5% ստանալ՝ փողը հանձնելով մխանգամայն վստահելի ձեռքերի, ապա վոչվոք 100 ռուբլի չի վճարիլ 4% բերող հարյուր ռուբլանոց պարտատոմսին։ Ռանտյեն, որ իր կապիտալների համար զեռեղման վայր է փնտռում, կդատե յերից կանոնի համաձայն։

100 ռուբլի յես կարող եմ վճարել տարեկան 5 ռուբլի հասույթին,

X ռուբ յես կարող եմ վճարել այն արժեթղթին, որ տարեկան 4 ռ. հասույթ է տալիս,

X այնքան անգամ է փոքր 100 ռուբլուց, որքան անգամ 4-ը քիչ է 5-ից։

$$X = \frac{100.4}{5} = 80 \text{ ռուբլի։}$$

4%-անոց պարտատոմսի բորսային գինը մոտավորապես հենց այսքան էլ կլինի։ Ընդհակառակը, յերբ տոկոսի միջին նորման ընկնում է մինչև 3, պարտատոմսի բորսային գինը բարձրանում է մոտավորապես մինչև

$$\frac{100.4}{3} = 133\frac{1}{3} \text{ ռուբլի։}$$

Կարճատեվ փոխառութիւններ։ Կոնսոլիդացիա։

Բացի յերկարատև փոխառութիւններից պետութիւնը կնքում է նաև կարճատև փոխառութիւններ (գանձարանի կարճատև պարտագրեր)։ Վերջինս յերբեմն կոնսոլիդացիայի չենթարկվում, այսինքն վեր է ածվում յերկարատև փոխառութիւնների։ Այստեղից էլ առաջ են գալիս «կոնսոլները», այսինքն կոնսոլիդացիայի չենթարկված փոխառութիւնների պարտատոմսերը։

Յեթե պետութիւնը բարձր տոկոսային դրույքով յերկարատև փոխառութիւն կնքելով հետո հնարավորութիւն է ունենում ավելի ձեռնտու պայմաններով փող ստանալու, ապա դիմում է **կոնվերսիայի** [1], այսինքն բարձր տոկոսավորված (процентированный) փոխառութիւնը փոխարինում է մի ուրիշ փոխառութեամբ, որի տոկոսային դրույքն ավելի պակաս է։

Կոնվերսիա։

Այն ժամանակ պարտատոմսերի իրականներին հնարավորութիւն են տալիս իրենց պարտատոմսերի փոխարեն ընտրութիւն անել և ստանալ կամ նոր փոխառութեան պարտատոմսեր ու կամ թե փողն ըստ անվանագնի։

---

[1] Անվանական գնից պետք է տարբերել իրական գինը, որ կարելի է ստանալ բորսայում պարտատոմսը վաճառելով։

[2] Այն դեպքերում, յերբ պարտատոմսի բորսային գինը բարձրանում է անվանագնից վեր, մարումը, որ կատարվում է անվանագնի համաձայն, չի կարող ցանկալի լինել, և մարելու հնարավորութիւնը մի քիչ ցած է գցում արժեթղթի կուրսը։

Ընդհակառակը, յերբ պարտատոմսի բորսային գինը ցած է անվանագնից, ըստ անվանագնի մարումը պարտատոմսի իրականին վորոշ պրեմիա է տալիս։ Այսպիսի դեպքերում մարելու հնարավորութիւնը մի քիչ բարձրացնում է արժեթղթի կուրսը։

[1] Յեթե միայն հենց գլխից վերապահութիւն չի արված, թե կոնվերսիա չի լինելու։ Այսպիսի վերապահութիւն պահանջեց, որինակ, Ամերիկան, յերբ 800 միլիոն մարկի փոխառութիւն եր տալիս Գերմանիային (Դաուեսի պլանի համաձայն)։

ԽԱՂԱՐԿՈՒ ՓՈԽԱՆՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ։

Հատուկ տեղ են գրավում խաղարկու փոխառությունները, որոնց ժամանակ տոկոսների ամբողջ գումարը չէ, որ հավասար բաշխվում է պարտատոմսերի իրականների միջև։ Տոկոսների մի մասը վիճակարկվում է և բաշխվում իբրև խոշոր ու մանր շահումներ (выигрыши)։

Պետական պարտքի կազմի մեջ մտնում են այն պարտքերն էլ, որ արած են լինում ակցիոներական ընկերությունները պետության ներաշխավորությամբ։ Փոխառությունների այսպիսի ներաշխիքները պետությունը տալիս է այն դեպքերում, երբ շատ և շահագրգռված ակցիոներական ընկերության գործունեությամբ (որինակ, երկաթուղիներ անցկացնելով), կամ թե երբ ակցիոներական ընկերությունը կարող է այնպիսի ճնշում գործադրել կառավարության վրա, որն անհրաժեշտ է ներաշխիքն ստանալու համար։

ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԲՆՈՒԹԸ։

Վերևում մենք խոսեցինք **սպառողական** վարկի մասին, որից օգտվում են անմիջապես սպառման նպատակներով։ Սպառողական վարկը տարբերվում է այն վարկից, որը տրվում է արդյունաբերության ու առևտրային ձեռնարկություններին և որը գործադրվում է ապրանքների արտադրության ու շրջանառության կարիքների համար։ Բուրժուական ներկրներում էլ պետական վարկը մեծ մասամբ սպառողական բնույթ ունի։ Ավելին. վորչափով որ այս վարկն օգտագործվում է ռազմական կարիքների համար, այն **կործանարար** վարկ է. բացառություն կազմում են այն դեպքերը, երբ պետությունը վարկն օգտագործում է ներկաթուղիներ, ջրանցքներ, ճանապարհներ և այլն անցկացնելու համար։

ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՓՈԽԱՌՈՒԹՈՒՆՆԵՐԸ։

Վարկի պահանջներ առաջադրում են տեղական ինքնավարության որգաններն էլ։ Քաղաքների բարեկարգության խոշոր աշխատանքները (ջրմուղը, կանալիզացիան, տրամվայը և այլն) շատ քիչ անգամ կարող են ձեռնարկվել ու գլուխ գալ ընթացիկ հասույթների կամ թե պահեստի գումարների հաշվին։

Քաղաքները, մարզերը և այլն նմանապես այսպիսի դեպքերում բաց են թողնում պարտատոմսեր (մունիցիպալ պարտատոմսեր)։ Ներկայումս վոչ մի խոշոր քաղաք չկա, վորը յերկարատև վարկերի չդիմեր հիշյալ յեղանակով։

ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԸ ԽՍՀՄ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

ԽՍՀՄ տնտեսության վերակազմության (реконструкция) պրոցեսի միջոցին խորհրդային կառավարությունը նեպի պայմաններում չի կարող վարկի կարիք չզգալ։ Մեր բոլոր ներքին փոխառությունները մեծ աջողություններ են ունենում։

Ինչ վերաբերում է արտաքին փոխառություններին, ապա սրանք արգելքների չեն հանդիպում այն առելության մթնոլորտում, վոր համաշխարհային բուրժուազիան տածում է դեպի մեզ։

Յերկարատև վարկի նկատմամբ մենք առժամանակ պետք է հույսներս դնենք մեր սեփական ուժերի վրա միայն։

§ 76. ՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՇՎԵՀԱՐԴԱՐՆԵՐԸ.

Վարկային փաստաթղթերը (առաջին հերթին մուրհակները) հատկապես կարևոր դեր կատարում են միջազգային վճարումների ժամանակ։

Ասենք թե մի ռուսական ֆիրմա Լոնդոնում գնել է մի պարտիա գյուղատնտեսական մեքենաներ։

ԴԵՎԻԶՈՒՆԵՐԸ։

Փոխանակ սրանց դինը վճարելու համար վոսկի ուղարկելու՝ այդ ֆիրման ավելորդ ծախսերից խուսափելու նպատակով կաշխատի գնել մի մուրհակ (այս, հասկանալի չե, պետք է լիովին վստահելի լինի), վորը պետք է վճարվի Լոնդոնում համապատասխան ժամկետում։ Յեվ ահա հենց այս մուրհակը (դեվիզու) կուղարկի Լոնդոն փողի տեղակ։ Լոնդոնում դանձելիք մուրհակ կարող է ծախել մի արտածող ֆիրմա, վոր վճարումներ ունի ստանալու Լոնդոն արտածած ապրանքների համար, կամ թե ընդհանրապես մի վորևե ֆիրմա, վորն ընթացիկ հաշիվ ունի վորևե անգլիական բանկում։ Ընդհակառակը, Լոնդոնի մի ֆիրմա, վորը պետք է վճարումներ կատարի, որինակ, ռուսական ցորենի համար, Ռուսաստանում դանձելիք դեվիզու կվնտռե։

Սրա շնորհիվ վոսկու՝ յերկրից յերկիր կատարելիք փաստական առաքումները (մնիմումի յեն հասցնում։

Պարզ է, վոր ավյալ յերկրում գանձելիք դեվիզուների պահանջն այնքան ավելի շատ կլինի, վորքան ավելի շատ վճարում-

ներ և ունենում ստանալու ավյալ յերկիրը, և այս դեվիզուներն այնքան ավելի քիչ քանակությամբ կառաջարկվեն, որքան ավելի քիչ վճարումներ կունենա ավյալ յերկիրը հատուցելու մյուս յերկրներին։ Յեթե, որինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգներին մյուս յերկրները պետք և մեծամեծ գումարներ վճարեն և յեթե միևնույն ժամանակ մյուս յերկրներն Ամերիկայից ստանալիք վճարումներ շատ քիչ ունենան, ապա պարզ է, որ Նյու-Յորկում գանձելիք դեվիզուներ գնել ցանկացողները շատ կլինեն, իսկ բուն իսկ այս դեվիզուները քիչ կճարվեն շնորհիվ այն հանգամանքի, որ Ամերիկայի պարտաբեռնությունը քիչ յեղած կլինի։ Միացյալ Նահանգների ակտիվ վճարային բալանսի պատճառով (այսինքն այն պատճառով, որ Միացյալ Նահանգներն ավելի շատ վճարումներ կունենան ստանալու մյուս յերկրներից, քան ընդհակառակը) Նյու-Յորկում գանձելիք մուրհակների կուրսը կբարձրանա։ Ընդհակառակը, ավյալ յերկրում գանձելիք մուրհակների կուրսն ընկնում է, յերբ պասսիվ վճարային բալանս է լինում։

ՎՃԱՐԱՅԻՆ ԲԱԼԱՆՍԸ։

Ապրանքների ներմուծման ու արտածման փոխհարաբերությունից (այն յերկրները, որոնց իրենց ներմուծածից ավելի գումարով են ապրանք արտածում, ունենում են առևտրային ակտիվ բալանս, իսկ ընդհակառակը, յերբ ներմուծումը գերազանցում է արտածումից, առաջ է գալիս պասսիվ առևտրային բալանս)։ Սակայն Յեվրոպայի ամենահարուստ յերկրները պատերազմից առաջ յերկար ժամանակ ունեցին պասսիվ առևտրային բալանս ու սրան զուգընթաց՝ ակտիվ վճարային բալանս։

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱԼԱՆՍԸ։

Բանն այն է, որ յերկիրը կարող է ստանալիք փող ունենալ ոչ միայն այն ապրանքների փոխարեն, որ ինքն արտահանել է, այլ և փող ստանալ իբրև փոխառությունների տոկոսային ու մարողական վճարումներ (процентные и погасительные платежи) ու իբրև արտածած ձեռնարկուական կապիտալի շահույթ։

«ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԱՐՏԱԾՈՒՄԸ»։

Յերկրի վճարային բալանսը լավացնում են այն գումարները, որոնք նրան հասնում են մատուցած տրանսպորտային ծառայությունների փոխարեն (ծովային փոխադրածախս—

морской фрахт)։ Այս հոդվածը հատուկ նշանակություն է ունեցել Անգլիայի վճարային բալանսի մեջ, Անգլիայի, որը վիթխարի առևտրային նավատորմ ունի։ Այնուհետև յերկրի վճարային բալանսը լավացնում են յերկրից հեռացած վտարանդիների այն փողերը, որ նրանք ուղարկում են հայրենիք, նաև այն փողերը, որ ուղարկվում են կուրորտային հիվանդներին ու արտասահմանից յեկած ճանապարհորդներին և այլն։

Իբրև որինակ բերենք Անգլիայի վճարային ու առևտրային բալանսները 1924 թվականի ընթացքում։

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱԼԱՆՍ

Ներմուծումը

	Միլիոն ֆունտ ստերլինգ
Ապրանքներ	1279,8
Թանգագին մետաղներ ձույլ վիճակում ու իբրև դրամ	49,7
Ադամանդներ	8,4
	1337,9

Արտածումը

Ապրանքներ	935,5
Թանգագին մետաղներ ձույլ վիճակում ու իբրև դրամ	61,8
	997,3
Ներմուծումը շատ է արտածումից	340,6

«Անտեսանելի արտածումը»

Նավագնացության հասույթներ	130
Արտասահմանում ունեցած կապիտալների հասույթներ	185
Կոմիսիաներ	40
Մնացած հասույթներ	15
	370
Ապրանքների ու ձույլերի ներմուծման՝ արտածումից գերազանցելու տարբերությունը	341
Մնացորդ	29

Բուն իսկ փոխառություններն այն տարում, յերբ նրանք տրվում են, ինչպես և կապիտալի արտածման ամեն տեսակի այլ

ձևերը պետք է վատացնեն վարկատրող չերկրի վճարային բալանսը և լավացնեն փոխառուբյուն ստացող չերկրի բալանսը։ Սակայն իրականում փոխառուբյունների փոդով մեծ մասամբ վճարում են այն պատվերների գինը, վորոնք պատվիրված են վարկատրող չերկրում, կամ թե նախկին փոխառուբյունների տոկոսներն ու նրանց վերաբերող այլ մուծանքները։

Այսպիսով գործնականում այսպես թե այնպես վերացվում են վճարային բալանսին սպառնացող այն վտանգները, վորոնք կապված են փոխառուբյուն տալու հետ։

ՎՈՍԿՅԱ ԿԵՏԵՐ։

Բանի դեռ չերկրում շրջանառուբյան մեջ չեղածը լիարժեք վոսկեդրամն է ու վոսկով մանրելի բանկնոտներն են, այս չերկրի մուրհակի կուրսը կարող է վոսկե պարիտետից բարձր կամ ցածր լինել այնքան միայն, վորքան նստում է վոսկին ուղարկելը։ Որինակի համար առնենք Լոնդոնում պանձելիք մուրհակը։ Ռուս վաճառականին, վորը վճարելիք ունի Լոնդոնում, ինչի՞ համար է հարկավոր Լոնդոնի մուրհակը։ Նրա համար, վոր ազատվի վոսկին ուղարկելու ծախսերից։

Պարզ է, վոր նա պատրաստ կլինի մուրհակ գնելու այն դեպքում միայն, չերբ այս գնելը նրան վորևե ոգուտ է խոստանում։ Իսկ չեթե պարիտետից բարձր չեղած գումարն ավելի չէ, քան կնստի վոսկին ուղարկելն, ապա մուրհակ գնելու գործողուբյունը փոխանակ ոգուտ տալու, նրան վնաս կհասցնի։ Նա կդերադասի Լոնդոն պարզապես վոսկի ուղարկելը։ Մյուս կողմից մուրհակ ծախողն էլ չի կամենա ավելի կորուստ ունենալ, քան կարժենա Լոնդոնից վոսկին ստանալը։ Ինչո՞ւ է նա մուրհակը ծախում՝ փոխանակ մուրհակն ուղարկելու Լոնդոնի վորևե բանկի, վոր այս բանկը փողը գանձե նրանով (ինկասո անելու համար)։ Նա մուրհակը ծախում է այն պատճառով, վորովհետև բանկը վոսկին ձրի չի ուղարկի, այլ այս կանի վորոշ հանուրդ ստանալով։ Պարզ է, վոր չեթե տեղում մուրհակը ծախողին մեծ հանուրդ (вычет) է սպառնում, նա այս չի հոժարի անել։

Այս կանոնը կոչվում է **վոսկե կեսերի** կանոն. մուրհակի կուրսը չի կարող վոչ բարձր ու վոչ էլ ցածր լինել այն կետերից, վորոնցից այն կողմ արդեն ձեռնտու չի վոսկին ուղարկելը։

Այլ բան է, չերբ չերկիրն ունի թերարժեք փողի կամ թղթադրամի սիստեմ։ Այն ժամանակ մուրհակային կուրսերը կարող են պարիտետից շատ ցածր ընկնել, մի չերևույթ, վոր ներկայումս

նկատվում է բոլոր չերկրների վերաբերմամբ, բացի Հյուս.-Ամեր. Միացյալ Նահանգներից, Շվեյցարիայից, Շվեդիայից ու մասամբ էլ Անգլիայից։

Պարիզում դանձելիք մուրհակի կուրսը վոսկե պարիտետից 5 անգամ ավելի ցած եր ընկել (1927 թ. հուլիսին)։ Բանի դեռ Ֆրանսիայում վոսկե շրջանառուբյուն կար, վոսկե կետերի որենքն եր գործում, իսկ այս կետերի արանքում Պարիզի մեջ դանձելիք մուրհակի կուրսը տատանվում եր, նայած Ֆրանսիայի վճարային բալանսի կացուբյանը։ Այժմ չերբ նշանակուբյունից չելել է վոսկին, չքացել է վոսկե կետերի որենքն էլ։ Բացի վճարային բալանսից, Պարիզի մուրհակների կուրսի վրա սկսել է ազդել մի պատճառ էլ, այն է՝ Ֆրանկի արժեզրկվելը բուն իսկ Ֆրանսիայում։

Մուրհակային կուրսերը չերբեմն թռիչքներ են գործում վեր ու վայր, նայած այն իրողուբյուններին, վորոնք **ապագայում** կարող կլինեն ազդել չերկրի արժույթի վրա. այս իրողուբյունները կարող են լինել՝ պատերազմի կամ հեղափոխուբյան սպառնալիքը, խոշոր գործադուլները, բերքի վատ հեռանկարների բացահայտվելը, տարերային աղետները։

ՓՈՂԻ ԿՈՒՐՍՆ ՈՒ ԴՆՈՂԱԿԱՆ ՈՒԺԸ։

Մուրհակային կուրսերից ուղղակի կախում ունի մեր չերկրի փողն, այսինքն սրա արտաստմանական գինը։ Փողի՝ չերկրից դուրս ունեցած կուրսը չպետք է շփոթել չերկրի ներսում ունեցած գնողական ուժի հետ։ Փողի կուրսը կախում ունի մուրհակային կուրսից։ Փողի գնողական ուժը կախում ունի ներքին շուկայի կացուբյունից ու բաց թողած փողի քանակից (չպետք է մոռանան անենք, վոր խոսքը թերարժեք փողի կամ թե թղթադրամի մասին է)։

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԵՄՊԻՆԳԸ։

Չերբ թղթադրամի կամ թե թերարժեք փողի կուրսն ընկնում է նրանց գնողական ուժից ցած, հնարավոր է լինում այսպես կոչված արժութային դեմպինգի չերևույթը։ Արժութային դեմպինգը նկատելի չեր համաշխարհային պատերազմից հետո ցածր արժույթ ունեցող բոլոր չերկրներում, վորտեղ արդյունաբերուբյունը կործանված չեր։ Արժութային դեմպինգն ամենից ավելի սուր կերպարանքով նկատելի չեր Գերմանիայում։ Փոխանակ իր հայրենիքում գնելու մեռաղ իրեր, որինակ, անգլիացուն ավելի ձեռնտու չեր իր փունտ-

ստերլինգներով գերմանական մարկեր գնել և այս մարկերով նույն մետաղե իրերը գնել Գերմանիայում։

Մարկի անկման հետևանքով գերմանական ապրանքները մի ժամանակ հեղեղել էին բոլոր շուկաները՝ սպառնալիք ստեղծելով անգլիական ու ամերիկյան արդյունաբերության համար։

Ցածր արժույթ ունեցող յերկրների արդյունաբերության ծաղկելը կատարելապես նման է թոքախտավորի կարմրաթեմ լինելուն։ Առանձին կապիտալիստների հարստացնելով՝ արժութային դեմպինգն ուժասպառ է անում յերկիրը՝ սրա իրական հարստությունները արտասահման հանելով։

ԴԵՎԻԶԱՅԻՆ ՔԱՂՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։

Շահագրգռված պետությունները մուրհակային կուրսն ու ընդամին փողի կուրսն էլ կայունացնելու համար (այսինքն վորոշ մակարդակի վրա հաստատ պահելու նպատակով) դիմում են դեվիզային քաղաքականության, այսինքն սկսում են դեվիզները գնել այն ժամանակ, յերբ սրանց կուրսն սկսում է ընկնել, և դեվիզներ ծախել այն միջոցին, յերբ ժամանակն ավելի բարենպաստ է։ Հասկանալի է, վոր կուրսի կատաստրոֆիկ անկման միջոցին դեվիզային քաղաքականությունն անզոր է լինում։

§ 77. ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Մինչև այժմ մենք ծանոթացանք փոխատուական կապիտալի զորահավաքման յերկու յեղանակի հետ, այն է՝ յերբ այս զորահավաքը կատարվում էր յերկու ձևով՝ ա) բանկային ավանդային գործառնության ձևով ու բ) պարտագրեր (պարտատոմս, գրավաթերթեր) ծախելու միջոցով։

Ներքաշվող կապիտալի փոխատուական բնույթն այս դեպքում վոչնչով սքողված չէ։ Գործարքը վոչ միայն տնտեսապես, այլ և իրավաբանորեն կրում է փոխատվության բնույթ։ Այն հաստությունը, վոր այսպիսի դեպքերում բերում է փոխատուական կապիտալը, կոչվում է իր իսկական անունով, այն է՝ նրան ատում են տոկոս։

Սակայն նորագույն կապիտալիզմի մեջ չափազանց կարևոր նշանակություն ունի փոխատուական կապիտալների զորահավաքման մյուս ձևն էլ, այն է՝ յերբ այս կապիտալները զորահավաքման են յենթարկում **բաժնետիրական** *կապիտալների ձևով։*

Կապիտալիստական ամենախոշոր ձեռնարկությունները պատկանում են ակցիոներական կամպանիաներին։ Յեվ այս զարմանալի չէ։ Վերջին դարի տեխնիկական առաջադիմությունն այնպիսի ձեռնարկուական հնարավորություններ է հրապարակ հանել, վորոնք գլուխ բերելու համար առանձին կապիտալիստների կապիտալները չեյին կարող բավականացնել. այսպիսիք եյին, որինակ, յերկաթուղիները անցկացնելը, նավագնացության գծեր ստեղծելը, ջրանցքներ փորելը և այլն։ Բանից դուրս յեկավ, վոր կապիտալի զուտ վարկային զորահավաքումը դեռ բավական չէ այս նպատակի համար։ Ձեռնարկության ակցիոներական ձևը, վոր վաղուց արդեն Յեվրոպայում հայտնի յեր, հատկապես կենսական դարձավ։ Նորագույն կապիտալիզմի պայմաններում **ակցիոներական ընկերության** *գլխավոր պատճառները սրանք են.*

1) Արդեն մատնանշված այն **հնարավորությունը**, *վոր համեմատաբար ավելի հեշտ է լինում* **մեծ կապիտալներ զորահավաքել ձեռնարկությունը հիմնելիս**։ *Ընդ վորում այն կապիտալիստները, վորոնք իրենց փողը դրել են ակցիոներական ձեռնարկության մեջ, կարող են այդ փողն արագ յետ առնել՝ բորսայում ակցիաները ծախելով։*

2) **Այն հնարավորությունը**, *վոր ամեն անգամ կարիք յեղած դեպքում համեմատաբար* **ավելի արագ կարելի յե լրացուցիչ կապիտալներ ճերհավել**՝ *լրացուցիչ ակցիաներ ու պարտատոմսեր բաց թողնելով։*

3) **Այն հնարավորությունը, վոր յերկար ժամանակ կարելի չե դիմանալ ու կանգուն մնալ առանց շահույթի**։ *Միանձնյա ձեռնարկուն, յերբ շահույթ չե առնում, իր կապիտալն է ուտում։ Ակցիոներական ընկերությունը պարզապես դադարեցնում է ակցիոներներին շահույթ (դիվիդենդ) տալը։*

Այս բոլորի շնորհիվ ձեռնարկության ակցիոներական ձևը տարածվել է արդյունաբերության ու առևտրի բոլոր ասպարեզներում։ Հաճախ նույնիսկ մենատիրական ձեռնարկությունները թագնվում են ակցիոներական ընկերությունների դիմակի տակ։

§ 78. ԿԱՊԻՏԱԼԻ ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ ՁՈՐԱՀԱՎԱՔՆ ԻՐԵՆՑ ՎԱՐԿԻ ՁԵՎԸ.

ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՁԵՎԸ։

Ակցիոներական ընկերութիւնները քննարկելու ժամանակ պետք է խստիվ տարբերել նրանց իրավաբանական ձևն ու տնտեսական բովանդակութիւնը։

Իրենց իրավաբանական ձևով ակցիոներական ընկերութիւնները հարում են ընկերութիւններին (товарищество)։ Ակցիոներական ընկերութեան հիմնադիրները ձեռնարկութիւն սկսելիս բաց են թողնում վորոշ քանակութեամբ փայատիրոջեր, այսինքն ակցիաներ։ Վերջիններս ծախվում են վորոշ գնով։

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԴԻՎԻԴԵՆԴ։

Պետք է տարբերել ակցիայի **անվանական** գինն, այսինքն այն գինը, վոր նշանակված է նրա վրա, նրա բացարկման գնից, այսինքն այն գնից, վորով ակցիան իրապես ծախվում է բացարկի ժամանակ (հետագայում, յերբ ակցիան բորսա չի ընկնում, նրա բորսային գինը կամ կուրսը քիչ անգամ է նույնանում նրա անվանական կամ բացարկային գնի հետ)։ Այն գումարը, վոր գոյանում է ակցիաները վաճառելուց, կազմում է ընկերութեան **հիմնական կապիտալը** [1]։ Այս կապիտալը պետք է դրվի այն ձեռնարկութեան մեջ, վոր մտադրվել են հիմնել։ Ստացված շահութիւը պետք է կանոնի համաձայն իրրև դիվիդենդ հավասար մասերով բաշխվի ըստ ակցիաների թվի, բացի մի վորոշ մասից, վոր փոխանցվում է պահեստի կապիտալի մեջ։ Բաժնետերերն իրավաբանորեն ձեռնարկութեան լիիրավ տերերն են։ Ակցիոներների ընդհանուր ժողովն ընտրում է ընկերութեան խորհուրդ ու վարչութիւն, բաշխում է շահութիւը, նշում է ձեռնարկութեան գործունեութեան գիծը և այլն։

Իրավաբանական տեսակետից այս է պատկերը։

Բոլորովին այլ է պատկերն իրականում։

Ակցիոներների ընդհանուր ժողովներում հարցերը վճռվում են վոչ թե կենդանի ձայների մեծամասնութեամբ, այլ ակցիաների մեծամասնութեամբ։ Այս հանգամանքի շնորհիվ **ըզգիաուր**

[1] Այս բաժանումը չպետք է շփոթել այն բանի հետ, յերբ ձեռնարկութեան կապիտալն է բաժանվում հիմնականի ու շրջանառուի։

ԱԿՏԻՎ ՈՒ ՊԱՍՍԻՎ ԱԿՑԻՈՆԵՐՆԵՐԸ։

ժողովներում միշտ իշխում է ավելի շատ ակցիաներ ունեցող խոշոր բաժնետերերի փոքրաթիվ խումբը։ Մեծ մասամբ խոշոր ակցիոներներ և տեր ու տիրականութիւն անողներ հանդիսանում են նախկին հիմնադիրները։ Մանր բաժնետերերը տեսնելով իրենց ազատութիւնն՝ սկսում են բոլորովին կրավորաբար վերաբերվել ընկերութեան գործերին։ Հզորներին հենց միայն այս էլ հարկավոր է։ Նրանք իրենք իրենց ընտրում են ընկերութեան խորհրդի կամ վարչութեան անդամ, իրենց կարծեցյալ աշխատանքների համար իրենց նշանակում են բարձր ռոճիկներ ու տանտյեմաններ (այսպես է կոչվում շահութեի այն մասը, վոր բաժին են հանում ծառայողներին) և ընդհանրապես գործը վարում են վոչ այնպես, ինչպես ձեռնտու չե ընկերութեանն, այլ այնպես, ինչպես այս իրենց է ձեռնտու։

Այսպիսով ձեռնարկութեան գործերի վրա ունեցած իրենց իրական ազդեցութեան աստիճանի համաձայն **շարքային բաժնետերերը հանգիսանում են վոչ թե ակցիոներական ընկերության սեփականատերերն, այլ կարծես թե նույն ընկերության վարկատուներ։** Սրանց հասույթը (դիվիդենդը) նմանապես իր չափերով ավելի մոտենում է տոկոսին, քան շահութեին։

Թե դիվիդենդի նորման վորքան է հակվում վոչ թե շահութեի նորմայի կողմն, այլ տոկոսի նորմայի կողմն, այս յերևում է հետևյալից։ 1913 թվականին պետական բանկի՝ յեռամսյա մուրհակների զեղչման միջին տոկոսը հավասար եր 6-ի։ Նույն տարում դիվիդենդի ու ակցիաների բորսային արժեքների հարաբերութիւնն այսպես եր.

	1913 թվականի մինիմալ կուրսը.	Դիվիդենդ	%
Բրյանսկի գործարանների ընկ. . .	170	8	4,70
Դոնեց.-Յուրևսկ. մետաղ. ընկ. . .	225	16	6,28
Կալոմ. մեքենաշին. գործարանի ընկ.	138	9	6,52
Մալցևսկի գործարան. ընկ. . . .	255	13,50	5,30
Մոսկվայի Չեմսով. բանկ . . .	780	46	5,89
Պալտավայի Չեմսով. բանկ . . .	560	36	6,43

Իհարկե, ակցիոների ու վարկատուի նմանութիւնը պետք է վոչ թե բառացի հասկանալ, այլ ընդհանուր հեռևանքների ի-

մասով։ Ակցիոներական ընկերությունն ունենում է իսկական վարկատուներ էլ։ Յերբ բանից չերևում է, որ հիմնական կապիտալն անբավարար է, ընկերությունը կարող է ակցիաների լրացուցիչ բացարկ անել։ Սակայն ակցիոներական ընկերություններն այսպիսի դեպքերում — ամեն քայլափոխում դիմում են վոչ թե ակցիաներ, այլ պարտատոմսեր բացարկելու միջոցին։ Ակցիաներից տարբերվելով՝ պարտատոմսն իրավունք է տալիս ստանալու մի վորոշ տոկոս, վորը պետք է վճարվի, ինչ ուզում է լինի, այնինչ դիվիդենդ տրվում է այն տարիներում միայն, յերբ շահույթ է ստացվում։ Շահութաբեր տարիներում ավելի ձեռնտու չեն բաժնետոմսերն, իսկ վատ տարիներում ավելի ձեռնտու չեն պարտատոմսերը։ Շատ անձեռնտու չեն լինում պարտատոմսերն ինֆլյացիայի դեպքերում։ Պարտատոմսերը փաստորեն արժեզրկվում են, ինչպես և այն փողերը, վորոնցով նշանակված են լինում նրանք, ու այն հաստատագրած (фиксированный) հասույթը, վորն ստանալու իրավունք են տալիս նրանք։ Իսկ բաժնետոմսերը, վորոնք վոչ թե հաստատագրած, այլ շահույթից կախումն ունեցող հասույթ են տալիս, կարող են բոլորովին չարժեզրկվել ինֆլյացիայի դեպքում։ Վերջապես պարտատոմսերը ժամկետի լրանալուց հետո պետք է վճարվեն։ Իսկ ակցիաների համար ստացած փողը վերադարձնելու հարկ չկա։

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ։

Սակայն պ՛ետք է ասել, վոր ինչպես ակցիոներներն, այնպես և պարտատոմսերի իրականները միևնույն միջավայրից են զորակոչվում։

Սրանք մեծ մասամբ միևնույն ռանտյեներն են։ Վերջիններս սովորաբար աշխատում են իրենց համար «համակցած պրտֆոլիո» (комбинированный портфель) կազմել, այսինքն իրենց կապիտալը դետեղել մասամբ ակցիաների մեջ, մասամբ էլ պարտատոմսերի մեջ այն նպատակով, վոր ոգտված լինեն թե առաջինների ու թե յերկրորդների ձեռնտու կողմերից [1]։

Այն կապիտալը, վոր դրվում է ակցիոներական ձեռնարկության մեջ, կարծես թե կրկնապատկվում է։ Իսկական կապիտալը (շենքերը, մեքենաները, հումքը և այլն) միում է վարչության տրամադրության տակ։

[1] Վերջին ժամանակներում շատ տարածվում են այսպես կոչված «փոխարկելի» պարտատոմսերը։ Այսպիսի պարտատոմսերն իրական ցանկությամբ կարող են փոխարկվել ակցիաների

Ակցիոներների տրամադրության տակ են դրվում նույն կամ ավելի մեծ գումարի ֆիկտիվ կապիտալ ակցիաների կերպարանքով։ Յերբեմն մի ամբողջ շարք բաժնետիրական ընկերությունների ակցիաների իրականության հատուկ նպատակով հիմնվում են նոր ակցիոներական ընկերություններ (տես ներքևում եջ 268 Նյու-Յորկի քաղաքային յերկաթուղիների որինակը)։ Նորից ակցիաներ, նորից ֆիկտիվ կապիտալ։ Տվյալ դեպքում կապիտալն արդեն չեռապատկվում է։

Բաժնետոմսի փաստական (բորսային) գինը կախումն ունի վոչ թե ձեռնարկությանը պատկանող իրական կապիտալի չափերից, այլ դիվիդենդի ու տոկոսի դոյություն ունեցող նորմայի չափից՝ սրա վրա գալով ակցիայի համար մի վորոշ հավելուրդ (надбавка) ռիսկի փոխարեն։

§ 79. ՀԻՆՄԱԴՐԱՅԻՆ ՇԱՀՈՒՅԹԸ.

Քիկտիվ կապիտալը, վորը մարմնացած է ձեռնարկության բոլոր ակցիաների մեջ, միտում ունի ավելի մեծ գումար լինելու, քան ձեռնարկության մեջ գտեղված իսկական կապիտալը։ Յեվ իրոք, ակցիոներական ընկերության շահույթը, ինչպես և ամեն մի այլ ձեռնարկության շահույթ, ձգտում է հասնելու շահույթի միջին նորմային [1]։ Այնինչ ակցիաների գինն այն շահույթն է, վորը կապիտալացվում է տոկոսի միջին նորմայի հիման վրա, և տոկոսի այս միջին նորման, իհարկե, շատ ավելի քիչ է շահույթի միջին նորմայից։ Առնենք թվերով մի որինակ։

Հիմնվում է մի ակցիոներական ընկերություն գործարան գնելու և շահագործելու նպատակով։ Գործարանի տերերը նրա համար պահանջում են 1,000,000 ռուբլի։ Յենթադրենք, վոր շահույթի միջին նորման=10-ի, իսկ տոկոսի միջին նորման=5-ի։ Յեթե գործարանը շահույթը բաշխում է միջին նորմայից վոչ պակաս չափով, դիվիդենդի ընդհանուր գումարը տարեկան 100,000 ռուբլուց պակաս չի լինիլ։ Այս հասույթը 5%-ով կապիտալացման չենթարկվելով՝ տալիս է 2,000,000 ռուբլու ֆիկտիվ կապիտալ։

[1] Մենք նկատի ունենք այն ժամանակաշրջանը յերբ, ձեռնարկությունների ակցիոներական ձևը լայն չափերով տարածվել է։ Պարզության համար մենք այստեղ չենթադրում ենք, վոր ամբողջ շահույթը բաշխվում է բաժնետերերի միջև, մի բան, վոր իրականում չի լինում։

Ֆիկտիվ կապիտալն իսկական կապիտալից կրկնապատիկ ավելի չե։ **Ֆիկտիվ ու իսկական կապիտալի տարբերությունը (մեր որինակում մեկ միլիոն ռուբլի) հիմնագիրները վորոշ ճարպիկություն ունենալիս կգնեն իրենց գրպանը իբրեվ հատուկ հիմնագրային շահույթ։**

Իբրև որինակ բերենք Նյու-Յորկի «Մետրոպոլիտեն տրակշոն կամպանի»-ի պատմությունը։ Այս ընկերության հզորները Նյու-Յորկի զանազան յերկաթուղիները գնելու նպատակով (այս յերկաթուղիներն այն ժամանակ մեծ մասամբ ձիաքարշ ելին դեռ) 1,2 միլիոն դոլլարի փոխարեն ղորահավաքեցին 8,2 միլիոն դոլարի ակցիոներական կապիտալ։ 7 միլիոն ռուբլու զուտ շահույթը հզորները դրին իրենց գրպանը։ Յերբ 1894—1895 թ. թ. հարկ յեղավ մետրոպոլիտենի մեջ ընդգրկել ելի յերկու գիծ, վորոնք ընդհանուր առմամբ արժելին 3 միլիոն դոլլար, ընկերությունը իր ակցիոներական կապիտալը մեծացրեց 8,3 միլիոն դոլլարով ու պարտատոմսային կապիտալը՝ 8 միլիոն դոլլարով։ Ավելցուկը, վոր 13 միլիոն դոլլարից մի բան ել շատ եր, ելի հզորներին բաժին յեղավ։

ՀԻՄՆԱԴՐԱՅԻՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԻՐԱՑՄԱՆ ՑԵՂԱՆԱԿՆԵՐԸ։

Հիմնադրային շահույթի իրացնելուն մեծ մասամբ ոգնում է այն բանկը, վորը հանձն է առնում ակցիաների եմիսիան։ Այսպիսի դեպքերում ակցիաները բացարկվում են ձեռնարկության իրական արժեքի գումարի չափով։ Բանկի միջոցով, վորն ամենից հաճախ լինում է հիմնադիրներից մեկը, հիմնադիրներն իրենք գնում հավաքում են բոլոր ակցիաներն անվանական գնով, իսկ հետո արդեն իրենք ծախծխում են բարձր գնով, մի գին, վոր գոյանում է բարձր դիվիդենդի շնորհիվ կամ սրա ակնկալությամբ։

Ակցիաների իրական կուրսի ու անվանական կուրսի տարբերությունը բաժին է ընկնում հիմնադիրներին իբրև հիմնադրային շահույթ։

Հիմնադրային շահույթը յուրացնելու ավելի պակաս որինական յեղանակներ ել կան։ Ակցիաները բացարկվում են ֆիկտիվ կապիտալի չափով, իսկ ֆիկտիվ կապիտալի՝ իրական կապիտալից գերազանցող ավելցուկը հիմնադիրները հափշտակում են զանազան մեքենայությունների միջոցով։ Գնված գույքն ու ստացված կոնցեսիաներն ընկերության վրա յեռապատիկ թանգ են հաշվում ևայլն։

ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ «ԴԵՄՈԿՐԱՏԱՑՈՒՄԸ»։

Մի քանի բուրժուական տնտեսագետներ ժամանակին ասել են, թե բաժնետիրացումը (акционирование) կապիտալի դեմոկրատացումն է։ Չե՞ վոր վոչ միայն կապիտալիստն, այլ և բանվորը կարող են ակցիա գնել։ Անգլիայում հոտուկ տարածում են ունեցել ակցիանեբի մանր կուպյուրանները[1], վորոնց գինը մեկ ֆունտ սաերլինգ է։

Իրականում բաժնետիրացումը միանգամայն հակառակ հետևանքների յե հասցնում։ Բաժնետիրացումը նախ այն հետևանքին է հասցնում, վոր ակցիոներների ամբողջ մասսայի կապիտալների վրա ունենալիք իշխանությունը փաստորեն անցնում է ակտիվ ակցիոներների համեմատաբար փոքրիկ խմբի ձեռքը։ Յեվ անցնում է վոչ թե վորոշ սահմանված ու սովորաբար կարճ ժամկետով, ինչպես այս լինում է այն միջոցին, յերբ կապիտալը ղորահավաքում են ավանդների ձևով, այլ ընդմիշտ։ Ավանդատուն կարող է իր կապիտալը յետ պահանջելիսկ բաժնետերն իր փողերը յետ պահանջելու իրավունք ունի միայն այն ժամանակ, յերբ ընկերությունը լուծարվում է։ Իսկ յեթե ընկերությունը լուծարվում է, ապա այս նշանակում է, վոր բաժնետերերի կապիտալը վաղուց արդեն գոլորշիացել է։ Մնացած փշրանքները բաժին են լինում ընկերության պարտատերերին միայն։ Իսկ ակցիոներներին վոչինչ չի մնում։

Բայց այս դեռ քիչ է։ Բաժնետիրացումը հիմնադրային շահույթի անվան տակ հսկա միջոցներ է քաշում և լցնում հզորների գրպանները։ Մեզ ժամանակակից յեղող ֆինանսական արքաները տոզել, ուռճացել են հենց հիմնադրային շահույթներով։

Բացի նորմալ տիպին պատկանող հիմնադրային շահույթներից, վորոնք ստացվում են սոլիդ ձեռնարկություններում, աֆերիստ հիմնադիրների (գրյունդերների) մի հատուկ տիպ դրամատեր հասարակության գրպանից դուրս է կորզում մեծամեծ գումարներ՝ անվստահելի, փքուն, իսկ յերբեմն ել ուղղակի յերևակայական բաժնետիրական ձեռնարկություններ հիմնելով։

Ահա թե բաժնետիրացման միջոցով կապիտալի ինչպիսի դեմոկրատացման են հասնում։

---

[1] Կուպյուրա կոչվում է յուրաքանչյուր առանձին տոմսի կամ ակցիայի արժեքը։

§ 80. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՆԵՐԸ.

Կապիտալիստը յերբ բաժնետոմս է գնում, նա իր փողին հրաժեշտ է տալիս ընդմիշտ։ Պարտատոմս գնելով՝ նա իր դրամից բաժանվում է յերկար ժամանակով։ Նա այնպես հեշտությամբ չեր խիզախիլ այս քայլն անելու, յեթե նա կարիք յեղած դեպքում միշտ չկարողանար **իր գնած ածեռուղցե այս կամ այն գնով կանխիկ փող դարձնել։ Վորպեզսի ակցիաներ կամ թե պարտատոմսեր բացարկելու միջոցով կապիտալներ զորահավաքելը բավական հեշտությամբ գլուխ գա, անհրաժեշտ է, վոր արժեթղթերի** *(ֆոնդերի)* **առեվտրի համար գոյություն ունենա կազմակերպված շուկա** *(վորչափով կազմակերպության հասկացողությունն ընդհանրապես համատեղել կարելի յե շուկայի գաղափարի հետ)։*

Այսպիսի շուկաներ են **Քոնգային բորսաները,** *վորոնք գոյություն ունեն բոլոր խոշոր կենտրոններում։*

ՓՈՆԴԱՅԻՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՈՒ ԴԵՎԶԻՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ։

Ֆիկտիվ կապիտալի կանխիկ փող դարձնելն ու կանխիկ դրամը ֆիկտիվ կապիտալի փոխարկելը ֆոնդային բորսաներում կատարվում է մեծ արագությամբ։

Բացի ֆիկտիվ կապիտալի առևտրից, բորսաներում նաև փոխատուական կապիտալի անմիջական առևտուր էլ է կատարվում։ Այսպես, որինակ, այն կապիտալիստները, վորոնք ազատ փողեր ունեն կարճ ժամկետի համար (որական փող —дневные деньги), բորսային մակլերների միջոցով այս առաջարկում են ցանկացողներին (վորոնք, իհարկե, պետք է լիովին վարկունակներից լինեն)։ Ավելի յերկարատև ժամկետով ազատ փող ունեցողները բորսայում գնում են մուրհակներ, հասկանալի յե, վոչ թե անվանական գնով, այլ համապատասխան տոկոսային դիլում կորցնելով այն ժամանակվա համար, վոր մնացած է լինում մինչև մուրհակով լինելիք վճարումը։ Այսպիսով բորսայում մուրհակ ծախելը վոչնչով չի տարբերվում բանկում մուրհակը զեղչելուց։

Բացի սրանից, բորսայում կատարվում է արտասահմանյան արժույթի ու զեվիզուների առուտուր (տես եջ 262)։

Ապրանքային բորսաների նման այստեղ էլ բոլոր գործառնությունները կատարվում են մակլերների միջոցով։ Ամեն մի բորսա ունի իր կանոններն ու սովորությունները։ Տարբեր են

լինում նաև այն յեղանակները, վորոնց միջոցով բորսային կոմիտեն ամեն որ նույն որը կատարված գործարքների ամբողջ բազմությունից յեզրակացնում և հրապարակում է պաշտոնական կուրսը։

Բորսայում վորոշ ընտրությամբ են թույլ տալիս, վոր արժեթղթերը շրջանառության մեջ մտնեն և վարումնադրվեն (котировка—կուրսի պաշտոնական հայտարարություն)։

Բացի սրանից, այն բաժնետիրական ընկերությունները, վորոնք շահագրգռված են, վոր իրենց ակցիաներն ու պարտատոմսերը շրջանառության մեջ լինեն բորսայում, սրա համար վորոշ տուրք են վճարում[1]։

Ամբողջ աշխարհի բորսաներում վարումնադրվող (котирующиеся) արժեթղթերի գումարը դեռևս պատերազմից առաջ հասնում եր 150 միլիարդ մարկի[2]։

Ֆոնդային բորսայի առևտրի գլխավոր նյարդը կազմում են ժամկետով գործարքները։

ԺԱՄԿԵՏՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ։ ՁԱՐԱՇՀՈՒԹՅՈՒՆԸ։

Ժամկետով գործարքների եությունը մենք արդեն բացատրել ենք վերևում, ապրանքային բորսաներին նվիրած գլխում։ **Պարզ է, վոր ժամկետով գործարքների չարաշահ առեվտրի առարկա կարող են դառնալ այնպիսի արժեթղթերը կամ ապրանքները միայն, վորոնց գինը հաճախակի տատանումների չի ենթակա։** *Բորսայում չարաշահում են հասարակության ամենից այլազան տարրերը՝ բանկիրներից սկսած մինչև գյուղական տերտերները։ Յերբեմն անտեսական ու քաղաքական տարբեր պատահարներ բորսային խաղի մեջ են քաշում գրում հասարակության ամենալայն շրջաններ. բայց բորսայի իսկական տերը խոշոր կապիտալիստներն են։*

Սրանք իրենց կապերի շնորհիվ մյուս չարաշահներից ավելի լավ են տեղյակ լինում այն անցքերին, վորոնք կարող են ազդել ապրանքների ու ֆոնդերի գների վրա։ Մամուլը կաշառելու միջոցով նրանք սուտ լուրեր են տարածում, վոր չարաշահող հասարակությանը մոլորեցնեն և հրեն դեպի սխալ ճանապարհը։

---

[1] Հասկանալի յե, այնպիսի վոր պաշտոնական բորսաներում, ինչպիսին ևս բորսան է մեզանում, շրջանառության մեջ լինում են ամեն տեսակի արժեթղթեր։

[2] Վարումնադրումն—котировка—կոչվում է բորսային պաշտոնական բյուլետենի մեջ ֆոնդերի գները նշանակելը։

վճռական րոպեյին ակտիվ հանդես գալով իրենց պահանջով կամ թե առաջարկով՝ նրանք կուրսի վրա ազդում են այն ուղղությամբ, վորն իրենց հարկավոր է։ Խաղորդների (ИГРОК) մեծ մասի վերջը քայքայում է լինում։ Ռոտշիլդները խաղում են հաստատ հաշվով ու վիթխարի օգուտներ ստանալով։ **Այսպիսով բորսան ամեն տեսակ մանրամարդկանց (мелкота) մասսայորեն կողոպտելու միջոց է յեվ հետեվաբար կապիտալի կոնցենտրացիայի գործիքներից մեկը**[1]։

ԲՈՐՍԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ։

Խորհրդային Ռուսաստանում էլ առևտուրը կարգավորելու համար կան ապրանքային բորսաներ, վորոնց կից գոյություն ունեն ֆոնդային բաժիններ (Մոսկվայի ապրանքային բորսան ու գավառական մի շարք բորսաները)։ Թե իրենց անդամների կազմով (վորոնք առավելապես պետական ձեռնարկություններ են) ու թե գործառնությունների բնույթով մեր բորսաներն ապահովված են չարաշահության ու մոլեգին խաղի բույներ դառնալուց, ինչպիսիք հանդիսանում են բորսաները կապիտալիզմի յերկրներում։

ԽՆԴԻՐՆԵՐ.

Ֆիկտիվ կապիտալը.

№ 34. Հողատերը իր հողամասից տարեկան հասույթ է ստանում 12 հազար ռուբլու չափ։ Տոկոսի միջին նորման հավասար է 6-ի։

Պետք է վորոշել հողամասի գինը։

№ 35. Հողատերը իր հողամասից ամսական հասույթ է ստանում 600 ռուբլու չափ։ $^{0}/_{0}$-ի միջին նորման=8-ի։

Պետք է վորոշել հողամասի գինը։

№ 36. Այն ժամանակ, յերբ $^{0}/_{0}$-ի միջին նորման 8 է, տվյալ հողամասի գինը հաշվում են 300 հազար ռուբլի։

[1] Բանկային ցանցի ծավալման հետ բորսայի ֆունկցիաները մասամբ անցնում են բանկերին։ Բորսայի մուտքն ամենքի համար բաց չէ։ Այս տեսակետից ամենախիստ բորսան Նյու-Յորկի բորսան է։ Սրա անդամների թիվը սահմանափակված է 1,100 մարդով։ Անդամի կոչումը կարելի յե հանձնել ուրիշին և սովորաբար գնահատվում է 100,000 դոլլար։ Այս պատճառով լայնածավալ հասարակությունը ֆոնդեր գնում և ծախում է բանկերի միջոցով, իսկ վերջինները դիմում են բորսա այն հանձնարարություններով, վոր իրենք կատարել չեն կարող։

Տվյալ հողամասն ինչ գին կունենա, յեթե $^{0}/_{0}$-ի միջին նորման իջնի մինչև 6։

№ 37. Յերբ $^{0}/_{0}$-ի միջին նորման 6 է, տվյալ հողամասի գինն է 250 հազար ռուբլի։

Ինչ կլինի այս հողամասի գինը, յեթե $^{0}/_{0}$-ի միջին նորման բարձրանա մինչև 7,5։

№ 38. Վորքան կարժենա 5$^{0}/_{0}$-անոց 100 ռուբլանոց պարտատոմսը, յեթե $^{0}/_{0}$-ի նորման =8-ի։

№ 39. Վորոշեցեք 25 ռուբլանոց 10 տոկոսանոց պարտատոմսի անվանական ու իրական գնի տարբերությունը, յերբ տոկոսի նորման $=12^{1}/_{2}$-ի[1]։

Հիմնադրային շահույթը.

№ 40. Հողածխի հանքաշերտերը շահագործելու համար հարկավոր է 600,000 ռուբլու կապիտալ։ Շահույթի միջին նորման 15$^{0}/_{0}$ է։ Ակցիոներական հասույթի միջին նորման (այսինքն $^{0}/_{0}$-ի նորման+ռիսկի համար գանձվող հավելուրդը) =6$^{0}/_{0}$-ի։

Ձեռնարկությունը հիմնադրային վորքան շահույթ կարող է տալ։

№ 41. Ձեռնարկությանը հարկավոր է 1,000,000 ռուբլի կապիտալ։ Շահույթի նորման 18$^{0}/_{0}$ է։ Ակցիոներական հասույթի միջին նորման 6$^{0}/_{0}$ է։ Հիմնադրային վորքան շահույթ կարող է բաժին հանել ձեռնարկությունը։

№ 42. Յերկաթուղի անցկացնելու համար հարկավոր է 10 միլիոն ռուբլու կապիտալ։ Բացի ակցիաներից, հիմնադիրները կարող են 4 միլիոն ռուբլու պարտատոմսեր բացարկել տարեկան 3 $^{0}/_{0}$-ով 100 ռուբլու փոխարեն 80 ռուբլի կուրսով։ Բաժնետիրական հասույթի նորման 5 $^{0}/_{0}$ է։ Յերկաթուղին տարեկան տալիս է 20$^{0}/_{0}$ շահույթ։ Հիմնադրային վորքան շահույթ կարող է բաժին հանել ձեռնարկությունը։

[1] Ֆոնդերի գինն իրականում հարմարվում է $^{0}/_{0}$-ի նորմային վոչ բոլորովին ճիշտ կերպով, այլ մոտավորապես միայն։

ՎԱՐԿԱԴՐԱՄՆ ՈՒ ԹՂԹԱԴՐԱՄԸ.

§ 81. ՎԱՐԿԱԴՐԱՄԸ.

Եմիսսիոն բանկերի բացարկած բանկնոտների որինակում մենք տեսանք, որ վարկը վոչ միայն շրջանառության միջոցներին և փոխարինում (ապրանքային վարկ) կամ թե վերաբաշխում և շրջանառության նույն միջոցներն (բանկային վարկ), այլ և ստեղծում և հիշյալները: Բայց բանկնոտները վարկադրամի միակ ձևը չեն: Վարկադրամ են մուրհակներն ել, յերբ սրանք ձեռքից-ձեռք են անցնում իբրև շրջանառության միջոց: Վարկադրամ են նաև չեկերն այն դեպքերում, յերբ իրականները (держатели) մուրհակները գործ են ածում վճարումներ կատարելու համար՝ փոխանակ հիշյալները բանկին ներկայացնելու[1]:

Ընդհանուր առմամբ վարկագրամները կարելի յե վորոշել իբրեվ վարկի միջոցներ, վորոնք շրջանառության միջոցներ են գառնել, կամ թե նեցց ծագումն են առել շրջանառության միջոցների ձեվով:

Ինքնստինքյան հասկանալի յե, վոր վարկադրամը փողին փոխարինողն է միայն և վոչ թե փող՝ այս բառի իսկական իմաստով: Ինչպես մենք արդեն գիտենք, փողն ամենից առաջ պետք է ապրանք լինի և աշխատանքային արժեք ունենա: Այնինչ թղթի այն կտորի արժեքը, վորի վրա տպագրված է բանկնոտը կամ գրվել է մուրհակը, վոչ մի կապ չունի այն դերի հետ, վոր սրանք խաղում են շրջանառության ասպարիզում: Վարկադրամը փողի բոլոր ֆունկցիաների միջից կարող է լիովին կատարել մեկ ֆունկցիան միայն, այն է՝ շրջանառության միջոցի ֆունկցիան, վորչափով վոր փողն այս ֆունկցիան կատարում է լոկ անցողակի: Վարկադրամն արժեչափ լինել չի կարող այն պարզ պատճառով, վոր հենց ինքն արժեք չունի: Վարկադրամը չի կարող վերջնական ձևով վճարամիջոցի դեր կատարել: Յեթե Ա.-ն Բ-ից վարկով 100 ռուբլու ապրանք և ստացել յերեք ամիս ժամանակով, ապա այս նշանակում է, վոր Ա.-ն յերեք ամիս անց պետք է Բ-ին հատուցի այն արժեքը, վոր ինքն առել է նրանից

[1] *Ամենից առաջ շրջանառության միջոցներ են դառնում այն չեկերը, վորոնք հ ո ժ ա ր ա գ ր վ ա ծ են յ ե դ ե լ բանկի կողմից, վորովհետև բանկային հոժարագիրը վկայում է, վոր ավյալ չեկին համապատասխանում է ընթացիկ հաշվով տրված վորոշ գումար:*

առանց համարժեքը տալու: Իսկ յեթե ժամկետը լրանալիս նա նրան բանկնոտ է վճարել, ապա այս դեռ վերջնական վճարումն չե, այլ մի պարքը մի ուրիշ պարտքով փոխարինել է միայն: Առաջ Բ-ի պարտապանն եր Ա.-ն: Հիմա Բ-ի պարտապանն այն բանկն է, վորը բացարկել է հիշյալ բանկնոտը[1]:

Գանձի ֆունկցիան ել բանկնոտը կարող է կատարել կարճժկցյալ ձևով միայն, վորովհետև եմիսսիոն բանկի անանկությունը կարող է այս գանձը փոխարկել թղթյա գիբրի:

Չնայած սրան վարկադրամները կենսունակ դուրս յեկան և բանկնոտների ձևով լայն տարածում ունեցան: Փողի այն գումարի սահմաններում, վորը պահանջվում է շրջանառության համար, վարկադրամները հաջողությամբ կարող են փոխարինել իսկական փողերին: Այս հանգամանքի շնորհիվ եմիսսիոն բանկերը մինչև մի վորոշ սահման, վորքան թուլյատրում է շրջանառության տարողությունը, կարող են իրենց կլիենտներին վարկատրել վոչ թե ավանդների հաշվին, այլ իրենց բացարկած բանկնոտները տալով (այս սովորաբար կատարվում է մուրհակները զեղչելու ձևով): Յեվ յեթե միայն եմիսսիոն բանկերը իշարը գործ չեն դնում այս հնարավորությունը և իրենց եմիսսիայի իրավունքից ոգտվում են մենակ նրա համար, վոր արդյունաբերության ու առևտրին կարճատև վարկ տան, ապա մինչև մի վորոշ աստիճան կատարված բանկնոտային եմիսսիան կարգավորվում է ավտոմատիկ կերպով: Հենց վոր բանկնոտը կատարել պրծել է իր դերն, այսինքն հենց վոր լրանում է ժամկետն այն վարկի, վոր տրված է բանկնոտի միջոցով, վերջինս վերադառնում է այն բանկը, վորը բանկնոտ բացարկողն է, և վերադառնում է կլիենտի՝ բանկին արվող վճարման ձևով:

Վորպեսզի բանկնոտները չկառչեն ու յերկար չմնան շրջանառության ասպարիզում, սովորաբար հիշյալները բացարկում են խոշոր կուպյուրաններով (մեզանում մեկ չերվոնեցից վոչ պակաս: Անգլիայում 5 ֆունտ-ստերլինգից վոչ պակաս): Յեվրոպական

ԲԱՆԿՆՈՏՆԵՐԻ ՓՈԽԱՐԿՈՒՄԸ:

յերկրներում ու Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում բանկնոտները համաշխարհային պատերազմից առաջ անարգել փոխանակվում եյին վոսկու հետ (բացառություն կազմում եր Ավստրիան): Այս շատ եյական բան եր, վորովհետև լիարժեք վոսկե դրա-

[1] *Որքանք խոշոր եմիսսիոն բանկերի բանկնոտներին վաղուց և վերջնական վճարողական ուժ հատկացրել, բայց այս վերաբերում և հարցի իրավական կողմին միայն և վոչ թե անտեսական կողմին:*

մի հետ անսահմանափակ կերպով ու ազատորեն փոխանակվելու շնորհիվ բանկնոտները համաշխարհային շուկա դուրս չէին գալիս, չէին վնասվում կուրսի ամեն տեսակի փոփոխություններից։

Համաշխարհային պատերազմի ժամանակից սկսած բանկնոտները վոսկու հետ փոխանակելը դադարեցված է ամբողջ աշխարհում, բացի Ամերիկայի Միացյալ Նահանգներից (ու Շվեդիայից)։

ԲԱՆԿՆՈՏՆԵՐԻ ԳՈՑՈՒՄԸ։

Էմիսսիոն բանկերը բանկնոտները բացարկելիս սահմանափակված են զանազան կանոններով։ Մեծ մասամբ պահանջվում է, վոր վորոշ չափի հասնող մետաղյա գոցում գոյություն ունենա։ Էմիսիայի այն գումարը, վոր թույլատրվում է բացարկել ավելի չափով, քան գոյություն ունեցող մետաղյա պահեստն է, կոչվում է կոնտինգենտ։

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏԲԱՆԿԸ։

Ժողկոմխորհի 1922 թվականի հոկտեմբերի 11-ի վորոշմամբ Պետական բանկին իրավունք է վերապահված շրջանառության մեջ բացարկելու բանկտոմսեր 1,2,3,4,5,10,25, ու 50 չերվոնեց արժեքով։

Շրջանառության մեջ բաց թողած բանկնոտների $^1/_4$ մասը գոցվում է թանկագին մետաղով, օտարյերկրյա կայուն արժույթով ըստ վոսկու կուրսի, իսկ մնացած մասը գոցվում է հեշտ իրացնելի ապրանքներով, կարճատև մուրհակներով ու այլ կարճատև պարտագրերով (այն դեպքում, յերբ փոխատվությունն ընձեռվում է պետական գանձարանին, 25% մետաղյա գոցումը բարձրացնում են մինչև 50%)։ Բանկտոմսերը վոսկու հետ փոխանակել սկսելու ժամկետը սահմանվելու յե կառավարական հատուկ ակտով։

Փաստորեն մետաղյա գոցման չափը 25%-ից ավելի յե։ Այսպես՝ առ 1-ն հունիսի 1927 թ. էմիսսիոն բաժինը բանկային վարկային վարչության գանձարկղին հանձնել է 905,5 միլիոն ռուբլու բանկտոմս։ Սրանց գոցումը հետևյալն եր.

Վոսկի ու պլատին . . . . 185,3 միլիոնի,
Օտարերկրյա կայուն արժույթ . . 83,7 »
Այլ ապահովումն . . . . 651,0 »

Այսպիսով բացարկված բանկնոտների մոտ 30%-ն ապահոված է մետաղով ու կայուն արժույթով։ Մնացած բանկնոտները նույն ամսաթվին գոցվեցին զեղչված մուրհակներով ու գրավադրված (ламбардированный) նյութեղեն արժեքներով։

Վերոհիշյալ ապահովումն, այլ և այն իրողությունը, վոր

իբրև չերվոնեց տպված բանկտոմսերը բացարկում է վոչ թե գանձավարությունը բյուջետային պակասորդը լրացնելու կարգով, այլ Պետբանկն՝ արդյունաբերությանն ու առևտրին վարկ տալու կարգով,—այս պարագան մեր չերվոնեցը դարձնում է բանկտոմս, չնայած այն հանգամանքին, վոր չերվոնեցը վոսկու հետ ազատորեն փոխանակելու ժամանակի սկիզբը հետաձգված է։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԿԸ։

Անգլիական բանկի[1] կոնտինգենտը հավասար է 18,45 միլիոն ֆունտ-ստերլինգի։ Համաշխարհային պատերազմից սկսած Անգլիայում բանկտոմսերի կողքին շրջան են գործում նաև թղթադրամները։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ։

Գերմանական բանկի[2] կոնտինգենտը պատերազմից առաջ հավասար եր սովորական ժամանակ 500 միլիոն մարկի և 750 միլիոն մարկի յեռամսյակների վերջին, այն ե՝ մարտի, հունիսի, սեպտեմբերի ու դեկտեմբերի վերջին, յերբ իրար հետ են ընկնում կալվածավարձի (арендная плата) վճարումները, ռոճիկների վճարումները և այլն, և փողի կարիքը մեծանում է։

Գերմանական բանկը հարկ յեղած դեպքում իրավունք ուներ կոնտինգենտից ավելի յել բանկտոմսեր բաց թողնել, բայց այսպիսի դեպքերում պարտավոր եր պետության օգտին հատուկ հարկ վճարել էմիսսիայի ավելցուկի գումարի 5%-ի չափով տարեկան։

Յերբ սկսվեց համաշխարհային պատերազմը, ռայխսբանկի բանկտոմսերը փաստորեն դարձան թղթադրամ, բայց նրանց կուրսն, այնուամենայնիվ, վոսկյա պարիտետին բավական մոտեցրած եյին պահում։ Մարկի անկումն սկսվեց պատերազմի վերջանալուց հետո և այս անկումը մեծագույն չափին հասավ 1923 թվականին (մոտավորապես միլիարդ անգամ)։

1924 թվականին մարկը կայունացվեց, ընդ վորում միլիարդ թղթե մարկը հավասարեցվեց մեկ նոր ռայխսմարկի։

---

[1] Անգլիական բանկը մասնավոր ակցիոներական ձեռնարկություն է, վոր գոյություն ունի 1694 թվականից։ Կազմված է յերկու դեպարտամենտից (բաժնից)—էմիսսիոն բաժին, վոր բանկտոմսեր է բաց թողնում, ու բանկային բաժին, վորին հանձնվում են բաց թողնված բանկտոմսերը վարկային օպերացիաների համար։

[2] Գերմանական կայսերական բանկի կապիտալը նույնպես մասնավոր է (փայատիրական—паевой), բայց բանկերի կառավարումը պետության ձեռքին է։ Կայսերական բանկը Դաուեսի պլանի համաձայն գտնվում է Անտանտայի վերահսկողության տակ։

Դաուեսի պլանի համաձայն ռայխսբանկը չենթարկվեց Անտանտայի հսկողությանը։ Բանկնոտների վոսկյա գոցման չափերը սահմանվեցին 40% (30%-ը վոսկով ու 10%-ը վոսկե դեվիզուներով)։ Բանկնոտային եմիսսիայի մնացած մասը պետք է գոցվեր մուրհակներով ու այլ արժեքներով։ Բանկի գլխավոր խորհրդի միաձայն վորոշման համաձայն գոցումը կարելի չէ 40%-ից ավելի չել պակասեցնել, բայց այս դեպքում արդեն բանկն եմիսսիայի ավելցուկի փոխարեն պետք է պրոգրեսսիվ հարկ վճարե։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՆԿԸ։

Ֆրանսիական բանկի[1] բանկոտմսային եմիսսիան կախում չունի մետաղային գոցումից, բայց սրա փոխարեն եմիսսիան սահմանափակված է վորոշ մաքսիմումով, վորը սահմանում է կառավարությունը[2]։ Իսկ փաստորեն ֆրանսիական բանկի բանկոտմսերը պատերազմից առաջ միշտ լավ գոցումն ունեցին։

Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում ու Ավստրո-Հունգարիայում, ինչպես նաև եվրոպական այլ երկրներում, եմիսսիոն բանկերը մասնավոր կամ կիսամասնավոր հիմնարկներ են։

ԲԱՆԿՆՈՏԱՅԻՆ ԵՄԻՍՍԻԱՆ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ։

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1913 թվականից սկսած[3] բանկնոտային եմիսսիան պետության ձեռքին է։

Վարկի հակասությունները չեն կարող չազդել վարկագրամների ու մասնավորապես բանկնոտների վրա։ Բանկնոտները, վորոնք ծագել են արդյունաբերության ու առևտրին վարկատրելու պրոցեսսում և, վորոնց հենարանը յերկրի վարկային ապրանքապատույտն է, այնուամենայնիվ միշտ ձգտում են հենվելու վոսկե կանխուքի (золотая наличность) վրա՝ հանձինս շատ կամ քիչ «գոցման»։ Բանկնոտների համար այս գոցումը նույն նշանակությունն ունի, ինչ վոր ունի ցածում տարածվող ցանցը կրկեսի լարախաղացի համար։ Հավասարակշռությունը կորցնելով ընկնելիս ցանցը կազատե... Բանկնոտների իրակալն (держатель) իրեն ամենից լավ է զգում այն ժամանակ, յերբ գիտե, վոր ուզած րոպեին կարող է բանկնոտը փոխանակել մետաղի հետ։ Թեև այստեղ էլ հենց մենք գործ ունենք ֆիկցիայի հետ։ Սովորաբար բանկնոտների միայն չնչին մասն են ներկայացնում փոխանակելու։ Համոզվելով, վոր բանկնոտներն անարգել փոխանակվում են վոսկու հետ, հասարակությունը սովորաբար բանկնոտները գերազատում է վոսկեդրամներից, վորոնք պակաս պորտատիվ են (դյուրակրելի չեն), մաշվում չնչվում են և այլն. բանկնոտների՝ վոսկու հետ փոխանակվելը սովորաբար հարատևում է մինչև այնքան ժամանակ, քանի դուռ մանրացնելու նպատակներ է հետապնդում (բանկնոտները վոսկեդրամ դարձնելը), կամ թե յերբ փոխանակությունը կատարվում է արտասահմանյան վճարումների համար։ Բայց յերբ փոխանակությունն իրոք հետևանք է դեպի բանկնոտը տածվող անվստահության, և յերբ այս ընդունում է մասսայական բնույթ, ապա հիշյալ փոխանակությունը դադարեցվում է (Ֆրանսիան՝ 1848 ու 1870 թ. թ.։ Ամբողջ Յեվրոպան՝ 1914 թ.)։

ՄԵՏԱՂՅԱ ԳՈՅՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿՆՈՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Անգլիայում անցյալ դարի ամենատիպիկ ճգնաժամերի տարիներում որինակ՝ չի յեղել տեսնված, յերբ հասարակությունը կատաստրոֆիկ թափով խուժե բանկը՝ նպատակ դնելով բանկնոտները վոսկով փոխանակել[1]։ Այնուամենայնիվ ամենից ավելի Անգլիայում նշանակություն են տալիս բանկնոտների մետաղյա գոցմանը։

Հապա վճռն է բանի էությունը։ Այն, վոր գոցումը մենակ իրրև մանրացնելու ֆոնդ հարկավոր չէ։ Գոցման պահանջը բանկնոտների եմիսսիան կարգավորելու միջոց է։ Այս՝ սանձ է մի տեսակ, վոր դրվում է եմիսսիոն բանկի բերանին, վոր այս հիմնարկին զգուշանա չափազանց եմիսսիայից։ Հանսանալի չէ, թե վորքան ավելի մեծ վստահության և արժանի լինում յերկրի վարկային սիստեմն ամրողջությամբ առած, այնքան ավելի հեռուն տեղն է մղվում բանկնոտների մետաղյա գոցման նշանակությունը։ Անգլիական բանկային որենքն այս հանգամանքը հաշվի չեր առնում։ Անգլիական բանկի ցածր կոնտինգենտը (վոր սահմանվել է 1844 թվականին՝ այսպես կոչված Պիլի որենքով), բացատրվում է նրանով, վոր կառավարությունը վախենում է բանկնոտային ան-

[1] Ֆրանսիական բանկն ակցիոներական է, բայց ակցիաների մի մասը պահպանում է պետությանը։ Բանկի խորհուրդն ընտրվում է բաժնետերերի կողմից, իսկ կառավարիչը նշանակվում է պետության կողմից։

[2] Ներկայումս ֆրանսիական բանկի համար բանկոտմսային եմիսսիայի մաքսիմում սահմանված է 4$\frac{1}{2}$ միլիոն ֆրանկ։

[3] Մինչ այդ՝ Միացյալ Նահանգներում բանկնոտային եմիսսիայի իրավունք ունեցին բոլոր ազգային բանկերը, վորոնց թիվը հասնում էր մինչև 8,000-ի։ Ազգային բանկերի բանկնոտները դեռ մինչև հիմա էլ բոլորը չեն հանված շրջանառությունից։

[1] Բայց այսպիսի խուժում տեղի ունեցավ համաշխարհային պատերազմի սկզբին (1914 թ. հուլիսի 30-ին)։

չափ ազատ եմիսսիայից, վորը հեշտացնելով վարկ ստանալը, կարող և ոժանդակել թեթևամիտ չարաշահութիյանը և մինչև անգամ ինֆլյացիա առաջ բերել։ Կարծում եյին, վոր վարկը սահմանափակելով իբրև թե կարելի չե կանխարգելել արդյունաբերական ճգնաժամերը։ Դեռևս 1844 թվականի օրենքի հրատարակումից առաջ այսպես կոչված բանկային դպրոցի տնտեսագետները (Տուկը, Ֆուլլարտոնը և ուրիշներն) ապացուցում եյին, թե վորքան աննպատակահարմար և բանկային եմիսսիան կախման մեջ դնել վոչ թե վարկի միջոցների պահանջներից, այլ ազնիվ մետաղի կանխիկ պահեստից։ Սակայն նրանց հակառակորդների[1] կարծիքը հաղթանակեց, և Ռոբերտ Պիլի բիլլն ընդունվեց։

Պիլի օրենքն, իհարկե, չկանխարգելեց ճգնաժամերը։ Ընդհակառակը, 1847, 1857 ու 1866 թվականների ճգնաժամի միջոցին հարկ յեղավ ժամանակավորապես կանգնեցնել բուն իսկ Պիլի օրենքի ներգործութիյունը և թույլ տալ, վոր բանկնոտներ բացարկվեն կոնտինգենտից ավելի։

Միայն XIX դարի յերկրորդ կիսում չեկային սիստեմի ու հաշվեհարդարիչ պալատների ծավալումը մեծապես նվազեցրեց Անգլիայում բանկնոտների, իբրև վարկի միջոցների, նշանակութիյունը։

Շատ ավելի կենսունակ դուրս յեկավ Գերմանիայի ու Ֆրանսիայի եմիսսիոն բանկերի եմիսսիոն սիստեմը, յերկրներ, վորտեղ գոյման պայմանները շատ ավելի քիչ են կաշկանդում եմիսսիայի ձեռքերը։

82. ԹՂԹԱԴՐԱՄԸ.

Յերբ եմիսսիոն բանկն այս կամ այն պատճառով սկսում է իր բանկնոտները մեծ չափերով գործածել վոչ թե արտադրական, այլ սպառողական վարկի համար, որինակ, պատերազմը ֆինանսավորելու համար, բանկնոտային եմիսսիայի ավտոմատիկ կարգավորչի ներգործութիյունը դադարում է, և բանկնոտները փաստորեն դառնում են թղթադրամ։

Թղթադրամական սիստեմների ծագումը մեծ մասամբ հենց այսպես է յեղել. պետութիյունը պատերազմի դեպքում դիմել է եմիսսիոն բանկի ոգնութիյանը։ Եմիսսիոն բանկը փոխանակ առևտրային մուրհակները զեղչելու, գանձարանի պարտագրերը զեղչելու համար եր գործադրում իր բացարկած բանկնոտները։ Առաջ արդյունաբերութիյան ու առևտրի պահանջներն ելին վորոշում եմիսսիայի չափերը։ Յեթե բանից դուրս եր գալիս, վոր շրջանառութիյան մեջ բանկնոտների մեծ ավելցուկներ կան, նրանք յետ ելին դարձվում եմիսսիոն բանկը՝ իր զերը կատարած վարկի գոյման կարգով։

Յերբ եմիսսիան գառնում եր պետութիյան միջոցների աղբյուր, այս կարգավորիչը գադարում եր ցերգործելուց, յեվ այս պատճառով եվ բանկնոտային եմիսսիան փաստորեն գառնում եր թղթադրամի եմիսսիա։ Յեվ այս փոխակերպման հետևանքն այն եր լինում, վոր դադարում եր բանկնոտները լիարժեք դրամի հետ փոխանակելը, և գոյման նորման փաստորեն վերացվում եր։

Յերբեմն թղթադրամները հանդես ելին գալիս սկզբնապես իբրև սերտիֆիկատներ, այսինքն իբրև ներկայացուցիչներ այն մետաղադրամների, վորոնք փաստորեն կան և պահվում են բանկի արկղներում, բայց հետո նրանք դառնում են թղթադրամ այն բանի հետևանքով, վոր վերոհիշյալ արկղների միջից չքանում է այն մետաղը, վորի ներկայացուցիչն ելին նրանք։ **Բայց միևնույն դեպքերում ցուցի ուղղակի լույս աշխարհ են գալիս, իբրեվ թղթադրամ, վորի բացարկողը գանձարանն է։**

Պետութիյունը թղթադրամ բացարկելուց գիմում է իբրեվ հասույթի աղբյուրի, վորովհետեվ թղթադրամով է անում իր ծախսերը յեվ հանգցնում պարտքերը։

Հասույթ ստանալու համար թղթադրամներ բացարկելով՝ պետութիյունը կամ իր բացարկած թղթադրամների փոխարեն շուկայից վերցնում է զենք, պարեն ու հանդերձանք բանակի համար, շինանյութեր ու բանվորական ուժ՝ ամրոցներ ու շենքեր կառուցելու և հիշյալները շարելով բարձրացնելու համար և կամ թե թղթադրամներն իբրև առձիկ տալիս և իր գործակալներին, իսկ սրանք թղթադրամների ոգնութիյամբ շուկայից վերցնում են այն ապրանքները, վոր իրենց հարկավոր է։ Այսպիսով **թղթադրամճեռի յուրաքանչյուր բացարկ յուրատեսակ միանվագ հարկ է, վորը պետութիյանը վորոշ հասույթ է տալիս։** Ընդամին այս մի այնպիսի հարկ է, վորը գանձելու համար վոչ ֆինանսական վերատեսչների գործունեութիյունն է հարկավոր, վոչ վարչավարական ճնշումն ու վոչ էլ հարկելի գույքի ամբողջական ճշտումն ու վոչ էլ հարկելի գույքի ամբողջական ճշտումն ու

Փորձը ցույց է տվել, վոր վորոշ պայմաններում թղթա-

[1] Այս հակառակորդներն ելին այսպես կոչված «դրամական շրջանառութիյան» դպրոցի տնտեսագետները—Ռիկարդոն, Տորրենսը և ուրիշները։

դրամները շատ կամ քիչ բավարար չափով կարող են սպասարկել շրջանառությանը։ Եվ այս բանի համար ամենևին չի պահանջվում, որ պետական գանձարանում թղթադրամների համապատասխան ազնիվ մետաղների վորոշ պաշար, ինչպես կարծում են վոմանք։ Թղթադրամներն անմանրուն են (неразменны)։ Արձանագրելն այն մասին, թե թղթադրամներն ապահովվում են պետության ամբողջ ստացվածքով, կարելի յե հասկանալ այն իմաստով միայն, վոր պետությունը թղթադրամներն ընդունում է իր ունեցած բարիքների հետ փոխանակելու միջոցին։ Բուրժուական պետություններում այս կարգի յերևույթների շարքին պատկանում են պետական յերկաթուղիներով կատարվող փոխադրությունը, պետական անտառներից փայտ բաց թողնելը և այլն։ Մեզանում բացի դրանից կա այն, վոր պետձեռնարկությունների ապրանքներ են ծախում՝ տեղը թղթադրամ ստանալով։

ՀԱՐԿԱՅԻՆ Ա․ԱՀՈ-ՎՈՒՄՆ։

Բացի սրանից, պետությունը թղթադրամներն ընդունում է ուղղակի և անուղղակի հարկերը վճարելիս (բացառություն են մաքսերը, վորոնք սովորաբար վոսկով են գանձվում)։ Միքանի դեպքերում թղթադրամների վրա պատահում է մակագրություն, թե մանրելի յեն մետաղով (օրինակ, «ցարական» թղթադրամների վրա համաշխարհային պատերազմի ժամանակ), սակայն այս մակագրությունն այն ժամանակների հնայորդ է, յերբ նույն տիպի դրամները վոչ թե թղթադրամ եյին, այլ վարկադրամ։

Սակայն յեթե գանձարանի պահեստանոցներում պահվող մետաղն ուղղակի կապ չունի թղթադրամների հետ, վորովհետև վերջիններս անմանրուն են, ապա թղթադրամ ունեցողի, իբրև այսպիսու, բանը վոչ վատանում և վոչ էլ լավանում է այն հանգամանքի շնորհիվ, թե գանձարանի կամ բանկերի նկուղներում նրա թղթադրամների մետաղյա յերկվորյակներ կա՞ն, թե՞ չկան[1]։

Յեթե պետությունը թղթադրամ է բացարկում առանց գերաբեռնելու (переобременить) շրջանառությունն, ապա պետությունը բացարձակապես արժեզուրկ թուղթը փոխարկում է արժեք ունեցող իսկական ապրանքի հետ, և ընդ սմին վոչ վոք այս բանից կորուստ չի ունենում։ Թղթադրամ ստացողը վոչինչ չի կորցնում, քանի վոր ստացած թղթիկներով

[1] Սակայն վոսկու պաշարը կարող է իբրև միջոց ծառայել ակտիվ դեֆլյացային քաղաքականությամբ արտասահմանում թղթադրամային արժույթի (бумажная валюта) կուրսը բարձր պահելու համար (տես էջ 257)։

նա կարող է հենց նույն գնով ապրանք ձեռք բերել, ինչ գին վոր ուներ այն ապրանքը, վոր ինքը տվեց թղթադրամի փոխարեն։

Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ պետության կողմում յեղած այս պլյուսը, վորին մի այլ տեղ յեղող մինուս չի համապատասխանում։ Իրականում պետությունն իսկական փողի փոխարեն դրամին փոխարինող թղթիկներ տալով հասարակությանը՝ հոգում իր է վերցնում այն աշխատանքը, վոր հասարակությունը պետք է գործադրեր իսկական փող արտադրելու վրա։ Յենթադրենք, թե տվյալ բոպեյում շրջանառության համար հարկավոր է 1 միլիարդ ռուբլի = 1,890,625 ֆունտ զուտ վոսկու։ Յեթե ընդունենք, վոր մի ֆունտ վոսկին պարունակում է 2,000 ժամվա հանրորեն-անհրաժեշտ աշխատանք, ապա հասարակությունը իր բանեցրած շրջանառության միջոցների մեջ պետք է մարմնացնե մոտավորապես 4 միլիարդ մարդաժամ (человеко-час)։

ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐՆ ԻՆՉԻ՞ ՀԱՇՎԻՆ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԿՈՐԶԵԼ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՑ։

Պետությունը շրջանառության այս արժեքն ապրանքների ձևով վերցնում է իրեն ու իր գործակալներին, իսկ շրջանառության կանալները փոխանակ արժեքավոր նյութեղենով լցնելու՝ լցնում է թղթով, ինչպես վոր խանութի տերը կարող է ցուցափեղկից վերցնել ապխտած իսկական գլուխը, վորն այնտեղ փչանում է միայն, և նրա տեղը դնել փայտյա նմուշը։

§ 83. ԹԵՐԱՐԺԵՔ ՓՈՂԻ ՈՒ ԹՂԹԱԴՐԱՄԻ ԳՆՈՂԱԿԱՆ ՈՒԺԸ. ԻՆՖԼՅԱՑԻԱՆ.

Թղթադրամների բախտը կախում ունի վոչ թե մետաղյա գոցումից, այլ այն փոխհարաբերությունից, վոր լինում է շրջանառության համար հարկավոր թղթադրամի քանակի ու փողի քանակի միջև։ Քանի դեռ թղթադրամի այն քանակը, վոր կա շրջանառության մեջ[1], չի գերազանցում վոսկու այն

[1] Թղթյա արժույթի շատ կամ քիչ կայունության շրջանում թղթադրամներն էլ են գանձայվում (тезаврироваться), գանձ են դառնում, մտնում են գանձերի վոլորտը Քանի թղթադրամները գնում պառկում են շրջանառության վոլորտում, նրանք չեն ճնշում, չեն ծանրանում շրջանառության վոլորտի վրա։ Բայց սրա փոխարեն, յերբ արժույթը տատանվում է. Թղթադրամները դուրս են խուժում շրջանառության վոլորտից, անկեղ պահարաններից, գզրոցներից, սրվակների ու գուլպաների միջից դեպի շրջանառության կանալները և սաստկացնում ինֆլյացիան (գերալցումը)։

բաճակից, վոր պահանջում է շրջանառությունը, թղթադրամները կարող են շրջան գործել, իբրեվ մեետաղադրամներ, իրենց գնողական ուժից վոչինչ չկորցնելով։ Թղթադրամների արժեքի մասին խոսելու հարկ չկա, վորովհետև սրանք ապրանք չեն ինքնըստինքյան, ուստի և արժեք ունենալ չեն կարող։ **Թղթյա շրջանառության ժամանակ եվ արժեքի չափը վոսկին է։**

Մետաղադրամի ու թղթադրամի գնողական ուժի տարանջատումն (расхождение) սկսվում է այն ժամանակ, յերբ բանից դուրս է գալիս, վոր շրջանառության մեջ թղթադրամ ավելի շատ կա, քան վոսկու այն գումարն է, վոր հարկավոր է շրջանառության համար։ Ահա այս ժամանակ սկսվում են ինֆլյացիայի յերևույթները։

ԼՈՒԾԸ։ *Յերբ թղթադրամի միավորի գնողական ուժն ընկնում է, նրա անկման մասին կարելի չե դատել՝ նկատի ունենալով այն* **լուծը** *(ավելավճար—*приплата*), վոր հարկավոր է լինում վճարել թղթադրամի միավորը մետաղյա միավորի հետ փոխանակելիս։*

ԻՆԴԵՔՍՆԵՐ։ *Թղթադրամի գնողական ուժի անկման աստիճանը վորոշելու մի այլ յեղանակ ել կա—*ինդեքսների յեղանակը։ *Թե ինչ բան է ինդեքսն, այս մասին գաղափար կարող է տալ բյուջետային ինդեքսը, վոր նկարագրել ենք վերևում։*

Մեղանում հիմա ինդեքսների հիմք են լինում սովորաբար 1913 թվականի գները, վորոնք միավորին հավասար են ընդունվում։ Ինդեքսները տարբերվում են թե ըստ ապրանքների բնույթի (գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդհանուր ինդեքսներ), թե ըստ գների բնույթի (մեծածախի ու մանրածախի ինդեքսներ), թե ըստ տերրիտորիաների չափերի (որինակ՝ Մոսկվայի, համառուսական ինդեքսներ) ու թե ըստ բուն իսկ հաշվելու յեղանակի։ Այն թվերը, վորոնք ցույց են տալիս տառանձին ապրանքների գների աճումը, կարելի չե գումարել և ապա բաժանել՝ թանգացման միջին թիվը յեզրակացնելու համար կամ թե կարելի չե թվերն իրար հետ բազմապատկել և ապա նրանցից արմատ հանել։ Բոլոր ապրանքները կարող են մտնել ինդեքսի մեջ, իբրև իրավահավասար գործոններ, և կամ թե նրանք կշռի են դրվում, նայած այն դերին վոր կատարում են շուկայում։ Այսպես որինակ, տարեկանի ալյուրը բյուջետային ինդեքսի մեջ կրկնակի շատ քանակությամբ է մտնում, քան ցորենը, 5 անգամ ավելի, քան կաղամբը, 10 անգամ ավելի, քան ճակնդեղը և այլն։

Ամենակարևոր ինդեքսները մեզանում կազմում է Պետպլանը [1] (Պետպլանի համապետրանքային մեծածախի ինդեքս), Ֆինժողկոմատին կից կոնյունկտուրային ինստիտուտը (կոնյունկտուրային ինստիտուտի համամիութենական ու Մոսկվայի մանրածախի ինդեքսները), աշխատանքի վիճակագրության կենտրոնական Բյուրոն Պետպլանի հետ միասին (բյուջետային ինդեքս) ու ԺՏԳԽ (համարդյունաբերական ինդեքս)։ Ինդեքսները տպագրվում են «Экономическая жизнь», «Экономический бюллетень конъюнктурного института» *պարբերականներում և այլ պարբերական հրատարակություններում։*

Յենթադրենք, թե ավյալ ժամանակում շրջանառության համար հարկավոր է 200 միլիոնի վոսկի։ Յեթե թղթադրամ բացարկված է միայն այս գումարի չափ, ապա թղթադրամների գնողական ուժը լինում է լրիվ—մեկ ռուբլուն մեկ ռուբլի։ Բայց այնուհետև յենթադրենք, թե շրջանառության է հանված 400 միլիոնի թղթադրամ, այսինքն մի գումար, վոր յերկու անգամ ավելի յե, քան շրջանառության կարիքն է՝ վոսկով արտահայտած։ Հասկանալի յե, վոր լոկ և միմիայն կրկնապատկման իրողությունը չի շատացնում շուկայում գտնվող ապրանքների քանակը։ Հիմա յուրաքանչյուր թղթյա ռուբլի առաջ իրեն հասանելի ապրանքային բաժնի կեսն է միայն գտնում շուկայում։ Թղթյա

---

[1] Պետպլանի ու կենտվիճվարի համաձայնությամբ մեծածախ գների ինդեքսներ կազմելն ու հրապարակելը հանձնարարված է ՄՍՀՄ կենտվիճվարին և վերջինս այն վարում է 1926 թվականի դեկտեմբերից սկսած։

Մեծածախ ինդեքսները 1926 թվականի հոկտեմբերին.

Ավստրալիա	161,6	Սպանիա	179
Ցապոնիա	174,1	Հյուս.-Ամ.-Միաց. Նահանգ.	149,7
Նոր Զելանդիա	152,7	Հնդկաստան	144
Անգլիա	157,3	Նորվեգիա	198
Բելգիա	856,0	Իտալիա	655
Գերմանիա	136,2	Պերու	222
Կանադա	151,1	Լեհաստան	177
Չինաստան	171,1	Ռուսաստան	178
Դանիա	178	Շվեյցարիա	147
Ֆրանսիա	751		

ռուբլու գնողական ուժը միացած հավասար պայմաններում ընկնում է յերկպատիկ, այսինքն ապրանքային գները բարձրանում են յերկու անգամ [1]։

Ի հարկե, փողի գնողական ուժի անկումը հավասար չափով չի կատարվում պետության բոլոր վայրերում ու բոլոր ապրանքների վերաբերմամբ։ Գների աճումն ավելի վաղ ընդգրկում է այն վայրերն ու արդյունաբերության այն ճյուղերը, ուր ամենից շուտ է ընկնում նոր բացարկվող թղթադրամների գլխավոր բազմությունը։ Այստեղից գների աճումը ծավալվում է ավելի հեռուները։

Այս համգամանքի շնորհիվ ինդեքսները կարող են տալ փողի գնողական ուժի շարժման մոտավոր ու կոպիտ պատկերը միայն։ Բացի սրանից, ինդեքսային ապրանքներ ընտրելիս ու այս ապրանքները կշռելիս, այսինքն այն բանը վորոշելիս, թե ավյալ ապրանքն ինչ տեսակարար կշիռ ունի և ինչ համեմատական չափով պետք է վեր առնվի ինդեքսի համար,—վորոշ կամայականություն անխուսափելի է։ Այս էլ է մի պատճառ, վոր ինդեքսների մեթոդն ստույգ չի լինում։

ԻՆՖԼՅԱՑԻԱՆ։

Այստեղ է ահա, վոր յերևան է գալիս վոսկեդրամի ու թղթադրամի, իրրև շրջանառության միջոցների ամբողջ տարբերությունը։ Յերբ վոսկին չափազանց շատ է լինում, ապա այս վոսկին կամ անցնում է արտասահման (կամ նրա համար, վոր ավելի եժան ապրանքներ դանի և կամ թե նրա համար, վոր ավելի ձեռնտու յեղանակով դետեղվի) կամ թե չե գանձացվում է (հնում է իրրև գանձ)։ Մի խոսքով, հենց վոր վոսկու շատ առատություն է հրապարակ գալիս, վոսկին կնտրոնախույս ձգտում է արտահայտում, կրնկելով ծկում է այն տեղից, վորտեղ նրան սպառնում է արժեքի թեբագնահատություն։ Ընդհակառակն, այսպիսի դեպքերում թղթադրամը կենտրոնաձիգ միտում է արտահայտում։ Վորքան ընկնում է թղթադրամների գինն, այնքան էլ նրանք ավելի ու ավելի անձեռնտու են լինում նույնիսկ ֆիկտիվ գանձ դարձնելու համար։ Իսկ կատաստրոֆիկ ինֆլյացիայի ժամանակ թղթադրամները բո-

[1] Իրապես նախ քան վերևում տված ֆորմուլայի համաձայն շրջանառության կարիքը թղթադրամների բացարկված քանակին հակադրելն, անհրաժեշտ է յերկու կողմից էլ հանել այն պարտաուրյունների գումարը, վորոնք պետք է վճարվեն ավյալ ժամանակում, վորովհետև պարտաուրյունների համաձայն վճարումներ կատարելիս թղթադրամի ռուբլին ռուբլու տեղ է անցնում

լորովին դադարում են իրրև խնայողության միջոց ծառայելուց։ Թղթադրամների փոխարեն պահվում են ապրանքները, և այս իր հերթին քչացնում է շրջանառության՝ փողի նկատմամբ ունեցած կարիքը։ Այսպիսի դեպքերում թղթադրամները հրդեհի ժամանակվա վոչխարների նման վոչ թե փախչում են կրակից, այլ վազում են դեպի կրակը։ Այս միայն սրում է, սաստկացնում փողի գնողական ուժի անկումը։

Իր թղթադրամների հետ փոխանակելու միջոցով շուկայից ապրանքներ վեր առնելով՝ պետությունը հարկադրված է ամեն անգամ շատացնելու թղթադրամների բացարկը, վորովհետև փողի գնողական ուժն ընկնում է։ Բացարկի մեծացումն էլ նվազեցնում է թղթադրամի գնողական ուժը։ Ստացվում է մի կախարդական շրջան։ Միակ յելքը կարող է լինել այն, վոր թղթադրամական եմիսիան դադարեցվի և այն փոխարինվի ուղղակի կամ անուղղակի հարկերով, բայց վորքան ավելի շատ է ինֆլյացիան խարխլել ժողովրդական տնտեսությունն, այնքան ավելի դժվար է լինում եմիսիան դադարեցնելն ու հարկերով փոխարինելը։

Բայց այն, ինչ վոր վերևում մենք ասել ենք թղթադրամների մասին, թերարժեք մետաղադրամներին էլ է վերաբերում։

ԹԵՐԱՐԺԵՔ ՓՈՂԻ ԳՆՈՂԱԿԱՆ ՈՒԺԸ.

Հնդկական արծաթե ռուպին, վորը դոց է հասավում, մի քանի տնտեսագետներ անվանում են «արծաթի վրա տված ասսիգնացիա»[1]։ Այսպես ասողներն իրավացի չեն այն իմաստով, վոր ինչպես թղթյա դրամանիշի, այնպես և թերարժեք դրամի գնողական ուժը վորոշվում է այն փոխհարաբերությամբ, վոր լինում է բացարկված դրամի քանակի ու շրջանառության համար հարկավոր վոսկու քանակի միջև։ Յեթե այն ժամանակ, յերբ շրջանառությունը 200 միլիոն վոսկե ռուբլու կարիք ունի, այս գումարի արծաթե ռուբլիները բացարկվեն՝ մեջտեղից հանելով մյուս փողերն, ապա արծաթե ռուբլիները կպահեն իրենց լրիվ գնողական ուժը, յեթե մինչև անգամ յուրաքանչյուր ռուբլու մեջ 70 կոպեկի արծաթ լինի։ Իսկ յեթե այսպիսի արծաթե ռուբլիները բացարկվեն 200 միլիոնից ավելի, ապա նրանց գնողական ուժը կնկնի ճիշտ այնպես, ինչպես կնկներ անչափ մեծ քանակությամբ բացարկված թղթադրամների գնողական ուժը։ Միայն թե նրանց միջև ահա ինչ տարբերություն կա։ **Թղթադրամները կարող են արժեզրկվել ակնթարթորեն** (ինչպես ցույց տվեց վերջին տարիների փորձը—տրիլլիոն տնտամ)։

[1] Ասսիգնացիա նշանակում է թղթադրամ

Իսկ թերարժեք մետաղադրամները կարող են արժեզրկվել միայն այնքան, որ հավասարվեն այն մետաղի արժեքին, որից շինված են իրենք (*վերևում բերած օրինակի մեջ՝ ռուբլու իջնելով 70 կոպեկի*)։ *Այսպիսով կարելի չէ ընդունել, որ* թերարժեք ստակը մասամբ կազմված է մետաղից ու մասամբ թղթից։ Թղթյա մասն ինֆլյացիայի ազդեցությամբ կարող է արժեզրկվել բոլորովին։ Իսկ մետաղյա մասի արժեքն անփոփոխ է մնում քանի դեռ չեն փոխվում տվյալ մետաղի արտադրության պայմանները։

ԻՆՖԼՅԱՑԻԱՆ[1] *ՈՒ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ։*

Յուրաքանչյուրն ինֆլյացիոն հարկից աշխատում է ազատվել՝ համապատասխան հավելում դալով այն ապրանքի գնի վրա, որ ինքը ծախում է։ Սրա հետևանքով ինֆլյացիոն հարկն ամենից ավելի խիստ ծանրանում է բանվորական ուժ ծախողների վրա, *որոնց համար դժվար է լինում իրենց ապրանքի գինը բարձրացնել այն չափով, որ չափով արժեզրկվում է փողը։*

ԳՆԵՐԻ ԱՃՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՓՈՂԵՐԻ ԲՆՎԵԹՈՒՄ ՈՒ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲՆՎԵԹՈՒՄ։

Սակայն հարկավոր է հիշել, որ ապրանքների գների աճման գործում միշտ մենակ փողերը չեն մեղավորը։ Այսպես՝ օրինակ, մեզանում թղթադրամական ինֆլյացիայի ժամանակաշրջանում ապրանքները թանգանում էին նաև այն պատճառով, որ համաշխարհային պատերազմի առաջ բերած տնտեսական փլուզման հետևանքով ընկել էր աշխատանքի արտադրողությունը, ուստի և ապրանքների արժեքը բարձրացրել էր։

§ 84. ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐԻ ԿԱՊԸ ՈՍԿՈՒ ՀԵՏ։

Մարքսը գրում է. «Եթե թղթադրամների քանակը գերազանցել է իրենց չափից, այսինքն գերազանցել և նույնանուն ոսկե դրամների այն քանակից, որ իրոք կարող էր գտնվել շրջանառության մեջ, ապա նրանք—թղթադրամներն ապրանքային աշխարհում ներկայացնում են ոսկու այն քանակը միայն, որ ընդհանրապես ներկայացվել կարող էր թղթադրամների միջոցով… Եթե, օրինակ, թղթադրամների տվյալ մասսան իր անվանակոչությամբ ներկայացնում է 2 ունցիա ոսկի, իսկ իրոք փոխարինում է 1 ունցիա ոսկուն, ապա փաստորեն 1 ֆունտ ստերլինգը դառնում է, ասենք, 1/8 ունցիա ոսկու դրամանուն՝ փոխանակ առաջվա պես 1/4 ունցիա ոսկու դրամանուն լինելու…

Թղթադրամները ոսկու նշաններ են կամ դրամի նշաններ։ Թղթադրամներն այն չափով են արժեքի նշան, որչափով որ նրանք ներկայացնում են ոսկու մի որոշ քանակ, որն ապրանքային ամեն մի այլ քանակի նման՝ արժեքի քանակ է միաժամանակ»։

ՀԻԼՖԵՐԴԻՆԳԻ ՍԽԱԼԸ։

Հիլֆերդինգն իր «Ֆինանսական կապիտալի» մեջ փորձ է անում ուղղելու Մարքսին։ Նա գրում է.—

«Երբ պտույտների ժամանակն անփոփոխ է մնում, թղթադրամների արժեքը որոշվում է այն ապրանքների գների գումարով, որոնք պետք է անցնեն շրջանառության վրայով. թղթադրամներն այստեղ լիովին անկախանում են ոսկու արժեքից և ապրանքների արժեքն են արտացոլում անմիջապես»…

Այնուհետև նա գրում է.—

*«Մեզ ավելորդ է թվում այն շրջանցիկ ուղին (*ОБХОДНЫЙ ПУТЬ*), որով է գնում Մարքսը՝ նախ որոշելով դրամի անհրաժեշտ քանակի արժեքն և ապա դրանց միջոցով միայն որոշելով թղթադրամների արժեքը… թղթադրամների արժեքը պետք է բխեցնել, հեռացնել՝ առանց մետաղադրամներին դիմելու»։*

Իրականում Հիլֆերդինգը չի ուղղում, այլ միայն աղավաղում է Մարքսի թեորիան։ Նա ասում է. «Թղթադրամների արժեքը որոշվում է գների գումարով»… Իսկ ինչ է գինը։ Գինն ապրանքի արժեքի արտահայտությունն է փողով ու, հակառակը չէ, իսկական փողով, որն ինքն արժեք ունի։ Հապա էլ ինչ գնի մասին է խոսում Հիլֆերդինգը, որ իր ֆորմուլայի միջից վտարել է իսկական փողերը։

Հիլֆերդինգը շուկայում գտնվող բոլոր ապրանքները պարզապես գնում է շրջանառության մեջ գտնվող թղթադրամների դիմաց և պնդում, թե այս վերջինների «արժեքը» որոշվում է առաջինների արժեքով (հասկանալի չէ, բաժանելով նույնանուն թղթադրամների պտույտների թվով)։ Իսկ ինչո՞վ է որոշվում առաջինների—ապրանքների—արժեքը։ Փողն է ապրանքների արժեքի չափը։ Հիլֆերդինգը դուրս է ձգել այն արժեքի չափը, որի շնորհիվ ապրանքների կույտը, չնայած իր ամբողջ բազմազանությանը, իր արժեքի միատեսակ արտահայտությունն է

---

[1] *ԴԵՖԼՅԱՑԻԱՆ։* *Ինֆլյացիայի հակադրությունը կազմում է դեֆլյացիան, այսինքն ապրանքների շրջանառության համեմատությամբ պակասությունը դրամական այն մասսայի, որ շրջան է գործում։ Դեֆլյացիայի ժամանակ փողի գնողունակությունն աճում է, այսինքն ապրանքների գներն ընկնում են։*

պտնում: Իսկ թղթադրամներն արժեք չունենալով, վոչ միայն չեն կարող արժեքը չափողներ լինել, այլ հենց իրենք, ըստ Հիլֆերդինգի, պետք է ապրանքային կույտին դիմեն՝ իրենց չակերտավոր «արժեքը» չափել խնդրելով: Այս բոլորից հետո հարցս ինչով է չափվում ամբողջ ապրանքային կույտի արժեքը միասին առած. ու այս կույտի յուրաքանչյուր ապրանքի արժեքն առանձին վերցրած.

Հիլֆերդինգի ֆորմուլան ընդունելիս միանգամայն չքանում է ամեն մի պատկերացում թղթադրամների ինֆլյացիայի ու դեֆլյացիայի մասին:

Քանի դեռ թղթադրամները վոսկու ներկայացուցիչներ են նկատվում, ինֆլյացիան իր արտահայտությունը նրանում է գտնում, վոր «ներկայացվող» յուրաքանչյուր վոսկի ռուբլուն ընկնում է **վոչ թե** թղթյա **մեկ** ներկայացուցիչ, այլ **մի քանի** ներկայացուցիչ: Այն ավտոնոմիայի ժամանակ, վոր Հիլֆերդինգը շնորհում է թղթադրամներին, ավելորդ թղթադրամներ չեն կարող լինել:

Հենց փորձն էլ ցույց տվեց, վոր չկա մի թղթադրամ, վորն այսպես թե այնպես կապված չլինի դրամական ապրանքի հետ: Թղթադրամային ինֆլյացիայի ժամանակաշրջանում, վորն սկսվեց պատերազմի սկսվելու հետ, բոլոր թղթյա արժույթները կողմնորոշվում եյին (ориентироваться) դեպի վոսկե դոլարն, այսինքն թղթադրամների արժեզրկման աստիճանը վորոշվում էր գլխավորապես վոսկե դոլարի կուրսով: Յեթե Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներն էլ անցնեին թղթադրամային շրջանառության, այն ժամանակ կողմնորոշման միջոց կդառնար պարզապես մի ունցիա վոսկին: Դռնից դուրս արված մետաղը, միևնույն է, լուսամուտից ներս կմտնար:

§ 85. ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐԻ ՈՒ ՎԱՐԿԱԴՐԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՈՒ ԽՍՀՄ ՄԵՋ:

1768 թվականին Յեկատերինա II-ի ժամանակ բաց թողած թղթադրամները սերտիֆիկատների[1] բնույթ ունեյին, վորովհետև բաց թողած յուրաքանչյուր թղթադրամ ռուբլուն համապատասխանում էր մետաղյա ռուբլի, վոր պահվում էր ասսիգնացիոն բանկում պղնձե ստակի կերպարանքով (ճիշտ է, այս ստակը լիակշիռ չէր): Սակայն 1786 թվականին արդեն ասսիգնացիաները միայն կիսով չափ գոցույթ ունեյին (46,2 միլիոն ասսիգնացիաների դիմաց դրամով կար 20 միլիոն): Յեկատերինա II-ի թագավորության վերջերում շրջանառության մեջ գտնվող ասսիգնացիաները միայն $^1/_8$-ի չափ եյին գոցվում մետաղով (158 միլիոն ասսիգնացիաների դիմաց մետաղով կար նույն 20 միլիոնը): Թղթադրամների եմիսսիային եյին դիմում ամեն անգամ, յերբ գանձարանը դրամական դժվարություններ էր ունենում: Ասսիգնացիաները մետաղադրամի վերափոխելը դադարեցվեց դեռևս 1786 թվականին: Ասսիգնացիաների գնողական ուժն ընկնում էր շարունակ: Արծաթի լաժը հարյուրավոր տոկոսներով էր հաշվվում:

ԴԵՎԱԼՎԱՑԻԱՆ ՆԻԿՈԼԱՅ ԱՌԱՋՆԻ ԺԱՄԱՆԱԿ:

Այսպես, 1810 թվականին 1 արծաթ ռուբլուն տալիս եյին 3 ռուբլի ասսիգնացիա, 1817 թվականին՝ 3 ռուբլի 84 կոպեկ, 1839 թվականին՝ 3 ռուբլի 50 կոպեկ: Այս փոքրիկ բարելավումը բացատրվում է գլխավորապես նրանով, վոր 1818 ու 1839 թվականների արանքի ժամանակաշրջանում մոտ 200 միլիոն ռուբլու ասսիգնացիա հանվել էր շրջանառության ասպարեզից: Վերջապես 1843 թվականին **դեվալվացիա** կատարվեց, այսինքն պաշտոնապես ճանաչվեց ասսիգնացիաների արժեզրկման իրողությունը: 4 մսխալ 21 դոլիա զուտ արծաթ պարունակող արծաթե ռուբլու[1] և ասսիգնացիոն ռուբլու հարաբերությունը սահմանվեց $^2/_7$ առ 1, այսինքն արծաթ ռուբլին 3 ռուբլի 50 կոպեկ ասսիգնացիային հավասար ճանաչվեց: Ասսիգնացիաների փոխարեն բաց թողնվեցին վարկատոմսեր, վորոնք արծաթե ռուբլիներով եյին պարտագրված և մանրելի եյին արծաթով:

Սևաստոպոլի պատերազմը վերջ տվեց վարկատոմսերին արծաթ ռուբլու փոխելուն, և վարկատոմսերը նորից միևնույն թղթադրամը դարձան:

[1] Սերտիֆիկատները (վկայագրեր) միայն այն նպատակն ունեն, վոր մետաղադրամ ունեցողներին ազատեն նրանց մեծածավալությունից, ծանրությունից, իսկ բուն իսկ դրամները զերծ պահեն մաշվելուց ու քաշը կորցնելուց, յերևույթներ, վորոնք անխուսափելի յեն դրամի շրջանառության դեպքում: Այն հիմնարկը, վոր սերտիֆիկատներ է բաց թողնում, անձեռնմխելի յե պահում այն ամբողջ դրամը, վորի փոխարեն սերտիֆիկատներ են բաց թողնված: ԽՍՀՄ մեջ սերտիֆիկատներ անվան տակ բաց եյին թողնված Ճանապարհների Հաղորդակցության Ժողովրդական Կոմիսարիատի կարճաժամկետ անտոկոս պարտագրեր, վորոնք ընդունվում եյին տրանսպորտային ծառայությունների համար վճարումներ կատարելիս, ուստի և շրջան եյին գործում իբրև դրամ:

[1] Այս ռուբլին 1810 թվականին ճանաչվեց փողային հիմնական միավոր: Այսպիսով 1810 թվականին պաշտոնապես անցում կատարվեց անորոշ, գլխավորապես պղնձյա արժույթից դեպի արծաթե մոնոմետալիզմը:

Թղթադրամային շրջանառության նոր ժամանակաշրջանը շարունակվեց մինչև 1897 թվականը։ Սևաստոպոլի ու տաճկական պատերազմների ժամանակ շատ անդամ թղթադրամներ բաց թողնելը մեծապես արժեզրկեցին թղթադրամ ռուբլին, թեև այս արժեզրկումն արդեն վոչ թե հարյուրավոր, այլ տասնյակ տոկոսներով եր հաշվվում։

Չնայած վոր 1881-ից մինչև 1896 թվականը կառավարությունը միանգամայն խուսափում եր թղթադրամների նոր բացարկներից, ռուբլու կուրսն արտասահմանում տասական տատանումների չեր ենթակա լինում։ Տատանվող կուրսի պայմաններում միանգամայն անհնարին և քիչ թե շատ հաստատուն առևտրային հաշիվներ անել արտասահմանյան գործարքների ժամանակ։ Այդ ինչ Ռուսաստանն ավելի ու ավելի սերտ եր շաղկապվում համաշխարհային տնտեսության հետ։ Թղթադրամային շրջանառության շնորհիվ ձեռավոր եր Ռուսաստանի պետական այն վարկն էլ, վոր ունենում եր արտասահմանում։ Ցարական կառավարությանն անհրաժեշտ եր, ինչ գնով ուզում և լիներ, կարգի բերել թղթադրամային շրջանառությունը։ Մի ելք կար—լիարժեք մետաղային շրջանառության անցնել։ Այդ բանից հետո, երբ վոսկին դարձել եր համաշխարհային արժութամետաղ, արծաթին անցնելը միտք չուներ այլևս։ Տասնյակ տարիների ընթացքում հավաքեցին վոսկու ֆոնդ (մեծ մասամբ վոխառությունների միջոցով, և 1897 թվականին վերականգնվեց վարկատոմսերի ազատ փոխարկումը վոսկու։

ՎԻՏՏԵԻ ՌԵՖՈՐՄԸ։

Վոսկե ռուբլին, վորի քաշը 1885 թվականին սահմանվել եր 26,136 դոլիա, $^1/_3$-ով պակասեցվեց։

Ռուբլու մեջ եղած զուտ վոսկին սահմանվեց 17,424 դոլիա։ 10 ռուբլիանոց իմպերիալները, վորոնք պարունակում եյին 2 մսխալ 69,135 դոլիա զուտ վոսկի, հավասարեցրին 15 ռուբլու, 5-ռուբլիանոց կես-իմպերիալները՝ 7 ռուբլի 50 կոպեկի։ Այս նոր դեվալվացիան մի քիչ սքողել եյին նրանով, վոր իբրև մանրուն սակ բաց թողնված արծաթ ռուբլին շարունակում եր պահպանել իր 4 մսխալ 21 դոլիա կշռող զուտ արծաթ բովանդակությունը։ Այս բանը դժվար չեր անել, վորովհետև 1897 թվականի մասերքն արծաթը սաստիկ արժեզրկվել եր։ Վորպեսզի դեվալվացիան բոլ կարելություն անկատելի անցնի, Վիտտեն ոսկիրմից առաջ միաժամանակ արհեստական չեզոնակով կանգուն եր պահում «1 ռուբլին = 2,16 մարկ» կուրսը՝ Բերլինի բորսայում թղթադրամ ռուբլիներ գնելով այն ժամանակ, երբ սրանց պինն ընկնում եր, և թղթադրամ ռուբլիներ վաճառելով այն ժամանակ, երբ վոնգ եր սպառնում, թե ռուբլու կուրսը կարող և սրա համար նշված նորմայից վեր բարձրանալ։ Վիտտեն չեր թողնում, վոր ռուբլու կուրսը բարձրանա, վորովհետև այս բարձրացումը կարող եր ձեռա տալ կալվածատերերի դրպանին, այն կալվածատերերի, վորոնք ծախած հացահատիկի փոխարեն Գերմանիայում մարկեր եյին ստանում, իսկ հետո այս մարկերը դարձնում եյին ռուբլի։

Միաժամանակ, այն և 1897 թվականից մինչև համաշխարհային պատերազմի սկիզբը թղթադրամների պատմությունն ընդհատվում և Ռուսաստանում։ Ինչպես նկարագրում կտեսնենք, 1897 թվականի ռեֆորմից հետո վարկատոմսերն արդեն թղթադրամ չեն, այլ վարկադրամ են։ Վարկատոմսերը թղթադրամ դարձան համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո միայն, երբ նորից սկսեցին վարկատոմսեր բաց թողնել պետությանը հասույթ մատակարարելու նպատակով։

Պատերազմը հայտարարելուց արդեն 10 որ հետո վարկատոմսերի՝ վոսկու փոխարկումը դադարեցվեց։ Նույն այն ժամանակ գանձարանը Պետական բանկից սկսեց միջոցներ կորզել սաստկապես։ Պետական բանկն այժմ արդեն վարկատոմսեր մենակ նրա համար չեր տպագրում, վոր սրանցով իր ոպերացիաները կատարի արդյունաբերությունն ու առևտուրը վարկավորելու առաջարկում, ինչպես վոր նա այս անում եր առաջներում։ Այժմ արդեն տպագրական մամուլը գործում եր Պետական գանձարանի պարտադրերը հատուցելու, թափելու համար։ 1,700 միլիոնի բոլոր վարկատոմսերը, վորոնք պատերազմն սկսելու մոտերքը շրջանառության մեջ եյին, այսպիսով թղթադրամ դարձան։ Առ 1-ն հունվարի 1915 թ. վարկատոմսեր կային արդեն 3,125 միլիոնի, առ 1-ն հունվարի 1916 թ՝. 5,737 միլիոնի, առ 1-ն հունվարի 1917 թ՝. $9^1/_4$ միլիարդի, իսկ Հոկտեմբերյան Հեղափոխության ժամանակներում՝ 18 միլիարդից ավելի։

Մյուս կողմից, երկրում, վորն ուժասպառ եր եղել

պատերազմի շնորհիվ, ավելի ու ավելի եյին քչանում ապրանքները։ Թղթադրամների քանակի ամեն մի շատացում ու ապրանքային շուկայի յուրաքանչյուր սեղմում, նեղացում ընականաբար այն հետևանքն եյին ունենում, վոր աճում եյին ապրանքների գները։ Խորհրդային իշխանությունը, վորի գլխավոր հասութաղբյուրն սկզբում կարող եր միայն տպագրական մամուլը լինել, արդեն հարկադրված եր վիթխարի գումարների թղթադրամներ բաց թողնելու, վորպեսզի ամենահամեստ իրական արդասիքներ ձեռք բերի։ Մի անգամ բաց թողած թղթադրամներն արդեն ել յետ չեյին վերադառնում, այլ սըկում, հոսում եյին գյուղում, վորը պինդ պինդ պահում եր՝ միշտ այն հույսն ունենալով, թե թղթադրամների գնողական ուժի անկումը վերջ կունենա։ Սակայն թղթադրամների յուրաքանչյուր նոր բացարկ իրոք ավելի ու ավելի յեր արժեզուրկ դարձնում ռուբլին, և գներն աճում եյին անհավատալի չափերով։ 1921 թվականի հունիսի յերկրորդ կեսին Մոսկվայում հացը 140,000 անգամ ավելի թանգ արժեր, քան պատերազմից առաջ, կարտոֆիլը՝ 170,000 անգամ, իսկ շաքարը՝ 714,000 անգամ։

Սրա համապատասխան ել յուրաքանչյուր անգամ հարկ եր լինում թղթադրամների բացարկման մասշտաբը մեծացնելու, վորպեսզի քաղաքացիական պատերազմի պայմաններում հնար լիներ ծայրը ծայրին հասցնելու։

Առ 1-ն հունվարի 1918 թ. շրջանառության մեջ կար 27 միլիարդի թղթադրամ, առ 1-ն հունվարի 1919 թ՝. 61 միլիարդի, առ 1-ն հունվարի 1920 թ. 225 միլիարդի։

ԴԵՆՈՄԻՆԱՑԻԱ։

1920 թվականին բաց ե թողնվել 943,582 միլիոնի թղթադրամ։ 1921 թվականին՝ 16 տրիլլիոնից ավելի։ 1922 թվականին հաշիվ անելը հեշտացնելու նպատակով կատարվել ե դենոմինացիա (վերանվանումն), վորի ժամանակ առաջ բաց թողած թղթադրամներով 10,000 ռուբլին հավասարեցված ե յեղել 1922 թվականի 1 ռուբլուն։ 1922 թվականի թղթադրամի եմիսիայի ընդհանուր գումարը հասել եր այս թվականի դրամանիշներով 197,670 միլիոն ռուբլու։ 1923 թվականին յերկրորդ անգամ դենոմինացիա կատարվեց, ընդ վորում 1922 թվականին բաց թողած 100 ռուբլին հավասարեցվեց 1923 թվականի 1 ռուբլուն։

ՉԵՐՎՈՆԵՑ։

1922 թվականի վերջում բացի այն դրամանիշներից, վոր Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատը բաց ե թողնում պետության ծախսերը նրա յելքերին հավասարեցնելու նպատակով, շրջանառության մեջ յերևան յեկան **բանկտոմսեր** (բանկնոտներ), վորոնք պարտագրված եյին չերվոնցներով. չերվոնցը պարունակում ե 1 մսխալ 78,24 դոլիա զուտ վոսկի և =10 վոսկե ռուբլու։ Մեր բանկտոմսերը վարկադրամ են, վորովհետև պետական բանկը սրանք բաց ե թողնում արդյունաբերությունը վարկավորելու կարգով։

Բանկնոտային թղթադրամատումը վերանորոգելուց հետո յերկրորդ քայլն արվեց մեր դրամական սիստեմն առողջացնելու համար, այն ե՝ խիստ սահմանափակվեց դրամանիշների բացարկը, վոր կատարվում եր պետական գանձավարության ձեռքով։ 1923 թվականի օգոստոսից սկսած՝ դրամանիշերի բացարկը սահմանափակվեց ամիսը 15 միլիոն ռուբլով՝ վոսկու հաշվով։

1924 ԹՎԱԿԱՆԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ։

ՅԵՐԿԱԿԻ ԱՐԺՈՒՅԹ

Սկզբում կողք-կողքի գոյություն ուներ յերկու արժույթ — բանկնոտային ու թղթադրամականը (խորհնիշայինը)։ Առաջինը կայուն եր։ Յերկրորդն անընդհատ ընկնում եր, քանի վոր նոր դրամանիշեր եյին բացարկվում։ Որըստորե ավելանում եր թղթյա ռուբլիների այն գումարը վորը հավասար եր լինում մեկ չերվոնեցի։ Այսպես, որինակ, 1923 թվականի նոյեմբերի 1-ին չերվոնեցի կուրսը[1] 7,000 ռուբլի յեր, իսկ դեկտեմբերի 1-ին՝ 13,700 ռուբլի։

Անընդհատ ընկնող արժույթի գլխավոր չարիքն, այն ե՝ գնարկության (калькуляциа) ու հաշվառքի, այլ և դրամական խնայողությունների անհնարին լինելը մեզանում վերացվեց նրանով, վոր կայուն չերվոնեցային արժույթ մուծվեց։ Բոլոր հաշիվները պահվում եյին չերվոնեցի հաշվով։ Չերվոնեցի հաշվով եյին նշանակվում ապրանքների գները։ Դարձյալ չերվոնեցի հաշվով եյին մուծվում ավանդներն ու պահվում ընթացիկ հաշիվները բանկերում ու խնայողական գանձարկղերում։ Այնուամենայնիվ յերկակի արժույթի գո-

[1] Կուրսն ամեն որ սահմանվում եր Մոսկվայի բորսայում։

յութիւնը խանգարում էր մեր տնտեսութեան ուղիղ զարգացմանը։ Առևտրականներն իրենց ստանալիքն արժեզրկումից[1] ապահովելու համար ուզում էին գները։ Բանկերը, վորոնք իրենց հերթին ապահովում էին նրանց դանձարկղը մանող խորհրդիշների բազմութիւնը՝ վերջիններս արդիւնաբերութեանն ու առևտրին վարկ տրելով չերվոնեցի հաշվով, այնուամենայնիվ քիչ կորուստ չէին ունենում իրենց գանձարկղերի մնացորդների մեջ և այս հանգամանքի շնորհիվ պահք և բարձր տոկոսներ առնելին իրենց կլիենտներից։

Բայց ամենից ավելի տուժում էր այն ապրանքապտուտը, վոր կատարվում էր գյուղի ու քաղաքի միջև։ Գյուղացին, վորի համար շատ ավելի դժվար էր ոգտվել խնայողական գանձարկղերի մատուցած ծառայութիւններից, քան քաղաքի բնակչին, վորքան հնարավոր էր, աշխատում էր չծախել իր արդիւնքները։ Որինակ, չերը նա քաղաք էր գնում աղ ու նավթ գնելու, ապա իր հետ վերցնում էր մի տոպրակ հացահատիկ, բայց այս վերջինս բոլորը չէր ծախում, այլ այնքան դումարի միայն, վորքան պետք և ծախսեր անհրաժեշտ։ Մնացած հացահատիկը նա հետ էր տանում տուն...

ՌԵՖՈՐՄԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ։

Ժողովրդական տնտեսութեան կացութեան լավանալը հնարավորութիւն տվեց 1923—1924 տնտեսական տարվա համար[2] ԽՍՀՄ պետական բյուջեն կազմելու համեմատաբար փոքրիկ պակասրդով (1750 միլիոն չերվ., 1400 միլիոն ռուբլի մուտք)։ Այս բանը հնարավորութիւն տվեց ավարտելու դրամական ռեֆորմը, վոր սկսված էր 1922 թվականի հոկտեմբերի 6-ին չերվոնեցը մացնելով, և անցնելու մետաղական արժութիւնին։ 1924 թվականի փետրվարի 15-ից բոլորովին դադարեցվեց խորհրդիշների բացարկը։ Շրջանառութեան կլեավոր միջոց դարձավ վոսկյա 10 ռուբլու արժանիք ունեցող չերվոնեցը։ Ի լրացումն սրա, և գլխավորապես մանր

[1] Նույնիսկ այն ժամանակ, չերը առևտրականն ոգտվել կարող էր չերվոնեցի հաշվով պահվող ընթացիկ հաշվից, նա կորուստ էր ունենում նախ այն խորհրդիշերի մեջ, վոր նա թողնում էր իր մոտ՝ շրջանառութեան համար, չերկրորդ այն պատճառով, վոր ընթացիկ հաշվով պահելու մուծանքները սովորաբար ընդունվում էին հաջորդ օրվա կուրսով։

[2] Տնտեսական տարին սկսվում է հոկտեմբերի 1-ից։

շրջանառութեան կարիքներին ծառայելու համար բացարկվեցին գանձարանային տոմսեր, թղթադրամներ՝ վոսկյա 5 ռուբլի, 3 ռուբլի ու 1 ռուբլի արժանիքով, այլև սկսեցին բարձրահարգ արծաթադրամ կտրել 1 ռուբլանոց (4 մսխալ 21 դոլիա զուտ արծաթ) ու 50 կոպեկանոց, ու բիլոնային դրամ 20,15 ու 10 կոպեկանոց (արծաթյա) և 5, 3, 2, ու 1 կոպեկանոց (պղնձյա)։

Շրջանառութեան մեջ չեղած խորհրդիշերը փոխարինվեցին նոր դրամներով՝ 1923 թվականի խորհրդիշերի 50,000 ռուբլին վոսկյա 1 ռուբլուն հավասարեցնող կուրսով[1]։

Ցեղթադրվում էր 1923—1924 թվականի պակասրդը գոցել մասամբ փոխառութիւններով (շահարկու, գյուղացիական ու չերաշխավորյալ փոխառութիւններով,) մասամբ արծաթադրամների ու պղնձադրամների շահույթի ու բացարկի հաշվին, վերջապես մասամբ էլ գանձարանային տոմսերի հաշվին, վորոնք բացարկվում էին վոչ թե նայած գանձարանի կարիքներին, այլ ապրանքապտուտի պահանջների համապատասխան, վորի շնորհիվ և գանձարանային տոմսերը չէին արժեզրկվում։ **Գանձարանը ոգտագործեց շուկայի գրամատարողության մեծացումը, վորը թե միասնական արժույթի մուծման ու թե բնդհանրապես ԽՍՀՄ տնտեսական հզորության աճման հետեվանք էր։**

Դրամական ռեֆորմը կատարվեց արտասովոր հաջողութեամբ։ Շնորհիվ այն հանգամանքի, վոր ընկնող խորհրդիշերն ու գանձարանային կտրոն տոմսերը միաժամանակ գոյութիւն ունեցին կողք-կողքի, բնակչութիւնն աչքարա համոզվեց, վոր տարբերութիւն կա խորհրդիշի ու գանձարանային տոմսի միջև։ Միանգամից հասկացան, վոր գանձարանային տոմսի նշանակութիւնն է՝ չերվոնեցին ոժանդակող հանդիսանալ։ Դրամաշրջանառութեան կարգավորումը վերացնում էր գներն ուղղելու այն պատճառները, վորոնց մասին մենք խոսեցինք։ Այս պատճառով դրամական ռեֆորմի հետևանքը պիտի լիներ գների իջեցումը։ Սակայն չեթե շուկան թողնվեր իր գլխով, այն միանգամից չէր արձագանգիլ այնպես, ինչպես հարկն է։ Ուզրած գները, վորոնք **ընկնող** արժույթից ժառանգութիւն էին մնացել, մինչև

[1] Խորհրդիշերը շրջանառութենից հանելու ժամանակ շրջանառութեան մեջ ընդամենը 14 միլիոն ռուբլու խորհրդ կար։

իրենց բնական իջեցումը՝ կարող էին պայթեցնել պետության ու պետական արդյունաբերության խստագույն բյուջեն և ընդամին դժվարացնել կիրառումը դրամական ռեֆորմի, վոր հիմնված եր խստագույն բյուջեի վրա։ Այս պատճառով էլ չեռանդուն կամպանիայի ձեռնարկեցին՝ գներն իջեցնելու նպատակով։ Պետական ու կոոպերատիվ առևտուրը լարեցին իրենց բոլոր ուժերը՝ եժան ապրանք մատակարարելու շուկային։ Մասնավոր առևտրականն էլ ստիպված չեղավ գներն իջեցնելու։ Այս բոլորի հետևանքով մեր արժույթը լիակատար կայունության ձեռք բերեց։ Վոսկու լաժը չքացավ։ Հին դրամահատման վոսկե տասանոցի գինը սև բորսայում ընկավ՝ հասնելով պարիտետին ու նույնիսկ գլորվելով էլ ավելի ցած։

ՏԱՍՆՅՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՓՈՂԻ ԹԵՈՐԻԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ։

Կլասիկները փողի քիչ թե շատ լավակազմ թեորիա չեն հորինել։ Մերկանտիլիստ տնտեսագետները սովորեցնում էին, թե փողը հարստության միակ ձևն է։ Սմիթը սրանց դեմ կռվելիս վայրը ծռում եր հակառակ կողմը և սովորեցնում, թե փողը ճիշտ նույնպիսի ապրանք է, ինչպես և մյուս բոլոր ապրանքները։ Ռիկարդոն, վոր պրոֆեսիայով բանկիր եր, մոլորության մեջ ընկավ անգլիական փողային պրակտիկայի շնորհիվ։ Սրանից էլ առաջ է եկել նրա փողի թեորիայի հակասականությունը։ Մի կողմից նա վոսկու և արծաթի արժեքը ճիշտ բացատրում է նրանց վրա ծախսած աշխատանքով, իսկ մյուս կողմից նա մերժում է խառնում լիարժեք փողերը, բանկնոտներն ու թղթադրամներն՝ այս բոլորը քննելով իբրև «արժենիշեր»։

Պատմական դպրոցին պատկանող տնտեսագետները թեև հետաքրքրվում էին փողի թեորիայով, բայց փողին նվիրած իրենց ներկերում նրանք, չեթե կարելի չե այսպես ասել, ավելի շատ զբաղվում էին կլասիկ հեղինակների ժառանգությունը մսխելով, քան վորևե նոր բան ստեղծելով։ Բուրժուական տնտեսագետները փողի թեորիայի հարցերի նկատմամբ մեծ հետաքրքրություն սկսեցին ցույց տալ XIX դարի վերջում ու XX դարի սկզբին։ Այս բացատրվում է գլխավորապես նրանով, վոր սահմանային ոգտակարության թեորիայի մեջ փողի հարցերի վերաբերյալ ակներև բաց կար, վորն անհրաժեշտ եր լրացնել։ Մյուս կողմից՝ անհրաժեշտ եր տեսականորեն ամփոփել մի շարք դրամական ռեֆորմներ, վորոնք կիրառվել էին աշխարհիս ամենագլխավոր յերկրներում։ Այս ռեֆորմների մեջից թեորետիկների ուշադրությունն ամենից ավելի գրավում եր այն ռեֆորմը, վոր կիրառվել եր

Ավստրո-Հունգարիայում (տես § 81)։ Համաշխարհային պատերազմի ժամանակվանից սկսած՝ ինֆլյացիայի ու կայունացման հարցերն են այն հարցերը, վորոնք վառ են պահում փողի թեորիաների նկատմամբ առաջացած հետաքրքրությունը։

Հեղինակներից վոմանք շեշտը դնում էյին այն հարցի վրա, թե փողի էյությունն ինչ է, ուրիշներն էլ՝ այն հարցի վրա, թե ինչից է կախված փողի գնողունակությունը։

Առաջին կարգի հեղինակների միջից կխոսենք **նոմինալիստների** *մասին։ Յերկրորդ կարգի հեղինակներից կխոսենք* **քանակապաշտների** (КОЛИЧЕСТВЕННИК) *մասին։*

§ 86. ՆՈՄԻՆԱԼԻՍՏՆԵՐԸ.

Նոմինալիստների ուսմունքը նոր չէ։ Դեռևս XVII ու XVIII դարի հեղինակները—Լոկկը, Բերկլին ու Յումը փողերը համարում էյին հասարակ հաշվենիշեր (счетные знаки), *վորոնք լոկ պայմանական արժեք ունեն։ Նորագույն ժամանակներում նոմինալիստների ուսմունքը Գերմանիայում մի ամբողջ գրականություն է առաջ բերել։ Նորագույն գերմանական նոմինալիզմի ամենագլխավոր ներկայացուցիչներն են՝ Հիլդեբրանդ վորդին, Կնապպը, Բենդիքսենը, Շումպետրը, Լիֆմանն ու Ելստերը։ Մենք կանգ կառնենք այս հեղինակներից ամենից ավելի ինքնուրույն ու հետևողական հեղինակի—Կնապպի վրա։*

Կնապպի «Փողի պետական թեորիա» գիրքը լույս է տեսել 1905 թվականին։

Այս գրքի մեջ Կնապպն անխնա պատերազմ է հայտարարում այն բոլոր հեղինակներին, վորոնք փողի էյությունը շաղկապում են այն նյութեղենի արժեքի հետ, վորից շինված է փողը. Նա այս հեղինակներին առանց բացառության անվանում է մետաղապաշտներ (металлисты)*։ Փողերն ստեղծվում են պետության հրամայելովը, և արդեն պետության ընտրությունից է կախված, թե արդյոք փողը թղթի վրա տպի, թե՝ մետաղի։ Առանց պետության դրոշմի՝ փող չի լինում։ Վոսկին ու արծաթը, յերբ մի ժամանակ շրջան էյին գործում իրենց կշռի համեմատ, դեռ փող չէյին։*

Փողի բոլոր ֆունկցիաներից Կնապպն ընդունում է մեկը միայն, այն է վճարելամիջոցի ֆունկցիան։ *Վորպեսզի այս ֆունկցիան ընդգրկե շրջանառության միջոցի ֆունկցիան էլ, նա հարկադրում է ամեն մի առ ու ծախ քննարկել իբրև վարկային գործարք։ Տարբերությունն այն է միայն, վոր միքանի դեպքերում վճարումը հետաձգվում է յերկար ժամանակով, իսկ այլ դեպքերում կատարվում է պարտքի ծագելուց հետո անմիջապես ևեթ։ Վորովհետև պետությունը կարող է պարտատիրոջ ստիպել, վոր սա վճարքն ստանա թեկուզ հենց արժեզրկված արժույթով, և վորովհետև փողերը հարկավոր են միայն վճարման համար, ապա,* **Կնապպի ասելով, սրանից հետևում է, վոր պետությունը փող ստեղծելու հարցերում ամենազոր է։**

Վորովհետև մետաղյա փողերի մեջ պետության հրամանի նշանակությունը մթագնվում է այն իրողության շնորհիվ, վոր փողամետաղն (денежный металл) *արժեք ունի,* **ուստի Կնապպն ընդունում է, վոր ամենատիպիկ փողը թղթադրամն է։**

Փողերի այն դասակարգությունը, վոր տալիս է Կնապպը, շատ յուրահատուկ է։ Նա սահմանում է դրամների յերեք բաժանումն.—

1. Ըստ այն նյութեղենի, վորից շինված են փողերը։

2. Ըստ այն կապի բնույթի, վոր սրանք ունեն հիլիկ (гилический) *մետաղի հետ։ Կնապպը հիլիկ է անվանում այն մետաղը, վորից փող կարող է հատվել առանց սահմանափակման*

3. Ըստ այն դերի, վոր դրամներն ունեն շրջանառության մեջ։

Առաջին բաժանումը պարզաբանելու կարիք չունի։

Յերկրորդ բաժանումն ամենաբարդն է։ Այստեղ մենք ամենից առաջ հանդիպում ենք.—

ա. **պենզատորական**[1] (пензаторный) *վճարամիջոցների, այսինքն մետաղի այնպիսի ձույլերի, վորոնք հանձնվում են կշռով,*

բ) **պենզատորական դրամների**, *այսինքն այնպիսի դրամների, վորոնք ընդունվում են ըստ իրենց կշռի ու վոչ թե*

[1] *Կնապպն անպիտել է* (забраковать) *վոչ միայն իրենից առաջ յեղած տնտեսագետների հայացքներն, այլև նրանց տերմինաբանությունը։ Նա փողի հարցի վերաբերյալ միքանի տասնյակ նոր տերմիններ է հնարել, Այս տերմինների արմատները հունարեն են։*

ըստ համբարքի (այս լինում է այն ժամանակ, երբ դրա-մահատուն ապահովում է մետաղի հարգը միայն և վոչ թե քաշը)։

Պենզատորական վճարելամիջոցները, ինչպես արդեն ա-սացինք, կնապպը դեռ փող չի համարում։ Նրա կարծիքով փողի գլխավոր հատկանիշը նրա **գրոշմավորությունն է** (хартальность), այսինքն այն է, վոր փողն իր վճարողա-կան զորությունը ձեռք է բերում պետական դրոշմի շնորհիվ։

Այսպես ուրեմն, կնապպի թեորիայում պենզատորական վճարելամիջոցներին հաջորդում են դրոշմավոր փողերը (хар-тальные деньги)։ Սրանք իրենց հերթին բաժանվում են յե-րեք խմբի.

ա) **Կանխիկ փողեր**, այսինքն այնպիսի փողեր, վորոնք կարվում են հիլիկ մետաղից առանց սահմանափակման (և հենց այս հանգամանքը, վոր տվյալ մետաղից դրամ է կար-վում առանց սահմանափակման, նույն այս տվյալ մետաղը դարձնում է հիլիկ մետաղ։ Ստացվում է մի տեսակ կախար-դական շրջան, վորտեղ հիլիկ մետաղը վորոշվում է կանխիկ փողով, իսկ կանխիկ փողը՝ հիլիկ մետաղով)։

Այն դեպքում, երբ կանխիկ փողերն անպաշման կարո-վում են յուրաքանչյուր մարդու համար, ով համապատաս-խան քանակով մետաղ կբերի փողերանոց, և երբ նաև սահ-մանված և լինում դրամի մաշվելու սահմանը, կնապպը կան-խիկ փողերը անվանում է հիլոդրամիկ փողեր (гилодра-мические деньги)։ Այսպիսիներին մեր տերմինաբանու-թյամբ ասում ենք՝ բաց ստակահատմամբ լիարժեք փո-ղեր։

բ) Ավտոգեն մետաղափողեր, վորոնք, կանխիկ փողերին ի հակադրություն, հատվում են սահմանափակ քանակու-թյամբ միայն (որինակ՝ մեր մանրուն արծաթադրամները)։

գ) Թղթադրամներ [1]։

Փողերի՝ շրջանառության մեջ ունեցած դերի համաձայն կնապպը դրամները բաժանում է վալյուտար փողերի ու ակ-

[1] Միքանի միջնադարային տեսակներ, վորոնք գործնական կյանքում չեն պատահում և վորոնք կնապպը հնարել է դասակարգության բարեկազմ կեր-պարանք տալու համար, մենք բաց ենք թողել։

ցեսսորային փողերի (валютарные деньги и акцессорные деньги)։ Վալյուտար փողերն այն փողերն են, վոր պետու-թյունը փաստորեն շրջանառության է հանում տվյալ ժա-մանակում։ Մյուս փողերը կնապպն անվանում է ակցեսսո-րային փողեր։

Այնուհետև դալիս է փողերի բաժանումը վերջնական ու նախնական փողերի (окончательные деньги и предвари-тельные деньги)։ Նախնական են որինակ, բանկնոտներն այն դեպքերում, երբ սրանք չունեն պարտադիր վճարողա-կան զորություն կամ թե այն բոլոր դեպքերում, երբ բանկ-նոտ ստացած անհատն իրավունք ունի պահանջելու, վոր եմիսիոն բանկը բանկնոտի փոխարեն վերջնական փող տա։

Վերջապես գալիս է փողերի այն բաժանումն, ըստ վորի սրանք տրոհվում են ընդունելու համար պարտադիր ու ան-պարտադիր փողերի։ Անպարտադիր փող են բանկնոտներն այն, ճիշտ է, ներկայումս հազվադեպ միջոցներին, երբ սրանք չեն ուժված պարտադիր վճարողական զորությամբ։ Պար-տադիր ու անպարտադիր փողերի կողքին կնապպը դնում է նաև փողերի մի յերկրորդ տեսակ—փողեր, վորոնք պար-տադիր են մինչև մի վորոշ գումար (որինակ, մեր արծաթն ու պղինձը)։

ԿՆԱՊՊԻ ԳՈՐԾՆԱ-ԿԱՆ ՑՈՒՑԱԻՄՏԵՐԸ։

Այն հարցին, թե գործնականորեն վոր ար-ժույթն է ավելի լավը, կնապպը հակասական պատասխաններ է տալիս։ Միքանի տեղ նա գրում է, թե արժույթային քաղաքականության հարցերն իրեն չեն հետաքրքրում, քանի վոր ինքը քաղաքագետ չէ, այլ թեորե-տիկ է։ Ուրիշ միքանի տեղ էլ նա ընդունում է, վոր գործնակա-նորեն վոսկե արժույթն է ավելի լավը, վորովհետև փողային սիս-տեմի փլուզման դեպքում փողատիրոջ ձեռքում իրական արժեք է մնում։ Բայց այս չի խանգարում կնապպին մի շարք հատված-ներում մատնանշելու, թե թղթադրամն է ներքին շրջանառու-թյան համար ամենից արժանը։

Այն իրականությունը, վորի վրա հիմնում է կնապպը իր թեորիան, ավստրիական պետության իրականությունն էր, վոր-տեղ, ինչպես արդեն գիտենք, թղթադրամները պետության վիզային աջողակ քաղաքականության շնորհիվ իսկապես մնացին

ըստ համբարքի (այս լինում է այն ժամանակ, չերբ դրամահատումն ապահովում է մետաղի հարգը միայն և ոչ թե քաշը)։

Պենզատորական վճարելամիջոցներն, ինչպես արդեն ասացինք, Կնապպը դեռ փող չի համարում։ Նրա կարծիքով փողի գլխավոր հատկանիշը նրա **դրոշմավորությունն է** (хартальность), *այսինքն այն է, որ փողն իր վճարողական զորությունը ձեռք է բերում պետական դրոշմի շնորհիվ։*

Այսպես ուրեմն, Կնապպի թեորիայում պենզատորական վճարելամիջոցներին հաջորդում են դրոշմավոր փողերը (хартальные деньги)*։ Սրանք իրենց հերթին բաժանվում են չերեք խմբի.*

ա) **Կանխիկ փողեր**, *այսինքն այնպիսի փողեր, վորոնք կտրվում են հիլիկ մետաղից առանց սահմանափակման (և հենց այս հանգամանքը, վոր տվյալ մետաղից դրամ է կտրվում առանց սահմանափակման, նույն այս տվյալ մետաղը դարձնում է հիլիկ մետաղ։ Ստացվում է մի տեսակ կախարդական շրջան, վորտեղ հիլիկ մետաղը վորոշվում է կանխիկ փողով, իսկ կանխիկ փողը՝ հիլիկ մետաղով)։*

Այն դեպքում, չերբ կանխիկ փողերն անպայման կտրվում են յուրաքանչյուր մարդու համար, ով համապատասխան քանակով մետաղ կբերի փողերանոց, և չերբ նաև սահմանված է լինում դրամի մաշվելու սահմանը, Կնապպը կանխիկ փողերը անվանում է հիլոդրամիկ փողեր (гилодрамические деньги)*։ Այսպիսիներին մեր տերմինաբանությամբ ասում ենք՝ բաց ստակահատմամբ լիարժեք փողեր։*

բ) Ավտոգեն մետաղափողեր, վորոնք, կանխիկ փողերին հակադրությամբ, հատվում են սահմանափակ քանակությամբ միայն (որինակ՝ մեր մանրուն արծաթադրամները)։

գ) Թղթադրամներ[1]*։*

Փողերի՝ շրջանառության մեջ ունեցած դերի համաձայն Կնապպը դրամները բաժանում է վալյուտար փողերի ու ակցեսորային փողերի (валютарные деньги и акцессорные деньги)*։ Վալյուտար փողերն այն փողերն են, վոր պետությունը փաստորեն շրջանառության է հանում տվյալ ժամանակում։ Մյուս փողերը Կնապպն անվանում է ակցեսորային փողեր։*

Այնուհետև գալիս է փողերի բաժանումը վերջնական ու նախնական փողերի (окончательные деньги и предварительные деньги)*։ Նախնական են որինակ, բանկնոտներն այն դեպքերում, չերբ սրանք չունեն պարտադիր վճարողական զորություն կամ թե այն բոլոր դեպքերում, չերբ բանկնոտ ստացած անհատն իրավունք ունի պահանջելու, վոր էմիսսիոն բանկը բանկնոտի փոխարեն վերջնական փող տա։*

Վերջապես գալիս է փողերի այն բաժանումն, ըստ վորի սրանք տրոհվում են ընդունելու համար պարտադիր ու անպարտադիր փողերի։ Անպարտադիր փող են բանկնոտներն այն, ճիշտ է, ներկայումս հազվադեպ միջոցներին, չերբ սրանք չեն օժտված պարտադիր վճարողական զորությամբ։ Պարտադիր ու անպարտադիր փողերի կողքին Կնապպը դնում է նաև փողերի մի չերկրորդ տեսակ—փողեր, վորոնք պարտադիր են մինչև մի վորոշ գումար (որինակ, մեր արծաթն ու պղինձը)։

ԿՆԱՊՊԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ։

Այն հարցին, թե գործնականորեն վոր արժույթն է ավելի լավը, Կնապպը հակասական պատասխաններ է տալիս։ Միքանի տեղ նա գրում է, թե արժույթային քաղաքականության հարցերն իրեն չեն հետաքրքրում, քանի վոր ինքը քաղաքագետ չէ, այլ թեորետիկ է։ Ուրիշ միքանի տեղ էլ նա ընդունում է, վոր գործնականորեն վոսկե արժույթն է ավելի լավը, վորովհետև փողային սիստեմի փլուզման դեպքում փողատիրոջ ձեռքում իրական արժեք է մնում։ Բայց այս չի խանգարում Կնապպին մի շարք հատվածներում մատնանշելու, թե թղթադրամն է ներքին շրջանառության համար ամենից հարմարը։

Այն իրականությունը, վորի վրա հիմնում է Կնապպը իր թեորիան, ավստրիական պետության իրականությունն էր, վորտեղ, ինչպես արդեն գիտենք, թղթադրամները պետության դեվիզային աջողակ քաղաքականության շնորհիվ խիստ ավելի մնացին

---

[1] *Միքանի միջնորդական տեսակներ, վորոնք գործնական կյանքում չեն պատահում և վորոնք Կնապպը հնարել է դասակարգությանը բարեկազմ կերպարանք տալու համար, մենք բաց ենք թողել։*

վոսկե պարիտետի մակարդակի վրա մինչև համաշխարհային պատերազմի բուն սկիզբը։

Թղթադրամական սիստեմների փլուզման այն բոլոր դեպքերը, վորոնք պատմության մեջ հայտնի եյին նախքան նրա գրքի լույս տեսնելը, կնապպը բացատրում է կամ ապրանքների կողմում չեղած պատճառներով (արտադրության նվազում ու սպառման աճում) կամ թե չե՝ զուտ արտաքին պատճառներով (քաղաքական հեղաշրջումներ)։ Յերբ համաշխարհային պատերազմից հետո ինֆլյացիան դադարեց բացառություն լինելուց և դարձավ կանոն, կնապպը մի լրացուցիչ գլուխ գրեց իր գրքին, վորտեղ նա այնուամենայնիվ ելի փորձում է փողերի արժեզրկման մեղքը գցել վոչ թե փողերի՝ չափից ավելի լինելու, այլ ապրանքների չկալության վրա։

Այն մեծ նշանակությունը, վոր ունի կնապպը փողի հարցի վերաբերյալ, զուտ իրավաբանական է յեվ վոչ թե տնտեսագիտական։ Նույնիսկ այն միակ ֆունկցիան, վոր նա ընդունում է իբրև փողի ֆունկցիա, այսինքն վճարելամիջոցի ֆունկցիան նա ըմբռնում է իրավաբանական կողմից միայն։ Յեվ իրոք, ինչ է վճարումը տնտեսագիտական տեսակետից։ Ամենից առաջ այս՝ արտադրական հարաբերությունների վերարտադրության տարրերից մեկն է։ Պարզ փոխանակային հարաբերությունների ժամանակ վճարումը վերականգնում է վարկատուի աշխատանքային սեփականությունը։ Շահագործման հարաբերությունների ժամանակ վճարումը (տոկոսներով հանդերձ) վերականգնում է վարկատուի տնտեսական հզորությունն ու պարտապանի տնտեսական թուլությունը։ Իսկ կնապպը վճարումն ըմբռնում է բացառապես իբրև պարտավորության մարում, միևնույն ե, ուզում է այս մարումը կատարվի լիարժեք արժույթով, թե արժեզրկված արժույթով։ Պարզ է, վոր յերբ գերմանական գործարարները ինֆլյացիայի ժամանակ իրենց պարտքերը վճարում եյին արժեզրկված մարկերով, ապա այս վճարումն եր այս բառի վոչ թե տնտեսագիտական, այլ լոկ իրավաբանական իմաստով։ Յեվ փողի վերաբերյալ իր զուտ իրավաբանական ըմբռնումը կնապպն ուզում է փաթաթել վոչ թե իրավաբանական, այլ տնտեսագիտական թեորիայի վրա։

ԿՆԱՊՊԻ ԹԵՈՐԻԱՅԻ ԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ։

Չնայած Կնապպի թեորիայի ակնհայտնի խախուտ լինելուն, նրա գիրքը իր ժամանակին շատ մեծ տպավորություն է արել։ Այս թեորիան բուրժուական թեորետիկ տնտեսագետներին հրապուրում եր նրանով, վոր նոր մարտակոչ եր ուղղում աշխատանքային արժեքի թեորիային. ամենից իսկական փողերն, ասել կուզի, վոչ թե նրանք են, վոր աշխատանքային արժեք ունեն, այլ նրանք են, վոր աշխատանքային արժեք չունեն։ Այս թեորիան հրապուրում եր նաև պրակտիկ գործիչներին նրանով, վոր գոնե բառերով պահպանում եր անում վոսկին և ընդունում եր, թե փող ստեղծելու ասպարիզում պետությունը շատ ընդարձակ հնարավորություններ ունի։ Բայց պատերազմից հետո հակառակը յեղավ. Կնապպի աստղը խավարեց։ Այն բանից հետո, յերբ մարկն, որինակ, 1923 թվականին արժեզրկվեց միլիարդ անգամ, արդեն դժվար եր այս բոլորի մեղքը գցել ապրանքների վրա և պնդել, որինակ, թե ապրանքները քչացել են միլիարդ անգամ։ Այն ճշմարտությունը, թե փողի արժեզրկման անմիջական մեղքն ընկնում է փողերի մեծ բացարկների վրա, ժողովրդական լայն մասսաների սեփականությունն դարձավ, և այլևս դժվար եր ոձիք ազատել այս ճշմարտության ձեռից։

§ 87. ՔԱՆԱԿԱՊԱՇՏՆԵՐԸ.

«Այն պատրանքը... վոր իբրև թե ապրանքային գները վորոշվում են շրջանառության միջոցների բազմությամբ, իսկ այս վերջինս իր հերթին վորոշվում է տվյալ յերկրում գանվող փողանյութի բազմությամբ,—արմատակալած է այս պատրանքի անդրանիկ ներկայացուցիչների այն անհեթեթ թեորիայի մեջ, ըստ վորի ապրանքները շրջանառության պրոցեսն են մտնում առանց գին ունենալու, իսկ փողերն ել՝ առանց արժեք ունենալու, և հետո արդեն այս պրոցեսի ընթացքում ապրանքային խառնաշփոթի մի վորոշ մասը փոխանակվում է մետաղյա կույտի համապատասխան մասի հետ» (Մարքս)։

Ինչպես արդեն ասել ենք, քանակապաշտները (количественники) անկյունաքար են դարձնում վոչ թե փողի եյության, այլ նրա գնողական ուժի հարցը։ Այս հարցում նրանք հարաբե-

վոսկե պարիտետի մակարդակի վրա մինչև համաշխարհային պատերազմի բուն սկիզբը։

Թղթադրամական սիստեմների փլուզման այն բոլոր դեպքերը, որոնք պատմության մեջ հայտնի եյին նախքան նրա գրքի լույս տեսնելը, կնապպը բացատրում է կամ ապրանքների կողմում չեզած պատճառներով (արտադրության նվազում ու սպառման աճում) կամ թե չե՝ զուտ արտաքին պատճառներով (քաղաքական հեղաշրջումներ)։ Յերբ համաշխարհային պատերազմից հետո ինֆլյացիան դադարեց բացառություն լինելուց և դարձավ կանոն, կնապպը մի լրացուցիչ գլուխ գրեց իր գրքին, որտեղ նա այնուամենայնիվ եյի փորձում և փողերի արժեզրկման մեղքը գցել ոչ թե փողերի՝ չափից ավելի լինելու, այլ ապրանքների չկալության վրա։

Այն մեթոդաբանությունը, որ ուցի կճապպը փողի հարցի վերաբերյալ, զուտ իրավաբանական է յեվ ոչ թե տնտեսագիտական։ Նույնիսկ այն միակ ֆունկցիան, որը նա ընդունում է իբրև փողի ֆունկցիա, այսինքն վճարելամիջոցի ֆունկցիան նա ըմբռնում է իրավաբանական կողմից միայն։ Յեվ իրոք, ինչ է վճարումը տնտեսագիտական տեսակետից։ Ամենից առաջ այս՝ արտադրական հարաբերությունների վերարտադրության տարրերից մեկն է։ Պարզ փոխանակային հարաբերությունների ժամանակ վճարումը վերականգնում է վարկատուի աշխատանքային սեփականությունը։ Շահագործման հարաբերությունների ժամանակ վճարումը (տոկոսներով հանդերձ) վերականգնում է վարկատուի տնտեսական հզորությունն ու պարտապանի տնտեսական թուլությունը։ Իսկ կնապպը վճարումն ըմբռնում է բացառապես իբրև պարտավորության մարում, միևնույն ե, ուզում ե այս մարումը կատարվի լիարժեք արժույթով, թե արժեզրկված արժույթով։ Պարզ է, որ յերբ գերմանական գործարարները ինֆլյացիայի ժամանակ իրենց պարտքերը վճարում եյին արժեզրկված մարկերով, ապա այս վճարումն եր այս բառի ոչ թե տնտեսագիտական, այլ լոկ իրավաբանական իմաստով։ Յեվ փողի վերաբերյալ իր զուտ իրավաբանական ըմբռնումը կնապպն ուզում է փաթաթել ոչ թե իրավաբանական, այլ տնտեսագիտական թեորիայի վրին։

ԿՆԱՊՊԻ ԹԵՈՐԻԱՅԻ ԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ։

Չնայած Կնապպի թեորիայի ակնհայտնի խախուտ լինելուն, նրա գիրքը իր ժամանակին շատ մեծ տպավորություն է արել։ Այս թեորիան բուրժուական թեորետիկ տնտեսագետներին հրապուրում եր նրանով, որ նոր մարտակոչ եր ուղղում աշխատանքային արժեքի թեորիային. ամենից իսկական փողերն, ասել կուզի, ոչ թե նրանք են, որ աշխատանքային արժեք ունեն, այլ նրանք են, որ աշխատանքային արժեք չունեն։ Այս թեորիան հրապուրում եր նաև պրակտիկ գործիչներին նրանով, որ գոնե բառերով պատկերած եր անում վոսկին և ընդունում եր, թե փող ստեղծելու ասպարիզում պետությունը շատ ընդարձակ հնարավորություններ ունի։ Բայց պատերազմից հետո հակառակը յեզավ. կնապպի աստղը խավարեց։ Այն բանից հետո, յերբ մարկն, որինակ, 1923 թվականին արժեզրկվեց միլիարդ անգամ, արդեն դժվար եր այս բոլորի մեղքը գցել ապրանքների վրա և պնդել, որինակ, թե ապրանքները քչացել են միլիարդ անգամ։ Այն ճշմարտությունը, թե փողի արժեզրկման անմիջական մեղքն ընկնում է փողերի մեծ բացարկների վրա, ժողովրդական լայն մասսաների սեփականություն դարձավ, և այլևս դժվար եր ոձիք ազատել այս ճշմարտության ձեռից։

§ 87. ՔԱՆԱԿԱՊԱՇՏՆԵՐԸ.

«Այն պատրանքը... որ իբրև թե ապրանքային գները վորոշվում են շրջանառության միջոցների բազմությամբ, իսկ այս վերջինս իր հերթին վորոշվում է տվյալ յերկրում գտնվող փողանյութի բազմությամբ,—արմատակալած է այս պատրանքի անդրանիկ ներկայացուցիչների այն անհեթեթ թեորիայի մեջ, ըստ վորի ապրանքները շրջանառության պրոցեսն են մտնում առանց գին ունենալու, իսկ փողերն ել՝ առանց արժեք ունենալու, և հետո արդեն այս պրոցեսի ընթացքում ապրանքային խառնաշփոթի մի վորոշ մասը փոխանակվում է մետաղյա կուլտի համապատասխան մասի հետ» (Մարքս)։

Ինչպես արդեն ասել ենք, քանակապաշտները (количественники) անկյունաքար են դարձնում ոչ թե փողի եյության, այլ նրա գնողական ուժի հարցը։ Այս հարցում նրանք հարաբե-

րությունները շուռ են տալիս գլխիվայր: Փոխանակ շրջանառության մեջ յեղած փողերի քանակը բղխեցնելու ապրանքային գներից, նրանք, ընդհակառակն, ապրանքային գները բղխեցնում են շրջանառության մեջ յեղած փողի քանակից:

Քանակական թեորիան շատ հին է: XVII ու XVIII դարերի հեղինակներն արդեն այս թեորիան են բանեցնում մերկանտիլիստների դեմ պայքարելիս (Տես եջ 297):

Դեռևս Յումը գրում էր.—

«Վորովհետև ամենուրեք, վորտեղ շատ փող կա, ապրանքների միևնույն քանակը գնելու համար փողի ավելի մեծ գումար է հարկավոր, ապա յեթե մենք առնենք մի վորևէ առանձին յերկիր, փողի քանակը վոչ մի ազդեցություն չի անում վոչ դեպի լավ ու վոչ էլ դեպի վատ կողմը, ճիշտ այնպես, ինչպես հաշվապահության մեջ հետևանքը նույնն է ստացվում, յեթե վաճառականն այս նպատակի համար բանեցնում է հռովմեյական թվանշաններ, վորոնց կիրառման ժամանակ ավելի շատ նշաններ են հարկավոր, քան արաբական թվանշաններ բանեցնելիս»:

Ռիկարդոն նույնպես հարում է քանակական թեորիային, թեև վոչ այնպիսի միամիտ ձևով, ինչպես Յումը: Ռիկարդոն ընդունում է յերկու կարգավորիչի ազդեցությունը,

ՌԻԿԱՐԴՈՅԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՅԵՐԿՈՒ ԿԱՐԳԱՎՈՐԻՉԸ:

1. Վոսկու արդյունահանությունը (добыча): Յերբ գները շեղվում են աշխատանքային արժեքներից, և այս շեղումը կատարվում է վոսկու ոգտին, այսինքն յերբ գներն ընկնում են, ապա մեծանում է վոսկու արտադրության ոգտավետությունը, սրա հետ աճում է վոսկու բուն իսկ արտադրությունն էլ, շրջանառության մեջ յեղած վոսկու քանակը շատանում է և գները նորից ընկնելով հասնում են աշխատանքային արժեքի մակարդակին: Յերբ գների՝ արժեքից շեղվելը կատարվում է ապրանքների ոգտին, այսինքն յերբ բարձրանում են գներն, այն ժամանակ միևնույն կարգավորիչը ներգործում է հակառակ ուղղությամբ:

2. Արտաքին առևտուրը: Վոսկին ձգտում, հոսում է այնտեղ, վորտեղ ամենաբարձր գնահատություն է գտնում: Յերբ յերկրում անչափ մեծ քանակությամբ փող լինելու հետևանքով գները բարձրանում են, սկսվում է արտասահմանյան ավելի եժան

ապրանքների ներմուծումը դեպի յերկիր: Սրա հետևանքը լինում է այն, վոր վոսկին դուրս է հոսում յերկրից, և փողերի քանակի ու ապրանքների քանակի միջև էլի հավասարակշռություն է հաստատվում: Գների անկման ժամանակ հակառակն է կատարվում: (Արտաքին առևտրի կարգավորող ներգործության ազդեցությունը Յումն էլ էր ընդունում):

Ռիկարդոն թերագնահատում էր մի բան — գանձերի վոլորտի ազդեցությունը: Նա չէր հասկանում, վոր գանձերի վոլորտի շնորհիվ ավելորդ փող չի լինում շրջանառության ասպարեզում: Շրջանառության մեջ ներքաշվող փողերի քանակը վորոշվում է ապրանքների գներով:

Նորագույն ժամանակում փողի քանակական թեորիան նորից նշանավոր տեղ է գրավում բուրժուական գիտության մեջ: Այս թեորիան ընդունում են բուրժուական այնպիսի խոշոր ավտորիտետներ, ինչպիսիք են Շումպետրը (սա նոմինալիստ էլ է), Ֆիշերն ու Կասսելը: Սրանցից մենք մի քանի խոսք կասենք Ֆիշերի մասին, վորի «Փողի գնողական ուժը» վերնագրով գիրքը (վոր վերջերումս թարգմանվել է ռուսերեն) նորագույն քանակապաշտների ավետարանն է:

ՖԻՇԵՐ.

Ֆիշերն էապես վոչ մի նորություն չի մտցնում քանակական թեորիայի մեջ: Սա հին քանակապաշտներից տարբերվում է մի բանով —նրանով, վոր **բացի փողից նա խոսում է ընթացիկ հաշիվների մասին էլ: Սա** նախ ընդունում է, վոր **ընթացիկ հաշիվները նույնպիսի ազդեցություն ունեն գների վրա, ինչպես յեվ կանխիկ փողերը, յեվ յերկրորդ, վոր շրջանառության մեջ յեղած փողերի քանակի ու ընթացիկ հաշիվների քանակի միջեվ վորոշ համեմատականություն** (пропорциональность) **կա:**

Այս համեմատականության շնորհիվ Ֆիշերը վերադառնում է այնտեղ, վորտեղից ճանապարհ էր ընկել, այսինքն վերադառնում է այն մտքին, թե վերջին հաշվում ապրանքների գները վորոշվում են շրջան գործող փողի քանակով:

Ֆիշերը իր թեորիան պարունակում է հետևյալ ֆորմուլայի մեջ:

Յեթե մենք շրջանառության մեջ յեղած փողերի քանակը նշանակենք Փ տառով, ընթացիկ հաշիվներում յեղած փողերի քա-

նակն Ը տառով, շրջանառության արագությունը ՇԱ տառերով ու ապրանքային գների գումարը Գ տառով, մենք կստանանք հետևյալ հավասարությունը.

Գ=Փ×ՇԱ+Ը×ՇԱ, այսինքն յուրաքանչյուր տվյալ ժամանակամիջոցում ապրանքային գների գումարը հավասար է շրջանառության մեջ եղած փողերի քանակի ու նրանց շրջանառության միջին արագության արտադրյալին, սրա վրա գումարած՝ ընթացիկ հաշիվների ու նրանց միջին արագության արտադրյալը։

Յեթե այս Քորմուլան հասկանանք այսպես, թե այն ապրանքների գների գումարը, որոնց վճարումը կատարվել է կանխիկ փողով կամ չեկերով, հավասար է այս կանխիկ փողի կամ չեկերի գումարին (իսկ չե՞ որ Փ×ՇԱ+Ը×ՇԱ Քորմուլան կանխիկ փողի ու չեկերի այն ըդհանուր գումարն է միայն ճշտությամբ, որ վճարված է տվյալ ժամանակամիջոցում),—ապա այս փորմուլան նույնքան ճիշտ է, որքան չեվ անոգուստ է։ Բայց բանի էությունը հենց այն է, որ Քիշերը խոսում է վոչ թե պարզ հավասարության, այլ պատճառական կապակցության մասին, ընդամին նա շոգեկառքն ընդունում է վագոնների տեղ, իսկ վագոնները՝ շոգեկառքի տեղ։ Այն ժամանակ, երբ Գ-ն է որոշում հավասարության մի կողմի վիճակն, այսինքն երբ գների գումարն է որոշում շրջանառության մեջ եղող փողերի ու չեկերի գումարը, նա—Ֆիշերը հակառակն է ասում։

Բացի այն սխալից, որ Ֆիշերը ժառանգել է հին քանակապաշտներից (շրջանառության վոլորտի դերը չհասկանալը)[1] նա հարցի մեջ մի նոր սխալ է մտցնում, այն է՝ ընդունում է, որ կանխիկ փողերի շրջանառության ու չեկերի շրջանառության միջև համեմատականություն կա։ Այն ինչ նրանց միջև այսպիսի համեմատականության կախում չկա։ Շատ հարուստ մարդիկ կարող են չնչին գումարներ ունենալ իրենց գանձարկղերում՝ իրենց ճնշող փողերը բանկում պահ տված լինելով, իսկ միջակ կարողություն ունեցող մարդիկ կարող են իրենց բոլոր փողերը պահած ունենալ ծոցագրպանում։ Բացի սրանից, ընթացիկ հաշիվներ կարող են կազմվել նույնիսկ այն դեպքերում, երբ վոչ մի

[1] Ֆիշերը գանձն ուղղակի շրջանառության մաս է համարում։ Յեթե փողերը գանձ են կազմել, ապա Ֆիշերի կարծիքով այս նշանակում է շրջանառության դանդաղումն։

կապ չկա կանխիկ փողերի հետ։ Այս լինում է այն ժամանակ, երբ բանկն իր կլիյենտին վարկ է բաց անում ընթացիկ հաշվի ձևով։ Փոխանակ կլիյենտի ձեռքը հանձնելու վարկադրած գումարն, ասենք որինակ՝ 10,000 ռուբլին, բանկն այս գումարը գրում է կլիյենտի ընթացիկ հաշվում, և կլիյենտը հետո այս փողերն ստանում է մաս-մաս, վորքան վոր իրական կարիք է լինում։ Բացի սրանից, չեկ ստացողն էլ բանկից կանխիկ փող չի պահանջում, այլ միայն չեկը հանձնում է բանկին, վոր վերջինս համապատասխան գումարը մտցնի նրա—չեկն ստացողի—ընթացիկ հաշվի մեջ։

Քանակական թեորիան մի այնպիսի փորձ է, վորը ուզում է մի այլ կողմից հաղթահարել աշխատանքային արժեքի թեորիան։ Աշխատանքային արժեքի թեորիան բանալի չի տալիս գնի չերևույթը հասկանալու։ Քանակական թեորիան հրաժարվում է այս բանալիքի ոգնությունից[1]։ Ասել կուզի, գները պարզապես ծածկում են շրջանառության վոլորտում, իբրև փողերի ու ապրանքների ընդդիմակացության հետևանք։ Քանակական թեորիայի անճարակությունը չերևան է գալիս հենց առաջին քայլերից, երբ այն անընդունակ է դուրս գալիս բացատրելու առանձին ապրանքների արժեքների հարաբերությունները։

Ասենք թե շրջանառության մեջ եղած ապրանքային ամբողջ մասսան կազմված է չերկու ավտոմոբիլից ու 50 ձիուց միայն և դնենք թե տվյալ ժամանակում ապրանքների այս մասսայի դիմաց շրջանառության վոլորտում կանգնած է 15,000 ռուբլի։ Մենք ասում ենք, թե հենց միայն այդքան փող այն պատճառով է շրջանառության մեջ հերթապահություն անում՝ առանց գանձերի վոլորտը հանգստանալ գնալու, վորովհետև բոլոր ապրանքների գինը 15,000 ռուբլի չե։ Քանակապաշտը կասի հակառակը.—վորովհետև ապրանքների դեմ կանգնած կա 15,000 ռուբլի, ուստի ապրանքների գինը հավասար է այս գումարին։ Յեթե սրանից հետո մենք հարցնենք քանակապաշտից, թե ապա ինչո՞ւ ամեն մի ավտոմոբիլի գինը 5,000 ռուբլի չե և ամեն մի ձիուն՝

[1] Այս չի վերաբերվում Ռիկարդոյին, վորը գիտեր, թե աշխատանքային արժեքի ու գնի միջև կապ կա, և վորը քանակական թեորիային հարել եր իր անհետևողականության պատճառով։

միայն 100 ռուբլի, մենք նրանից, իբրև բակկ—պաշտից, ել պատասխան չենք ստանալ արդեն։

Թղթադրամական շրջանառության պայմաններում գների վրա անպայման ազդում է շրջան գործող դրամանիշերի քանակը, Բայց այստեղ ել չի կարելի կիրառել քանակական թեորիան սրա տիպիկ ձևով։ Հիլֆերդինգի սխալն ել հենց այն է, որ քանակական թեորիան նա փոխադրել և կիրառել է թղթադրամների վերաբերմամբ։

Այն հանգամանքը, որ Ֆիշերը իր վերլուծության մեջ է մտցրել ընթացիկ հաշիվներն, այս միայն այն նշանակություն ունի, որ թղթադրամային շրջանառության պայմաններում ինֆլյացիան կարող է հետևանք լինել ոչ միայն թղթադրամների ավելորդ բացարկի, այլև չեկային ավելորդ վարկադրման, որչափով որ չեկերը գործում են մասամբ իբրև թղթադրամներ։ Բայց Ֆիշերը խոսում է հենց այն ընթացիկ հաշիվների մասին, որոնք ծագում են ոչ թե վարկադրման միջոցով, այլ կանխիկ ավանդների միջոցով։

ՄԻՆՉԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆԸ ՅԵՎ ԱՐՏԱԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ·

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ.

ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.

«Քաղաքի՝ գյուղից բաժանվելն է հիմքն աշխատանքի յուրաքանչյուր զարգացած բաժանման, վորն իրականանում է ապրանքային փոխանակության միջոցով։ Կարելի յե ասել, վոր հասարակության ամբողջ տնտեսական պատմությունը ամփոփվում է այս հակադրությունների շարժման մեջ» (Մարքս)։

Քաղաքի ու գյուղի միջև տեղի ունեցող աշխատանքի բաժանումն այն է, վոր, իբրև կանոն, քաղաքում է կենտրոնացած արդյունաբերությունն այս բառի բուն իմաստով ու առևտուրն, իսկ գյուղում կենտրոնացած է բուսական ու կենդանական արդյունքների արտադրությունը (գյուղատնտեսություն)։

Գյուղատնտեսության ամենակարևոր ճյուղերն են՝ հողագործությունը (սրա մեջ մտնում է բանջարաբուծությունն, այգեգործությունը և այլն), անասնաբուծությունն ու անտառաբուծությունը։

Վերևում (գլուխ VIII) մենք ընդհանուր գծերով ծանոթացանք արդյունաբերության մեջ յեղած այն վիթխարի տեխնիկական առաջադիմության հետ, վոր կատարվել է կապիտալիզմի դարաշրջանում։ Սխալ կլիներ մտածելը, թե այս հեղաշրջումը չի շոշափել, չի դիպել գյուղատնտեսությանն ել։

§ 88. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Յերկրագործության ասպարեզում գործիքը (արորը, մանգաղը, կալսելու շղթան) դուրս է մղվում մեքենայի—տրակտորի, հնձող մեքենայի, կալսիչ մեքենայի ու մի ամբողջ շարք այսպիսի այլ մեքենաների կողմից։

Սերմերն ուշադրությամբ ընտրվում են, մշակվում, պատրաստվում են բույսերի ամենաբերքատու տեսակներ։

Բայց ամենից ավելի կարևորն այն աջողություններն են, վորոնց հասել ե տեխնիկան հողին այնպիսի նյութեր մատակարարելու գործում, վորոնք անհրաժեշտ են բույսերի սնման համար։

Հողն աղբով պարարտացնելը հայտնի եր դեռ հին դարերում ել, բայց սովորական պայմաններում տնտեսությունը չի կարող այնքան անասուն պահել, վոր աղբը բավականացնի հողի պտղաբերությունը լիովին վերականգնելու համար։

Հարկ եր լինում ժամանակ առ ժամանակ հանգիստ տալ հողին։ Ահա թե ինչու յեռադաշտության ժամանակ հողը յերկու տարի գործելուց հետո (մի տարի աշնացան ու մի տարի գարնացան) «հանգստանում ե մի ամբողջ տարի, այսինքն մնում ե հարոս (под пароᴍ)։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր իր ժամանակին յեռադաշտությունն ել առաջադիմական խոշոր քայլ եր ավելի պրիմիտիվ մյուս սիստեմների համեմատությամբ, վորպիսիք եյին **հողալքման** (залежная) ու **անտառադաշտային** (лесопольная) սիստեմները։ Հողալքման սիստեմի ժամանակ յերկու յերեք ցանքսերից հետո հողը լքում են և անցնում նոր հողամասեր։ Անտառադաշտային սիստեմի միջոցին անտառը կտրելուց հետո հանում են արմատակոճղերը և ցախ ու ճյուղերի հետ միասին այրում։ Մոխրով պարարտացած այս հողի վրա ցանքս են անում ցանքսի յետևից, մինչև վոր հողն ուժասպառ ե լինում։ Այնուհետև թողնում են այս տեղն ու անցնում նոր վայր։

Յուստուս Լիբիխը (1803—1873) հաստատել ե, վոր յուրաքանչյուր բույս անպայման պարունակում ե ածխածին, ջրածին, թթվածին, ազոտ, ծծումբ, ֆոսֆոր, յերկաթ, կալիում, կալցիում ու մագնիում (չհաշված մի շարք ուրիշ տարրեր, վորոնց թիվը մինչև 30-ի չե հասնում)։

ԲՈՒՅՍԻՆ ՎՈՐ ՏԱՐՐԵՐՆ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ։

Բույսն ածխածին, թթվածին ու ջրածին ստանում ե օդից ու ջրից։ Բույսերին ծծումբ, կալցիում, մագնիում ու յերկաթ այնքան քիչ ե հարկավոր, վոր վորքան ել հողն ուժասպառ յեղած լինի, բույսերը յերբեք սրանց պակասությունը չեն զգում։ Այս պատճառով ել վճռական նշանակություն ունեն ֆոսֆորը,

կալիումն ու մանավանդ ազոտը։

Ասենք թե լծելու համար անհրաժեշտ են ձի, սայլ ու անուր (ХОМУТ)։ Գյուղացին ունի 8 ձի, 5 սայլ ու 3 անուր։ Քանի՞ սայլ կարող ե լծել նա։ Միայն **յերեք**։ Ճիշտ նմանապես ել յեթե տվյալ դեսյատին հողում այնքան կալիում կա, վոր բավական ե 100 փութ բերքի համար, ֆոսֆոր՝ 50 փութ բերքի համար ու ազոտ՝ միայն 40 փութ բերքի համար,—բերքը չի կարող 40 փթից ավելի լինել։ Ուրիշ խոսքով՝ բերքատվությունը կախված ե այն անհրաժեշտ նյութից, վոր **նվազագույն** քանակությամբ կա հողի մեջ։ Այս ե հենց այսպես կոչված «մինիմումի որենքը», վոր սահմանել ե Լիբիխը։

«ՄԻՆԻՄՈՒՄԻ» ՈՐԵՆՔԸ։

Մ...

ՎՐԻՊԱԿ

21-րդ մամուլի յերեսների թվանշանները սխալմամբ տպված են 321—336, պետք ե լինեն 313—328։

... մշակում են ծծմբաթթվով (ստանում են սուպերֆոսֆատ)։ Ֆոսֆորավոր ընտիր պարարտանյութ են Թոմասի քծուարները (ШЛАКИ) (տես գլ. VIII)։

Կալիումավոր պարարտանյութ են մոխիրը, պոտաշն ու հատուկ կալիումավոր աղերը (ստասսֆուրտյան աղեր), վորոնք ստացվում են Գերմանիայում։

Գլխավոր ազոտավոր պարարտանյութն ե բորակը (սելիտրան), վորի ընդարձակ հանքաշերտերը գտնվում են Չիլիում (Հարավային Ամերիկա)։ Նախքան պատերազմը պարարտացման նպատակներով Չիլու բորակից Ռուսաստան ներմուծվում եր տարեկան 3 միլիոն փութ։

Վերջին ժամանակներում Արևմտյան Յեվրոպայի մեջ սկսել են բորակ ստանալ օդից՝ ելեկտրականության օգնությամբ՝ ազոտն այրելով Վոլտյան հզոր աղեղի մեջ[1]։

[1] Մեծ քաղաքների հրապարակներն ու փողոցները լուսավորող «ելեկտրական արևները» նույնպես կազմված են վոլտյան աղեղներից։

Սերմերն ուշադրությամբ ընտրվում են, մշակվում, պատրաստվում են բույսերի ամենաբերքատու տեսակները։

Բայց ամենից ավելի կարևորն այն աշխողությունները են, որոնց հասել և տեխնիկան հողին այնպիսի նյութեր մատակարարելու գործում, որոնք անհրաժեշտ են բույսերի սնման համար։

Հողն աղբով պարարտացնելը հայտնի եր դեռ հին դարերում էլ, բայց սովորական պայմաններում տնտեսությունը չի կարող այնքան անասուն պահել, որ աղբը բավականացնի հողի պաղատբերությունը լիովին վերականգնելու համար։

Հարկ եր լինում ժամանակ առ ժամանակ հանգիստ տալ հողին։ Ահա թե ինչու չեռադաշտության ժամանակ հողը չերկու

[redacted]

ու ճյուղերի հետ միասին այրում։ Մոխրով պարարտացած այս հողի վրա ցանքս են անում ցանքսի չեռնից, մինչև որ հողն ուժասպառ է լինում։ Այնուհետև թողնում են այս տեղն ու անցնում նոր վայր։

Յուստուս Լիբիխը (1803—1873) հաստատել է, որ յուրաքանչյուր բույս անպայման պարունակում է ածխածին, ջրածին, թթվածին, ազոտ, ծծումբ, ֆոսֆոր, չերկաթ, կալիում, կալցիում ու մագնիում (չհաշված մի շարք ուրիշ տարրեր, որոնց թիվը մինչև 30-ի չե հասնում)։

ԲՈՒՅՍԻՆ ՎՐՈՐ ՏԱՐՐԵՐՆ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ։

Բույսն ածխածին, թթվածին ու ջրածին ստանում է ողից ու ջրից։ Բույսերին ծծումբ, կալցիում, մագնիում ու չերկաթ այնքան քիչ է հարկավոր, որ վորքան էլ հողն ուժասպառ չեղած լինի, բույսերը չերբեք սրանց պակասությունը չեն զգում։ Այս պատճառով էլ վճռական նշանակություն ունեն ֆոսֆորը,

կալիումն ու մանավանդ ազոտը։

«ՄԻՆԻՄՈՒՄԻ» ՈՐՈՆՔԸ։

Ասենք թե լծելու համար անհրաժեշտ են ձի, սայլ ու անուր (хомут)։ Գյուղացին ունի 8 ձի, 5 սայլ ու 3 անուր։ Քանի՞ սայլ կարող է լծել նա։ Միայն չերեք։ Ճիշտ նմանապես էլ յերեք տվյալ դեպքում հողում այնքան կալիում կա, որ բավական է 100 փութ բերքի համար, ֆոսֆոր՝ 50 փութ բերքի համար ու ազոտ՝ միայն 40 փութ բերքի համար,—բերքը չի կարող 40 փթից ավելի լինել։ Ուրիշ խոսքով՝ բերքատվությունը կախված է այն անհրաժեշտ նյութից, որը **ամենաքանակությամբ** կա հողի մեջ։ Այս է հենց այսպես կոչված «մինիմումի որենքը», որ սահմանել է Լիբիխը։

Մատնանշված նյութերի պակասությունը, որ լինում է հողի մեջ, լրացնում են արհեստական պարարտացման միջոցով։

Պարարտանյութերը տրոհվում են ֆոսֆորավոր, կալիումավոր ու ազոտավոր պարարտանյութերի։

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ։

Հողը ֆոսֆորով հարուստ դարձնելու համար գործ են ածում աղացած ֆոսֆորիտներ (ֆոսֆորիտի ալյուր)։ Մեզանում ֆոսֆորիտի հարուստ հանքաշերտեր կան Պաղոլկի նահանգում։ Այնուհետև գալիս են Վյատկայի, Արլովի, Վարանեժի, Տամբովի, Ռյազանի, Կաստրոմայի նահանգները։ Վորպեսզի ֆոսֆորիտները լավագույն կերպով յուրացվեն, ֆոսֆորիտները մշակում են ծծմբաթթվով (ստանում են սուպերֆոսֆատ)։ Ֆոսֆորավոր ընտիր պարարտանյութ են Թոմասի քծուարները (шлаки) (տես գլ. VIII)։

Կալիումավոր պարարտանյութ են մոխիրը, պոտաշն ու հատուկ կալիումավոր աղերը (ստասֆուրտյան աղեր), որոնք ստացվում են Գերմանիայում։

Գլխավոր ազոտավոր պարարտանյութն է բորակը (սելիտրան), որի ընդարձակ հանքաշերտերը գտնվում են Չիլիում (Հարավային Ամերիկա)։ Նախքան պատերազմը պարարտացման նպատակներով Չիլու բորակից Ռուսաստան ներմուծվում եր տարեկան 3 միլիոն փութ։

Վերջին ժամանակներում Արևմտյան Եվրոպայի մեջ սկսել են բորակ ստանալ ողից՝ էլեկտրականության ոգնությամբ՝ ազոտն այրելով Վոլտյան հզոր աղեղի մեջ[1]։

[1] Մեծ քաղաքների հրապարակներն ու փողոցները լուսավորող «էլեկտրական արևները» նույնպես կազմված են վոլտյան աղեղներից։

Իբրև ազոտավոր պարարտանյութ գործ է ածվում **ծծբմբաթթվային ամմիակը** եվ, վոր ստացվում է իբրև թափթփուկ։ Կոկսացման ժամանակ և կամ այն միջոցին, յերբ գազագործարաններում գազ են պատրաստում։

Այնուհետև նկատեցին, վոր վոլոռնավոր բույսերը (бобовые растения) կորնկանը, վիկն, առվույտը, լյուպինը, սիսեռը, վոլոռնը, վոսպը) ազոտն ստանում և յուրացնում են ուղղակի ոդից։ Առաջ յեկավ «կանաչ» պարարտացման սիստեմը։ Արտում ցանում եյին վիկ կամ լյուպին, իսկ հետո վարելով ամբողջ բերքը ծածկում եյին հողի տակ, վորպեսզի վերջինս ազոտով հարուստ լինի (Վիլլի յեղանակ)։ Այս յեղանակի միջոցին ամբողջ ցանքսը պարարտացման վրա չե գործադրվում։ Բայց հետո պարզվեց, վոր ազոտի մեծ պաշար ե կուտակվում վոլոռնավոր բույսերի արմատների մեջ։ Այստեղից եվ առաջ ե գալիս այն, վոր հնարավոր ե լինում իբրև կեր արժեքավոր խոտերն, որինակ վիկը՝ քաղել անասուններին կեր դարձնելու համար։ Պարարտացման համար բավական են արմատները, վորոնք հնձից հետո մնում են հողի մեջ (Սոլոդու յեղանակ)։

«ԿԱՆԱՉ» ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ։

Այնուհետև հայտնագործվեց բուն իսկ այն պատճառը, թե ինչու վոլոռնավոր բույսերը հատուկ ընդունակություն ունեն ոդից ծծելով յուրացնելու ազոտը։ Բանից դուրս յեկավ, վոր այս յերևույթի պատճառն այն հատուկ բակտերիաներն են, վորոնք քուն են դրած լինում վոլոռնավոր բույսերի «արմատային կոշտերում» (корневые клубеньки)։ Սկսեցին արհեստական յեղանակով բազմացնել այս բակտերիաները (նիտրագին) և սրանցով վարակել վոլոռնավոր բույսերի սերմերը, վորպեսզի մեծացնեն ազոտ յուրացնելու սրանց ընդունակությունը (Գիլների յեղանակ)։

Ճիշտ իրազեկություն այն մասին, թե բույսերի սնման համար վոր նյութերն են անհրաժեշտ, հնարավորություն տվեց գիտակցաբար կարգավորել այս նյութերի մուտքն ու յելքը, վոր կատարվում է հողի մեջ։ XIX դարի կեսերից սկսած՝ կապիտալիզմի առաջավոր յերկրներում յեռադաշտությունը վտարվեց պտղափոխական (плодосменный) կամ բազմադաշտային (многопольный) սիստեմի շնորհիվ[1]։

Արհեստական պարարտացումն ու գյուղատնտեսական մեքենաներն արդի հացագործարաններն ազատում են բանելու համար անասուն պահելու անհրաժեշտությունից և նվազեցնում են անասնի, իբրև պարարտանյութեր արտադրելու գործիքի, նշանակությունը։ Այստեղից եվ հնարավորություն և առաջ գալիս, վոր բանող անասնի ցեղեր պահելու փոխանակ, մսատու և կաթնատու ցեղեր բուծեն կամ թե կրճատեն կերատու ցանքսերը և սրանց փոխարեն ընդարձակեն հացատու և տեխնիկական ցանքսերը (վուշ, ծխախոտ, շաքարի ճակնդեղ և այլն)։

Ագրոնոմիայի առաջադիմությունների շնորհիվ հնարավոր դարձան այնպիսի առատ բերքեր, վորոնց մասին առաջ յերազել եվ չեր կարելի։ Այսպես՝ որինակ, Գերմանիայում աշնացան ցորենի բերքերը հողի՝ մեծապես ինտենսիվ[1] մշակման ժամանակ հասնում են մեկ դեսիատինին մինչև 320 փութ հացահատիկի ու 400 փութ ծղոտի, աշնացան հաճարինը՝ դեսիատինին մինչև 280 փթի, գարունը՝ մինչև 313 փթի՝ վարսակինը՝ մինչև 325 փթի ու կարտոֆիլինը՝ դեսիատինին մինչև 2,150 փթի։ 1901-ից մինչև 1910 թվականը տևող տասնամյակում հիմնական հացահատիկների միջին բերքատվությունն Անգլիայում հավասար եր 126 փթի, Գերմանիայում՝ 108 փթի, այնինչ Ռուսաստանում, վորտեղ գերիշխում է յեռադաշտությունը և վորտեղ քիչ են տարածված գյուղատնտեսական մեքենաները, նույն ժամանակաշրջանում միջին բերքատվությունը հավասար եր դեսիատինին 46 փթի։

ԳԵՆԴԱՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ.

Նույնն է կատարվում նաև կենդանաբուծության ասպարիզում։ Բացի այն, վոր մեքենաներ են կիրառվում կենդանաբուծության արդյունքները մշակելու համար[2], այստեղ ավելի ու ավելի յեն կատարելագործվում կենդանիներ բուծելու և բազմացնելու, սրանց կերակրելու, սրանց հոգ տանելու յեղանակները։

ԼԵՆԻՆԸ ԻՆՉՊԵՍ Է ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՏԵՄՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ։

Լենինը հետևյալ խոսքերով է բնութագրում այն հեղաշրջումը, վոր կատարվել է գյուղատնտեսական տեխնիկայի մեջ կապիտալիզմի դարաշրջանում. «Հնասովոր (рутинный) արհեսաը գյուղացիների, վորոնց տրորել է կարիքը և ճզմել խավարը, դարձավ ագրոնոմիայի գիտական կիրառումն՝ խախտելով գյուղատնտեսության դարավոր

[1] Ահա մի նման արտում վեցադաշտային սիստեմի ժամանակ ցանքսերի հաջորդական հերթափոխության մի որինակ. I տարի՝ հաճար. II—կարտոֆիլ, III—կտավատ, IV—վարսակ ու առվույտ, V ու VI—առվույտ, VII—հաճար և այլն միևնույն կարգով։

[1] ԵՌՕՏԵՆՍԻՎ ՈՒ ԻՆՏԵՆՍԻՎ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ։ Տարբերում են յերկու տեսակ հողագործություն. եկստենսիվ, վորի ժամանակ շատ բերք են ստանում մեկ այն այն միջոցով, վոր արտավարերն են ընդարձակում, ու ինտենսիվ, յերբ տարածության յուրաքանչյուր միավորից (դեսիատինից, ակրից և այլն) աշխատում են ըստ կարելվույն շատ բերք ստանալ մաքսիմում չափերով աշխատանք ու կապիտալ գործադրելով։

[2] Լավ դրված տնտեսություններում մեքենաներով են կթում կովերը, սերը զատում, խոզի հարում։ Արդի սպանդանոցներում անասունները մորթելու, միսն աղելու ամբողջ աշխատանքը կատարվում է մեքենային յեղանակով։

լճացումն ու զարկ տալով (և շարունակելով զարկ տալ) հանրային աշխատանքի արտադրիչ ուժերի արագ զարգացմանը։ Յեռադաշտային սիստեմին փոխարինեց սերմնափոխության սիստեմը, բարելավվեց անասունների պահպանումն ու հողի մշակումը, բերքերը շատացան, սաստիկ զարգացավ հողագործության մասնագիտացումն ու աշխատանքի բաժանումն առանձին ճյուղերի միջև։ Մինչկապիտալիստական միակերպությանը հաջորդեց շարունակ սաստկացող բազմազանությունը, վորին ուղեկից եր գյուղատնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական առաջադիմությունը։ Առաջ չեկավ և արագ աճել սկսեց մեքենաների կիրառումը գյուղատնտեսության համար, շոգու կիրառումը. սկսվում է կիրառումն ելեկտրականության, վորին, ինչպես մատնանշում են մասնագետները, վիճակված է էլ ավելի խոշոր դեր կատարել արտադրության այս ճյուղի մեջ, քան շոգուն է վիճակվել։ Զարգացավ մերձատար ուղիների (под'ездные дороги), մելիորացիայի կիրառումն, արհեստական պարարտանյութերի գործածությունը բույսերի բնախոսության տվյալների համապատասխան. գյուղատնտեսության համար սկսեց կիրառվել բակտերիոլոգիան»։

§ 89. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

Արդյոք արտադրության ու կապիտալի համակենտրոնացումն ուղեկից է գյուղատնտեսության մեջ տեխնիկական հառաջադիմությանը։ Դեռևս մեր դարի սկզբին Լենինն այս հարցի վերաբերմամբ մեզ եր բերում հետևյալ տվյալները.—

«Յեթե առնենք կապիտալիստական յերկրների գյուղատնտեսությունն ընդհանրապես ու ամբողջությամբ առած, ապա կտեսնենք, վոր v-ն նվազում է և e-ն շատանում։ Թե Գերմանիայում, Ֆրանսիայում ու թե Անգլիայում գյուղական բնակչությունն ու գյուղական բանվորների թիվը պակասում է, այնինչ գյուղատնտեսության մեջ գործածվող մեքենաների քանակն աճում է։ Որինակ, Գերմանիայում 1882 թվականից մինչև 1895 թվականը գյուղական բնակչությունը 19,2 միլիոնից իջել է 18,5 միլիոնի (վարձու բանվորների թիվը 5,9 միլիոնից իջել է 5,6 միլիոնի), այնինչ գյուղատնտեսության մեջ գործածվող մեքենաների թիվը 458,369-ից բարձրացել է 913,391-ի. գյուղատնտեսության մեջ գործածվող շոգեմեքենաների թիվը 2731-ից (1879 թ.) բարձրացել է 12856-ի (1897 թ.), ընդ վորում շոգեկան ձիուժերի թիվը շատացել է էլ ավելի։ Յեղջերավոր անասունների քանակը 15,8 միլիոնից բարձրացել է 17,5 միլիոնի, իսկ խոզերինը՝ 9,2 միլիոնից՝ 12,2 միլիոնի (1883 ու 1893 թ. թ.)։ Ֆրանսիայում գյուղական բնակչությունը 1882 թվականին 6,9 միլիոն մարդուց («ինքնուրույն» տնտեսատերերից) իջել է 1892 թվականին 6,6 միլիոնի, իսկ գյուղատնտեսական մեքենաների թիվն աճել է այսպես. 1862 թվականին՝ 132784, 1882 թվականին՝ 278896, 1892 թվականին՝ 355795. յեղջերավոր անասունների թիվը՝ 12,0—13,0—13,7 միլիոն, ձիերինը՝ 2,91—2,84—2,79 միլիոն (1882—1892 թվականների ընթացքում ձիերի թվի նվազումն ավելի քիչ է, քան գյուղական բնակչության նվազումը)։ **Այսպես ուրեմն, ընդհանրապես ու ամբողջությամբ առած՝ արդի կապիտալիստական յերկրների վերաբերմամբ պատմությունը հաստատեց, վոր Մարքսի որենքը յերկրագործության նկատմամբ կիրառելի յե»։**

Այսպիսով, կապիտալիզմի հիմնական տենդենցներն, այն է՝ արտադրության յեղանակների կատարելագործումը յեվ արտադրության ու կապիտալի համակենտրոնացումն ընդհանրապես ու ամբողջությամբ առած՝ բնորոշ են վոչ միայն արդյունաբերության համար, այլ յեվ գյուղատնտեսության համար։

Սակայն հարկավոր է նկատել, վոր այս տենդենցների յերևան գալու թափն (արագության աստիճանը) միանման չէ այստեղ ու այնտեղ։ **Տեխնիկական առաջադիմության ու համակենտրոնացման թափն արդյունաբերության[1] մեջ շատ ավելի արագ է, քան գյուղատնտեսության մեջ։**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ։

Այս յերևույթն ունի իր թե տեխնիկական ու թե հանրային պատճառները։

Վոչ մի արտադրություն հնարավոր չէ առանց հողի։ **Քայց հողի դերն արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ նույնը չէ ամենևին։** *Արդյունաբերության մեջ հողն արտադրության բազիս է միայն։ Գյուղատնտեսության մեջ հողը, մթնոլորտն ու լույսն արտադրության ամենակարևոր գործոններն են։ Այստեղից էլ առաջ է գալիս նախ այն, վոր գյուղատնտեսությունը մեծ կախումն ունի յեղանակից ու տարվա*

[1] *Այս հոդվածի մեջ մենք արդյունաբերություն բառը գործ ենք ածում նեղ իմաստով միայն, այն է՝ մշակագործող (обрабатывающая) արդյունաբերության իմաստով միայն։*

ժամանակից: Հողագործության մեջ աշխատանքը սեզոնային բնույթ ունի: Յեթե կապիտալիստական կայքն անվանենք հացահատիկի ֆաբրիկա, ապա այս ֆաբրիկան չի կարող տարին բոլոր մինուլն քանակությամբ բանվոր ձեռքեր բանեցնել, ինչպես այս լինում է, որինակ, մանածագործարանում, յեթե գործվածքի լավ պահանջ կա: Խոհինձի ու հացահատիկները քաղելու ժամանակ շատ ձեռքեր են հարկավոր: Մնացած ժամանակ շատ ավելի քիչ թվով է բանող ձեռք հարկավոր: Մյուս կողմից, մանածագործարանում, որինակ, արտադրության տարբեր ետապները կարող են կատարվել և կատարվում են կողք-կողքի: Տարբեր բաժանմունքներում միաժամանակ կատարվում է մանելը, գործելը, ներկելը և այլն: Հողագործության մեջ այս հնարավոր չե: **Միյեվնույն ժամանակ չի կարելի աղբ կրել, վար անել, ցանել, հնձել ու կալսել:**

Սրա վրա պետք է ավելացնել աշխատանքի արտադրողականության տարեց-տարի տատանումները (բերքատվության տատանումները), այնպիսի պատահների հնարավորությունն, ինչպիսիք են՝ կարկտահարությունն, անասնամահը և այլն:

Վորոշ նշանակություն ունի հետևյալ հանգամանքն էլ: Գյուղատնտեսական տեխնիկայի առաջդիմությունը հաճախ հրապարակ է գալիս վոչ թե բուն իսկ գյուղատնտեսության մեջ, այլ արդյունաբերության մեջ: Այսպես, որինակ, տրակտորները, հնձիչ, կալսիչ ու այլ մեքենաները, վորոնք գյուղատնտեսության մեջ շատացնում են աշխատանքի արտադրողականությունը, արդյունաբերության արտադրանք են:

Գյուղատնտեսական մեքենաների արտադրության մեջ կապիտալն ու արտադրությունը բարձր չափով համակենտրոնացած են, բայց այս համակենտրոնացումն, այսպես ասած, չի մտնում գյուղատնտեսության հաշվի մեջ:

Այստեղ էլ ավելի մեծ նշանակություն ունեն հանրային բնույթ ունեցող պատճառները:

ՀԱՆՐԱՅԻՆ ԲՆՈՒՅԹ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ:

Կապիտալի ու հողի միջև մեծ մասամբ կանգնած և լինում հողատերը, վորին վճարում են գյուղատնտեսական ձեռնարկության շահույթի մի մասն, իբրև ռենտա: Հողը վարձու չե տրվում վորոշ ժամկետով, վորի լրանալուց հետո նույն հողը նրանում կատարված բոլոր բարելավումներով նորից անցնում է հողատիրոջ լիակատար տնօրինության տակ: Կապիտալիստը հակված է միայն այն բարելավումներն իրագործելու, վոր նա կարող է լիովին ոգտագործել վարձակալության ժամկետի ընթացքում: Մի քանի լայնածավալ մելիորատիվ աշխատանքներ (վորոնց նպատակն է բարելավել հողագործության համար հարկավոր պայմանները, որինակ, արհեստական վոռոգում գլուխ բերելը, ճահիճների ցամաքեցումը ձիշտ կազմակերպելը) ընդհանրապես հազվագյուտ դեպքում կարող են գլուխ բերվել առանձին, թեկուզ և խոշոր տնտեսությունների կողմից: Մելիորատիվ ընկերությունները ու մելիորատիվ վարկը գործին միայն մասամբ են ոգնում և չեն կարող աշխատանքները պլանաչափորեն կազմակերպել մի ամբողջ ռայոնի մասշտաբով: Ընդհանրապես, հողի մասնավոր սեփականությունը գյուղատնտեսության տեխնիկական առաջդիմության ամենագլխավոր արգելակն է:

ՄԱՆՐ ԳՅՈՒՂԱՑԱԿԱՆ ՏՆՏՍՈՒԹՅՈՒՆ:

Կապիտալիզմի ժամանակ հողագործության լայն մեքենայացմանն արգելք է լինում նախ՝ բանվորական ձեռքերի եժանությունն էլ: Հնձիչ մեքենայի հետ մրցում է մանգաղը, տրակտորի հետ՝ արորը: Յերկրորդ՝ մեքենան չի կարող մուտք գործել մանր գյուղացական տնտեսության մեջ: Իսկ մանր տնտեսատերը, թեյով չհանում է գյուղական տնտեսության ապարիզից էլ, բայց վոչ յերբեք այն արագությամբ, ինչպիսի արագությամբ այս տեղի չե ունենում արդյունաբերության մյուս ճյուղերում: Գյուղատնտեսության մեջ, աշխատանքի սեզոնային բնույթ ունենալու շնորհիվ, մանր արտադրողը կարող է հերթով կատարել թե իր հողամասում անելիք աշխատանքն ու թե վարձով անելիք գործը: Սովահար հողաբաժնի (голодный надел) վրա նստած գյուղացին կապիտալիստական գյուղատնտեսական ձեռնարկության համար շատ ցանկալի հարեվան է: Սեփական հողի կտորը գյուղացուն շղթայում է բնակավայրից, և նա միշտ պատրաստ կանգնած է կապիտալիստական կայքի սպասին՝ ծառայելու իբրև վարձու բանվոր:

Այսպիսով մանր գյուղացական տնտեսության լիակատար չքացումը ձեռնտու չե կապիտալի տեսակետից:

«Մանր արտադրությունը բնատնտեսության ավերակների վրա կանգնած է միշտ արտադրողի սնունդն անվերջ վատացնելով, պարբերական սովահարությամբ, բանվորական ուրը չերկարացնելով, անասունների վորակն ու սրանց հոգ տանելու գործը

վատացնելով, մի խոսքով՝ նույն այն միջոցներով, որոնցով տնայնագործական արդյունաբերությունն էլ կանգուն էր մնում և դիմանում կապիտալիստական մանուֆակտուրայի հանդեպ» (Լենին)։

Այս բոլոր պատճառները չեն թողնում, որ արտադրության կապիտալիստական մեթոդները գյուղատնտեսության մեջ զարգանան այնպիսի գլխապտույտ արագությամբ, ինչպես որ զարգանում են արդյունաբերության մեջ։

Այս պատճառով Լենինը համաձայնում է մի հեղինակի այն նկատողության հետ, թե արդի հողագործությունը իր տեխնիկայի ընդհանուր մակարդակով ավելի մոտենում, նմանվում է մանուֆակտուրային, և թե հողագործությունը դեռ չի հասել խոշոր մեքենային արդյունաբերության աստիճանին, որովհետև հողագործության մեջ դեռ չկա «սիստեմ մեքենաների», որոնք շաղկապվելով կազմում են արտադրական մեկ մեխանիզմ։

Ուստի գյուղատնտեսության մեջ արտադրության համակենտրոնացումը թեև տեղի է ունենում անշեղ, բայց այս կատարվում է ավելի դանդաղ թափով, քան արդյունաբերության մեջ։ Նույնիսկ հնորյա կապիտալիզմի յերկրներում գյուղացիական տնտեսությունն ու մանր ֆերմերի տնտեսությունը դեռ մեծ դեր է խաղում։

Ինչ վերաբերում է յեռաճող յերկրներին, ապա գյուղացիության պրոդուկցիան ժողովրդական տնտեսության գլխավոր հիմքն է կազմում դեռ։ Բայց պետք է ասել, որ արտաքին տեսքը խաբուսիկ է այստեղ, **Բուն իսկ գյուղացության մեջ գասակարգային շերտավորման պրոցեսը է կատարվում։** Կուլակությունը իր ձեռքումն է համակենտրոնացնում արտադրության ավելի ու ավելի մեծ մասը և մեքենային տեխնիկայի է անցնում։

ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ։

Կապիտալի համակենտրոնացումը յերբեմն բողոքվում է նրանով, որ նրան ուղեկից չի լինում հողի համակենտրոնացումը և այս պատճառով էլ վրիպում է վիճակագրության աչքից։

Այս լինում է, որինակ, հետևյալ դեպքերում.—

ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆ ԱՌԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ։

1. Ձեռնարկու կապիտալիստը յերբեմն կարող է փորիկ հողամասի վրա վարել շատ ինտենսիվ մի տնտեսություն, որը կապիտալի մեջ ներգրում (вложение) է պահանջում։ Այս բանը հատկապես հաճախ պատահում է այգեգործության, ծաղկաբուծության, բանջարաբուծության, կաթնատնտեսության ու այլ ասպարեզներում։

2. Յերբ գուտ անատնաբուծական տնտեսություններն անցնում են ավելի ինտենսիվ ձևերի (որինակ, յերբ արածելու կերը փոխարինում են ավելի սննդարար հնդավոր կերով), տնտեսության համար հարկավոր հողային տարածության չափը կրճատվում է, որովհետև հիմա արդեն ավելի քիչ արոտավայր է հարկավոր, այն ինչ կապիտալի ներդրումը մեծանում է։

ՀՈՂԻ ԹԱՓՈՒՆ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ ՈՒ ՀԻՊՈԹԵԿԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ։

Հողի բուն իսկ համակենտրոնացումը թափուր ձեվ է ստանում հիպոթեկային բանկերի գործունեության շուրջիվ, այն բանկերի, որոնց մեջ գրավադրված են գյուղացիների հողերը։ Հողն իրավաբանորեն պատկանում է գյուղացուն, բայց փաստորեն գյուղացին աշխատում է բանկի համար, որին նա ամեն տարի պարտավոր է վճարել տոկոսներն ու պարտքի մասնակի շրջուցման գումարը։

ՏԱՍՆԻՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՌԵՆՏԱՆ

§ 90. ՀՈՂԱՏԵՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԸ.

Կապիտալիստական հասարակության հիմնական դասակարգերը բանվորներն են ու կապիտալիստները։ Ճիշտ է, բացի այս յերկու դասակարգից, արդի կապիտալիստական պետություններում կան միլիոնավոր գյուղացիներ, քաղաքային մանր բուրժուազիա և այլն։ Բայց սրանք բոլորը լոկ բեկորներն են այն դասակարգերի, վորոնք արդեն չքացել են պատմության բեմից։ Նրանք բոլորը վաղուց արդեն ներս են քաշված կապիտալիստական շահագործման վոլորտը կամ իբրև շահագործվողներ ու կամ թե իբրև մանր շահագործողներ։ Կապիտալիզմի կաթսայում նրանք բավական արագ յեփվում, թրծվում են՝ իրենց միջից առաջ բերելով մի կողմից պրոլետարիատի կադրեր, իսկ մյուս կողմից՝ բուրժուազիայի շարքերը թեակոխող առանձին նորելուկներ։

Հին դասակարգերի այս բեկորների մեջ բոլորովին առանձնահատուկ տեղ են գրավում հողատերերը, վորոնք ապրում են վոչ թե բանվորական ուժի առուծախով, այլ իրենց պատկանած հողերի հասույթներով։ Հողատիրոջ դրությունը կապիտալիստական հասարակության մեջ արմատապես տարբերվում է գյուղացու կամ տնայնագործի դրությունից։ Տնայնագործը կամ գյուղացին (յեթե նա կուլակ չէ) իր աշխատանքով է ապրում։ Հողատերն ապրում է անաշխատ հասույթով, հետևաբար նա ապրում է ուրիշի աշխատանքի հաշվին, ընդսմին ապրում է «աղավարի»։ Կապիտալիստական հասարակության մեջ գյուղացու կամ տնայնագործի դրությունը կայուն չէ։ Նրանք հենց այսպես էլ մնում են, մինչև վոր նրանց էլ կհասնե խսկական պրոլետար դառնալու հերթը։ Ուրիշ է հողատերերի բանը։ Այն հասույթը, վոր սրանք ստանում են հողից, խիստ կայուն բնույթ ունի։ Կապիտալիզմի սիստեմի մեջ հողատիրոջը պատկանում է վոչ թե ժամանակավոր տեղ, այլ **մշտական ու հաստատուն տեղ**։

Այս գլխի խնդիրն է՝ պարզել հողատիրական հասույթի էությունը ճիշտ այնպես, ինչպես վերևում պարզաբանել ենք թե շահույթի ու թե տոկոսի էությունը։

ԿԱԼՎԱԾԱՏԵՐԸ։

Իրական կյանքում հողատերը յերբեմն հանդես է գալիս իբրև կալվածատեր, վորը վարձու բանվորների ձեռքով մշակում է հողը։ Այս դեպքում նա միաժամանակ ներկայանում է թե իբրև հողատեր ու թե իբրև կապիտալիստ։ Զուտ հողատիրական հասույթի հետ միասին նա, իբրև բանվորական ուժի գնորդ, շահույթ էլ է ստանում։

Խառնաշփոթությունից խուսափելու համար մենք վերցնենք հողատիրոջը զուտ կերպարանքով, յերբ նրա հողը վարձակալում է կապիտալիստը։

§ 91. ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՌԵՆՏԱՆ.

Ձեռնարկու կապիտալիստն, իբրև այսպիսին, կարող է հողը վարձակալել հետևյալ նպատակների համար.—

1. Կապիտալիստը վարձակալած հողի վրա վարձու բանվորների ձեռքով **հողագործական տնտեսություն է վարում կամ անասուններ է բուծում։**

Ամենահին կապիտալիստական յերկրում—Անգլիայում հենց այսպես էլ է։ Գյուղատնտեսության ասպարեզում գլխավոր ձեռնարկուները վոչ թե հողատերերն են, այլ խոշոր ֆերմեր-կապիտալիստները։

2 **Կապիտալիստն օգտագործում է հողի ընդերքը** (недра)՝ օգտակար փորածոներ—ածուխ, հանքանյութ և այլն արդյունահանելով, կամ թե օգտագործում է ջրային հարստությունները—ձուկը, ջրվեժների էներգիան և այլն։

3. **Կապիտալիստն օգտվում է հողից՝ վերջինս իբրև բազա գործածելով արդյունաբերական ձեռնարկության համար, այսինքն նա հողի վրա ֆաբրիկա կամ գործարան է շինում։**

4։ **Կապիտալիստը հողի վրա տուն է շինում՝ կենվորներին վարձով տալու համար։**

Այս բոլոր դեպքերում այն շահույթը, վոր ստացվում է ձեռնարկությունից, հասնում է կապիտալիստին։ Իսկ այն հասույթի մեջ, վոր հողատերն է ստանում, արդեն շահույթ չի պարունակվում։

Այնուհետև, հաճախ այնպես է պատահում, վոր կապիտա-

լխտը հողատիրոջից հողը վարձակալում է կենդանի ու մեռյալ կահույքի հետ միասին—անասունները, գյուղատնտեսական գործիքներն ու հետը։ Վարձակալած հողի վրա կարող են լինել հողատիրոջը պատկանող շենքեր։ Հողատերը կարող է ծախսեր արած լինել հողը պարարտացնելու, ցանկապատելու աշխատանքների վրա և այլն։ Այս բոլոր դեպքերում կապալավարձի մեջ, բացի զուտ հողատիրական հասույթից, պարունակվում է չերկու բան. 1) պարարտանյութերի, ցանկապատերի, կահույքի ամորտիզացիայի վճարն ու 2) հողատիրոջ ծախսած կապիտալի տոկոսները։

Զուտ հողագործական հասույթ ստանալու համար մենք պետք է ամորտիզացիայի ու տոկոսների բոլոր տարրերը մի կողմ դնենք և ուշադրության չառնենք։

Հողատիրական հասույթը, երբ այն վերցնում ենք իր զուտ կերպարանքով, այն է՝ հանելով ամորտիզացիայի, տոկոսի ու ծահույթի տարրերը, կոչվում է ռենտա։

Ռենտան կապիտալիստն է վճարում հողատիրոջը։ Ինչի՞ հաշվին է վճարում։ Պարզ է, որ բանվորից քամած հավելյալ արժեքի հաշվին։ **Նշանակում է՝ ռենտան հավելյալ արժեքի այն մասն է, որ կապիտալիստը բաժին է հանում հողատիրոջը նրա համար, որ սա թույլ է տալիս նրան օգտվել հողից՝ ձեռնարկության նպատակներով։**

Ռենտայի վերլուծությանն անցնելուց առաջ ուշք դարձնենք հետևյալ կետերի վրա.

1. Նախորդ գլխում մենք պարզել ենք այն պատճառները, որոնց հետևանքով գյուղատնտեսությունը տեխնիկայի զարգացման տեսակետից յետ է մնացել արդյունաբերությունից։ Այս պատճառներից ամենագլխավորը հողի մասնավոր սեփականությունն է։

2 Սրա հետևանքով եւ գյուղատնտեսության մեջ կապիտալի օրգանական կազմը, ընդհանրապես ու ամբողջությամբ առած, ավելի ցածր է, քան արդյունաբերության մեջ։

3. Հենց նույն պատճառով գյուղատնտեսական արտադրանքների պահանջն ավելի պակաս թափով պետք է բավարարվի, քան արդյունաբերության արտադրանքների պահանջը։

4. Սրա շնորհիվ եւ պակաս պտղաբեր այն հողերը, որոնց վրա կատարվող աշխատանքի արտադրողականությունն ավելի պակաս է, չպետք է ավելի արգասաբեր հողերի կողմից դուրս մղվեն այնպես անշեղ կերպով, ինչպես որ ավելի պակաս արտադրողական մեքենաները դուրս են մղվում ավելի արտադրողական մեքենաների կողմից։

§ 92. ՏԱՐԲԵՐԱԿԱՆ (ԴԻՖՖԵՐԵՆՑԻԱԼ) ՌԻ ԲԱՑԱՐՁԱԿ ՌԵՆՏԱՆ.

Ասենք թե տվյալ շուկային հաց են մատակարարում չերկու տիպի հողեր։ Առաջին տիպի հողերը տալիս են հեկտարին 1 տոննա բերք, իսկ չերկրորդ տիպի հողերը՝ $1^1/_2$ տոննա։ Մեկ հեկտար հողը մշակելու արժեքը (բանվորական ուժ, մեքենաներ, սերմեր, պարարտանյութ, տնտեսական շենքերի պահպանում և այլն) նույնն է չերկու տեղում եւ և, ասենք թե, հավասար է 50 ռուբլու։ Այնուհետև չենթադրենք, թե շահույթի միջին նորման հավասար է $10^0/_0$-ի։

Առաջին հողի հացահատկի տոննայի արտադրության անհատական գինն ի՞նչ կլինի։

Առաջին հողի հացահատկի արտադրության ծախքերը հավասար են 50 ռուբլու։ **Շահույթի նորման $=10^0/_0$-ի, 50 ռուբլուց՝ կանի 5 ռուբլի։** Արտադրության գինը հավասար է արտադրության ծախքերին՝ պլյուս միջին շահույթը, կանի 55 ռուբլի։

Յերկրորդ հողի հացահատկի տոննայի արտադրության գինն ի՞նչ կլինի։

Յերկրորդ հողի հացահատկի տոննայի արտադրության ծախքերը $=50 : 1^1/_2 = \frac{50 \cdot 2}{3} = 33^1/_3$ ռուբլի. արտադրության գինը $= \frac{100}{3} + \left(\frac{100}{3} \times \frac{1}{10}\right) = \frac{110}{3} = 36^2/_3$ ռուբլի։

Յենթադրենք, որ առաջին, այն է՝ վատ տիպի հողի վարձակալները հողատերերին տալիս են հեկտարին 1 ռուբլի տարեկան ռենտա։ Առաջին տիպի հողերից ստացած հացահատկի յուրաքանչյուր տոննայի վրա այս ռենտան ծանրանում է մեկ ռուբլի գումարով. Նշանակում է վատ հողերից ստացած հացահատկի տոննան պետք է ծախվի 56 ռուբլով, որ հանե իր ինքնարժեքն, այլ և միջին նորմայով շահույթն ու ռենտան կամ, ավելի կարճ ասած, որ հանե իր արտադրության գինն ու ռենտան։ Յեթե համաշրեն հացի գինը 56 ռուբլուց ցածր մնա, ապա այն կապիտալիստները, որոնք առաջին տիպի հողեր են վարձակալել, շարունակ միջին շահույթից պակաս շահույթ կստանան։ Նրանք կթողնեն այս հողերը, որ ավելի նպաստավոր գետեղում

գանեն իրենց կապիտալների համար։ Հասկանալի չե, չեթե շուկան կարողանա ապրվել (обойтись) առանց այս հողի, չեթե հացահատիկի այն ամբողջ քանակությունը, որը հարկավոր ե, կարողանան տալ չերկրորդ տիպի հողերը մենակ, այն ժամանակ՝ բարի ճանապարհ։ Իսկ չեթե շուկան լավ տիպի հողերի հացահատիկով մենակ չի կարող ապրվել, ապա պահանջի ու առաջարկի անհամապատասխան լինելու հետևանքով հացի գները պետք ե այնքան բարձրանան, որ վատ հողերի կողմն էլ կապիտալներ գաշեն։

Բանի դեռ այն հացահատիկը, որ ստացվում ե վատ հողերից, շուկայի քաղաքացին ե, և շուկան չի կարող առանց այն հացահատիկի ապրել, ապա սրա արտադրության անհատական գինը ռենտայի հավելումով՝ կլինի թելադրող գինը[1]։ Հացի գինը կձգտե հավասարվելու 56 ռուբլու՝ մեկ տոննալին։ Ինչ վերաբերում ե լավագույն հողերից ստացվող հացահատիկ ծախողներին, ապա սրանք ամենևին դեմ չեն լինել բարձր ինքնարժեք ունեցող հացահատկի դեկտատուրային։ Սրանց հացահատկին էլ միևնույն գինը կտան, թեև վերջինի արտադրության գինը շատ ավելի ցածր ե։ Յեթե սրանք էլ մեկ հեկտարին 1 ռուբլուց ավելի ռենտա չեն վճարել, ապա $1^1/_2$ տոննա բերք ունենալու դեպքում յուրաքանչյուր տոննայի վրա ծանրանում ե $^2/_3$ ռուբլի ռենտա միայն։

[1] Չպետք ե կարծել, թե հողագործական արդյունքների արժեքը վորոշվում ե արտադրության վատթարագույն պայմաններով մենակ։ Ինչպես և ամենուրեք, այնպես և այստեղ արժեքը վորոշվում ե հանրորեն անհրաժեշտ աշխատանքով։ Բայց այն իրողությունը, որ պահանջը վատթարագույն պայմանների արտադրանքն էլ ե դարձնում շուկայի քաղաքացի, նույն իրողությունը վատթարագույն պայմանների արդյունքի արտադրության անհատական գինը դարձնում ե թելադրող գին։ Ընդ սմին խոսքը վերաբերում ե վոչ թե վատթարագույն հողերին ընդհանրապես, այլ տնտրաժեշտ հողերից վատթարագույններին միայն։

Այսպիսի դեպքեր, յերբ վատթարագույն պայմանների արտադրանքները հարկադրում են, որ շուկան հաշվի առնի արտադրության նրանց պայմանները, լինում են արդյունաբերության մեջ էլ։ Այսպես որինակ, համաշխարհային պատերազմի սկզբից, յերբ շատացավ զինվորի մահուդի, վերմակների ու այլոց պահանջը, կենդանության ստացան ձեռքի հաստոցներ ունեցող մանածագործական ձեռնարկությունները, և սրանց արտադրանքի գինը դարձավ թելադրող գին։ (Ավելի լավ սարքավորված ձեռնարկությունները գերշահույթ էին ստանում)։ Սակայն արդյունաբերության մեջ կարճատև ե լինում արտադրության վատթարագույն պայմանների դեկտատուրան. իսկ հողագործության մեջ վատթարագույն պայմանների դեկտատուրան ավելի կայուն, յերկարատև քանակի յե լինում այն հողի սահմանափակ լինելու շնորհիվ, որ կարող ե մշակվել ընդհանրապես։

Ուրեմն, վորպեսզի լավ հողերի հացահատիկն ինքնարժեքը, միջին շահույթն ու ռենտան հանի, պետք ե ընդամենը ծախվեր $36\ ^2/_3$ (լավ հողի հացահատկի արտադրության գինն ե այս) $+\ ^2/_3$ (ռենտան) $= 37^1/_3$ ռուբլով։ Բայց վորովհետև բարձր ինքնարժեք ունեցող հացահատկի պատճառով հացահատկի գնի սահման վորոշվել ե 56 ռուբլին, ուստի լավ հողերից ստացած հացահատկի յուրաքանչյուր տոննան $56 - 37^1/_3 = 18^2/_3$ ռուբլի գերշահույթ ե խոստանում։ Լավ հողի յուրաքանչյուր հեկտար խոստանում ե $18\ ^2/_3 \times 1^1/_2 = \frac{56 \cdot 3}{3 \cdot 2} = 28$ ռուբլի։ Բայց... կապիտալիստը մտադրվում ե, իսկ հողատերը՝ կարգադրում։ Չե՞ վոր այս լավ հողի տերը վոչ այլ վոք ե, բայց չեթե նա, հողատերը։ Իմանալով, վոր իր հողի յուրաքանչյուր հեկտարը կարող ե տարեկան 28 ռուբլի գերշահույթ տալ, նա հեկտարին մոտավորապես նույնքան ռուբլի ավելի կապալավարձ կպահանջի, քան պահանջելիս կլինի վատթարագույն հողի տերը։ Յեվ զուր չի պահանջի։ Վորչափով վոր նա ձեռք չի տալիս շահույթի միջին նորմային, և այս թողնում ե վարձակալին, կապիտալիստները, վորոնք իրար հետ մրցում են իրենց կապիտալների գետեղման տեղերի համար, վերջիվերջո այնքան կբարձրացնեն կապալավարձը, որ վարձակալին կմնա միջին նորմալի շահույթը միայն։ Յեթե վատթարագույն հողերը տրվում են հեկտարը 1 ռուբլով, ապա լավագույն հողերի ռենտան կձգտի հավասարվելու հեկտարին 1 ռ. + 28 ռ. = 29 ռուբլու։

ՌԵՆՏԱՆ ՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ.

Ռենտան վատթարագույն հողի, վոր արտադրության գինն ե թելադրում (մեր որինակում 1 ռուբլի ռենտան), կոչվում ե բացարձակ ռենտա։ Այն լրացուցիչ ռենտան, վոր ստացվում ե մյուս հողերից՝ սրանց ավելի արգասաբեր լինելու կամ ուրիշ առավելությունների պատճառով (մեր որինակում 28 ռուբլի ռենտան) կոչվում ե դիֆֆերենցիալ (տարբերական) ռենտա։

Պարզ ե, վոր բացարձակ ռենտան զուտ հավելում ե միայն, վոր գրվում ե արտադրության կարգավորիչ գնի վրա։ Իսկ տարբերական ռենտան ստացվում ե հենց այն պատճառով, վոր լավագույն հողամասերի արտադրանքի ինքնարժեքն ու միջին շահույթն, այսինքն արտադրության անհատական գինն ավելի պակաս ե արտադրության այն գնից, վորը հացի շուկայում կարգավորում ե գները։

Սակայն բացարձակ ռենտան էլ մի հավելումն է արտադրության կարգավորիչ գնի վրա միայն ու վոչ յերբեք արտադրանքի արժեքի վրա։ Այս հասկանալու համար հարկավոր է ուշադրության առնել այն, վոր մենք վերևում ասել ենք գյուղատնտեսության ասպարիզում յեղած կապիտալի որգանական կազմի մասին։ Վորչափով վոր այս ասպարիզում կապիտալի որգանական կազմը պետք է կապիտալի միջին հանրային կազմից ցած լինի, նույն չափով էլ պետք է գյուղատնտեսական արդյունքների արտադրության գինն ընդհանրապես ցած լինի նրանց արժեքից։ Այս նշանակում է, վոր բացարձակ ռենտան կարող է վճարվել հողատիրոջն այն տարբերության հաշվին, վոր լինում է արտադրանքի արժեքի ու արտադրության գնի միջև։

Մենք արդեն գիտենք, վոր այն ճյուղերից, վորոնց կապիտալի որգանական կազմը միջինից ցած է, հավելյալ արժեքի՝ շահույթի միջին նորմայից ավելի յեղած մասը հոսում է և լցվում է այն ճյուղերի մեջ, վորտեղ կապիտալի որգանական կազմը միջինից բարձր է։

Բայց վորպեսզի հավելյալ արժեքի այս հոսելն ու լցվելն անարգելք կատարվի, անհրաժեշտ է, վոր ցածր կազմ ունեցող ճյուղերում մրցման թափը պակաս ուժգին չլինի, քան բարձր կազմ ունեցող ճյուղերում է լինում։ Վերևում (3-րդ կետ) մենք պարզաբանեցինք, թե գյուղատնտեսական արտադրանքների պահանջն ընդհանրապես ու ամբողջովին այնպես ինտենսիվ թափով չի բավարարվում, ինչպես արդյունաբերության արտադրանքների պահանջը։ Այս նշանակում է, վոր այստեղ—գյուղատնտեսության մեջ—մրցման թափն ավելի պակաս է, ուրեմն և վորոշ չափով դժվարացած է հավելյալ արժեքի ավելցուկների՝ գյուղատնտեսությունից արդյունաբերության մյուս ճյուղերը հոսել ու լցվելը։ Ավելցուկն արդեն ամբողջովին չի անցնում մյուս ճյուղերին։ Սրա մի մասը մնում է հենց այստեղ—գյուղատնտեսության մեջ մի ավելցուկի կերպարանքով, վոր ստացվում է գնի՝ արտադրության գնից ավելի բարձր լինելու պատճառով։ Բայց այս ավելցուկը բաժին է ընկնում վոչ թե կապիտալիստ վարձակալին, այլ հասնում է հողատիրոջն իբրև բացարձակ ռենտա։ Վորովհետև յեթե վարձակալը համառե և չկամենա այս ավելցուկը տալ հողատիրոջն, այսինքն յեթե վարձակալը չբավականանա գյուղատնտեսության մեջ յեղած շահույթի

միջին նորմայով, այլ մի ավելցուկ էլ ուզենա վրադիր, ապա նա յերկու արգելքի կհանդիպի. 1) ուրիշ կապիտալիստներ, վորոնք բավականանում են շահույթի միջին նորմայով, նրան մեջտեղից կվտարեն, 2) տերերն այն վատթարագույն հողերի, վորոնք հարկավոր են շուկային, բայց տարբերական ռենտա չեն բերում, իրենց հողերը ձրի չեն տալ մշակելու։ Այս հանգամանքը վարձակալին կստիպե հողատիրոջը տալու, իրրև բացարձակ ռենտա, վերևում մատնանշած այն ավելցուկը, վոր ստացվում է արտադրության գնից ավելի։ Մի անգամ վոր բացարձակ ռենտան մտնում է վատթարագույն հողի արտադրանքի գնի մեջ և մի անգամ վոր վատթարագույն հողի արտադրանքի գինը կարգավորիչ գին է լինում, ապա բացարձակ ռենտան պետք է մտնի մյուս հողերի արտադրանքի գնի մեջ էլ։ Այս պատճառով վատթարագույն հողերի տերերն ստանում են բացարձակ ռենտա, **իսկ մյուս հողերի տերերն ստանում են թե բացարձակ ռենտա ու թե տարբերական ռենտա:**

ՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՌԵՆՏԱՆ

Յերբ վատթարագույն հողամասի ռենտան պարփակված է լինում արժեքի շրջանակներում, հողատիրոջ իրավունքը սրան հնարավորություն է տալիս ամբողջովին կամ մասնակի չափով յուրացնելու այն տարբերությունը, վոր լինում է արժեքի ու արտադրության գնի միջև, և չթողնելու, վոր այս տարբերությունը սրոհվելով բաշխվի արտադրության այն ճյուղերի միջև, վորոնց կապիտալի որգանական կազմը միջինից բարձր է։ **Իսկ յեթե վատթարագույն հողամասերի ռենտան մի հավելումն է, վոր ստացվում է արժեքից էլ ավելի, ապա գյուղատնտեսական արտադրանքների գների կազմվելն արդեն մենաշնորհային բնույթ է կրում։ Սարսուռ այսպիսի ռենտան անվանում է մենաշնորհային ռենտա[1]։**

Կոպիտ սխալ կլիներ մտածել, թե ռենտան հողի ծնունդն է։ Ռենտան մի մասն է հավելյալ արժեքի, վորի ստեղծողն

[1] *Մենաշնորհային գները լինում են այն բոլոր դեպքերում, յերբ վաճառողը կամ վաճառողների խումբն ոգտվում են այն առավելություններից, վորոնք մատչելի չեն մյուս վաճառողներին, որինակ՝ ոգտվում է գյուտի արտոնագրից, գաղտնիքից, արտադրելու կամ ծախելու բացառիկ իրավունքից և այլն։ Մենաշնորհային գները կարող են շատ բարձր լինել, քան արժեքն է։ Հասկանալի չէ, յուրաքանչյուր հավելում, վոր լինում է արժեքից ավելի, կատարվում է հաշիվ մյուս ապրանքների, վորոնք պետք է արդեն արժեքից ցած գնով ծախվեն։*

աշխատանքն է միայն[1]։ Արտադրության միջոցներ չունենալն արտադրողին ստիպում է շահագործողներին տալու հավելյալ արդյունքը, վորը կապիտալիստական հասարակության մեջ յուրացնում են իբրև հավելյալ արժեք։ Վերջինս բաժին է ընկնում կապիտալիստին իբրև վաստակ կամ թե կապիտալի տոկոս և հողատիրոջն՝ իբրև ռենտա։

Գծվածքը գյուղատնտեսական ռենտայի սխեման է։



Պարզ կացուցանելու համար վերցնում ենք յերկու տեսակի հող—վատթարագույն ու լավագույն հողերը։ Ա շրջագիծը պատկերում է այն հողերից վատթարագույնի հացահատիկի մեկ փթի **արժեքն**, առանց վորոնց շուկան չի կարող ապրել։ Բ շրջագիծը պատկերում է վատթարագույն հողի հացահատկի **արտադրության գինը**։ Գ շրջագիծը ցույց է տալիս լավագույն հողի հացահատկի արտադրության գինը ԲԳ ողակները ցույց են տալիս լավագույն հողի բերած տարբերական ռենտան։ ԱԲ ողակները ցույց են տալիս **սահմանները** բացարձակ ռենտայի, վոր բերում են թե վատթարագույն ու թե լավագույն հողը։ Ա շրջագծից դուրս կարող է գոյություն ունենալ զուտ մենաշնորհային ռենտան, այսինքն՝ այն ռենտան, վոր ստացվում է վատթարագույն հողից և վորը չի ամփոփվում վատթարագույն հողից ստացվող հացահատկի արժեքի ու սրա արտադրության գնի տարբերության մեջ։

Տարբերական ռենտայի տեսակներից մեկը դիրքի ռենտան է։ Արտադրության տեղը վորքան ավելի մոտ է հումքի կամ վաճառահանման շուկային, նշանակում է ապրանքն այնքան ավելի քիչ տրանսպորտային աշխատանք է կլանում, ուրեմն այնքան ավելի արտադրողական է աշխատանքը։ Ասենք թե յերկու կապիտալիստական բանջարաբուծական ձեռնարկություն, վորոնցից մեկը գտնվում է, ասենք, Ռամենսկից այն կողմ (Մոսկվայից 42 վերստ հեռու), իսկ մյուսը Սոկոլնիկիում, վարունգ են բերում Մոսկվա։ Յեթե Մոսկվան վճարում է Ռամենսկի վարունգների վոչ միայն արտադրության ծախքերն, այլ և 42 վերստ հեռու տեղից վարունգները փոխադրելու ծախսն էլ, ապա պարզ է, վոր Սոկոլնիկիում յեղած ձեռնարկությունը Ռամենսկի ձեռնարկության հետ համեմատած՝ տարբերական ռենտա յել կտա, մինչև անգամ յեթե բերքատվությունը միևնույնը լինի թե այստեղ ու թե այնտեղ։

ԴԻՐՔԻ ՌԵՆՏԱՆ։ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՌԵՆՏԱՆ։

Այս կլինի դիրքի ռենտա, վորովհետև այս ստացվում է ավելի բարենպաստ դիրքից։ **Դիրքի ռենտան մեծ նշանակություն ունի քաղաքային հողերի համար։**

Մոսկվայում—Պետրովկայում, Կուզնեցկի Պերեուլոկի անկյունում—իննսունական թվականներին 1 քառակուսի սաժենը տալիս եր տարեկան մոտ 200 ռուբլի։ Իսկ Մոսկվայի նահանգի գավառական քաղաքներում բնակելի ու առևտրային շենքերի հողի 1 քառակուսի սաժենի կապալավարձը տատանվում եր 63 կոպեկից—3 ռուբլի։

Լոնդոնի ու Չիկագոյի կենտրոնական մասերում հողի քառակուսի սաժենի գինը տասնյակ հազար ռուբլիներ են հաշվում։

[1] Ընդհանրապես, նույնիսկ կապիտալիզմի պայմաններից դուրս, այն բոլոր դեպքերում, յերբ փոխանակային հասարակության անդամը շուկա յե բերում մի արդյունք, վորը հանրորեն անհրաժեշտ քանակից ավելի քիչ աշխատանք է կլանել, ապա նա փաստորեն յուրացնում է ուրիշի աշխատանքը։ Ասենք թե 1 ֆունտ վոսկի արտադրելու համար հանրորեն անհրաժեշտ է 2,500 ժամ։ Յեթե մի վորևե վոսկի փնտրողի բանն աջող է գնացել և նա վոսկեբեր ավազը լվանալով 1 ֆունտ վոսկի յե ստացել 1,000 ժամում, ապա նա հետո, յերբ իր մի ֆունտ վոսկին արժեքի համաձայն փոխանակում է 500 արշին գործվածքի հետ, վորը պարունակում է 2,500 ժամվա հանրորեն անհրաժեշտ աշխատանք, նա 1500 ժամվա «տարբերության արժեք» (дифференциальная стоимость) է յուրացնում։ Կապիտալիստական պայմաններում այս ավելցուկն ընդունում է գերշահույթի կամ թե տարբերական ռենտայի կերպարանք, նայած այն բանին, թե աշխատանքի բացառիկ արտադրողականության պատճառը տեխնիկական առավելություններն են, թե՞ հողամասի առավելությունները։

Քաղաքի բանուկ մասերում յեղած հողերի բարձր հասուԹաբերուԹյունը սարսափելի ուռցնում է հողի գինը։ Այս-տեղից էլ առաջ է գալիս կառուցումը յերկնահասների (небоскреб), վորոնք ձգտում են հողային տարածուԹյան մի-նիմումի վրա տալու բնակելի, առևտրային ու գրասենյակա-յին տարածուԹյան մաքսիմում։ Բայց յերկնահասային շի-նարարուԹյուն մտցնելն էլ իր հերթին մեծացնում է քաղա-քային հողի հասուԹաբերուԹյունը, հետևաբար նաև հողի գինը, մի բան, վոր շինարարներին հարկադրում է էլ ավելի վեր ձգտելու։ Այս ձգտումը մինչև Թուլանում է այն հան-գամանքի շնորհիվ, վոր զարգանում է քաղաքային ու ար-վարձանային տրանսպորտը, վորը հեռավոր հողերը դարձնում է մոտիկ հողեր։

Ավելի պատրաստվածների համար

§ 93. ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿԱՆ ՌԵՆՏԱՆ.

Մինչև այժմ մենք գործ ունեցինք այն տարբերական ռեն-տայի հետ, վորն ստացվում է զանազան հողամասերի պտղաբե-րուԹյան տարբեր լինելու հետևանքով։ Ամենավատ հողամասերը բերում են բացարձակ ռենտա միայն, իսկ մնացածները բացի բա-ցարձակ ռենտայից տարբերական ռենտա յել են տալիս։

Սակայն տարբերական ռենտայի գոյացումը կարող է մի ու-րիշ հիմք էլ ունենալ, այն է՝ կարող է առաջ գալ միեվնույն հո-ղի մեջ հաջորդաբար դրվող կապիտալների հետևանքների անհա-վասարուԹյունից։

Բանի եյուԹյունն ավելի պարզորոշ հասկանալու համար առնենք նույն թվական՝ որինակը, վոր առաջ մեջ ենք բերել, և համապատաս-խան փոփոխուԹյուններ մտցնենք այդ թվական որինակի մեջ։ Ասենք թե մեր առջև կա վոչ թե տարբեր պտղաբերուԹյուն ու-նեցող յերկու հող, այլ միևնույն հողի մեջ արված յերկու հաջոր-դական ներդրումներ։ Ինչպես առաջին, այնպես և յերկրորդ ան-գամ ներդրված է յեղել 50-ական ռուբլի։ Միևնույն առաջին ներ-դրումը հեկտարին տալիս է 1 $^1/_2$ տոննա, լրացուցիչ 50 ռուբլի ներդրելուց հետո հողը տալիս է հեկտարին $2^1/_2$ տոննա։

Հաշվի պարզուԹյան համար մի կողմ թողնենք բացարձակ ռենտան և տեսնենք, թե ինչ հետևանքներ են ստացվում յերկրորդ

ներդրումից։ Յերկրորդ անգամ ներդրված է յեղել 50 ռուբլի։ Սրա շնորհիվ բերքն ավելացել է 1 տոննայով ($2^1/_2 — 1^1/_2$)։ Այսպես ու-րեմն, յերկրորդ ներդրումից ստացած մեկ տոննայի արտադրու-Թյանծախքերը 50 ռուբլի յեն։ Սրան, ինչպես արել ելինք նախ-ընԹաց անգամ, ավելացնենք 10% մեջին նորմայի համաձայն 5 ռուբլի շահույԹ էլ։ Ընդհամենը՝ հացահատիկի մեկ տոննայի ար-տադրուԹյան գին կստացվի 55 ռուբլի։

Պետք է հիշել, վոր խոսքն այնպիսի ներդրման մասին է, վորն առևտրական տեսակետով արդարացնում է իրեն։ Յեթե այս այսպես է, ապա պարզ է, վոր շուկան չի կարող ապրվել առանց յերկրորդ ներդրման հացահատիկի, ուստի և գինը պետք է ձգտի հավասարվելու արտադրուԹյան գնին, վոր է տոննային 55 ռուբ-լի։ Կարգավորիչ գին կլինի հենց յերկրորդ ներդրման արտադրու-Թյանգինըճիշտ ու ճիշտ այնպես, ինչպես վոր մեր առաջին որի-նակում կարգավորիչ գին եր դառնում վատթարագույն հողի ար-տադրուԹյան գինը։

Հապա առաջին ներդրումը։ Առաջին ներդրումից ստացվել է $1^1/_2$ տոննա հացահատիկ։ Այս հացահատիկը կծախվի միևնույն գնով, վորը ձգտում է հավասարվելու տոննային 55 ռուբլի գնին, այսինքն կծախվի մոտավորապես $55 \times 1^1/_2 = 82^1/_2$ ռուբլով։ Այն ինչ առաջին ներդրումից ստացված $1^1/_2$ տոննայի արտադրուԹյան անհատական գինը հավասար է միայն 55 ռուբլու։ Ստացվում է $27^1/_2$ ռուբլի ավելցուկ, վորը կազմում է տարբերական ռենտա։ Առաջին որինակի մեջ արտադրուԹյան գինը կարգավորողը վատ-թարագույն հողն եր։ Իսկ այս որինակի մեջ արտադրուԹյան գի-նը կարգավորողը վատթարագույն ներդրումն է։

Յերբ տարբերական ռենտան հաշվելու հիմքը լինում է այն հացահատկի արտադրուԹյան գինը, վոր ստացվում է վատթարագույն հողից, ապա մենք ունենում ենք առաջին տարբերական ռենտա։ Յերբ տարբերական ռենտան հաշվելու հիմքը լինում է այն հա-ցահատկի արտադրուԹյան գինը, վորն ստացվում է միեվնույն հողի մեջ արված վատթարագույն ներդրումից, ապա մենք ու-նենում ենք յերկրորդ տարբերական ռենտա։

Մեր որինակի մեջ յերկրորդ ներդրումն եր վատթարագույ-նը։ կարող եր հակառակը լինել։ Յերկրորդ ներդրումը կարող եր գործադրվել, որինակ, հողը ցամաքեցնելու կամ թե մի ուրիշ մե-

լիորատիվ աշխատանքի համար, վորից հետո բերքատվությունը միանգամից բարձրանում ե սաստիկ: Յերկրորդ ներդրումը կարող եր լավագույն ներդրումը դուրս գալ: Այն ժամանակ կարգավորիչ գին կլիներ առաջին ներդրման արտադրության գինը, իսկ տարբերական ռենտա (յերկրորդ) կտար յերկրորդ ներդրումը:

ԱՌԱՋԻՆ ՈՒ ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿԱՆ ՌԵՆՏԱՆԵՐԻ ԶԱՆԱԶԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ի՞ՆՉ ԲՆՈՒՅԹ ՈՒՆԻ:

Առաջին ու յերկրորդ տարբերական ռենտաների զանազանությունն ամենից ավելի հողագործության (ուղղությունների) յերկու տենդենցների զանազանությունն ե: Հողագործության վաղագույն տենդենցն եր ըստ կարելվույն ավելի շատ հողային տարածություն ընդգրկել (եքստենսիվ հողագործություն). Կապիտալիզմի ժամանակ այս տենդենցը լրացվում ե մի նոր տենդենցով, վոր ձգտում ե ըստ կարելվույն ավելի շատ կատարելագործել հողագործության յեղանակները, իսկ այս նպատակին հասնում են միյեվնույն հողի մեջ կապիտալի ավելի մեծ ներդրումներ անելով (ինտենսիվ հողագործություն): Առաջին տենդենցի արտահայտությունն առաջին տարբերական ռենտան ե: Յերկրորդինը՝ յերկրորդ տարբերական ռենտան ե:

Ավելադիր ներդրումներից ստացվող ռենտան նայեվ այն առանձնահատկությունն ունի, վոր վարձակալության ժամկետի ընթացքում հողատերը չի կարող հասու լինել ու իր թաթը դնել սրա վրա, յեթե միայն նախորոք չի տեղեկացել ավելադիր ներդրումների մասին: Չիմանալով այն մասին, վոր վարձակալը մտադիր ե վարձակալության ժամկետի ընթացքում ինտենսիֆիկացիայի միջոցով բարձրացնելու բերքատվությունը, հողատերը հաշվի չի առնում ավելադիր բերքատվությունը, ուստի և ավելադիր ներդրումներից ստացած ամբողջ ոգուտը, թե շահույթն ու թե տարբերական ռենտան հասնում ե վարձակալին: Սակայն իրականում հողատերերը հաճախակի չեն զրկվում իրենց «որինական բաժնից»:

Նախ՝ վարձակալները միմյանց հետ մրցելով՝ իրենք են աշխատում հաշվի առնել կապիտալի այն բոլոր ներդրումները, վոր մատչելի կարող են լինել իրենց, վորպեսզի հողատիրոջն ամենաբարձր գինն առաջարկեն: Յերկրորդ, հողատերերը հողը վարձակալությամբ տալով՝ իրենք պայմանագրերում պայման են դնում, վոր վարձակալը կապիտալի բավականաչափ ծախսումներ անի:

§ 94. ՌԵՆՏԱՅԻ ՏԱՐԲԵՐ ՁԵՎԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ.

Բացարձակ ու տարբերական ռենտայի զանազանությունը պարզաբանելու համար մենք վերին աստիճանի պարզացրած որինակ վերցրինք: Մեր որինակում պատկերը միանգամայն պարզորոշ եր: Իրականում շուկայի յերևույթները շատ բարդ են: Հացի գների վրա ազդում են տեղական, ազգային ու համաշխարհային շուկաների պայմանները: Որինակ, ասենք, Կուբանի մարզում բուսած հացահատիկի յուրաքանչյուր փութ կարող ե սպառվել Արմավիրում, Մոսկվայում ու Լոնդոնում: Այն հողը, վոր Կուբանի մարզի մասշտաբով առած՝ կարելի յե վատթարագույն հող համարել այստեղ, վատթարագույն հող չի ամենևին վոչ համառուսական ու վոչ ել համաշխարհային մասշտաբով: Շատ դժվար ե կոնկրետ մատնանշել, թե վորտեղ ե այն վատթարագույն հողը, վորի համեմատ գնահատվում են մյուս հողերը: Հողատիրոջ ձեռքով տարբերական ռենտայի սերը (СЛИВОК) քաշելը նույնպես չի կարող կատարվել մաթեմաթիկական ճշտությամբ: Վարձակալության պայմանագիր կնքելով հողատերը հաշվի յե առնում՝ 1) միջին բերքատվությունն ու 2) միջին գինն, այն, այսպես ասած, միջին կետը, վորի շուրջը տատանվում են գները տարեց-տարի: Բայց վորովհետև հացի գների տատանումները տարեց-տարի շատ մեծ են լինում, ինչպես և բերքատվության տատանումներն, ապա պարզ ե, վոր հողատերը յերբեմն մորթու հետ միսն ել ե քերում, պոկում, այսինքն բացի ռենտայից՝ միջին նորմայով յեղած շահույթի մի մասն ել ե ճանկում, իսկ ուրիշ անգամ ել չի կարողանում ամբողջ տարբերական ռենտան գանձել: Գյուղատնտեսական արտադրանքի՝ տեղական շուկայից դուրս գնալը դժվարացնում են տրանսպորտի ծախսերն, իսկ ազգային շուկայից դուրս գնալը, բացի տրանսպորտի ծախսերից, դժվարացնում են ներմուծման ու արտածման մաքսերն ել: Տրանսպորտի պայմանների կամ մաքսային հարկման ամեն տեսակի փոփոխություններ կարող են փոխել ռենտայի չափերն ու բնույթն ել: Նոր անցկացրած յուրաքանչյուր յերկաթուղի կամ թե առանձին պետությունների մաքսային քաղաքականության ու յերկաթուղիների տարիֆային քաղաքականության ամեն մի փոփոխում, վոր նպաստավոր ե լինում հացի արտածման համար, տվյալ հացահատիկն ավելի ու ավելի յեն ազատում տեղական շուկայի իշխանությունից և այն դարձնում համաշխարհային ապրանք[1]:

[1] Ցորենն Ոդեսսայից Անգլիա տանելու փոխադրածախսը 70-ական թվականների առաջին կեսին 26 կոպեկ եր, իսկ նախքան պատերազմը վերջին տարիներում՝ 6 կոպեկ:

Ընդամին այն յերկրներում, ուր հաց է ներմուծվում, բացարձակ ռենտան կարող է առժամանակ դառնալ դիրքի տարբերական ռենտա։ *Օրինակ, ասենք թե, տվյալ յերկրում հացի արտադրության թելադրիչ գինը 98 կոպեկ է, բացարձակ ռենտան՝ յերկու կոպեկ։ Հացահատիկը ծախվում է փութը 1 ռուբլով։ Սեփական հացահատիկ չունենալու պատճառով այս յերկիրն սկսում է հաց ներմուծել։ Ընդունենք, վոր ոտարերկրյա հացահատիկը տրանսպորտի ծախքերի հետևանքով չի կարող մատնանշված գինը ցածացնել. նշանակում է՝ ոտարերկրյա հացն էլ է ծախվում փութը 1 ռուբլով։ Թելադրիչ գին դառնում է ոտարերկրյա հացահատկի արտադրության գինը (1 ռուբլի), վորի մեջ մտնում են տրանսպորտի ծախքերն էլ։ Այն յերկու կոպեկը, վոր հասնում է հողատիրոջն, արտադրության թելադրիչ գին հանդիսացող 1 ռուբլու և արտադրության տեղական գին հանդիսացող 98 կոպեկի տարբերությունն են, այսինքն այս յերկու կոպեկը դառնում է դիրքի տարբերական ռենտա։*

§ 95. ՌԵՆՏԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

Վերևում մենք արդեն պարզաբանել ենք, թե հողի մասնավոր սեփականությունն ինչպես է արգելակում արտադրիչ ուժերի զարգացումը։ Հողային սեփականության մասին ասածներս վերաբերում են ռենտային, վորը հողային սեփականության սիկն (осадок) **է հենց։ Բացի սրանից, ռենտայի շնորհիվ պակասում է կուտակման նորման, ուրեմն յեվ արտադրության ընդլայնումը։ Հողատերերն ավելադիր պարազիտներ են, այն էլ այնպիսի մակաբույծներ, վորոնց համար պարտադիր անհրաժեշտություն չէ կուտակելն, ինչպես վոր է կապիտալիստների համար։ Բացարձակ ռենտան թանգացնում է գյուղատնտեսական արդյունքները։ Վերջին հաշվում այս հանգամանքը պետք է կասեցնե, յետ պահե բանվորական ուժն էլ, բայց այս վերջին հաշիվը, նկատառումը պահանջում է յերկարատեվ կռիվ մղել, վորի ընթացքում սննդի թանգանալու պատճառով տուժում է բանվորի ստամոքսը։**

Ռենտայի ընդհանուր մասսան համաշխարհային մասշտաբով աճում է։ *Յեթե ամերիկյան հացի ներմուծումն իջեցրեց այն ռենտան, վոր ստանում էին Յեվրոպայի հողատերերն, ապա նույնը վիթխարի ռենտա տվեց Ամերիկայի հողատերերին։ Ռենտայի մասսայի մեծանալուն շատ նպաստեց գյուղատնտեսության ինտենսիֆիկացիան։ Կապիտալի արած ամեն մի նոր ներդրում հողի մեջ՝ առիթ է տալիս, վոր նոր տարբերական ռենտա առաջ գա։*

ՌԵՆՏԱՆ ՈՒ ՀՈՂԻ ՊԵՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ.

Չնայած այն հանգամանքին, վոր կապիտալիստական տնտեսության մեջ հողատերը ֆեոդալիզմի մնացորդ է, կապիտալիստների դասակարգը չի կարող նրանից ազատվել։ Նախ՝ կապիտալիստների, իբրև սեփականատերերի, համար վտանգավոր է խարխլել հողային սեփականության հիմքերը։ Յերկրորդ, բազմաթիվ կապիտալիստներ իրենք արդեն վաղուց հողատերեր են դարձել այս կամ այն ձևով։ **Բայց յեթե կապիտալիստական պետությունը հարկադրված լիներ յեվ հնարավորություն գտներ մասնավոր հողատիրությունը վերացնելու, այսինքն հողը խլելու՝ հոգուտ կապիտալիստների դասակարգի, ապա հետքն անգամ չէր մնա բացարձակ ռենտայի, վորը պարզապես մի հարկ է հոգուտ հողատիրոջ։ Տարբերական ռենտան կապիտալիստների կայուն գերշահույթը կդառնար։**

Իհարկե, կապիտալիստական պետությունը հողը պետականացնելով կարող էր սահմանել լրացուցիչ հողահարկեր — բացարձակ ու տարբերական հողահարկեր։ Վորչափով վոր այս հարկերը կգանձվեյին կապիտալիստների դասակարգի ոգտին, ապա վերջին հաշվով այս արդեն կլիներ վոչ թե ռենտա, այլ շահույթ։ Բայց տարբերական հարկը կլիներ կայուն գերշահույթի խլումն։ Իսկ բացարձակ հարկը վոչընչով չէր զանազանվիլ մյուս հարկերից։

ԽՆԴԻՐՆԵՐ.

ՌԵՆՏԱ.

№ 43. Շուկային հաց մատակարարում են յերկու հող։ 40 ռուբլի ներդրելու դեպքում առաջին հողը տալիս է մեկ հեկտարից 960 կիլո հացահատիկ, իսկ մյուս հողը նույն ներդրման դեպքում՝ 1200 կիլո։ Շահույթի նորման 10% է։ Վատ հողի ռենտան հեկտարին 4 ռուբլի յէ։ Պետք է գտնել՝ ա) հացի գինն ու բ) լավ հողից ստացվող ռենտան։

№ 44. Շուկային հաց մատակարարում են յերեք հող։ Մեկ հեկտարի մեջ 30 ռուբլի ներդրելու դեպքում առաջին հողը

տալիս է 600 կիլո բերք, յերկրորդը նույնպիսի ներդրման դեպքում հեկտարից տալիս է 800 կիլո, իսկ յերրորդը՝ 1 տոննա: Մեկ հեկտարի բացարձակ ռենտան հավասար է 3 ռուբլու: Վաստակի նորման 15% է: Պետք է գտնել հացի գինը[1] ու մատնանշել, թե յուրաքանչյուր հողի մի հեկտարը վորքան ռենտա կտա:

[1] Ավելի ճիշտ՝ այն գինը, վորին հավասարվելու կձգտե հացի գինը:

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ.

ԳՅՈՒՂԱՑԻՆ ՈՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԸ: ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ: ՀԱՐԿԵՐԸ.

§ 96. ԳՅՈՒՂԱՑԻՆ ՈՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԸ.

Նախընթաց գլխում, վոր նվիրված է ռենտային, մենք միշտ խոսում եյինք այն դեպքերի մասին, յերբ վարձկալը կապիտալիստն է: Այս մեզ անհրաժեշտ եր, վոր ամենազուտ կերպարանքով յերևան հանենք, թե ի՞նչ բան է ռենտան:

ՍՈՎԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՌԵՆՏԱՆ:

Կապիտալիստական իրականության մեջ մենք ամեն քայլափոխում հանդիպում ենք մասնատիրական հողերի **գյուղացական վարձակալությանը:** Պարզ է, վոր գյուղացի վարձակալներն ել են ռենտա վճարում: Բայց գյուղացական ռենտան, յեթե նկատի ունենանք վոչ թե կուլակին, այլ աղքատին ու միջակին, **էապես տարբերվում է կապիտալիստական ռենտայից: Այստեղ սահմանվում են այնպիսի հարաբերություններ, վորոնք ըստ էության նման են ճորտատիրական հարաբերություններին:** Հողի պակասության շնորհիվ գյուղացիներն իրար հետ մրցելով կապալավարձն այնքան են բարձրացնում, ուռցնում, վոր գյուղացու և նրա ընտանիքի աշխատանքի ամբողջ արդյունքը բաժին է ընկնում հողատիրոջը, բացի այնքանից, վոր անհրաժեշտ է սովամահ չլինելու համար (սովահարության ռենտա): Մեր գյուղացիները հեղափոխությունից առաջ իբրև այսպիսի ռենտա վճարում եյին տարեկան մոտ կես միլիարդ ռուբլի: Բարձր ռենտաներն առաջ են բերում հողի բարձր գներ: Յերբ գյուղացիները գնում են կալվածատիրոջ հողը, նրանք ստիպված են լինում հիպոթեկային բանկերում այնպիսի բարձր տոկոս ունեցող փոխառություններ վերցնելու, վոր հետո հարկադրված են լինում բանկի համար աշխատելու, ինչպես վոր առաջ աշխատում եյին հողատիրոջ համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն հողի գների աճու-

մը, վոր մեր գյուղացիները գնում էին «Գյուղացական բանկի» միջոցով [1]։

Աղյուսակի մեջ մատնանշված է դեսյատինի միջին գինը։

Թվականներ	Ռուբլի	Թվականներ	Ռուբլի	Թվականներ	Ռուբլի
1896	42	1903	108	1910	140
1897	71	1904	112	1911	141
1898	76	1905	111	1912	145
1899	78	1906	127	1913	151
1900	83	1907	133	1914	152
1901	91	1908	139	1915	136
1902	108	1909	144	1916	124

Բայց գյուղացուն մեծակ հողատերը չի շահագործում։ Նա բացի սրանից իբրեվ տնայնագործ զբաղվում է կապիտալիստական շահագործմամբ ևիրաններում։

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ։

Նախ, վորտեղ վոր մանր արտադրությունը դեռ պահպանել է մասսայական բնույթն, այնտեղ դասակարգային շերտավորման պրոցես է կատարվում։ Այս շերտավորման հետևանքով միջակային մասսայի մեկ թևում հանդես է գալիս կուլակն, իսկ մյուս կողմում՝ աղքատը։ Կուլակը միևնույն կապիտալիստն է (թեև մանրադիտակային չափերով), և վոչինչ կապիտալիստական խորթ չի նրա համար։ Նա թե վաշխառուական, թե առևտրային ու թե արդյունաբերական կապիտալի ներկայացուցիչն է, վորը մերթ աղքատին հումք է ծախում և նրա արտադրությը մեծացնում, մերթ նրան դրամ է փոխ տալիս, մերթ էլ ուղղակի նրա բանվորական ուժն է ծախ առնում։

Յերկրորդ, **գեպի մանր արտադրողների մասսայի կողմը իր շուռափուկներն է տարածում խոշոր կապիտալը։** Գյուղատնտեսության մեջ այս հանդես է գալիս հողային բանկի կերպարանքով, հացահատիկ արտահանելու ընկերության կերպարանքով։ Տնայնագործական արտադրության մեջ՝ մեծագնորդի կերպարանքով, տարկետումներով հումք ու մեքենաներ ծախողի կերպարանքով և այլն։ Շատ դեպքերում տնայնագործն ուղղակի բանում է գործարանատիրոջ համար՝ նրանից հումքն ստանալով ու արտադրանքը նրան տալով։ Բանի եյությունը չի փոխվում այն հանգամանքի շնորհիվ, վոր տնայնագործն աշխատավարձի փոխարեն ստանում է արտադրանքի վճարը՝ սրանից հանած (մինուս) հումքի արժեքը։

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԸ։

Փաստորեն տնայնագործի աշխատանքը շատ ավելի ցածր է գնահատվում, քան բանվորի աշխատանքը, վորովհետև առաջինը մեծ մասամբ դեռ չի խզել իր կապերը հողագործության հետ, և այս հանգամանքից ոգտվում է կապիտալիստը՝ նրա բանվորական ուժը չնչին վարձով գնելով։ Տնայնագործի աշխատանքը ծանրանում է վոչ միայն նրա, այլ և ամբողջ ընտանիքի վրա, վորն ոգնում է նրան մյուս գործերից ազատ ժամանակամիջոցում։ Աշխատանքին վերաբերող վոչ մի որենքով կարգավորված չէ տնայնագործի բանելը, և նրա արհեստանոցի բանվորական որը շատ յերկար է։ Այս պարագան մեծացնում է տնայնագործական արտադրանքների առաջարկը և հետևաբար արժեզրկում է տնայնագործի բանվորական ուժը։

Մանր արտադրողին շահագործելու յերրորդ միջոցը, վոր գործադրում է կապիտալիստական սիստեմը, հարկային ճնշումն է, վորի մասին հետո խոսելու յենք։

Բնատնտեսական այն բազան, վորից կառչում է աղքատ գյուղացին, ավելի ու ավելի չէ սահում նրա վոտքերի տակից։ Նա կցանկար, վոր ապրեր՝ ամեն բան ինքն արտադրելով ու իր արտադրածն սպառելով։ Այն ինչ փաստորեն այն քիչ արդյունքն էլ, վոր ստանում է հողից, նա դեռ ևս աշնանն է ծախում, վոր կապալավարձն ու հարկերը վճարե և իր վարկատու կուլակի հետ հաշիվները մաքրելով պարտքը տա, բացի այն բոլորից, վոր գյուղացին կուլակին հատուցել է բնեղենով ու աշխատավճարուճներով (натурой и отработками)։ Աշնանը հանդես գալով, իբրև հացահատիկ ծախող, աղքատ գյուղացին դեռ հենց ձմռանը հանդես և գալիս իբրև գնորդ, ել չենք խոսում այն մասին, վոր սեփական մանոն չունենալով՝ նա պետք է իր ամբողջ հացուսեղենը ծախ առնե։

ԳՅՈՒՂԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՊՐԱՆՔ ԴԱՌՆԱԼԸ։

Գյուղի արտադրանքի այսպես ապրանք դառնալն ու գյուղացու՝ առուծախի ջրապտույտի մեջ ներս քաշվելը շատ նպաստավոր է կապիտալիստների համար, քանի վոր ընդլայնում է թե կապիտալիստական պրոդուկցիայի վաճառահանման շուկան ու թե այն շուկան, վորտեղ կապիտալիստը հանդես է գալիս իբրեվ գնորդ։

[1] Չենք Գյուղացական բանկ հիմնելու գլխավոր նպատակն այն եր, վոր Վոլվածատիրական հողի ձեռնտու գնորդները առաջ գան։

ՄԵՆԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ։

Մանր արտադրողի շահագործումը հատկապես ծանր բնույթ ունի կապիտալիստական մենաշնորհի պայմաններում: *Այստեղ գործում է կրկնակի մենաշնորհի ճնշիչ մամուլը — մեկ՝ մանր արտադրողի արտադրույթը գնողներինն ու մեկ էլ՝ այն ապրանքները վաճառողներինը, վորոնք հարկավոր են մանր արտադրողին։ Արդյունաբերության մենաշնորհացման դարաշրջանի սաստկացրած միլիտարիզմի ծանրությունն ամենից ավելի ընկնում է գյուղացիների վրա, իբրև թնդանոթային միս մատակարարողների ու իբրև հարկ վճարողների վրա։*

Վերջապես գյուղացական մասսան պրոլետարական «հերթափոխի» անսպառ աղբյուրն է: *Յեթե հին սերնդին դեռ մի կերպ դժվարությամբ հաջողվում է կպած մնալ իր հողի կտորին, ապա յերիտասարդությունն արդեն հարկադրված է դիմելու կապիտալիստին՝ սրա ֆաբրիկաները, գործարանները մտնելու կամ թե դարձյալ սրա տնային գործերն անելու։ Յեթե յուրաքանչյուր բանվոր պրոլետարական գործող կամ պահեստի բանակի անդամն է, ապա գյուղացին՝ այս բանակի թեկնածու յե։*

Վորովհետև այսօրվա գյուղացին վաղվա բանվոր է, ուստի կապիտալիստական յերկրներում աշկարա անպտուղ են այն ամեն տեսակի փորձերը, վորոնց նպատակն է ամրապնդել գյուղացության տնտեսական դրությունը։ Այս վոչ այլ ինչ է, բայց յեթե մի փորձ՝ յետ պտտելու կապիտալիստական զարգացման անիվը, վորն անխուսափելիորեն հասցնում է մի վիճակի, յերբ գյուղացությունը դասակարգայնորեն շերտավորվում է և նրա ճնշող մեծամասնությունը բանվորացման յենթարկվում։ **Բանվորի յեվ միջակ գյուղացու, այլ յեվ աղքատ գյուղացու շահերը նույնանում են:** *Թե մեկի ու թե մյուսի համար միակ յելքը կապիտալիզմի տապալումն է։ Ճիշտ է, մանր արտադրողը դեռ լիովին չի թոթափել իր ցնորքները։ Բայց համաշխարհային պատերազմը նրա աչքերն էլ է բաց արել։ Գյուղացիք ու մանր ֆերմերները դադարում են բուրժուազիայի պոչը լինելուց և աստիճանաբար հարում են այն կողմին, վոր բանվոր դասակարգը մղում է կապիտալի դեմ։*

Արտադրական զոդումից ու դասակարգային միացյալ կերպարանքից զուրկ գյուղացության ուժերից վեր է միանգամայն ինքնուրույն ու ընդսմին անհողդողդ հեղափոխական կռիվ մղելը կապիտալիզմի դեմ։

Գյուղացությունը հզոր է բանվոր դասակարգի հետ կնքած դաշինքով միայն: *Բանվորների ու գյուղացիների դաշինքն արդեն խորտակել է կապիտալիզմի լուծը Ռուսաստանում։ Կոմինտերնի հետ կողք-կողքի կանգնած գյուղացական Ինտերնացիոնալը մարմնացումն է գյուղացու և բանվորի շաղկապի՝ համաշխարհային մասշտաբով*[1]։

§ 97. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ.

Կապիտալիստական յերկրների կոոպերատիվ շարժումը կարելի չե բնորոշել **իբրև մի փորձ, վորով մանր արտադրողները ձգտում են ազատվելու կապիտալիստական շահագործման լծից կոլլեկտիվ ձեռնարկություններ կազմակերպելու միջոցով:** *Մանր արտադրողների դերը հատկապես կարևոր է արտադրական ու բնակարանային կոոպերացիայի ասպարեզում։ Յեվ կոոպերացիայի հենց այս տեսակներն են, վոր կապիտալիստական յերկրներում ամենաչնչին հետևանքներ են տալիս։*

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ։

Կապիտալիզմի պայմաններում կոոպերատիվ արտադրական ձեռնարկությունները **կամ խեղճանում յեվ վոչնչանում են** *այն հանգամանքի շնորհիվ, վոր հնարավորություն չեն ունենում խոշոր կապիտալի հետ մրցելու, կամ թե հաջողություն ունենալու դեպքում* **այլասերվում** *և դառնում են զուտ կապիտալիստական* **ձեռնարկություններ** *(յերբ հնարավոր է լինում արտադրությունն ընդլայնելու, նոր բանվորներն արդեն հրավիրվում են վոչ թե արտելային սկզբունքներով, այլ վարձվելով)։*

Շատ ավելի աջողակ է աշխատում սպառողական կոոպերացիան։ Որինակ՝ Անգլիայում 1920 թվականին կար 1,379 սպառողական ընկերություն, վորոնք ունեյին $4\frac{1}{2}$ միլիոն անդամ ու 139 հազար ծառայող։ Սպառողական ընկերության տրամադրության տակ յեղած ամբողջ կապիտալը, թե իրենն ու թե ուրիշներից ստացածը, 85 միլիոն ֆունտ ստերլինգ եր (մոտ 800 միլիոն ռուբլի վոսկով)։ Սպառողական ընկերությունների պտույտը 1920 թվականին հասել եր 254 միլիոն ֆունտ ստերլինգի։

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ։

Անգլիայում սպառողական ընկերություններն իրենց հերթին միանալով կազմել են մեծաքանակ գնումների ընկերություններ

[1] Գյուղացությունը շատ կարևոր դեր ունի գաղութների հեղափոխական շարժման մեջ։

(անգլիական ու շոտլանդական)։ Մեծ նշանակություն ունեն սպառողական կոոպերատիվները կից բացվող արտադրական ձեռնարկությունները—աղացները, փռերը, կաթնատնտեսական ֆերմաները և այլն։ Մեծաքանակ գնումների Անգլիական կոոպերատիվ ընկերությունը 1920 թվականին ուներ 108 գործարան, որոնք զանազան ապրանքներ էին արտադրում՝ սկսած ալյուրից մինչև հեծանիվները։ Մեծաքանակ գնումների Անգլիական ու Շոտլանդական կոոպերատիվ ընկերությունները Ցեյլոն կղզում ու Հնդկաստանում **թեյի սեփական պլանտացիաներ ունեն։**

§ 98. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԽՍՀՄ ՄԵՋ.

ԽՍՀՄ տնտեսության սիստեմի մեջ բոլորովին այլ տեղ է բռնում կոոպերացիան։ Այստեղ կոոպերացիան սոցիալիստական շինարարության ասպարեզներից մեկն է։ Սոցիալիստական շինարարության համար ունեցած իր նշանակությամբ առաջին տեղը գրավում է գյուղատնտեսական կոոպերացիան։ Կոոպերացվում են աղքատ գյուղացիներն ու միջակները։

Աղքատ գյուղացին կամ թե միջակը միայն կոլեկտիվի մեջ մտնելով կարող է մեքենայացված հողագործությանն անցնել։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ։

Կոլեկտիվը դյուրացնում է իր անդամներից յուրաքանչյուրի գործը, որ սա արվեստական պարարտանյութեր ձեռք բերի, բազմադաշտություն անցնի, անասունների ցեղն ավելացնի, արդյունքների վաճառքը հեշտացնի և այլն։ Այսպիսով կոոպերացիան հողագործությունը բարձրացնում և հասցնում է ավելի բարձր աստիճանի թե տեխնիկապես (ռացիոնալիզացիա) ու թե տնտեսապես (կոոպերացիան մտնում է սոցիալիստական տնտեսության սիստեմի մեջ)։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՈՒՆՆԵՐԸ. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ։ ԿՈՄՄՈՒՆԱՆԵՐԸ։

Ընդ սմին կոլեկտիվացման աստիճանը տարբեր է՝ սկսած գյուղատնտեսական ընկերություններից, որոնց անդամները սերմերն ու մեքենաները գնում են միասին, բայց ոգտվում են ջոկ-ջոկ, յուրաքանչյուրն իր հողաբաժնի վրա, և վերջացրած կոլտնտեսությամբ (կոլեկտիվ տնտեսություն), որտեղ հողագործությունն ու արտադրության բոլոր միջոցներն ընդհանուր են։ Կոլտնտեսության բարձրագույն ձևը կոմունան է։ Կոմունայում հանրայնացված

է ոչ միայն արտադրությունն, այլ և սպառումն էլ (ընդհանուր ճաշարան)։

1927 թվականի մոտերքն ամբողջ ԽՍՀՄ մեջ կոոպերացված եր 7 միլիոն գյուղացական տնտեսություն[1]։

Մեր գյուղում բոլորովին նոր յերևույթ է ելեկտրոկոոպերացիան, վորի նպատակը գյուղի ելեկտրոֆիկացիան է։ Գետերի ու գետակների ջրի անկման ուժն ոգտագործելով՝ գյուղացիք անցնում են ելեքտրական էներգիայով բանեցնելու աղացները, յուղահարոցները և այլն, հետո յել կալսիչները, ծղոտնահատները և այլն։ Զուգնթաց աշողությամբ ելեքտրական լուսավորություն են ստանում խրիճթները (Իլյիչի լապտերիկը)։

ԲՆԱԿԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ։

Արտադրական կոոպերացիայի մյուս տեսակների մեջից մեզանում լայն ծավալվել է բնակաշինարարական կոոպերացիան, վորի նպատակն է հաղթահարել բնակարանային այն փլուզումը, վոր մեզ ժառանգություն է մնացել պատերազմի ու շրջափակման (блокада) տարիներից, ու մասնավորապես բանվորներին տալ առողջապահիկ ու հարմար բնակարան[2]։

ԻՆՎԱԼԻԴՆԵՐԻ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ։

Ուշադրության արժանի յե ինվալիդների կոոպերացիան էլ։ Ինվալիդները միանալով կազմում են արտադրական ու առևտրական արտելներ, վորոնք հարկավին, բնակարանային ու այլ արտոնություններ են ուզնում։ Սրանով հասնում են յերկու նպատակի. արտելների անդամ ինվալիդները սովորաբար բարձր դա-

[1] Բացի գյուղացական հողագործությունից, մեզանում կան խորհրդային գյուղատնտեսական ձեռնարկություններ էլ (խորհտնտեսություններ), վոր կազմակերպել են տեղական խորհուրդները մի քանի նախկին կալվածատիրական կայքերում, քաղաքային հողերում և այլն։ Մի քանի խորհտնտեսություններ ֆաբրիկանտներին և գործարաններին կից են։

ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

Ներկայումս խորհտնտեսությունները մեծացվում են (տրեստացվում են)։ Վորքան աճի մեր տնտեսական հզորությունն, այնքան ավելի շատ միջոցներ են ծախսվելու խորհտնտեսությունները կազմակերպելու վրա և այնքան ավելի յե մեծանալու սրանց դերը մեր տնտեսության մեջ։

[2] Կապիտալիզմի ժամանակ Ռուսաստանում բանվորները խոշոր կենտրոններում կամ սխմվել, խեղդվում եյին ձեռնարկություններին կից յեղած հատուկ կազարմաններում և կամ թե նրանց բաժինն եր լինում բնակարանների «թափթփուկները»—նկուղներն ու չարդախները։ Միայն հեղափոխությունն եր, վոր բանվորների բնակարանի հարցը մեջտեղ դրեց իր ամբողջ մեծությամբ։

տում են ունենում, իսկ պետությունն էլ ազատվում է նրանց կենսաթոշակ տալու անհրաժեշտությունից։

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՑԻՆ ՎԱՐԿԱՏԵՐԸ։

Կոոպերացիայի բոլոր տեսակների վարկատրելն առաջ կենտրոնացված եր Համամիութենական կոոպերատիվ Բանկում (Համկոոպբանկ—Всекобанк) ու սրա բաժանմունքներում։ Հիմա գյուղատնտեսական կոոպերացիայի վարկավորումն անցնում է կենտրոնական գյուղատնտեսական բանկին, իսկ բնակաշինարարական կոոպերացիային վարկատրելը՝ կենտրոնական կոմունալ Բանկին։ Ելեկտրոկոոպերացիան վարկ ստանում է մասամբ ելեկտրոբանկից ու մասամբ էլ կենտրոնական Գյուղատնտեսական Բանկից։

Կոոպերատիվներն աշխատում են վարկային նպատակների համար ոգտագործել իրենց անդամների դրամական խնայողությունները էլ[1]։

ՎԱՐԿԱՑԻՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ։

Այսպիսով կոոպերացիայի մյուս տեսակներին զուգընթաց զարգանում է վարկային կոոպերացիան էլ այն փոխատու-խնայողական ընկերությունների ձևով, որոնք անկախ են կամ թե գործում են այլ կոոպերատիվներին կից։

Մեզանում անչափ կարևոր է սպառողական կոոպերացիայի դերը։ Վերջինիս շնորհիվ սոցիալիստական տնտեսության սիստեմի մեջ է մտնում բաշխման ասպարեզն էլ, և այս ասպարեզից դուրս է քշվում մասնավոր կապիտալը։

1924—1925 ու 1925—1926 թվականներին սպառողական կոոպերացիային վերաբերյալ քանակական տվյալներն այս են.

	1924/25 թ.	1925/26 թ.	աճումը % % -ով.
1. Համախառն պտույտը (валовой оборот) .	3,787	6,306	66,5
2. Կոոպերատիվ սիստեմի սեփական միջոցները տնտեսական տարվա վերջին (միլիոն ռուբլով) . . .	280,9	404,2	43,9
3. Սիստեմի փայական կապիտալը (паевой капитал) (նույն տարվա վերջին, միլիոն ռուբլով . . .	30,7	44,9	46,2
4. Ընկերությունների թիվը (նույնպես) .	25,536	27,438	7,4
5. Խանութների թիվը (նույնպես) . .	50,961	57,719	13,3
6. Փայատերերի թիվը (նույնպես): .	9,347,000	11,401,700	15,0

Կոոպերացիայի դերը ԽՍՀՄ ներքին առևտրի մեջ.

	1925/26 թ.	1926/27 թ.
	միլ. ռուբ.	
Կոոպերացիայի մեծածախ առևտուրը . .	4.382	5.406
Ամբողջ մեծածախ առևտրի վրա % և կազմում	41.2	4,20
Կոոպերացիայի մանրածախ առևտուրը . . .	4,370	5.452
Ամբողջ մանրածախ առևտրի վրա % կազմում	43.7	47.5

§ 99. ՀԱՐԿԵՐԸ.

Կապիտալիստների դասակարգի տնտեսական իշխանությունն անխզելի կապված է քաղաքական իշխանության հետ։ **Բուրժուական յերկրների կառավարությունը «բուրժուազիայի գործերի կոմիտեն է»։** Ինչ դեմոկրատական ձևակով էլ վոր գործի բուրժուական կառավարությունը, միշտ նրա միակ նպատակն է՝ պաշտպանել բուրժուազիայի շահերն ու պահպանել բանվորների շահագործման վրա հիմնված տնտեսակարգը։ **Պետական ապարատը պահելու համար մեծամեծ միջոցներ են հարկավոր։** Եվ ավելի շատ միջոցներ են հարկավոր բանակը պահելու համար, այն բանակը, վորի կոչումն է ավյալ յերկրի բուրժուազիայի շահերը պաշտպանել ներքին ու արտաքին թշնամիներից, այսինքն իրենց բանվորներից ու ոտար կապիտալիստներից։

ՀԱՐԿԵՐԻ ԴԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՑԵՐԿՐՆԵՐՈՒՄ։

Բացի սրանից, բուրժուական կառավարությունը կատարում է մի շարք ֆունկցիաներ, վորոնք արտաքուստ ուղղված են «ամբողջ հասարակության ոգուտին», բայց ելապես էլի **բուրժուազիայի շահերից են ծառայում։** Այսպես է, որինակ,

[1] Մեր գյուղն իբրև ամբողջություն առած՝ ունի խնայողություններ ու առժամապես պարապ մնացած փողեր էլ (գարնանը ձի գնելու համար, նոր խրճիթ շինելու համար)։ Ամբողջ Միության մեջ շատ ու շատ տասնյակ միլիոն ռուբլի այդպիսի փողեր կհավաքվեն, փողեր, վորոնք իբրև մեռյալ գանձ պահված են մնում պուլիկների մեջ, գուլպաներում ու ճղակների մեջ։ Այս փողերը, յեթե ավանդների ձևով ներս քաշվեն վարկային հիմնարկների մեջ, մի լավ տարբերկրյա փոխառություն արժեն։

ժողովրդական լուսավորութիւնն կազմակերպումը, վորը բուրժուազիային տալիս է անհրաժեշտ գիտելիքներ թե արտադրութիւնն ու թե պետութիւնը կառավարելու համար, իսկ պրոլետարիատին՝ գրագիտութիւն, վորն անհրաժեշտ է մեքենային ոգտակար կցորդը լինելու համար: Կամ թե ճանապարհների, կառուցումը, վորոնք անհրաժեշտ են առևտրային ու զինվորական նպատակների համար: Կամ թե առողջապահութիւնը, վորը հոգ է տանում այն մասին, վորպեսզի այն թաղերը, վորտեղ բանվորները մեռնում, կոտորվում են ոդի, ջրեվի ու սննդի պակասութիւնից չեվ անտանելի ծանր աշխատանքից, վարակման ոջաղներ չդառնան բուրժուազիայի համար:

Մատնանշած ֆունկցիաներից մի քանիսը կենտրոնական կառավարութիւնն անելիքն են, մյուսները՝ տեղական ինքնավարութիւնն որգաններինը, բայց այսպես թե այնպես նրանք պահանջում են տաս ու տաս փող, վորը հայթայթում են ուղղակի ու անուղղակի հարկերի, տուրքերի, ռեգալիաների [1], թղթադրամների եմիսսիայի միջոցով չեվ այլն:

Ինչպես մենք արդեն ասել ենք, բուրժուական պետութեան հասույթները,—ուզում է՝ սրանք անմիջապես բանվորներից դանձվելիս լինեն թե կապիտալիստներից, միևնույն է,—վերջին հաշվում վոչ այլ ինչ են, բայց չեթե բանվորներից բամած հավելյալ արժեքի մի մասը: Սակայն պետք է մի վերապահութիւն անել, վոր այս կետում բանվորի քնկերը գյուղացին ու տնայնագործն են, ընդհանրապես մանր արտադրողն է, վորից հարկերի միջոցով խլում են նրա ստեղծած արժեքի մի մասը:

Սակայն սրանից չի հետեվում, վոր բանվորի համար ճշտակութիւն չունի, թե ինչպիսի հարկային սիստեմ ուզում է լինի: Հանի եյութիւնն այս է:

[1] Ուղղակի հարկերի թվին է պատկանում հասութա-գույքահարկը: Տիպիկ անուղղակի հարկ են շաքարի, ծխախոտի բաժը (акциз) և այլն: Ուղղակի և անուղղակի հարկերը խստիվ տարբերելը դժվար է, վորովհետև կան միջնողակային ձևեր, որինակ, հողահարկն ու բնակարանահարկը: Տուրքերն՝ այս բառի իսկական առումով այն վճարներն են, վոր հատուցվում են պետական հիմնարկի մատուցած ծառայութիւնների համար: Այսպիսիք են դատարանական տուրքերը: Սակայն կան տուրքեր, վորոնք անուղղակի հարկեր են, այսպիսիքն են որինակ, մաքսերը: Ռեգալիաներն այն արհեստներն են, վորոնք պետութեան մենաշնորհն են: Այսպիսիք են դրամահատումը (դրամային ռեգալիա), ողու մենաշնորհը և այլն: Ռեգալիայից ստացած հասույթը շահույթի ու հարկի խառնուրդ է միաժամանակ: Հետագա շարադրանքի մեջ մենք հարկերի այս բոլոր տարբերականները կանվանենք պարզապես հարկեր:

Անհնքի համար պարզ է, վոր հարկերը փաստորեն նա չի վճարում միշտ, ով այն հարկերը գանձարան է մուծում ինքն անմիջապես: Յեթե, որինակ, խանութպանը վճարել է մի շարք հարկեր, վորոնք նրա առուտուրի հետ են կապված, ապա նա աշխատում է այն հարկերը գցել իր գնորդների վրա՝ ապրանքների գնի վրա հավելում անելով: Յեթե այս ապրանքներն ուրիշ ապրանքների արտադրութեան միջոցներ են, ապա այս ապրանքները գնողը կաշխատի հավելումը գցել իր գնորդների վրա: Յեթե այս ապրանքները բանվորների սպառման միջոցներ են, ապա բանվորները կաշխատեն հավելումը գցել իրենց վարձողների վրա և այլն [1]: Բայց հարկն իր վրայից մի ուրիշի վրա գցելու համար տնտեսական վորոշ ուժ է պահանջվում: Յեթե դուք մի այնպիսի ապրանք եք ծախում, վորի առաջարկը քիչ է և պահանջը մեծ, ձեզ համար, իհարկե, հեշտ է վոչ միայն գնորդի վրա գցել ձեր վճարած հարկերն, այլև ընդհանրապես գները խիստ բարձրացնել [2]: Իսկ յեթե, ընդհակառակը, ձեր ապրանքի պահանջը քիչ է, իսկ առաջարկը շատ, ապա մրցումը ձեզ ու հենց նույն ապրանքի մյուս վաճառորդներին կխանգարի և չի թողնի, վոր դուք գնորդների վրա գցեք ձեր վճարած հարկերը, և դուք ստիպված կլինեք յեթե վոչ հարկերն ամբողջ, ապա գոնե նրանց մի մասը ձեր վրա առնելու: Հասկանալի չե, յեթե գուբ բանվորական ուժ վաճառող եք, այսինքն այն ապրանքը ծախող, վորից սովորաբար աշխատ շատ է լինում շուկայում, ապա ձեզ համար գժվար է շարունակել հարկերն ուրիշի վրա գցելը:

Յեթե բանվորը կարողանար վորձողների վրա գցել այն հարկերն ամբողջովին, վոր վճարում է բանվորն ինքը և վոր նրա վրա չեն գցում հացահատիկ, հագուստ ու այլ ապրանքներ ծախողներն, ապա բանվորը հարկերից վոչ կշահվեր և վոչ էլ կտուժեր: Նա կարող եր այսպես դատել. ինձ համար ծանր է, յերբ հավելյալ արժեք են քամում ինձանից: Բայց յերբ այս հավելյալ արժեքն արդեն ինձանից քամել պրծել են, էլ իմ հոգը չե, թե այն ինչպես կբաշխվի և նրա վոր մասը կդառնա շահույթ, ռենտա, հարկեր կամ մի ուրիշ բան, ինչ վոր կուզեք ասեք:

Բայց հանի վոր բանվորը չի կարող շարունակել ուրիշների վրա գցել այն հարկերը, վոր ինքն է վճարում յեվ վոր ու-

[1] Ավելի ճիշտ՝ պահանջել նրանց շահույթը:

[2] Հասկանալի չե, վոչ անվերջ: Այս մասին մանրամասն կխոսենք հետո:

րիշեները գցել են նրա վրա, ապա հարկերի ծանրությունը նախ՝ բանվորական ուժի գինը գցում է նրա արժեքից ցած յեվ յերկրորդ՝ խանգարում է, չի թողնում, որ բանվորը կարող բանվորական ուժի արժեքը բարձրացնելու համար. Ահա թե ինչն է պատճառը, որ բանվորները, որտեղ որ կարող են, կռվում են անուղղակի հարկերը քչացնելու դեմ։

Միլիարդիզմի աճելու հետևանքով բուրժուազիան հարկադրված է մեծացնելու հասութա-գույքահարկումը, որն ամենից ավելի անձեռնտու չի նրա համար. բայց անհրաժեշտության ճնշման տակ նահանջելով՝ բուրժուազիան համառորեն պաշտպանում է ամեն մի քայլը։ Այսպես, որինակ, Անգլիայում արժեքների աճի (прирост ценностей) վրա դրված հարկն անցկացնելուց առաջ համայքների պալատը յերկու անգամ արձակվեց, նոր այս հարկը մուծելու որենքն ընդունվեց, բայց այնուամենայնիվ հետո այս հարկը վերացրին (1920 թ.)։

ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ.

§ 100. ԿԱՊԻՏԱԼԻ ԾԱԳՈՒՄԸ.

Կապիտալը գոյանում է կապիտալիստների կողմից չսպառած շահույթից։ Յեթե մի տարում կապիտալիստն ստացել է 400,000 ռուբլի շահույթ, իսկ ապրուստի վրա ծախսել է 50,000 ռուբլի, ապա մնացած 350,000 ռուբլին կապիտալացվում է, ավելացվում է կապիտալի վրա և դառնում կապիտալ։

Այսպես ուրեմն, կապիտալը շահույթից է ստացվում, իսկ շահույթն ինչի՞ց է ստացվում։—Կապիտալից։ Դուրս է գալիս մի կախարդական շրջագիծ։ Հապա վո՞րտեղից է գոյացել անդրանիկ կապիտալը։

Իրենց կապիտալների սկզբնական գոյացումը կապիտալիստներն, իհարկե, բացատրում են իրենց աշխատասիրությամբ ու խնայողությամբ. իբր թե՝ «գիշերներն անքուն ենք մնացել, մեր բերնի պատառը կտրել յետ ենք դրել»...

Արդյոք՝ այս իրո՞ք այսպես է յեղել։ Ճի՞շտ են ասում կապիտալիստները, վորոնք իրենց առաքինություններն են մատնանշում, թե՞ առածն է իրավացի, վոր ասում է, թե «հալալ աշխատանքով քարե քեոշկ չի շինվի»։

Մի հարց էլ։ Կապիտալիստական արտադրությունն այնպիսի բանվորների կարիք ունի, վորոնք բոլորովին զերծ են, ազատ են արտադրության միջոցներից։ Հապա վո՞րտեղից առաջացավ «ազատ մարդկանց» այս բազմությունը։ Սրանց ով և այնքան բարեխղճորեն մաքրազարդել, այնպես վոր սրանց առաջ փակված են ինքնուրույն արտադրության բոլոր ճանապարհները և սրանց միակ բան է մնացել—վաճառել իրենց բանվորական ուժը։

Կապիտալիստի բերանին այս հարցին էլ պատրաստ պա-

տասխան կա։ Պրոլետարիատն ինքն է իրեն այսպես ակլորացրել։ Կար չկար չերբեմն հարբեցողների ու դատարկապորտների մի բազմություն կար։ Սրանք ամեն մի բան ու գործից փախչում էին, ինչ որ ունեին, խմելու էին տալիս։ Ահա հենց սրանցից է առաջ եկել տկլորների ցեղը…

Հապա ինչն է պատճառը, որ աշխատասեր մարդիկ ու սրանց սերունդները վաղուց արդեն քեֆ են քաշում պարապ-սարապ, իսկ դատարկապորտների սերունդները վաղուց արդեն արյուն-քրտինք են թափում, բայց հին ճղվածը ոչ միայն չի կոնըվում, այլ ավելի ու ավելի չէ բացվում, լայնանում, Մենք վերևում արդեն խոսեցինք այն դերի մասին, որ կապիտալիզմի զարգացման պայմաններում կատարել են XVIII դարի վերջի ու XIX դարի սկզբի գյուտերն ու հայտնագործությունները։ Բայց սրանց **լայն օգտագործման համար անհրաժեշտ էին մեծամեծ կապիտալներ։ Ի՞նչպես են առաջ եկել այս կապիտալները։**

Ամենից առաջ գաղութներն են եղել այս կապիտալների աղբյուրը։ **Միջին դարերի վերջում երևան եկած կողմնացույցն ու վառոդը Եվրոպայի համար այնքան արտադրական հնարավորություններ չստացրին, որքան մեծացրին կողոպուտի հնարավորությունները։** Վառոդն ու կողմնացույցը հնարավոր դարձրին հեռավոր ծովագնացությունը։ Կոլումբոսն արևմուտք գնաց Ատլանտյան օվկիանոսով, Վասկո Դե-Գաման հարավ դիմեց, հետո յել Բարեհուսո հրվանդանն անցնելով արևելք գնաց Հնդկական օվկիանոսով։ Երկսի նպատակն էլ մեկ էր—գտնել ծովային այն ճանապարհը, որ տանում էր դեպի Հնդկաստանի հարստությունները, դեպի մարգարիտն ու ոսկին, դեպի համեմները—պղպեղը, դարչինը, կոճապղպեղն ու մուսկատը, դեպի այն ապրանքները, որոնք նույնպես ոսկու քաշի չափով էին գնահատվում այն ժամանակ։

ԳԱՂՈՒԹՆԵՐՆ ԻԲՐԵՎ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ։

Մեկ Հնդկաստանի փոխարեն երկուսը գտնվեց։ Իսկական Հնդկաստան հասավ Վասկո Դե-Գաման։ Կոլումբը Հնդկաստանի ճանապարհին դեմ առավ Ամերիկային։

Եվրոպացիների հետ բախվելը շատ թանգ նստեց տեղացիների վրա։ XV—XVI դարերի վերջերքի Արևմտյան Եվրոպայի տեխնիկան հիմա մեզ շատ ողորմելի յէ թվում, բայց և այնպես այն տեխնիկան անչափ բարձր էր Ամերիկայի ու նույնիսկ Հնդկական օվկիանոսի կղզիների տեխնիկայից։ Աղեղն ու նախնադարյան մակույկն անզոր հանդիսացան այն կռվում, որ մղում էին ընդդեմ հրացանի ու նավի։ Սկսվեց գաղութային վակխանալիան։ **Կոլումբոսը նորանվաճ երկիրները բաժանեց իր զինակիցների միջև։ Տեղացիներին ստրուկ դարձրին։** Այն մասին, թե ինչ ապրուստ ունեին տեղացիները նոր տերերի իշխանության ներքո, վկայում են ինքնասպանությունների համաճարակներն, որոնցով Ամերիկայի տեղացիները վրեժ էին հանում իրենց ճնշողներից։ Տնտեսագետ Զոմբարտը մի բնորոշ պատմվածք է մեջ բերում այն մասին, թե ինչպես մի ստրկատեր կարողացավ իր հնդկացի ստրուկների ինքնասպանությունը խանգարել նրանով, որ ձևացրեց, թե ինքն էլ նրանց հետ կախվում է։ Ստրուկները վախեցան մյուս աշխարհում էլ իրենց տիրոջը հանդիպելուց և կախվելու իրենց գիտավորությունից ձեռք վերցրին։ **Ինչ արժեքավոր բան որ կար գաղութներում, այն բոլորը փոխադրում էին Եվրոպա,**

Եվրոպայի հողային հարաբերությունները փոխադրում են նորագյուտ Ամերիկա։ «Փողի կարիք ունեցող ազնվականներն ու ազաները Վիրգինիա[1] նավելով առանց որևէ դժվարության կարող էին լայնածավալ հողամասերի տիրանալ։ Անգլիայի ամենաաղքատ դասակարգերից սկսեցին որքան կարելի յէ շատ մարդ հավաքել ու իբրև ճորտ բանվորներ ուղարկել գաղութները։ Այս թշվառներին, իբրև ստրուկների, ծախում էին միքանի տարի տևողությամբ որոշ ժամանակով»[2]։

Նոր Աշխարհի հողային արիստոկրատներն էլ ավելի ագահ, քմահաճ ու սնափառ էին, քան նրանց Եվրոպական ցեղակիցները։ Ամերիկյան բազմաթիվ միլիարդատերերի ահռելի կարողությունները խարսխված են հողերի գրավման, ֆերմերների շահագործման, ֆերմերներին անխղճորեն տարագրելու և հողերի չարաշահության վրա։

Առևտրային այն ընկերությունները, որոնք առաջ էին եկել Եվրոպայի զանազան երկրներում (*Նիդերլանդիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Դանիայում, Ռուսաստանում*), **առևտրային էին այն չափով միայն, որչափով որ նրանք ապրանքներ էին ծախում։ Իսկ այս ապրանքները նրանք ձեռք էին բերում կողոպուտի միջոցով։**

[1] Ներկայումս Հյուսիսային Ամերիկայի նահանգներից մեկն Ատլանտյան օվկիանոսի ափին։

[2] Մայերսի «Ամերիկյան միլիարդատերերի պատմությունից»։

Մարքսն ասում է.

«Ամերիկայի ոսկեհանքերի ու արծաթահանքերի գյուտը, տեղացի բնակչության բնաջնջումն, սարկացումն ու այս հանքաբաններում կենդանի-կենդանի թաղելն, Արևելյան Հնդկաստանի նվաճման ու կողոպտման ճանապարհին կատարած առաջին քայլերն, Աֆրիկան սևամորթների ձեռնտու վորսի վայր դարձնելն,— այս բոլոր յերևույթները բնորոշում են կապիտալիստական դարաշրջանը սկզբնական արշալույսին»...

«Ի՞նչը կարող է ավելի բնորոշ լինել, քան Ցեվերեսում մարդիկ գողանալու Հոլլանդական սիստեմը, վորի նպատակն էր սարուկներ հայթայթել Ճավայի համար»։

«Սրա համար վարժեցրել էին հատուկ մարդ հափշտակիչներ (похититель людей)։ Մարդագողը, թարգմանն ու վաճառորդն այս առևտրի գլխավոր գործակալներն էին, իսկ տեղացի իշխանները՝ գլխավոր վաճառորդները։ Նրանք գողացված յերիտասարդությունը փակում էին Ցեվերեսի գաղտնի բանտերում, վորտեղ աճում, մեծանում էր մինչև այն որը, յերբ նրանց ուղարկում էին գերեսար նավերը (невольничьи карабли)»։

«Հենց մենակ Մակասսար քաղաքն, օրինակ,—ասված է մի պաշտոնական հաշվետվության մեջ,—լիքն է գաղտնի բանտերով, մեկը մյուսից սարսափելի, բանտեր, վորոնք լիքը լցված են ագահության ու բռնապետության թշվառ զոհերով, և սրանք պըրկված են կապանքներով՝ բոնի կարված լինելով իրենց ընտանիքներից»։

Գաղութային սիստեմը զուտ յերմոցային զորությամբ նպաստում էր առևտրի ու ծովագնացության զարգացմանը։ «Մենաշնորհյալ ընկերությունները կապիտալի համակենտրոնացման հզոր լծակներն էին։ Նորածին մանուֆակտուրանները գաղութներին ապահովում էին վաճառահանման շուկա և շուկայի մենաշնորհի հետևանքով էլ սաստկացած կուտակումն։

Այն գանձերը, վորոնք Ցեվրոպայից դուրս ձեռք էին բերվում, ճանկվում էին կողոպուտի, սարկացման ու ավազակության միջոցով, բերվում էին խլողների հայրենիքը և այստեղ կապիտալ դարձվում...

Այսպես ուրեմն, սկզբնական կուտակման ամենագլխավոր աղբյուրը գաղութներն էին։

Սկզբնական կուտակման մյուս աղբյուրը պետական վարկն էր։
Մարքսն ասում է.

«Սիստեմը պետական վարկի, այսինքն պետական պարտքերի, վորոնց սաղմերը մենք դեռևս միջին դարերում գտնում ենք Ձենովայի ու Վենետիկի մեջ, մանուֆակտուրային ժամանակաշրջանում ընդգրկել էր ամբողջ Ցեվրոպան։ Պետական պարտքերն սկզբնական կուտակման ամենահզոր լծակներից մեկն են։ Կարծես մի կախարդական գավազանի շարժումով պետական պարտքերն անարտադրողական փողին շարժումով պետական պարտքերն անարտադրողական փողին արտադրողական զորություն են տալիս և այսպիսով այս փողերը կապիտալ դարձնում՝ ընդսմին հիշյալներն առանց ռիսկի յենթարկելու և հոգսերի առարկա դարձնելու, մի բան, վոր յենթարկելու և հոգսերի առարկա դարձնելու, մի բան, վոր անխուսափելիորեն կապված է փողերն արդյունաբերության մեջ գետեղելու ու նույնիսկ տոկոսով տալու հետ։ Պետական վարկատուները վոչինչ չեն տալիս եյապես, վորովհետև այն դրամները, վոր նրանք փոխ են տալիս, դառնում են պարտագրեր, վորոնք հեշտությամբ մեկից մյուսին կարող են անցնել և վորոնք վարկատուի ձեռքում գործ են տեսնում ճիշտ այնպես, կարծես թե նրանք նույնպիսի գումարի կանխիկ փող լինեյին։

Պետական պարտքերի հետ ծագումն է առել միջազգային վարկային սիստեմն էլ, վորի տակ հաճախ թաղնված է լինում այս կամ այն ժողովրդի սկզբնական կուտակման աղբյուրներից մեկը։ Այսպես, օրինակ, կողոպուտի վենետիկյան սիստեմի ստորությունները Հոլանդիայի կապիտալիստական հարստության թաքուն հիմքն են, Հոլանդիայի, վորին Վենետիկն իր անկման շրջանում դրամական խոշոր գումարներ էր փոխ տալիս։ Նույնպիսի առնչություն կա Հոլանդիայի ու Անգլիայի միջև։ XVIII դարի սկզբին արդեն Հոլանդիայի մանուֆակտուրաները յեռին շարքն անցան, և Հոլանդիան դադարեց առևտրական ու արդյունաբերական գերիշխող յերկիր լինելուց։

Դեռևս 1701-ից մինչև 1776 թ. թ. գլխավոր առևտրական գործառնություններից մեկը լինում է ուրիշ յերկրների, հատկապես իր ամենահզոր մրցակցին—Անգլիային ահռելի կապիտալներ փոխ տալը։

Յերբ մանուֆակտուրային ժամանակաշրջանում կապիտալիստական արտադրությունը զարգացավ, Ցեվրոպայի հասարակական կարծիքը զրկվեց ամոթի ու խղճի վերջին մնացորդից։ Ազգերը ցինիկորեն պարծենում էին ամեն մի սոորությամբ, վորը ծառայած էր լինում վորպես միջոց կապիտալի կուտակման։

Իրրև անգլիական պետական իմաստության հաղթանակ

գովաբանվում է այն իրողությունը, որ անգլիան Ուտրեխտի դաշնագրի համաձայն... իսպանացիներից բռնի խլեց նեգրեր առնելու և ծախելու արտոնությունը, մի առևտուր, որ անգլիան մինչ այդ անում էր Աֆրիկայի ու անգլիական Արևմտյան Հընդկաստանի միջև միայն, այլև Աֆրիկայի ու սպանական Ամերիկայի միջև։ Անգլիան 1743 թվականից առաջ իրավունք ստացավ տարեկան 4,800 նեգր մատակարարելու սպանական Ամերիկային...

Լիվերպուլը վարթամացավ նեգրի առևտուր անելու հիման վրա։ Այս առևտուրը Լիվերպուլի՝ սկզբնական կուտակում անելու մեթոդն է»։

Յուրաքանչյուր յերկիր սկզբնական կուտակման սեփական մեթոդներն է ունեցել։

Ռուսաստանում սկզբնական կուտակման աղբյուրը յեղել են ողու կապալները (винные откупа)։ **Չինաստանում՝ պետական խոշոր պատվերները։**

Սկզբնական կուտակմանը նվիրած գլուխը Մարքսը վերջացնում է հետևյալ խոսքերով.

«Կապիտալը ծնվում է՝ ոտից գլուխ իր բոլոր ծակ ու ծուկերից արյուն ու կեղտոտություն ծորեցնելով»։

§ 101. ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋ ՅԵԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺ ԾԱԽՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱԶՄԵՐԸ (КАДРЫ).

Սկզբնական կուտակմանը զուգընթաց տեղի է ունենում գյուղացական մասսաների բաճվորացումը։ Գյուղացությունն ազատվում էր վոչ միայն ճորտային կախումից, այլև հողից։ Դարպասի մարդիկ (дворовый люд) մեծաթիվ խմբերով բանվորական շուկա եյին շպրտվում։

«Իրենց տեղերից վտարված բնակչությունը, վորը ֆեոդալական զինված խմբերի զորացրման ու հողի՝ ցնցումներով կատարվող բռնի հափշտակման հետևանք եր, այս ազատ ու պարապ պրոլետարիատը վոչ մի կերպ չեր կարող կուլ գնալ, տեղավորվել մանուֆակտուրային զարգացող արդյունաբերության մեջ նույնպիսի արագությամբ, վորպիսի արագությամբ ծնվում եր հիշյալ պրոցեսների շնորհիվ։ Մյուս կողմից՝ այս մարդիկ, վորոնք հանկարծակի եյին դուրս շպրտված իրենց կյանքի սովորական ուղուց, միանգամից չեյին կարող հարմարվել նոր պայմանների կարգապահությանը։ Նրանք մեծամեծ խմբերով դառնում եյին մուրացկաններ, ավազակներ, թափառաշրջիկներ՝ մասամբ

նայած իրենց հակումներին, բայց շատ ու շատ դեպքում էլ այս-պես անում եյին պարագաների ստիպումով։ Ապա հենց այս պատճառով էլ ամբողջ Արևմտյան Յեվրոպայում ամբողջ XVI դարի ընթացքում հրապարակ է գալիս արյունախանձ որենսդրությունն ընդդեմ թափառաշրջկության։ Այժմյան բանվոր դասակարգի հայրերը հենց սկզբից պատժվում եյին այն բանի համար, վոր հզորները նրանց թափառաշրջիկներ ու մուրացկաններ եյին դարձրել։ Որենսդրությունը նրանց համարում եր «կամավոր» հանցագործներ և կարծում եր, վոր նրանց բարի կամքից է կախված շարունակել աշխատել կյանքի այնպիսի պայմաններում, վորոնք այլևս առաջվանը չեյին։

1530 թվականի անգլիական որենքն ասում է. «Ջառամյալ ու անաշխատունակ մուրացկանները թույլավություն ստանում են վոդորմություն ուզելու։ Իսկ առողջ թափառաշրջիկներն, ընդհակառակը, դատապարտվում են մտրակահարության պատժվելու և բանտարկության։ Նրանց պետք է սայլից կապելով այնքան ծեծել խարազանով, մինչև վոր մարմնից արյունը չհոսա. այն ժամանակ նրանք պետք է յերդում ուտեն, վոր կվերադառնան իրենց ծննդավայրը կամ թե այնտեղ, վորտեղ ապրում եյին վերջին տարիներում, և կսկսեն բանել։ Յեթե վորևե մեկը յերկրորդ անգամ բռնվի թափառաշրջկության մեջ, ապա նրան յերկրորդ անգամ են պատժում մտրակահարությամբ և կտրում են ականջի կեսն, իսկ յերրորդ անգամ նա պետք է մահապատժի յենթարկվի, իբրև ծանր հանցագործ ու հասարակության թշնամի»։

«Այսպիսով,—ասում է Մարքսը,—գյուղական բնակչությունը, վոր բռնի եքսպրոպրիացիայի յեր յենթարկված, հողերից վտարված ու թափառաշրջիկ դարձված, հրեշավորության չափ տերրորիստական որենքների միջոցով — մտրակահարությամբ, կաշու վրա դրոշմներ խարանելով ու տանջումներով (пытки) հպատակեցվեց ու վարժեցվեց մի այնպիսի կարգապահության, վորն անհրաժեշտ է վարձու աշխատանքի սիստեմի ժամանակ»։

Վաղ կապիտալիզմի դարաշրջանում գյուղացիական անտեսությունը բնատնտեսություն եր։

Գյուղացին գերադասում եր վուշն ու բուրդը գործվածք դարձնել, քան մանոնը ծախել ու պատրաստի հագուստ գնել։ Նա աշխատում եր, վոր բացի աղից ու յերկաթից, վոչինչ ծախ չառնի, այլ հենց ինքն արտադրի այն բոլորն, ինչ վոր իրեն հար-

կավոր է։ Ուրիշ բան է բանվորը։ Սա փոխանակային հասարակության իսկական անդամն է։ Սա ինչ վոր ունի, ծախում է, իսկ ունեցածն էլ բանվորական ուժն է մենակ։ Ամեն ինչ, վոր սրան հարկավոր է և կարելի չէ ձեռք բերել, սա ձեռք է բերում ծախ առնելով։ Այս պատճառով էլ գյուղացիության բանվորացումը նաև այն նշանակությունն ունի կապիտալիզմի համար, վոր այս բանվորացումը վոչ միայն բանվորական ուժ ծախողներ է ստեղծում, այլ և ապրանքների նոր գնորդներ է առաջ բերում աղնվականի կողքին, վորի տնտեսության մեջ վաղուց արդեն մուտք եյին գործել դրամական հարաբերությունները։ Գյուղացության բանվորացումն ընդլայնում է ներքին շուկան ճիշտ այնպես, ինչպես վոր գաղութների ստրկացումն արտաքին շուկա է ստեղծում։

ԲԱՆՎՈՐԱՑՈՒՄՆ ՈՒ ՇՈՒԿԱՆ։

Գյուղացության բանվորացմանը զուգընթաց տեղի յեր ունենում արհեստային համքարությունների քայքայումը: Մանուֆակտուրան արհեստավորին դարձնում եր բանվոր:

Մանող մեքենայի զարգացումը XIII դարում Անգլիայի մեջ առկա գտավ կապիտալիզմի բոլոր նախադրյալները—կապիտալներ, բանվորական ուժ ու շուկա։ Հարկ յեղած չափերի հասնելով կապիտալիզմը հետո արդեն շարունակում է նույն գործը—կապիտալի կուտակումն, արտադրողի բանվորացումը, չտեսնված ժողովուրդների ստրկացումը—հիմա արդեն ուրիշ զուտ կապիտալիստական մեթոդներով։ Այն սաղմի դրությունից, վորը սնվում է ձվի մեջ յեղած սննդարար նյութերի հաշվին, կապիտալիզմը դառնում է ինքնավերարտադրող պրոցես։ Կապիտալիզմն ավելի ու ավելի ընդարձակվող մասշտաբով սկսում է վերարտադրել թե իր գոյության հիմքերը—կապիտալն ու բանվորական ուժը, և թե այն հակասությունները, վորոնք պետք է կապիտալիզմը ներքուստ պայթեցնեն, նախ քան նրա լիովին հասունանալը։

ՔՍԱՆԵՐԿՈՒՅԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ․

§ 102. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԺԵՔԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Բանվորական ուժը, հումքն ու ոժանդակ նյութեղեններն արտադրության պրոցեսի մեջ ամբողջովին են կուլ գնում, իսկ շենքերն ու գործիքները մաշվում են աստիճանաբար։ Այսպիսով արտադրության պրոցեսն սպառման պրոցես է միաժամանակ։ Մանածագործարանն սպառում է բանվորական ուժ, մանոն, ներկեր, ածուխ, ոծյուղ (смазочное масло) և այլն։ Մանածագործարանը բացի սրանից սպառում է իր սեփական պատերն ու հաստոցներն էլ։ Այս ինչպիսի սպառումն է։ Անկասկած, **արտադրողական** սպառումն է, վորովհետև այս ամբողջ հիշածներս ապարդյուն չեն սպառվում, այլ դառնում են արդյունք։

Այսպես ուրեմն, արտադրության միջոցներն արտադրողաբար են սպառվում։ Հապա սպառման միջոցները—սնունդը, հագուստը, բնակարանը և այլն։ Նրանք միայն այն ժամանակ են արտադրողաբար սպառվում, յերբ սպառողներն աշխատավորներն են, յերբ հիշյալ միջոցների սպառումը բանվորական ուժ է ստեղծում։

Յեթե վերցնենք արտադրության մի վորևե ճյուղն՝ ուշ չդարձնելով մյուս ճյուղերի վրա, ապա մեզ կարող է թվալ, վոր արտադրողական սպառումն անգամ մեզ մտցնում է մի կույր փողոց։ Որինակ, մանածագործարանը մահուդ է տալիս։ Հետո ինչ։ Սպառած ածխի տեղակ հո մահուդը չի՞ քցվի մեքենայի մեջ իբրև վառելիք, սոված բանվորին հո մահուդով կերակրել չի՞ լինիլ (թեև մահուդից նրան կարելի չե հագուստ կարել)։ Մանածագործական հաստոցն ու մանիչ մեքենան հո բնավ չի կարելի մահուդով փոխարինել։

Բոլորովին այլ բան է լինում, յերբ մենք ուշադրության

ենք առնում ընդհանուր հասարակության ամբողջ արտադրական սիստեմը: Մենք տեսնում ենք, նախ, վոր այս սիստեմը **վերարտադրում է** բոլորն, ինչ վոր ինքն է սպառում, այսինքն վերարտադրում է արտադրության միջոցներ ու բանվորական ուժ. յերկրորդ **վերարտադրում է** այն բոլորն, ինչ վոր արտադրողաբար սպառում են շահագործողներն ու հասարակության մյուս վոչ-աշխատավոր տարրերն էլ: **Այն ժամանակ արտադրության պրոցեսը մեր**

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊՐՈՑԵՍՍ, ԻԲՐԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊՐՈՑԵՍՍ:

առջեվ է յելնում իր ամբողջ նշանակությամբ, իբրեվ վերարտադրության պրոցես, իբրեվ արտադրության միջոցների ու սպառման միջոցների մի չկտրվող գետակ, վորն անընդհատ սպառվում է յեվ նույնպես անընդհատ առաջանում նորից:

Մարքսն ասում է. «արտադրության պրոցեսն ինչ հանրային ձև էլ վոր ունենա, պետք է ամեն դեպքում էլ անընդհատ պրոցես լինի, այսինքն պետք է պարբերաբար շարունակ նորից ու նորից անցնե միևնույն փուլերով: Հասարակությունը չի կարող արտադրելուց դադարել, ինչպես և չի կարող սպառելուց դադարել: Այս պատճառով հանրային արտադրության յուրաքանչյուր պրոցես, յեթե քննենք իր նորանալու անընդհատ հոսանքի մշտական կապակցությամբ, միաժամանակ նաև վերարտադրության պրոցես է:

Յեթե հասարակությունը վերարտադրում է հենց այնքան, վորքան սպառում է (արտադրողաբար կամ թե անարտադրողաբար), **ապա մեր տեսածը հասարակ վերարտադրություն է:** Այս նշանակում է, թե արտադրության միջոցների, սպառման միջոցների ու բանվորական ուժի քանակը վոչ շատանում է և վոչ էլ քչանում: Ընդհանրապես ու ամբողջությամբ առած՝ հասարակությունը վոտները շարժում է կանգնած մնալով տեղն ու տեղը: Հասարակության տնտեսական պատվանդանը վոչ ընդլայնվում և վոչ էլ նեղանում է:

ՀԱՍԱՐԱԿ, ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՈՒ ՆԵՂԱՑՎԱԾ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ:

Հասկանալի յե, վոր վոտները շարժելով այսպես տեղն ու տեղը մնալը կանոն չե, այլ բացառություն է: Համաշխարհային պատերազմից առաջ արդի ժողովուրդների համար կանոն էր **ընդլայնված վերարտադրությունը: Ընդլայնված վերարտադրություն նշանակում է, վոր հասարակությունը իր սպառածից ավելի յե վերարտադրում:** Յեվ իրոք, վերջին դարերում Յեվրոպայի ու Ամերիկայի ժողովուրդների տնտեսական հզորությունը բազմապատիկ շատացել էր:

Հակառակ յերևույթն ունենք ի դեմս նեղացված վերարտադրության: **Նեղացված վերարտադրություն նշանակում է, վոր հասարակությունը իր սպառածից քիչ է վերարտադրում:** Համաշխարհային պատերազմի ժամանակ կռվող ժողովուրդների քաշածը նեղացված վերարտադրություն էր, քանի վոր արտադրությունն սպասարկում էր վոչ թե արտադրողական սպառմանն, այլ գլխավորապես ռազմական կործանողական սպառմանը: Նեղացված վերարտադրությունն էր հնադարյան կուլտուրաների (Յեգիպտոսի, Բաբելոնի ու այլոց) կործանվան ամենագլխավոր պատճառը:

ԱՐԺԵՔԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ:

Մինչև հիմա մենք խոսում էյինք արտադրության միջոցների, սպառման միջոցների ու բանվորական ուժի **բնական** ձևի տեսակետից: Բայց վորչափով վոր խոսքը վերաբերում է փոխանակային հասարակությանն, այսքանը քիչ է: Այս դեպքում մենք պետք է վերարտադրության հարցին մոտենանք մի ուրիշ տեսակետից էլ, այն է՝ **արժեքների** վերարտադրության տեսակետից: Իսկ այս նույնը չէ ամենևին, ինչ վոր է բնական ձևի վերարտադրությունը: Այս մեզ համար պարզ կացուցանելու համար վերցնենք հետևյալ որինակը:

Ասենք թե հացթուխն առ 1-ն հունվարի 1926 թ. բոլորովին նույն կահույքն ու նույնքան ալյուր ունի, վոր ուներ առ 1-ն հունվարի 1925 թ.: Ընդսմին նա այս մի տարվա ընթացքում վոչինչ չի տնտեսել և նախկին տնտեսածից էլ վոչինչ չի ծախսել իր ապարատի վրա: Թվում է, թե մենք գործ ունենք հասարակ վերարտադրության որինակի հետ: Սակայն ուրիշ պատկեր կարող է ստացվել, յեթե մոտենանք արժեքի տեսակետից: Լավ բերքի հետևանքով ալյուրի արժեքն ընկել է 20%-ով: Հացթուխի ձեռնարկության մեջ հիմա արժեքներն ավելի քիչ են: Ստացվեց նեղացված պատվանդանի վրա հիմնված վերարտադրություն:

Այսպես ուրեմն, փոխանակային հասարակության տեսակետից հասարակ վերարտադրության դեպք այն դեպքը կլինի, յերբ հասարակության արտադրածի **արժեքը** հավասար է հասարակության՝ արտադրողաբար ու անարտադրողաբար սպառածի **արժեքին**: Յերբ արտադրածի **արժեքն** սպառածի **արժեքից** շատ է, մենք ունենք ընդլայնված վերարտադրություն: Յերբ արտադրածի ար-

ժեք սպառածի արժեքից քիչ է, մենք ունենք նեղացված վերարտադրություն։

§ 103. ԿԱՊԻՏԱԼԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Յերթ մենք էլ ավելի ճիշտ կերպարանք տանք հարցին և, ընդհանրապես փոխանակային հասարակության մասին խոսելու փոխարեն խոսենք հատկապես կապիտալիստական հասարակության մասին, ապա վերարտադրության հարցն ելի նոր ձև կընդունի։ Այս դեպքում խոսքը կվերաբերի ոչ միայն ընդհեն վերարտադրության (воспроизводство в натуре) ու արժեքների վերարտադրությանն այլ և կապիտալի վերարտադրությանը։ **Այն կապիտալը, որ արտադրությունից է կլանում, կազմված է յերկու մասից, այն է՝ v-ից ու c-ից։**

Իսկ վերարտադրված կապիտալը ստիպվում է յերեք մասի— c, v ու m, այսինքն մշտական կապիտալ (արտադրության միջոցների արժեքը), փոփոխական կապիտալ (բանվորական ուժի արժեքն) ու հավելյալ արժեք։

Իսկ ինչ է անում կապիտալիստը հավելյալ արժեքը։

Այստեղ հնարավոր է յերկու դեպք։

1. Կապիտալիստն ամբողջ հավելյալ արժեքը ծախսում է իր վրա ու իր արբանյակների վրա։ Այս, իհարկե, անարտադրողական սպառումն է։

2. Կապիտալիստն անարտադրողաբար ծախսում է հավելյալ արժեքի մի մասը միայն։ Իսկ մյուս մասը նա ելի կապիտալ է դարձնում, այսինքն գործադրում է կամ իր ձեռնարկությունն ընդլայնելու վրա, կամ թե նոր ձեռնարկություն ստեղծելու վրա[1], կամ էլ դարձնում է փոխառուական կապիտալ, որը գործադրության է դրվում ուրիշ կապիտալիստների ձեռքով։

Առաջին դեպքը, յերբ ամբողջ հավելյալ արժեքն սպառվում է անարտադրողաբար, կապիտալի հասարակ վերարտադրության դեպք է, վորովհետև յերբ կապիտալը վոտք է դնում նոր պտույտի մեջ, ապա այն ոչ ավելի չի և ոչ էլ պակաս է, քան յեղել էր նախնթաց պտույտի սկզբում։

Յերկրորդ դեպքը, յերբ հավելյալ արժեքի մի մասը միացվում է կապիտալին, կապիտալի ընդլայնված վերարտադրության դեպք է։

[1] Ընդամենն այս նոր կապիտալն էլ է արտադրում c-ի ու v-ի։

Այնտեղ, վորտեղ մենք գործ ունենք կապիտալի ընդլայնված վերարտադրության հետ, մենք հենց սրանով էլ գործ ունենք կապիտալիստական կուտակման հետ (տես վերևում VI գլուխ)։

Կարելի յեր կարծել, վոր կապիտալիստների կամքից կամ թե արտադրությունից և կախված այն հարցը, թե արդյոք ամբողջ հասարակության մասշտաբով առած՝ կապիտալի վերարտադրությունը հասարակ թե ընդլայնված վերարտադրություն կլինի։ Սակայն իրոք այս այսպես չե։

ԿՈՒՏԱԿՈՒՄՆ։

Վերցնենք մանածագործարանի տարեկան արդյունքը։ Ասենք թե այս արդյունքը հավասար է 10 միլիոն մետր չթի։ Ամեն մի մետրի արժեքը 25 կոպեկ է։ Ընդհանուր արժեքը $2^1/_2$ միլիոն ռուբլի չե։ Տարվա ընթացքում գործադրված է $^1/_2$ միլիոնի բանվորական ուժ, 1,4 միլիոնի հումք ու ածանխակ նյութեղեններ։ Շենքերի ու մեքենաների մաշվածքը 100,000 ռուբլի չե։

Այսպիսի պայմաններում տարեկան արտադրանքի արժեքը տրոհվում է այս կերպ.

c	1,5 միլիոն
v	0,5 »
m	0,5 »
Ընդամենը	*2,5 միլիոն*

Ընդունենք, վոր այս ձեռնարկության մեջ յեղած կապիտալի որգանական կազմը համապատասխանում է ամբողջ հանրային կապիտալի միջին որգանական կազմին և վոր ուրեմն նորմալ պայմաններում այս ձեռնարկության մեջ ստացված ամբողջ հավելյալ արժեքը մնում է այստեղ։ Ստացած $^1/_2$ միլիոն հավելյալ արժեքից կապիտալիստը 10 հազարը բաժին է հանում հողատիրոջն իբրև ռենտա ու 90 հազարը տալիս է պետությանն իբրև հարկեր։ Մնացած 400 հազարն նրա շահույթն է։ Իհարկե, կապիտալիստը կարող է այս ամբողջ գումարն էլ ծախսել իր ապրուստի վրա։ Այսպիսով նրա տարեկան կուտակումը հավասար կլինի զերոյի։

Բայց ինչպես տեսել ենք վերևում (գլ. VI), խոշոր արտադրության առավելությունները մանրի հանդեպ այնքան մեծ են, վոր յերկրորդը—մանր արտադրությունը—աստիճանաբար դուրս է մղվում առաջինի—խոշոր արտադրության կողմից։ Արտադրության համակենտրոնացման պրոցեսը կապիտալիստին հարկա-

գրում է կուտակել ու սրա շնորհիվ էլ ընդլայնել իր ձեռնարկութ-յան մասշտաբը։ Այս իսկական վաղք է առաջկարուկ անելով։ Յավ վայ նրանց, վորոնք չեռ կհնան։ Այն կապիտալիստը, վորը չի կարողացել լրացուցիչ կապիտալ ներդրել իր ձեռնարկութ-յան մեջ և վորը շարունակում է գործ անել նախկին մասշտաբով ու նախկին յեղանակներով,—նա շուկա կհանի բարձր ինքնարժեք ունեցող ապրանք։ Նա շահույթի փոխարեն վնաս կստանա։ Առանց շրջանառու կապիտալի միալով՝ նա այլևս չի կարող պրոծել, իբրև ձեռնարկու... Յեթե մեր կապիտալիստը չի ուզում շարքից դուրս ընկնել, ապա նա իր 400,000 շահույթի միայն մի մասը պիտի ծախսի իր ապրուստի վրա, իսկ մյուս մասը գործադրի արտադրութ-յունն ընդլայնելու վրա։

Ա-յսպիսով լիովին օբյեկտիվ պատճառներ են հարկադրում կապիտալիստներին, վոր սրանք կուտակելու ձգտեն։

Յեթե բոլոր կապիտալիստները ընդլայնված վերարտադրության պայմաններում հանկարծ խոսք մեկ անելին, վոր իրենց ամբողջ շահույթը ծախսեն իրենց վրա և միացորդ չխողնեն, ապա այս բանը նրանց չեր հաջողվիլ ամենևին։ Մենք առաջ տեսել ենք, թե ինչպես տարեկան արտադրանքը արտհվում է c+v+m-ի։ Հավելյալ արժեքը տարեկան արտադրանքի մի մասն է ամենից առաջ։ Հրուշակագործի հավելյալ արժեքն, ինչպես և նրա ամբողջ արտադրանքն ուտելիքի կերպարանք ունի, բայց նույն այս բանը չի կարելի ասել մեքանագործական ձեռնարկութ-յան, նավաշինարանի կամ թե վագոն շինող գործարանի հավելյալ արժեքի մասին։ Այստեղ հավելյալ արժեքն, ինչպես և ամբողջ արտադրանքն, արտադրութ-յան միջոցների կերպարանք ունի։ Յեթե ամբողջ կապիտալիստական աշխարհը խոսք մեկ անի, վոր ստացած ամբողջ շահույթն սպառի անմիջապես, և հրաժարվի արտադրութ-յունն ընդլայնելուց ու սրա մեջ նոր կապիտալներ դնելուց, ապա կապիտալիստներն, իհարկե, վորոշ ջանք գործ դնելով կարող եյին սպառել, պրծացնել այն հավելյալ արժեքը, վոր սպառման միջոցների կերպարանքով է ներկայանում, բայց վոչ ամենևին այն հավելյալ արժեքը, վորն արտադրութ-յան միջոցների կերպարանքով է հանդես գալիս։

Արտադրութ-յան այն միջոցները, վորոնք նկատի եյին առնված արտադրութ-յունն ընդլայնելու համար, չիրացված կմնան, իսկ նրանց հետ միասին չիրացված կմնա հավելյալ արժեքի մի մասն էլ։ Իհարկե, խիստ քաշքշելով կարելի է ասել, թե արտադրութ-յան միջոցներն էլ կարող են սպառման միջոցների փոխարկվել։ Կարելի է ասել, թե հնարավոր է վագոններն ու շոգեկառքերը զվարճութ-յան միջոցներ դարձնել կամ թե շինանյութերն ոգտագործել բացառապես պալատներ ու դղյակներ կերտելու նպատակով։ Սակայն իրականում այս բանը տեղի ունենալ չի կարող։ Քանի վոր հավելյալ արժեքի շատ մեծ մասն արտադրութ-յան միջոցների կերպարանք ունի, ապա անհնարին բան կլիներ կապիտալիստների՝ հասարակ վերարտադրութ-յան անցնելը։

§ 104. ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ.

Մարքսն ամբողջ հանրային արտադրութ-յունը տրոհում է յերկու բաժնի I. արտադրութ-յան միջոցների արտադրութ-յուն ու II. սպառման միջոցների արտադրութ-յուն։

I բաժնում տարեկան արտադրանքի բոլոր մասերը (c, v ու m) արտադրութ-յան միջոցների կերպարանք ունեն։

II բաժնում տարեկան արտադրանքի բոլոր մասերը (c, v ու m) սպառման միջոցների կերպարանք ունեն։

Հասարակ վերարտադրության ժամանակ այս յերկու բաժինն ինչպես են բաշխում իրենց արտադրանքը։

Սկսենք I բաժնից։

I c-ն մնում է I բաժնի ներսում՝ արտադրութ-յան այն միջոցներին փոխարինելու համար, վորոնք մտել են տարեկան արտադրանքի մեջ։

I v-ն բանվորների կենսամիջոցների արժեքն է, ուրեմն սպառման այն միջոցների արժեքն է, վորոնց հետ փոխանակվելու են I v-ի մեջ մտած արտադրութ-յան միջոցները։ Հետևաբար I v-ն պետք է անցնի II բաժնի մեջ՝ փոխանակվելով սպառման այն միջոցների հետ, վորոնք նախանշված են բանվորների համար։

Սույն վիճակն է սպառում I m-ին։ Վորովհետև խոսքը վերաբերում է հասարակ վերարտադրութ-յանն, ապա կապիտալիստները[1] m-ն սպառում են ամբողջովին։ Ուրեմն

[1] Գլուխ՝ հողատերերն ու բուրժուական պետութ-յունը, վոր հարկեր է առանում։

I m-ն էլ պետք է անցնի II բաժնի մեջ՝ փոխանակվելով սպառման այն միջոցների հետ, որոնք նախանշված են շահագործողների համար։

Իսկ II բաժինը իր արտադրանքի վոր մասն է տալիս I բաժնին։ Այս չի կարող վոչ II v-ն լինել, վորը հարկավոր է II բաժնի բանվորներին, ու վոչ էլ II m-ն լինել, վորը հասարակ վերարտադրության պայմանների հետևանքով ամբողջովին հարկավոր է II բաժնի կապիտալիստներին։ Այս միայն II c-ն կարող է լինել, վորը թեև սպառման միջոցների կերպարանք ունի, բայց իր արժեքով փոխարինում է արտադրության այն միջոցներին, վորոնք մտել են արտադրանքի մեջ։

Այսպես ուրեմն II բաժինը իր c-ն տալիս է I բաժնին։

Ի՞նչ բանի փոխարեն։

I v + II m-ի փոխարեն, վոր I բաժինը տալիս է II բաժնին։

Պարզ է, վոր կապիտալիստական պայմաններում հասարակ վերարտադրությունը հնարավոր է այն ժամանակ, յերբ իրենց արժեքով Iv+Im=IIc։ Իսկ յեթե I v+I m շատ է IIc-ից, ապա հասարակ վերարտադրության հավասարակշռությունը խախտվում է։ I բաժնի կապիտալիստներն **ստիպված են** կուտակման ու ընդլայնված վերարտադրության անցնել, վորովհետև հասարակության արտադրության տակ չկա սպառման միջոցների այնպիսի մեծ քանակ, վոր կապիտալիստները կարողանան սպառել իրենց ստացած ամբողջ հավելյալ արժեքը։

Այսպես ուրեմն, կուտակումը հնարավոր և անհրաժեշտ է I ու II բաժինների արտադրանքի այնպիսի փոխհարաբերության ժամանակ յերբ I v+I m շատ II c-ից։

Ընդ սմին արտադրության միջոցների արտադրության ընդլայնումը հնարավոր է այն ժամանակ միայն, յերբ բանվորների սպառելիք լրացուցիչ միջոցներ լինեն։ Բանվորների սպառման միջոցների լրացուցիչ արտադրությունն իր հերթին պահանջում է արտադրության լրացուցիչ միջոցներ և այլն։

«Կապիտալի» II հատորում Մարքսը տալիս է հասարակ վերարտադրության այսպիսի սխեմա.

I. 4000 c + 1000 v + 1000 m = 6000
II. 2000 c + 500 v + 500 m = 3000

Ընդամենը . . 9000

I v + I m = 2000
II c . . = 2000
I v + I m = II c



ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ.

Ընդլայնված վերարտադրության համար յելակետ ծառայող սխեման հետևյալն է.

II. 4000 c + 1000 v + 1000 m = 6000
II. 1500 c + 750 v + 750 m = 3000

Ընդամենը . . 9000

I v + I m > I c

Բուխարինը տալիս է ընդլայնված վերարտադրության հետևյալ ֆորմուլան.

$$IV + IA + IBv = IIC + IIBc$$

Առանձին նշանների իմաստն այս է.

C—մշտական կապիտալ,

V—փոփոխական կապիտալ,

A—հավելյալ արժեքի այն մասը, որը ծախսվում է սպրուստի վրա,

B—հավելյալ արժեքի տնտեսելի մասը,

Bc—B-ի այն մասը, որը դառնում է մշտական կապիտալ,

Bv—B-ի այն մասը, որը դառնում է փոփոխական կապիտալ։

Ավելի պատրաստվածների համար

§ 105. ՄԱՐՔՍԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԵՈՐԻԱՅԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՌՈԶԱ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ.

Հանդուցյալ հեղափոխական Ռոզա Լյուքսեմբուրգը «Կապիտալի կուտակումը» վերնագրով իր գրքում հանդես է գալիս Մարքսի վերարտադրության թեորիայի քննադատությամբ։ Ռոզա Լյուքսեմբուրգի կարծիքով, ընդլայնված վերարտադրությունը հնարավոր բան չէ զուտ կապիտալիզմի պայմաններում, որտեղ միայն երկու դասակարգ կա—կապիտալիստներ ու բանվորներ։

Ռոզա Լյուքսեմբուրգը մոտավորապես այսպես է դատում։

Ընդլայնված վերարտադրության ժամանակ կապիտալիստներն իրենց ստացած ամբողջ հավելյալ արժեքը չեն սպառում, այլ՝ սրա մի մասը միայն։ Մյուս մասը նրանք դարձնում են կապիտալ, որն իրենք անմիջապես կամ իրենց պարտապանների ձեռքով գործադրում են չեզոք ձեռնարկություններն ընդլայնելու կամ թե նորերը բաց անելու համար։ Հապա ո՞ւմ համար են արտադրությունն ընդլայնում,—հարցնում է Ռոզան։ Չէ՞ որ արտադրության ընդլայնումն ընդհանրապես պետք է այն հեռանկարն ունենա, որ ընդլայնվի սպառման միջոցների արտադրությունը, և ընդլայնվի ոչ միայն բնեղենի տեսակետից, այլև արժեքի տեսակետից. այսինքն՝ վերարտադրության ընդլայնման հետևանքով մեծանում է ոչ միայն սպառման միջոցների քանակն, այլև նրանց արժեքը։ Հարցում է առաջ գալիս, թե հապա ո՞վ է լինելու սպառման ավելացիր միջոցների գնորդը։ Ո՞վ պետք է վճարի այս միջոցների շատացած արժեքը։ Ռոզան ասում է.

«Վորպեսզի կուտակումն իրոք տեղի ունենա, այսինքն, վորպեսզի արտադրությունն ընդլայնվի, անհրաժեշտ է, վոր ապրանքների նկատմամբ ցեղած վճարունակ պահանջն ընդլայնվի։ Բայց վո՞րտեղից է առաջ գալիս այս հարաճուն առաջարկը, վորն արտադրության առաջադիմական ընդլայնման (прогрессирующее расширение) հիմքն է Մարքսի սխեմայի մեջ։

Ամենից առաջ մի բան պարզ է. այն հարաճուն պահանջը չի կարող ծագել I ու II կապիտալիստներից, այսինքն սրանց անձնական սպառումից։ Իրոք, կուտակման եյությունը հենց այն է, վոր կապիտալիստները հավելյալ արժեքի մի մասն, այն էլ այն մասը, վորն աճում է առնվազը բացարձակորեն,—սպառում են վոչ թե անձամբ, այլ գործադրում են այնպիսի բարիքներ ստեղծելու համար, վորոնցից ուրիշներն են ոգտվում։ Ճիշտ է, կապիտալիստների անձնական սպառումն աճում է կուտակմանը զուգնթաց, և այս սպառումը կարող է աճել ըստ իր արժեքի չէլ, բայց այնուամենայնիվ հավելյալ արժեքի այն մասը, վոր ծախսվում է կապիտալիստների սպառման վրա, հավելյալ արժեքի մի մասն է լոկ։ Կուտակման հիմքը հենց այն պարագան է, վոր կապիտալիստները չեն սպառում ամբողջ հավելյալ արժեքը։ Հապա էլ ո՞ւմ համար է արտադրվում հավելյալ արժեքի այն մյուս, կուտակված մասը։

Մարքսի սխեմայի համաձայն, շարժումն սկսվում է արտադրության միջոցների արտադրության Ic ստորաբաժանումից։ Հապա ո՞վ է սպառում արտադրության միջոցների այն քանակը, վոր շատացել է վերարտադրության այս շարժման հետևանքով։ Սխեման պատասխանում է. այս սպառում է II ստորաբաժանումը, վորպեսզի հնարավորություն ունենա ավելի շատ կենսամիջոցներ արտադրելու։ Իսկ ո՞վ է սպառում կենսամիջոցների այս շատացած քանակը։ Սխեման պատասխանում է. այս շատացած կենսամիջոցներն սպառում է I ստորաբաժանումն այն պատճառով, վոր հիմա նա ավելի բազմաթիվ բանվորներ է բանեցնում։

Ակներև է, որ մենք պատւոյ ենք գործում շրջագծի մէջ։ Սպառման ավելի շատ միջոցներ արտադրել միմիայն նրա համար, որ ավելի շատ բանվորներ պահվեն, և արտադրութեան միջոցների ավելադիր քանակ արտադրել միմիայն նրա համար, որ սրանով գործ ու զբաղմունք տրվի բանվորների այս ավելի շատացած բազմութեանը,—բայց չէ՞ որ այս անհեթեթութիւն է կապիտալիստական տեսակետից։ Իհարկէ, առանձին կապիտալիստների համար բանվորը—չեթէ միայն սա վճարունակ է—նուիրնպիսի լավ սպառող է, այսինքն նրա ապրանքի նուիրնպիսի լավ գնորդ է, ինչպես և կապիտալիստը կամ ուրիշ որևէ մեկը։ Այն ապրանքի գնի մէջ, որ նա ծախում է բանվորին, առանձին կապիտալիստը ճիշտ նուէն կերպ է իրացնում իր հավելյալ արժէքն, ինչպես և այն ապրանքի գնի մէջ, որ նա ծախում է որևէ ուրիշ գնորդի։ Բանը բոլորովին այլ է կապիտալիստների դասակարգի տեսակետից, չեթէ վերջինս իբրև ամբողջութիւն վեր առնենք։ Կապիտալիստների դասակարգը բանվոր դասակարգին դրամով տալիս է ամբողջ հանրային արտադրանքի խիստ վորոշ մասը միայն, այսինքն մի գումար, որ հավասար է փոփոխական կապիտալին։ Հետևաբար, չերը բանվորները կենսամիջոցներ են գնում, սպառնրանք փոխհատուցում են կապիտալիստների դասակարգին նրանից ստացած աշխատավարձը միայն, նրանց—բանվորներին—տված այն գումարը միայն, որ հավասար է փոփոխուն կապիտալին։ Բանվորները չեն կարող մի գուռշ անգամ ավելի վերադարձնել կապիտալիստներին։ Նրանք ավելի շուտ կարող են մի քիչ պակաս վերադարձնել. այս լինում է այն ժամանակ, չերը բանվորները «տնտեսում են», վորպեսզի ինքնուրոյն փոքրիկ ձեռնարկատերեր դառնան, մի բան, որը սակայն բացառիկ դեպք է։ Հավելյալ արժէքի մի մասն, իբրև կենսամիջոցներ, սպառում է կապիտալիստների դասակարգը, վորն ընդամին իրար միջև փոխանակված փողերը պահում է իր գրպանում։ Բայց ոչ է կապիտալիստներից ծախ առնում այն արդյունքները, վորոնց մէջ մարմնացած է հավելյալ արժէքի մյուս կապիտալացված մասը։ Սիեմանն պատասխանում է. մասամբ կապիտալիստներն իրենք, վորոնք արտադրութեան նոր միջոցներ են արտադրում արտադրութիւնն ընդլայնելու համար, մասամբ էլ այն նոր բանվորները, վորոնք հարկավոր են արտադրութեան այս նոր միջոցները շարժման մէջ դնելու համար։ Սակայն նոր բանվորներին գործ տալու և արտադրութեան նոր միջոցները շարժման մէջ դնելու համար կապիտալիստական տեսակետից ամենից առաջ հարկավոր է, վոր արտադրութիւնն ընդլայնելու համար վորևէ նպատակ գոյութիւն ունենա, պետք է պատրաստելիք արտադրանքների լրացուցիչ պահանջ լինի»։

Ավելի պարզ կացուցանելու համար Ռոզան կապիտալիստական հասարակութեան տարեկան ամբողջ պրոդուկցիան մտքով միախառնելով մի մեծ կույտ է դարձնում և հետո նոր այս կույտը բաժանում է չերկու մասի։

1. Այն ամենը վերարտադրելու միջոցներ, ինչ վոր կլանված է եղել արտադրութեան նախնեաց ժամանակաշրջանի կողմից, այն է՝ ա) արտադրութեան նոր միջոցներ՝ մաշված ու (արտադրողաբար) սպառած միջոցների փոխարեն ու բ) սպառման միջոցներ, վորոնք բանվորներին հարկավոր են իրենց բանվորական ուժը վերականգնելու համար։

2. Կապիտալիստների սպառման ֆոնդ։

3. Կուտակման ֆոնդ, այսինքն այն ապրանքները, վորոնց մէջ է պարունակվում հավելյալ արժէքի այն մասը, վոր պետք է նոր կապիտալ դարձվի։

Առաջին չերկու մասերի գնորդները կան մեջտեղում, այն է՝

1 ա մասը գնում են կապիտալիստները՝ նրանով փոխարինելու համար արտադրութեան այն միջոցները, վորոնք գործադրված են եղել արտադրողաբար։

1 բ մասը գնում են բանվորներն այն փողով, վոր նրանց կանխավճարում են կապիտալիստներն իբրև աշխատավարձ առաջիկա արտադրական ժամանակամիջոցի համար։

2-րդ մասը գնում են կապիտալիստները, վոր իրենք սպառեն։

Իսկ չերրորդ մասի համար, այսինքն այն ապրանքների համար, վորոնք կազմում են կուտակման ֆոնդը, Ռոզան գնորդներ չի գտնում վորովհետև թե բանվորների ու թե կապիտալիստների

գնողական ուժն արդեն պրծել է 1 ու 2 մասերը ծախս անելով։

Այստեղից Ռոզան այն յեզրակացությունն է հանում, թե զուտ կապիտալիզմի պայմաններում ընդլայնված վերարտադրությունը հնարավոր չէ։ Իսկ յեթե ընդլայնված վերարտադրություն տեղի յե ունենում, ապա այս լինում է միմիայն այն պատճառով, վոր բացի բանվորներից ու կապիտալիստներից փաստորեն «յերրորդ անձինք» էլ կան իբեմս ա) կապիտալիստական յերկրների վոչ-կապիտալիստական դասակարգերի, այն է՝ գյուղացիների, տնայնագործների ու այլոց և բ) գաղութների։ Ահա այս յերրրորդ անձինք են հենց գնում այն ապրանքները, վորոնք կուտակման ֆոնդն են կազմում։ Յեթե սրանք չլինեյին, ընդլայնված վերարտադրությունն անհնարին կլիներ։ Զուտ կապիտալիզմը լճացման է դատապարտված։ Կապիտալիզմը զարգանալ կարող է արտաքին սննդատու միջավայրի հաշվին միայն, այն միջավայրի, վորը կազմված է վերևում բերած յերրորդ անձերից։

Բուխարինն «Իմպերիալիզմն ու կապիտալի կուտակումը» վերնագրով իր բրոշյուրի մեջ յերևան է հանել այն քննադատության ամբողջապես անհիմն լինելը, վոր Ռոզան հրապարակ է մղում ընդդեմ Մարքսի։

Յեվ իրոք, ապացուցելու համար, թե զուտ կապիտալիզմի պայմաններում ընդլայնված վերարտադրությունը հնարավոր չէ, Ռոզան սկսում է նրանից, վոր ընդլայնված վերարտադրության տեղ նա հասարակ վերարտադրությունն է դնում։ Զննենք թեկուզ հենց ապրանքների այն կույտը, վորը Ռոզային այսպիսի յերկբայության մեջ է գցել։ Մի կողմից թվում է, վոր այս կույտն ընդլայնված վերարտադրության արդասիք է, վորովհետև այս կույտի յերրորդ բաժինը կուտակման ֆոնդն է։ Իսկ մյուս կողմից, այս կույտի մեջ արտադրության այնքան միջոցներ կան միայն, վորքան հարկավոր է առաջվա արտադրողաբար սպառածը վերարտադրելու համար (1 a յենթաբաժին)․ հետևաբար վորչափով վոր խոսքը վերաբերում է արտադրության միջոցներին, մեր հանդեպ տեսնում ենք վոչ թե ընդլայնված, այլ հասարակ վերարտադրություն։ Ահա թե ինչու ըստ Ռոզայի ստացվում է, վոր կուտակման ամբողջ ֆոնդը կազմված է սպառման միջոցներից։ Իսկ իրականում կուտակման ֆոնդը կազմված է վոչ միայն սպառման միջոցներից,

այլև արտադրության միջոցներից։ Թե մեկի ու թե մյուսի համար շուկա ստեղծվում է ընդլայնված վերարտադրության շնորհիվ, վորն առաջադրում է ինչպես արտադրության նոր միջոցների պահանջ, այնպես էլ արտադրության մեջ նոր ներքաշվող բանվորների սպառման միջոցների պահանջ։ Արտադրության ու ընդսմին նաև շահույթների ընդլայնումը հիմք է տալիս կապիտալիստներին էլ, վոր սրանք իրենց սպառումն ընդլայնեն։ Արտադրության հաջորդ ժամանակաշրջանի վերջում պատկերն էլի միևնույնը կլինի։ «Կուտակման ֆոնդը» նորից կնդլայնվի՝ տրոհվելով արտադրության նոր միջոցների ու սպառման նոր միջոցների։ Յեվ Ռոզան այս անընդհատ պրոցեսի մեջ մուծում է իրականում գոյություն չունեցող մի մեռյալ կետ, յերբ կապիտալիստները նստած են մնում իրենց կույտի յերրորդ բաժնի վրա և չգիտեն, թե ումը ծախեն այն։

Ինքը Ռոզան մի տեղ նույն այս լուծմանն է հանգում, վոր մենք նշեցինք, բայց ասում է, թե այս լուծում չէ, այլ դժվարությունն արտադրության մեկ ժամանակաշրջանից մյուս ժամանակաշրջանը տանել միայն։ Բայց չէ՞ վոր այն դժվարությունը, վոր անվերջ կարելի յե մի տարուց հետաձգել մի ուրիշ տարի, դժվարություն չէ ամենևին։ Յեթե մարդս կարողանար անվերջ կերպով իր մահը հետաձգել տարեց տարի, նա անմահ կլիներ։

Իհարկե, շատ մեծ է այն նշանակությունը, վոր ունեն «յերրորդ անձինք», այսինքն գաղութներն ու վոչ-կապիտալիստական դասակարգերն, իբրև կապիտալիստական արտադրանքների գնորդներ։ Բայց նախ վոր «յերրորդ անձինք» վոչ միայն ապրանքներ են գնում կապիտալիստներից, այլև ապրանքներ են ծախում թե կապիտալիստներին ու թե բանվորներին (նրանք կապիտալիստներին ծախում են արտադրության միջոցներ ու սպառման միջոցներ, իսկ բանվորներին՝ սպառման միջոցներ)։ Ուրեմն նրանք վոչ միայն ընդլայնում են կապիտալիստական ապրանքների շուկան, այլև վորոշ չափով մրցում են կապիտալիստների հետ։ Յերկրորդ՝ չպետք է շփոթել կարևորությունն ու բացարձակ անհրաժեշտությունը[1]։

[1] Օրինակ, ԽՍՀՄ համար շատ կարևոր բան կլիներ ատարերկրյա խոշոր փոխառություն ստանալը։ Բայց այս դեռ չի նշանակում, թե ֆինանսական շրջափակումը մեզ կործանումն է բերում։

«Ձերբորդ անձինք» կապիտալիզմի համար կարևոր են, բայց այնուամենայնիվ կապիտալիզմի գոյությունը առանց նրանց էլ հնարավոր է։ Կապիտալիզմը կորստի չէ մատնված վոչ թե այն պատճառով, վոր սպառվում, պրծնում է «ձերբորդ անձերից» կազմված աննդատու միջավայրը, վորի մեջ լողում է կապիտալիզմն [1], այլ այն պատճառով, վոր կատաստրոֆիկ կերպով սրվում են կապիտալիզմի ներքին հակասությունները։

§ 106. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Կապիտալիստական վերարտադրությունն արտացոլացնում է հանրային հարստության վերարտադրության պրոցեսն, այսինքն հասարակության գոյության ամբողջ նյութական պատվանդանի վերարտադրությունը։

Բայց այս արտացոլումն հակասական արտացոլումն է դուրս գալիս։ Նախ, ինչպես վոր մենք վերևում նշել ենք արդեն, այն վերարտադրությունը, վորն ընդլայնված վերարտադրություն է հանրային հարաբերության ընդեղեն ձևի տեսակետից, կարող է հասարակ կամ թե նույնիսկ նեղացված վերարտադրություն լինել արժեքի տեսակետից, և ընդհակառակը։ **Ցերկրորդ, հասրային հարստության արտադրության ընդլայնումը ընդունում է առանձին կապիտալիստների կուտակման կերպարանք, նրանց շահույթների մի մասի կերպարանք։** Կապիտալիստը իր շահույթն իրացնելով՝ չի ուզում տեսնել նրա հանրային նշանակությունը ճիշտ այնպես, ինչպես մանուկը դարնանը բույսի բողբոջներն ու տերևիկները պոկոտելով չի ուզում հասկանալ, վոր նրանցից է կախված ամբողջ բույսի կյանքն ու աճելը։

Կապիտալի վերարտադրությունը կապիտալիստական հասարակության հանրային հարաբերությունների վերարտադրություն է միաժամանակ։ Այս հասկանալու համար ուշադրություն դարձնենք այն բանի վրա, վոր արտադրության պրոցեսի վերջանալուց հետո թե c-ն, թե v-ն ու թե m-ն կապիտալիստի ձեռքում են գտնվում։ Կապիտալիստի ձեռքումն է լինում մշտական կապիտալը, նշանակում է՝ շարունակում է գոյություն ունենալ շահագործման գլխավոր պայմանը, վոր է՝ արտադրության միջոցների՝ արտադրողից կտրված լինելը։ Դարձյալ նրա ձեռքում է լինում փոփոխական կապիտալն էլ, վորը բանվորական ուժի վերարտադրության ֆոնդն է։ Նրա ձեռքում է հավելյալ արժեքը, վորը թե նրա սեփական ապրուստի ֆոնդն է և թե արտադրության ընդլայնման ֆոնդը։ Կապիտալիստը, չեթե միայն նա մրցման խեղաթյուրի մեջ կեր չի դարձել իր չեղբայր կապիտալիստներին, արտադրության պրոցեսից դուրս է գալիս ելի իբրև կապիտալիստ։ Բանվորն արտադրության պրոցեսից ելի նույնպես դատարկ ձեռքերով է չեկնում, ինչպես վոր մտել եր նույն պրոցեսի մեջ։

Կապիտալիստն ամենևին անգործ չէ այնտեղ, վորտեղ անգործությունը ձեռնտու չէ նրան։ Նա պատրաստ է բանվորներին վերադարձնելու v-ն, բայց իհարկե վոչ ձրի, այլ բանվորական ուժի հետ փոխանակելով։ **Ապրանքային հարաբերությունները վերարտադրված են նորից։** Հետևյալը վերակսվում է գլխից։ Կապիտալիստական կուտակման պրոցեսն ավելի ու ավելի չի շարունակ մեծացնում թե հանրային կապիտալն ու թե հանրային արտադրության չափերը։ Արդյոք այս նշանակում է, վոր միևնույն չափով շատանում է արտադրության ըստ բանող բանվորների թիվն էլ։ Ամենևին։ Կապիտալի օրգանական կազմի անընդհատ աճման շնորհիվ համեմատաբար քչանում է բանակն այն բանվորների, վորոնք անհրաժեշտ են արտադրության համար։ «Այն ավելագիր կապիտալներն,—ասում է Մարքսը,—վորոնք գոյացել եյին կուտակման նորմալ պրոցեսի ժամանակ, գլխավորապես ծառայում են իբրև միջոց՝ նոր գյուտերն ու հայտնագործությունները և ընդհանրապես ամեն տեսակ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ։

[1] «Հիմա յերկրագնդի վրա ապրող մարդկության հիմնական մասսան վոչ թե արդյունաբերական ու գյուղատնտեսական վարձու բանվորներն են այլ առաջին հերթին գյուղացիք են։ Մեր մոլորակի վրա ապրող 1,700 միլիոն մարդկանցից 900 միլիոնն, այսինքն կեսից ավելին տալիս է Ասիան։ 430 միլիոն չինացիներից մոտ 400 միլիոնը գյուղացիներն են, 320 միլիոն հնդիկների մեջ գյուղացիները մենակ կազմում են մոտ 170 միլիոն։ Ցեթե սրանց վրա ավելացնենք մանր արհեստավորներին ու սրանց նման «ձերբորդ անձանց», ապա մենք խոշորագույն թվեր կստանանք։ Ասիան, Աֆրիկան, Ամերիկան «ձերբորդ անձանց» վիթխարի թիվ են տալիս։ Բայց հենց Ցեվրոպան էլ մոտ 50% գյուղական բնակչություն ունի,—մի անուղղակի ցուցանիշ այն բանի, թե դեռևս վորքան հակայական են «ձերբորդ անձանց» պահեստի մասսաները (Բուխարին)։

կի արդյունաբերական կատարելագործումներն օգտագործելու համար։ Բայց հին կապիտալն էլ հարատևելով ժամանակի ընթացքում հասնում է իր նորոգման րոպեյին. այն ժամանակ այս կապիտալը, այսպես ասած, խունանում և հետո վերածնվում է տեխնիկապես կատարելագործված ձևով, վորի ժամանակ աշխատանքի ավելի պակաս քանակություն բավական է մեքենաների ու հում նյութերի ավելի մեծ քանակ շարժման մեջ դնելու համար։

ՊԱՀԵՍՏԻ ԲԱՆԱԿԻ ԱՃՈՒՄԸ։

Այսպես ուրեմն, մի կողմից, կուտակման ժամանակ գոյացած ավելադիր կապիտալը իր մեծության հետ համեմատած ավելի ու ավելի քիչ բանվորներ է ներքաշում, իսկ մյուս կողմից, սկզբնական կապիտալը պարբերաբար նոր կազմով վերարտադրվելով ավելի ու ավելի բազմաթիվ բանվորների յե դուրս հրում, այն բանվորներին, վորոնց բան ու գործ եր տալիս առաջ»:

Այսպիսով արտադրությունն ավելի ընդլայնված հիմքի անցնելով չի կարող իր մեջ ներքաշել **բանվոր դասակարգի ամբողջ աճը** (բնական աճը պլյուս մյուս դասակարգերի բանվորացումը)։ **Արտադրության ընդլայնմանը զուգընթաց ընդլայնվում է աշխատանքի պահեստազորն էլ։ Մեծանում է այն ճնշումն էլ, վոր պահեստի բանակն անում է աշխատավորի վրա,** և ընդսմին շատանում է բանվորական ուժի գնի ու նույնի արժեքի տարանջատումն էլ։ **Դասակարգային հակասություններն ավելի ու ավելի յեն սրվում։**

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ։ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ։

Արտադրության համակենտրոնացումը համախմբում է խոշոր ձեռնարկություններում պրոլետարների վիթխարի մասսաներ (պրոլետարիատի համակենտրոնացում)։ Տեխնիկայի զարգանալու և անհրաժեշտ բանվորական ժամանակի քչանալու հետ **աճում է հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունն, իսկ սրա հետ մեծանում է շահագործման նորման էլ։ Բանվոր դասակարգի՝ հանրային արտադրանքի մեջ ունեցած բաժինը սաստիկ քչանում է։** Մենք գիտենք, վոր բանվորական ուժի առուծախը հասարակությունը բաժանում է յերկու բևեռի—աշխատանքի բևեռ ու կապիտալի բևեռ։ Դեպի աշխատանքի բևեռն են դիմում ավելի ու ավելի միաբան, դասակարգային վոգով զոդված և աճող շահագործման ու գործազրկության շնորհիվ ճնշված բանվորական մասսաները։ Հանրային հարստությունը, վոր կապիտալի հակասական ձև է

ընդունել, արդյունաբերության, առևտրի ու վարկի բաժնետիրացման շնորհիվ դառնում է սակավաթիվ միլիարդատերերի կըռվախնձոր։ **Աշխատանքի ու կապիտալի միջև յեղած հակասության աճման հետ աճում է այն հակասությունը, վոր կա տեխնիկայի ու տնտեսական ձևերի միջև, արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների միջև։**

ԲԱՂԽՈՒՄՆ ԱՐՏԱԴՐԻՉ ՈՒԺԵՐԻ ՈՒ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ։

Այսպիսով, կապիտալի վերարտադրության ընդլայնումը նաև կապիտալիզմի հակասությունների վերարտադրության ընդլայնումն է միաժամանակ։

ՔՍԱՆՅԵՐԵՔՅԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ.

ՇՈՒԿԱՆ, ԿՈՆՅՈՒԿՏՈՒՐԱՆ ՈՒ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ.

§ 107. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՃՅՈՒՂԵՐԻ ՇՈՒԿԱՅԻՆ ՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱՊԸ.

ՇՈՒԿԱՅԻՆ ԿԱՊԸ։

Մի ապրանքի վաճառքն անքակտելիորեն կապված է մի շարք ուրիշ ապրանքների վաճառքի հետ։ Որպեսզի կապիտալիստը բանվորական մասսաների համար նախանշված կոշիկների կամ թե չթի գնորդ գտնի, անհրաժեշտ է, որ բանվորներն իրենց բանվորական ուժի գնորդ գտնեն։ Յեվ ընդհակառակը, որպեսզի այն բանվորները, վորոնք կոշիկներ կամ թե չիթ են պատրաստել, կարողանան նորից անխափան ծախել իրենց բանվորական ուժն, անհրաժեշտ է, վոր նրանց պատրաստած նախկին արդյունքը գնորդ գտնի։ Յերկու ապրանքի շուկայեն կապը միշտ էլ այսպես պարզ ու ակներև չէ։ Յերկու ապրանք իրար հետ կարող են կապված լինել հարյուրավոր միջնորդակներով։ Բայց այս կապն անխուսափելի չէ։ Ինչպես

ՇՈՒԿԱՅԻՆ ՇՂԹԱՅԱՁԵՎ ԿԱՊԸ։

ալիքը ջրում, **այնպես էլ շուկայի ամեն մի ընդլայնում կամ թե նեղացում լայնասփյուռ ալիքի պես տարածվում է արտադրության տարբեր ճյուղերում։** Այս պարզաբանենք օրինակով։

Ասենք թե զինվորական վարչությանը հարկավոր է լինում մեկ միլիոն մետր մահուդ բանակի համար։ Ասենք թե զինվորական վարչությունը մահուդը ծախ է առնում մետրը 1 ռուբլով։ Յենթադրենք, թե մատակարարները գործարանատերերն են, վորոնք մահուդի մետրին վաստակում են 5-ական կոպեկ (յեթե նրանց կապիտալը պտույտ գործե տարեկան 3 անգամ, ապա այս կանի տարեկան 15% շահույթի մի շատ չուզալի նորմա)։ Գործարանատերերի ոգտին ընդամենը կմնա 50,000 ռուբլի շահույթ։ Իսկ ինչ են անում նրանք մնացած 950,000 ռուբլին։ Այս գումարով նրանք հանդես են գալիս իբրև բանվորական ուժի, հում-

-քի, ոժանդակ նյութեղենների, մեքենաների, շենքերը վերանորո-
գելու համար պիտանի նյութեղենների ու այլ բաների գնորդներ։
Հետևաբար իրացման ալիքը մահուդից անցավ բրդին, ածխին,
մեքենաներին, աղյուսին։ Կարելի չէ կարծել, վոր այս ալիքը նե-
ղանում, սեղմվում է և, վոր մատակարարները 1 միլիոն ռուբլի
ստանալով, հանդես են գալիս իբրև այնպիսի գնորդներ, վորոնք
միայն 950,000 ռուբլու բան են ծախ առնում։ Իրականում
այս այսպես չէ։ Ստացած 50,000 ռուբլին կապիտալիստները մա-
սամբ ծախսում են իրենց սպառման վրա, ընդ վորում նրանք
հանդես են գալիս իբրև սպառման միջոցների գնորդներ։ Մասամբ
էլ կուտակում են կապիտալիստորեն, այսինքն հանդես են գալիս
իբրև արտադրության լրացուցիչ միջոցների ու բանվորական ու-
ժի գնորդներ։ Հետևաբար վորչափով վոր կապիտալիստները գան-
ձեր պահող չեն հանդիսանում, նրանք պետք է մեջտեղ գան իբ-
րև այնպիսի գնորդներ, վորոնք այն ամբողջ գումարով բան են
ծախ առնում, վորով հանդես են գալիս իբրև վաճառորդներ։
Այսպես ուրեմն, մեկ միլիոն ռուբլին զինվորական վարչությու-
նից անցավ մանածագործներին, սրանցից էլ մի կողմից անցավ
անասնաբույծներին (բրդի տեղակ), ածխարդյունաբերողներին,
մետաղագործներին և այլն։ Մյուս կողմից, այն փողն անցավ
մսագործներին, հրուշակագործներին, գինեգործներին, մետաքս,
թավիշ արտադրողներին և այլն։ Այս բոլոր վաճառորդներն իրենց
հերթին պետք է հանդես գան իբրև գնորդներ։ Այսպես ուրեմն,
ալիքը թավալվում, ծավալվում է ավելի հեռու և ավելի ընդար-
ձակվում, մինչև վոր մանրիկանում է իր թափի անսահման լայ-
նանալու հետևանքով։

Ընդհակառակն, ասենք թե մի պարտիա ապրանք, թեկուզ
հենց նույն մեկ միլիոն մետր մահուդը պատրաստվելուց հետո
վորևէ պատճառով մնում է չիրացված։ Այս անգամ մահուդից
կսկսվի մի բացասական ալիք, շուկայի նեղացման ալիք։ Այն ի-
րողությունը, վոր մահուդը մնաց չիրացված, կարգելակի բրդի,
ածխի, ներկերի իրացումն, այլև թե բանվորների ու թե կապիտա-
լիստների սպառման միջոցների իրացումը և այլն։ Այս ապրանքնե-
րի իրացված չլինելն իր հերթին կարգելակի ուրիշ ապրանքների
իրացումն ու այսպես անվերջ։ Յուրաքանչյուր ապրանքի չեւեին
կարծես թե մի անվերջ հերթ կա, անսահման «պոչ» այլ ապրանք-
ների, վորոնք իրացման են սպասում։ Մեկի դադարն ամբողջ
հերթի շարժվելը կանգնեցնում է։

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱՊԸ։

Հետո գալիս ե վարկային կապը։ Վերևում մենք արդեն տեսել ենք, թե ինչպես արժեքը կարող ե անցնել մի շարք ինստանցիաներով—անցնելով հումքարարին (сырьевщик), գործարանատիրոջը, մեծածախ առևտրականին, մանրածախ առևտրականին (յերբեմն դեռ ելի մի շարք միջնորդական առևտրային ու չարաշահական ինստանցիաներ), և այս անցումը կկատարվի զուտ վարկային ճանապարհով։ Այն մուրհակները, վորոնք առաջ են յեկել վարկատրման այս շարքի շնորհիվ, կարող են մնալ իրենց անմիջական ստացողների պորտֆելներում կամ թե կարող են զեղչվել բանկերում։ Հնարավոր ե այնպես ել, վոր մանրածախ առևտրականի՝ մեծածախորդին տված մուրհակը սրա համար իբրև միջոց ծառայի գործարանատիրոջ հետ հաշիվները մաքրելու միջոցին։ Գործարանատերը մուրհակը տալիս ե հումքարարին և այլն։ Մուրհակն այսպիսով կտրում, անցնում ե մի ճանապարհ, վորն ապրանքի կտրած ճանապարհի նկատմամբ հակադիր ուղղություն ունի։ Բայց ինչ ել ուզում ե լինի, վարկատրումների ամբողջ շղթայի հույսերի արդարացումը կախված ե նրանից, վոր վերջին ինստանցիան, մեր որինակի մեջ, մանրածախ առևտրականն իրացնի ապրանքը։ Իսկ յեթե սա չկարողանա ծախել ապրանքը կամ թե գների անկման հետևանքով ծախի վնասով, վճարումների դժվարանալն ելի ալիքաձև անցնում ե ինստանցիայից ինստանցիա։ Վճարումների դժվարանալու հետևանքը լինում ե վարկի նեղացումը. այս նեղացումը ներգործում ե յերկու ուղղությամբ։ Արտադրության միջոցները վարկով գնելու անկարելիությունն արգելակում ե արտադրությունը։ Վարկով վաճառելու անկարելիությունն արգելակում ե վաճառահանումը։ Արտադրության կրճատումն ամենից առաջ կրճատում ե բանվորների գնողունակությունն, ապա և կապիտալիստներինը։

Բայց արտադրության տարբեր ճյուղերի այս կապերն իրենց հակասական փոխանակային բնույթի շնորհիվ վոչ թե մեծացնում, այլ քչացնում են կապիտալիստական տնտեսության կայունությունը։ Այս հիշեցնում ե այն կապը, վոր առանձին տներն ունեն ծղոտի կտուրներ ունեցող գյուղում։ Գյուղական այս տներն ապրում են ջոկ-ջոկ, բայց հրդեհին կուլ են գնում բոլորը միասին։

§ 108. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՆՅՈՒՆԿՏՈՒՐԱՆ. ՃԳՆԱԺԱՄԵՐԸ.

Նախորդ հոդվածում մենք տեսանք, թե վորքան սերտ ե այն շուկային ու վարկային կապը, վոր կա կապիտալիստական

տնտեսության տարբեր ճյուղերի միջև։ Գործերի լավանալն ու վատանալն այն տենդենցն ունեն այս կապի շնորհիվ, վոր վոչ թե տնտեսական ճակատի առանձին հատվածների վրա ջոկ-ջոկ են ներգործում, այլ կարծես թե հարձակում են գործում ամբողջ տնտեսական ֆրոնտի վրա նրա յերկարությամբ մեկ։

Տնտեսական ճակատի գործերի այս ընդհանուր դրությունը կոչվում ե կոնյունկտուրա։

ԿՈՆՅՈՒՆԿՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԵՐԹԱՓՈԽԸ։

Յեթե պատահական շեղումները մի կողմը թողնենք, կարելի յե նկատել ու նշել կոնյունկտուրաների ավելի կամ պակաս կանոնավոր հաջորդականություն։ Ճնշված դրության կամ դեպրեսիայի ժամանակաշրջանին (վատ կոնյունկտուրա) հաջորդում ե ժամանակաշրջանը տնտեսական աշխուժացման, վորն սկզբում չափավոր ե լինում, իսկ հետո սաստիկ թափ ե ստանում։ Թափով աշխուժացումը փոխվում, դառնում ե ճգնաժամ։ Ճգնաժամին ելի հաջորդում ե յերկարատև դեպրեսիա, յեվ այսպես ամեն ինչ սկսվում ե գլխից։

Տեսնենք, թե այս կամ այն կոնյունկտուրան ինչպես ե արտահայտվում տնտեսական ճակատի ամենագլխավոր հատվածներում։

Ա. ԴԵՊՐԵՍՍԻԱ.

ա) Շրջանառության վոլորտում.—

ԴԵՊՐԵՍՍԻԱ։

1. Ապրանքների շուկայում։ Թույլ վաճառահանում։ Ապրանքային ցածր գներ, վորոնք հակում ունեն ավելի շուտ դեպի ընկնելու կողմը, քան բարձրանալու։ Բանվորական ուժի պահանջը թույլ ե։ Գործազրկություն։

2. Կապիտալների շուկայում։ Ապրանքների վատ վաճառահանության հետևանքով կապիտալիստները խուսափում են հին ձեռնարկություններն ընդլայնելուց ու նորերը բաց անելուց։ Սրա հետևանքով նվազում ե փոխատուական կապիտալների պահանջն ու շատանում ե նրանց առաջարկը։ Բանկերին ու խնայարկղերին տրվող ավանդների ներհոսանքը սաստկանում ե։ Տոկոսի նորման ցածր ե։

3. Արժեթղթերի շուկայում։ Ամրատոկոս (твердопроцентный) արժեթղթերի (պարտատոմսերի, գրավաթերթերի) պահանջ։

բ) Արտադրության վոլորտում։ Պրոդուկցիան նվազում ե, և ընդ սմին արտադրության միջոցների արտադրությունն ավելի շատ ե ընկնում, քան սպառման միջոցների արտադրությունը։

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱՊԸ: *Հետո գալիս է վարկային կապը: Վերևում մենք արդեն տեսել ենք, թե ինչպես արժեքը կարող է անցնել մի շարք ինստանցիաներով—անցնելով հումքարարին* (сырьевщик)*, գործարանատիրոջը, մեծածախ առևտրականին, մանրածախ առևտրականին (յերբեմն դեռ ելի մի շարք միջնորդակային առևտրային ու չարաշահական ինստանցիաներ), և այս անցումը կկատարվի զուտ վարկային ճանապարհով: Այն մուրհակները, վորոնք առաջ են յեկել վարկատրման այս շարքի շնորհիվ, կարող են մնալ իրենց անմիջական ստացողների պորտֆելներում կամ թե կարող են զեղչվել բանկերում: Հնարավոր է այնպես էլ, վոր մանրածախ առևտրականի՝ մեծածախորդին տված մուրհակը սրա համար իբրև միջոց ծառայի գործարանատիրոջ հետ հաշիվները մաքրելու միջոցին: Գործարանատերը մուրհակը տալիս է հումքարարին և այլն: Մուրհակն այսպիսով կորում, անցնում է մի ճանապարհ, վորն ապրանքի կորած ճանապարհի նկատմամբ հակադիր ուղղություն ունի: Բայց ինչ էլ ուզում է լինի, վարկատրումների ամբողջ շղթայի հույսերի արդարացումը կախված է նրանից, վոր վերջին ինստանցիան, մեր օրինակի մեջ, մանրածախ առևտրականն իրացնի ապրանքը: Իսկ յեթե սա չկարողանա ծախել ապրանքը կամ թե գների անկման հետևանքով ծախի վնասով,* **վճարումների դժվարանալն ելի ալիքաձև անցնում է ինֆլացիայից ինֆլացիա: Վճարումների դժվարանալու հետևանքը լինում է վարկի նեղացումը. այս նեղացումը ներգործում է յերկու ուղղությամբ: Արտադրության միջոցները վարկով գնելու անկարելիությունը արգելակում է արտադրությունը: Վարկով վաճառելու անկարելիությունը արգելակում է վաճառահանումը:** *Արտադրության կրճատումն ամենից առաջ կրճատում է բանվորների գնողունակությունն, ապա և կապիտալիստներինը:*

Բայց արտադրության տարբեր ճյուղերի այս կապերն իրենց հակասական փոխանակային բնույթի շնորհիվ վոչ թե մեծացնում, այլ քչացնում են կապիտալիստական տնտեսության կայունությունը: Այս հիշեցնում է այն կապը, վոր առանձին տներն ունեն ծղոտի կտուրներ ունեցող գյուղում: Գյուղական այս տներն ապրում են ջոկ-ջոկ, բայց հրդեհին կուլ են գնում բոլորը միասին:

§ 108. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՆՅՈՒՆԿՏՈՒՐԱՆ. ՃԳՆԱԺԱՄԵՐԸ.

Նախորդ հոդվածում մենք տեսանք, թե վորքան սերտ է այն շուկային ու վարկային կապը, վոր կա կապիտալիստական

տնտեսության տարբեր ճյուղերի միջև: Գործերի լավանալն ու վատանալն այն տենդենցն ունեն այս կապի շնորհիվ, վոր վոչ թե տնտեսական ճակատի առանձին հատվածների վրա ջոկ-ջոկ են ներգործում, այլ կարծես թե հարձակվում են գործում ամբողջ տնտեսական ֆրոնտի վրա նրա յերկարությամբ մեկ:

Տնտեսական ճակատի գործերի այս ընդհանուր դրությունը կոչվում է կոնյունկտուրա:

ԿՈՆՅՈՒՆԿՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԵՐԹԱՓՈԽԸ: *Յեթե պատահական շեղումները մի կողմը թողնենք, կարելի յե նկատել ու նշել* **կոնյունկտուրաների ավելի կամ պակաս կանոնավոր հաջորդականություն: Ճնշված դրության կամ դեպրեսսիայի ժամանակաշրջանին** *(***վատ կոնյունկտուրա***)* **հաջորդում է ժամանակաշրջանը տնտեսական աշխուժացման, վորն սկզբում չափավոր է լինում, իսկ հետո սաստիկ թափ է ստանում: Թափով աշխուժացումը փոխվում, դառնում է ճգնաժամ: Ճգնաժամին ելի հաջորդում է յերկարատև դեպրեսսիա, յեվ այսպես ամեն ինչ սկսվում է գլխից:**

Տեսնենք, թե այս կամ այն կոնյունկտուրան ինչպես է արտահայտվում տնտեսական ճակատի ամենագլխավոր հատվածներում:

Ա. ԴԵՊՐԵՍՍԻԱ.

ԴԵՊՐԵՍՍԻԱ: *ա) Շրջանառության վոլորտում.—*

1. Ապրանքների շուկայում: Թույլ վաճառահանում: Ապրանքային ցածր գներ, վորոնք հակում ունեն ավելի շուտ դեպի ընկնելու կողմը, քան բարձրանալու: Բանվորական ուժի պահանջը թույլ է: Գործազրկություն:

2. Կապիտալների շուկայում: Ապրանքների վատ վաճառահանության հետևանքով կապիտալիստները խուսափում են հին ձեռնարկությունններն ընդլայնելուց ու նորերը բաց անելուց: Սրա հետևանքով նվազում է փոխատուական կապիտալների պահանջն ու շատանում է նրանց առաջարկը: Բանկերին ու խնայարկղերին տրվող ավանդների ներհոսանքը սաստկանում է: Տոկոսի նորման ցածր է:

3. Արժեթղթերի շուկայում: Ամրատոկոս (твердопроцентный) *արժեթղթերի (պարտատոմսերի, գրավաթերթերի) պահանջ:*

բ) Արտադրության վոլորտում: Պրոդուկցիան նվազում է, և ընդ սմին արտադրության միջոցների արտադրությունն ավելի շատ է ընկնում, քան սպառման միջոցների արտադրությունը:

Ե. ԱՇԽՈՒԺԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ.

ՎԵՐԵԼՔԸ: ա) Շրջանառության վոլորտում:

1. Ապրանքների շուկայում: Վաճառահանության լավացում, ապրանքային գների աճում, գործազրկության նվազում:

Այս տեսակետից մի քանի ապրանքներ ուղեցույցի դեր են կատարում: Նրանց գներն ուրիշ ապրանքների գներից ավելի շուտ են արձագանգում կոնյունկտուրայի փոփոխություններին. այսպիսիքն են, որինակ, չուգունը, քարածուխը նավթը, պղինձը, բամբակը, բուրդը, շաքարը, միսը: Այսպիսի ապրանքները կոչվում են **կոնյունկտուրազգա** ապրանքներ: Սրանց գների շարժումը ցուցանշական է կոնյունկտուրայի համար: Վերջին ժամանակներում կոնյունկտուրային հատուկ զգայնություն են ցուցաբերում ձույլ յերկաթի գները, և այս ձույլ յերկաթի պահանջն աճում է Մարտենի յեղանակով կատարվող արտադրության ընդլայնման ցուցանիշ (տես վերևում § 38):

Կոնյունկտուրայի ամենաստույգ ցուցանիշը տոկոսի նորման է, ապա և կոնյունկտուրազգա ապրանքների գները: Կարևոր ցուցանիշներ են նաև ակցիաների եմիսսիայի շարժումն (դրական ցուցանիշ) ու գործազրկության շարժումը (բացասական ցուցանիշ), գործազրվող ելեքտրական էներգիայի շարժումը, յերկաթուղիներով փոխադրվող ապրանքների շարժումը: Մի քանի կոնյունկտուրային ինստիտուտներ միասնական տնտեսական ցուցանիշ են հանում իբրև միջին յեզրակացություն, վոր ստանում են բոլոր ամենագլխավոր ցուցանիշներից:

2. Կապիտալների շուկայում: Փոխատուական կապիտալների պահանջի շատացում: Տոկոսի նորմայի աճում:

3. Արժեթղթերի շուկայում: Բաժնետոմսերի պահանջի աճում:

բ) Արտադրության վոլորտում: Պրոդուկցիայի աճում, ընդվորում արտադրության միջոցների արտադրությունն ավելի արագ է աճում, քան սպառման միջոցների արտադրությունը:

Յերբ չափավոր աշխուժացմանը հաջորդում է բուռն աշխուժացումն, այն ժամանակ վերոհիշյալ յերևույթները սաստկանում են, բացի ակցիաների կուրսի աճումից:

Ձեռնարկչությունը փոխվում է մոլեձեռնարկչության. հիմնը-

վում են այնպիսի ձեռնարկություններ, վորոնց հաստատուն հաջողության հավանականությունները քիչ են:

Ակցիաների նորանոր բացարկները ծանրաբեռնում են կապիտալների շուկան, վորին առանց այս էլ պահանջներ են առաջադրում ամեն կողմից: Բուռն աշխուժացման ժամանակաշրջանում ամրատուկոս արժեթղթերի կուրսը շատ ցածր է լինում շնորհիվ տոկոսի բարձր նորմայի: Հիպոթեքային բանկերն ստիպված են լինում գրավաթերթերի բացարկը դադարեցնել, իսկ սրա հետևանքն էլ իբր հերթին այն է լինում, վոր դադարում է շինարարությունը: Նոր բնակարանների շինարարությունը կանգ է առնում հենց այն ժամանակ, յերբ քաղաքների բանվոր բնակչությունն աճում է: Շինարարության դադարեցումը խիստ պակասեցնում է շինանյութերի պահանջն, իսկ այս էլ բացասական ազդեցություն է անում կոնյունկտուրայի հետագա զարգացման վրա:

Գ. ՃԳՆԱԺԱՄԸ.

Մինչդեռ դեպրեսիան աշխուժացման և փոխվում աստիճանաբար ու աննկատելիորեն, **աշխուժացման՝ ճգնաժամի փոխվելը գահավեժ վոստյուցի բնույթ է կրում:**

Ապրանքները չեն վաճառվում: Հազարավոր ֆիրմաներ անանկանում են: Ձվճարված են մնում այն մուրհակները, վորոնք տրված են լինում այն հուսով, թե ապրանքների ծախելուց փող կստացվի: Բանկերը, վորոնք իրենց և ուրիշների կապիտալները դրած են լինում մուրհակները զեղչելու գործի մեջ, կսոր են ընկնում: Կանխիկ փողի ծարավն արժեթղթերի իրականներին հարկադրում է արժեթղթերը բորսա նետելու, վորտեղ այս հանգամանքի հետևանքով նրանց կուրսը սաստիկ ընկնում է (բորսային ճգնաժամ):

ՃԳՆԱԺԱՄԸ: ԴԵՊՐԵՍԻԱՆ:

Մի շարք ձեռնարկություններ դադարեցնում են իրենց գործունեությունը՝ բանվորներին փողոց շպրտելով: Ուրիշ ավելի բախտավոր ձեռնարկություններում աշխատում են կես շաբաթ: Բանվորների գնողունակության կրճատումն էլ ավելի յե վատացնում շուկայի գործերի դրությունը:

Ճգնաժամերն ամենից ավելի խիստ ազդում են բանվորների վիճակի վրա:

Յերեք ճգնաժամը կապիտալիստին անանկացում է սպառ-

նում, ապա բանվորներին սովամահություն է բերում։ Պահեստի բանակի կատաստրոֆիկ աճումը քչացնում է այն բանվորների դատումը, վորոնք շարունակում են աշխատել։ Արհեստակցական միությունններն անզոր են դեպրեսսիաների ժամանակ։

Ճգնաժամի բուռն ժամանակաշրջանին, վոր միայն միքանի ամիս է տևում, ելի հաջորդում է դեպրեսսիան, վորը շարունակվում է 2—3 տարի։ Դեպրեսսիան աստիճանաբար փոխվում է աշխուժացման։ Սկսվում է նոր տնտեսական ցիկլ, վորը կրկնում է նախընթացի բոլոր էտապները, բայց սովորաբար այս նոր ցիկլն ավելի լայն չափեր է ընդգրկում։

Ամենից հետաքրքրականն ու կարևորն այս տնտեսական ցիկլերի համաշխարհային մասշտաբն է: Շնորհիվ տնտեսական այն սերտ կապի, վոր կա կապիտալիզմի բոլոր յերկրների միջև, կոնյունկտուրայի հերթափոխերը բավական արագ են անցնում, ծավալվում մի յերկրից մի ուրիշ յերկիր։ Այս պատճառով ել ճգնաժամերը համաշխարհային տնտեսական ցնցումների բնույթ են կրում։

Համաշխարհային ճգնաժամերի տարիներ յեղել են 1815, 1825, 1836, 1847, 1873, 1890 (Ամերկայում 1893), 1900, 1907 թվականները։

Ամերիկայի ու Յեվրոպայի տարբերությունների ավելի ստույգ պատկերը տալիս է հետևյալ աղյուսակը.

ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԸ.

Ֆրանսիա	Անգլիա	Միացյալ Նահանգներ
1813—14	1815	1814
1825	1825	1826
1830	1830	—
1836—39	1836—39	1837—39
1847	1847	1848
1857	1857	1857
1864	1864—66	1864
1873	1873	1873
1882	1882	1884
1889—90	1890—91	1890—91
—	—	1893
1907	1907	1907

Ճգնաժամերի շարանն ավարտվեց 1914 թվականի ռազմա-

կան աղետով։ Հաշտություն կնքելուց հետո արդեն նորից համաշխարհային ճգնաժամ է բռնկվել 1920 ու 1921 թվականներին։

§ 109. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.

Ծաղկման, ճգնաժամի ու դեպրեսսիայի կանոնավոր հաջորդականությունն արդյունաբերական կապիտալիզմի առանձնահատկությունն է։ Առևտրական կապիտալի դարաշրջանին ծանոթ չեր կոնյունկտուրայի վիճակի այս կանոնավոր հերթափոխը։ Ճիշտ է, լինում եյին դեպքեր, յերբ տնտեսական աղետները ցնցում եյին այս կամ այն յերկիրը։ Այսպիսին եր, որինակ՝ Ֆրանսիայում[1] 1720 թվականին ակցիոներական ձեռնարկությունների, ու **Ջոն Լոուի թղթադրամական սիստեմի** կործաբանկի, հարավ-օվկիան-**ցումը**, կամ թե Անգլիայում նույն թվականին յան ընկերության կործանումը։ Բայց սրանք ճգնաժամեր չեյին այս բառի արդի իմաստով։ Այսպիսի կատաստրոֆները համեմատաբար քիչ եյին պատահում և միանգամայն զատզատված բնույթ եյին կրում։ Առանձին տնտեսական կատաստրոֆներն իրար հետ կապված չեյին վոչ տարածությամբ ու վոչ ել ժամանակով։

Յերբ կապիտալիզմը XIX դարի սկզբին հասնում է հասունության վորոշ աստիճանի, միայն այս ժամանակ է, վոր պարբերական ճգնաժամերի վերահասը յերևան է հանում կապիտալիստական տնտեսության ամբողջ հակասությունը։

Առաջին ճգնաժամերն ամենից առաջ ցնցում եյին մանածագործական արդյունաբերությունը, վորն այն ժամանակ տոներ տալիս մնացած արդյունաբերությանը։ Հետո՝ թե արդյունաբերության ու թե արդյունաբերական ճգնաժամերի ծանրության կենտրոնն անցնում է ծանր արդյունաբերության կողմը։

Յերբ Նապոլեոնյան պատերազմները վերջացան և մայր ցամաքի շրջափակումը վերացվեց[2], այն ժամանակ անգլիական մե-

[1] Հետաքրքրական է կակաչի ճգնաժամը XVII դարի սկզբին Հոլանդիայում։

Սկսվեց մի մոլեգին չարաշահություն կակաչի կոճղեզի, վորոնք նոր նոր եյին մոդա դարձել Հոլանդիայում։ Գներն այն աստիճան բարձրացան, վոր միքանի նմուշահատերի համար վճարում եյին մեր փողով մինչև 1.000 ռուբլի ու դեռ ավելի։ Շատերը կակաչի գործի մեջ դրին իրենց բոլոր միջոցները և սնանկացան, յերբ վոր գներն ընկան։ Սրան հաջորդեցին մի շարք սնանկություններ, վորոնք միքանի տարով յետ գցեցին Հոլանդիայի տնտեսությունն իր զավղեց։

[2] Ֆրանսիան թույլ չեր տալիս, վոր անգլիական ապրանքներ բերվեն Յեվրոպա։

քենացված մանածագործական արդյունաբերությունն այնքան շատ ապրանք նետեց համաշխարհային շուկա, որ այս շուկան չեր կարող կլանել այն։ Անգլիական ապրանքների գներն ինքնարժեքից էլ ցած ընկան։ Բազմաթիվ գործարաններ դադարեցրին արտադրությունն ու սրա հետ էլ վճարումները։ Փողոց նետված բանվորներն այստեղ ու այնտեղ հարձակվեցին փշրելու այն մեքենաները, որ նրանք համարում էին իրենց թշվառության գլխավոր պատճառը...

1815 ԹՎԱԿԱՆԸ։

Սակայն 1815 թվականի ճգնաժամն, ինչպես տեսանք, ունի իր հատուկ պատճառը, որ կարող եր չկրկնվել էլ, այն է՝ նապոլեոնյան պատերազմները։ Կարծում էին, որ գերարտադրությունը հնարավոր չեղավ այն պատճառով միայն, որ պատերազմներն ուժասպառ էին արել Եվրոպան և անչափ փչացրել էին սրա գնողունակությունը։ Անգլիան 1815 թվականի ճգնաժամից համեմատաբար շուտ կազդուրվեց։ Սկսվեց արյունաբերության նոր վերելք, որին նպաստում էին Հարավային Ամերիկայի հետ ունեցած նոր կապերը։

Հարավային Ամերիկան հենց նոր եր ազատվել Իսպանիայի լծից։ Անգլիան հարավ-ամերիկյան հանրապետություններին լայն վարկ եր բաց անում թե անմիջապես ապրանքներով ու թե պետական փոխառություններ տալով։ Այս բարձրացնում եր հարավամերիկյան հանրապետությունների գնողունակությունը։ Արտահանման համար գործող արտադրության ընդլայնումն Անգլիայում ընդարձակում եր նաև ներքին շուկայի տարողությունը։ Սկսվեց ակցիոներական ընկերությունների տենդագին հիմնադրությունը (այս ընկերություններից շատերը բոլորովին փքալիր (дутый) էին)։ Արդյունաբերական ծաղկման ալիքը բարձրացավ մինչև 1825 թվականը, յերբ էլի վրա հասավ

1825 ԹՎԱԿԱՆԸ։

ճգնաժամը։ Հարավային Ամերիկան շատ ու շատ ավելի յեր առել պարտքով, քան կարողանում եր վճարել։ Յերիտասարդ հանրապետությունները դադարեցրին փոխառությունների տոկոսները տալը։ Առանց նոր փոխառություններ անելու Ամերիկան վոչինչ չուներ, վոր անգլիական արտահանության տեղակ վճարեր։ Ապրանքների գները սաստիկ ընկան։ Սկսվեցին բանկերի ու ձեռնարկությունների սնանկությունները։ Մոտ 70 բանկ վճարումները դադարեցրին։ Արտահանությունն ընկավ, առևտրային պտուտները սաստիկ կրճատվեցին, արտադրությունն սկսեց սեղմվել։ Բազմաթիվ բանվորների փողոց շպրտեցին։ Դեպրեսիայի տարիներում ընդհանուր գործազրկությունն ունենալ սկսեց մանածագործական մեքենական հաստոցը։ Հաջորդ վերելքն սկսվում է 1832 թվականին։ Այս անգամ էլ անգլիական դրամական կապիտալը դիմում է արտասահման, մի այն թե արդեն վոչ թե Հարավային Յուսիսային Ամերիկա։ Թե Ամերիկայում ու թե Անգլիայում լեռնարդյունաբերության ու յերկաթուղային շինարարության սաստիկ վերելք է լինում։ Սրան զուգնթաց ծաղկում է բորսային չարաշահությունը։ Անգլիայից տարվող ապրանքների արտահանությունը նորից սաստիկ շատանում է։

1836 ԹՎԱԿԱՆԸ։

Նոր ճգնաժամն սկսվեց Միացյալ Նահանգներում 1836 թվականին, անցավ Անգլիա և կատաղորեն ցնցեց նրա առևտուրն ու արդյունաբերությունը։ Արտահանությունն ընկավ 60—70 %-ով։ Հատկապես տուժեց բամբակեղենի արտադրությունը։ Ինչպես միշտ, այս անգամ էլ ճգնաժամին հաջորդեց մասսայական գործազրկությունը։ 1842—43 թվականներին սկսված վերելքն արտահայտվեց գլխավորապես յերկաթուղային ցանցի զորեղ ընդլայնումով։ Սրա հետ կապակցված՝ աճում է լեռնային ու մետաղագործական արդյունաբերությունը։ Որինակ, բրիտանական յերկաթի գինը բարձրանում է 100 %-ով։ Սրան զուգնթաց Անգլիայում սաստիկ ընդլայնվում է բամբակեղեն ապրանքների արտադրությունն ու արտահանությունն էլ։ Յերկաթուղային ցանցի անչափ ընդլայնումը պետք է հասցներ ճգնաժամի, վորի ժամանումը փութացրեց Յեվրոպայի գլխին պակաս անբերրություն։ 1847 թվականին յերկաթուղիների հաստաթաբերությունն ընկնում է։ Յերկաթուղիների շինարարությունը դադարեցվում է։ Սկսվում են

1847 ԹՎԱԿԱՆԸ։

յերկաթուղային ընկերությունների ու բանկերի անսնկությունները։ Որինակ Անգլիայում կապիտալիստների՝ յերկաթուղային ձեռնարկություններից ունեցած կորուստները հասնում էին 180 միլիոն ֆունտ ստերլինգի։ Ֆրանսիայում քարածխի արդյունահանությունը քչացավ 20 %-ով, իսկ հանքանյութի արդյունահանությունը՝ 50 %-ով։ Զբաղված հանքափորների թիվը դարձյալ նույն յերկրում քչացավ 30 %-ով։

1850—51 թվականներին ծայր տվող վերելքն անչափ բանպատճառ պայմաններում սկսվեց։ Յեվրոպայում թուլացրել էին պրոտեկցիոնիզմն, իսկ Ավստրալիայում ու Կալիֆորնիայում վոսկեհանքեր էին գտնվել։ Արդյունաբերական վերելքի հորձանքի

մեջ են քաշվում աստիճանաբար յերկիրներն իրար յետևից—Անգլիան, Միացյալ Նահանգները, Գերմանիան, Ֆրանսիան, Ավստրիան, Ռուսաստանը։ Նորից սկսվում է յերկաթուղային ուժգին շինարարությունը։ Այն ժամանակվա ընթացքում հենց միայն Միացյալ Նահանգներում յերկաթուղային ցանցը մեծանում է համարյա յերեք անգամ։ 1850 թվականից մինչև 1857 թվականը չուգունի արտադրությունն Անգլիայում շատացավ $1^1/_2$ անգամ (2,2 միլիոն տոննա—3,6 միլիոն), Ֆրանսիայում՝ ավելի քան յերկու անգամ (406,000 տոննա—992,000 տոննա)։ Առաջ են գալիս բազմաթիվ նոր ակցիոներական ընկերություններ[1]։ Յերկաթուղային արժեթղթերի չարաշահությունը մեծ չափեր ընդունեց։ Ճգնաժամը վրա հասավ 1857 թվականին նախ Միացյալ Նահանգներում, վորի շուկան մեծ թափով լցվել եր թե իր ամերիկյան ապրանքով ու թե արտասահմանից ներմուծվող ապրանքով,—իսկ հետո ճգնաժամը բռնկվեց Յեվրոպայում էլ, վորտեղ այն ընդգրկեց Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ավստրիան, Հոլանդիան, Դանիան և հորձանք տալով հասավ մինչև Ռուսաստան։ Յերկաթուղային տենդը թուլացավ։ Լեռնային ու մետաղագործական արդյունաբերությունները սոիպված եյին սեղմվելու։ Միացյալ Նահանգներում հանգցրին 120 հալոցի վառարաններ։ Ֆրանսիայում չուգուն պատրաստելը նվազեց 20 %-ով։ Աշխատավարձի մակարդակը ցածացավ, մասսայական գործազրկությունն ընդգրկեց ամբողջ աշխարհը։

1857 ԹՎԱԿԱՆԸ։

Հաջորդ համաշխարհային ճգնաժամը, վորը XIX դարի բոլոր ճգնաժամերից ամենախոշորն եր, վրա հասավ 1873 թվականին այն գլխապտույտ վերելքից հետո, վորի կենտրոնն եյին Գերմանիան ու Միացյալ Նահանգները։ Արդյունաբերության ու առևտրի ծաղկումն ընդգրկեց կապիտալիզմի բոլոր յերկիրներն ու սրանց թվում էլ Ռուսաստանը։ Յերկաթուղիների համաշխարհային ցանցի յերկարությունը վերելքի ժամանակաշրջանում մեծացավ համարյա յերկու անգամ։ Սաստիկ շատացավ յերկաթի ու ածուխի արդյունահանությունը։

1873 ԹՎԱԿԱՆԸ։

[1] Ռուսաստանում նոր հիմնված ակցիոներական ընկերությունների կապիտալը հավասար եր.

1856 թ.	15	միլիոն ռուբլի	
1857 թ.	300	»	» (վոստյուն դեպի վեր)։
1858 թ.	51	»	» (վոստյուն դեպի ցած)։

Մանածագործական արդյունաբերության վերելքը չեր կարողանում բավարարել աճող պահանջին։ Բոլոր ապրանքների գներն անընդհատ դեպի վեր եյին սլանում։ Բորսային ու հիմնադրային տենդը չտեսնված չափերի հասավ։

1873 թվականի ճգնաժամը համարյա միաժամանակ պայթեց թե Յեվրոպայում ու թե Ամերիկայում։ Սնանկների թիվը Միացյալ Նահանգներում հասավ 5,183-ի, իսկ Անգլիայում նույն թվականին՝ մինչև 7,500-ի։ Նյու-Յորկի բորսան առաջին անգամն եր, վոր փակվեց ամբողջ տասն որով։ Ռուսաստանում անսնկության ալիքն սկսվեց Նիժնի-Նովգորոդի տոնավաճառում։ Անգլիական չուգունի գինն ընկավ 25 %-ով, քարածխի գինը՝ 20 %-ով։ Յերկաթուղային շինարարությունը դադարեց։ Լեռնային ու մետաղագործական արտադրությունը հանկարծակի կորցրին վաճառահանության լայն շուկան։ Սրանց հաջորդեց արտադրության մասսայական կրճատումը։

Վերջին ու իր թափով արտասովոր լայնածավալ վերելքը յեղավ 1894—1900 թվականներին։ Արդյունաբերության ծաղկումը հատուկ ուժգնությամբ յերևան յեկավ Գերմանիայում ու Ռուսաստանում։ (Հետաքրքրական է, վոր մեզանում—Ռուսաստանում—վերելքն առանձնապես սաստիկ եր 1897 թվականին, յերբ բերքը վատ եր)։ Վերելքի ժամանակաշրջանում Ռուսաստանի մեջ չուգունի արտադրությունն ավելացավ 125 %-ով, յերկաթ ու պողպատ պատրաստելը՝ 100 %-ով, քարածխի արտադրությունը՝ 80 %-ով, բամբակի գործածությունը՝ 30—40 %-ով։ Յերկաթուղային ցանցն ընդլայնվեց ավելի քան կիսով չափ։ 1893—1897 թ. թ. կարճ ժամանակամիջոցում բանվորների թիվը շատացավ ավելի քան կես միլիոնով։ Բոլոր կապիտալիստական յերկրներում արդյունաբերության վերելքի ժամանակաշրջաններին սովորաբար ուղեկից են լինում մոլեգնոնարկչության[1] (грюндерство) ու չարաշահության ժամանակաշրջանները։ Այսպես յեղավ Ռուսաստանում էլ։ Ակցիոներական ընկերությունների թիվն այն ժամանակվա ընթացքում շատանում է ավելի քան 500-ով, այն ինչ նախնյաց հնգամյակում շատացել եր 170-ով։ Հենց ճիշտ այսպիսի հզոր վերելք մենք տեսնում ենք Գերմանիայում էլ։ Այստեղ առանձնապես լայն ծավալում ունեցավ ելեքտրականու-

[1] Մոլեգնոնարկիչ—грюндер—կոչվում է այն մարդը, վորը սակավ վստահելի, իսկ յերբեմն էլ պարզապես փքալիր ակցիոներական ձեռնարկություններ է հիմնում, նպատակ դնելով շահվել խաբկանքով ակցիոներների։

1900 ԹՎԱԿԱՆԸ։ թյունը։ Այս արտադրության մեջ դրած կապիտալը 1895—1900 թ. թ. ժամանակաշրջանում շատացավ համարյա 6 անգամ։ 1900 թվականի ճգնաժամն սկսվեց Գերմանիայում, ընդգրկեց Ֆրանսիան, Անգլիան, Բելգիան ու փոխադրվեց Ռուսաստան, **վորտեղ վերելքը մեծ չափով բացատրվում եր ոտարերկրյա կապիտալների ճեռհոսումով**։ Յերկաթուղային շինարարությունը, վորի բողբոջումն ոտարերկրյա կապիտալների վրա յեր հիմնված, արագ նվազել սկսեց (1899 թվականին 4,983 վերստ, 1900 թվականին 3,718 վերստ, 1901 թվականին 3,048 վերստ, 1902 թվականին 1,003 վերստ ու 1903 թվականին 608 վերստ)։ Այն ինչ ծանր արդյունաբերության արտադրանքների գլխավոր գնորդները նոր շինվող յերկաթուղիներն եյին։ Սկսվեց գների անկումը։ 1900 թվականի աշնանն արդեն Ռուսաստանի հարավում 65 կոպեկից մինչև 55 կոպեկ ընկավ ձուլածո չուգունի փթի գինն, իսկ 1902 թվականին հասավ 42 կոպեկի։ Տեսակավոր յերկաթի գինը 1900 թվականի վերջում փութը 1 ռ. 60 կոպեկից ընկավ մինչև 1 ռ. 40 կոպեկ։ 1901 թվականին տեսակավոր յերկաթի գներն էլ ավելի ընկան։ Բարձրթի գները 1900 թվականի 9—10 կոպեկից ընկավ 1901 թվականին մինչև 8—9 կոպեկ ու 1902 թվականին՝ մինչև 6—7 կոպեկ։ Պահանջի նվազումն ու սրա հետ էլ գների անկումն արդյունաբերության մեկ ճյուղից հաղորդվում, անցնում է մյուս ճյուղին։ Այսպես ընկավ չթի գինն էլ, չնայած այն հանգամանքին, վոր բամբակը վաճ քերքի պատճառով թանգացել եր փթին 4 ռուբլով։

Մի շարք խոշոր ֆինանսիստներ ու յերկաթուղային ճեռնարկուներ սնանկացան (Դերվիզը, Մամոնտովը, հետո էլ Ալչևսկին)։ Այն բանկերն ու ակցիոներական ընկերությունները, վորոնց հետ կապված եյին հիշյալ ֆինանսիստներն ու ճեռնարկուներն, անելանելի դրության մեջ ընկան։ Գների ու վաճառահանության անկումն առաջ բերեց (թեև վոչ անմիջապես) արտադրության կրճատում։ Յերկաթի արդյունաբերության ամենախոշոր ռայոնում—հարավային ռայոնում—առ 1-ն մայիսի 1900 թ. գործում եր 33 հալոցի վառարան, իսկ 1902 թվականին՝ միայն 23։ Հալելով չուգուն պատրաստելը 1900 թվականի 92,5 միլիոն փթից իջավ մինչև 84,7 միլիոն փութ 1902 թվականին։ Այս ռայոնի մետաղագործական ճեռնարկությունների բանվորների թիվը 1899 թվականի 45,5 հազար հոգուց իջավ մինչև 35,8 հազար հոգի 1902 թվականին։

Արտադրության կրճատումն ընդգրկեց արդյունաբերության բոլոր ճյուղերը։ Խոշոր ճեռնարկությունների սնանկությունները հաջորդում եյին իրար։ 1899 թվականի վերջերից սկսած՝ ավելի քան 300 ակցիոներական ճեռնարկություններ շահութաբաժա չեյին վճարում։ Արդյունաբերական ակցիոներական 98 ընկերության բորսային արժեքներն ընկան մինչև հաշվով 59%-ով։

Ճգնաժամն ամենից շատ հարվածեց բանվոր դասակարգին։ Գործազրկությունն աղետալի բնույթ ընդունեց։ Մի քանի վայրերում բանվորները փողոցներում բառացիորեն գետին եյին գլորվում քաղցից ուժասպառ լինելու հետևանքով։

1907 ԹՎԱԿԱՆԸ։ 1900—1901 թվականի ճգնաժամը գրեթե չդիպավ Ամերիկային։

1904 թվականի վերջերքին արդյունաբերությունը Յեվրոպայում նորից վոտք դրեց վերելքի շրջանը։ Ռուսաստանում ցած կոնյունկտուրան հարատև բնույթ ստացավ և հետո յել միաձուլվեց 1907 թվականի ճգնաժամի հետ, վորն Ամերիկայից եր Յեվրոպա փոխադրվել։ Վերջապես արդյունաբերական վերելքի վերջին ալիքը, վոր պարզորոշ յերևան եր յեկել, ծայր և տալիս 1910 թվականին։ 1913 թվականին մի ամբողջ շարք ցուցանիշներ վկայում եյին, թե նորից ճգնաժամ և մոտենում։ Սակայն այն ժամանակներում կապիտալիզմի հակասությունները խիստ եյին սրվել արդեն։ Հերթական առևտրաարդյունաբերական ճգնաժամի տեղակ պայթեց համաշխարհային պատերազմը։

Պատերազմից հետո միջազգային առևտրի աշխուժանալու հետ մեկտեղ ամբողջ յերկրագնդի վրա արդյունաբերության վերելք սկսվեց։ Բայց 1921 թվականին արդեն վրա հասավ մի այնպիսի ճգնաժամ, վորի թափի առջև նահանջում են կապիտալիստական տնտեսության բոլոր նախնյաց ճգնաժամերը։ Ճգնաժամն սկսվեց Ճապոնիայում, հետո անցավ Ամերիկա, այստեղից էլ փոխադրվեց Արևմտյան Յեվրոպայի բոլոր յերկրներն առանց բացառության։ Անգլիան 1913 թվականին ամսական հալում պատրաստում եր 855,000 տոննա չուգուն։ 1921 թվականի հունվարին Անգլիայում պատրաստվել է 642,000 տոննա, իսկ ապրիլին 60,300 տոննա։ Արտադրության ճիշտ այսպիսի կրճատում կատարվում եր Ամերիկայում էլ։ Աշխատավարձը խիստ ընկավ։ Գործազրկությունը հասավ դեռևս յերբեք չտեսնված չափերի։ Անգլիայում միլիոնից ավելի գործազուրկներ կային։ Ամերիկայում սրանց թիվը տատանվում եր 3 միլիոնի ու 6 միլիոնի միջև։

§ 110. ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.

Վերևում մենք մատնանշեցինք, թե արդյունաբերության առանձին ճյուղերը վորքան կապված են իրար հետ։ Ապրանքներից մի քանիսի վաճառահանության խափանվելն ուրիշ ապրանքների վաճառահանության խափանման պատճառ է լինում։ Բայց վորպեսզի վաճառահանության խափանում չլինի, անհրաժեշտ էր ամենից առաջ, վոր արդյունաբերության առանձին ճյուղերի միջեվ խիստ համաչափակցություն ու համեմատականություն լիներ և ամենից առաջ համեմատականություն լիներ արդյունաբերության հիմնական բաժինների միջև, այսինքն արտադրության միջոցների արտադրության ու սպառման միջոցների արտադրության միջև։

ՏԱՐՀԱՄԵՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ДИСПРОПОРЦИОНАЛЬНОСТЬ)։

Այսպիսի համեմատականություն ընդհանրապես հնարավոր է այն դեպքում միայն, յերբ հանրային արտադրությունը պլանաչափորեն է կազմակերպված։ Իսկ փոխանակային հարաբերությունների խոսի ժամանակ արտադրությունը կարգավորվում է այն ծանր հետևանքներով միայն, վորոնք կապված են համեմատականության խանգարումների հետ։ Ճգնաժամերի հիմնական պատճառն այս է։ Կապիտալիստական արտադրության տարհամեմատականությունը խարսխվում է մի շարք որգանական պատճառների վրա, վորոնք չի կարելի վերացնել կապիտալիզմի ժամանակ։ Գլխից այն ասենք, վոր աշխատավոր մասսաների գնողականությունը քանի գնում ավելի ու ավելի յեմ յետ մնում արտադրության թափից։ Ճիշտ է, գյուղացական մասսաների բանվորացնելով կապիտալը վոչ միայն բանվորական ուժ ծախողներ է գտնում, այլ և կապիտալիստական ապրանքները ծախ առնողներ է գտնում։ Զքանում է բնաանտեսությունը գյուղացու, վորը կերակրվում է սեփական հացով և հագնում է սեփական արտադրության ճլպտուրիկ կտորները։ Գյուղացին աստիճանաբար դառնում է բանվոր, վորն սպառման բոլոր առարկաները շուկայումն է գնում[1]։ Բայց շուկայի այս ընդլայնումը շուտով գեմ է առնում մի անհաղթահարելի խոչընդոտի, յեվ այս խոչընդոտը կապիտալի այն մասի սահմանափակությունն է, վորը ծախսվում է բանվորական ուժ գնելու վրա, ուրիշ խոսքով ասած՝ փոփոխական կապիտալի սահմանափակությունն է։

ԲԱՆՎՈՐԵՐԻ ՍՊԱՌՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒԹՅՈՒՆԸ։

Վորքան վոր մեքենան բանվորներին դուրս է մղում ձեռնարկությունից, այնքան էլ բարձրանում է հասարակության ամբողջ կապիտալի որգանական կազմը, այսինքն հարաբերաբար նվազում է փոփոխական մասը և շատանում է այն մասը, վորը գնում է մշտական կապիտալի ու հավելյալ արժեքի վրա (հարաբերաբար նվազում է v-ն և շատանում է c+m-ն)։ Այն ինչ բանվոր պասակարգի գնողունակությունը չափվում է v-ով։

Իհարկե, բանվորի սպառման՝ արտադրության թափից յետ մնալը զուգակշիռ փոխհատուցում է գտնում նրանով, վոր բուն իսկ սպառման միջոցների արտադրությունը յեթին շարքն է մղվում այն չափով, վորչափով վոր բարձրանում է կապիտալի որգանական կազմը։ Ավելի ու ավելի մեծ դեր է սկսում խաղալ արտադրության միջոցների արտադրությունը։ Բայց այս զուգակշիռ փոխհատուցումն այնուամենայնիվ չի կանխարգելում ճգնաժամը, վորովհետև արտադրության ջրանցքը վորքան էլ վոր յերկարի, այնուամենայնիվ պետք է դուրս հոսելու անցք ունենա, և այս անցքն սպառումն է։

Արդյունքներն, ինչ կերպ ուզում է լինի, ծախելու անհրաժեշտությունն, այսինքն ապրանքները նրան տալու անհրաժեշտությունը, ով կարող է փոխհատուցել նրանց ամբողջ արժեքը,— հակասում է բանվորական ուժի գնմանը, յերբ արտադրողին վճարվում է արտադրանքի արժեքի այն մասը միայն, վորը համապատասխանում է բանվորական ուժի արժեքին։ Հենց սրանով իսկ բանվորն իրրև սպառման միջոցների գնորդ, միանգամից յետ է մղվում յերկրորդ շարքը։

ՇԱՀՈՒԹԻ ՆՈՐՄԱՑԻ ԱՆԿՈՒՄԸ։

Սակայն շահույթի նորմայի անկումը կապիտալիստներից հարկադրում է ավելի ու ավելի մեծամասնական ապրանք շուկա նետել։

Վորքան զարգանում են տեխնիկան ու վարկը, այնքան ավելի ու ավելի հեշտ է դառնում կապիտալը ներդրել նոր ձեռնարկությունների մեջ և այնքան ավելի ու ավելի դժվար է լինում այնտեղից հանելը։ Շենքի, մեքենաների ու նման բաների վրա արած ծախսումները (հիմնական կապիտալ) մեծ են և արված են լինում, մանավանդ ծանր արդյունաբերության մեջ, այն

[1] Ավելի ճիշտ կլինի ասել, թե գյուղի դասակարգային շերտավորման հետևանքը լինում է մի կողմից բատրակը, կիսաբատրակ չքավորն ու գործ տրվող բանվորն, իսկ մյուս կողմից կուլակը։

հույսով, թե ձեռնարկությունը հարատեվելու չե յերկար տարիներ։ Իհարկե, ամեն մի ավյալ կապիտալիստի համար դժվար չե իր կապիտալը ձեռնարկությունից հանել՝ այն ձեռնարկությունը ծախելով կամ բաժնետիրացման չենթարկելով։ Բայց այս չի փոխում գործի դրությունը։ Տվյալ կապիտալը դուրս գնաց միմիայն այն պատճառով, վոր մի ուրիշ կապիտալ փոխարինեց նրան։ Իսկ ձեռնարկությունը, քանի վոր հիմնված և, պետք և բանի և ապրանքային մասսաները շպրտի շուկա։ Լավ կոնյունկտուրայի ժամանակաշրջաններում արագությամբ են ստեղծվում նոր ձեռնարկություններ։ Ակցիոներական ընկերությունների հիմնադիրները գործում են ամբողջ յեռանդով։ Ռուս իսկ ճոր ձեռնարկությունների առաջ գալը շինացյութերի, մեխենաների, բանվոր ձեռքերի պահանջ և ստեղծում։ Պահանջի ալիքները սփռվում են հեռու։ Մի ամբողջ շարք ճյուղերում վաճառահանությունն աշխուժանում և, արտադրությունը լայն թափ և ստանում։ Այս կամ այն ճյուղի մեջ ծագող մասնակի ճգնաժամերն արագությամբ ծծվում, չքանում են մեջտեղից։

ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՐՔԱՎՈՐՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՈՒ ՍԱՐՔԱՎՈՐՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Բայց լավ կոնյունկտուրան ինքն իր մեջ կրում և իր չքանալու պատճառները։ Ձերբ ճոր ձեռնարկություններ կամ թե ճորից սարքավորված ձեռնարկություններ սկսում են բանել ամբողջ թափով, այն ժամանակ շուկան գերալցվում և ապրանքային այնպիսի մասսաներով, վորոնք վճարունակ գնորդներ չեն ունենում։ Սկզբում գերարտադրությունը թաքուն բնույթ և կրում։ Մի քանի ապրանքային առևտրային ինստանցիաները դեռ բան գնում են։ Ապրանքը դեռ շարժվում և ինստանցիայից ինստանցիա, բայց դեմ և առնում նույն իսկ այն անցքի դռանը, վոր ընդհանուր առևտրության վոլորտից տանում և սպառման վոլորտը (ուղում և այն սպառումին արտադրողական սպառում լինի թե տառացի նույն սպառում)։ Աճացմաճ ալիքը մի ճյուղից մի ուրիշ ճյուղ և ծավալվում։ Այն ինչ այն ձեռնարկությունները, վորոնք ընտելացել են կապիտալի արագ պտույտ անելուն, իրենց շրջանառու կապիտալը հասցրած են լինում մինիմումի, վորովհետև վորքան արագ և պտույտ գործում կապիտալն, այնքան փոքրիկ շրջանառու կապիտալ և հարկավոր։ Այս պատճառով հնարավոր և շրջանառու կապիտալը հիմնական կապիտալ գարձնել (գործառնություններն ընդարձակելու համար)։ Պտույտի դանդաղումը բոլորից աճակնկալի չե բերում։ Շրջանառու կապիտալի պակասություն և զգացվում։ Քանի դեռ նախկին ապրանքը չի ծախվել, փող չկա բանվորներին վճարելու, փող չկա հումք գնելու համար։ Ընդհանուր այն ձգտումը, վոր նպատակ և դնում ծախել ինչ գնով ուզում և լինի, առաջ և բերում գների ազեատային անկումն[1]։

ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ՉԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԴԱՐՆԱԼԸ

Այն ժամանակ բոլորը դիմում են վարկային ընկերություններին՝ ոգնություն ստանալու։ Բայց այս աղբյուրը, վոր սովորական ժամանակ առատությամբ վոռոգում և արդյունաբերությունն ու առևտուրը, նույն այս աղբյուրը չորանում և ընդհանուր խուճապի ժամանակաշրջաններում։ Ավանդատուները բանկերից յետ են պահանջում իրենց ավանդները։ Բոլորը կանխիկ դրամի ծարավի յեն։ Բոլորը բորբոքված են մի ցանկությամբ —ապրանքներն ու պարտային պահանջները փող դարձնել։ Բայց այս ցանկությունը միանգամայն անիրականանալի ցանկություն և, վորովհետև մեն-մենակ ավանդների գումարը սովորաբար բազմապատիկ գերազանցում և յերկրում յեղած փողերի գումարից[2]։

Սովորական ժամանակներում «վատահելի» արժեթղթեր—ակցիաներ ու օբլիգացիաներ—գրավադրելով հեշտությամբ կարելի յե լինում սրանց արժեքի 75—80 տոկոսի չափով դրամ փոխ առնալ։ Այս հանգամանքը ձեռնարկու կապիտալիստներին դրդում և իրենց շրջանառու միջոցների մեծ մասը պահել արժեթղթեր դարձնելով, արժեթղթեր, վորոնք միշտ գրավադրվում են ու յերբեմն էլ փրկանվում են (выкупаются)։ Յերբ վարկը ցամաքում և, էլ տեղ չի մնում արժեթղթերը գրավադրելու, ապա մաքում և, էլ տեղ չի մնում արժեթղթերը ծախել։ Բորսաները գերալցվում են վաճառվելու և արժեթղթերը ծախել։ Բորսաները գերալցվում են վա-

[1] Ապրանքն ապրանքի հետ անմիջապես փոխանակելու պայմաններում անհնարին և, վոր փոխանակությունն անձեռնտու լինի բոլորի համար։ Մի քանի ապրանքների անձեռնտու փոխանակությունն այլ ապրանքների ձեռնտու փոխանակություն և նշանակում։ Ուրիշ բան և, յերբ փոխանակության միջոցին բոլոր ապրանքներն անպայման պետք և ցատկեն անցնեն փողի միջով։ Այստեղ այս շրջանակի մոտերքում հրհրոցն ու խեղդոցն ընդհանրական և լինում։

[2] Միևնույն հազար ռուբլին կարող և ավանդադրման առարկա դառնալ բազմաթիվ անգամներ։ Որինակ, Ա-ն հազար ռուբլին մտցնում և բանկն իբրև ավանդ։ Բանկն այս փողերը փոխ և տալիս Բ-ին։ Սա այս հազար ռուբլով ապրանք և հանում Գ-ից։ Գ-ն այս դրամը գնում և բանկն, իբրև ավանդ։ Բանկը հիշյալ գումարը փոխ և տալիս Դ-ին և այլն։

հույսով, թե ձեռնարկությունը հարատևելու չէ յերկար տարիներ։ Իհարկե, ամեն մի տվյալ կապիտալիստի համար դժվար չէ իր կապիտալը ձեռնարկությունից հանել՝ այն ձեռնարկությունը ծախելով կամ բաժնետիրացման յենթարկելով։ Բայց այս չի փոխում գործի դրությունը։ Տվյալ կապիտալը դուրս գնաց միմիայն այն պատճառով, վոր մի ուրիշ կապիտալ փոխարինեց նրան։ Իսկ ձեռնարկությունը, քանի վոր հիմնված է, պետք է բանի և ապրանքային մասսաներ շպրտի շուկա։ Լավ կոնյունկտուրայի ժամանակաշրջաններում արագությամբ են ստեղծվում նոր ձեռնարկություններ։ Ակցիոներական ընկերությունների հիմնադիրները գործում են ամբողջ յեռանդով։ **Բուն իսկ նոր ձեռնարկությունների առաջ գալը շինանյութերի, մեքենաների, բանվոր ձեռքերի պահանջ է ստեղծում։** Պահանջի ալիքները սփռվում են հեռու։ Մի ամբողջ շարք ճյուղերում վաճառահանությունն աշխուժանում է, **արտադրությունը լայն թափ է ստանում։ Այս կամ այն ճյուղի մեջ ծագող մասնակի ճգնաժամերն արագությամբ ծծվում, չքանում են մեջտեղից։**

ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՐՔԱՎՈՐՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՈՒ ՍԱՐՔԱՎՈՐՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ։

Բայց լավ կոնյունկտուրան ինքն իր մեջ կրում է իր չքանալու պատճառները։ **Յերբ նոր ձեռնարկությունները կամ թե նորից սարքավորված ձեռնարկություններն սկսում են բանել ամբողջ թափով, այն ժամանակ շուկան գերալցվում է ապրանքային այնպիսի մասսաներով,** վորոնք վճարունակ գնորդներ չեն ունենում։ Սկզբում գերարտադրությունը թաքուն բնույթ է կրում։ Միջնորդական առևտրային ինստանցիաները դեռ բան գնում են։ Ապրանքը դեռ շարժվում է ինստանցիայից ինստանցիա, բայց դեմ է առնում բուն իսկ այն անցքի դռանը, վոր շրջանառության վոլորտից տանում է սպառման վոլորտը (ուզում է այս սպառումն արտադրողական սպառում լինի թե տառացի բուն սպառում)։ **Լճացման ալիքը մի ճյուղից մի ուրիշ ճյուղ է ծավալվում։** Այն ինչ այն ձեռնարկությունները, վորոնք ընտելացել են կապիտալի արագ պտույտ անելուն, իրենց շրջանառու կապիտալը հասցրած են լինում մինիմումի, վորովհետև վորքան արագ է պտույտ գործում կապիտալն, այնքան փոքրիկ շրջանառու կապիտալ է հարկավոր։ **Այս պատճառով հնարավոր է շրջանառու կապիտալը հիմական կապիտալ դարձնել** (գործառնու-

ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ՝ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԴԱՌՆԱԼԸ։

թյուններն ընդարձակելու համար)։ **Պտույտի դանդաղումը բոլորին անակնկալի չե բերում։ Շրջանառու կապիտալի պակասություն է զգացվում։** Քանի դեռ նախկին ապրանքը չի ծախվել, փող չկա բանվորներին վճարելու, փող չկա հումք գնելու համար։ Ընդհանուր այն ձգտումը, վոր նպատակ է դնում ծախել ինչ գնով ուզում է լինի, առաջ է բերում գների աղետային անկումն[1]։

Այն ժամանակ բոլորը դիմում են վարկային ընկերություններին՝ օգնություն ստանալու։ **Բայց այս աղբյուրը, վոր սովորական ժամանակ առատությամբ վողողում է արդյունաբերությունն ու առևտուրը, նույն այս աղբյուրը չորանում է ընդհանուր խուճապի ժամանակաշրջաններում։** Ավանդատուները բանկերից յետ են պահանջում իրենց ավանդները։ Բոլորը կանխիկ դրամի ծարավի յեն։ Բոլորը բորբոքված են մի ցանկությամբ—ապրանքներն ու պարտային պահանջները փող դարձնել։ Բայց այս ցանկությունը միանգամայն անիրականանալի ցանկություն է, վորովհետև մեն-մենակ ավանդների գումարը սովորաբար բազմապատիկ գերազանցում է յերկրում յեղած փողերի գումարից[2]։

Սովորական ժամանակներում «վստահելի» արժեթղթեր—ակցիաներ ու օբլիգացիաներ—գրավադրելով հեշտությամբ կարելի յե լինում սրանց արժեքի 75—80 տոկոսի չափով դրամ փոխ ստանալ։ Այս հանգամանքը ձեռնարկու կապիտալիստներին դրդում է իրենց շրջանառու միջոցների մեծ մասը պահել արժեթղթեր դարձնելով, արժեթղթեր, վորոնք միշտ գրավադրվում են ու յերբեմն էլ փրկանվում են (выкупаются)։ Յերբ վարկը ցամաքում է, էլ տեղ չի մնում արժեթղթերը գրավադրելու, ապա հարկավոր է արժեթղթերը ծախել։ Բորսաները գերալցվում են վե-

[1] Ապրանքն ապրանքի հետ անմիջաբար փոխանակելու պայմաններում անհնարին է, վոր փոխանակությունն անձեռնտու լինի բոլորի համար։ Միքանի ապրանքների անձեռնտու փոխանակությունն այլ ապրանքների ձեռնտու փոխանակություն է նշանակում։ Ուրիշ բան է, յերբ փոխանակության միջոցին բոլոր ապրանքներն անպայման պետք է ցատկեն անցնեն փողի վոսկյա շրջանակի միջով։ Այստեղ այս շրջանակի մոտերքում հրհրոցն ու խեղդոցն ընդհանրական է լինում։

[2] Միևնույն հազար ռուբլին կարող է ավանդադրման առարկա դառնալ բազմաթիվ անգամներ։ Օրինակ, Ա-ն հազար ռուբլին մտցնում է բանկն իբրև ավանդ։ Բանկն այս փողերը փոխ է տալիս Բ-ին։ Սա այս հազար ռուբլով ապրանք է հանում Գ-ից։ Գ-ն այս դրամը դնում է բանկն, իբրև ավանդ։ Բանկը հիշյալ գումարը փոխ է տալիս Դ-ին և այլն։

բավաճառորդներով (перепродавец), արժեթղթերի կուրսերը քննում են կատաստրոֆիկ թափով:

Պայթում, բռնկվում է ճգնաժամը:

Ճգնաժամից, հասկանալի չէ, կործանվում են ամենաքուլլ ձեռնարկությունները, վորոնք, նախ, շրջանառության միջոց քիչ ունեն և վորոնք, չերկրորդ, չեսայնաց սարքավորման ու աշխատանքի անբավարար արտադրողության հետևանքով չեն կարող հարմարվել ցածր գներին, չերբ կոնյունկտուրան վատացած ընկած է լինում: Այն ձեռնարկությունները, վորոնք հարուստ են լինում միջոցներով, ճգնաժամից հետո ոգտագործում են տեխնիկական նորագույն բոլոր կատարելագործումները, վոր հարմարվեն ցածր գներին: Տեխնիկական կատարելագործումները կապիտալի նոր ներդրումներ են պահանջում: Վերջիններս իլի շուկայի բնգլայնման ալիք են ծնում:

Նոր վերելքի սկիզբը:

Նորից լավ կոնյունկտուրա է գալիս աստիճանաբար. ելի հեքյաթն սկսվում է գլխից...

Այսպես է խփում կապիտալիստական արտադրության զարկերակը համաշխարհային մասշտաբով, պարբերաբար սեղմվելով ու կրճատվելով: Յուրաքանչյուր սեղմում տարիներով պարզության ու կորստի չէ մատնում թե արտադրության միջոցներն ու թե արտադրողներին: Դասակարգային հակասությունները ավելի ու ավելի չեն սրվում:

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄ

ՎԵՑԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ.

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ.

Կապիտալիստական հարաբերությունները ծավալվում են չայնությամբ ու խորությամբ: Առաջին հերթին ծագումն առնելով Յեվրոպայի բոլորովին արևմտյան կողմում, կապիտալիստական հարաբերությունները XIX դարի չերկրորդ կիսում տիրապետող են դառնում ամբողջ Յեվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում, Ավստրալիայում ու Ասիայի ամենաարևելյան մասում: Յերկրագնդիս մնացած մասերը, վորոնք կապիտալիզմին հասնելու չափ չեն զարգացել, սարկացվում են կապիտալիստական չերկրների կողմից, վորոնք ծծում են նրանց ամբողջ հյութը:

Այս բոլորը **կապիտալիզմի բացակաց** *աճումն է ցույց տալիս: Բայց քանակական աճման կողքին հարկավոր է նշել կապիտալիզմի այն խորը* **վորակական վերաստեղումը**, *վորն սկսեց չերևան գալ XIX դարի վերջին քառորդում, վորը մեր որերում համաշխարհային պատերազմ առաջ բերեց և վորն անխուսափելի չե դարձնում կործանումը:*

Մարքսը, վոր մեռավ 1883 թվականին, դեռ չեր կարող հավաստել կապիտալիզմի նոր փուլի հյությունը, թեև ընդհանուր գծերով նախատեսել եր այն: Այս անելը վիճակվեց Լենինին, վորն այս ետապն անվանեց իմպերիալիզմի ետապ:

ՔՍԱՆՋՈՐՍՅԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԸ

§ 111. ՄԵՆԱՇՆՈՐՀԱՅՈՒՄԸ.

Առաջին հատկանիշը, որով խիստ տարբերվում է արդի կապիտալիզմը «դասական» (զուտ, չվերասերված) կապիտալիզմից, կապիտալիստական մրցման բոլորովին նոր բնույթն է։ Առաջ մեկ ձեռնարկությունն էր մրցում մյուսի հետ։ Մրցող միավորների թիվը հավասար էր ձեռնարկությունների թվին։ Յեթե յերբեմն յերբեմն մի քանի կապիտալիստներ խոսքները մեկ էլին անում, որ շուկայում համերաշխ հանդես գան, ապա այսպիսի համաձայնությունները կարճատև ու վաղանցուկ էլին լինում։ Այժմ պատկերը բոլորովին այլ է։ **Արդյունաբերության ու առևտրի բոլոր ճյուղերում, այլ յեվ բանկային գործում մեծ տեսնում ենք ուժեղ միավորություններ։** *Կապիտալիստական միավորությունների գլխավոր նպատակն այն է, որ շուկայում մենաշնորհյալ դիրք գրավեն (մրցումից ազատ դիրք) և գներ թելադրեն թե գնորդներին ու թե արտադրության միջոցներ մատակարարողներին։ Այս պատճառով էլ* **միավորման պրոցեսը կոչվում է արդյունաբերության մեծացնորհացման պրոցես։**

Վորպեսզի արդյունաբերության մենաշնորհացման որինակ գտնելու համար հեռու տեղեր մեն չգնանք, վեր առնենք միևչ հեղափոխական Ռուսաստանը։ Սկսենք ածխարդյունաբերությունից։ Դոնեցի ավազանի 18 խոշորագույն ձեռնարկություններ միավորվելով կազմել էլին մեկ սինդիկատ „Продуголь“ անունով, և այս սինդիկատի ձեռքում էր կենտրոնացած Դոնավազանի արդյունահանության 75%-ն ու ամբողջ յերկրի արդյունահանության 53%-ը։ Նույնպիսի միավորություններ կային քարածուխի արդյունահանության ուրիշ ռայոններում էլ—Ուրալի, Անդրբայկալի ու այլ ռայոններում։ Յեթե մենք այնուհետև անցնենք մետաղագործությանն, ապա այստեղ կհանդիպենք մի ամբողջ շարք միավորությունների, որոնք իրենց ձեռքում էլին կենտրոնացրել Ռուսաստանի գրեթե ամբողջ մետաղագործական արդյունաբերությունը։ Սրանցից ամենագլխավորներն էլին.

1. «Продамета» սինդիկատը, որ իր ձեռքում կենտրոնացրել էր ռելսերի արտադրության 75%-ը, տեսակավոր յերկաթի 83%-ը, յերկաթաձողերի 95%-ը, սռնիների 90%-ը և այլն։

2. «Кровля» սինդիկատը, որի ձեռքին էր ծածկի յերկաթի ամբողջ արտադրության մոտ 50%-ը։

3. «Проволока»—«Гвоздь» սինդիկատները, որոնց ձեռքին էր մետաղալարերի ու մեխերի արտադրության ամբողջ մենաշնորհը։

4. «Броня» սինդիկատը, որի ձեռքին էլին թնդանոթի, հրացանի ու նավաշինարարության ձեռնարկությունները։

5. «Продвагон» սինդիկատը, որի ձեռքին էր վագոնների շինարարության ասպարիզում յեղած պրոդուկցիայի 97%-ը

Այնուհետև գյուղատնտեսական մեքենաների սինդիկատը, «Медь» սինդիկատը, պլատինի արդյունաբերության տրեստը և այլն։ Հետո սինդիկատվեց գետային, մասամբ էլ ծովային տրանսպորտը և այլն։ Ռուսական շաքարի արդյունաբերությունը սինդիկատացվել էր դեռևս XIX դարի ութսունական թվականներին։ Ծխախոտի տրեստը համաշխարհային պատերազմի սկզբի մոտերքը կարտելացման էր յենթարկել Ռուսաստանի ծխախոտագործության արտադրանքի մոտ 75%-ը։ Կարտելացումն ընդգրկել էր արդյունաբերության բազմաթիվ ուրիշ ճյուղեր էլ, սրանց թվում մանածագործական արդյունաբերությունն էլ, որը պրոդուկցիայի շատ բազմազան լինելու հետևանքով ամենից պակաս նպաստավորն էր համարվում մենաշնորհային միավորություն կազմելու համար (Լոձի սինդիկատը, Մոսկվայի ռայոնի բամբակեղենի գործարանների միավորությունները)։

Արդյունաբերության մենաշնորհացման էլ ավելի ապշելի տեսարան են ներկայացնում Գերմանիան[1]) ու Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները։

Այս յերկրներում յեղած արդյունաբերական թեկուզ ամենագլխավոր միավորությունները թվարկելու համար շատ էջեր էլին պետք։ Այն ընթերցողը, որը հետաքրքրվում է մանրամաս-

[1] *1926 թ. կայունացման ճգնաժամից հետո արդյունաբերության մենաշնորհացումն ուղղակի համաճարակի բնույթ ստացավ Գերմանիայում։ Մենաշնորհացման յենթարկվեց նույնիսկ արտադրությունը մարգարինի, որը դերմանական բանվորների համար յուղի տեղ էր բռնում։*

նություններով, կարող է գտնել ներքևում ծանոթագրության մեջ զետեղված գրականության ցանկին[1]:

Կապիտալիստական միավորությունները չեն վերացնում կռիվ ու մրցման վրա հիմնված կապիտալիստական արտադրության անարխիան: Միավորված ձեռնարկություններն իրար հետ մրցելուց դադարելով՝ էլ ավելի կատաղորեն են սկսում կռվել «վայրենի» ձեռնարկությունների դեմ (վորոնք չեն հոժարում համաձայնության գալ) ու մյուս միավորությունների դեմ: «Վայրենի» ձեռնարկությունները յերբեմն կատաղի համառություն են յերևան բերում: Վորքան ավելի յե ուժեղանում վորևե միավորություն և սրա հետևանքով վորքան ավելի յե ուռցնում գներն, այնքան ավելի ձեռնտու յե նրա հետ մրցելը: Սակայն «վայրենիների» դեմ

«ՎԱՅՐԵՆԻ» ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

ամենավճռական միջոցներ են ձեռք առնում: Այն ռայոնների համար, վորտեղ «վայրենի» ձեռնարկություններն են գործում, ամենացածր գներ են նշանակում արտադրանքներին: Աշխատում են «վայրենիներին» առանց հումք թողնել: Որինակ, ոճառագործարանների գերմանական կարտելը պայմանավորվել եր հումք (ձեթ, սոդա և այլն) վաճառողների հետ, վոր «վայրենիներին» հումք չեն ծախիլ: Վորովհետև քիչ է պատահում, վոր ձեռնարկությունների միավորությունն ապրի առանց բանկերի ու սրանց միավորությունների ոգնության, ուստի տրեստի թշնամին դառնում է բանկային միավորության թշնամին էլ, վորի շնորհիվ վերջինս զրկվում է վարկից[2]: Յերբեմն միավորությունները այն ձեռնարկությունների դեմ կռիվ մղելիս, վորոնք թանգ են գնահատում իրենց անկախությունը, կանգ չեն առնում լրտեսության, հրձիգության ու նման բաների դեմ:

---

[1] Ленин—«Империализм». А. Кон—«Финансовый Капитал». М. Иоильсон—«Крупнокапиталистическое объединение в современном мировом хозяйстве». Феликс Пинчер—«Вожди германской промышленности». «Паул Уферман и К. Хюглин—«Стиннес и его концерны».

[2] Յերբեմն «վայրենիներին» այնուամենայնիվ հաջողվում է իրենց խոսքն առաջ տանել և խորտակել իրենց թշնամի միավորությունը: Այսպես որինակ, անգլիական շոգենավային Cunard ընկերությունը իր մրցումով 1903 թվականին (ճիշտ է, անգլիական կառավարության յեռանդուն աջակցությամբ) տապալեց այն համաձայնությունը, վոր կնքել եյին ամերիկյան, անգլիական ու գերմանական շոգենավային ընկերությունները: «Վայրենու» հաղթանակի լավագույն որինակ է Ֆորդի ավտոմոբիլային ձեռնարկությունը, վորը պահել է իր անկախությունը, չնայած ավտոմոբիլային տրեստի մոլեգին հալածանքին:

Պատահում է նաև, վոր «վայրենիներն» իրենց հերթին միավորվում են ընդհանուր կռիվ մղելու համար: Միավորությունների՝ «վայրենիների» դեմ մղած կռիվն փոխարինում է յերկու միավորությունների՝ իրար դեմ մղվող կռիվը:

Վայրենիների «միավորության» որինակ է Բեթլեյեմի պողպատի կորպորացիան Ամերիկայում: Կորպորացիայի շուրջը համախմբվելով միավորվեցին պողպատի այն ձեռնարկությունները, վոր պողպատի տրեստին կուլ չեյին գնացել:

§ 112. ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ.

Լինում են զանազան տեսակի ու աստիճանի համաձայնություններ: Բացի պատահական կարճատև համաձայնություններից (կոռներներ, ռինգեր) տարբերում են նրանց հետևյալ տեսակները.

ԿԱՐՏԵԼ:

1. **Այստեղ առանձին ձեռնարկությունների միջև միայն ապրանքի ծախու գների մասին համաձայնություն կա**: Համաձայնությունը կարող է վերաբերել նաև այն գներին, վորով հումք են առնում (ինչպես որինակ այնպիսի կարտելի, վորի նպատակն է հումքի առքի գները (покупная цена) կարգավորել, ներկայանում է լրագրերի հրատարակիչների կարտելը, վոր մի ժամանակ կար Գերմանիայում: Այս կարտելի նպատակն եր հակազդել տպագրական թղթի տրեստին, վորն ուռցնում եր իր արդյունքի գները):

ՍԻՆԴԻԿԱՏ:

2. **Սինդիկատի մեջ մտած ձեռնարկությունները կորցնում են իրենց առևտրային անկախությունը**: Արտադրությունը ջոկ ջոկ է, իսկ արդյունքի վաճառքն, իսկ յերբեմն նաև հումքի գնումը՝ միատեղ:

Կարտելի ու սինդիկատի ներսում միշտ յեռուզեռ և կռիվ է լինում գների չափերի համար: Այն ձեռնարկությունները վորոնք վատ են սարքավորված և վորոնց արդյունքի ինքնարժեքը բարձր է, աշխատում են, վոր ավելի բարձր գներ սահմանվեն: Իսկ լավ ձեռնարկություններն իրենց ընթացքը հարմարեցնում են վատերին: Սինդիկատների ներսում սրան միանում է նաև այն կռիվը, վոր մղվում է ծախաբաժնի (КВОТ) մեծության համար, այսինքն արտադրանքի այն մասի համար, վոր յուրաքանչյուր ձեռնարկություն պիտի ունենա ընդհանուր վաճառքի մեջ:

ՏՐԵՍՏ:

3. **Տրեստն առանձին ձեռնարկությունների լիակատար ձուլման ձևն է**: Այստեղ արդեն արտադրությունն էլ է կատարվում միասնական պլանով: Տրեստի

մեջ մտած առանձին ձեռնարկությունների տերերը դառնում են տրեստի բաժնետերեր, ընդ որում պատահում է, որ մինչև անգամ տրեստի մեջ մտած բոլոր ձեռնարկությունները չեն շարունակում գործել. սրանցից մի քանիսը դադարում են բանելուց։ Տեխնիկական տեսակետից ամենայետամնաց ձեռնարկությունները լուծարվում են կամ կոնսերվացիայի[1] են ենթարկվում, մի հանգամանք, սակայն, որը չի խանգարում սրանց նախկին տերերին մնալ տրեստի բաժնետերեր։

ԿՈՄԲԻՆԱՏՆԵՐ։

Տրեստացվում են ոչ միայն միատեսակ ձեռնարկություններ, այլ և այնպիսիները, որոնք միևնույն արգյունքի արտադրության տարբեր էտապներն են ներկայացնում[2]։ Այսպես օրինակ, լեռնագործարանը միանում է մեքենաշեն գործարանի հետ, նավթահանքերը շաղկապվում են գազի գործարանի կամ էլեկտրոկայանների հետ։ Ծխախոտագործարանները ձեռք են բերում ծխախոտի պլանտացիաներ։ Հալոցները (ДОМНА) համակցվում են պղնձաձուլյլ գործարանի հետ։ Ընդ որին, եթե պղնձաձուլյլ գործարանը հալոցին մոտիկ է լինում, այն օգուտն է ստացվում, որ հալած չուգունը հալոցից անմիջաբար կարող է գործարան տարվել առանց երկրորդ անգամ տաքացնելու կարիքի։ Հալոցի գազերը կարող են գործարանում օգտագործվել գազաշարժիչների համար։ Տրեստացման այսպիսի սիստեմը կոչվում է ինտեգրացիա կամ կոմբինացիա, իսկ միավորված ձեռնարկությունները՝ կոմբինատ։

Միքանի կոմբինատներ աշխատանքի բաժանման կողմից հիշեցնում են մանուֆակտուրան, միայն տեխնիկական ավելի բարձր պատվանդանի վրա են հիմնված։ Այսպիսիք են այն «արտադրական միավորությունները», որոնց մեջ մտնում են միևնույն արտադրանքի մասերը պատրաստող մի շարք ձեռնարկություններ. Այսպես է, օրինակ, գերմանական ավտոմոբիլային կոնցերնը, որ միացնում է ավտոմոբիլի այս կամ այն մասերը պատրաստող ձեռնարկությունները—մեքենաշեն ու էլեկտրոտեխնիկական գործարանները, մանածագործական ֆաբրիկաները և այլն։

[1] Կոնսերվացիա է կոչվում ձեռնարկության գործունեության այնպիսի դադարեցումը, որի ժամանակ միջոցներ են ձեռք առնում, որ մեքենաները, շենքերը հայլն պահպանվեն, չփչանան։

[2] ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ՈՒ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՏՐԵՍՏԱՑՈՒՄ։ Այս ձևը կոչվում է ուղղահայաց տրեստացում և տարբերվում է միատեսակ ձեռնարկությունների հորիզոնական տրեստացումից։

Երբեմն համակցվում են այնպիսի ձեռնարկություններ, որոնցից մեկը մյուսին օժանդակ նյութեղեն է մատակարարում, օրինակ, քարածխահանքերն ու լեռնագործարանները, գարեջրի գործարաններն ու խցանի ֆաբրիկաները, լեռնային ձեռնարկությունները միանում են անտառահատների (лесосек) հետ, որոնք տալիս են կրեպեժի նյութեղեն և այլն։

Ստիննեսը կամ ավելի ճիշտ՝ այն կոնցերնը, որ նրա միացրածն է, էլ ավելի յեառաջ գնացել։ Եթե լեռնային ձեռնարկությունները նրան դրդեցին սեփական անտառահատ ու փայտասղոցման գործարաններ ձեռք բերել, ապա փայտեղենի այն տեսակները օգտագործելու համար, որ նրան հարկավոր չեյին լեռնային գործի համար, նա հիմնում եր փայտասղոցման գործարաններ, ձեռք եր բերում թղթագործարաններ և այլն։ Թղթագործարաններից նա անցավ տպագրական-հրատարակչական գործին։ Ձեռնարկությունների համակցման այսպիսի յեղանակի հետևանքով Ստիննեսի կոնցերնի ձեռքում հավաքվեց ամենատարբեր տեսակի ձեռնարկությունների մի արմանալի շղթա՝ նավթաղբյուրներից ու էլեկտրոտեխնիկական ֆաբրիկաներից սկսած և վերջացրած հյուրանոցներով ու լրագրերով, որոնցից հրատարակվում եր ոչ պակաս քան 70 հատ[1]։

Ստիննեսի կոնցերնի վերահսկման յենթակա կապիտալների ընդհանուր գումարը գնահատվում եր 15 միլիարդ մարկ[2]։

Եթե համակցված ձեռնարկության մեջ աշխատավարձը հաշվում են սահող ցուցնակի (скала) սիստեմով, կոմբինատի առաջին օղակներն օգտվում են ամբողջ միավորության շահերի ընդհանրությամբ՝ բանվորներին խաբելու համար։ Ձեռնարկություններն իրենց արտադրանքը հետագա օղակներին ծախում են ցածրացրած գներով և հենց սրանով էլ ավտոմատիկ կերպով ցածացնում են աշխատավարձը (Անգլիա)։

[1] Ստինիզացիան ֆինանսական կապիտալի բարձրագույն աստիճանն է։ Այստեղ խոշոր արդյունաբերությունը ձգտում է ոչ միայն ֆինանսական անկախության ու շուկայի վրա տիրապետող լինելուն, այլ և տեխնիկական անկախության ու շուկային հաղթահարելուն։ Ձգտում է, որ ամեն ինչ ինքն արտադրե, ամեն ինչ իրենից գնե և ամեն ինչ իրեն ծախե։ Հասկանալի յե, որ այս ձգտումը խորապես հակասում է ապրանքի եյությանը։

[2] Ստիննեսի մահից հետո նրա կոնցերնը լուծվեց։

ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑՈՒՄՆԱՅԻՆ ԶԵՎԵՐԸ։

Միավորությունների այն ձեվերի շարում, որ մասնաճեղիցի, կամ մի շարք ասցումնայիճ ձեվեր։ Ցերբեմն ձեռնարկությունները կարտելացվում են վոչ թե իրենց ամբողջ արտադրանքի, այլ միայն սրա մի վորոշ մասի նկատառումով։ Այսպես որինակ, ռուսական ամենախոշոր մետաղագործական գործարանները մի ժամանակ կարտել կազմեցին հատկապես կամրջաշինարարական նյութեղենների ու աշխատանքների համար, վորի շնորհիվ նրանք կարողացան այս ասպարիզում գներն ուռցնել 20—30 տոկոսով։ Այնպես էլ է լինում, վոր սինդիկատի մեջ մտած ձեռնարկությունները պահպանում են միքանի անկախ վաճառքներ կատարելու իրավունքը՝ պայմանով, վոր վորոշ փոխհատուցում տան սինդիկատի միացած անդամների ոգտին։ Տրեստի մի տարբերակն է Հոլդինգ-տրեստը (Holding trust), վոր կազմակերպման համար բավական է, վոր միասին գործող կապիտալիստների վորևե խումբ գնի մի շարք ձեռնարկությունների բաժնետոմսերի մեծ մասը[1] և այսպիսով փաստական իշխանություն ձեռք բերի այս ձեռնարկությունների նկատմամբ։

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում կառավարությունը XIX դարի վերջում մանր կապիտալիստների ճընշման տակ որենադրական կարգով արգելքներ եր դնում կապիտալիստական միավորությունների առաջ։ Բանից դուրս չեկավ, վոր Holding trust-ն ամենահարմար ձևն է որենքը զանց առնելու, մի որենք, վորն այսպիսով ճնում եր թղթի վրա։ Ի դեպ, համաշխարհային պատերազմի ժամանակվանից սկսած՝ արդյունաբերության ամերիկյան արքանները, վորոնց որգանն է կառավարությունը, պոկում, դեն են գցում այս վերջին թզաաերևն էլ։ Միավորությունների դեմ հրատարակված որենքներն աստիճանաբար վերացվում են։

ԿԱՐՏԵԼԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԲ ԵՐՈՒԹՅԱՆ ՍԻՐՎԱԾ ՃՅՈՒՂԵՐԸ։

Կարտելացումն (այս անվան տակ հասկացվում է թե սինդիկատացումն ու թե տրեստացումը) ամենից ավելի սաստիկ ընդգրկել է ծանր արդյունաբերությունը, վորն ընդհանրապես հասուն կապիտալիզմի մեջ գլխավոր

[1] Ի դեպ, ինչպես արդեն ասել ենք վերևում, ձեռնարկությունն իրեն յենթարկելու համար միշտ չի պահանջվում, վոր ակցիաների մեծ մասին տեր լինեն։

Սովորաբար միքանի դեպքերում ձեռնարկությունն իրեն եր յենթարկում՝ բոլոր ակցիաների միայն 15%-ն ունենալով ձեռին։

դերն է կատարում և տոն է տալիս մնացած ճյուղերին։ Փարաձախահանքերը, նավթաղբյուրները, մետաղագործական գործարանները, փոքրիկ բացառություններով, բոլորը գտնվում են կապիտալիստական միավորությունների ձեռքին։ Այսպես, պողպատի ամբողջ գերմանական արտադրության $^9/_{10}$-ը «Պողպատի արտադրության միության» վերահսկողության ներքո է գտնվում։ Պողպատի ամերիկյան տրեստն աշխարհիս ամենահզոր արդյունաբերական միավորություններից մեկն է։ Ամբողջ կապիտալիստական աշխարհում նավթը գտնվում է սակավաթիվ հզոր միավորությունների ձեռքին (ամերիկյան «Ստանդարտ Ոյլն»[1], անգլիական «Շել կոմպանին»[2], հոլլանդական «Ռոյալ Դեյչը»)։ Ելեկտրաէներգիայի արդյունաբերությունն էլ, իբրև նոր ճյուղ, սկզբից ևեթ ենթարկվեց մենաշնորհացման։

Արդյունաբերության կապիտալիստական մենաշնորհացումն ամենից ավելի սաստիկ է հյուսիսային Ամերիկայում ու Գերմանիայում։ Սակայն չկա վոչ մի կապիտալիստական յերկիր ու արդյունաբերության վոչ մի շատից-քչից նշանավոր ճյուղ, վորը յենթակա չլիներ կարտելացման պրոցեսին. շաքարի սինդիկատները, ձախաղոի տրեստները, շոգենավաշինական տրեստը, բիսկվիտի ամերիկյան տրեստը։ Կաթի անգլիական տրեստը իր ձեռքում համակենտրոնացրած ունի Անգլիայի մեջ կատարվող կաթնավաճառքի 65%-ը, պողպատի ամերիկյան տրեստը 59 շոգենավ ունի 216 հազար տոննա տարողությամբ[3]։

Կապիտալիստական միավորությունները մեծ մասամբ ազգային բնույթ ունեն։

Սրանք ամենից ավելի հեշտ առաջ են գալիս այնտեղ, վորտեղ ներմուծման մաքսերը ոտարերկրյա մրցումից պաշտպանում են այս միավորությունները։ Մի անգամ վոր կապիտալիստական միավորություններն արդեն ծնունդ են առնում միավորման միջոցով, նրանք կառավարության վրա ունեցած իրենց ազդեցության շնորհիվ, նրանք կառավարության վրա ունեցած իրենց ազդեցությամբ հաջողեցնում են, վոր արգելիչ մաքսեր (запретительная таможенная пошлина) մտցվեն։ Արտասահմանի մրցումից ա-

[1] Պատերազմի նախորյակին «Ստանդարտ Ոյլը» կապիտալը հասնում եր մեկուկես դոլարի, իսկ տարեկան արտադրությունը $1^1/_2$ միլիարդ փութ։

[2] Բուն իսկ այս «Շել կոմպանուն» եր պատկանում ռուսական «Մազութ» ու «Կասպիական—Սև-ծովյան» ընկերությունների ամբողջ հիմնական կապիտալը։

[3] Բանանների ու հարավային այլ մրգերի առուտուր անող այս տրեստի բոլ մեջ ճզմված են կենտրոնական Ամերիկայի պետությունները։

զատվելով՝ սինդիկատը կամ տրեստը կրկնակի գների քաղաքականություն և սկսում վարել։ Ցերկրի ներսում սահմանվում են բարձր մենաշնորհային գներ, որոնք մեծ շահույթ են տալիս միավորությանը։ Պրոդուկցիայի մնացորդը շպրտվում է արտասահման, որտեղ ծախվում է «դեմպինգյան» կամ «դեն նետելու» ցածր գներով («демпинговая» или «бросовая» цена)։

ԴԵՄՊԻՆԳ։

Արտասահմանում դեմպինգյան գներով ևր ծախծվում, որինակ, ռուսական շաքարը։ Ռուսաստանի բանվորը թեյը խմում ևր կծովի (вприкуску), իսկ յերբեմն էլ նայովի (вприглядку), իսկ արտասահմանում ռուսական շաքարով խոզերին եյին կերակրում։ Գերմանական թերթավոր յերկաթն (листовое железо) ու մետաղալարը յերկար ժամանակ Հոլանդիայում ավելի եժան եյին, քան Գերմանիայում։ Գերմանական մեխի գործարանները չեյին կարողանում մրցել հոլանդական գործարանների հետ, որոնք մեխ պատրաստելու համար ստանում եյին հենց նույն գերմանական մետաղալարը, միայն թե դեմպինգյան գներով։ Արտասահմանյան շուկաները իր ձեռքում պահելու նպատակով Վեստֆալյան մեխի սինդիկատը նույնպես դիմեց դեմպինգյան գների քաղաքականության։ Այս սինդիկատը Գերմանիայի ներսում ուռցրեց, բարձրացրեց մեխերի գները, որպեսզի արտասահմանում եժան ծախի և մրցի Հոլանդիայի հետ։

ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ։

Սակայն ազգային մասշտաբով կատարվող կարտելացմանը զուգընթաց տեղի յե ունենում միջազգային կարտելացում էլ։ Ջանապան յերկրների սինդիկատներն ու տրեստները համաձայնություն են կնքում իրար հետ, մի տեսակ բաժանում են իրենց միջև ամբողջ աշխարհը։

Այսպես բաժանել եյին իրենց միջև ամբողջ աշխարհն «Ելեքտրականության Ընդհանրական Կոմպանիան» և «Սիմենս ու Գալսկե»-ն։ Միջազգային բնույթ ունեն նավթի տրեստները։ Կարտելացումը նույնպիսի բնույթ ունի քիմիական ու ապակու արդյունաբերության ասպարիզում։ Ցերկաթձողի (рельсовый) միջազգային տրեստն ընդգրկում ևր ամբողջ աշխարհի յերկաթձողերի արտադրությունը։ Ամենից հետաքրքրականն այն և, վոր մինչև անգամ ռազմական զինման առարկաների ու փոխադարձ բնաջնջման գործիքների արտադրության ասպարիզում էլ ամբողջ աշխարհը պատերազմից առաջ հոժարակամ բաժանել եյին

իրենց միջև այնպիսի ամենախոշոր ֆիրմաներ, վորպիսիք եյին Կրուպպն, Արմստրոնգը, Շնեյդերը, Պուտիլովի գործարանի Ընկերությունն ու մյուսները։

ՏՐԵՍՏ ՆԵՐՆ ՈՒ ՍԻՆԴԻԿԱՏՆԵՐԸ ՀՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ։

Կապիտալիստական տրեստների ու սինդիկատների հետ պետք չե շփոթել ԽՍՀՄ սինդիկատներն ու տրեստները։ Մեր տրեստը պետական այն ձեռնարկությունների միավորման հիմնական ձևն և, վորոնք գտնվում են մեկ ոլյոնում և իրար հետ շաղկապված են կամ արտադրանքի նմանությամբ կամ թե նրանով, վոր մեկի արդյունքը մյուսի համար հում նյութ և կամ ուժանդակ նյութեղեն (կոմբինատներ)։

Մեզանում այնպիսի կոմբինատներ էլ կան, վորտեղ ձեռնարկությունների շաղկապն այն և, վոր սրանք անմիջապես մոտիկ են իրար, ընդհանուր ելեքտրոկայան, վառելիքի ընդհանուր աղբյուրներ ունեն և այլն (Դուսևակի մանածագործական ու բյուրեղյա անոթների կոմբինատը Վլադիմիրսկի նահանգում, Նովոբորիսովկի «Бумспичка»-ն Մինսկի նահանգում, վոր իրար շաղկապում է լուցկու ֆաբրիկան, թղթագործարանն, ապակու գործարանն ու չուգունաձույլ գործարանը)։

Տրեստի ներսում առանձին ձեռնարկությունները զրկված են տնտեսական անկախությունից։ Իրենց հերթին տրեստները բացառապես առևտրային նպատակներով (հումքի առք, արդյունքների վաճառք) ըստ հարկի միանալով սինդիկատներ են կազմում։

Միքանի պետական ձեռնարկություններ ծնունդ են առնում և գոյություն են ունենում ակցիոներական սկզբունքներով։ Բաժնեհարական ձեռնարկության հիմնադիրներ լինում են պետական ձեռնարկություններն ու այն հիմնարկները, վորոնք շահագրգռված են նրանց գոյությամբ։ Միքանի ակցիոներական ձեռնարկությունների մասնակցում և մասնավոր կապիտալը (խառն ընկերություններ)։

§ 113. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԱՅՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.

Վոր կապիտալիստական միավորությունները ձեռնտու յեն կապիտալիստների համար, այս ակներև բան և։ Հարցն այն և լոկ, թե ինչքա՜ն մենաշնորհատիրական փուլը հնարավոր յեղավ կա-

պիտալիզմի հասունության ժամանակաշրջանում միայն: Ինչու հենց հասուն կապիտալիզմի պայմանները հատկապես բարենպաստ դուրս յեկան մենաշնորհների ծագման համար:

Մենաշնորհացումը կապիտալի կենտրոնացման (централизация) **նոր ձևն է:**

Ընդհանուր առմամբ կենտրոնացման ետապները սրանք են.

ա) **Կլանում:** Խոշոր կապիտալիստը տնտեսական գերազորությամբ (засилиие) կործանում է մանրին՝ յուրացնելով սրա կապիտալը:

բ) **Բաժնետիրացում:** Այս մասին մանրամասն տեսեք վերևում (գլուխ XV):

գ) **Մենաշնորհացում:**

Ընդ սմին բարձրագույն ետապը կարող է զարգանալ նախընթաց ետապների վրա հիմնվելով: Հետևաբար **հասուն կապիտալիզմի պայմաններում մենաշնորհի ծագմանը նպաստել են առաջին հերթին հետևյալ յերևույթները.**

1. Արտադրության ու կապիտալի համակենտրոնացումը: Կապիտալն ու արտադրությունը համակենտրոնանում եյին համեմատաբար սակավաթիվ ձեռքերում: Փոքրաթիվ խոշոր ձեռնարկությունների համար շատ ու շատ ավելի հեշտ է խոսքները մեկ անել, քան բազմաթիվ մանր ձեռնարկուների համար:

2 Կապիտալիզմի ակցիոներական ձևը: Յերբ միատեսակ ձեռնարկությունների բաժնետոմսերն ընկնում են միևնույն մարդի կամ հիմնարկի ձեռքն, ապա հենց սրանով փաստորեն արդեն կատարված է լինում միավորությունը, վորի հետևանքը պետք է լինի մրցման վերացումը: Յերբ ակցիոներական ընկերությունը համառում է և հրաժարվում է միավորության մեջ մտնելուց, նրան կարելի յե հարկադրել այս անելու՝ նրա ակցիաների խոշոր մասը մեծագնելով[1]:

Մենաշնորհային քաղաքականություն վարելու համար կապիտալիստական միավորությունը կարիք չունի ու վոչ ել հնարավորություն ունի տվյալ ճյուղն ամբողջ 100%-ով իր ձեռքը գցելու: Շաքարի ամերիկյան տրեստը իր ձեռքում համակենտրոնացնելով ամբողջ արտադրության 75—80%-ը, գներ է թելադրում շուկային, վորովհետև շուկան վոչ մի

[1] Ակցիոներական ձեռնարկությունների գլխին փաստորեն տնօրինություն անելու համար յերբեմն բավական է ձեռքում ունենալ նրա ակցիաների 25—30%-ը:

կերպ չի կարող ապրվել (обходиться) առանց նրա արտադրույթի:

3. Այնուհետև այստեղ կարևոր դեր է խաղում **բանկերի ազդեցությունը:** Վորքան վոր բանկերն իրենց ձեռքն են առնում փոխատուական կապիտալներ ներքաշելու և բաշխելու գործը, բանկերի՝ արդյունաբերության վրա ունեցած ազդեցությունն աճում է շարունակ: Այն ձեռնարկությունը, վորին բանկերը մերժում են վարկ տալ, կորստի յե դատապարտված: Իրենց պարտապանների գործերի ընթացքին իրազեկ լինելու համար, իմանալու համար, թե կարելի յե նրանց վարկ տալ թե վոչ, բանկերն աչալուրջ հսկում են այն ձեռնարկուների գործերին, վորոնց իրենք վարկ են տալիս: Յեթե յերկու մրցորդ վարկատրվումեն մի բանկում, բանկի ստույգ շահը պահանջում է, վոր սրանց թեքի, իսկ պետք յեղած դեպքում նաև հարկադրի, վոր միավորություն կազմեն: Վորովհետև յեթե մրցման պայքարում այս յերկսից մեկը կործանի մյուսին, ապա սրանից բանկը կտուժի: Վերջապես բանկերը նպաստում են ձեռնարկուների միավորմանը վոչ միայն իբրև միջնորդներ ու վարկատուներ, այլ և իբրև ձեռնարկությունների մասնակիցներ: Այս մասին մանրամասն կխոսենք հետո, բանկերի նոր դերին նվիրելիք դրվագում:

4. Վերջապես պետք է մատնանշել, վոր արդյունաբերության մենաշնորհացման ամենագլխավոր պատճառը շահույթի **նորմայի ընկումն է:** Վերևում (գլուխ XII) մենք պարզաբանեցինք, վոր շահույթի նորման ընկնում է կապիտալի որգանական կազմի աճելու համեմատ: Միավորված ձեռնարկություններն աշխատում են շահույթը պակասելու հետևանքները մենաշնորհային գների միջոցով գցել այն կապիտալիստների ուսերին, վորոնք արտադրության միջոցներ են ծախում նրանց և արդյունք են գնում նրանցից: Սրանք ել իրենց հերթին են միավորություններ կազմում պաշտպանվելու նպատակով: Յեվ այսպես մենաշնորհացումը մեկ ճյուղից ծավալվում է, անցնում մի ուրիշ ճյուղ:

ՄԵՆԱՇՆՈՐՀԱՑՈՒՄԸՆ ՈՒ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ:

Վոր կապիտալիստների միավորությունները շատ են դժվարացնում այն կռիվը, վոր բանվորները մղում են աշխատավարձի չափերի, բանվորական որվա տևողության համար և այլն,— այս հանրահայտնի ու ակներև իրողություն է: Դասական կապիտալիզմի դարաշրջանում ել կապիտալիստները համերաշխ ու միաբան եյին գործում այն բոլոր դեպքերում, յերբ բանվորներն այս

կամ այն պահանջներն էլին առաջադրում։ Բայց այն ժամանակաշրջանի ժամանակավոր միավորությունների ուժը չի կարելի համեմատել մեր ժամանակվա կապիտալիստական ամրապինդ միավորությունների հետ։ Վերցնենք թեկուզ հենց մասնակի լոկաուտի այն մեթոդը, վոր կիրառվում է Ամերիկայում։ Սրա էությունն այն է, վոր յերբ գործադուլ է հասունանում, գործադուլը վիժեցնում են նրանով, վոր տրեստն արտադրությունը դադարեցնում է ձեռնարկություններից միայն նրա մեջ, վորտեղ ամենից ավելի ակտիվ բանվորներն են կենտրոնացած։ Սակայն գործադուլի վիժեցնելու այս յեղանակը, վոր կապիտալիստների համար ամենից եժանն է համեմատաբար, պահանջում է, վոր այս մեծ արագությամբ կատարվի և կարգադրիչ իշխանությունը կենտրոնացված լինի սակավաթիվ ձեռքերում, ուստի և այս յեղանակը կիրառելի յե արդյունաբերության մենաշնորհացման պայմաններում միայն։

Ավելի պատրաստվածների համար

§ 114. ԱՐԺԵՔԸ, ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔՆ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ.

Փոխանակային հասարակության հիմնական օրենքն, աշխատանքային արժեքի օրենքն ինչ ձևով է շարունակում գործել արդյունաբերության մենաշնորհացման պայմաններում։

Այս հարցը շատ բարդ է շնորհիվ այն հանգամանքի, վոր հասուն կապիտալիզմի տնտեսական հարաբերություններն անչափ խճճված են։ Մինչև հիմա դեռ չի կատարված հետազոտական այն աշխատանքը, վորը կարող եր պարզորոշ պատասխան տալ այս հարցին։ Այս պատճառով կսահմանափակվենք ընդհանուր բնույթ ունեցող փոքրիկ նկատողությամբ միայն։

Արդյոք մենաշնորհային գինը միանգամայն քմածին գին է իսկապես։

Մենաշնորհյալ ֆիրման, ինչպես և մրցման պայմաններում գործող ֆիրման ամենամեծ շահույթն ստանալու նպատակն է հետապնդում։ Թե մեկն ու թե մյուսը ձգտում են շահույթի ըստ կարելվույն մեծ գումար իրացնելու։ **Արդյոք ամենաբարձր գինը միշտ շահույթի ամենամեծ գումար է տալիս։** Վոչ յերբեք։

Արդյունաբերական կամ թե առևտրային ձեռնարկության ստացած շահույթի գումարը հավասար է ապրանքի մեկ միավո-

րից ստացած միջին շահույթին՝ բազմապատկած ապրանքի՝ ծախված միավորների թվով։ Գնի բարձրացումն ավելացնում է ապրանքի յուրաքանչյուր միավորից ստացած շահույթը, բայց սրա փոխարեն կարող է այն աստիճան կրճատել սպառումը, վոր շահույթի ընդհանուր մասսան կպակասի գների բարձրացման հետևանքով։ Մենաշնորհատերերն ամեն մի տվյալ դեպքում պետք է շոշափեն և գտնեն այն ամենաբարենպաստ գինը, վորը նրանց մեծագույն շահույթ է խոստանում[1]։

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒ ՎՈՉ-ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԸ։

Բանեցվող հումքի քանակը համեմատական է արդյունքի քանակին։ Յեթե 100,000 կարամեքենայի արտադրության համար հարկավոր է 50,000 փութ մետաղ, ապա 150,000 մեքենա արտադրելու համար հարկավոր է 75,000 փութ։ Բայց այնպիսի ծախսումներ, ինչպիսիք են շենքերի մաշվածքը, վարչական ապարատի գործը և այլն կարող են չշատանալ արտադրույթի աճման դեպքում կամ թե չնվազել արտադրույթի քչանալու դեպքում։ Կարող է պատահել, օրինակ, վոր արտադրույթի 50% ավելանալու դեպքում վարչական շտատը մեծանա միայն 20%-ով, իսկ շենքերի մաշվածքը՝ միայն 35%-ով։ Բայց յեթե ծախսումների մասին խոսենք վոչ թե նրանց բնեղեն ձևը նկատի ունենալով, այլ արժեքը նկատի ունենալով, ապա կարող է պատահել, վոր նույնիսկ հումքի վրա արած ծախսը համեմատական չլինի արտադրության չափերին, վորովհետև սովորական պայմաններում վորքան ավելի մեծ պարտիաներով

[1] Հետևյալ աղյուսակը թվական առ թվական ցույց է տալիս Ֆորդի ավտոմոբիլների գինը (դոլլարներով) ու ծախված ավտոմոբիլների թիվը (հազարներով)։

1910 թ.	—	950	դոլլար	—	18	հազար	ավտոմոբիլ
1911	»	—	780	»	—	34	»	»
1912	»	—	690	»	—	78	»	»
1913	»	—	600	»	—	168	»	»
1914	»	—	550	»	—	248	»	»
1915	»	—	490	»	—	308	»	»
1916	»	—	400	»	—	534	»	»
1917	»	—	360	»	—	785	»	»
1918	»	—	450	»	—	706	»	»
1919	»	—	525	»	—	533	»	»
1920	»	—	440	»	—	956	»	»
1921	»	—	355	»	—	1250	»	»

Այստեղ աչքի չի ընկնում շահույթի նորմայի հավասարվելու ձգտման կանոնից շեղվելը: Յեվ իսկապես, արդյունաբերության չկարտելացված ճյուղերը ծախում են մրցման գներով: Կարտելացվածները ծախում են ամենանպաստավոր, այսինքն մենաշնորհային գներով, հետևաբար արդյունաբերության կարտելացված ճյուղերն ավելադիր շահույթ են իրացնում:

Մրցման պայմաններում ինչն է հավասարեցնում շահույթի նորման:—Այն, վոր կապիտալը պակաս ձեռնտու ճյուղերից անցնում է ավելի ձեռնտու ճյուղերը: Արդյունաբերության մենաշնորհացման պայմաններում այս ճանապարհը դժվարացրել են: Թող «վայրենի» ձեռնարկուն փորձի քիթը ցերևացնել այն ճյուղում, վորն ամուր կարտելացված է: Նրան այստեղ այնպիսի ընդունելություն ցույց կտան, վոր շան որը կնկնի:

Բայց այս շեղումը լոկ թվացող շեղում է: **Շահույթի նորման հավասարեցնելու մի ուրիշ ճանապարհ կա, այն է՝ հետագա կարտելացման ճանապարհը:** Թե առքի ու թե վաճառքի ժամանակ ցերևան յեկած անձեռնտու պարագաները կստիպեն, վոր կարտելացվեն այն ճյուղերն էլ, վորոնք շարունակում եյին մրցորդային հիմունքներով գործել[1]:

Այստեղ ցերևան կգա մի նոր անհավասարություն—տարբեր որգանական կազմ ունեցող ճյուղերի շահույթի նորմայի անհավասարություն:

Ամենից առաջ այս կլինի այն պատճառով, վոր յեթե գների կարգավորիչն անմիջաբար արժեքը չլինի, ապա յուրաքանչյուր ճյուղի քանակն անմիջաբար կկարգավորվի հավելյալ արժեքի քանակով, իսկ կապիտալի յուրաքանչյուր միավորին հավելյալ արժեք այնտեղ է ընկնում ավելի շատ, վորտեղ կապիտալի որգանական կազմն ավելի ցած է: Բայց մի ուրիշ պատճառ էլ կա: Յեթե նույնիսկ արհեստակցական միությունները նկատի առնենք իբրև բանվորական ուժի վաճառորդների արտելներ, այնուամենայնիվ

[1] Ի հարկե, սրան զուգնթաց կկատարվի համակցվելն էլ: Գարեջրի գործարանատերը 22երի տրեստի մենաշնորհային գներին բաղխվելով՝ կարող է ապակեղենի սեփական գործարան հիմնել: Ծխախոտի պլանտացիաների տերը դժգոհ մնալով այն գներից, վոր նրան առաջարկում է ծխախոտագործարանների տրեստը, կարող է ծխախոտագործարան բանալու փորձ անել: Մյուս «վայրենիներից» համեմատությամբ նա այն առավելությունն ունի, վոր նրան չեն կարող հումքից զրկել:

բանվորական ուժի վաճառորդների կարտելը պետք է մյուս կարտելներից ավելի թույլ լինի այն պատճառով, վոր բանվորական ուժը չի կարելի պահծույել (консервировать) լիովին և վոր բանվորական ուժի արտադրությունը չի կարելի դադարեցնել, յերբ ուզենաս: «Մենաշնորհի ճնշումն» այստեղ ավելի թույլ, ցած կլինի, բանվորական ուժի գինն էլ արժեքից ցած կլինի:

Հետևաբար տվյալ ճյուղերում կապիտալի վորքան ավելի մեծ մասը գործադրվի բանվորական ուժ գնելու վրա, տվյալ ճյուղն այնքան ավելի շահութաբեր կլինի: Բայց այստեղ շահույթը հավասարեցնողը կլինի համակցումը, վորի շնորհիվ այն ճյուղը, վորն ավելի բարձր կազմով կապիտալ ունի, կարող է կլանել կապիտալի ցածր կազմ ունեցող մյուս ճյուղը: Այս պրոցեսսի վերջնական արգասիքը կլինի մի միասնական կարտել, վորը մենակ բանվորական ուժ է ծախ առնում և մենակ սպառման միջոցներ է վաճառում: Թե արդյոք կապիտալիզմն իսկապես կարող է հարատևել այն աստիճան, վոր հասնի այսպիսի հասունության,—այս մասին հետո կխոսենք:

Այսպես ուրեմն, շահույթի նորմայի հավասարեցման ձգտելու օրենքն արտահայտվում է մի կողմից կարտելացման պրոցեսսի սաստկացմամբ, ու ընդլայնմամբ, իսկ մյուս կողմից սպառողական կոոպերացիայի զարգացմամբ: Յերևակայենք, վոր այս պրոցեսսն ավարտվել պրծել է յուրաքանչյուր առանձին ճյուղում և վոր բոլոր կարտելների՝ կռվի մեջ ունեցած ուժերը հավասար են (իսկապես այս տեսակ հավասարությունն անհնարին բան է, կարելի չե խոսել այսպիսի հավասարեցման հասնելու ձգտման մասին միայն): Ուրեմն բոլոր գները գտնվում են «մենաշնորհի» միատեսակ «ճնշման» տակ: Արդյունաբերության ճյուղերից մի քանիսն արդեն չեն կարող հավելյալ արժեք յուրացնել ի հաշիվ մյուս ճյուղերի: Վերևում մատնանշած պատճառներից յերկրորդի (մենաշնորհային ճնշման) ներգործությունը հավասարակշռված է: Գները կարգավորողն էլի աշխատանքի արտադրողականության պայմաններն են անմիջաբար, այսինքն աշխատանքային արժեքն է:

ՔԱՆԶԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՈՒ ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՍԵՐՏԱՃՈՒՄԸ (сращение).

§ 115. ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆ ՈՒ ՄԵՆԱՇՆՈՐՀԱՑՈՒՄԸ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՄ.

Արդյունաբերության համակենտրոնացումը զուգընթաց կատարվում է բանկային գործի համակենտրոնացումը: Այստեղ էլ մանր ձեռնարկությունները վտարվում են խոշորների կողմից: Մանր բանկերը հաճախ պարզապես դառնում են խոշոր բանկերի բաժանմունքներ: Բանկային գործում էլ համակենտրոնացման հետևանքը լինում է խոշոր միավորությունների առաջ գալը:

Այստեղ կարևոր նշանակություն ունի արդյունաբերական ձեռնարկությունների միավորության ազդեցությունը: Նախ այն պատճառով, որ մանր բանկերը չեն կարող գլուխ բերել այնպիսի խոշոր միավորներին վարկատրելու գործը, որոնք առաջ են գալիս արդյունաբերության կատարելացման հետևանքով: Ցերկրորդ, պարտապանների մերձեցումը բնականաբար իրեն հետևանք առաջ է բերում վարկատուների մերձեցում:

Ցերբ միաձուլվում են խոշոր ձեռնարկություններն, ապա այս զարկ է տալիս այն բանին էլ, որ միաձուլվեն նաև այն բանկերը, որոնց մետոդները պատեղված են այս ձեռնարկություններում: Մանավանդ որ մենաշնորհատիրական ձեռնարկությունն ավելի վարկունակ է, քան միայնակ ձեռնարկությունն, ուստի և բանկերն ավելի չեն շահագրգռված մենաշնորհատիրական ձեռնարկությանը վարկ տալով: Վերջապես այստեղ գործում են հենց նույն պատճառները, որոնք գործում էին արդյունաբերության մենաշնորհացման հարցում, այն է՝ բաժենատիրացումը, տոկոսի նորմալի անկումը և այլն:

Այնուհետև, հետևանքը դառնում է պատճառ: Բանկերի մենաշնորհացումն արագացնում է արդյունաբերության մենաշնորհացումը,

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս թե XX դարում վարքան արագ եր կատարվում ռուսական բանկերի խոշորացման (укрупнение) պրոցեսսը.

Մեկ հիմնարկից հիմնական կապիտալ վո՞րքան եր ընկնում.

Թվականները	Բոլոր բանկերի մեջ՝ միլիոն ռուբլով	Պետերբ. բանկերի մեջ՝ միլիոն ռուբ.	Մոսկվայի բանկերի մեջ՝ միլիոն ռուբ.	Գավառական բանկերի մեջ՝ միլիոն ռուբ.
1900 . .	5,0	11,9	6,6	2,7
1910 . .	7,9	18,1	6.6	2,8
1914 . .	12,6	30,1	14,3	4,1

«Թե հատկապես XIX դարում ու XX դարի սկզբին բանկային գործն ինչպիսի արագությամբ եր առաջ ընթանում Գերմանիայում, չերևում է Ռիսսերի նշած հետևյալ ավյալներից, որ մենք մեջ ենք բերում կրճատ.

Բերլինի խոշորագույն վեց բանկն ունեցին.—

Թվականները	Բաժանմունք ներ Գերմանիայում	Դեպոզիտների կապիտալը միլիոն մարկ.	Միջսական մասնակցությամբ միլիոն մարկ. բանկ.	Գործակիցը միլիոն մարկ.
1895 . . .	16	14	1	42
1900 . . .	21	40	8	80
1911 . . .	104	276	63	450

Ֆրանսիայում չերեք խոշորագույն բանկ—«Credit Lyonnais», «Comptoir National d' Escompte» ու «Société Générale» իրենց գործառնություններն ու իրենց բաժանմունքների ցանցը ծավալել եյին այս կերպ.

Բաժանմունքների ու գանձարկղերի թիվը. կապիտալների չափերը

Թվականները	Գլխավոր	Մասնավոր	Ընդամենը	Իրենց կապիտալը	Միասին
				(միլիոն ֆրանկով)	
1870	47	17	64	200	427
1890	192	66	258	265	1245
1909	1033	196	1229	887	4363»

(Լենին):

Անգլիայում 28 տարվա մեջ (1890—1918) մասնավոր բանկերի թիվը նվազել ե 104-ից հասնելով 31-ի: Իսկ մասնավոր բանկերի կապիտալների գումարն աճել ե 68 միլիոն ֆունտ ստերլինգից հասնելով 84 միլիոնի: Ավանդների գումարն աճել ե ավելի, քան յերկու անգամ, իսկ բաժանմունքները շատացել են՝ 2,200 ի տեղակ դառնալով 6000:

Ամերիկայում միլիարդատերեր Ռոկֆելլերի ու Մորգանի յերկու խոշորագույն բանկը տիրում ե բանկային ամբողջ սիստեմին:

ԲԱՆԿԵՐԻ ՆՈՐ ԴԵՐԸ: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ:

Հասուն կապիտալիզմի պայմաններում ամեն մի ձեռնարկության մենակ գոյությունը չե, որ կախում ունի բանկային սիստեմից (բանկերը վարկ չեն տա, ձեռնարկությունը շունչը կփչի): Բանկային սիստեմից մեծ մասամբ կախում ունի ձեռնարկության բուն իսկ առաջ գալն էլ, գոնե վորչափով վոր խոսքն ակցիոներական ձեռնարկության մասին ե. իսկ չե՞ վոր ամենախոշոր ձեռնարկություններն առաջ են գալիս հենց ակցիոներական ձևով: Բանն այն ե, վոր ակցիաների յուրաքանչյուր բացարկ բանկի կամ թե բանկերի մի ամբողջ խմբի աջակցություն ե պահանջում: Բանկերը հանձն են առնում ակցիաները տարածել իրենց կլիյենտների շրջանում: Միջակ կալվածատերերն ու ամեն տեսակի խնայողները (сберегатель) հնարավորություն չունենալով իրենց հարկավոր ինֆորմացիան անկախորեն ձեռք բերելու՝ հարկադրված են իրենց փողերը զետեղելու հարցի մասին խորհրդակցելու այն բանկերի հետ, վորոնք պահպանում են նրանց խնայողությունները: Վորչափով վոր ակցիաները գնում ե այս միջակ հասարակությունը, ապա դեպի այս կարգի գնորդները տանող ուղին անցնում ե բանկերի միջով: Բայց այս դեռ բոլորը չե: Բանկերը վոչ միայն միջնորդ են ակցիաների բացարկի ժամանակ, այլ և խոշոր գնորդներ: Իհարկե, բանկերն սկզբում ակցիաներ ծախ առնում եյին լոկ ժամանակավորապես, վոր հետո շահույթով վերավաճառեն: Վերջապես բանկերի հետ գործակցություն ունենալն անհրաժեշտ ե նոր ակցիոներական ձեռնարկությունների հիմնադիրներին, քանի վոր բանկերը սրանց ոգնում են հիմնադրային շահույթն իրացնելու: Արդյունաբերական ձեռնարկությունների առաջ գալուն ու կյանքին բանկերի կողմից այսպես մոտիկից մասնակցություն ունենալը շուտով այն հետևանքին ե հասցնում, վոր բանկերը բաժնետոմսերի ժամանակավոր իրակալ լինելուց դադարում չեն դառնում են մշտական իրակալ: Բանկերը դառնում են ամենաձեռնտու և ամրապինդ ձեռնարկությունների—յերկաթուղիների, տրամվայների, քարածխահանքերի, մետաղագործարանների ու նման բազմաթիվ ձեռնարկությունների խոշոր ակցիոներներ: Առևտրային բանկերն առաջ ձեռնարկություններին մեն-մենակ շրջանառու միջոցներ եյին մատակարարում: Հիմա նրանք հիմնական կապիտալ էլ են տալիս սրանց: Կարճատև վարկատրմանը միանում ե յերկարատև վարկատրումը: Բանկերի հաշվեկշիռների մեջ սկսում ե ավելի ու ավելի խոշոր դեր խաղալ այն շահույթը, վոր բանկերն ստանում են արդյունաբերական ու ամեն տեսակի այլ ձեռնարկություններին մասնակցելուց:

Բանկերի այս ձգտումը, վոր նպատակ ե դնում իր ձեռքն առնել արդյունաբերության վրա ունենալիք իշխանությունը, դիմադրության ե հանդիպում արդյունաբերության արքաների կողմից: Սրանք ձգտում են իրենց ձեռքն առնել բանկերի վրա ունենալիք իշխանությունը՝ բանկերի ակցիաները մեծացնելով ու սեփական բանկեր բանալով:

Հետևանքն այն ե լինում, վոր արդյունաբերական կապիտալի ու բանկային կապիտալի միջև յեղած սահմանը ջնջվում ե: Բանկային կապիտալը սերտաճվում ե արդյունաբերական կապիտալի հետ՝ հանդես գալով իբրև միասնական ֆինանսական կապիտալ, ընդ վորում քանի վոր գերակշռում ե ինչպես արդյունաբերության, այնպես և բանկերի ակցիոներական ձևն, ապա վերջ ի վերջո սրանց միացնող զոդ հանդիսանում ե հիմնադրային շահույթը:

Ֆինանսական կապիտալն սկսելով բաժնետիրացումից՝ անցնում ե մենաշնորհացման փուլով՝ հասցնելով արդյունաբերական ու բանկային կապիտալի սերտաճմանը:

Մենաշնորհացված արդյունաբերական կապիտալի՝ դարձյալ մենաշնորհացված բանկային կապիտալի հետ այսպես սերտաճվելը հանդիսանում ե կապիտալի մենաշնորհացման, ուրեմն և կապիտալի կենտրոնացման նոր ետապի ավարտաձև (завершительная форма):

Այսպես ուրեմն, ֆինանսական կապիտալ ասելով պետք ե հասկանալ մենաշնորհացված արդյունաբերական կապիտալի սերտաճումը նմանապես մենաշնորհացված բանկային կապիտալի հետ:

§ 116. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԸ.

Ֆինանսական կապիտալի առանձնահատուկ ծնունդ են այն ակցիոներական ընկերությունները, վորոնք առաջ են գալիս միմիայն այն նպատակով, վոր զանազան ձեռնարկություններ հիմնեն և իրենց կապիտալով յերկարատև մասնակցություն ունենան նրանց մեջ: Նման ընկերությունները հայտնի յեն այսպիսի անուններով. «**ձեռնարկություններին մասնակցելու համար հիմնված ընկերություններ**», «ձեռնարկությունները ֆինանսավորող ընկերություններ», «ձեռնարկությունների արժեթղթերի իրակալման (держание) ընկերություններ» և այլն: Այս շարքին են պատկանում հոլդինգ-տրեստներն էլ, վորոնց մասին խոսել ենք վերևում: Հոլդինգ—տրեստները չի կարելի դասել վոչ բանկերի ու վոչ էլ արդյունաբերական ձեռնարկությունների շարքում: Հոլդինգ—տրեստների նպատակն է տիրապետող լինել թե բանկերի ու թե արդյունաբերական ձեռնարկությունների գլխին:

«Մասնակցության» սիստեմը ձեռնարկությունների ու շահերի արտակարգ բարդ շղթայակցություն (сцепление) **է առաջ բերում:**

Բերենք «մասնակցությունների» սիստեմի մեկ կոնկրետ որինակ:

«Գերմանական բանկի» խումբն ամենախոշոր բանկային խմբերից մեկն է, յեթե չասենք մեծ բանկերի բոլոր խմբերից ամենախոշորն է: Այս խմբի բոլոր բանկերն իրար հետ շաղկապող գլխավոր թելերը հաշվի առնելու համար հարկավոր է տարբերել առաջին, յերկրորդ ու յերրորդ աստիճանի «մասնակցությունները» կամ վոր միևնույնն է, ավելի մանր բանկերի՝ «Գերմանական բանկից» ունեցած առաջին, յերկրորդ ու յերրորդ աստիճանի կախումը: Ստացվում է այսպիսի պատկեր.

	Առաջին աստիճանի կախումն	Յերկրորդ աստիճանի կախումն	Յերրորդ աստիճանի կախումն
«Գերմանական Բանկը» մասնակցում է Մշտապես	17 բանկի	որ. 9-ը 34 բանկի	որ. 4-ը 7 բանկի
Անորոշ ժաման	5 »	» — »	» —
Ժամանակ առ ժամանակ . . .	8 »	» 5-ը 14 »	որ. 2-ը 2 »
Ընդամենը	30 բանկի	որ. 14-ը 48 բանկի	որ. 6-ը 9 բանկի

«Առաջին աստիճանի կախումն» ունեցող 8 բանկի թվի մեջ մտնում է արտասահմանյան յերեք բանկ—մեկ ավստրիական բանկ (Վիեննայի «Բանկային Միությունը», «Bank Verein») ու յերկու ռուսական բանկ (Սիբիրի առևտրային բանկն ու Արտաքին առևտրի Ռուսական բանկը): Ընդամենը «Գերմանական բանկի» խմբի մեջ ուղղակի ու անուղղակի, ամբողջովին կամ թե մասամբ մտնում է 87 բանկ, իսկ իր սեփական կապիտալը և ուրիշներից ստացած այն կապիտալը, վոր տնօրինում է խումբը, հաշվվում է 2—3 միլիարդ մարկ» (Լենին):

Այսպիսի խառնահյուսման (сплетение) էլ ավելի ապշեցուցիչ որինակ է Էլեքտրականության Գերմանական ընդհանրական ընկերությունը: Այս ընկերությունն ունի մի վիթխարի ընտանիք»՝ «դուստրներից», «թոռներից» ու «ծոռներից» կազմված, և իբրև այսպիսիք ներկայանում են գործարանները, հանքարաններն ու բանկերը: Ընկերությունը $1\frac{1}{2}$ միլիարդ մարկանոց հիմնական կապիտալ ունենալով ընդհանուր առմամբ վերահսկում է 15 միլիարդանոց մի կապիտալի:

ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԿԱՊԻՏԱԼՆԵՐՆ ՈՒ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼՆԵՐԸ:

Ֆինանսական կապիտալի վճռական առանձնահատկություններից մեկը հենց այս է: **Խոշոր կապիտալի ազդեցությունը տասնապատկվում է: Հիմնադրային շահույթներով փարթամացած խոշոր կապիտալները դառնում են յուրատեսակ հրամկազմ, վորը հրամանատարություն է անում «շարքային» կապիտալների վիթխարի գումարների գլխին:** «Մայր» ընկերությունների անդեմ ձևերի յետևում թաքնվում են վորոշ անհատներ, վորոնք հարստություն են դիզում հիմնադրային, ռազմական ու ինֆլյացիոն հսկա շահույթների հաշվին,—այսպես է արդյունաբերության ստիննեսիզացիան Գերմանիայում, մորգանիզացիան Ամերիկայում: Ուստի և ֆինանսական կապիտալի դարաշրջանում **կապիտալիստների՝ հասարակության վրա ունեցած իշխանությունը փաստորեն վերածվում է խոշոր գիշատիչների մի փոքրիկ խմբակի իշխանության** (ֆինանսական օլիգարխիա): **Միյեվնույն անձինք նախագահում են յեվ վերատեսուչ են լինում արդյունաբերական ու բանկային ամենաբազմազան ձեռնարկություններում** (անձնական ունիա): Սրա ճըշտությանը կարելի յե համոզվել՝ վեր առնելով բորսային կամ թե ուրիշ վորևէ տեղեկատու, վոր պարունակում է խոշոր «բռունցքների» անունները: Իդեպ, շատ բան սլլում, խուսափում է և չի

մտնում այս տեղեկատուների մեջ, իսկ այս լինում է այն պատճառով, որ անձնական ունիան հաճախ իրականացնում են՝ ազգականների ու այլ տեղավորելի անձանց միջոցով։

ԲՈՐՍԱՆ։ Ինքնըստինքյան հասկանալի չե, վոր բորսան էլ է ընկնում **ֆինանսական օլիգարխիայի** ձեռքը։ Գլխից պետք է ասել, վոր ընդհանրապես բանկային ցանցի զարգացմանը զուգընթաց՝ ֆոնդային բորսաների գործերի նշանավոր մասն անցնում է բանկերին։ Բանկի միջոցով կարելի յե վոչ միայն արժեթղթեր գնել ու ծախել լրջորեն, այլ տարբերության չարաշահությամբ էլ պարապել (спекулировать на разнице)։ Հարյուրավոր բաժանմունքներ ունեցող ազդի բանկերի լայնածավալ կլիենտուրայի պայմաններում բանկն արժեթղթերի գնման ու վաճառքի հանձնարարություններ ստանալով՝ ամենևին պարտական չե այս բոլոր հանձնարարությունները բորսա տանելու։ Այն պահանջը, վոր առաջադրում են կլիենտներից վոմանք, բանկը գոցում է, բավարարում է մյուսների արած առաջարկով։ Մենակ մնացորդը հետո նոր տարվում է բորսա։

Բորսային չարաշահության մեծ մասն էլ փաստորեն ֆինանսավորում են բանկերը (տես վերևում ռեպորտի ու դեպորտի մասին գլուխ XV), կամ թե չե հիշյալ մասին ուղղությունն են տալիս խոշոր բանկերն ու սրանց միավորությունները։ **Այսպիսով ֆինանսական կապիտալի դարաշրջանում բորսան ֆոնդային շուկայի տարերային կարգավորիչը լինելուց դադարում յեվ դառնում է ֆինանսական օլիգարխիայի հլու գործիքը։**

§ 117. ԿՈՌՈՒՊՑԻԱՆ[1].

Սրա հետ միասին **վերասերվում է կապիտալիստական յերկրների կառավարական ապպարատը**։ Ֆինանսական օլիգարխիան կառավարական ապպարատին տիրում է յերկու տեսակ.

1. Նրա ներկայացուցիչները գրավում են մինիստրական պորտֆելներն ու նախագահական բազմոցները։ Այս արդեն ֆինանսական կապիտալի ու կառավարության անձնական ունիա յե։

2. Կաշառքի սիստեմը։ Կաշառվում են մինիստրները, պարլամենտների պատգամավորները, դեպարտամենտների վերատե-

[1] Քայքայումն։

սուչները, քաղաքային ինքնավարությունների ներկայացուցիչները[1]։

Այս յերկու հնարների շնորհիվ բուրժուական կառավարությունները կորցնում են իրենց նշանակությունն, իբրև ամբողջ բուրժուազիայի դասակարգի խնամակալներ և **դառնում են ֆինանսական կապիտալի խոշոր ներկայացուցիչների հլու փոքրավորներ**։ Ֆինանսական կապիտալի խոշոր ներկայացուցիչների համար այլ ևս վոչինչ չի մնում արգելված։ Իրենց անսահման իշխանությունը նրանք առաջին հերթին գործադրում են բանվորական շարժումը ճնշելու և հարկերի ծանրությունն աշխատավորների մասսաների վրա ձգելու համար, այլ և ձեռնտու կոնցեսիաներ (յերկաթուղիներ անցկացնելու, տրամվայներ շինելու, յերկրի ընդերքը շահագործելու կոնցեսսիաներ) ստանալու համար, վերջապես **սահմանելու համար արգելիչ մաքսեր**, վորոնք անհրաժեշտ են ներքին շուկայում նրանց մենաշնորհյալ դիրքը պահպանելու տեսակետից և այլն։ Բայց վոր էլ ավելի կարևոր է, նրանք իրենց իշխանությունից ոգտվում են այն նպատակով, **վոր յերկրի ամբողջ արտաքին քաղաքականությունը հարմարեցնեն իրենց անձնական շահերին**։ Նրանք հարկադրում են, վոր բանվորներից ու գյուղացիներից կազմված բանակներն իրենց արյունը թափեն այն նպատակով, վոր նրանց համար ապահովված լինի գաղութների անարգել շահագործումը։ Այս մասին ավելի մանրամասնորեն խոսելու յենք հաջորդ գլխում։

ՄԱՄՈՒԼԸ։ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ։ **Ֆինանսական օլիգարխիան միաժամանակ իր ձեռքն է առնում մամուլն էլ**։ Խոշոր լրագիր հրատարակելը մեր ժամանակ ինքնըստինքյան խոշոր ձեռնարկություն է։ Ֆինանսական արքաները տասնյակ ու տասնյակ լրագրեր են հրատարակում կամ թե ֆինանսավորում նրանց։ Սրանով հենց նրանք իշխանություն են ձեռք բերում հանրային կարծիքի վրա, վորը մշակում, փոխում են այնպես, ինչպես ձեռնտու յե իրենց։ Պայծառ ու ճշգրիտ պատկերն այն այլանդակությունների, վոր գործում է ֆինանսական օլիգարխիայից կաշառված կամ թե նրա պահած ամերիկյան մամուլն, ընթերցողը կգտնե Սինկլերի «Պղնձե դրոշմանիշ» վերնագրով գրքում։

[1] Իբրև օրինակ կարող է ծառայել աղմուկ հանած պատմությունը այն կաշառքների, վոր Ամերիկայի մինիստր Գարդինգը վերցրել էր նավթի կոնցեսսիաներ հաջողեցնելու համար։

**Նույնն է կատարվում գիտության գործիչների վերաբեր-
մամբ էլ։** Զուր չէ, վոր ամերիկյան հարուստներն այնպիսի խո-
շոր գումարներ են նվիրաբերում համալսարաններ պահելու հա-
մար։ Այս հնարավորություն է տալիս, վոր նրանք իշխեն համա-
լսարաններում աշխատող գիտնականների վրա։ Հենց վոր սրանք
այնպիսի յեզրակացությունների յեն հանգում, վորոնք ձեռնտու
չեն խոշոր կապիտալիստներին, հիշյալ գիտնականներից խոնարհ
լություն են պահանջում։ Անհնազանդության դեպքում նրանց
արտաքսում են։ Այսպիսի վիճակն են ունեցել պրոֆեսորներ Ռոս-
սը, Խովորտը, Անդրյուսսին ու մի շարք ուրիշները։

Յերբ մամուլը մի կողմից ու գիտությունը մյուս կողմից
ամեն ինչ, վոր հնարավոր է, անում են իսկական դրությունը
կոծկելու համար, ապա զարմանալի չէ, վոր ֆինանսական կապի-
տալի իշխանությունը մի տեսակ վարագուրված է մնում։ Միայն
Լենինի ուսմունքն էր, վոր ֆինանսական ոլիգարխիայի յերեսից
պոկեց նրա դիմակը։ Յեվ հենց այս պատճառով է, վոր բուրժուա-
զիայի կառավարող վերնախավն այնպես ատում և հալածում է
Լենինի ուսմունքը։

§ 118. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅՆԱՑՈՒՄԸ.

**Ֆինանսական կապիտալն իբրեվ կապիտալի կենտրոնացման
բարձրագույն ձեվ միաժամանակ նայեվ կապիտալիզմի վերջին
քայլն է դեպի արտադրության հանրայնացման կողմը։** Յեվ
հենց այստեղ է հատկապես, վոր ամենից պայծառ հանդես է գա-
լիս այն հակասությունը, վոր կա մի կողմից՝ տեխնիկական ու
կազմակերպչական հանրայնացման և մյուս կողմից՝ արտադրա-
կան հարաբերությունների միջև։

**Կապիտալիզմի հոգին, այն է, արտադրության միջոցների
մասնավոր սեփականությունն անձեռնմխելի յե մնում։** Կապի-
տալիստի տեսակետից միևնույն կարգի յերևույթներ են թե այն
իշխանությունը, վոր ունի փայտահատը իր կացնի վրա, ու թե
այն իշխանությունը, վոր ունի Ստիննեսը, գերմանացի միլիար-
դատերը քարածխահանքերի, յերկաթուղիների, մետաղագործա-
րանների ու այլ և այլ ձեռնարկությունների վրա։

Ալֆրեդ Կրուպպը մի կոչի մեջ, վոր ուղղել է իր պողպա-
տաձուլական գործարանի բանվորներին, ասում է.

«Վոչ մի բան, վոչ մի պատահար ինձ չի հարկադրի մի բա-

նում զիջողություն անելու իմ կամքի հակառակ։ Առաջվա նման,
անփոփոխ ընդունված բարեհաճ ընթացքով գործարանի վարչու-
թյունը կառավարելու չե իմ սկզբունքների վոգով և այս անելու
չե իմ հաշվին այնքան ժամանակ, քանի չես կտեսնեմ, վոր բան-
վորներն առաջվա պես փորձված հավատարմություն ունեն իբրև
անձինք, վորոնք մտնում են ձեռնարկության կազմի մեջ... Յես
ուզում եմ իմ տանն, ինչպես և իմ հողի վրա տեր ու տիրական
լինել ու այսպիսին էլ մնալ»։

Մասնավոր սեփականությունը հակասական է ինքնըստին-
քյան։ Մասնավոր սեփականությունը ձգտում է անջատել այն,
ինչ վոր անանջատելի չէ։ Հանրային հարստության վերարտա-
դրության մեխանիզմը միաձույլ է։ Իսկ մասնավոր սեփականու-
թյունն այս մեխանիզմի առանձին անիվներն ու պտուտակները
տալիս է զանազան մեքենավարների ձեռքը, վորոնցից ամեն
մեկը գործում է մյուսներից անկախ ու մյուսներին հակառակ։
Վորքան մեծ է լինում արտադրության թափը, վորքան լայն են
լինում տեխնիկական հնարավորությունները, այնքան ավելի սուր
են յերևան գալիս մասնավոր սեփականության հակասություն-
ները, այնքան ավելի յե սաստկանում տեխնիկայի ու արտադրա-
կան հարաբերությունների բաղխումը։

Բաժնետիրացումը, վորի ծնունդն է լինում սկզբում կապի-
տալի դիմազրկվելը, ֆինանսական կապիտալի դարաշրջանում
բոլորովին հակառակ հետևանքներ է տալիս։

«Պետությունը յես եմ»,—ասում էր Ֆրանսիայի թագավոր
Լյուդովիկոս XIV-ը։ «Հարյուր միլիոն բնակչություն ունեցող Մի-
ացյալ Նահանգների տնտեսությունը մենք ենք»,—կարող են ա-
սել Ամերիկայի 93 խոշոր կապիտալիստներ՝ գլուխ ունենալով
Ռոկֆելլերին ու Մորգանին։ Յեվ այս միքանի տասնյակ մարդ-
կանց, վորոնք իրենց համարում են հասարակության կյանքի բո-
լոր աղբյուրների սեփականատեր, վոչ միայն չեն նստացնում
գժանոց, այլ, ընդհակառակը, նրանց իրական հնարավորություն
են տալիս տնօրինել այս բոլոր հարստություններն այնպես, ինչ-
պես այս ձեռնտու յե իրենց և վոչ թե հասարակությանը։

Նույնն է կատարվում գիտության գործիչների վերաբերմամբ էլ։ Զուր չէ, որ ամերիկյան հարուստներն այնպիսի խոշոր գումարներ են նվիրաբերում համալսարանները պահելու համար։ Այս հնարավորությունն է տալիս, որ նրանք իշխեն համալսարաններում աշխատող գիտնականների վրա։ Հենց որ սրանք այնպիսի չեզրակացությունների չեն հանգում, որոնք ձեռնտու չեն խոշոր կապիտալիստներին, հիշյալ գիտնականներից խոնարհ լռություն են պահանջում։ Անհնազանդության դեպքում նրանց արտաքսում են։ Այսպիսի վիճակն են ունեցել պրոֆեսորներ Ռոսսը, Խովորտը, Անդրյուսսին ու մի շարք ուրիշները։

Յերբ մամուլը մի կողմից ու գիտությունը մյուս կողմից ամեն ինչ, որ հնարավոր է, անում են իսկական դրությունը կոծկելու համար, ապա զարմանալի չէ, որ ֆինանսական կապիտալի իշխանությունը մի տեսակ վարագուրված է մնում։ Միայն Լենինի ուսմունքն եր, որ ֆինանսական oligarchիայի չերեսից պոկեց նրա դիմակը։ Յեվ հենց այս պատճառով է, որ բուրժուազիայի կառավարող վերնախավն այնպես ատում և հալածում է Լենինի ուսմունքը։

§ 118. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄՐԱՅՆԱՑՈՒՄԸ.

Քիճացնական կապիտալը իբրեվ կապիտալի կենտրոնացման բարձրագույն ձեվ միաժամանակ ցույեվ կապիտալիզմի վերջին բայլն է դեպի արտադրության հասրայնացման կողմը։ Յեվ հենց այստեղ է հատկապես, որ ամենից պայծառ հանդես է գալիս այն հակասությունը, որ կա մի կողմից՝ տեխնիկական ու կազմակերպչական հանրայնացման և մյուս կողմից՝ արտադրական հարաբերությունների միջև։

Կապիտալիզմի հոգին, այն է, արտադրության միջոցների մասնավոր սեփականությունն անձեռնմխելի չէ մնում։ կապիտալիստի տեսակետից միևնույն կարգի չերևույթներ են թե այն իշխանությունը, որ ունի փայտահատը իր կացնի վրա, ու թե այն իշխանությունը, որ ունի Սաինսները, գերմանացի միլիարդատերը քարածխահանքերի, չերկաթուղիների, մետաղագործարանների ու այլ և այլ ձեռնարկությունների վրա։

Ալֆրեդ Կրուպը մի կոչի մեջ, որ ուղղել է իր պողպատաձուլական գործարանի բանվորներին, ասում է.

«Վոչ մի բան, վոչ մի պատահար ինձ չի հարկադրի մի բա-

նում զիջողություն անելու իմ կամքի հակառակ։ Առաջվա նման, անփոփոխ ընդունված բարեհաճ ընթացքով գործարանի վարչությունը կառավարելու չե իմ սկզբունքների վոգով և այս անելու չե իմ հաշվին այնքան ժամանակ, քանի չես կտեսնեմ, որ բանվորներն առաջվա պես փորձված հավատարմություն ունեն իրբև անձինք, որոնք մտնում են ձեռնարկության կազմի մեջ... Յես ուզում եմ իմ տանն, ինչպես և իմ հողի վրա տեր ու տիրական լինել ու այսպիսին էլ մնալ»։

Մասնավոր սեփականությունը հակասական է ինքնըստինքյան։ Մասնավոր սեփականությունը ձգտում է անջատել այն, ինչ վոր անանջատելի չե։ Հանրային հարստության վերարտադրության մեխանիզմը միաձույլ է։ Իսկ մասնավոր սեփականությունն այս մեխանիզմի առանձին անիվներն ու պտուտակները տալիս է զանազան մեքենավարների ձեռքը, վորոնցից ամեն մեկը գործում է մյուսներից անկախ ու մյուսներին հակառակ։ Վորքան մեծ է լինում արտադրության թափը, վորքան լայն են լինում տեխնիկական հնարավորությունները, այնքան ավելի սուր են չերևան գալիս մասնավոր սեփականության հակասությունները, այնքան ավելի չե սաստկանում տեխնիկայի ու արտադրական հարաբերությունների բաղխումը։

Բաժնետիրացումը, վորի ծնունդն է լինում սկզբում կապիտալի գիմազրկվելը, ֆինանսական կապիտալի դարաշրջանում բոլորովին հակառակ հետևանքներ է տալիս։

«Պետությունը չես եմ»,—ասում եր Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ը։ «Հարյուր միլիոն բնակչություն ունեցող Միացյալ Նահանգների անհետությունը մենք ենք»,—կարող են ասել Ամերիկայի 93 խոշոր կապիտալիստներ՝ գլուխ ունենալով Ռոկֆելլերին ու Մորգանին։ Յեվ այս մի քանի տասնյակ մարդկանց, վորոնք իրենց համարում են հասարակության կյանքի բոլոր աղբյուրների սեփականատեր, վոչ միայն չեն նստացնում գժանոց, այլ, ընդհակառակը, նրանց իրական հնարավորություն են տալիս տնօրինել այս բոլոր հարստություններն այնպես, ինչպես այս ձեռնտու չե իրենց և վոչ թե հասարակությանը։

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

§ 119. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.

ՏԵՂԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ։

Մի քանի դեպքերում ապրանքն այն ճանապարհին, որ կտրում, անցնում է արտադրողից մինչև սպառողին հասնելը, միևնույն քաղաքի, միևնույն տեղի կամ ռայոնի սահմաններից դուրս չի գալիս։ Ապրանքաշրջանառությունը քաղաքը շաղկապում է շրջապատի գյուղերի կամ թե հարևան քաղաքների հետ։ Նշանակում է՝ ապրանքն արտադրվում է տեղական շուկայի համար։

ԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՆ։

Բայց շատ դեպքերում բանն ուրիշ կերպ է լինում։ Կուբանի շրջանի ցորենի, Մոսկվայի գրծարանային ռայոնի չթի ու բումազեյալի, Դոնեցի ավազանի ածխի ու մետաղների մեծ մասն այն ռայոնները չեն սպառում ամենևին, որտեղ նրանք արտադրվում են և արդյունահանվում։ **Առանձին ռայոնների միջև աշխատանքի բաժանում գոյություն ունի։** Աշխատանքի այս բաժանումն առաջին հերթին հիմնվում է պայմանների, հողի ու կլիմայի տարբերությունների վրա։ Մոսկվան բամբակի համար պետք է դիմի Թուրքեստանին, ցորենի համար՝ սևահողի շրջանի նահանգներին, որովհետև Մոսկվայի մոտերքում բամբակ մշակել ամենևին չի կարելի, իսկ ցորենն էլ լավ չի բուսնում։ Լենինգրադը պետք է ոգովի հեռուներից բերվող քարածխից, քանի որ մոտերքում քարածխահանքեր չկան։ Ռայոնների միջև յեղած աշխատանքի բաժանումը յերբեմն հիմնված է լինում տեխնիկական զարգացման աստիճանի տարբերությունների վրա։ Պատմական վորոշ պատճառների շնորհիվ Մոսկվայի ռայոնում կան բազմաթիվ մանագործարաններ (прядильная фабрика) ու մանածագործարաններ (ткацкая фабрика), կա վարժված բանվորների հիմնակազմ էլ։ Ուրիշ ռայոնները, վորտեղ արտադրական այսպիսի պայմանները չկան, հարկադրված են Մոսկվայի ռայոնից առնելու չիթը, բումազեյան և ուրիշ գործվածքներն՝ իրենց արտադրած արդյունքների հետ փոխանակելով։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՆ։

Վերևում մեջ բերած որինակներում փոխանակությունը կատարվում է ազգային տնտեսության մասշտաբով։ Ազգային տնտեսությունն իրարուց անջատված են քաղաքական սահմաններով։ Բայց վերջիններս չեն կարող վերացնել այն ռայոնների տնտեսական փոխադարձ ձգողությունը, վորոնք զատված են հիշյալ սահմաններով։ Անգլիայի ու Խորհրդային Ռուսաստանի միջև յեղած վոչ մի թշնամություն չի կարող վերացնել մի կողմից ռուսական ցորենի ու վուշի և մյուս կողմից անգլիական մեքենաների փոխադարձ ձգողությունը։

ՔԱՂԱՔՆ ՈՒ ԳՅՈՒՂԸ։

Տեղական շուկան ամենից առաջ շաղկապում է քաղաքն ու գյուղը։ Քաղաքը գյուղից ստանում է գյուղատնտեսական արդյունքներ—հաց, բանջարեղեն, միս, կաթ, մեղր, բուրդ, վուշ, կանեփի թել, խոզի մազ և փոխարենը տալիս է մշակող արդյունաբերության արտադրանքներ—չիթ, կոշիկներ, հողագործական գործիքներ ու հեռուներից բերվող արդյունքներ—աղ, նավթ և այլն։ Բայց շենապոցների՝ քաղաքի ու գյուղի բաժանվելը նշանակություն ունի վոչ միայն տեղական, այլ և ազգային մասշտաբով։ Ի՞նչ է, որ նակ, այն կապը, վոր կա մի կողմից մեր կենտրոնական արդյունաբերական ռայոնի ու մյուս կողմից՝ սևահողի նահանգների միջև, բայց չեթե մի կապ, վոր կա արդյունաբերության ու գյուղատնտեսության միջև, այսինքն քաղաքի ու գյուղի միջև։ Նույն այս բանը ճիշտ և համաշխարհային տնտեսության մասշտաբով էլ։ Մի կողմում կանգնած են տիպիկ արդյունաբերական յերկրները—Անգլիան, Գերմանիան, Բելգիան, մյուս կողմում գյուղատնտեսական յերկրները—Կանադան, Արգենտինան, Հնդկաստանը։ (Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները տիպ են մի այնպիսի յերկրի, վորտեղ արդյունաբերության զարգացումը շատ թե քիչ համաչափ է։ Այստեղ լայն զարգացման են հասել թե արդյունաբերությունն ու թե գյուղատնտեսությունը։ Մասամբ այսպիսի պատկեր գոյություն ունի Ֆրանսիայում էլ)։ Փոխադարձ փոխանակությունը յերկու կողմի համար էլ կյանքի հարց է։ Յեվրոպան, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու Ճապոնիան վորոշ չափով կանգնած են յերկրագնդի ճնշյալ մասի

*դեմ ու դեմ — ասիական մայր ցամաքի, Աֆրիկայի, Ավստրալիայի, Հարավային Ամերիկայի դիմաց։ Մի կողմում՝ բարձր զարգացման հասած տեխնիկան և պլյուս հումքի աղբյուրների նշանավոր մասը, մյուս կողմում՝ գլխավորապես հումքն է, բայց այնպիսի հումքն, առանց որի ապրել չեն կարող բարձր տեխնիկա ունեցող յերկրները, և այս հումքն է՝ հանքանյութը, նավթը, բամբակը, ջուտը (*ДЖУТ*), կաուչուկը, շաքարեղեգնը, սուրճը, կակաոն, թեյն ու ամեն տեսակի համեմունքը։*

*Այսպիսով ազգային տնտեսությունները համաշխարհային տնտեսության մասն են միայն։ Մոսկվայի մանածագործարանները մշակման են յենթարկում ոչ միայն Թուրքեստանի, այլ և Յեգիպտոսի բամբակը, Ռուսաց հնձիչ մեքենաները խուրձ են կապում ամերիկյան կանեփաթելով (*ШПАГАТ*)։ Չինական դերձակը կար է անում ամերիկյան կարամեքենայով։ Յեվրոպական սննդագործարանները մշակում, պատրաստում են այն կակաոն, սուրճն ու համեմունքը, որ բերված են լինում արևադարձային յերկրներից։ Յեվ տնտեսական այս միասնական սիստեմը կտրատված, տրոհված է առանձին փոքրիկ կտորների։*

ԿԱՊԻՏԱԼԻԶՄՆ ՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ։

Այն ցանկապատերը, որոնց ներսում են հասունացել ազգային առանձին տնտեսությունները, այն է՝ առանձին պետությունների միջև յեղած սահմանները ժամանակ առ ժամանակ տեղաշարժվում են, փոխվում են տեղից տեղ, բայց կապիտալիզմի պայմաններում համառորեն մնում են յեվ չեն չքանում։

ԱՐԴՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՐԵՔ ԿԻՏԸ — ՄԵՏԱՂՆ, ԱԾՈՒԽԸ, ՆԱՎԹԸ։

Որքան ավելի յե զարգանում տեխնիկան, այնքան ավելի յե իրական դառնում համաշխարհային տնտեսության միասնականությունը։ *Մեքենաշինությունը, յերկաթուղային ու ծովային տրանսպորտը, յերկաթի ու ածխի հարցը դարձնում են արդյունաբերության ամենից եյական հարց։ Ներքին այրման շարժիչը թե արդյունաբերության, թե ծովային տրանսպորտի, թե յերկաթուղիների մեջ (ջերմատար), թե ավտոմոբիլային տրանսպորտի ու թե օդագնացության մեջ ավելացնում է յերրորդ կիտի—նավթի կշիռը [1]։ Բայց ընությունը յերկաթի հանքանյութն, ածուխն ու նավթը բաշխել է յերկրագնդիս յերեսովը մեկ՝ առանց*

[1] Շոգեմեքենաներն ել մեծ չափով անցել են նավթ ու նավթային մնացորդներ վառելուն։

ամենևին հաշվի առնելու քաղաքական սահմանները։ Այն սահմանը, որ կա Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև, Լոտարինգիայի յերկաթի հանքանյութը բաժանում եր Սաարի ավազանի ածխից։ Ռումինիայի սահմանները ռումինական նավթը բաժանել եյին ավստրիական ու գերմանական ներքին այրման շարժիչներից ճիշտ այնպես, ինչպես Ոտտոմանյան (տաճկական) կայսրության սահմանները Միջագետքի նավթային հարստությունները բաժանել եյին Բրիտանական ազդեցության ոլորտից։

Ահա թե ինչն է պատճառը, որ, XIX դարի վերջին քառորդից սկսած, **միջազգային ու մանավանդ գաղութային քաղաքականության գլխավոր շարժիչները դարձել են մետաղի, ածխի ու նավթի հարցերը։**

§ 120. ՊՐՈՏԵԿՑԻՈՆԻԶՄԸ.

Կապիտալիզմը չի կարող վերացնել ազգային տնտեսությունների միջև յեղած պատնեշները։ Իսկ այս պատնեշներն ամենասուր կերպով հակասում են առանձին յերկրների տնտեսական կապին, համաշխարհային տնտեսության միասնականությանը։

Շահագործման պայմաններում ընդհանրապես ու կապիտալիզմի պայմաններում առանձնապես՝ **մեկ յերկրի՝ մյուս յերկրից ունեցած տնտեսական կախման հետևանքը լինում է** *ոչ թե ժողովուրդների խաղաղ գործակցությունն, այլ* **ամենակատաղի կռիվը նրանց միջև։** *Կապիտալիզմի միջազգային քաղաքականությունը բոլորի պատերազմն է ամենքի դեմ։ Բացահայտ պատերազմների համեմատաբար կարճատև ժամանակաշրջանները լոկ ավարտում, գլխավորում են քողարկված պատերազմների ու թաքուն դարանակալության ժամանակաշրջանները։ Պատերազմի դեպքում ամեն մի պետության սպառնում է տնտեսական շրջափակումն [1], ամբողջ աշխարհից տնտեսապես կտրվելը, մի դրություն, որի ժամանակ այն յերկիրը կարող է հույս դնել մենակ իր ուժերի վրա։*

Զուտ տնտեսական կշռադատությունները պահանջում են, որ յուրաքանչյուր յերկրի արտադրություն, նայած այն յերկրի բնական պայմաններին, ըստ կարելվույն ավելի նեղ մասնագիտացման յենթարկվի։ Բայց պատերազմի ու շրջափակման դեպքում

[1] Շրջափակման ժամանակ պետությունն ամբողջովին մի տեսակ դառնում է պաշարված բերդ։ Թշնամին աշխատում է վերջ տալ ամեն մի ներմուծման ու արտածման։ Իր ժամանակին այսպես շրջափակվել եր ԽՍՀՄ ել։

արտադրության «միակողմությունը» (однобокость) կարող է յերկիրն անվտանգի կացության մեջ դնել։ Ուստի և նույն տնտեսական նպատակները, բայց արդեն կապիտալիստական հակասական ձևով, պահանջում են, որ ամեն մի յերկիր, ըստ հնարավորության, ավելի ինքնուրույն լինի։ Յուրաքանչյուր յերկիր աշխատում է իր ներսում «պատվաստել» արտադրության այն ճյուղերը, որ ինքը չունի։

Այսպիսի «պատվաստումները» կոռսաբեր մրցումից պաշտպանելու համար կապիտալիստները ստիպում են, որ իրենց գաղափարական ուրգանը—պետությունը—սահմանած մաքսեր դնի ոտար ներմուծման ապրանքների վրա։ Սահմանափակի արգելաձողի—մաքսատան գլխավոր նպատակը վոչ թե պետությանը հասույթ տալն է (գանձահասույթային մաքսեր—фискальные пошлины), այլ յեռմից ու մրցման անընդունակ ձեռնարկությունները պաշտպանելն է (հովանավորական մաքսեր)։ **Այսեղից եկ առաջ է գալիս պրոտեկցիոնիզմի սիստեմը, այսինքն համապատասխան մաքսային բաղաքականությամբ հայրենի արդյունաբերությունը պաշտպանելու սիստեմը։** Քանի հայրենի արդյունաբերությունը դեռ մանուկ ու թույլ է, այն չի կարող գոյությունը պահպանել առանց «կրծիչ» մաքսերի։ Յերբ արդյունաբերությունը պնդանում է, ուժեղանում, այն արդեն չի կամենում հրաժարվել մաքսերից, վորոնք մեծացնում են նրա շահույթը։ Մաքսատներն ավելի յեն մեկ յերկիր անջատում մյուսից, քան անջրպի անապատներն ու անանցանելի լեռնաշղթաները։

ՓՐԻՏՐԵԴՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ։

XIX դարի առաջին կիսին Անգլիան հանդես է գալիս **Ֆրիտրեդերության** քարոզով, այսինքն մաքսատները վերացնելու, առեվտրի ազատության քարոզով։ Բայց չպետք է կարծել, թե այս հարցում Անգլիան ղեկավարվում եր համաշխարհային տնտեսության շահերով։ Արգելափակումների ժամանակ ամենից առաջ վոչ թե նրան է դիպչում, ով արգելափակում է, այլ նրան, ում առաջ վոր մուտքը փակում են։ Անգլիան, այն ժամանակվա ամենից առաջավոր արդյունաբերական յերկիրը, պատճառ չուներ այն ժամանակներում վոչ վոքի մրցումից վախենալու։ Ընդհակառակը, բոլորը նրա մրցումից եյին վախենում և այս պատճառով եյ սահմանները փակում եյին նրա ապրանքների առաջ։ Մյուս կողմից, գյուղատնտեսական արդյունքների ներմուծման մաքսերի դեմ, վորոնք գոյություն ունեյին Անգլիայում, ծառանում եյին կապիտալիստները։ Հայտ

թանգությունը հարստացնում եր ազնվական կալվածատերերին, բայց պակասեցնում եր կապիտալիստների շահույթը, վորոնք կամ թե ակամա ստիպված եյին լինում վճարել իրենց ձեռնարկությունների աշխատող բանվորների սպառած առաջին անհրաժեշտության առարկաների գները։ Անգլիան իր յերկրում վերցրեց հացի մաքսերը և ընդամին աշխատում եր, վոր մյուս յերկրներում եյ վերացնեն կամ թե պակասեցնեն Անգլիայի ապրանքների վրա դրած մաքսերը։

ՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՐԱԿԱՆ ՊՐՈՏԵԿՑԻՈՆԻԶՄԸ։

Բայց XIX դարի 70-ական թվականներից սկսած Քրիստեզերության ֆարոզը թուլանում, սքսկվում է։ Պրոտեկցիոնիզմն եյլի սկսեց ուժեղանալ։ Արդյունաբերության մենաշնորհացումը, վոր առնձնապես սաստիկ զարգացավ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում ու Գերմանիայում, բազմաթիվ ճյուղերից վերացրեց այն մրցումը, վոր լինում եր միևնույն յերկրի ձեռնարկությունների միջև։ Միապետելով ներքին շուկայում՝ սինդիկատներն ու տրեստները մենաշնորհային գներ են սահմանում իրենց արդյունքների համար։ Ինչպես արդեն մենք տեսանք վերևում, նրանք այն պրոդուկցիան, վորը թանգության պատճառով չի վաճառահանվում յերկրի ներսում, գերադասում են արտածել արտասահման ու ծախել դեն գցելու (դեմպինգյան) գներով, միայն թե յերկրի ներսում չտապալեն մենաշնորհային գները։ **Բայց մենաշնորհային գները ահեղ ահեղ բան են, յեթե չունեն համապատասխան մաքսային բաղաքականություն։ Արդյունաբերության մենաշնորհացման աճելուց մենք ուղեկցում ենք մենաշնորհացման աճումը։**

Մենաշնորհացումը ներքին շուկայում բարձր գներ պաշտպանելու գործիք լինելուց դադարում և դառնում է համաշխարհային շուկայում մրցելու գործիք։ Վորքան բարձր լինեն գները ներքին շուկայում, այնքան ավելի եժան գնով կարելի յե ծախել արտասահմանում։ Արտածվող ապրանքները կարելի յե արդեն եժանացնել վոչ միայն տեխնիկան բարելավելու հաշվին, այլ և ներքին գնորդի հաշվին։

XIX դարի առաջին կիսի ֆրիտրեդերական հոսանքները միմիայն մեկ կարճատև դադար եյին, վորից հետո պրոտեկցիոնիզմն ավելի ու ավելի յե ուժեղանում։ Կապիտալիզմն ու առանձին յերկրների միջև յեղած մաքսային արգելաձողերն, ընդհանրապես ու ամբողջովին առած, իրարից անբաժանելի յեն։ Կապի-

տալիզմը մեկ ձեռքով ստեղծում է տնտեսական թելեր, որոնք առանձին յերկրները շաղկապում յեվ դարձնում են համաշխարհային տնտեսության ընդհանուր սիստեմ, իսկ մյուս ձեռքով կտրատում է այս թելերը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ:

Ֆինանսական կապիտալի դարաշրջանը համաշխարհային տնտեսության յերկունքի ճիգերի դարաշրջանն է: Համաշխարհային տնտեսության լիակատար միասնականության տեխնիքական նախադրյալներն արդեն կան: Այնինչ միասնական համաշխարհային տնտեսության կազմակերպությունը փոխանակության հակասությունների հետևանքով վեր է փոխանակային հասարակության ուժերից: Կարտելացման պրոցեսը, որչափով այն հասցրած է իր ավարտին (միասնական կարտել), ոչ թե քչացնում է, այլ շատացնում է ճգնաժամերի հնարավորությունը, որովհետև ճգնաժամերի բոլոր պատճառները շարունակում են գոյություն ունենալ ել ավելի խոշորացած մասշտաբով: Յեվ իրոք, ֆինանսական կապիտալի դարաշրջանում **համաշխարհային ճգնաժամերի միջեվ յեղած ժամանակամիջոցները** չեն մեծանում, այլ կրճատվում են արտադրության թափի ու շուկայի սահմանափակ տարողության միջև յեղած հակասությունը սրվում է այնքան, որ ել ասել չի լինի: Ապրանքների իրացումն ավելի ու ավելի դժվարանում է: Գաղութների ու կիսագաղութների դերն անչափ մեծանում է:

§ 121. ԳԱՂՈՒԹՆԵՐԸ.

Յերկրագնդի տարբեր յերկրները տնտեսական զարգացման տեսակետից ամենախայտաբղետ պատկեր են ներկայացնում: Յեվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի, Ճապոնիայի ու մասամբ ել Ավստրալիայի առաջավոր տեխնիկայի ու խիստ հասուն կապիտալիզմի կողքին մենք տեսնում ենք տեխնիկորեն ու տնտեսապես յետամնաց Ասիան ու Հարավային Աֆրիկան և տնտեսական նախադարյան վիճակից դեռ դուրս չեկած Աֆրիկան[1] ու Հարավային ովկիանոսի կղզիները:

Առաջավոր յերկրները շահագործում են յետամնաց աշխարհներն ամենից անպատկառ կերպով: Յետամնաց յերկիրը **գաղութ** է կոչվում այն յերկրի նկատմամբ, որը նրան ստրկացրել և շահագործում է:

[1] Բացի հյուսիսային ու հարավային ծայրամասերից:

Առանձին պետությունների գաղութային տիրապետությունները պատերազմից հետո.

	Տարածությունը հազար քառակուսի կիլոմետրով	Բնակչությունը հազարներով
1. Բրիտանական կայսրություն . . .	34,507,2	406,023
2. Ֆրանսիա	12,096,6	59,698
3. Բելգիա	2,406,1	7,530
4. Պորթուգալիա	2,425,2	8,840
5. Հոլանդիա	2,020,9	45,519
6. Իտալիա	1,595,4	1,476
7. Իսպանիա	340,5	1,234
8. Դանիա	89,5	35
9. Հյուս. Ամեր. Միաց. Նահանգներ . .	402,3	14,934
10. Ճապոնիա	298,7	24,357

Ինչպես տեսել ենք սկզբնական կուտակմանը նվիրված հոդվածում, գաղութների շահագործումը կապիտալիզմի զարգացման ամենակարևոր հիմքերից մեկն է յեղել:

Սկզբում եվրոպացիք գաղութային բոլոր արդյունքների մեջ ամենից ավելի գնահատում եյին համեմունքը[1], մարգարիտն ու ոսկին: Բայց բանից դուրս յեկավ, որ կապիտալիզմի համար ամենակարևոր գաղութային արտադրանքը... նեգր ստրուկներն եյին ու բամբակը: Առանց բամբակի անհնարին կլիներ մանածագործական արդյունաբերության ծաղկումը, որից սկսվեց արդյունաբերական կապիտալիզմի ծաղկումն ընդհանրապես: Սկզբնական շրջանում առանց նեգր ստրուկների անհնարին եր բամբակ հայթայթելը:

Գաղութները բամբակից զատ **տալիս են մեծաքանակ** ուրիշ **հումքեր** ել—մետաղներ, ածուխ, նավթ, շաքարեղեգն, արևադարձային պտուղներ, կաուչուկ, փղոսկր: Գաղութների շահագործման արդի մեթոդները միայն շատ քիչ բանով են տարբերվում այն մեթոդներից, որ գործադրվում եյին սրանից 400 տարի առաջ: **Բնիկների վրա ծանր նվաճահարկ** (дань) **են դնում** կամ թե նրանց բռնի ստիպում են աշխատելու պլանտացիաներում,

[1] Պղպեղը, մուսկատը, կոճապղպեղը (իմբիրը) և այլն:

ֆաբրիկաներում ու գործարաններում, ընդ վորում նրանց հետ վարվում են, ինչպես անասունների հետ։

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ։

Բելգիան Կոնգոյի վրա (Աֆրիկա) ունեցած իր քսանամյա տիրապետության ընթացքում տեղացի բնակչությունը յերկպատիկ պակասեցրեց։ Բնիկների վրա դրվում եյին կաուչուկով՝ փղոսկրով ու նման բաներով վճարելի հարկեր։ Ապառքապանների (НЕДОИМЩИК) դեմ ուղարկվում եյին զինվորական արշավախմբեր, վորոնք վոչնչացնում եյին ամբողջ գյուղեր։ Արշավախմբերն իբրև ապացույց, թե հանձնարարությունը կատարել են, բերում եյին սպանվածների ձեռներն ու մարմնի այլ մասերը։ Աֆրիկական գաղութներում ֆրանսիական ադմինիստրատորները վորևե չնչին հանցանք գործած նեգրերի տակ փամփուշտներ եյին դնում և պայթեցնելով ողը ցնդեցնում, իսկ վոմանց ել հարկադրում եյին, վոր նրանց սպանված ցեղակիցների կանգերից պատրաստած արգանակ (բուլյոն) խմեն։ Բնապարտությունների (натуральная повинность) անկանոն ու անճիշտ կատարման համար ֆրանսիացիները բռնում եյին թերացած գյուղերի կանանց ու մանուկներին իբրև պատանդ և պահում եյին նեղ վանդակներում առանց հաց ու ջուր տալու։

Գաղութային շահագործման մեթոդները տարբեր են, նայած թե մետրոպոլիան *(այսպես ե կոչվում ստրկացնող յերկիրը գաղութի նկատմամբ)* **տնտեսական զարգացման ինչպիսի մակարդակի վրա յե գտած լինում գաղութին։ Նախնադարյան բնակչություն ունեցող գաղութներում կիրառվում ե ուղղակի կողոպուտն ու անմիջական ստրկացումը, իսկ զարգացող հողագործություն ունեցող յերկրներում շատ ավելի ձեռնտու յե այն շահագործումը, վոր կատարվում ե առեվտրի միջոցով ու հարկերի կանոնավոր կազմակերպված սիստեմով: Գաղութները մետրոպոլիայի համար ծառայում են իբրեվ վաճառահանման շուկա,** *վորի վզին վատ ապրանքներ են փաթաթում յեռապատիկ թանգ գներով։*

Գաղութներում շուկան ընդլայնելու ամենալավ միջոցը բնատնտեսությունը վերացնելն ու բռնորեն փոխանակային հարաբերություններ մտցնելն ե։ **Այս նպատակով վերացվում ե հողի համայնքային սեփականությունը, պետությունը բռնագրավում ե հողը, իսկ բնիկ գյուղացին դառնում ե մշակ կամ թե մանր վարձակալ** *(այսպես եր, օրինակ, ֆրանսիացիների քաղաքականությունն Ալժիրում)։*

Զարգացած կապիտալիստական պետությունների շահագործումից չեն կարողանում խուսափել պակաս յետամնաց այն յերկրներն ել, *վորոնք իրենք ել արդեն մասամբ անցնում են տնտեսության կապիտալիստական ձևերին։ Մի կողմից Անգլիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի ու մյուս կողմից Չինաստանի, Կորեյայի, Պարսկաստանի, Թուրքիայի, Յեգիպտոսի տնտեսական կապն այնպիսի կապ չի, վոր լինում ե հավասար յերկրների միջև։ Առաջինները տիրում են, վերջինները հպատակվում։* **Յեթե սրանք վերևում մատնանշված յեվրոպական պետությունների ու Ճապոնիայի գաղութները չեն, ապա նրանց կիսագաղութներն են։**

ԿԻՍԱԳԱՂՈՒԹՆԵՐԸ։

§ 122. ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ.

Զարգացած կապիտալ ունեցող յերկրներում շահույթի նորման ընկնում ե։ «Ռուբլուն ռուբլի» վաստակելն այնտեղ հետզհետե դժվար ե դառնում։ Այն գործը, վորը հաստատապես տարեկան 10% ե բերում, շատ ձեռնտու յե համարվում արդեն։

ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ։

Շահույթի ընկնող նորմայից ճողոպրելով կապիտալն իրեն համար զետեղումն ե վորոնում այն յերկրներում, վորոնք ավելի յերիտասարդ են յեվ տեխնիկապես ավելի յետամնաց։ *Այս յերկրներում յերկաթուղիներն, ամենաբանուկ նավահանգիստներն, ամենակարևոր հանքարանները, բովերն ու նավթի աղբյուրները գտնվում են ոտարերկրյա կապիտալիստների ձեռքին։ Ամենից աննպաստ պայմաններում կնքված պարտքերի տոկոսների ու վճարումների ձևով կիսագաղութները յուրաքանչյուր տարի վիթխարի գումարներ են հատուցում հովանավորող յերկրներին՝ նորանոր պարտքեր անելով այն նպատակով, վոր կատարեն հին պարտքերից բխող ընթացիկ պարտավորությունները։ Որինակ, Տաճկաստանում դեռևս 1881 թվականին եվրոպական մեծ պետությունները վերահսկողություն եյին սահմանել յերկրի ֆինանսների վրա այն նպատակով, վոր ապահովեն պարտքերի դիմաց կատարվող վճարումների կանոնավորությունը։*

Չինաստանում, չնայած սեփական չինական կապիտալի ուժգին զարգացմանը, այնպիսի ամենահասութաբեր հարկային աղբյուրներ, վորպիսիք եյին ծովային մաքսն ու աղի մենաշնորհները, գրավադրված եյին ոտարերկրյա կապիտալի մոտ և գտնվում եյին սրա վերահսկողության տակ։

Այն մասին, թե վորքան մեծ է կապիտալի արտածումը հին կապիտալիստական յերկրներից, վկայում են հետևյալ թվանշանները։ Դեռևս պատերազմից առաջ Անգլիան արտասահմանում ուներ 37 միլիարդ ռուբլի վոսկով, Ֆրանսիան՝ 25 միլիարդ, Գերմանիան $19^1/_2$ միլիարդ։

Ոտարերկրյա կապիտալի գերազորությունը (засилье) մեծ եր ցարական Ռուսաստանում ել։ Այսպես օրինակ, տրամվայի գործը Ռուսաստանում գտնվում եր բացառապես Բելգիացիների ձեռքին։ Ֆրանսիական կապիտալիստները Ռուսաստանում «սըրտով սիրել եյին» մետաղագործությունն ու քարածուխը, անգլիացիք՝ նավթը։ Շլիսսելբուրգի չթագրոշմիչ մանուֆակտուրան պատկանում եր անգլիացիներին։ Գերմանական կապիտալի ստեղծածն եյին մի շարք ռուսական ձեռնարկություններ, ինչպիսիք եյին, օրինակ, «Կաբելի միացյալ գործարաններ» ընկերությունը, «Կերտինգ յեղբայրների մեքենաշեն գործարանի ռուսական ընկերությունը,» «Пиролуэт» բաժնետիրական ընկերությունը, վոր մարգանեցի հանքանյութ եր արդյունահանում Ռուսաստանի հարավում, «Շոգեկառք» ընկերությունը, Մոսկվայի «Фарбверке» քիմիական ընկերությունը, ցելլուլոզի «Вальдгоф» գործարանի ակցիոներական ընկերությունը և ուրիշ շատ ընկերություններ։ Ռուսական յերկու խոշոր բանկ՝ «Արտաքին առևտրի ռուսական բանկն» ու «Սիբիրի առևտրային բանկը» «Գերմանական բանկի» (Deutsche Bank) «դուստրերն» եյին։ Ոտարերկրյա այն ամբողջ կապիտալը, վոր դրված եր ռուսական ձեռնարկությունների մեջ, Լեհաստանը, Մերձբալտյան ծայրերկիրն ու Ֆինլանդիան հանած, յերկու միլիարդ ռուբլուց ավելի չեր։

ՌԱՆՏՅԵ ՅԵՐԿՐՆԵՐԸ։

Հասուն կապիտալիզմ ունեցող յերկրները մյուս յերկրների վաշխառուներն են դառնում պարզապես։ Բոլոր յերկրների բանվորներից քամած հավելյալ արժեքը տոկոսների ու շահութամասերի կերպարանքով հոսում, լցվում է անգլիական, ֆրանսիական ու ամերիկյան բանկիրների գրպանները։ Յետամնաց ժողովրդների շահագործումն հանդես է գալիս ամենից անսքող կերպարանքով։

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐՆԱԽԱՎԵՐԻ ԿԱՇԱՌՈՒՄԸ։

Գաղութների ու կիսագաղութների գյուղացիների ու բանվորների անգութ շահագործման հաշվին վորոշ վողորմություններ են նետում մետրոպոլիայի բանվոր դասակարգի վերնախավերին՝ սրանց աշխատավարձը

բարձրացնելու իմաստով։ Այսպիսով կապիտալիստներն աշխատում են բանվորներին մասնակից դարձնել գաղութների շահագործմանը։

Վորակյալ բանվորն Անգլիայում ութժամյա բանվորական որվա համար ստանում է 210-ից մինչև 290 ամերիկյան



ցենտ, Հնդկաստանում նույնպիսի բանվորը 14 ժամյա բանվորական որվա համար ստանում է 38—60 ցենտ, Հնդկաս-

տանում 10—12 ժամյա բանվորական որվա համար՝ 40 ցենտ։ Սևաբանվորներն ու անվորակյալ բանվորուհիները Անգլիայում 8 ժամյա բանվորական որվա համար ստանում են 160 ցենտ, Հնդկաստանում 10—14 ժամյա բանվորական որվա համար՝ 25 ցենտ, Եգիպտոսում՝ 23 ցենտ։



Հոլանդական վորակյալ բանվորն 8—9 ժամյա բանվորական որվա համար ստանում է 250—320 ցենտ, Հոլանդական Հնդկաստանում (Ինդոնեզիայում) 14 ժամյա բանվորական որվա համար ստանում է նա 32—60 ցենտ. Հոլանդիայում սևաբանվորն ստանում է 160 ցենտ, Հնդկաստանում՝ 16 ցենտ, այսինքն 10 անգամ ավելի քիչ։

Վորակյալ բանվորը Ֆրանսիայում ստանում է 90—170 ցենտ։ Մարոկկոյում ու Ալժիրում նա ստանում է 8 ժամյա բանվորական որվա համար 90 ցենտ։

Սևաբանվորը Ֆրանսիայում ստանում է 150 ցենտ, Մարոկկոյում ու Ալժիրում՝ 25 ցենտ։

Յերբ բերած ու նոր հողում տնկած կապիտալիզմը հաստատուն բողբոջներ է արձակում, սրան զուգնթաց մետրոպոլի արդյունաբերությունը հետզհետե ավելի սպառնալից մրցորդ է գտնում ի դեմս գաղութների տեղական արդյունաբերության։ Մեքենաշեն գործարանները պակաս արագությամբ չեն վորոնում ոտարերկրյա շուկաները, քան այն ձեռնարկությունները, վորոնք պատրաստի ֆաբրիկատներ ու կիսաֆաբրիկատներ են ծախում։ Բայց մի կողմից վորևե ապրանք ու մյուս կողմից մեքենաներ արտահանելու միջև նույնպիսի տարբերություն կա, ինչպիսին կա մեռաքս ու շերամի սերմ արտահանելու միջև։ Գաղութ արտահանված ամեն մի մեքենա պակասեցնում է այն տեխնիկական կախումը, վոր գաղութն ունի մետրոպոլից։

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ ԴԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ։

Գաղութային յերկրներում աստիճանաբար ստեղծվում է սեփական արդյունաբերություն, սեփական բուրժուազիա ու սեփական պրոլետարիատ։ Գաղութներն ու կիսագաղութներն սկսում են ինքնուրույնության ձգտել։ Մի քանի գաղութների՝ ինքնուրույնության ձգտելը նոր բան չե։ Ամբողջ ամերիկյան մայր ցամաքը մի ժամանակ ծայրից ծայր բռնել էին ևրոպական մեծ պետությունների գաղութները, վորոնք աստիճանաբար ազատագրվեցին իրենց մետրոպոլից։ Անգլիան խրատվելով Միացյալ նահանգների անջատումից՝ սկսեց ազատախոհ ձևանալ իր գաղութներից ամենահասուն յերկրների հետ և բավական նկատելի ինքնուրույնություն տալ սրանց (դոմինիոնները—Կանադան, Ավստրալիան)։

Սակայն այսպես ազատախոհ ձևանալը հնարավոր եր ֆրիտրեդերության դարաշրջանում միայն։ Հիմա, յերբ շուկաների հարցն այնքան խիստ սրվել է, մինչև անգամ անգլիական զգուշ բուրժուազիան հարկադրված է հրաժարվելու իր հնորյա սովո-

բուլթյուններից և իր գաղութներում անխնա ճնշելու ինքնուրույնության բոլոր ձգտումները։

ԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։ Մյուս կողմից, ազգային ազատագրական շարժումը գաղութներում ու կիսագաղութներում մասսայական բնույթ և ստացել (Տաճկաստան, Պարսկաստան, Հնդկաստան, Չինաստան, Ճավա) Գաղութների ճնշված ժողովրդների շարժումը լրացնում է կապիտալիզմի յերկրների առաջավոր ճնշված մասսաների հեղափոխական շարժումը։

ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՌԱԶՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼԻ ԺԱՄԱՄԱԿ․

§ 123. ՊԱՏՃԱՌՆԵՐԸ․

Հիմա մենք մոտենում ենք այն ամենից եյական հարցի լուծմանը, թե ինչն է պատճառը, որ կապիտալիզմն իր գոյության վերջին փուլի ժամանակ տոգորված է ծայրահեղ ռազմականությամբ։ Հարցն այն չէ, թե այս կամ այն պետության կողմից յերևան հանվող լայն նվաճողական ձգտումներն ինչու **հնարավոր են**։ Ալեքսանդր Մակեդոնացիներին ու Նապոլեոնները նոր չերևույթ չեն ամենևին։ **Հարցն այն է, թե ինչու յուրաքանչյուր կապիտալիստական պետության համար անհրաժեշտություն են դարձել լայն նվաճողական ձգտումները։**

Հիմա չկա մի կապիտալիստական յերկիր, որը չձգտեր իր ձեռքն առնելու ամբողջ աշխարհի տիրապետությունը։ Զանազանությունն այն է միայն, որ խոշոր գիշատիչներն—Անգլիան, Ֆրանսիան, Միացյալ-Նահանգներն իրենց նվաճողական քաղաքականությունը վարում են ամեն մեկն իր հաշվին, իսկ Բելգիայի կամ թե Հարավ-Սլավիայի նման մանրիկ յերկիրն ստիպված է այս նպատակի համար կախվել ավելի զորեղ ընկերների պոչից։ Ռազմատենչ Բիսմարկը XIX դարի վերջին վոչ միայն ծերացել, այլ և հնացել եր, որովհետև իսկական համաշխարհային թափ չուներ և նրա հունարն ավելի չեր պատում, քան Գերմանիայի սահմանները հարևանների հաշվին լայնացնելը։ Զուր չեր, որ նրան, երբև Գերմանիայի արտաքին քաղաքականության ղեկավարի, հաջորդելու յեկավ մանկիկ Վիլհելմ Բ-ը։ Իր ախորժակների չափերով Վիլհելմ Բ-ը Բիսմարկից ավելի յեր հարմար գալիս XIX դարի վերջի Գերմանիային, որը նույն դարի վերջին քառորդում հզոր արդյունաբերություն եր ծաղկեցրել և որի համար արդեն կյանքի հարց եր դարձել արտաքին շուկայի հարցը։

Այն բոլորից հետո, որ մենք իմացել ենք նախնթաց գլուխներից, հասուն կապիտալիզմի ռազմականության պատճառը հասկանալը դժվար չի լինի:

Գաղութներն իրենց տարածությամբ աննահման չեն: Այն բանից հետո, երբ Աֆրիկան հետազոտվեց և նվաճվեց XIX դարում, **յերկրագնդիս վրա էլ չմնացին այնպիսի գաղութային Քոնգեր, որոնց ձեռ դիպած չլիներ:** Այս գաղութային ֆոնդերը պրծան հենց այն րոպեին, երբ կապիտալիզմը գաղութների առմնասուր կարիք ուներ, ինչպես սառցարան, որը տարորոշում և սառեցնում է նրա հակասությունների շիկացած մթնոլորտը: **Յերկրագունդս տրդեն բաժանված, պրծած է կապիտալիստական մեծ պետությունների միջեվ:**

ԱՇԽԱՐՀԻՍ ԲԱԺԱՆՔՆ ՈՒ ՎԵՐԱԲԱԺԱՆՔԸ:

Յերբ ավարը բաժանված պրծած է, ապա մի կտոր ճանկել հնարավոր է՝ հարևանի առաձների միջից այն կտորը թռցնելով միայն: Ահա թե ինչն է պատճառը, որ **Քիճաճական կապիտալի ու արդյունաբերության մեծաշնորհացման գարաշրջանում ռազմական ուժը գտնում վճռական կարեվորություն ունեցող տնտեսական գործոն: Կապիտալիստական յերկիրը միայն ռազմական ուժով կարող է պաշտպանել իր շուկաներն ու նոր շուկաներ ձեռք բերել:** Բացի սրանից, յերկրի ռազմական ուժից է կախված այն, թե արդյոք այս յերկրի առևտրային պաշնագիրը, որ կնքել է ուրիշ յերկրների հետ, նպաստավոր կլինի՞ն նրա կապիտալիստների համար և թե **վերջիններս կկարողանա՞ն ետ բերել շուկան, որտեղ բարձր գներն են իշխում,** արգելիչ մաքսերի միջոցով պաշտպանել *ոտարերկրյա մրցումից թե՞* վոչ[1]: Ռազմական ուժը հարկավոր է իրրև գործիք ազգային ազատագրական շարժումները ճնշելու համար (որինակ, Ինտերվենցիան Չինաստանի մեջ): Վերջապես բանակն ու նավատորմը ռանտիյե յերկրների համար խաղում են դատարանական կատարածուի դեր, որն անճշտապահ վճարողներին ստիպում է վճարելու պարտքերն ու սրանց տոկոսները: Յեվ հենց այս է մեկն այն պատճառներից, որ Ամերիկան, որին հիմա ամբողջ աշխարհը պարտք է, այնպես աստիկ թափով զինվում է:

Գաղութները կապիտալիստական յերկրներին իրական նյու-

[1] Այսպես որինակ ճապոնական պատերազմի ժամանակ Ռուսաստանի անզոր լինելը սրան հարկադրեց, որ հոմաձայնի առևտրային մի դաշնագրի, որը ձեռնտու չեր Գերմանիային և կործանարար եր Ռուսաստանի համար:

թական ոգուտներ չեն տալիս միշտ: Աֆրիկայի ու Հնդկաչինի գաղութները պարզապես վնասաբեր են մետրոպոլի համար: Նույնն է նաև Կոնգոն, որը Բելգիայի վզին փաթաթեց Լեոպոլդ Բ. թագավորն, այս գաղութի «սեփականատերն» այն բանից հետո, յերբ հուսախաբվեց Կոնգոյի շահութաբեր լինելու նկատմամբ:

ԳԱՂՈՒԹԱՑԻՆ ԿԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ:

Բայց յուրաքանչյուր կապիտալիստական յերկրում մի խումբ կա կապիտալիստների, որոնց հսկա ոգուտներ է խոստանում նվաճողական քաղաքականությունը: Առաջին հերթին այս խմբին են պատկանում մետաղագործական ու ռազմական արդյունաբերության ներկայացուցիչները: Արդյոք գաղութն իրրև հումքի աղբյուր ու վաճառանոցի կարողանա՞ իր վրա դրած հույսերն ու ծախսերը թե՞ վոչ, բայց անկասկած է, որ թնդանոթները, հրացանները, ռումբերն ու փամփուշտները պետք կգան գաղութը նվաճելու և այնտեղ կարգ պահպանելու համար: Այնուհետև առաջ է գալիս յերկաթուղային շինարարության հարցը: Տվյալ հողը որքան էլ որ կաթուղային շինարարության համար յերկաթուղով միացնել հնարավոր լինի, այն միշտ կարելի չե յերկաթուղով միացնել հնացած աշխարհի հետ: Պարլամենտում, վաճառված մամուլի մեջ ծանր արդյունաբերության ներկայացուցիչները յեռանդուն պայքար են մղում այս կամ այն գաղութում յերկաթուղիներ անցկացնելու ոգին: Յեթե անցկացնելիք յերկաթուղու շնաարեբությունը տնտեսական տեսակետից շատ կամ քիչ ակնհայտ է (որինակ, Սահարայի անապատով յերկաթուղի անցկացնելու նախագիծը), ապա ամեն տեղ և ամենուրեք փողեր են փչում այն մասին, թե այն յերկաթուղին կարևոր է ռազմական տեսակետից: Եյապես մի բան և միայն հարկավոր ծանր արդյունաբերությանը — վորքան կարելի չե, ավելի շատ ռելսեր, շոգեկառքեր ու վագոններ ծախել. սրանից եկ առաջ է գալիս ծանր արդյունաբերության ռազմատենչ բնավորությունն ու նրա նվաճողական ձգտումները:

ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՏԵՆՉՈՒԹՅՈՒՆԸ:

Գաղութները նվաճելը նման է ծովի ջուր խմելուն: Վորքան շատ ես խմում, այնքան ավելի ես տանջվում ծարավից: Ալժիրն ապահովելու համար Ֆրանսիային անհրաժեշտ եր Մարոկկոն: Բայց Մարոկկոն Գերմանիային էլ եր անհրաժեշտ իրրև յերկաթի ու պղնձի հանքանյութի աղբյուր և իրրև հենակետ աֆրիկական ափերում: Բաղխումը պատրաստ է արդեն: Աֆրիկայի արևելյան ափին իր գա-

ղութների վրա ունեցած իշխանությունն ապահովելու համար Անգլիային անհրաժեշտ էր, վոր այս գաղութները միացնի յերկաթուղով։ Բայց նրանց ճանապարհին ընկած են գերմանական գաղութները։ Այստեղից էլ առաջ է գալիս փոխադարձ դարանակալությունն ու անվերջ զինումը, վորի շնորհիվ միլիոնները հոսում լցվում են Կրուպների, Շնեյդերների ու թնդանոթի մյուս արքաների գրպանները։

§ 124. ՄԻԼԻՏԱՐԻԶՄԸ.

Անչափ ու անչափ աճում, մեծանում են բանակներն ու նավատորմը, իսկ սրանց հետ նաև ռազմական ծախսերը։

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս, թե 1858-ից մինչև 1914 թվականը յեղած ժամանակամիջոցում Յեվրոպայի մեծ պետությունների ռազմական ծախսերը վորքան են աճել (միլիոն ֆրանկով)։

	1858 թ.	1883 թ.	1908 թ.	1914 թ.
Գերմանիա .	124	504	1504	2282
Անգլիա .	579	702	1487	1827
Ֆրանսիա .	480	789	1,100	1472
Իտալիա .	46	311	457	681
Ավստրո-Հունգարիա	268	318	529	598
Ռուսաստան .	493	894	1511	2078
Ընդամենը	1,990	3,518	6,588	8,938

Բացառիկ նշանակություն են ստանում արդյունաբերության ռազմական ճյուղերը — զենքի, պայթուցիկ նյութի ու ռումբերի արտադրությունը, ռազմանավերի, դիրիժաբլների ու աերոպլանների կառուցումը։ Միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ զենքի տակ են պահվում։ Բանակներ ու նավատորմ պահելու վրա վիթխարի գումարներ են ծախսվում։ Արդյունաբերության վոչ մի ճյուղի մեջ տեխնիկան այնպիսի հսկա քայլերով առաջ չի գնում, ինչպես ռազմական գործում։ Յեվ այս զարմանալի չէ։ Արդյունաբերության մեջ մուծվում է այն նորությունը միայն, վորը շահույթ է խոստանում։ Իսկ ռազմական գործում կիրառվում են վճռականորեն այն բոլոր նորությունները, վորոնք մեծացնում են «աշխատանքի արտադրողությունը» — խորտակելու և վոչնչացնելու ասպարեզում։ Արագությամբ փոխվում են սպառազինման յեղանակները, ռազմանավերի կառուցվածքը և այլն։ Այն, ինչ

վոր տեխնիկայի վերջին խոսքն էր յերեկ, այսօր արդեն անհուսորեն հնացած է...

Այստեղ հրապարակ է գալիս նաև այն հանգամանքը, վոր գաղութներն ունեն, իբրև թնդանոթամսի աղբյուրներ։ Գաղութների բնակչությունից են կազմում «գունամորթ» զորքեր։ Կապիտալիստների դասակարգի համար այս զորքերի արժողությունը մեծանում է նրանով, վոր այս զորքերն անպատիժ կերպով կարելի յե հանել և արձակել բանվորների ու գյուղացիների վրա։ Շահագործումը միշտ էլ անխզելի կապված է յեղել պատերազմի հետ։ Շահագործողները շահագործվողներին միշտ էլ կռիվ են ուղարկել՝ շահագործման ասպարեզը պաշտպանելու և ընդարձակելու համար։ **Բայց ֆինանսական կապիտալի դարաշրջանը ժողովրդական տնտեսության իսկական ռազմական վերասերման դարաշրջան է։**

Ռազմական արդյունաբերության անչափ աճումը ռազմական սպառնալիքի հետևանք լինելուց դառնում է նրա պատճառներից մեկը։ Վերևում մենք տեսել ենք, թե ընդհանրապես ծանր արդյունաբերության ռազմատենչ լինելու մեկ պատճառը վորն է։ Ե՛լ ավելի հասկանալի յե ռազմական արդյունաբերության ռազմատենչությունը։ Յուրաքանչյուր ռազմական ահազանգ ռազմական արդյունաբերությանը վիթխարի շահույթներ է խոստանում, և այս արդյունաբերությունը պետական վաճառված ապարատի ու մամուլի միջոցով ռազմական ամեն մի կայծ փչելով բորբոքում և հրդեհ է դարձնում։

Իսկ համաշխարհային սինդիկատները։ Արդյոք սրանք խաղաղարարներ չե՞ն։ Արդյոք սրանք հող չե՞ն պատրաստում առանձին յերկրների միջև յեղող տնտեսական ու քաղաքական հաշտության համար։ Այս հարցի լավագույն պատասխանը համաշխարհային պատերազմի օրինակն է, յերբ պատերազմող կողմերը միացնող բոլոր տնտեսական թելերը վայրկենապես կտրվեցին, ինչպես սարդի վոստայնի թելիկներ։ Միջազգային միավորությունները շատ խախուտ են լինում ընդհանրապես և սովորաբար այնպես են կազմակերպված լինում, վոր ուզած ժամանակ կարելի լինի առանց բարդությունների բաժանվել իրարուց։

ԱՆՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ։

Կապիտալիստական ձեռնարկությունների համաշխարհային մասշտաբով ամուր և հարատև կարտելացմանը խանգարում է այն, վոր **կապիտալիզմի տարբեր յերկրներում տեխնիկան անհամաչափ է զար-**

գացած։ Ավելի յերիտասարդ կապիտալիստական յերկրները կարող են լայնորեն կիրառել տեխնիկայի բոլոր նորագույն կատարելագործումները, այն ինչ հին կապիտալիզմի յերկրները կաշկանդված են կապիտալի հին ներդրումների գերազորությամբ։ Որինակ, ֆոսֆորային հանքանյութերի ոգտագործման յեղանակը գտել էր Անգլիացի Թոմասը։ Այն ինչ այս յեղանակն ամենալայն կերպով ոգտագործեց վոչ թե Անգլիան, այլ Գերմանիան։ Այս յեղանակն Անգլիայում ամենակատաղի դիմադրության հանդիպեց մետաղագործական խոշոր գործարանների տերերի կողմից, վորոնց դեմ մրցել էր սպառնում Թոմասի յեղանակը։ Նույնն է նաև ածխարդյունաբերության մեջ։ Անգլիայի հին ածխարդյունաբերությունը տեխնիկական տեսակետից անհուսորեն յետ է մնացել Գերմանիայի և Ամերիկայի յերիտասարդ արդյունաբերությունից։ Նոր գյուտերի մրցման յերկյուղն ստիպում է, վոր ձեռնարկուները միանան։ Սրանք միանալով դռները բոլորովին չեն փակում նոր գյուտերի ու հայտնագործությունների հանդեպ։ Նրանք հետաքրքրվում են բոլոր նորույթներով, սիրով գնում են արտոնագրեր, բայց նորը մտցնում են կամաց կամաց այն հաշվով, վոր հին սարքավորումը կարողանա ժամանակի ընթացքում իր գինը հանել։

Բայց այս պատճառը, վորը դրդում է միևնույն յերկրի մոտավորապես միևնույն անցյալն ունեցող ձեռնարկություններին միանալու, նույն այս պատճառը չի թողնում, վոր ձեռնարկությունների հաստատուն միավորություններ առաջ գան տարբեր յերկրներում, վորտեղ կապիտալի հին ներդրումների ճնշումը միատեսակ չէ։

Հին խոշոր ներդրումների բացակայությունը մեծ առավելություն է տալիս գաղութներում ծագող նոր արդյունաբերությանը։ Միտրոպոլի մեքենաշեն գործարանները հաճախ այնպիսի կատարելագործություններ են ուղարկում գաղութները, վորոնք բուն մետրոպոլում չեն կարող կիրառում ունենալ այն պատճառով, վոր հին ձեռնարկությունների տերերը հակառակում են այս բանին։

Բացի հին ներդրումների անհավասար ճնշումից, տեխնիկական զարգացման անհամաչափությանն օժանդակում են բանվորական ուժի արժեքի տարբերություններն էլ։ Յեվ հենց այս է մեկն այն պատճառներից, վոր Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները տեխնիկապես առաջ անցան Յեվրոպայից։

Ընդհանրապես ասած, կապիտալիստական տարբեր յերկրների անհամաչափ զարգացումը նրանց միջև յեղած անհաշտելի հակասությունների աղբյուրն է։

Համաշխարհային սինդիկատների, ինչպես և ընդհանրապես, ամեն տեսակի սինդիկատների միջև անընդհատ կռիվ է լինում հումքի և վաճառահանության այն տոկոսի մեծության համար, վոր հատկացվում է յուրաքանչյուր ձեռնարկությանը կամ թե ձեռնարկությունների յուրաքանչյուր խմբին։ Վորչափով վոր խոսքը վերաբերում է միջազգային սինդիկատներին, այս կռվի ժամանակ կշեռքի թաթի վրա դրվում է, ի միջի այլոց, այս կամ **այն յերկրի ռազմական հզորությունն էլ։ Նշանակում է՝ միջազգային սինդիկատները չեն կարող միլիտարիզմը թուլացնել։ Ընդհանրապես ասած, տարբեր յերկրների կապիտալիստների միջև յեղած տնտեսական ամեն տեսակի համաձայնությունները նույնքան քիչ են ապահովում խաղաղությունը, վորքան յեվ քաղաքական համաձայնությունները։** Սրանք լոկ ձևերն են այն սքողված կռվի, վոր բռնում է բացահայտ պատերազմների արանքի ժամանակամիջոցները։

Յերկրագունդը նվաճելու քաղաքականությունը (իմպերիալիզմը) ֆինանսական կապիտալի դարաշրջանի ամենաբնորոշ գիծն է, **վորի հետևանքով ամբողջ, դարաշրջանը կոչվում է իմպերիալիզմի դարաշրջան։**

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ.

Լենինի վորոշման համաձայն իմպերիալիզմը զարգացման այն փուլի կապիտալիզմն է, յերբ առաջացել է մենաշնորհների ու ֆինանսական կապիտալի տիրապետությունը, խոշոր նշանակություն է ստացել կապիտալի արտահանությունը, սկսվել է աշխարհի բաժանումը միջազգային տրեստների կողմից յեվ ավարտվել է յերկրագնդի ամբողջ տերիտորիայի բաժանումը խոշորագույն կապիտալիստական յերկրների միջև։

Լենինն այսպես էլ է բնորոշում իմպերիալիզմը. «Իմպերիալիզմը մենաշնորհատիրական կապիտալիզմն է, մակաբուծական կապիտալիզմն է, փթող կապիտալիզմն է»։

Իմպերիալիզմի դարաշրջանում համաշխարհային ճգնաժամերի շարքը պետք է ավարտվեր համաշխարհային ռազմական աղետով։ Հենց այս աղետն էր, վոր բռնկվեց 1914 թվականին

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ.

§ 125. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ.

Իր կործանարար ուժով համաշխարհային հեղափոխությունը գերազանցեց այն բոլոր պատերազմներից, միասին առած, որոնք նրանից առաջ լեղել էին ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակից դեսը։ 1913 թվականի վերջերքին Եվրոպայում հաշվվում եր 401 միլիոն մարդ։ Նորմալ պայմաններում, Եվրոպայի բնակչությունը աճելով պետք է 1919 թվականի միջերքին հասներ 424 միլիոն հոգու։ Այն ինչ իրոք այս ժամանակվա մոտերքը կար միայն 389 միլիոն. Այսպիսի նվազումը զարմանալի չե, եթե ուշադրության առնենք, որ մենակ կռվի դաշտում սպանվածներն ու վերքերից մեռածները պակաս չեյին 10 միլիոն մարդուց։ Այն ինչ 1783-ից մինչև 1905 թվականը լեղած պատերազմները տվել են 4 միլիոնից մի քիչ ավելի։ Կործանարար գործունեությունը կատարվում եր մի այնպիսի հիմնավորությամբ, որը լիովին համապատասխանում եր այն առաջադիմություններին, որ ուներ տեխնիկան։ Ծար ու քանդ լեղած լերկաթուղագիծը նորից ու նորից փորվըրվում եր հերկի պես, անտառները վոչնչացնում եյին այնպես, որ մի կոճղ անգամ չեր մնում, դաշտերը ճեղճեղքում եյին խրամատներով և նրանց տակ ամբողջ քաղաքներ եյին շինում բետոնից։ Փողերի լեզվով ասենք—պատերազմը նստեց 378 միլիարդ ռուբլի, այսինքն 9 անգամ շատ, քան նստել եյին 1793 թվականից մինչև 1905 թվականը լեղած բոլոր պատերազմները, միասին առած։

Կապիտալիզմը գիմանալ չկարողացավ։ Այն կործանարար ուժերը, որոնցից զարգացել եյին նրա մեջ, նրա հակասությունների շնորհիվ ավելի ուժեղ գուրս լեկան, քան իրը կապիտալիզմը։ Ինչպես ամեն մի ուրիշ շրջան, համաշխարհային կապիտալիզմի շրջան եյ դեռ ևս պատերազմի վերջանալուց առաջ կարվեց այն կետում, վորը նրա ամենաթույլ ողակն եր կազմում, այն է՝ Ռուսաստանում։ Ռուսաստանի բանվոր դասակարգը գյուղացիության ոգնությամբ իր ձեռքն առավ իշխանությունը և յերկիրը հանեց պատերազմող յերկրների շարքից։

Չնայած իրենց կործանարար ամբողջ ուժին, արդյունաբերական ճղնաժամերը կապիտալիստական անտեսության մեխանիզմն ամեն անգամ մաքրում եյին, ազատում կուտակված աղբից և նոր ծաղկման ժամանակաշրջանի սկիզբն եյին դնում։ Համաշխարհային ռազմական աղետը **կոտրեց, ուժասպեկ արեց** այս մեխանիզմը։ Յեվ այս յեղավ վոչ այն պատճառով, վոր հնարավորություն չկար վերականգնելու այն բոլոր նյութական արժեքները, վորոնք վոչնչացան պատերազմի ժամանակ։ Արդի տեխնիկայի միջոցին այս բոլորը կարելի յեր վերականգնել մի քանի տարում։ Այն դրությունը, վոր համաշխարհային պատերազմն ստեղծեց, անելանելի չեր մարդկության համար։ Բայց այն անելանելի յեր **կապիտալիզմի** համար։

Համաշխարհային կապիտալը չեր կարող փորձ չանել՝ ճընշելու բանվոր դասակարգի իշխանությունը Ռուսաստանում։ Բայց Անտանտային պատկանող յերկրների առաջնորդները չեյին կարում։ Իրենց սեփական աշխատավոր մասսաներին նրանք չեյին կարող հանել ու արձակել բանվորների ու գյուղացիների հանրապետության վրա։ Ջուր տեղը վիթխարի միջոցներ եյին տրամադրում սպիտակ գեներալներին ու լեհական շլյախտային ոգնելու այն կռվում, վոր սրանք անում եյին Խորհրդային Ռուսաստանի դեմ։ Խորհրդային Միությունն ամբողջ աշխարհից կարելու փորձը հարվածում եր կապիտալիստական յերկրների տնտեսությանը վոչ պակաս, քան Խորհրդային Միությանը։ Անգլիան չեր կարող ապրվել առանց խորհրդային հացի, վայտեղենի, վշի, կանեփի, կաշիների, ինչպես վոր մենք չեյինք կարող ապրվել առանց անգլիական կամ թե ամերիկյան մեքենաների։ Կապիտալիզմը պետք է խոստովաներ իր անզորությունն այն կռվում, վոր մղում եր արտադրական հարաբերությունների այն նոր ձևերի դեմ, վորոնք յեկան նրան փոխարինելու։

ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՊԱՐՏՔԵՐԸ։

Կապիտալիզմն անզոր դուրս յեկավ նաև այն հարցը լուծելում, վոր վերաբերում եր պատերազմի վիթխարի ծախքերը հատուցելուն (ռեպարացիոն հարցը)։ Կոտրատած կճուճների գինը մեկն ու մե-

կը պետք է անպայման վճարեր։ Իրական կապիտալի չուրքանչյուր հարյուր ռուբլին, որ փոխ է առնված չեզել մի վորևե տեղ և վերածվել վառոդի ծխի, շարունակում է գոյություն ունենալ իբրև ֆիկտիվ կապիտալ, իբրև պետական պարտք, վորի տոկոսները պետք է վճարել և վորը վաղ թե ուշ պետք է մարել։ Հաղթված չերկրների ռանտիչենները կամա թե ակամա պետք է հաշվեչին հայրենի վալյուտայով գնահատված այն պարտատոմսերի փաստական վոչնչացման հետ, վորոնք պատկանում եյին նրանց։ Գերմանիան, որինակ, 1924 թվականի սկզբին կարող եր մի զուտ դոլլարով մարել ռազմական ու չերկաթուղային փոխառությունների իր բոլոր պարտատոմսերն ու գրավաթղթերը, վորոնք կուտակվել եյին պատերազմի վերջանալու մոտերքում (150 միլիարդ մարկ)։ Ուրիշ բան եյին հաղթող չերկրները։ Սրանց ներքին ու արտաքին վիթխարի պարտքերը ճնում եյին։ Ֆրանսիան, Իտալիան ու Բելգիան պարտք եյին Անգլիային։ Այս բոլոր չերկրներն Անգլիայի հետ միասին պարտք եյին Միացյալ Նահանգներին։ 1921 թվականի մեջերքում Անտանտայի չերկրների փոխադարձ պարտքերը հետևյալ պատկերն ունեյին.

Միացյալ Նահանգների տված փոխառությունները

(միլիոն վոսկե ռուբլով)

Մեծ Բրիտանիային	9,262
Ֆրանսիային	7,228
Իտալիային	3,316
Կանադային	1,394
Բելգիային	964
Ռուսաստանին	536
Մեկսիկային	370
Ճապոնիային	216
Լեհաստանին	272
Չեխո-Սլովակիային	182
Չիլուն	178
Ընդամենը	23,918

Անգլիայի տված փոխառությունները

(միլիոն վոսկե ռուբլով)

Ռուսաստանին	5,614
Ֆրանսիային	5,570
Իտալիային	4,768
Բելգիային (ռազմ. փոխառութ.)	944
» վերականգնման փոխառ.	90
Սերբիային	221
Ընդամենը	17,207
Ավստրալիային	900
Նոր Զելանդիային	296
Կանադային	138
Հարավային Աֆրիկային	75
Ընդամենը գաղութներին	1,409
Բոլորը միասին	18,616

Ֆրանսիայի տված փոխառությունները

(միլիոն վոսկե ռուբլով)

Ռուսաստանին	2,129
Բելգիային	1,120
Հարավ-Սլավիային	575
Ռումինիային	408
Լեհաստանին	400
Հունաստանին	339
Չեխո-Սլովակիային	149
Ընդամենը	5,120

Այս բոլոր պարտքերը վճարելու աղբյուր կարող են լինել գերմանական ռեպարացիոն վճարումները միայն։

ՎԵՐՍԱՅԻ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ։ Վերսայլի դաշնագրով Գերմանիայից խլեցին Ելզաս-Լոտարինգիան, քարածխով հարուստ Սաարի շրջանը, քարածխով ու չերկաթով հարուստ վերին Սիլեզիայի մեծ մասն ու Արևելյան Պրուսիայի մեծ մասը։ Գերմանիայից խլեցին ու Անտանտայի չերկրների միջև բաժանեցին գերմանական բոլոր գաղութները (մոտ 3 միլիոն քառակուսի կիլոմետր)։ Նրան հարկադրեցին, վոր հանձնի իր ամբողջ առևտրային նավատորմը[1], վագոնների, լոկոմոտիվների ու չերկաթուղային այլ նյութեղենի վիթխարի մի քանակություն, այլ և պարտավորեցրին, վոր ամեն ամիս հանձ-

[1] Գերմանական առևտրային նավատորմը 5,3 միլիոն բրուտտո տոննաչից իջեցրին 0,1—0,3 միլիոն բրուտտո տոննայի։

նի քարածխային ու քիմիական արդյունաբերության արտադրանքների մի մեծ քանակ։ Յեվ այս բոլորից հետո (մի շարք զիջումներից հետո արդեն) Գերմանիայից պահանջեցին, որ տարեկան վճարումներ կատարի՝ իբրև հատուցումն ռեպարացիոն պարտքի շրջուցման ու նրա տոկոսների դիմաց (ռեպարացիոն պարտքը սահմանել էին 132 միլիարդ վոսկի մարկ)։ Անտանտայի յերկրներն այս գումարից վոչինչ չեն կարող զիջել. իրենց վրա ավելի թանդ է նստել (Անտանտայի յերկրների ռազմական ծախսերը հաշվում են 252 միլիարդ ռուբլի)։

Գերմանիան այսպիսի գումարներ ամենևին չի կարող վճարել, մանավանդ որ գերմանական կապիտալիստները հարկերի ամբողջ ծանրությունը համառորեն ձգում են բանվորների վրա։ Ֆրանսիան վճարումների չմուծվելու պատրվակով զրավեց գերմանական արդյունաբերության կենտրոնը—Ռուրի շրջանը։ Գերմանացիք մտադրվեցին կրավորական դիմադրության դիմել (Ռուրի արդյունաբերության անգործունեությունն իբրև բողոք ընդդեմ Ֆրանսիայի)։ Կրավորական դիմադրությանն ոժանդակելու համար Գերմանիան ծախսեց վիթխարի գումարներ, որոնք մտան գլխավորապես կապիտալիստների գրպանները։ Այս մտադրությունը, որ անհաջողությամբ վերջացավ, շատ թանգ նստեց Գերմանիային։

ԴԱՈՒԵՍԻ ՊԼԱՆԸ։

Հիմա Գերմանիայի վիզը խեղդող ողճիտ են անցկացրել, և այս ողճիտը Դաուեսի պլանն է, որը դաշնակիցների ձեռքն է տալիս Գերմանիայի յերկաթուղիները, գլխավորապես մաքսերն ու բաժերն, այլ և թղթադրամ ու մետադրամ բացարկելու իրավունքը (բացի վոսկեդրամից)։ Արդյունաբերության, առևտրի ու բանկերի վրա բազմամիլիարդ պարտքեր են դրել հոգուտ դաշնակիցների (գլխավոր հիպոթեկան)։

Այնպիսի դրություն ստեղծվեց, որ հաղթողներն իրենք ստիպված յեղան իրենց զոհին ոգնելու՝ խոշոր փոխառությունների միջոցով։ Բանի դեռ այս փոխառություններից ստացվող փողերը հոսում, լցվում են Գերմանիա, վերջինս կարգի է բերում իր քայքայված տնտեսությունը և ճշտապահությամբ վճարում է ռեպարացիաների մուծանքները։ Անտանտայի յերկրներն ստիպված են միամտորեն հավատալու, որ Գերմանիան ճշտապահությամբ կվճարի այն ժամանակից հետո յել, յերբ փոխառություններից ստացվող փողերի ներհոսանքը կդադարի։

Սակայն հաղթողների յել գործերը փայլուն դրության մեջ

չեն ամենևին։ Անգլիական արդյունաբերությունը, վորը տեխնիկապես յետ ընկավ պատերազմի ժամանակ և վորը կորցրեց իր շուկաների մի մասն, ել չի կարողանում կորցրածը յետ հավաքել գերմանական ու ֆրանսիական ինֆլյացիայի շնորհիվ։ Մասնավորապես Անգլիայի ածխարդյունաբերությունը բոլորովին կորցրել է մրցելու իր ընդունակությունը համաշխարհային շուկայում։ Ձեռնարկուները ցանկանում են արտադրությունն եժանացնել աշխատավարձը պակասացնելով ու բանվորական որը յերկարացնելով, Այստեղից ել առաջ եկին գալիս ձեռնարկուների յերկարաձիգ բաղխումներն ածխահանների հետ, բաղխումներ, վորոնք 1926 թվականին հասցրին ընդհանուր գործադուլի, յերբ վերջինս ձախողվեց սոցիալ-համաձայնիչների դավաճանության շնորհիվ։ Անգլիայի, իբրև համաշխարհային բանկային կենտրոնի, դրությունն ել է խախտվել։ Ռազմական մատակարարումներով մեծ շահույթներ ստացած Ամերիկան կռճեց և իր բանկերի նկուղները լցրեց վոսկու համաշխարհային պաշարի համարյա կեսը։ Անգլիան Ամերիկայի պարտատերը լինելուց դարձել է նրա պարտապանը։

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԵԳԵՄՈՆԻԱՆ։

Ավելի լավ դրության մեջ չէ մյուս հաղթողի՝ Ֆրանսիայի յել բանը։ Ֆրանսիան չի կարողանում հատուցել իր՝ Ամերիկայից առած պարտքերը։ Իր ներքին պարտքը Ֆրանսիան պակասեցրեց ինֆլյացիայի շնորհիվ, վորն արժեզրկեց ֆրանկն ու ֆրանկով դնահատված պարտաթղթերը։ Բայց ինֆլյացիայի քաղաքականությունը յերկար շարունակվել չի կարող։ Իսկ ֆրանկի կայունացումն սպառնալիք է ստեղծում, թե արտահանությունը (դեն նետովի արտահանությունը) կպակասի և առաջ կգա վիթխարի ճգնաժամ ու գործազրկություն, իսկ այս կարձակի պրոլետարիատի հեղափոխական ուժերը՝ գործելու հնարավորություն ստեղծելով։

Միևնույն ժամանակ նոր բաղխումներ են հասունանում հաղթողների միջև՝ Խաղաղ ովկիանոսին իշխելու նպատակով։ Գաղութներում աճում և աշխատավոր մասսաների սպառնալից շարժումն ընդդեմ ոտարերկրյա ու հայրենի կապիտալի։ Ընդհանուր զինաթափման փոխարեն, վորի մասին ճառում եր Ամերիկայի նախագահ Վիլսոնը Վերսալի դաշինքը կնքելու նախորյակին, տեղի է ունենում սաստկագին սպառազինություն, ռազմանավերի ու ողաթռիչ գործիքների կառուցում։ Առաջ ասում եյին,

թե միլիտարիզմի միակ պատճառը Գերմանիան է։ Վերջինս, իբրև ռազմական պետություն, այլ ևս գոյություն չունի (Գերմանիան իրավունք չունի այնպիսի բանակ պահելու, որի կազմը 100,000 հոգուց ավելի լինի), այն ինչ միլիտարիզմը սաստկանում է ավելի ու ավելի։ Կապիտալիզմը որքան ավելի շատ է խճճվում սեփական հակասությունների մեջ, այնքան ավելի կըռվարար է դառնում և այնքան ավելի չի արագացնում իր վերջնական կործանումը։

ԱՆՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԵԿՈՆՈՄԻԿԱՆ· ՅՈՓԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ·

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ·

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ·

§ 126. ԽՍՀՄ· ԿՈՄՄՈՒՆԻԶՄԸ·

Յեթե զգաստ նայենք կապիտալիստական իրականության, ապա դժվար չէ նախատեսել, թե արտադրական հարաբերությունների վոր ձևը պետք է դա հաջորդելու կապիտալիզմին։ Կապիտալի համակենտրոնացմանն ուղեկից է արտադրության համակենտրոնացումը, ուրեմն և պրոլետարիատի համակենտրոնացումը։ Տեխնիկայի առաջադիմությունը լոկ մեծացնում է գործազուրկների բանակը և շատացնում թշվառ դրության մեջ յեղող բանվորների թիվը։ Պրոլետարիատի միաձուլությունն աճում է և այն զայրույթին ղուկընթաց, վոր բանվորությունը տածում է շահագործողների հանդեպ։ Աճում է նրա գիտակցականությունն ու կազմակերպական ընտելությունն էլ։ Միևնույն ժամանակ ավելի ու ավելի պակասում է այն կախումը, վոր արտադրությունն ունի կապիտալիստի անձնական ձեռներեցությունից ու նախաձեռնությունից։ Այն դասակարգը, վոր մի ժամանակ գործունյա յեր և նախաձեռնող, այլասերվում և դառնում է մակաբույծ ռանտիյե։ Ինչպես տեսել ենք վերևում, կապիտալիզմն արտադրողական ուժերի զարգացման շարժիչը լինելուց դադարում է և իր հասունության շրջանում դառնում է այս զարգացման արգելակը։ Վորպեսզի զառամող անտեսակարգը կարողանա շարունակել իր գոյությունը, սրա համար մենակ աշխատավորների քրտինքը բավական չէ արդեն. հարկավոր են ծովերն աշխատավորների արյան, վոր թափվում է իմպերիալիստական սպանդանոցներում։

Այն րոպեին, յերբ բանից դուրս և գալիս, վոր կապիտալիզմն անել փակուղու մեջ է մտել, **պրոլետարիատը չի կարող ար-**

տադրության ամբի միջից չհանել այն խափանիչ փայտը, որ կապիտալիզմն է մտցրել այնտեղ յեվ իր ձեռքը չառնել տնտեսության կազմակերպումը:

ԿՈՄՄՈՒՆԻԶՄԸ: Արտադրության միջոցներն իր ձեռքն առնելով՝ պրոլետարիատը կարող է միայն կոմունիզմին[1] իրականացնելու ուղին բռնել, այսինքն բռնել միասնական համաշխարհային պլանաչափ, անշահագործում անտեսության ուղին: Կոմունիզմն ապրանքներ, ինչպես և շուկա ու փող չի ճանաչում: Կոմմունիզմը վիթխարի միասնական կոոպերատիվ է, որտեղ բոլոր անդամները, բացի պատիկներից ու անկարներից, մասնակցում են արտադրությանը և բոլոր անդամներն, առանց բացառության, հավասար իրավունքներով մասնակցում են սպառմանը: Հասարակությունը կոլեկտիվորեն սպառում է, որ կոլեկտիվորեն արտադրի և կոլեկտիվորեն արտադրում է, որ կոլեկտիվորեն սպառի: **Արտադրությունն ու սպառումը միանալով կազմում են վերարտադրության միասնական պրոցեսս:**

Մեր ժամանակվա բոլոր տեխնիկական հնարավորությունները կարող են լիովին իրականանալ միայն անդասակարգ կոմունիստական հասարակության պայմաններում, որտեղ արտադրության շարժիչը վոչ թե շահույթի ծարավն է լինելու, այլ բուն իսկ արտադրության շահերը: Իրականացնելով այն հնարավորությունները, որոնք արդեն ձեռք են բերված, արտադրական պրոցեսսը պետք է հայտնագործի այնպիսի նոր հնարավորություններ, որոնց ծավալն ու նշանակությունը հիմա դժվար է ներկայացնել:

«Պրոլետարիատի նպատակն է՝ սոցիալիզմ ստեղծել, հասարակության՝ դասակարգերի բաժանված լինելը վերացնել, հասարակության բոլոր անդամներին աշխատավոր դարձնել, խորտակել այն պատվանդանը, որը մարդին հնարավորություն է տալիս մարդին շահագործելու: Այս նպատակը չի կարելի միանգամից իրականացնել. այս նպատակը պահանջում է բավական յերկարատև անցումային ժամանակաշրջան կապիտալիզմից դեպի սոցիալիզմը» (ըստ Լենինի):

Այսպես ուրեմն, շատ կամ քիչ յերկարատեվ անցման ժամանակաշրջան պետք է լինի այն ռոպեի միջեվ, յերբ կապիտալիզմի սիստեմից յելնող յերկրներում բացվոր դասակարգը ճնշում է տնտեսական ու քաղաքական իշխանությունն, ու կոմունիզմի լիակատար իրականացման մեջեվ:

ԱՆՑՄԱՆ ԹԱՄԱՆԱԿԱՉՐՋԱՆ: Հին կապիտալիստական յերկրներում բանվոր դասակարգի հաղթանակը համաշխարհային սոցիալական հեղափոխության առաջին ժամանակաշրջանում մեծամեծ արգելքների յե հանդիպում: Բանվոր դասակարգի վերնախավերն, ամեն տեսակի վորակյալ բանվորները, վարպետները և այլն, ինչպես և արհմիութենական բյուրոկրատիան համեմատաբար լավ են ապրում: Այստեղ կապիտալիստները բանվոր դասակարգի վերնախավերին պատառիկներ են նետում իրենց գաղութներում բանվորական լայն մասսաներին շահագործելու հաշվին: Այս վերնախավերին կարկուտան արդեն չի խփում: Սրանք չեն հրաժարվել կոմունիզմի մասին յերազելուց, բայց այս նրանց գործին չի գալիս: Արհմիությունների ապարատը հարմարվում է լեգալ գործունեության, շահանոցների ու տաս կոպեկանոցների համար մղվող կռվին, նրա համար դժվար է հեղափոխական ուղին փոխադրվել: Այստեղից էլ առաջ է գալիս սոցիալ-համաձայնողականությունը, վորն արգելակում է բանվորական մասսաների հեղափոխական յելույթը: Բանվորների հեղափոխական խանդավառության դեմ կռվելիս սոցիալ-համաձայնողականներն այլասերվելով դառնում են կապիտալի սպասավորներն ու բանվոր դասակարգի ամենավատանգավոր թշնամիները:

Հեղափոխության հրդեհն առաջ բռնկվում է յեռամեծ յերկրում, Ռուսաստանում: Բուրժուազիայի հեղափոխությունն ընդդեմ ֆեոդալիզմի՝ Յեվրոպայի արևմուտքից դնում եր արևելք (Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ռուսաստան): Բանվոր դասակարգի հեղափոխությունն ընդդեմ բուրժուազիայի՝ արևելքից արևմուտք է գնում: Հավանորեն Ռուսաստանից հետո հերթը Գերմանիային է, վոր փակուղու մեջ է դրվել, վորից դուրս գալու ուրիշ յելք չունի, քան սոցիալիստական հեղափոխությունն է: Հումքով հարուստ Ռուսաստանն ու տեխնիկական բարձր զարգացում ունեցող Գերմանիան կապիտալիստական լուծը խորտակելուց հետո միանալով՝ արտասովոր հզորություն ունեցող աբնտեսական միավոր կկինեն: Կապիտալը, գոնե Յեվրոպայում, պրոլետարական իշխանություն ունեցող յերկրների ողակման մեջ կլինի: Վորքան ավելի լայն ծավալվի բանվոր դասակարգի իշխանու-

[1] Կոմմունիզմն ավելի նեղ գաղափար է, քան սոցիալիզմը: Սոցիալիզմ խոսքով կարելի յե արտահայտել հանրային տնտեսության կոլեկտիվացման թե ավելի անկատար ձևերն, ինչպես կառք խոսքը կարող է թե այլ ու թե ավտոմոբիլ նշանակել: Կոմմունիզմը սոցիալիզմի ամենակատարյալ ձևն է:

թյունը յերկրագնդիս յերեսին, այնքան ավելի շատ կդժվարանա կապիտալիզմի կենսունակությունն ու գործունեությունն, այնքան ավելի արագ կանցնի հեղափոխությունը յերկրե յերկիր: Ի հարկե, չի կարելի ճշտորեն նախատեսել հեղափոխության մարշրուտը: Մեծ դեր պետք ե խաղա գաղութային ու կիսագաղութային Արևելքի հեղափոխությունը, վորը կկտրատի մետրոպոլիաների տնտեսական կյանքի բոլոր թելերը:

Համենայն դեպս, ինչպես էլ վոր լինի, վորոշ յերկարատևություն ունեցող անցման ժամանակաշրջանն անխուսափելի յե: **Յեվ այս ժամանակաշրջանը պետք ե լինի վոչ միայն ժամանակաշրջան մի կռվի, վոր պրոլետարական իշխանություն ունեցող յերկիրը մղում ե կապիտալիզմի յերկրների հետ, այլ յեվ նրանց այս կամ այն կերպ դասավորվող կենակցության ժամանակաշրջան:** Կապիտալիստական յերկրների հետ նման հարկադրված կենակցության հետևանքով պրոլետարիատի իշխանություն ունեցող յերկրները չեն կարողանա իրենց տնտեսության մեջ մի անգամից վերացնել փոխանակության բոլոր տարրերը, և չեն կարող այն պատճառով, վոր անհրաժեշտ կլինի շարունակել կապիտալիստական յերկրների հետ տնտեսական հարաբերությունները: **Անցման ժամանակաշրջանը պետք ե լինի մի կռվի ժամանակաշրջան, վոր մղվում ե կապիտալիզմի ու կոմունիզմի միջեվ վոչ միայն համաշխարհային մասշտաբով, այլ յեվ պրոլետարիատի իշխանություն ունեցող յերկրների ներսում էլ: Անցման ժամանակաշրջանի ընթացքում կոմունիզմը ծավալվելու յե վոչ միայն լայնքով, այլ դեպի խորքն էլ յեվ ավարտելու յե արտադրության համակենտրոնացումը, վոր չեր ավարտի կապիտալիզմը, կոմունիստական շինարարության մեջ ներգրավելով մանր արտադրողների ու գյուղացիների մասսաները:** ԽՍՀՄ ներկայումս ընթանում ե հենց այս ճանապարհով:

§ 127. ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄՆ ՈՒ ՆԵՊԸ.

ՌԱԶՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ:

Պրոլետարիատի իշխանության առաջին յերեք տարիները **բացահայտ դասակարգային կռվի տարիներ եյին մեզանում:** Բուրժուազիան լարել եր իր բոլոր ուժերը, վոր նորից ստրկացնի համաշխարհային պրոլետարիատի այն զորամասին, վորը դուրս եր յելել նրա իշխանության տակից: Քաղաքացիական պատերազմի ու շրջափակման տարիներում մեր տնտեսական քաղաքականության հիմնա-

կան խնդիրը թշնամուն տնտեսապես զինաթափ անելն եր: **Սոցիալիստական հեղափոխության հիմնական քայլն, այն ե՝ արդյունաբերության պետականացումը հարկ յեղավ կատարել ըստ կարելվույն խիստ արագորեն, վորպեսզի բուրժուազիայի վոտների տակից քաշենք նրա հզորության հիմնական պատվանդանն, այսինքն արտադրության վրա ունեցած իշխանությունը:** Բուրժուազիան ուժեղ եր նաև նրանով, վոր նրա ձեռքումն եր բաշխման ամբողջ ապարատն ի դեմս առևտրի: Հարկ յեղավ այս ապարատը վերացնել և այն փոխարինել կազմակերպված բնավճար բաշխումով (натуральное распределение), վոր կատարվում եր ըստ տոմսերի: Գյուղացիությունը, վորը կալվածատիրական հողերն ստացել եր և ազատագրվել եր ճորտային կախման բոլոր մնացորդներից, ստիպված եր իր արտադրանքի բոլոր ավելցուկները տալու բանակի ու բանվորների համար, վորոնք նրան պաշտպանում եյին բուրժուա-կալվածատիրական արշավանքից (պարեն-գրավումն): Ընդհանուր գծերով այսպես եր կազմակերպվել մեր տնտեսական քաղաքականությունն այսպես կոչված **ռազմական կոմունիզմի** տարիներում:

ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼԸ:

Յերբ բուրժուազիայի ռազմական դիմադրությունը հաղթահարվեց, սրանից հետո սկսվում ե սոցիալիզմի սիստեմատիկ շինարարության ժամանակաշրջանը կամ այսպես կոչված նոր տնտեսական քաղաքականության ժամանակաշրջանը: Վերացվեցին այն ձեռնարկումները, վորոնք թելադրված եյին քաղաքացիական պատերազմի ու ինտերվենցիայի պայմանների կողմից միայն: Պարենգրավումը փոխարինվեց պարենհարկով: Պարենհարկը տալուց հետո գյուղացին կարող ե իր արտադրանքի ավելցուկները ծախել իր հայեցողությամբ: Սրա համար թույլատրված ե առևտուրը և ընդ սմին վերացված ե ինքնավճար բաշխման ապարատն էլ:

Բայց տնտեսական այն հիմնական նվաճումները, վոր պրոլետարական իշխանությունն արել եր ռազմական կոմունիզմի դարաշրջանում, **անխախտ մնացին: Պրոլետարիատի ձեռքումն եյին ժողովրդական տնտեսության բոլոր հրամանատարական բարձունքները—խոշոր արդյունաբերությունը, տրանսպորտն, վարկային սիստեմն ու արտաքին առևտրի մենաշնորհը:** Սոցիալիզմի շինարարության համար լայն բազան պատրաստ կար:

Ամենաբարդ խնդիրն արդյունաբերության ու գյուղատնտե-

տեսության միջև նյութերի փոխանակությունը կարգի գցելն էր: Արդյունաբերությունը գտնվում է պետության ձեռքում: Գյուղատնտեսությունը գտնվում է փոշիացած գյուղացական մասսայի ձեռքում: Պարենգրավումը վերացված էր: Հապա արդյունաբերությունն ինչպես կարող էր ձեռք գցել գյուղատնտեսական հումքը, վոր այնքան հարկավոր էր իրեն: Բանվորն ինչ ճանապարհով կարող էր գյուղից հաց, բանջարեղեն, կաթ, միս և այլն ստանալ: Մյուս կողմից, գյուղացին ինչ կերպ կարող էր ստանալ իրեն հարկավոր գյուղատնտեսական գործիքներն ու սպառման այն միջոցները, վոր նրան տալիս է արդյունաբերությունը (մանուֆակտուրա, վոտնաման, աղ, նավթ, ծխախոտ և այլն): Պարզ է, վոր այստեղ առուծախի հարաբերություններ են անհրաժեշտ: Անհրաժեշտ են մինչև այն ժամանակ, քանի գյուղացական մասսաները տնտեսապես փոշիացած են մնում, քանի գյուղատնտեսությունը լիակատար հանրայնացման չի յենթարկվել:

Այստեղից էլ առաջ է գալիս շուկան վերականգնելու անհրաժեշտությունը:

ՄԵՐ ՇՈՒԿԱՅԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ:

Մեզանում ո՞վքեր են հանդես գալիս ներքին շուկայում:

1. Պետությունը՝ հետևյալ չորս գծով.

ա) իբրև արդյունաբերության համար անհրաժեշտ հումքի գնորդ,

բ) իբրև գնորդ գյուղացիների ու տնայնագործների պրոդուկցիայի այն մասի, վորը պետք է արտասահման տարվի,

գ) իբրև արդյունաբերության վերջնական արտադրանքի գնորդ,

դ) իբրև միջնորդ գյուղի ու քաղաքի միջև:

2. Պրոլետարիատն իբրև գնորդ սպառման միջոցների, վոր նա ծախ է առնում թե պետությունից, թե գյուղացիներից ու թե տնայնագործներից:

3. Գյուղացիք, տնայնագործները և այլն,

ա) իբրև գնորդներ, վորոնք ծախ են առնում պետությունից, ու իբրև վաճառորդներ, վորոնք բան են ծախում պետությանը,

բ) իբրև գնորդներ ու վաճառորդներ, վորոնք ծախ են առնում իրարից և բան են ծախում իրար,

գ) իբրև վաճառորդներ, վորոնք բան են ծախում պրոլետարիատին:

4. Մասնավոր առևտրականները, վորոնք գնում են և շահույթով վերավաճառում վերոհիշյալ բոլոր գծերով, մասնավոր ձեռնարկուները, նմանները և այլն:

Արդյոք հնարավո՞ր է, վոր պետական սեկտորի ու մասնավորի հարաբերություններն առուծախի բնույթ ունենան, իսկ առանձին պետական ձեռնարկությունների հարաբերությունները բնավճար հանձնումների (натуральная передача) բնույթ կրեն:

Պետական ձեռնարկությունները հաշիվներն անում են փողով, վորչափով վոր նրանք հանդես են գալիս ներքին ու արտաքին շուկայում և վորչափով վոր բանվորներին ու ծառայողներին ապրուստի համար միջոցներ են տալիս: Արդյոք կարո՞ղ են պետական ձեռնարկությունները թողնել ամեն տեսակի փողային հաշիվները, քանի վոր նրանք իրարից են բան առնում և իրար են բան տալիս: Վոչ, չեն կարող:

Յեթե արտադրանքը պետական սեկտորի ներսում շարժվելով բոլորովին ազատ լինի փողային հաշվարկումներից, ապա վոչ մի հիմք չի լինիլ նրա ինքնարժեքը հաշվելու համար (գնարկության համար): Պետական սեկտորը յերբեք չի իմանալ, թե մասնավորի հետ ունեցած փոխանակությունն ինչ հետևանքի յե հասցնում. պետսեկտորի հարստացմանն է հասցնում, թե նրա նվազելպրծնելուն:

ՏՆՏԵՍԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ:

Ահա թե ինչն է պատճառը, վոր նոր տնտեսական քաղաքականության ժամանակաշրջանում պետական ձեռնարկությունները տնտեսավարության են անցնում (хозрасчет): **Յուրաքանչյուր ձեռնարկություն արտադրության բոլոր միջոցների ու արտադրանքների պայմանական սեփականատեր է համարվում մի տեսակ, այն միջոցների ու արտադրանքների, վորոնք նրա տնօրինության են յենթակա:** Ամեն ինչի, վոր տվյալ ձեռնարկությունը վերցնում է ուրիշ պետձեռնարկություններից, վճարում է, և ամեն ինչի համար էլ, վոր տալիս է ուրիշ պետձեռնարկությունների, վճար է առնում նրանցից: Թե արդյոք ձեռնարկությունն արդարացնում է իր գոյությունը թե վոչ, այս մասին դատում են, ի միջի այլոց, նայելով ձեռնարկության շահութաբեր կամ վնասաբեր լինելուն: Մենք ասում ենք «ի միջի այլոց», վորովհետև շահութաբերության նկատառումները վճռական նշանակություն չունեն մեզանում (այս մասին ավելի մանրամասն խոսելու յենք հետո):

Վերևում մենք ընդհանուր գծերով մատնանշեցինք, թե ինչ

տեսության միջև նյութերի փոխանակությունը կարգի գցելն եր։ Արդյունաբերությունը գտնվում է պետության ձեռքում։ Գյուղատնտեսությունը գտնվում է փոշիացած գյուղացական մասսայի ձեռքում։ Պարենգրավումը վերացված եր։ Հապա արդյունաբերությունն ինչպես կարող եր ձեռք գցել գյուղատնտեսական հումքը, վոր այնքան հարկավոր եր իրեն։ Բանվորն ինչ ճանապարհով կարող եր գյուղից հաց, բանջարեղեն, կաթ, միս և այլն ստանալ։ Մյուս կողմից, գյուղացին ինչ կերպ կարող եր ստանալ իրեն հարկավոր գյուղատնտեսական գործիքներն ու սպառման այն միջոցները, վոր նրան տալիս է արդյունաբերությունը (մանուֆակտուրա, վոտնաման, աղ, նավթ, ծխախոտ և այլն)։ Պարզ է, վոր այստեղ առուծախի հարաբերություններ են անհրաժեշտ։ Անհրաժեշտ են մինչև այն ժամանակ, քանի գյուղացիական մասսաները տնտեսապես փոշիացած են մնում, քանի գյուղատնտեսությունը լիակատար հանրայնացման չի յենթարկվել։

Այստեղից էլ առաջ է գալիս շուկան վերականգնելու անհրաժեշտությունը։

ՄԵՐ ՇՈՒԿԱՅԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ։

Մեզանում ովքեր են հանդես գալիս ներքին շուկայում։

1. Պետությունը՝ հետևյալ չորս գծով.

ա) իբրև արդյունաբերության համար անհրաժեշտ հումքի գնորդ,

բ) իբրև գնորդ գյուղացիների ու տնայնագործների պրոդուկցիայի այն մասի, վորը պետք է արտասահման տարվի,

գ) իբրև արդյունաբերության վերջնական արտադրանքի գնորդ,

դ) իբրև միջնորդ գյուղի ու քաղաքի միջև։

2. Պրոլետարիատն իբրև գնորդ սպառման միջոցների, վոր նա ծախ է առնում թե պետությունից, թե գյուղացիներից ու թե տնայնագործներից։

3. Գյուղացիք, տնայնագործները և այլն,

ա) իբրև գնորդներ, վորոնք ծախ են առնում պետությունից, ու իբրև վաճառորդներ, վորոնք բան են ծախում պետությանը,

բ) իբրև գնորդներ ու վաճառորդներ, վորոնք ծախ են առնում իրարից և բան են ծախում իրար,

գ) իբրև վաճառորդներ, վորոնք բան են ծախում պրոլետարիատին։

4. Մասնավոր առևտրականները, վորոնք գնում են և շահույթով վերավաճառում վերոհիշյալ բոլոր գծերով, մասնավոր ձեռնարկուները, նմանները և այլն։

Արդյոք հնարավո՞ր է, վոր պետական սեկտորի ու մասնավորի հարաբերություններն առուծախի բնույթ ունենան, իսկ առանձին պետական ձեռնարկությունների հարաբերությունները բնավճար հանձնումների (натуральная передача) բնույթ կրեն։

Պետական ձեռնարկությունները հաշիվներն անում են փողով, վորչափով վոր նրանք հանդես են գալիս ներքին ու արտաքին շուկայում և վորչափով վոր բանվորներին ու ծառայողներին ապրուստի համար միջոցներ են տալիս։ Արդյոք կարո՞ղ են պետական ձեռնարկությունները թողնել ամեն տեսակի փողային հաշիվները, քանի վոր նրանք իրարից են բան առնում և իրար են բան տալիս։ Վոչ, չեն կարող։

Եթե արտադրանքը պետական սեկտորի ներսում շարժվելով բոլորովին դուրս լինի փողային հաշվարկումներից, ապա վոչ մի հիմք չի լինի նրա ինքնարժեքը հաշվելու համար (գնարկության համար)։ Պետական սեկտորը յերբեք չի իմանալ, թե մասնավորի հետ ունեցած փոխանակությունն ինչ հետևանքի է հասցնում. պետսեկտորի հարստացմա՞նն է հասցնում, թե նրա նվազեցնելուն։

ՏՆՏԵՍԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ։

Ահա թե ինչն է պատճառը, վոր նոր տնտեսական քաղաքականության ժամանակաշրջանում պետական ձեռնարկությունները տնտեսավարության են անցնում (хозрасчет)։ Յուրաքանչյուր ձեռնարկություն արտադրության բոլոր միջոցների ու արտադրանքների պայմանական սեփականատեր է համարվում մի տեսակ, այն միջոցների ու արտադրանքների, վորոնք նրա տնօրինության են յենթակա։ Ամեն ինչի, վոր տվյալ ձեռնարկությունը վերցնում է ուրիշ պետձեռնարկություններից, վճարում է, և ամեն ինչի համար էլ, վոր տալիս է ուրիշ պետձեռնարկությունների, վճար է առնում նրանցից։ Թե արդյոք ձեռնարկությունն արդարացնում է իր գոյությունը թե վոչ, այս մասին դատում են, ի միջի այլոց, նայելով ձեռնարկության շահութաբեր կամ վնասաբեր լինելուն։ Մենք ասում ենք «ի միջի այլոց», վորովհետև շահութաբերության նկատառումները վճռական նշանակություն չունեն մեզանում (այս մասին ավելի մանրամասն խոսելու յենք հետո)։

Վերևում մենք ընդհանուր գծերով մատնանշեցինք, թե ինչ

միջոցներ են ձեռնարկվում մասնավոր առևտրականին շուկայից վտարելու համար։ Մեզ անհրաժեշտ է տիրապետող լինել ոչ միայն արտադրության վոլորտում, այլ և շրջանառության վոլորտում։ Նախ այն պատճառով, վոր մասնավոր առևտրականի գրպանը մտնում են մեծամեծ շահույթներ, վորոնք հանուրդներ են (вычет) պետձեռնարկությունների շահույթից կամ թե այն արժեքից, վոր ստեղծում են գյուղացիները ու տնայնագործները։ Յերկրորդ ու գլխավորապես այն պատճառով, վոր յերբ մասնավոր առևտրականը խցկվում է մի կողմից պետական ձեռնարկությունների և մյուս կողմից գյուղացիների ու տնայնագործների միջև, անհնարին է դառնում գների կարգավորումը։

§ 128. ԳՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.

Բանվորի ու գյուղացու շաղկապը համառորեն պահանջում է, վոր քաղաքի ու գյուղի միջև վոչ թե սոսկական առևտուր լինի, այլ առևտուր կատարվի այնպիսի գներով, վորոնք իսկապես հնարավոր դարձնեին քաղաքի ու գյուղի միջև լինելիք նյութերի բավարար փոխանակությունը։ Քաղաքը պետք է մատչելի գներով հումք ու պարեն ստանա գյուղից։ Գյուղը պետք է մատչելի գներով ստանա արյունաբեռության արտադրանքը, վոր հարկավոր է իրեն։

Գների կարգավորումը կարեվոր է աշխատավարձի մեր բարձրացությունը իրականացնելու համար էլ։

Անվանական աշխատավարձի բարձրացումը գործի մեկ կողմն է միայն։ Յեթե աշխատավարձը բարձրանա 10%-ով և բանվորին հարկավոր ապրանքների ինդեքսն էլ ճի նույնքան տոկոսով, ապա աշխատավարձի բարձրացումը լոկ թղթի վրա յե մնում։ Գների կարգավորման միջոցով միայն կարելի յե այն հետեվանքին հասնել, վոր իրական աշխատավարձը իսկապես բարձրանա։

Շատ կարեվոր նշանակություն ունի գների կարգավորումը մեր արժույթի կայունության համար էլ (այս մասին մենք արդեն վերևում խոսել ենք այն գլխում, վոր նվիրված է փողին)։

Իսկ ինչպես կարելի յե կարգավորել շուկայի գները։ Համենայն դեպս այս չի կարելի անել բացառապես հրամանագրի միջոցով։ Այն բոլոր դեպքերում, յերբ կառավարությունները փորձում են գները կարգավորել զուտ որենադրական ճանապարհով, նրանք

անհաջողության են ունենում. հիշենք թեկուզ հենց այն ամուր գները, վոր դրված էին համաշխարհային պատերազմի ժամանակ։ Բայց բանն էլ հենց այն է, վոր գների կարգավորելու կողմից մեր իշխանությունը գնվում է այնպիսի նպաստավոր պայմանների մեջ, վորովհետև ունի բուրժուական կառավարությունների հետ, վորոնք աճեցնում են մենաշնորհ գների մեջ ձեռնարկությունների միջոցով։ Տիրապետող լինելով արտադրության ամբողջ ու խոշոր առևտրի մեջ և տիրապետող դիրք նվաճելով մանրածախ առևտրի մեջ, պետությունն ու կոոպերացիայի ապարատը կարգավորում են այն գները, վորոնցով նրանք ծախ են առնում ու վաճառում են և հենց սրանով ներգործում են շուկայի այն մասի վրա յել, վորն անմիջապես նրանց ձեռքերում չի գտնվում։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր գները չեն կարող կարգավորվել մենակ այն ձեռնարկություններով, վորոնք կիրառվում են շրջանառության վոլորտում։ Այսպես որինակ, գների իջեցնելու այն պայմարը, վոր մղվում է ցերկայումս, շաղկապվում է արտագրական բնույթ ունեցող ձեռնարկությունների հետ։ Ընդումը գնեի վրա կատարվում է յերկու գծով.

ա) այն հավելուրդները պակասեցնելու գծով, վոր ինքնարժեքի վրա գալով ապրանքների գների վրա յեն բարդում ինչպես առևտրային, այնպես և արտադրական ձեռնարկությունները,

բ) այն իմիջիայլոց իջեցման գծով, վոր ապրանքները բերում են արտադրության վոլորտից։ Ինքնարժեքի իջեցումը գլուխ է բերվում նրանով, վոր բարելավում են տեխնիկան ու արտադրության կազմակերպությունը, քչացնում են գործադրումը (прогул) ու գործակատարները (простой), խստացնում են բանվորական ժամանակը, ապրանքները տիպացված[1] են յեն (типизация), նպատակ է դրվում մասսայական ապրանքների արտադրությունը և այլն։ Յեթե մի կողմից՝ արտադրության յեղանակների բարելավումն ոգնում է գներն իջեցնելու, ապա մյուս կողմից՝ արտադրության միջոցների գների իջեցումը հնարավորություն է տալիս արտադրությունն ընդլայնելու՝ շուկայի այն ընդլայնման համեմատ, վորը գների իջեցման

[1] Որինակ, պակասեցրած է գործվածքների, գլանակների, ամանեղենի ու նման բաների տեսակների թիվը։ Տեսակները բաշխվում են առանձին ձեռնարկությունների միջև այնպես, վոր յուրաքանչյուր ձեռնարկություն կարող է մասնագիտանալ փոքրաթիվ տեսակներ պատրաստելում և այս տեսակներն արտադրել նվազագույն ծախքերով։

հետևանք է լինում։ Սրանից էլ բղխում է այն դրությունը, երբ աստիճանաբար վերացվում է մասսայական սպառման միքանի ապրանքների անբավարար քանակությամբ լինելը։

§ 129. ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ.

ՇԱՂԿԱՊԸ ԳՅՈՒՂԻ ՀԵՏ։

Չքավոր ու կիսապրոլետար խավերը խորհրդային իշխանության հենարանն են յեղել գյուղում և նրա հենարանն են հիմա յել։ Բայց նոր անտեսական քաղաքականության անցնելու հետ պրոլետարիատն ու չքավորագույն գյուղացիությունը դաշն են կնքում միջակ գյուղացու հետ։

Շարունակելով գյուղում կռվել կուլակի գերազորության (засилие) **դեմ, մենք կոոպերացիայի միջոցով չքավորական ու միջակային տնտեսությունը ներգրավում ենք սոցիալիստական շինարարության սիստեմի մեջ։**

Կոոպերացումը գյուղացիությանը բարձրացնում է արտադրական հարաբերությունների նոր աստիճանի վրա։ Ընդամին կոոպերացումը բարձրացնում է գյուղացական արտադրությունը տեխնիկապես էլ։ Արտադրության մեքենայացումը մատչելի չե յուրաքանչյուր չքավորի ու միջակի՝ առանձին-առանձին վերցրած։ Միանալով և կոլեկտիվներ ու ընկերություններ կազմելով գյուղացիները պետությունից ստացվող վարկային ոգնության շնորհիվ աստիճանաբար արորը փոխարինում են տրակտորով, կալսիչ մեքենաներ են ձեռք բերում և այլն։ Կոոպերացիայի շնորհիվ մեր գյուղն արդեն վոտք է դրել տեխնիկական հեղափոխության շրջանը [1], հեղափոխություն, որը պետք է ժամանակի ընթացքում ջնջի քաղաքի ու գյուղի սահմանագիծը և միաձուլի մեր արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը։

§ 130. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱՑՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱԿԱԶՈՒՑՈՒՄԸ (реконструкция).

Բայց մեր արդյունաբերությունը, որը տեխնիկապես անչափ բարձր է կանգնած գյուղատնտեսությունից, նույնպես պետք է անցնի տեխնիկական հեղափոխության բովով։ **Նոր տեխնական**

[1] Գլանի համաձայն 1927 թվականի համար նախանշված է, որ պետք է 130 միլիոն ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ տարածել, այս կազմում է 1913 թվականի համեմատությամբ 140%։

բազմակացության առաջին տարիներում մեր արդյունաբերության առաջ կանգնած եր այն ամենը վերակազմելու խնդիրը, որ կործանել եյին համաշխարհային ու բազմազիական պատերազմները։ Հիմա այս ժամանակաշրջանը հասել է իր վախճանին։ **Սկսվել է մեր արդյունաբերության հիմնական կապիտալ ընդլայնելու յեվ արդյունաբերության՝ նոր ու ավելի կատարյալ տեխնիկայի անցնելու ժամանակաշրջանը** (վերակառուցման ժամանակաշրջանը)։ *Մենք նպատակ ենք դնում փոփոխել մեր յերկրի տնտեսության բուն իսկ բնույթն ու նրա դրությունը համաշխարհային տնտեսության սիստեմի մեջ։* **Համաշխարհային կապիտալին ձեռնտու չեր մեր յերկիրը պահել հողագործական** (аграрный) **յերկրի գրության մեջ, մի յերկրի, որը համաշխարհային շուկային հաց ու գյուղատնտեսական հումք է մատակարարում՝** *մասամբ եկվիվալենտ ամենևին չվճարելով (հին փոխառությունների տոկոսների դիմաց ստանալով) և մասամբ էլ փոխանակելով արտադրության միջոցների հետ ու իշխող դասակարգերին հարկավոր պերճանքի առարկաների հետ։*

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱՑՈՒՄԸ։

Այն իրողությունը, որ արտադրության ամենակարևոր միջոցները մենք պետք է արտասահմանից ներմուծենք, մեզ տնտեսական կախման մեջ է դնում կապիտալիզմի յերկրներից։ **Քանի դեռ մենք արտասահմանյան մեքենաների կարիք ունենք մեր արդյունաբերությունը ընդլայնելու համար, մեր արդյունաբերության ընդլայնումը ուղղակի կախումը ունի մեր արտածումից։** *Վորովհետև մենք միայն արտածելով ենք վճարում ներմուծածի գինը։* **Բայց մեր մինչպատերազմյան արտածումը սովահար արտածումն եր** (ГОЛОДНЫЙ ВЫВОЗ)։ *Հացը, միսը, ձուն ու շաքարը, որ մենք արտահանում եյինք, ավելցուկները չեյին։ Յեթե բանվորներն ու գյուղացիք կուշտ ու կուռ ուտելին, մենք չեյինք կարող արտածում ունենալ։*

Հիմա աշխատավոր լայն մասսաների կյանքի մակարդակը շատ է բարձրացել մեզանում։ Յեթե մենք հիմա ձու քիչ ենք արտահանում, սրա պատճառն այն է, որ միջակ գյուղացին իրան չի զրկում ձվածեղ ուտելուց։ Բանվորների՝ կովի յուղ բանեցնելը նվազեցնում է յուղի արտածումը։ Գյուղացական ապրուստի մինչից վերանում է հարդախառն հացը, և այս պակասեցնում է մեր արտածումը։

Յեթե ապագայում մեր գյուղատնտեսական պրոդուկցիան

շարունակ աճի, ապա սրա հետ միասին պետք ե շատանա աշխատավորների սպառումն ել։ **Անհրաժեշտ ե, վոր մեր արդյունաբերության զարգացումն ապագայում կախված չլինի մեր գյուղատնտեսական արտադրումից, ուստի մենք պետք ե մեր ծանր արդյունաբերությունն ընդարձակենք յեվ զարգացնենք թե քանակապես ու թե վորակապես։**

Մեր մետաղագործությունը տրանսպորտի ու ռազմական գործի կարիքներին սպասարկելու կողմն եր ուղղված ավելի։ Մի կողմից՝ ռելսերի, վագոնների, շոգեկառքերի արտադրությունը, մյուս կողմից՝ թնդանոթների, ռումբերի, զրահի ու նման բաների արտադրությունը։ Տրանսպորտը պետք ե սպասարկեր մեր գյուղատնտեսական արտածմանը։ Ցարական կառավարության դաշնակիցները — ֆրանսիական իմպերիալիստները — ռազմական տեսակետից ել եյին շահագրգռված, վոր մեր տրանսպորտը զարգանա։ Յերկաթուղիներն ապահովում եյին ռուսական զորքերը գերմանական սահմանը փոխադրելը։

Մի բան, վոր հիմա մեզ անհրաժեշտ ե, այն ե, վոր մեքենաշինությունը լայնորեն ծավալենք ու զարգացնենք։ **Այն բոլոր մեքենաները, վոր հարկավոր են թե մեր գյուղատնտեսությանը յեվ թե արդյունաբերությանն ու տրանսպորտին (սրանց թվում նայեվ ավտոտրանսպորտին), ժամանակի ընթացքում պետք ե արտադրվեն մեր յերկրի ներսում։** *Թե գյուղատնտեսական յերկրի այսպիսի արդյունաբերացումը հնարավոր ե և ձեռնտու, այս մասին ամենից լավ վկայում ե Հյուսիսային Ամերիկայի որինակը։* **Անհրաժեշտ ե շատ ուշադրություն նվիրել այն հումքն արտադրելուն, վորը մենք հիմա ներմուծում ենք արտասահմանից, յեվ վորը կլիմայական պայմանների շնորհիվ կարող եր մեզանում ել արտադրվել** *(որինակ բամբակը)։*

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ։

Մինչև հիմա մենք արտադրության վերականգնումը, ռացիոնալիզացիան գլուխ եյինք բերում հին սարքավորման սահմաններում։ **Այժմ, վերակառուցման ժամանակաշրջանում, յերբ նոր ձեռնարկություններ ենք ստեղծում, մենք պետք ե այս ձեռնարկությունները կառուցենք տեխնիկայի վերջին խոսքի համաձայն։** *Ավելի ճիշտն ասած՝ այս վերջին խոսքը պետք ե մենք ինքներս ասենք։* **Մեզանում հնարավոր են այնպիսի նվաճումներ, վորոնք կապիտալիզմի յերկրներին անմատչելի յեն։** *Այսպիսիք են, որինակ, այն նվաճումները, վոր ունենք արտադրության լայնածավալ ելեքտրոֆիկացիայի ասպարեզում, արտադրական առողջապահության ասպարեզում (վորով կապիտալիստական յերկրներում հետաքրքըրվում են վոստիկանական կարգադրությունների սահմաններում միայն), արտադրությունն ըստ համապատասխան ռայոնների նպատակահարմար կերպով համակենտրոնացնելու ասպարեզում, ստանդարտացման ու տիպացման ասպարեզում, վորտեղ մեր որերում կապիտալիզմը հանդես ե գալիս իբրև տեխնիկական առաջադիմության արգելակ (տես X գլուխը)։ Արդի կապիտալիստական տնտեսությունը տեղն ու տեղը մի բաղխում ե, վոր լինում ե արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների միջև։ Քանի վոր մեր հեղափոխությությունը վերացնում ե այս բաղխումն, ապա հեղափոխությունը պետք ե արտադրողական ուժերի բուռն զարգացում առաջ բերի։ Տնտեսական հեղափոխությանը պետք ե հաջորդի տեխնիկական հեղափոխությունը։*

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ։

*Նեպը յերբեք չպետք ե շփոթել բուրժուական յերկրների պետական կապիտալիզմի հետ։ Վերջինս լայնորեն զարգացավ համաշխարհային հեղափոխության ժամանակ։ Արդյունաբերության բազմաթիվ ճյուղեր ռազմայնացվեցին (*милитаризация*), իսկ մյուսները պետության պլանային միջամտությանը յենթարկվեցին թե արտադրության հարցերում ու թե արտադրանքը բաշխելու հարցերում (ցարական Ռուսաստանի ռազմարդյունաբերական կոմիտեները)։ Լայն սպառման առարկաները բաշխվում եյին տոմսերով։ Պետությունը խստորեն կարգավորում եր առևտուրն, ինչպես և արժեթղթերի առևտուրը։ Խաղաղ ժամանակ ել պետական կապիտալիզմի տարրերը հանդես եյին գալիս իդեմս այն իրողության, վոր կային թե զուտ պետական տրանսպորտային (պետական յերկաթուղիներ) ու արդյունաբերական ձեռնարկություններ և թե խառն ակցիոներական ընկերություններ (վորոնց ակցիաների մի մասը պատկանում եր պետությանը)։*

Պետական կապիտալիզմի ու նեպի տարբերությունն այն ե, վոր առաջին դեպքում արտադրության տնորենն արտադրության միջոցների սեփականատերերի — շահագործողների դասակարգն ե իդեմս իր դասակարգային որգանի, այն ե՝ պետության։ Իսկ մեզանում հրամանատարական բարձունքները, այն ե՝ տրանսպորտը, խոշոր արդյունաբերությունը, վարկային սիստեմն ու արտաքին առևտուրը գտնվում են

պրոլետարիատի ձեռքում։ Բուրժուական յերկրների պետական կապիտալիզմը մեկն է այն ձևերից, որով կապիտալիստների դասակարգը հարմարվում է գոյության նոր պայմաններին։ Իսկ նեպի նպատակը կապիտալիզմը վոչնչացնելն է։

Նեպի սիստեմում պետական կապիտալիզմի տարրերն են կոնցեսիաներն ու վարձակալությունները, վորչափով վոր սրանք պետության վերահսկողությանը յենթարկվող կապիտալիստական ձեռնարկություններ են։ Բայց յեթե կոնցեսիաներում ու վարձակալությունների մեջ յեղած կապիտալն իր բնույթով նույնն է, ինչ վոր է բուրժուական յերկրներում, ապա պետությունը մեզանում բոլորովին այլ պետություն է։ Մեզանում պետությունը վոչ թե կապիտալիզմը պաշտպանելու, այլ կապիտալիզմը խորտակելու գործիք է։

§ 131. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ.

XII գլխում մենք քննել ենք հավելյալ արժեքի, շահույթի ու աշխատավարձի հարցը խորհրդային տնտեսության մեջ։ Այս մենք արինք մի տեսակ կանխավճարի ձևով, վորովհետև մի կողմից՝ սովորողի համար դժվար է մինչև գրքի վերջն սպասել այն բոլոր հարցերի լուծմանը, վորոնք հուզում են նրան, իսկ մյուս կողմից՝ մեր տնտեսության հիմքերի մասին լիավարտ գաղափար կարելի չէ տալ այն բանից հետո միայն, յերբ սովորողը ծանոթացել է մեր նաշնորհատիրական կապիտալիզմի հետ ու մեր տնտեսական քաղաքականության հիմնական գծերի հետ։

Այս պատճառով առաջարկում եմ, վոր սովորողներս այս հոդվածը սերտելուց առաջ պետք է սերտեն յերկրորդ անգամ XIII գլուխը, վորովհետև այս գլուխը նրա շարունակությունն է։

ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.

Սկսենք այնտեղից, վորտեղ մենք կանգ ենք առել XIII գլխում, այն է սկսենք այն հարցից, թե արժեքի որենքն ինչ ներգործություն ունի խորհրդային տնտեսականության մեջ։

Արտադրական հարաբերությունների ձևերի տեսակետից խորհրդային միության ժողովրդական տնտեսությունը կարելի է բաժանել հետևյալ սեկտորների.

1. Սոցիալիստական սեկտոր. ա) պետական ձեռնարկություններն ու սրանց բանվորները և բ) խորհրդային կոոպերացիան։

2. Պետական կապիտալիզմի սեկտոր (կոնցեսիաներն ու սրանց բանվորները. վարձակալությունները)։

3 Կապիտալիզմի սեկտոր (մասնավոր ձեռնարկություններն ու սրանց բանվորներն, առևտրային կապիտալը)։

4. Փոշիացած մանր փոխանակային արտադրության սեկտոր (գյուղացիք, վորչափով վոր սրանք բանում են շուկայի համար ու ոնայնագործները)։

5. Բնատնտեսության սեկտոր (գյուղացիք, վորչափով վոր սրանք իրենց համար են արտադրում. նահապետական տնտեսակարգի մնացորդները)։

Առաջին չորս սեկտորի միջև ու նրանց ներսում յեղած տնտեսական հարաբերությունը փոխանակության ձև, առ ու ծախի ձև ունի։ Յեվ իսկապես, մենք արդեն տեսել ենք, վոր առանձին պետական ձեռնարկությունները վոչ թե պարզապես իրար են հանձնում իրենց արտադրանքներն, այլ ծախում են իրար և գնում են միմյանցից։

Гомза-ն վոչ թե ածուխը պարզապես ստանում է պետական հանքարաններից, այլ ծախ է առնում կանխիկ փողով կամ թե մուրհակներ տալով։ Այս մուրհակների փողը պետք է ժամանակին վճարվի, այլապես մուրհակները կբողոքարկվեն։ Յեթե Донуголь-ին հարկավոր է կրեպեժի փայտեղեն, դինամոմաշինա, արտահագուստ, կամ թե մեխեր, ապա նույն կարգով ծախ է առնում համապատասխան պետական ձեռնարկություններից ամեն ինչ, վոր իրեն հարկավոր է։ Սակայն բանն այսպես է արտաքուստ միայն։ Վորչափով վոր պետական տնտեսությունը հարկ է ունենում գնելու կամ ծախելու, այն վորպեսզի կարողանա ծայրը ծայրին բերել, պետք է իր ձեռնարկություններից յուրաքանչյուրի գործունեության արգասիքն ստուգի առք ու վաճառքի տեսակետից։ Ձեռնարկություններից վոմանց առաջադրվում են անվնասաբերության պահանջներ (տնտեսավարություն), մյուսներին՝ շահույթաբերության պահանջներ [1] (առևտրային հաշվարկ)։ Իրականում կրեպեժի փայտեղենը Северолес-ից Донуголь-ին անցնելով եյապես տարբեր տերերի ձեռք չի ընկնում, տերը նույնն է մնում, վորովհետև թե գնորդն ու թե վաճառորդը նույն պետությունն է։ Պետական արտադրանքն այստեղ միայն պայմանաբար է ապրանքի ձև ընդունում, վորովհետև հենց իրենք ձեռ-

[1] Պրոլետարիատի համար շահույթն, իհարկե, վոչ թե յուրացնել, այլ յուրը տնտեսել, կուտակել է նշանակում։

նարկություններն ել միայն պայմանաբար են համարվում անկախ տնտեսական միավորներ։

Սոցիալիստական սեկտորի պետական մասի ներսում փոխանակությունը վոչ թե արտադրական հարաբերությունների ձև ե արդեն, այլ լոկ մի ձև, վորով սեկտորն ամբողջությամբ առած հարմարվում ե իրեն շրջապատող փոխանակային տարերքին տիրանալու նպատակով։

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԱՆԱՊՐԱՆՔԱՅՆԱՑՈՒՄԸ (растоваривание)։

Վոր բանվորական ուժը սոցիալիստական սեկտորի պետական մասի ներսում դադարել ե ապրանք լինելուց, մենք արդեն ապացուցել ենք XIII գլխում։ Այսպիսով սոցիալիստական սեկտորի ներսում եյապես վերացված ե ինչպես բանվորական ուժի ապրանքայնությունն, այնպես ել պրոդուկցիայի այն մասի ապրանքայնությունը, վորն այս սեկտորից դուրս չի յելնում արտաքին աշխարհը։

Յերբ սոցիալիստական սեկտորի պետական մասի պրոդուկցիան դուրս ե գալիս արտաքին աշխարհ, այն, իհարկե, ապրանք ե դառնում, բայց վոչ միշտ լրիվին ու վոչ միշտ միևնույն աստիճանով։ Արտադրանքն ապրանք ե դառնում այն չափով միայն, վորչափով վոր ապրանքարտադիրների միջև յեղած հարաբերությունները զուտ ապրանքային, փոխանակային բնույթ են կրում։ Փոխանակային հարաբերությունների բնորոշ գիծն այն ե, վոր կողմերից մեկի հոգը չե մյուսը և վոր կողմերից յուրաքանչյուրն իրեն ամբողջովին հակադրում ե մյուս կողմին։ Բայց արդյոք կարելի՞ չե այսպիսի հակադրման (հակամարտության) մասին խոսել, յերբ պետությունը գյուղացական կոլլեկտիվին տրակտոր ե ծախում տարկետումով՝ վոչինչ չվաստակելով և յուրաքանչյուր տվյալ դեպքում այն վտանգի սպառնալիքին յենթարկվելով, թե տրակտորի գինը կարող են չվճարել։ Պարզ ե, վոր այստեղ մի բան ավելի կա, քան փոխանակային հարաբերություններն են, և վոր այստեղ պետությունը հանդես ե գալիս վոչ միայն իբրև իր արտադրանքը ծախող, այլ և իբրև ժողովրդական ամբողջ տնտեսությունը կազմակերպող։

Սոցիալիստական սեկտորի կոոպերատիվ մասի տնտեսական կապերն ել չի կարելի զուտ փոխանակության տեսակետով քննել։ Մեր սպառողական կոոպերատիվի նպատակը վոչ թե հարստանալն ե, այլ աշխատավոր մասսաներին սպասարկելը։ Մեր արտադրական կոոպերացիան փաստորեն ներկայացնում ե արտադրու-

թյան հանրայնացման կղզյակներ և մեր ամբողջ կոոպերացիան սոցիալիստական շինարարության մի ձևն ե։ **Սոցիալիստական սեկտորի կողմից արտադրանքներն աստիճանաբար, բայց անշեղորեն անապրանքայնացնելը մեր տնտեսականության հիմնական բնութագիծն ե։**

Ապրանքի թագավորությունն արժեքի որենքի թագավորությունն ե։ Պարզ փոխանակության պայմաններում գների կարգավորիչն արժեքն ե, իսկ կապիտալիզմի պայմաններում՝ արտադրության գներն են, վորոնք նույնպես գոյանում են արժեքի որենքի հիման վրա։ Մեզանում ինչն ե կարգավորում գները։

Վոր մեզանում գները զուտ տարերայնորեն չեն կարգավորվում, այս մենք արդեն պարզաբանել ենք վերևում։

Պետությունը վարում ե գների վորոշ քաղաքականություն, վորը մասնավորապես հետապնդում ե հետևյալ նպատակը—ամրապնդել բանվորների ու գյուղացիների շաղկապը, բարձր պահել աշխատավարձի մակարդակը, բարձր պահել խորհրդային արժույթը, սոցիալիստական արդյունաբերության ընդլայնման ֆոնդ ստեղծել և այլն։ Ընդհանրապես ասած, հետապնդում ե սոցիալիստական շինարարության նպատակը։

Արդյոք այս նշանակում ե, վոր ԽՍՀՄ մեջ գները մենակ պետական պլանային կարգավորման արգասիք են։ Դարձյալ վոչ։ Յեթե մեր պետությունն ամենազոր լիներ գների քաղաքականության հարցերում, ապա տրակտորի գինն իջեցնելով կհասցներ մինչև մեկ ռուբլու, և հենց սրանով ել տրակտորը մատչելի կդարձներ ամենաաղքատ գյուղացուն։ Բայց տրակտորը մեկական ռուբլով ծախելն արդեն վոչ թե ծախել ե նշանակում, այլ նշանակում ե ուղղակի տալ բնավճար բաշխման կարգով։ Այս նշանակում ե, վոր յեթե մեր պետությունն ամենազոր լիներ գների հարցերում, ել վոչ գներ հարկավոր կլինեյին և վոչ ել առուծախ, այլ կարելի յեր արդեն անցնել սոցիալիստական բնավճար բաշխմանը (натуральное распределение)։ Գների իր քաղաքականության ընթացքում մեր պետությունը դեմ ե առնում մի սահմանափակման, վոր լինում ե շուկայի տարերային որենքի կողմից, աշխատանքային արժեքի որենքի կողմից։

ԲԱՐԴ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ։

Այսպիսով ԽՍՀՄ մեջ գների բնույթը բարդ ե։ Գները կառավարում ե մի բարդ կարգավորիչ, վորի մեջ սերտորեն խառնահյուսվում, իրար դեմ կռվում, իրար վրա ազդում յեվ միմյանց սահմանափակում են տարերքի տարրերն ու պլանի տարրերը։

Վորքան ավելի չե սատկանում պետական ու կոոպերատիվ սեկտորի ազդեցությունը մնացած սեկտորների վրա, այնքան ավելի չե մեզանում գինը վերասերվում. պլանի ազդեցությունն աճում է, տարերքի ազդեցությունը նվազում։

Սրա փոխարեն արտադրության գների որեճիը մեզանում բոլորովին կորցրել է ճշտությունը։ Արտադրության գինն արտադրության ծախքերի գումարն է՝ պլյուս միջին շահույթը։ Ինչպես և առաջ գալիս շահույթի՝ միջին նորմային ձգտելը։ Նրանով, վոր կապիտալը պակաս շահութաբեր ճյուղերից հոսում լցվում է ավելի շահութաբեր ճյուղերի մեջ։ Արդյոք մեզանում այսպիսի հոսում կա՞ թե վոչ։ (Մասնավոր կապիտալիստական սեկտորը մենք մի կողմ ենք թողնում, վորովհետև նրա տեսակարար կշիռը փոքր է)։

Մեզանում ամենաշահութաբերը թեթև արդյունաբերությունն է։

Յեթե կապիտալը մեր յերկրում հոսեր այնտեղ, վորտեղ շահույթն ավելի բարձր է, մենք ամեն կերպ կզարգացնեյինք թեթև արդյունաբերության շահութաբեր ճյուղերն իհարկե անշահութաբեր ծանր արդյունաբերության։

Իրականում հենց հակառակն է կատարվում։

Այս նշանակում է, վոր շահույթի՝ միջին նորմայի ձգտում չկա, ուրեմն արտադրության գին էլ չկա։

ՄԵԶԱՆՈՒՄ ԻՆՉՆ Է ԴՅՈՒՐԱՑՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ։

Կապիտալի այն ձգտումը, վորով այն վազում է ըստ կարելվույն ավելի բարձր շահույթի յեեվից, սովորաբար արգելք է լինում հումքագործական յերկրների արդյունաբերացմանը, վորովհետև այսպիսի յերկրներում կապիտալը ներգրավողն ամենից ամենից ավելի լինում են թեթև արդյունաբերությունն ու տրանսպորտը։ **Մեզանում այս արգելքը չկա։** Մեզանում կապիտալի նոր ներդրումներ կատարվում են վոչ թե այնտեղ, վորտեղ մոտիկ ապագայում կարելի չե ավելի բարձր շահույթներ սպասել, այլ այնտեղ, վորտեղ այս անել պահանջում են սոցիալիզմի շինարարության շահերը։

Իհարկե, սրանից չպետք է այն յեզրակացությունը անել, թե մեր արդյունաբերության շահութաբերության հարցերը բոլորովին ճշտությունը չունեն մեզ համար։

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ։

Մեր շահույթը սոցիալիստական կուտակման ամենագլխավոր աղբյուրն է։ Իսկ սոցիալիստական կուտակման հարցը մեր տնտեսության մեջ առաջ էլ կարևոր նշանակություն ուներ, իսկ հիմա,

յերբ մենք մտել ենք վերակառուցման ժամանակաշրջանը, հիշյալ հարցը խիստ մեծ կարևորություն և ստանում։ Քանի դեռ շարունակվում եր վերականգման պրոցեսը, քանի դեռ բավականաչափ լիարեռնված չեյին մեր այն բոլոր ձեռնարկությունները, վորոնք մինչպատերազմյան ժամանակից են մեզ ժառանգություն մնացել, մեր տնտեսական զարգացման հարցն առաջին հերթին շրջանառու կապիտալների կուտակման հարց եր[1]։ Իսկ հիմա առաջին շարքն է մղվում յերկար տարիների համար հիմնական կապիտալի խոշոր ներդրումներ կատարելու հարցը։ Քանի վոր չի կարելի սպասել, թե մոտիկ ապագայում ոտարերկրյա յերկարատև վարկեր կստանանք, ապա ուրեմն մեր տնտեսական զարգացումը կարող է խարսխվել մեր կուտակման վրա միայն, կուտակում, վորի ամենագլխավոր աղբյուրը մեր պետական ու կոոպերատիվ արդյունաբերական, տրանսպորտային, առևտրային, վարկային ու նման ձեռնարկությունների շահույթն է։ Ընդ ամին այն ճանապարհները, վորոնցով անցնելով այս շահույթը մտնում է մեր սոցիալիստական կուտակման ֆոնդի մեջ, տարբեր են և սրանք են.

ա) շահույթի ուղղակի հատկացումները պետության ոգտին ու հարկերը, վորչափով վոր այս միջոցները (հատկացումներն ու հարկերը) գործադրվում են տնտեսական պատվանդանն ընդլայնելու վրա,

բ) բանվորական շինարարության համար արված հատկացումները,

գ) շահույթի մի մասի գործադրությունն այն պետական ու կոոպերատիվ ձեռնարկություններն ընդլայնելու վրա, վորտեղ առաջացել, ստացվել է այս շահույթը։

Բացի պետական ու կոոպերատիվ ձեռնարկություններից շահույթից, մեզանում սոցիալիստական կուտակման աղբյուրներ են.

1. Այն հարկերը, վոր վճարում են գյուղացիները և քաղաքի ու գյուղի մանր արտադրողներն, այլ և մեծ դատումի տեր ծառայողներն ու բանվորները, վորչափով վոր այս հարկերը չեն գործադրվում ընթացիկ կարիքները հոգալու վրա։

2. Մասնավոր առևտրային ու արդյունաբերական կապիտալի մնացորդների հարկումը (обложение), վորչափով

[1] Հասկանալի յե, վոր վերականգնման ժամանակաշրջանն էլ հիմնական կապիտալի խոշոր ներդրումներ եր պահանջում մեզանից, քանի վոր մեզ հասած ձեռնարկություններն ավեր վիճակի մեջ եյին և քանի վոր այն ժամանակաշրջանում էլ նոր ձեռնարկությունների շինարարություն եր լինում, էլեքտրոֆիկացիա յեր արվում և այլն։

որ մեզանում այս կապիտալը դեռ չի վարված վերջնականորեն։

Վերջապես մեծ դեր է կատարում միջոցներ ներգրավելն էլ, որ կատարվում է խնայարկղները դրվող խնայողությունների ու պետական փոխառությունների ձևով (օրինակ, արդյունաբերացման փոխառությունը)։ Այս միջոցով մասնավոր կուտակումն օգտագործվում է սոցիալիստական շինարարության նպատակների համար, սոցիալիստական կուտակմանը զուգընթաց։

Սակայն շահույթի նկատառումների դերը մեր տնտեսության մեջ բոլորովին այն չի, ինչ որ է կապիտալիստական տնտեսության մեջ։

Նոր կապիտալների ներդրման հարցերը մեզանում վճռում են նրանք, ում աչքում թանկ արժեն ոչ թե արդյունաբերության այս կամ այն ճյուղի շահերն առանձին վերցրած, այլ ամբողջ ժողովրդական տնտեսության շահերը։ Այս պատճառով էլ մենք կանգ չենք առնում կապիտալի այնպիսի ներդրումների առաջ, որոնք թեև մոտիկ ժամանակներում ու իրենց ներդրման տեղում բավարար շահույթ չեն բերում, բայց սրա փոխարեն մեր տնտեսության մեջ բարձրացնում են աշխատանքի արտադրողության ընդհանուր մակարդակը (օրինակ, մեքենաշինությունը)։ **Մեր արտադրական նվաճումների բուն իսկ գնահատությունը զուտ արժեքային գնահատություն չէ, ինչպես որ է կապիտալիզմի ժամանակ։** Օրինակ, մանիչ մեքենան մեր աչքում թանկ է ոչ թե իբրև շահույթի աղբյուր, այլ իբրև աշխատավորների կարիքների բավարարման գործիք։ Տրակտորը մեր աչքում թանկ արժե այն հացի սիրուն, որը կարելի է արտադրել տրակտորով և այլն։ Ինչպես որ ապրանքը մեզանում աստիճանաբար անապրանքայնանում է և վերասերվելով դառնում է «պարզապես արդյունք», այնպես էլ արտադրական նվաճումների արժեքային գնահատությունը (стоимостная оценка) մեզանում աստիճանաբար վերասերվում, դառնում է «բնատնտեսական»։

Սխալ կլիներ համեմատել այն ազդեցության աստիճանը, որ պլանային սկզբունքն ունի սոցիալիստական սեկտորում ու մնացած սեկտորներում։ **Բայց նմանապես սխալ կլիներ կարծել, թե պլանային սկզբունքի ազդեցությունը սահմանափակվում է սոցիալիստական սեկտորով միայն։ Պլանային սկզբունքը գների քաղաքականության, ինչպես և վարկային ու հարկային քաղաքականության միջոցով ազդում է ԽՍՀՄ տնտեսության բոլոր բնագավառների վրա։** Օրինակ փնտռելու համար հեռու չերթանք. հիշեցնենք հենց օրինակ, թե ինչպես գների, վարկի ու հարկերի քաղաքականությունը մեզանում ազդում է ցանքսերի ընտրության վրա և այս կամ այն տնայնագործական արհեստի զարգացման վրա։

Վերակառուցման ժամանակաշրջանի ընթացքում ու վերակառուցման հիման վրա խարսխվելով սոցիալիստական սեկտորը պետք է կլանի մնացած բոլոր սեկտորները։ Այս որ լինի, կնշանակի, որ պլանային սկզբունքը լիովին հաղթել է տարերային, փոխանակային սկզբունքին։ Սոցիալիզմի շինարարության ժամանակաշրջանը հիմնականում ավարտված կլինի։

Թե որքան մեծ է ժողովրդական ստացվածքի այն մասը, որը մեզանում հանրայնացված է արդեն (այսինքն որը պատկանում է պետական ձեռնարկություններին ու կոոպերացիային), այս մասին վկայում են Պետպլանի հետևյալ տվյալները։

Առ 1-ն հոկտեմբերի 1926 թ.

	Պետական ձեռնարկություններում	Կոոպերատիվ ձեռնարկություններում	Ընդամենը հանրայնացված ձեռնարկություններում	Մասնավոր ձեռնարկություններում
1. 100 բանվորից ու ծառայողից ընկնում էր				
ա) արդյունաբերության մեջ	82,7	8,1	90,8	9,2
բ) առևտրի մեջ	30,2	45,2	75,4	24,6
գ) տրանսպորտում, կապի ու շինարարության մեջ	89,3	1,1	90,4	9,6
դ) գյուղատնտեսության մեջ	10,8	5,1	15,9	84,1
2. Համախառն [1] պրոդուկցիայի 100 ռուբլուց արդի գներով ընկնում էր				
ա) արդյունաբերության մեջ	74,5	6,7	81,2	18,8
բ) գյուղատնտեսության մեջ	11,4	0,8	12,2	87,8
3. ամբողջ ապրանքային մասսայի 100 ռուբլուց (արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը միասին հաշված)	51,0	5,2	56,2	43,8

[1] Համախառն—նշանակում է արտադրության միջոցների արժեքը չըհանած։

ԽՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

№ 1—575 մլն. ռ.: № 2—100 մլն. ռ.: № 3—$125^{0}/_{0}$: № 4—$200^{0}/_{0}$: № 5—$125^{0}/_{0}$: № 6—$100^{0}/_{0}$: № 7—12 ժամ: № 8—$150^{0}/_{0}$: № 9—3.060.000 ռ.: № 10—$150^{0}/_{0}$: № 11 (խնդրի տեքստի մեջ «27.000 ռ.» փոխարեն պետք է կարդալ «28.000 ռ. տարին»)—$175^{0}/_{0}$: № 12—150: № 13—40.000: № 14—100.000: № 15—280.000 ռ.: № 16—390, 330: № 17—$27^{1}/_{2}\,^{0}/_{0}$: № 18—$10^{0}/_{0}$: № 19—$20^{0}/_{0}$: № 20—80 c+20 v, (88 c+12 v): № 21—80 c+20 v: № 22—20.000 ռ.: № 23—55.000 ռ.: № 24—քաշում յուրացնում է (տալիս է) [պահում է իր հավելյալ արժեքը]: № 25—$16^{0}/_{0}$: № 26—80.000 ռ.: № 27—$24^{0}/_{0}$: № 28—$18^{0}/_{0}$: № 29—472.000 ռ.: № 30—780.000 ռ.: № 31—35 ռ.: № 32—200.000 ռ., 160.000 ռ. և 40.000 ռ.: № 33—$5\,^{5}/_{9}\,^{0}/_{0}$: № 34—200.000 ռ.: № 35—7.500 ռ.: № 36—400.000 ռ.: № 37—200.000 ռ.: № 38—$62^{1}/_{2}$ ռ.: № 39—5 ռ.: № 40—900.000 ռ.: № 41—2 մլն. ռ.: № 42—30,8 մլն.: № 43—5 կոպ., 16 ռ.: № 44—$6^{1}/_{4}$ կոպ.:

ՑԱՆԿ

Երես

Հեղինակի կողմից 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ I. *(Ներածական)* . . . . 5—15

§ 1. Մեր հեղափոխության տնտեսական բովանդակությունը —5: § 2. Արտադրություն, արտադրության միջոցներ, արտադրողական ուժեր—7: § 3. Արտադրական հարաբերություններ—9: § 4. Ի՞նչ է քաղաքականությունը և ինչի՞ համար է հարկավոր այն —12:

Առաջին հատված. Փոխանակային հասարակությունն ու նրա հավասարակշռության օրենքը.

ԳԼՈՒԽ II. *ՊԱՐԶ ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ* . . . . 16—21

§ 5. Գների դերը կապիտալիստական տնտեսության մեջ—16: § 6. Գների ծագման սխալ բացատրությունները —17: § 7. Պարզ փոխանակային հարաբերությունները—20:

ԳԼՈՒԽ III. *ԱՐԺԵՔ* . . . . . 22—41

§ 8. Ապրանք—22: § 9. Արժեք—25: § 10. Փոխանակային հասարակության հավասարակշռությունը—29: § 11. Արժեք ստեղծող աշխատանքը—31: § 12. Հասարակ ու բարդ աշխատանք—39: § 13. Ապրանքային ֆետիշիզմը—40:

ԳԼՈՒԽ VI. *ՓՈՂ* . . . . . . 41—63

§ 14. Արժեքի ձևերը—41: § 15. Փողն իբրև արժեքի չափ: Գին—49: § 16. Փողը՝ շրջանառության միջոց: Գանձ—51: § 17. Փողը՝ վճարելամիջոց—53: § 18. Շրջանառության համար հարկավոր փողի քանակը—55: § 19. Դրամ—57:

ԳԼՈՒԽ V. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ԹԵՈՐԻԱՆ ՈՒ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ . . . 64—84

§ 20. Կլասսիկները—64։ § 21. Ադամ Սմիթը—65։ § 22. Ռիկարդոն—68։ § 23. Կապիտալիզմի հասունության ժամանակվա թեորիանները—69։ § 24. Սուբյեկտիվ արժեքի թեորիան—70։ § 25. Օբյեկտիվ արժեքի թեորիան—76։

Ցերկրորդ հատված. Կապիտալիստական ճահագործումը.

ԳԼՈՒԽ VI. ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԸ . . . 85—101

§ 26. Աշխատանքային արժեքի որենքն ու կապիտալիզմը—85։ § 27. Շահագործումն արժեքի թագավորության մեջ—88։ § 28. Կապիտալը—95։ § 29. Կապիտալի կուտակումը—98։

ԳԼՈՒԽ VII. ԲԱՅԱՐՁԱԿ ՈՒ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔ . . . . . 102—115

§ 30. Բացարձակ հավելյալ արժեքի արտադրությունը—102։ § 31. Հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունը—109։

ԳԼՈՒԽ VIII. ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔՆ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐԱՔ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆ ՈՒ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ . . . . . 115—148

§ 32. Կապիտալիզմն ու արտադրողական ուժերի զարգացումը—115։ § 33. Մեքենանները—118։ 34. XVIII դարի վերջի տեխնիկական հեղափոխությունը—120։ § 35. Շարժիչը—121։ § 36. Վառելիք. ելեկտրականություն—125։ § 37. Տրանսպորտը—128։ § 38. Մեքենային արտադրությունը լայն իմաստով—131։ § 39. Մեքենաների մեքենային արտադրությունը—135։ § 40. Աշխատանքի գիտական կազմակերպությունը—136։ § 41. Մասսայական արտադրությունը—139։ § 42. Արտադրության ու պրոլետարիատի համակենտրոնացումը—141։ § 43. Կապիտալի համակենտրոնացումը—145։

ԳԼՈՒԽ IX. ՄԵՔԵՆԱՆ ՈՒ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ 148—152

§ 44. Բանվորի՝ արտադրության մեջ ունեցած դերի փոփոխությունը—148։ § 45. Աշխատանքի ինտենսիֆիկացիան. գործազրկությունը—150։

ԳԼՈՒԽ X. ԿԱՊԻՏԱԼԻԶՄՆ Ի՞ՆՉ ԱՐԳԵԼՔՆԵՐ Ե ԴՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՉՈՐԳԱՑՄԱՆ ԱՌՋԵՎ . . . . . 152—158

§ 46. Կապիտալիզմն ու տեխնիկական առաջադիմությունը—152։ § 47. Բանվորական ուժը գիշատիչ կերպով ոգտագործելը—154։ § 48. Խափանիչ տենդենցները—156։

ԳԼՈՒԽ XI. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ . . . . . 159—179

§ 49. Աշխատավարձը—159։ § 50. Աշխատավարձի ձևերը—167։ § 51. Աշխատավարձի չափերը գնահատելու չեզանակները—174։ § 52։ Ծառայողների աշխատավարձը (ռոճիկ)—178։

ԳԼՈՒԽ XII. ՇԱՀՈՒՅԹՆ ՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ 180—206

§ 53. Հավելյալ արժեքի նորման ու շահույթի նորման—180։ § 54. Հիմնական ու շրջանառու կապիտալը կապիտալի որգանական կազմը—182։ § 55. Հավելյալ արժեքի տեղափոխումը—186։ § 56. Շահույթի հավասար նորման—188։ § 57. Արտադրության գինը—191. § 58. Շահույթի նորմայի անկումը—194։ § 59. Սմիթի ու Ռիկարդոյի շահույթի թեորիան—200։ § 60. Բյոմ Բավերկի շահույթի թեորիան—202։

ԳԼՈՒԽ XIII. ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԸ, ՇԱՀՈՒՅԹՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԽՍՀՄ ՄԵՋ ԱՆՑՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ . . . . . 207—218

§ 61. Հավելյալ արժեքը ԽՍՀՄ մեջ—207։ § 62. Աշխատավարձը ԽՍՀՄ մեջ—211։

Ցերորդ բաժին. ապրանքային շրջանառությունը ու կապիտալի շրջապտույտը.

ԳԼՈՒԽ XIV. ԿԱՊԻՏԱԼԸ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎՈՂՈՐՏՈՒՄ . . . . . 219—233

§ 63. Կապիտալի շրջապտույտը—219։ § 64. Առևտրական կապիտալն ու առևտրական շահույթը—224։ § 65. Առևտրի միջանի հատուկ ձևերը—227։ § 66. Առևտուրը ԽՍՀՄ մեջ—231։

ԳԼՈՒԽ XV. ՎԱՐԿԸ . . . . . 233—273

§ 67 Վարկն ու սրա հակասությունները—233։ § 68. Առևտրային վարկ—237։ § 69. Վարկավորում

պարապ կապիտալով—240։ § 70. Փոխատուական տոկոսը—242։ § 71. Կապիտալի ֆետիշիզմը—243։ § 72. Ֆիկտիվ կապիտալ—245։ § 73. Բանկերը—246։ § 74. Բանկերը ԽՍՀՄ մեջ—252։ § 75. Պետական վարկը—253։ § 76. Վարկային փաստաթղթերն ու միջազգային հաշվեհարդարները—257։ § 77. Ակցիոներական ընկերությունները—262։ § 78. Կապիտալի ակցիոներական զորահավաքն իբրև վարկի ձև—264։ § 79 Հիմնադրային շահույթը—267։ § 80. Ֆոնդային բորսաները—270։

ԳԼՈՒԽ XVI. ՎԱՐԿԱԴՐԱՄՆ ՈՒ ԹՂԹԱԴՐԱՄԸ . 274—298

§ 81. Վարկադրամը—274։ § 82. Թղթադրամը—280։ § 83. Թերարժեք փողի ու թղթադրամի գնողական ուժը. ինֆլյացիան—283։ § 84 Թղթադրամների կապը վոսկու հետ—288։ § 85. Թղթադրամների ու վարկադրամների համառոտ պատմությունը Ռուսաստանում ու ԽՍՀՄ մեջ—290։

ԳԼՈՒԽ XVII. ՓՈՂԻ ԹԵՈՐԻԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ . . 299—310

§ 86. Նոմինալիստները—300։ § 87. Բանկապաշտները—305։

Չորրորդ բաժին. Մինչկապիտալիստականը յեվ արտակապիտալիստականը կապիտալիզմի սիստեմում.

ԳԼՈՒԽ XVIII. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ . 311—321

§ 88. Գյուղատնտեսություն—311։ § 89. Արտադրության և կապիտալի համակենտրոնացումը գյուղատնտեսության մեջ—316։

ԳԼՈՒԽ XIX. ՌԵՆՏԱՆ . . . . . 322—338

§ 90. Հողատերերի դասակարգը—322։ § 91. Վարձակալությունն ու ռենտան—323։ § 92. Տարբերական (դիֆֆերենցիալ) ու բացարձակ ռենտան—325։ § 93. Յերկրորդ տարբերական ռենտան—332։ § 94 Ռենտայի տարբեր ձևերի փոխադարձ կապը—335։ § 95 Ռենտայի նշանակությունը կապիտալիստական տնտեսության մեջ—336։

ԳԼՈՒԽ XX ԳՅՈՒՂԱՑԻՆ ՅԵՎ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԸ. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՀԱՐԿԵՐԸ . . . . . 339—350

96 Գյուղացին ու տնայնագործը—339։ § 97. Կոոպերացիան կապիտալիստական յերկրներում—343, § 98. Կոոպերացիան ԽՍՀՄ մեջ—344։ § 99. Հարկերը—347։

Հինգերորդ բաժին. Վերարտադրություն.

ԳԼՈՒԽ XXI. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ . . 351—358

§ 100. Կապիտալի ծագումը—351։ § 101. Ինչպես առաջ յեկան բանվորական ուժ ծախողների հիմնակազմերը—356։

ԳԼՈՒԽ XXII. ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ . . . . . 359—377

§ 102. Հանրային հարստության վերարտադրությունն ու արժեքի վերարտադրությունը—359։ § 103. Կապիտալի վերարտադրությունը—362։ § 104. Վերարտադրության սխեման—365. § 105 Մարքսի վերարտադրության թեորիայի քննադատությունը Ռոզա Լյուքսեմբուրգի գրվածքներում—368։ § 106. Հանրային հարաբերությունների վերարտադրությունը—374.

ԳԼՈՒԽ XXIII. ՇՈՒԿԱՆ, ԿՈՆՅՈՒՆԿՏՈՒՐԱՆ ՈՒ ՃԳՆԱԺԱՄԸ . . . . . . 378—396

§ 107. Արդյունաբերության տարբեր ճյուղերի շուկային ու վարկային կապը—378։ § 108. Տնտեսական կոնյունկտուրան. ճգնաժամերը—380։ § 109 Համաշխարհային ճգնաժամերի համառոտ պատմությունը—385։ § 110. Ճգնաժամերի պատճառները—392։

Վեցերորդ բաժին. Իմպերիալիզմ.

ԳԼՈՒԽ XXIV ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԸ 398—415

§ 111. Մենաշնորհացումը—398։ § 112 Միավորությունների ձևերը—401։ § 113. Կապիտալիստական արդյունաբերության մենաշնորհացման պատճառները—407։ § 114. Արժեքը, հավելյալ արժեքն ու շահույթը կապիտալիստական մենաշնորհի պայմաններում—410։

ԳԼՈՒԽ XXV. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՈՒ ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՍԵՐՏԱՃՈՒՄԸ . . . 416—425

§ 115. Համակենտրոնացումն ու մենաշնորհացումը բանկային գործում—416։ § 116 Մասնա-

կցության սխեմը—420։ § 117. Կոոպերացիան—422։ § 118. Ֆինանսական կապիտալն ու արդյունաբերության հանրայնացումը—424։

ԳԼՈՒԽ XXVI. ԱԶԳԱՅԻՆ ՅԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ . . . . . 426—440

§ 119. Համաշխարհային տնտեսությունը—425։ § 120. Պրոտեկցիոնիզմը—429։ § 121. Գաղութները—432։ § 122 Կապիտալիզմի արտահանումը—435։

ԳԼՈՒԽ XXVII ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՌԱԶՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼԻ ԺԱՄԱՆԱԿ 441—447

§ 123. Պատճառները—441։ § 124. Միլիտարիզմը—444։

ԳԼՈՒԽ XXVIII ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ . 448—454

§ 125. Համաշխարհային պատերազմն ու Հոկտեմբերյան հեղափոխությունը—448.

Յոթերորդ բաժին. Անցման ժամանակաշրջանի էկոնոմիկան.

ԳԼՈՒԽ XXIX. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 455—475

§ 126. ԽՍՀՄ: Կոմունիզմը—455։ § 127. Ռազմական կոմունիզմն ու նեպը—458։ § 128. Գների կարգավորումն ու արտադրության կարգավորումը—462։ § 129. Մեր քաղաքականությունը գյուղում—464։ § 130. Արդյունաբերացումն ու վերակառուցումը—464։ § 131. Խորհրդային տնտեսականության հիմքերը—468։

Խնդիրների պատասխանները 476

ՊԵՏ. ԿՄՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна Ա. Մյասնիկյանի անվան

ՀՀ Ազգային գրադարան
NL0199408